891.99
T-66

ՃԻՐՎԱՆԶԱԴԵ

19 NOV 2011

891.99
Շ-66

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՎԻՃԵՐՈՒԴ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

15 . . 2013

48078

Գրահրատ. տպագրած
Գլավլիտ № 6366
Պատվեր № 2124
Հրատ. № 1599
Տիր. 3000

587
41

ՄԵԼՔՆԻՏ

1.

— Մելքնիտ, ուրախացիր. Պետերբուրգից հեռագիր ստացա. սենատը գործը վճռել է մեր ոգուին: Հոբելյարս վարդին հույս ուներ մեզանից չորս հարյուր հազար ստանալու, հիմա չոքս կոպեկ չի ստանալ: Ո՛հ, վերջապես ազատվեցի դևնացավից: Այժմ կարող ենք ապրել, ինչպես հարկն է:

Ինքը՝ Սամսոն Ֆրանգուլյանն այնքան ուրախ եր, այնքան գոհացված, որ ամուր գրկից ամուսնուն և համբուրեց: Յերեսուն տարի աշխատասեր մարդը վոսկոր և կտորել, դիզել ահագին հարստություն, և հանկարծ մի անգործ ազգական ուզում եր խլել այդ հարստության մի յերրորդականը: Հանաք բան չեր՝ բաժանվել մի այդպիսի գումարից: Յեվ բաժանվել այն ժամանակ, յերբ նա գործերը թողել եր, տեղափոխվել Կովկասի մայրաքաղաքը «հանգստանալու և ապրելու» համար:

Նա յերջանիկ եր: Թեև ավելի քան կես դար արդեն անցել եր նրա գլխով, բայց կազմվածքը դեռ պահպանել եր կանոնավորությունը, ձայնը դեռ հնչում եր խրոխտ, քայլվածքը դեռ աշխույժ եր, իսկ ստամոքսը բոլորովին անխախտ: Փույթ չե, վոր մազերը կիսով չափ ճերմակել եյին—դա ժամանակի անխուսափելի հետևանքն եր: Կար մեկին մի հոգս, վոր յերբեմն նրան պղտում եր ծանր մտատանջության մեջ: Սակայն, հուսալով եր հաջողության վրա, նա հավատացած եր, վոր այս հոգսից ել կարող է ազատվել...

Վեց տարի յեր անցել ընդամենը, վոր նա ամուսնացել եր: Ուշնեցել եր յերկու զավակ, վորոնցից աղբրանիկը մեռել եր դեռ ձծկից չկտրած. մնում եր յերկրորդը—յերկու տարեկան մի տղա: Այդքան ժամանակվա ընթացքում վրչ մի ահ դիծ չեր անցել ... մուրհակների միջով: Մարդն իր բնական տաքսով ու խելքով, հինը կրթությամբ և մաքի համեմատական զարգացմամբ—կարողացել եյին հարկել իրարու ընդհատությունը և կենսակցել

հաջտ, անխռով։ Կար մի հանդամանք, վոր միշտ պիտի յերաշխավորեր Մելանիայի հարգանքն ու պատկառանքը դեպի ամուսինը—ազգակս եր համոզված Սամսոնը.—Մելանիան աղքատ ծնողներէ զավակ եր, Սամսոնը՝ հարուստ։ Յեթե Մելանիան յերիտասարդ և, կրթված, գեղեցիկ, նույն իսկ գրավիչ, սրա փոխարեն՝ Սամսոնը կերակրում և նրա ծնողներին, ուտում և տալիս յեղբայրներին և խոստանում և իր ծախսով ամուսնացնել քույրերին։ Ուրեմն, կշեռքի թաթերը հավասար են։ Յեվ վոչ մի խոչընդոտ Սամսոնի բախտի առջև, և վոչ մի մտայլ ամպ նրա կյանքի հորիզոնում։ Իսկ այսուհետև նամանավանդ չպիտի լինի, քանի վոր Սամսոնը թողել և գործերը և անձնատուր յեղել կնոջն ու նրա կամքին։ Քանի վոր նա լիակատար իրավունք և տվել Մելանիային ծախսել վորքան կամենում և, ապրել, ինչպես քեֆն և, ծանոթություններ սկսել, ում հետ փափագում և։

Նա մի ձեռով գրկեց Մելանիային և, յերջանկության ժպիտը յերեսին, անցավ նրա հետ սենյակից սենյակ՝ մի անգամ ևս նոր կացարանն աչքի անցկացնելու։ Ամեն ինչ արդեն կարգին եր. սենյակները կահավորված ու զարդարված, յուրաքանչյուրն առանձին ճաշակով, լուսամուտները վարագուրված թանկագին կտորներով, հատակները ծածկված խայտաբղետ գորգերով։ Ամեն տեղ յերևում և տաճախրոչ առատաձեռնության և տաճկական ճաշակը։ Ախոռատանը կապած եյին սքանչելի ձիերը, վոր Սամսոնը նոր եր ստացել Մոսկվայի մի հայտնի գործարանատերից։ Գավթում կառապանը յերգ ասելով, սրբում ու հղկում եր, առանց այն էլ հայելու պես փայլող, կարնեթը։ Ետևը, սպասավոր, նաժիշտ, ինտենտանտ—բոլորը զբաղված եյին իրանց գործով, բոլորն ակնածությամբ նայում եյին իրանց տիրուհու աչքերին։

Մելանիան ուներ մի քանի ծանոթանալու ում հետ ևս կամենար։ Հարուստ եր, յերիտասարդ, գեղեցիկ ու կրթված—հանդամանքներ, վորոնք կարող եյին նրա առջև բաց անել ամենաամուր փակված դռները։ Յեվ նա կարողացավ ոգավել իր միջոցներից։ Նրան ընդունում եյին ամեն տեղ սիրով և այցելում ավելի սիրով։ Նա յերևում եր բոլոր հասարակական յերեկույթներում, բալերում ու պարահանդեսներում։ Նա գիտում եր, ուսումնասիրում և ամեն կերպ աշխատում իր հագուստը, ձևերը, ամբողջ կենցաղը հարմարեցնել արիստոկրատիկ շրջանի կենցաղին։ Յեվ այնքան ընդունակ եր, վոր մի քանի ամիս անցած՝ արդեն նրա մեջ կարելի յեր նկատել ահագին առաջադիմություն դեպի գեղեցիկը, նուրբը և հաճելին։

Արդեն ամբողջ քաղաքը խոսում եր Ֆրանգուլյանների յեթեկուլթների, ճաշերի, ձիերի, կահ-կարասիքի, մանավանդ Մելանիայի բազմաթիվ տուալետների ու խոշոր ադամանդների մասին։ Յերբ նա, ժորժիկին կողքին նստեցրած՝ բոննայի հետ սեփական կառքով անցնում եր քաղաքի գլխավոր փողոցով, հրյուրավոր աչքեր նախանձով ուղեկցում եյին նրան բարևելու։ Իսկ Մելանիան գիտեր այդ բարևներին պատասխանել ըստ արժանվույն։ Յուրաքանչյուրին ցույց եր տալիս այնքան ուշադրություն, վորքանի միայն արժանի յեր համարում։ Նա ընդունակ եր հարկել մարդկանց վոչ միայն ղերքն ու ծադումը, այլև խելքը, ճաշակն ու քաղաքավարությունը։ Նրա ծանոթների շրջանը ընդարձակ եր և բազմատեսակ։ Ամեռվա կիսին արդեն նրա հյուրասենյակում վաճառականների կանանց հետ կարելի յեր տեսնել բանկիրների ու չինովնիկների կանանց, յերբեմն նաև այս կամ այն իշխանուհուն։

Սամսոնը գեմ չեր դրան, թեև հոգու խորքում շատ էլ չեր համակրում նոր ծանոթներից վոմանց։ Բանկիրների ու չինովնիկների հետ նա առաջ էլ բարեկամություն ունեցել եր, իսկ իշխանների հետ չգիտեր ինչպես վարվեր։ Յերբեմն իրան զգում եր շատ անհարմար վիճակի մեջ։ Մեկ մեկու յետևից նրա անհյ վոնդվում եյին այն սովորությունները, վորոնց հետ կապված եր իր սաղմոլ, և մոցնվում նորերը։ Բայց նա գարձյալ չեր բողոքում, և լուռ հպատակվում եր Մելանիայի պահանջներին։ Վախենում եր։ Վոչ. նա յերկչոտ չեր։ Կամքի ուժ չուներ։ Վոչ-փառասեր չեր, յեթե կամենար, կարող եր ամեն ինչ տակն ու վրա անել և նորից վերադառնալ նախկին կենցաղին։

Նա սիրում եր Մելանիային, սիրում եր վեց տարի նրա հետ կենակցելուց հետո, սիրում եր մանավանդ տյժմ, յերբ Մելանիան որբոր գեղեցկանում եր ու կենդանանում։ Ահա նրա անսրբատունչ հյության միակ պատճառը։

Զարմանալի բան. մի քանի ամսվա մեջ այդ կինը այնքան փոխվել եր, վոր Սամսոնը ապշում եր, դիտելով նրան։ Դա այլ ևս առաջվա համեստ, նույնիսկ ամոթխած Մելանիան չեր։ Մի ձմեռվա ընթացքում ցույց տվեց այնչափ համարձակություն, յեռանդ, կենսական ուժ, վորչափ ցույց չեր տվել գուցե ամբողջ կյանքում։ Տեղափոխվելով մի շրջանից մի ուրիշը, կարծես, նոր

մթնոլորտի հետ շնչում էր նոր մոգի, նոր աշխարհահայացք, նոր դպացումներ։ Նրա թմրած էությունը արթնացել էր և արտահայտում էր իր բնական ուժը, որը չէր չէր դուել նախկին միջավայրում։ Այնտեղ, ծննդավայրում կային դանադան կաշկանդող պայմաններ—գանկիների բամբասանքները, ազգականների ծաղրը, ծնողների չքավորությունը։ Այստեղ՝ թե նրա և թե Սամսոնի անցյալի հետ վոչ վոք ծանոթ չէր։ Այստեղ ընդունում էին նրանց այնպես, ինչպես կային այժմ—հարուստ և ժամանակի ազդեցությամբ այնչափ տարված ու հղիված, վոր կարող էին ամեն շրջան մտնել և խորթ չթվալ։

Սամսոնը, տեսնելով կնոջ մեջ այս արմատական առաջադիմությունը, ավելի ու ավելի չէր սիրահարվում նրա վրա։ Այդ հիասնուչորս տարեկան մարդը մինչև հիմա լսած արժանավորչ էր գնահատել իրանից յերեսուն տարով փոքր կողակցին և, կարծես, այժմ զղում էր իր սխալը։ Նա պարծենում էր մտքում Մելանիայի գեղեցկությամբ, սալոնական ձիրքով և վարվելու շնորհքով։ Նա ուրախ էր նրա յերիտասարդությանը։ Սակայն, այն հանդամանքը, վոր ինքը այդ կնոջից յերեսուն տարով մեծ է, նրա մեջ հղացրեց մի նոր, տակավին անծանոթ, մի անտանելի զգացում։

Նա սկսեց խանդել Մանդել ավելի ու ավելի, յենթարկվելով այն մտքին, վոր վաղուց նրան պատճառում էր ծանր հոգս...

II

Իբրև զգաստ, խելացի և հեռատես մարդ, Սամսոնն իր կասկածները դեռ թաղցնում էր։ Ցեվ առիթ էլ չուներ խանդելու։ Գիտեր, վոր խիստ անարդար կլինեն, յեթե բացարձակ հայտնի Մելանիային՝ թե վախենում և նրա այժմյան կենսասիրությունից։ Կար և մի ուրիշ հանդամանք. նա չէր ուզում նախանձախնդիր ու կասկածոտ ասիացի համարվել վոչ կնոջ և վոչ մանավանդ ոտարների աչքում։ Միևնույն ժամանակ չէր ուզում յուրացնել, թե վատահ չե սեփական ուժերին կամ կնոջ հավատարմությանը։

Ցեվ այսպես, նա լռում էր։ Բայց տանջվում էր, և այս տանջանքը, նոր միայն սկսված, արագ-արագ զարգանում էր։ Տեսնելով Մելանիայի հետզհետե թարմացող ու գեղեցկացող դեմքը, յերբեմն յերկյուղից ցնցվում էր։ Ջե վոր մի որ, վերջապես, այդ նորաբաց ծաղիկը կարող և յերեսովը տալ նրա տարիքը։ Մրթմրթում էր ինքնաբերաբար շարունակ և ինքն անպատիժ, բոլորովին անզգաստիժ։

Յերբ նա անխոհեմաբար, կուշտ ճաշից հետո, սեղանատանը կամ ննջարանում (մանավանդ այստեղ) գրկում էր Մելանիային, այնպիսի մի ցնցուղ էր արտահայտում յերիտասարդ կնոջ կրակոտ մարմինը, վոր Սամսոնը ուղղակի սարսափում էր։ Այնպես, վորպես մարդ կարող և սարսափել, յեթե ձեռը վերցնի մի գեղեցիկ իր և հանկարծ զգա, վոր նա լեցուն և դինամիտով։ Այդ սիրուն աչքերի այրող շողերը բորբոքում էին նրա հնացած արյունը, բայց և ասեղների պես ցցվում նրա սրտի մեջ։ Այդ կարմրախայտ հուրթալի շրթունքների ու նուրբ պնչերի դողոցը շարժում էր սրա մաշված կիրքը, բայց և ցավ պատճառում նրա ուղեղին։ Այդ կլորիկ ու գեղակազմ կրծքի բարախումը հրանրում էր նրան, բայց և սարսուռ ազդում նրա մարմնին։ Այո, Մելանիան բոլորովին նախկին Մելանիան չե, այն, ինչվոր էր ընդամենը կես տարի առաջ։ Նա վառվել և ինքն իր մեջ և այրվում է ինքն իր հրով։

Ա՛խ, յեթե Սամսոնը յերեսուհնուհինգ տարեկան լիներ։ Ի՞նչ ոգուտ, վոր տակավին առողջ և ու թաբմ՝ իր տարիքի համեմատ։ Ի՞նչ ոգուտ, վոր այսոր ել դեռ յերակների մեջ զգում է յերիտասարդական արյուն։ Այնուամենայնիվ նա ծեր է և միայն ինքն է զգում, թե վորքան ծեր է... Նա հիսունուչորս տարեկան է, և հենց այն միտքը, թե քսանութ տարով մեծ է կնոջից, կարող է թունավորել Մելանիայի կյանքը։

Մի անգամ միջօրեին, նախաճաշից հետո, յերբ զինին փոքր ինչ ներգործել էր Սամսոնի վրա, հանկարծ պատանեկական աշխուժով փաթաթվեց Մելանիայի պարանոցին և սկսեց անվերջ համբուրել նրան։ Մելանիան ձիգն արավ և կարողացավ դուրս սլկվել նրա գրկից։ Սամսոնը աչքերը հառեց նրա յերեսին։ Ա՛խ, վորքան գեղեցիկ էր յերիտասարդ կինը այդ պահին, ինչպես սազում էր նրան պարնանային թեթև հագուստը յուր բաց մարմնի գույնով ու սպիտակ մետաքսյա դանթելներով։ Նրա դեմքի գծերն ավելի էին նրբացել։ Կանացի հրապուրյրը բուրում էր նրա աճքողջ կերպարանքից, վորպես մի քաշող մագնիսական, մի աչքեցուցիչ ուժ։

Սամսոնը չկարողացավ իրան զսպել, նորից հարձակվեց մի քանի քայլ հեռու կանգնած Մելանիայի վրա։ Այս անգամ կինը ձեռները հորիզոնաձև տարածեց առաջ՝ պաշտպանվելու համար։

Ներա լայն թևերը չեթ քաշվեցին. բացվեցին նրա փափուկ բազուկները մինչև արմունկները, և թարմ կաշվի նրբիկ ապհատությունը ավելի գրգռեց Սամսոնին: Սակայն, այն ինչ տնտեսվոր ժպիտ եր, վոր տանեց Մելանիայի շրթունքներով, և ինչու նրա աչքերը փակվեցին... կիրք եր արդյոք, այդ, թե տառնություն, մի զուտ տաելություն, մի զուտ...

Սամսոնը մի քայլ չեթ կանգնեց և հանկարծ հարցրեց.

— Մելանիա, դու ինձ սիրո՞ւմ ես:

Նրա ձայնը դողաց: Հարցը նոր եր, անսպասելի: Վեց տարվա ընթացքում Սամսոնը չերբեք մի այդպիսի հարց չեր ավել Մելանիային և այժմ տալիս եր, և այն էլ այնպիսի տարօրինակ չեղանակով ու հուզված ձայնով: Մելանիան ցնցվեց ու գունատվեց: Նա չիմացավ ինչ պատասխանի, նա միայն անորոշ ժպտաց և հայացքը դարձրեց դեպի բակը:

— Սիրո՞ւմ ես ինձ,—կրկնեց նույն դողդոջուն ձայնը:

Նույն լռությունը:

Սամսոնը մոտեցավ Մելանիային, չերկու ձեռներով բռնեց նրա ձեռները ու նայելով աչքերին, ասաց.

— Համբերակվիր չսիրել, տատաներս ցուցց կտամ:

Ասաց կես լուրջ և կես կատակի չեղանակով, բայց ավելի կոշտ, քան մեզմ, ավելի իշխանական, քան բարեկամական տոնով: Ցեվ իր խոսքերի մեջ ինքն էլ զգաց ինչ-վոր չարագուշակ հնչյուն:

Հուզումը, մոնավանդ զղջումը թագցնելու համար, Սամսոնը դուրս գնաց սենյակից:

Մնալով մենակ, Մելանիան նստեց առաջին պատահած աթոռի վրա և ընկղմվեց մտախոհության մեջ:

«Սիրո՞ւմ ես ինձ», հնչում եր նրա ականջին ինչ պատասխաներ: Մի՞թե նա ինքը դիտե, սիրում և, թե չե: Նա միայն գիտե, վոր Սամսոնը իր արինական ամուսինն է—ուրիշ վոչինչ: Մի մարդ, վորի հետ անխզելի կերպով կապված և մինչև մա՛ն՝ սկսած տասնույթ տարեկան հասակից: Ծնողները նրան չստիպեցին գնալ այդ մարդուն, այլ «հանձնեցին»: Նրան բացատրեցին բոլոր հանգամանքները. և նա համաձայնվեց: Նա հնազացավ, թե դառնալով Սամսոն Ֆրանգուլյանի կինը, պիտի բախտավորեցնի իր ծնողներին—այսքանն արդեն բավական եր: Վոչինչ հակադրություն չեր զգում սեփական ճակատագրի և ծնողների կամ քույրերի ու եղբայրների բախտի մեջ: Իր վիճակը ձուլված եր համարում նրանց վիճակի հետ: Ցերջանիկ են, ինքն էլ երջանիկ կլինի. անբախտ են, ինքն էլ կանբախտանա—ահա բոլորը: Ցեվ չեթե ասում են՝ թե Սամսոն Ֆրանգուլյանի հետ անպատճառ բախտավոր կլինի, կնշանակե ճշմարիտն են ասում: Ինչու չէնաը այդ մարդուն: Կյանքը նրա համար մի անծանոթ աշխարհ եր, ինքը կանգնած նրա տափաչին փակ դռների առջև: Ցեթե սիրող ծնողները, բռնելով թևից, ուսումնարանական նստարանից նրան ուղղակի ամուսնական կյանքի մեջ մացրին, միայն և միմիայն հավատալով և սիրելով նրանց՝ ընդունեց այս վիճակը: Բայց ինչ և չեղել նրա ապրուստը այս վեց տարվա ընթացքում: Այն, ինչ վոր տվել են մի կողմից ամուսնու դիրքն ու հարստությունը, մյուս կողմից մայրական բնազդական սերը դեպի իր զավակները: Ինչ և այժմ, այս րոպեին, կյանքը նրա համար: Շքեղ տուալետներ, թանկագին զամանդներ, ճոխ սեղան, նոր շրջան, պարեր, չերգ, զվարճություն:

Այժմ նրան հարցնում են «սիրո՞ւմ ես»: Սիրո՞ւմ ե, ապրյոք: Ո՞ւմ, Սամսոն Ֆրանգուլյանին, այդ... ծերունուն... այդ... ինչ պատասխաներ այդ մարդուն: Մի՞թե ասեր, թե մի դառն գաղտնի կսկիծ մորմոքում ե նրա սիրտը, չերբ զգալով ինչ-վոր ներքին անծանոթ հոգեկան պահանջ, մտածում ե նաև իր ամուսնու մասին...:

Փոքրիկ պարտիզում, զայակի հետ խաղում եր չերկու ու կես տարեկան Ժորժիկը: Մելանիան դուրս չեկավ սենյակից, մոտեցավ նրան, գրկեց ու համբուրեց անսովոր ջերմությամբ: Նա հուզված եր և զգում եր, վոր ձմեռվա վերջի արեգակի գոլ ճառագայթները իր չերակների մեջ տարածում են ինչ-վոր անսովոր ջերմություն, իսկ սիրտը ճնշվում և... հոգեցող աբեներից, հագուրդ չտացող կրքերից...

III

Մի որ, սովորական զբոսանքից տուն վերադառնալով, Մելանիան ազախնից լսեց, թե մի անծանոթ հյուր կա ամուսնու առանձնասենյակում: Մի քանի րոպե անցած, չերբ նա, հագուստը փոխելով, անցավ սեղանատուն՝ նախաճաշ անելու, այնտեղ Սամսոնը շտապեց ներկայացնել հյուրին: Դա Սամսոնի քրոջ մարդու չեղբայրն եր, ազգանունը Փիրուզյան, մոտ չերեսուն տարեկան մի չերիտասարդ: Նա վոչ տգեղ եր, վոչ գեղեցիկ, վոչ գեր, վոչ նիհար, բայց առողջ դեմքով, ուրախ աչքերով: Հագած եր

անագուն, յերկայն «վիզիտկա», կլորակ փեշերով, մոխրագույն վարդիկ; առիղնագործ շապիկ՝ բարձր ոձիքով, որի ձյունասպիտակությունը խիստ ներդաշնակում էր նրա դեմքի տակավին թարմ գույներին և փոքր ինչ կարմրագույն ականջներին:

Սամսոնի բացատրությունից յերևաց, որ Փերուզյանը տասը տարի բացակա է յեղել հայրենիքից, մեծ մասամբ ժամանակն անց է կացրել Պետերբուրգում: Այնտեղ նա, «մի քանի հանգամանքների պատճառով» (Փերուզյանը պլուխը թեքից կրծքին, արտասանելով. «յերեխայություն»), ստիպված, թողել է համալսարանը և մտել ծառայության ինչ-որ յերկաթուղու վարչության մեջ: Սամսոնը նրան շատ անգամ է հանդիպել մայրաքաղաքում և հավանել է ու սկսել նրան: Հուսով է, որ Մելանիան էլ կհավանի յերբ կճանաչի:

Հայտնվեց, որ Փերուզյանը պաշտոնը թողել է և մտադիր է հաստատվել Կովկասում:

— Ուզում է Բաղու գնալ, չես խորհուրդ չեմ տալիս,— ասաց Սամսոնը,—տասը տարի Պետերբուրգում ապրելուց հետո, մարդ չի կարող այդ քամու ու փոշու մեջ ապրել:

Փերուզյանն ասաց, թե մայրաքաղաքի կյանքը ձանձրացրել է իրան, թե ժամանակ է հիմա լուրջ գործով զբաղվելու, թե վճռել է հարստանալ և ուզում է նավթային արդյունաբերությունը «ուսումնասիրել»: Մելանիան հետաքրքրվեց նրա անցյալով իբրև ազգականուհի, և Փերուզյանը սկսեց հաճույքով պատմել մայրաքաղաքի թատրոնների, ցերկերի, ելևէջական կաքերի, ձիարշավների մասին: Նա առանձին աշխուժով խոսում էր վերոհիշեալների մասին, ինքը ճարպիկ վերոհիշեալ լինելով:

Յերբեմն նրա հայացքը կանգ էր առնում Մելանիայի գեղջկուհի դեմքի վրա: Դիտող մարդը կարող էր նրա աչքերի մեջ կարդալ ինչ-որ նեղքին զոհունակություն: Թվում էր, որ նա հեռացած էր իր ազգականի հետ ընտանեկան մտերմությամբ և, միևնույն ժամանակ ուրախ և, տեսնելով մարդու ու հետ հասակների մեջ ահագին տարբերություն: Իսկ Մելանիան սեղանի քով ուշադիր էր դեպի հյուրը իբրև բարեխառն տանտիկինը. այսքանը միայն: Բայց այսոր առաջին անգամ լուրջ համեմատում էր Սամսոնին մի ուրիշ տղամարդի հետ և... հարկով կարողանում զսպել հառաչանքը: Վորքան Փերուզյանը նսեմացնում էր իր նկարագրությամբ Սամսոնին: Մեկից բուրում էր առնական ուժը իր բոլոր յեռանդով, մյուսի մեջ կյանքն արդեն անցել էր իր վաղուան ղլյանը,

և անցել վաղուց: Գուցե Փերուզյանը, Սամսոնի տարիքին հասնելով, կրկնակի ծերանա, բայց այժմ նա ունի մի հրապույր, որից առ միշտ զրկվել է Սամսոնը:

«Բանանք տարի, Տեր Աստված», մտածեց Մելանիան, ըղբաունքները սեղմելով աստիճների տակ: Այս արդեն չափից դուրս է, այս արդեն դեմ է բնության բոլոր որենքներին, և միայն Մելանիան է դղում, թե վերքան դեմ է...

Գարնան մոտենալով, Մելանիան որեցոր դառնում էր մտախոհ ու լուրջ: Այժմ նա այլևս չէր հետաքրքրվում սալոնային կյանքով: Նա նույն իսկ ձանձրացել էր այդ աբիստոկրատիկ հասարված ղլյանի կեղծ ու պատիր կանոններից ու հիասթափվել, ինչպես մի յերեխա արդեն ծանոթ խաղալիքի վերաբերմամբ:

Նա նկատելու չափ գունատվել էր, բայց աչքերի հուրը քանի գնում՝ ատամկանում էր: Նա խոսում էր սակավ, աշխատում էր Սամսոնի հետ յերես առ յերես չմնալ, փախչում էր, վորքան կարող էր, նրա զգվանքներից, ժանավանդ համբույրներից: Նա ավելի ու ավելի ամփոփվում էր ինքն իր մեջ:

Շաբաթը յերկու անգամ նա Փերուզյանին հյուր էր ընդունում և ճաշին պահում—Սամսոնի ցանկությամբ: Վարվում էր նրա հետ, իբրև ազգական, պարզ, համարձակ, բայց առանց վոբևէ մանրմունքյան, միշտ պահելով իր և նրա մեջ վորոշ չափի տարածություն: Նրա մեջ կատարվում էին զարմանալի փոփոխություններ: Դեռ մի տարի առաջ մի հասարակ կին էր, գրեթե մեկն իր նախկին ղլյանի կիսաթմբած եյակներից: Տեղափոխվելով ուրիշ քաղաք, հանկարծ փոխվեց նոր կյանքի ասպարեզում, գարձավ սալոնային կին: Այժմ նա ղլյամիտ էր և մտախոհ, վորպես թե նրա գլուխը լեցուն էր համամարդկային հոգսերով:

Յեվ այսքան փոփոխություններ մի տարվա ընթացքում:

Սամսոնը ուրախ էր նրա այս վերջին տրամադրությանը, ավելի քան արիստոկրատիկ ձգտումներին: Բայց նա չգիտեր վոր հանգստությունն արտաքին է, վոր Մելանիայի մեջ տեղի ունի ինչ-վոր փոթորիկ և նրա արյունը ավելի ու ավելի յե բորբոքվում, չնայելով ճակատի մռայլին, յերեսի գունատությանը:

Մի անգամ Սամսոնը տուն վերադառնալով, անմիջապես անցավ ննջարանը, յերբ ապախնից իմացավ, վոր Մելանիան այնտեղ է: Բայց անելով դռները, նա բևեռվեց շեմքի վրա: Նա հանդիպից մի անսովոր, չտեսնված տեսարանի: Բանի մի քայլ հե-

ուս, շքեղ արյունոյի առջև, կանգնած էր Մելանիան՝ կիսամերկ, վոտաբոբիկ։ Նա դիտում էր իրան վոտից մինչև գլուխ։ Նրա քայլ կուրծքը, սպիտակ ուսերը նկարվել էին արևագակի ջերմ շողերով վողողված սենյակի մեջ տեղում վորպես մի կլասիկական արձան, վորպես մեկը Բանովայի ախտաբորբոք ձեռակերտներից։ Միայն կենդանի, շարժական արձան, վոր շուրջը տարածում էր հնշտանքի կիզիչ շողեր։ Ցնվ այս շողերի մեջ նա լողում էր ինչպես մարմնացած կիրք։ Բայց վորպիսի քնքուշ, արբեցուցիչ ու կորուսիչ կիրք իր կանացի ամոթխածության մեջ իսկ։

Արյունը խփեց Սամսոնի գլխին, աչքերը մթնեցին։ Նա վամացուկ վոտների ծայրերի վրա, մտեցավ յուրեից։ Նա ուզում էր գրկել այդ կիսամերկ մարմինը, վոր իրան և միմիայն իրան էր պատկանում, և խեղդել իր գրկի մեջ կրքերի բուռն թափով։ Մելանյան յերևը չետ դարձրեց, մի քայլ հետ կանգնեց՝ առանց մազի չափ շփոթվելու։

— Ի՞նչ ես անում այդ,—գոչեց Սամսոնը բարկացած ձայնով։

— Հիանում եմ ինձանով,—պատասխանեց Մելանիան, կարծես մարդուն ավելի գրգռելու համար,

— Մելանիա, ինչ է պատահել քեզ։ Դու շատ ես փոխվել դու այդպիսի կին չեյիր։

Մելանիան սկսեց լուռ հագնուել։ Հագուստը սփռված էր հատակի վրա անկարգ, վորպես անփույթ դերասանուհու զգեստները թատրոնական հանդերձարանում։

— Մելանիա, այդ քեզ իսկի չի սազում։

— Ինչու՞։

— Դու հայ կին ես։

— Հայ կնիկը արյուն չունի՞,—պատասխանեց Մելանիան, հեգնաբար ժպտալով.

— Արյո՜ւն,—կրկնեց Սամսոնը, այս մի հատիկ բառի մեջ զգալով ինչ-վոր չար և սոսկալի խնամու։

— Արյուն, այո՛, արյո՜ւն։

— Բայց գիտե՞ս ովքեր ունեն այդպիսի արյուն։

— Կոկետուհիները,—լրացրեց Մելանիան անփույթ յեղանակով, ժողովելով ուսին սփռված խիտ մազերը։

Սամսոնը կաշկանդվեց նրա համարձակությունից։

Մելանիան, թևքվելով, վոր անկողնակալի տակից դուրս քերի հողաթափները, ավելացրեց.

— Ուրիշներն անում են ազամարդի համար, ես անում եմ ինձ համար, կարծեմ, մի մեծ մեղք չե՞ս։

— Մելանիա, այդ... անամոթություն է...

Մի բարձր արծաթահնչյուն կծու ծիծաղ տարածվեց փափուկ գարնանային մթնոլորտի մեջ, վորպես ծիծեռնակի ծլվլոց։

— Անամոթությո՞ւն... Վոր այդպես է, ինչու՞ եկիր ուզում գրկել ու համբուրել։ Գրավիչ եյի, այո՛։ Հասկանում եմ. չե՞ վոր յերիտասարդ եմ, գեղեցիկ, թարմ, և դու... ուզում եկիր տիրանալ... Ցանկություն...

Նա հանդարտ քայլերով դուրս գնաց, թևքիանկի բարձրացնելով հագուստի փեշը յեռանից։

Սամսոնը, ապշած, նայեց նրա յետևից։ Այդ կնոջ հողաթափերն անգամ տարածվում եյին ախտաշարժ ոդի փափուկ գորգի վրա...

«Նա ինձ տանում է», ասաց Սամսոնը ինքն իրան վճռաբար։

Նայեց անդիտակցաբար հայելուն և տարափեց։ Ողորմած Աստուած, այդ կնոջ համեմատ նա վոչ միայն ծեր է, այլ և զառամյալ։ Նրա ճաղատ գլուխը, արագ-արագ ճերմակող ընչացքը, թուլացած ուսերը, խոր ընկնող այտերը, բոլորը արդեն սկսել են արտահայտել կենդանի մահացում։ Զգում է, արդյոք յուր լերդների մեջ յերիտասարդական արյուն, ինչպես կարծում եր։ Վո՛չ, այս սուտ է, ինքնախաբեություն։ Նա չի կարող անդրդվ ժամանակի առաջն առնել։ Ի՞նչ օգուտ կրքից, յերբ...

Ա՛խ, խլեցեք նրանից հարստության կեսը, մեկն թե պահպանեք նրա տարիքն ու կիսով չափ։ Տվեք նրան կյանք. վորովհետև նա սիրում է Մելանիային և ուզում է նրանից սերված լինել, վորովհետև ուզում է ապրել բառի ընդարձակ մաքով։

«Միթե հայ կինը արյուն չունե՞», հնչում եյին չարագուշակ բառերը Սամսոնի ականջներում։

IV

Ամառվա սկզբին Մելանիան տեղափոխվեց ամարանոց։ Նա չկարողացավ այդ տարի արտասահման գնալ, վորովհետև Սամսոնը զբաղված եր։ Բալաքի մի լավ փողոցում կառուցանել եր տալիս սեփական տուն և ուզում եր մինչև վերջը անձամբ հետևել շինությանը։

Ճաշարանը մի անդամ Սամսոնը գնում եր ամարանոց և կե-

քակի օրերն անցկացնում ընտանիքի մոտ։ Յերբեմն իր հետ տանում էր Փիրուզյանին։ Մելանիան այժմ այլ ևս մի առանձին ուշադրություն չէր ցույց տալիս հյուրին, միայն նուրբ աչքը կարող էր նկատել, որ նրբը տեսնում էր նրան, առաջին վայրկյան աչքերը շողշողում էին ուրախությունից։ Բայց միայն մի վայրկյան, այնուհետև դեմքը սքողվում էր այն նույն քողով, որ քանի գնում, անթափանցելի էր դառնում։

Սամսոնը չէր նկատում այդ վայրկենական փոփոխությունը, և չէր էլ կարող նկատել։ Ազգակցական կապի մասին նրա պատկերն այնքան մաքուր էր, որ մտքին անգամ չէր անցնում, թե Փիրուզյանը կարող է իր կնոջ վրա աչքով նայել։ Վերջապես Մելանիան այնքան քիչ էր հետաքրքրվում Փիրուզյանով, որ Սամսոնը յերբեմն մտքում բարկանում էր նրա վրա։ Ի՞նչպես կարելի է սառն վերաբերվել դեպի մի այնպիսի ազգական, չի որ ներս է մանում թե չէ, խնդուքն գրկում է Ժորժիկին, ուսերի վրա բարձրացնում և ամբողջ ժամանակ նրան բաց չի թողնում ձեռներից։

— Մելանիա,—դարձավ նա մի որ կնոջը,—դու քանի գնում, վատ ես վարվում Արտուրի հետ։ Չե՞ս հավանում։

— Ի՞նչ հավանելու, չհավանելու բան կա. հարյուր ազգական ունես, նա էլ նրանցից մեկը։

— Բայց դու իմ վրէ մի ազգականի հետ այդպես սառը չես վարվել։

— Չարժե այդ մասին խոսել, լավ։

Մելանիան գրկեց Ժորժիկին և դրեց ծնկների վրա։ Բաց աբա- գունատգույն պատկերների մի ժողովածու (Փիրուզյանն էր նվիրել Ժորժիկին), բռնեց փոքրիկ մատիկը և, շրջեցնելով պատկերների տակ, կարդում էր զանազան կենդանիների անունները։

Սամսոնը դադարեց ընտանեկան տեսարանից։

— Հնարաքը մի կողմը,—ասաց նա, շուռով Ժորժիկը կարող է այլուրեն սովրել։

— Շուռով,—կրկնեց Մելանիան, դառը քմծիծաղ տալով,— վրէ, դու դեռ շատ պիտի սպասես։

Սամսոնը չըմբռնեց այս խոսքի մեջ թաղնված հեգնանքը։

— Կսպասեմ,—ասաց նա ժպտալով։

Մի որ, յերբ նա ամաչանոց յեկավ մննակ, Մելանիան հարցրեց.

— Ինչո՞ւ ազգականդ չբերեցիր։

— Զուրեց գալ։

— Ինչո՞ւ։

— Ե՛, յերևի, հասկացել ե, վոր դու չես սիրում իրան։

Մելանիան շրթունքները թեթևակի կծեց։

— Յեթե հասկացել ե, շատ լավ ե արել։

— Մելանիա,—արտասանեց Սամսոնը յանդիմանաբար։

— Նա ինձ բոլորովին դուր չի գալիս։ Այս, դուր չի գալիս, յեթե ուզում ես ճշմարիտ իմանալ։

— Բայց լավ չես անում։ Պետք ե նրա հետ քիչ քիչ շատ քաղաքավարի վարվես, թե չե—քուրդս կլսի, կվիրավորվի։

— Մի՛թե,—արտասանեց Մելանիան մռայլոտ և անորոշ։

— Յես մյուս անգամ անպատճառ հետս կբերեմ նրան։

Մելանիան խնդուքն չպատասխանեց, լռեց մի քանի վայրկյան և հետո ասաց.

— Դու գիտես, ազգականը քոնն ե...

Այդ որը նա Սամսոնին թվաց սովորականից ավելի տխուր, դունատ, նույնիսկ նիհար։ Կարելի եր կարծել թե ամառանոցի ոդը լավ չի ներգործում նրա վրա։ Սամսոնը հարցրեց.

— Մելանիա, դու առողջ ես...

— Յե՞ս—կրկնեց Մելանիան,—յես բոլորովին առողջ եմ... Յեվ, կարծես, հանկարծակի մի բան հիշելով, նկատելու չափ գրգռված, ավելացրեց.

— Լավ կանես, վոր քո մասին մտածես.

— Ինչո՞ւ, յես ել բոլորովին առողջ չեմ։

— Դե՛... այո... առողջ չես...

Սամսոնը զարմացած նայեց կնոջ յերեսին։

— Մելանիա, ինչ ես ուզում ասել։ Յես առողջ եմ և միշտ ել առողջ եմ յեղել։

— Ե՛հ ավելի լավ, շատ ուրախ եմ։

— Այդ ինչ տեսակ ես խոսում, Մելանիա։ Ասա։

— Ասեմ,—կրկնեց Մելանիան հանկարծ մի համարձակ հայացք ձգելով ամուսնու աչքերի մեջ։

— Ասա։

— Դու պահանջում ես։

Մելանիան, գլուխը թեքելով կրծքին, սկսեց մտածելով նայել գրպանի արագությամբ պատճենել սեղանի վրա դրած ծխախոտատուփը։

— Բայց ավելի լավ և չխոսել այս մասին,—ասաց նա, վերջապես, տուփը սեղանին գարկելով և վոտքի կանգնեց։

Սամսոնը քանի գնում, ավելի ու ավելի եր հետաքրքրվում հնով խոսքերի մեջ զգում եր մի հետին թունավոր միտք, մի մթություն, որ անդունդ վաղուց և Մելանխային զբաղեցնում։ Նա ինքն այդ միտքը բացատրեց այլ կերպ։

— Մելանխա, ասեմ չես ասիլ, հնեղանամ։

— Եհ, շատ լավ, որ ատիպում ես, կասեմ։ Դու հիվանդ ես։

Մի վայրկյան Սամսոնը կարծեց, թե կինը կատակ է անում, թեև սպասում եր լսել նրանից հենց այդ պատասխանը։

— Ես հիվանդ եմ, յես,—գոչեց նա ծիծաղելով։

Յեվ նրա ծիծաղը հնչեց այնքան թատամ, այնքան ծերունական, որ Մելանխան ակամա ցնցվեց։

— Ես հիվանդ եմ. յես,—կրկնեց Սամսոնը այս անգամ լուրջ,—ասա, ինչո՞վ։

— Թող ի սեր Աստծու...

— Չիմա չեմ թողնիլ, մինչև որ բոլորը չասես։ Տեսնում եմ, դու իմ մասին վատ կասկած ունես։ Դու ինձ զպարտում ես. զպիտիս, զպարտում ես... չես կյանքումս հիվանդ չեմ յեղել...

— Այո... կարելի է... բայց ես այդ չեյի ուզում ասել...

— Ուրեմն ինչ, ասա, ինչ է իմ հիվանդությունը...

Մելանխան զլուխը հանդարտ բարձրացրեց, ուղիղ նայեց ամուսնու յերեսին և արտասանեց.

— Ծերություն...

Վորքան վիշտ, վորքան կծու հեգնանք կար այս մի հատ բառի մեջ։ Վիշտ՝ Մելանիայի, հեգնանք՝ Սամսոնի համար։ Յեվ մի վայրկյանում հիսունուչորս տարեկան ժորդը ծերացավ ամբողջ տասը տարով։

Անո այն վայրկյանը, վորին վերջին ժամանակ սպասում եր ամեն որ, ամեն ժամ, և սպասում ներքին սարսափով.

— Ես ծեր եմ,—կրկնեց նա անեռանդ ձայնով և մի տեսակ հուսահատությամբ։

— Այո, դու ծեր եղ, մինչև չգիտեիր։

Սամսոնը թուլացած ընկղմվեց բազկաթոռի վրա։

Մելանխան կամացուկ դուրս գնաց սենյակից...

V

Անդադար կին. նա չկամեցավ գեթ տակավ ինչ մեղմացնել յուր անողոք խոսքերի ուժը։

Մեղմացնել, բայց ինչու. մինչև նա սուտ ասաց կամ զբաղաղանքն ուղղակի այնտեղ տեղափոխեց։

ՀՍՍՀ-ԿԳՊ

Խեղճ մարդ. վորքան եր աշխատել նոր կացարանին կարեւորություն չափ ճոխություն ու շուք տալու։ Շատ կան-կարասի նոր ե-յին բերել տրվել արտասահմանից. վորովհետև հները չեյին համապատասխանել սենյակների շքեղությանը։ Պատերը յուղաներկ ներկված, դռները թանկագին կաբմիր փայտից, լուսամուտները շրջափակված վոսկեզոծ սյուների մեջ—ահա գլխավոր դահլիճը։ Հարկավ, մնացյալ սենյակներն ել համապատասխան շուք ունեյին։ Ախոռատանը խրխնջում եյին մի զույգ ձիեր, այս անգամ մոխրագույն, պոչերը կարած։ Գլխավոր մուտքի մոտ կանգնած եր պարթևահասակ շվեյցար, իսկ մարժարիտնյա սանդուղքը զարդարված եր գեղեցիկ արձաններով ու թանկագին արոպլիական բույսերով։

Յեվ այս բոլորը Մելանիայի, միայն Մելանիայի հաճույքի համար. այնքան եր սիրում նրան Սամսոնը։ Այն ինչ, ինքը՝ Սամսոնն վորքան փոխվել եր այս վերջին յերկու շաբաթվա ընթացքում։ Վոչ միայն նիհարել եր, այլ և ավելի ծերացել, այլ և մեջքից բավական կորացել։ Այժմ նա լուռ եր, վորպես անշարժ ջուր։ Մի միտք արճիճի պես ծանրացել եր նրա հոգու վրա։ Այդ նույն միտքն եր, վոր վերջին տաբիները հալածում եր նրան և վորից այժմ ազատվելու հնար չեր գտնում...

Բաղաք բերելով Մելանիային, նա հարցրեց արդյոք առաջիկա սեզոնին ինչպես և կամենում կարգադրել կյանքը։ Պիտի անցյալ ձմռվա պես դռները բաց անի բազմաթիվ ու բազմատեսակ ծանոթների առջև, թե՞ ուզում և ուրիշ կերպ ապրել։

Մելանիան հետաքրքրված եր նոր բնակարանով ու նոր կահ-կարասիով, բայց վոչ այնպես, ինչպես մի տալի առաջ եր հիանում ամեն մի շքեղությամբ։

Նա պատասխանեց.

— Վճռել եմ այսուհետև ուրիշ կերպ ապրել։

— Ի՞նչպես։

— Ուզում եմ հասարակական գործերով զբաղվել։ Իրավունք կտա՞ս.

— Արա՛, ինչ վոր սիրտդ ուզում և, միայն թե չտխրես։ Յես չեմ սիրում քեզ տխուր տեսնել.

Այս բոլորովին անկեղծ եր. Սամսոնը չեր կամենալ Մելանիային տխուր տեսնել կամ, ավելի ճիշտ, վախենում եր նրա տխրությունից։ Բարվոք կհամարեր նրան տեսնել գործերով զբաղված, քան ինքն յոր մեջ ամփոփված։ Պարապությունը,

նրա կարծիքով, կարող եր յերիտասարդ կնոջ տանել դեպի ոչ պիտե ինչ վտանգավոր մտքեր...

Մելանիան սկսեց զբաղվել հասարակական գործերով։ Վաղի բանալիով բաց արավ յուր առջև բոլոր այն հիմնարկությունների դռները, ուր միայն կարող եր մուտք ունենալ կինը։ Սամսոնը զոհեց մի խոշոր գումար, Մելանիան ընդունվեց արիստոկան գիմնազիոնի պատվավոր հոգաբարձու։ Բանի մի ուրիշ ներ-վերներ յերիտասարդ կնոջը իրավունք ավեցին այս կամ այն բարեգործական ընկերության խորհրդի անդամ ընտրվել։ Այս բոլորը շուռում եր Մելանիայի սնապահությունը և շարժում շահերի նախանձը։ Սկսեցին նրան բանբասել, անվանել Parvenue, չարախոսել նրա վրչ միայն գործունեյությունը, այլ և անձը, վերագրելով նրան հազար ու մի վատ ձգտումներ։ Իսկ նա վոչ վոքի վրա ուշ չեր դարձնում։ Նա խելոք եր և վոչ զուրկ տաքից, գիտեր և՛ արհամարել մարդկանց, և՛ փակել նրանց բերանը յուր սիրալիր վարմունքով։ Մեկին հաղթում եր յուր ճաշերով ու ընթրիքներով, մյուսին զբոսանքի համար առաջարկելով յուր շքեղ կառքը, յերրորդին ուղղակի այցելություն անելով և այլն։

Որը մինչև յերեկո զբաղված եր։ Գրում եր նամակներ, ցրվում եր այս կամ այն բարեգործական յերեկույթի տոմսակները, պատվերներ եր տալիս, պատվերները կատարում և հոգնում։ Ո՛րտանո՞ւմ եր յուր վիճակը. այսինքն այն, ինչի պատճառով իսկապես զբաղվում եր հասարակական գործերով—վոչ. նա խաբում եր ինքն իրան։ Բայց չանք եր անում մոռանալ։ Ավելի. նա անկեղծ ցանկանում եր սիրել Սամսոնին։ Այս նպատակով քննաբարում եր ինքն իրան, խեղդում յուր մեջ շատ ապօրինի, վտանգավոր, բայց հաճելի զգացումներ։ Նա հեռու եր պահում իրան տղամարդկանց շրջանից, վորպեսզի չվրդովի վոչ յուր և վոչ Սամսոնի աբյունը։ Իսկ կանայք առաջվա պես վայելում եյին նրա ընդարձակ հյուրասիրությունը։

Սամսոնը վոչ մի նկատողություն չեր անում նրան այս կամ այն քայլի մասին և միշտ կրկնում եր.

— Արա՛, ինչ վոր քեզից ես։

Բայց այս խոնարհության մեջ Մելանիան ակամա զգում եր ինչ-վոր վատ բան. ինչո՞ւ—ինքն ել չգիտեր։ Մի որ նա հարցրեց ամուսնուն.

— Դու բարկանում ես ինձ վրա՞

— Ո՛վ ասաց։

— Ինձ այնպես է թվում.

— Ի զուր։ Ցես քեզ վոչինչ, վոչինչ չեմ տրպելում, արա, ինչ վոր քեզի է։

— Դու ունես իրավունք արգելելու։

— Ունեմ, բայց չեմ արգելում։

— Իսկ ես ազում եմ, վոր դու ինձ շատ էլ ազատություն չտաս։

— Հա, հա, հա,—ծիծաղեց Սամսոնը,—դու մի կարծիր, թե ես քո ազատությունից վախենում եմ։ Վաչ, ես վախկոտ չեմ։

Նա խորը նայեց կնոջ աչքերին։ Մելանիան գլուխը թեքեց կրծքին, մի քիչ կարմրելով։ Խոսակցությունը սրանով էլ վերջացավ։

VI

Փիրուզյանը հաճախ այցելում էր Սամսոն Ջրանգուլյանին։ Նկատելով, վոր ազգականը անգործ տխրում էր, հանդիմանում էր նրան։ Ահագին պրամազլուխը դրել է բանկ և ձեռները անշարժ նստել։ Ինչու չի սկսում մի նոր ձեռնարկություն և իր կյանքի պակասը լրացնում,

— Ծերացել եմ,—պատասխանեց մի որ Սամսոնը կատակով, բայց ակամա հառաչելով,—լեռանդ չունիմ նորից գործեր սկսելու։

— Ծերացել—կրկնեց Փիրուզյանը,—դուք ձեզ ծեր եք համարում։ Դուք ինձանից լրիտասարդ եք։

— Քառասուներկու տարով ձեզանից մեծ եմ. պիտի՞ք, ինչ ասել է քսանչերկու տարին մարդու կյանքում։

— Տարիքը պատարկ բան է, գլխավորը մարդու ուժերն են ու սիրտը։

Նա շատ լավ գիտեր, թե վորքան կործանիչ է ժամանակի ուժը, թե վորքան մարդիկ խաբում են իրանց, երբ ասում են. «Ես ես տարիքով ծեր եմ, բայց սրտով, հոգով ու ուժով լրիտասարդ եմ»։ Սակայն խորամանկ էր, ճանաչել էր ազգականի թուլ լերակը և աշխատում էր շոյել նրան։ Ահա ինչու Սամսոնը իսկապես սիրում էր նրան։ Այդ լերիտասարդի մոտ նա շատ էլ չէր զգում յուր ծերությունը։

Ամեն կիրակի, լերբ ին նաև շաբաթամիջին, Փիրուզյանը ճաշում էր Ջրանգուլյանի տանը։ Գալիս էր ճաշից շատ առաջ և հեռանում ճաշից շատ հետո։ Ցերբեմն Մելանիային հանդիպում էր տանը մենակ, և մինչ ազգականի պարզ հարցաքննությունը էր վերջանում դեպի նա։ Այն ինչ, Մելանիան շարունակ ցույց էր տալիս անտարբերություն, լերբեմն նույնիսկ սառնություն։ Մինուլն ժամանակ, այլ ևս Սամսոնի հետ չէր խոսում Փիրուզյանի մասին։ կարծես, նրա համար մինուլն է. կա այդ մարդը թե չե։ Բայց և այնպես, այժմ էլ նա լերբեմն մտքում համեմատում էր Սամսոնի հետ է մինչ մտածում. ինչու՞ Սամսոնը նրա հետաքրքիր չէ։ Ա՞ռ, այն ժամանակ Մելանիան յերջանիկ կլիներ։ Իսկ այժմ նրա արլունքը չի հուզվում Սամսոնի մերձավորությունից, և այս կատարելագործում է նրան։ Մինչդեռ հուզվում է, լերբ մի վայրկյան ազատություն է տալիս իրան և դիտում Փիրուզյանի առնական ուլծով տոգորված դեմքը, նրա աչքերի յերիտասարդական փայլը։

Մի որ Փիրուզյանը լսկսավ այն մասին, լերբ Սամսոնը տանը չէր և շուտ էլ չպիտի վերադառնար։ Մելանիան ընդունեց նրան ամուսնու կաբինետում և ընդունեց ավելի սառը, քան ամուսնու ներկայությամբ։

— Սամսոնը տանը չէ,—շտապեց ասել նա։

— Ափսո՛ս,—արտասանեց Փիրուզյանը և խորը հայացքով նայեց Մելանիայի աչքերին։

Այդ հայացքը թե բարկացրեց և թե շլոթեցրեց Մելանիային։

— Գոնե ունկնդիք հնար,—հարցրեց նա։

— Այո՛։

— Այսոր շատ ուշ կգա տուն։ Ճաշի լե հրավիրված։

Նա կամենում էր հյուրին ճանապարհ դնել, բայց հյուրը, նրա ձեռի թեթև շարժումից ոգևորվել, նստել էր Սամսոնի գրասեղանի քով։ Նա սիրասիրան կատարելագործում էր Մելանիային իր յերեսի թարմ գունով, իր աշխույժ ձևերով, այն մարմնավոր ուժով, վոր արտահայտվում է յերեսունհոգոս տարեկան տղամարդի յուրաքանչյուր շարժմամբ։

— Դուք ինձ ներեցեք, յես ձեզ կթողնեմ մենակ։ Հյուրասենյակում ինձ սպասում է վորբախնամ ընկերության վարչության նախագահը։

— Խնդրեմ, խնդրեմ,—չշփոթվեց Փիրուզյանը,—գնացեք, զբաղվեցեք բարի գործերով, իսկ ինձ թույլ տվեք մի փոքրիկ նամակ գրել Սամսոն Գեորգովիչին։ Գործը շատ կարևոր է, հետաձգել չի կարելի։

Մելանիան հեռացավ։ Հյուրը մնաց մենակ։ Վերցրեց մի թերթ վոշտի թուղթ և գրիչ։ Գրեց մի քանի տող, հետո գրիչը ցած դրեց և, թիկն տալով բազկաթոռին, ընկավ մտածմունքի մեջ։

Արդեն մի քանի ամիս եր, նրա միտքը զբաղված եր Մելանիայով։ Նա չափազանց հավանում եր յերիտասարդ ազգականուհուն և հավանել եր հենց առաջին տեսնելով։ Նրա հաճախակի այցերի գաղտնի շարժառիթը սիրինն եր։ Նա չեր շփոթվիլ, յերբ Մելանիան մինչև անգամ բոլորովին չխոսեր նրա հետ։ Տասը տարի պատելով մայրաքաղաքի շրջաններում, բավական ուսումնասիրել եր գեղեցիկ կանանց հոգեբանությունը։ Իսկ այս հոգեբանությունը, նրա համոզմունքով, ամեն տեղ և բոլոր ազգերի կանանց մեջ միևնույնն եր։ Նա գիտեր, վոր Մելանիայի անտարբերությունն արտաքին և, ստիպողական, վոր մի յերիտասարդ ու գեղեցիկ կին չի կարող մի այդպիսի թառամած ամուսնու մոտ վոչինչ չզգալ գեպի մի յերիտասարդ տղամարդ, վորքան էլ բարոյական ու առաքինի լինի։ Նա այս շատ լավ գիտեր, ուստի Մելանիայի սառնությունը չեր նրա մոտատանջության պատճառը և վոչ էլ այն, վոր Մելանիան նրա ազգականուհին եր։ Փիրուզյանը պատկանում եր ժամանակակից այն յերիտասարդների շարքին, վորոնց աշխարհահայացքը զերծ է ազգակցական կամ բարեկամական կապերի «նախապաշարումներից»։ Սակայն Սամսոն Ֆրանգուլյանը լավ մարդ է – ահա գլխավորը։ Նա շատ և հավատում Փիրուզյանի աղնվությանը—ահա անտանելին։

Ինչ անել։ արհամարհել այդ մարդու հավատը, վոտնատակ անել նրա պատիվը։ Ո, վոչ, այս արդեն ծայրահեղ ապականություն կլինի, անամոթություն։ Ուրեմն ինչ անել. մոռանալ Մելանիային։ վոչ, արդեն այդ կինը շատ հրապուրիչ է, արդեն նա բավական խորը տեղ է բռնել Փիրուզյանի սրտում։ Մոռանալ անհնարին է։ Ցավ ինչու մոռանալ, մանավանդ, յերբ նա հիմար է, մանավանդ չգիտե, վոր ի՛նչ վոր հաճելի յես իրան, հաճելի յես և՛ Մելանիային վոր սիրուն սիկինը ուզում է զգալ ու ապրել, վոր նա, իսկապես, ատում է իր կողակցին, թեև դուցե հարգում. վոր նա շատ էլ նախապաշարված կին չէ, վոր դարավերջի ապականությունը նրա հոգեկան աշխարհի վրա ունեցել է վորոշ ներգործություն, վոր վերջապես, վոչ մի կին, նույն իսկ հայ կինը, չի կարող տղամարդի մեջ չսիրել հանդգնություն ասված բանը, մանավանդ յերբ տղամարդը յերիտասարդ է և վոչ այնքան էլ տգեղ...

Վճռված է։ Աշխարհի յերեսին ամեն վոք ունի իրավունք ապրելու, իսկ մի յերիտասարդ կին ու մի յերիտասարդ տղամարդ—նամանավանդ։ Ցավ չկա օրենք, վոր կարողանա վանդակել նրանց ապրելու կյանքը բարձր և բարոյականությունից։ Ինքը բարոյականությունն ասված միտքը առաջադիմական է, նրա կանոնները փոխվում են ժամանակի ընթացքում։ Այժմ իսկ այդ կանոնները տարբեր են պանդուխտ կլիմաների տակ, պանդուխտ մարդկային համայնքների ու կրոնական համախմբերի մեջ։ Մի բան և միայն անփոփոխ—մարդկային սիրտը։ Անփոփոխ մի ձգտման մեջ—զգալ ու վառվել սեռային կրքով, քանի վոր ընդունակ և վառվելու։ Լավ և առաքինի մարդ միայն, բայց կենդանության ուժը անհաղթելի յե կենդանի մարդու համար, նաև գերազանցելի բարոյականությունից։ Հիմար մարդիկ, անսեր. գրքերից խոսում եք թուլությունների մասին, մեր մեջ ազատինները այնչափ միամիտ են, վոր չեն կարծում եր հրեշտակը։ Ո՛վ և սահմանել ընկերական կյանքի կանոնները, այդ բարոյականություն կոչված և անհասանելի, անշոշափելի շինության հիմքը։—Մարդիկ։ Ես, ուրեմն մարդիկ չունեն իրավունք քանդելու այն, ինչ վոր ինքն ըստ ինքյան խորտակվում և ժամանակի ավերիչ ուժից։

Մի ուրիշ խնդիր, վոր Փիրուզյանին զբաղեցրեց, Սամսոն Ֆրանգուլյանի լավ մարդ լինելն եր։ Արդյոք, այս ճշմարիտ է, արդյոք կարելի յե այդ մարդուն լավ համարել։ Ինչ իրավունքով և նա տիրացել մի յերիտասարդ կնոջ, յեթե, իրավ, լավ է։ Նե, այդ քաչքաչված, այդ հնամաշ միլիոները։ Մթթե լավ մարդը փողով կգներ մի անփորձ հյակի. մի գեռահաս աղջկա, գրեթե մի յերեխայի բազդը, ճակատագիրը, կյանքը։ Ո՛ո, վոչ, հազար անգամ վոչ։ Բայց վոր գնել է—թող կարողանա և պահպանել, ինչպես գիտե պահպանել իր միլիոնները։ Վոր չի կարող պահպանել թող տուժի։ Մելանյան խոսված հյակ է, այն ժամանակ, յերբ վորոշվել է նրա ճակատագիրը, կյանքի մասին վոչինչ և վոչինչ գաղափար չի ունեցել։ Այժմ է նրա մեջ զարթնել կյանքը, այժմ է սկսում յիոել նրա արյունը։ Ցավ մթթե զարնան այս նոր-նոր բացվող ծաղիկը պիտի թողնել աշնան պաղ ձեռներում։ Ինչու. ոչ է և այն բռնակալը, վոր ժամանակի վրա անգամ տածում է իր իշխանությունը։—Մի յեսամոլ ծերունի իր միլիոններով հանդգնում է վոտնատակ անել բնության օրենքները։ Այդ զզվելի յե...

Վճռված է. Մելանիան բնական օրենքով այն մարդուն է

պատկանում, ով դրդռել կարող է նրա կիրքը։ Ով ուզում է, թող լինի այդ մարդը՝ ինքը Փիրուզյանը, թե մի ուրիշը։ Պետք է այս քանը հասկացնել յերիտասարդ կյակին և դժալ տալ նրան, թե դա մի մարդ, վոր դիտե ըմբռնել նրա գաղտնի վիշաը։

— Թուք վերջացրիք ձեր նամակը,— լսվեց հանգարծ Մելանիայի ձայնը։

— Յես չգրեցի։

Մելանիան նստեց, նստեց նաև Փիրուզյանն անմիջապես։

VII

Ինչ է նշանակում այս. Մելանիան անկեղծ ուզում է ազատվել այդ մարդուց, և խոսք չի գտնում նրան հեռացնելու։ Նա կաշկանդվեց հյուրի մի յերկարատև նայվածքից, և գլուխը քնքուշ կրծքին, թեթևակի կարմրելով։

Նա զգում է, վոր աչյունը յերակների մեջ սկսում է հոսել առանձին ուժով և մարմինն պատճառել անսովոր ու ախորժելի զգոց։ Ցավ այս է, վոր կատարեցնում է նրան։ Ոչ, վոչ, պիտի այդ մարդուն ուղղակի, թեկուզ անքաղաքավարի կերպով, ճանապարհ դնել։ Մելանիան առում է նրան հոգու բոլոր ուժերով, ինչպես կարող աղի մի կին մի ազատարդու։ Այդ մարդու դեմքն արդեն պատանյատում է վատ բան, շատ վատ բան։ Բայց ինչու Մելանիան հենց այս րոպեին խղճում է Սամսոնին...

— Ուզում եմ ժորժիկին կատրով մի քիչ զբոսեցնել, յեղանակը լավ է,— փորձեց նա հասկացնել հյուրին, թե չպիտի յերկար նստել։

— Ժորժիկը, ձեր վորդին, ո՞ր, շատ լավ յերեխա է, աղուշ, դեղեցիկ, և զարմանալի նման է հորը,— նկատեց Փիրուզյանը, անուշադիր թողնելով Մելանիայի բառերի բուն իմաստը։

Չե, այդ մարդը միանգամայն հանդուգն է։ Սակայն նրա հանդգնության մեջ կա ինչ-վոր քաշող ուժ։ Յերբեք և վոչ վոք Մելանիայի վերաբերմամբ այդքան անքաղաքավարի չի յեղել, ճիշտ է, բայց և յերբեք և վոչ վոքի ներկայությունը այսքան չի կաշկանդել նրան։ Նա անկեղծ ուզում է վախչել այդ մարդուց և միևնույն ժամանակ, մի անհաղթելի ուժից մղվում է դեպի նա։ Ինչ ասել է այս։ Միթե աղեղի մարդը կարող է այսքան ձգողական ուժ ունենալ։

— Այսոր ուզում եյի Սամսոն Պետրովիչի հետ խոսել մի շատ լուրջ գործի մասին,— ասաց Փիրուզյանը, շարունակելով իր խորհրդավոր հայացքի տակ պրել յերիտասարդ կնոջը։

Բանն այն է, վոր Սամսոնը անգործ սեխուում է, պետք է վոր նա մի վորևե նոր գործի ձեռնարկի։ Մի այնպիսի գործ կա, հենց այս մասին եյի ուզում Սամսոնի անունով նամակ գրել ու Թողնել նրա սեղանի վրա։ Կառավարությունը տալիս է մի ահագին անտառ, շահագործելու համար։ Մեծ գումար և հարկավոր, հազին անտառ, շահագործելու համար։ Մեծ գումար և հարկավոր, ամբողջ քազաքում գուցե միայն Սամսոնը կարող է այդ կապալը վերցնել։ Բայց մեծ ել ուզում կարելի չե ունենալ։

— Ներեցեք, յես այդ տեսակ գործերից վոչինչ չեմ հասկանում,— արտասանեց Մելանիան, մի անգամ ևս փորձելով գրգռել հյուրին, թե չի ուզում յերկարացնել։

Բայց հյուրը շտապեց ոգավել հենց այդ խոսքերից։ Նա ասաց.

— Ո՜ո, շատ ուրախ եմ, վոր չեք հասկանում։ Այդ պատիվ և բերում ձեր ճաշակին. կյանքը շատ տխուր կլիներ, յեթե չերեսասարդ ու գեղեցիկ կանայք ել հետաքրքրվին նյութականով։ Ապրել ու գվարճանալ—անա ինչ է վայելում ձեր հասակին, դեմքին, գեղեցկությանը։

Այս խոսքերը ներգործեցին Մելանիայի վրա։ Նա մինչև անգամ վախեցավ լսել նրանց շարունակությունը։ Փիրուզյանը այս հասկացավ և շտապեց ոգավել հարմար րոպեյից։ Կինը կյանքի ժպիտն է, պոեզիան։ Կինը, մանավանդ յերիտասարդ ու գեղեցիկ կինը, տղամարդի աստվածուհին է։ Միթե վայել է աստվածուհուն նյութականով հետաքրքրվել։ Կինը մինչև անգամ չպիտի մտածի լուրջ բաների մասին, վորովհետև մտածմունքը խորշեր են առաջացնում դեմքի վրա և ծերացնում կնոջը։ Կինը միայն պիտի պա, միայն պիտի սիրի ու սիրվի և միշտ ձգտի լիացում տալ իր զգացմունքներին...

Չգալ, լիացում տալ զգացումներին։ Մելանիան վախեցավ։ Փիրուզյանը խոսում եր նրա սրտի խորքից, նրա այժմյան տրամադրությունից։ Այլ ևս նա հաղթահարվեց, գոնե այնչափ, վոր դադարեց մտածել հյուրից ազատվելու մասին։ Այժմ նա լսում եր նույն իսկ հետաքրքրությամբ, թեև մերթ ընդմերթ անտարբեր ձևանալով, մերթ բարկանալով միմյանց հակասող, միմյանց չնչող զգացումներից։

— Յես շատ ուրախ եմ,—շարունակեց Փիրուզյանը յեռանդով,—վոր դուք զբաղվում եք հասարակական գործերով։ Բայց, ներեցեք, ինձ թվում է, դուք այդ անում եք, ը՜ը՜ը՜, անում եք... ձեզ խաբելու համար...

— Ուրեմն դուք չե՞ք հավատում իմ անկեղծությանը,—դառնչեց Մելանիան վիրավորված։

— Վո՛չ,—արտասանեց Փիրուզյանը համարձակ, մեղմիկ ժպտալով, և նայեց խոտակույտ բլրերին.

— Ի՞նչ իրավունքով։

— Իրավունքի քան չկա, ճաշակի խնդիրը ե։ Նախ և առաջ պիտի ասել, որ ես չեմ հավատում առհասարակ կանանց, մանավանդ չերիտասարդ կանանց հասարակական գործունեության։ Ես այսօրվ ճանաչում եմ մի քանիսին, որոնք իրենց չերևիանների հանձնում են ծառանների հսկողությանը, իսկ իրանք որը մինչև չերեկո վազվզում դես ու դեն մի լինչ-որ ձանձրալի պարտականդես կամ ավելի ձանձրալի ներկայացում սարքելու համար։ Նրանք չերևակայում են, թե իրենք կազմում են հասարակական կյանքի առանցքը։ Ո՜ո, անկարելի չե նրանց հետ վիճաբանել։ Ասում են հեղինակավոր չեղանակով, քննադատում են այնպիսի բաներ, որոնց մասին հավի հասկացողություն ունեն։ Այդ կանայք չերջանիկ են իրենց իլյուզիայով և դժբախտ՝ կյանքի տեսակետից նայողի աչքում։ Նրանք ավելի հաճելի կլինեին, եթե սովորեին ճաշակով հագնվել ու ճաշակով սանրել իրենց մազերը։ Գալով ձեզ, դուք, տի՛կին, գործել չեք ուզում, այլ, ի՛նչպես ասեմ... ղեալ ու ապրել. . Դուք աշխատում եք միայն գործով թմրեցնել ձեր սրտում նոր վառված շատ բնական ու շատ նեղելի ղեացումները։ Հասկանում եք կարծեմ։ Եվ, չի կարելի չասել, որ մի քիչ ել անափառ եք, ինչպես առհասարակ բոլոր հարուստ կամ վորևե դիրք ունեցող կանայք։ Վո՛չ, դուք գործել չեք ուզում, այլ ապրել, կրկնում եմ, ապրել։ Ինչո՞ւ—նրա համար, որ դուք այժմ, ներկա հանգամանքներում... չեք ապրում...

Հանդուգն մարդ։ Իր դիտողական ձիրքով, իր արծվային հայացքով նա թափանցում եր չերիտասարդ կնոջ սրտի խորքը և քրքրում դգուշությամբ թագցրած ղեացումները։

— Դուք սխալվում եք չես ապրում եմ և շատ լավ եմ ապրում,—ասաց Մելանիան այնպես արագ, որ կարծես, վախենում եր՝ մի գուցե ուրիշ բան ասի։

Մի թեթև հեգնական ժպիտ սահեց Փիրուզյանի դեմքով։ Տիրոց վայրկենական լռություն։

— Քանի՞ տարեկան եյիք, չերբ ձեզ ամուսնացրին,—հարցրեց նա անիսկույթ չեղանակով, սակայն վորոշ շեշտելով «ձեզ ամուսնացրին» բառերը։

Հարցը, հարկավ, համաձարկ եր, բայց չե՞ վոր Փիրուզյանը ազգական և, ունեի իրավունք թույլ տալու իրան վորոշ ազատություն։

— Զգիտեմ, չեմ հիշում,—պատասխանեց Մելանիան հուզմունքից դողացող ձայնով։

— Ցերեկ, տասնուվեց կամ, չատ չատ՝ տասնույոթ տարեկան,—լրացրեց ինքը Փիրուզյանը,—այսինքն այն հասակում, չերբ ձեր վերջին խաղատիկինը դեռ փշրված չեր։

Ցետ, մի վարկյան կանգ առնելով, ցածր ձայնով ու, կարծես, ինքն իր համար, ավելացրեց.

— Այո, այո, տղամարդիկ չեսամոլ են, վաճրագործության չափ չեսամոլ։

Պարզ եր, թե ում նյին վերաբերվում այս բառերը։

Եականը ասած եր. ավելի հեռու գնալն առայժմ և՝ անհարմար համարեց և վտանգավոր։ Նա վոտքի չելով—ժամացույցին նայելով, ժամանակ և ծորժիկին զբոսնելու տանել, թե ուիկինը նների, վոր հյուրը ձանձրացրեց նրան։

— Հուսով եմ, վոր ասածներս կատակի տեղ կընդունեք և կմոռանաք։

Ցերբեք նա այնքան չերիտասարդ. այնքան ուժեղ, այնքան գրգռացուցիչ չեր թվացել Մելենիային, վորքան այսօր, հետևաբար այնքան տեսնի և չերկյուղալի։

Ցերեկոյան, չերբ Մելանիան Սամսոնին հայտնեց Փիրուզոանի այցելության մասին, ավելացրեց.

— Վերցրու այդ կապալը, դու անգործ տերություն ես։

VIII

Մելանիան չեր կարողանում մոռանալ Փիրուզյանի խոսքերը։ Մտածում եր, քննում, վերլուծում և ակամա չեզրակացնում՝ թե վոր քան հանդուգն են այդ խոսքերը, նույնքան ճիշտ են։ Ճիշտ դոնե այն մասում՝ թե չերիտասարդ կինը պիտի զգա ու ապրի, վոր ինքը Մելանյան, պարապելով հասարակական գործերով, չի զգում այն, ինչ վոր պահանջում և սիրտը, թե կյանքն անցողիկ և, իսկ մարդ չերկրորդ անգամ չի ծնվում, թե վերջապես, «վորքան տղամարդիկ չեսամոլ են»։

Գոնվել և մի անձ, վորը հանդգնաբար կարդում և նրա մտքերը և շոշափում նվիրական զգացումները։ Ցա ինքն չերիտասարդ և, նրա ամբողջ կազմից մարմնավոր ուժն և բուրում,

այն, ինչ վոր վաղուց է թաւալել Սամսոնի մեջ։ Լավ մարդ է քե վատ, խելոք է քե հիմար, բարոյական թե անբարոյական,— այդ չէ խնդիրը։ Ներխաստարդ է—ահա գլխաւորը։ Ցեվ ունի իրաւունք ասելու, քե Մելանիան չի ապրում ու չի կարող ապրել լէ կյանքով մի ծերունու հետ։

Ամեն որ Փիրուզյանը գալիս էր իր ազգականի մոտ գործի վերաբերմամբ խոսելու։ Սամսոնը վաղուց էր դադարել մտածել դրամական շահերի մասին։ Ցեվ այս վոչ այն պատճառով, վոր վաղից հուշտ էր, այլ այն, վոր այժմ այլ ևս կյանքի քաղցրությունը դրամի մեջ չէր տեսնում, վորպես առաջ։ Նա անգործ ախորժում էր,—ահա ինչու համոզվեց կապալը վերցնել։ Իրաւունք տվեց Փիրուզյանին ճանրամասն տեղեկանալ պայմաններին մասին և ժամանակին հիշեցնել ճանապարհի որը։

Վորքան Մելանյան անկեղծ փութաղում էր առաջվա պես ջախջախել Փիրուզյանին, այնքան ավելի այժմ ներքին ուժը ժողում էր նրան դեմ յերեխասարդ տղամարդը։ Նա զգում էր, վոր վաղ թե ուշ այս տակաման հակումը կարող է Սամսոնի աչքին ընկնել։ Վախենում էր ամուսնուց—Վոչ, վախենում էր իր խղճից, չէր ուզում նրա դեմ վորևե հանցանք գործել։ Զգում էր, վոր իր գրությունը վտանգավոր է, վոր կարող է կոտրանալ, մոլորվել ուրընկնել առաջին պատահողի գիրկը, թիկուղ այդ առաջին պատահողը լինի անցորդի մեկը, առևտրի Փիրուզյանին, յերկնչում էր նրա մերձավորությունից, ինչպես մի թունալի ու առևտրի սխտից։ Ախտ, վոր թևև հաճելի ու արբեցուցիչ, բայց կործանիչ է։

Ցեվ նա կռվում էր ինքն իր հետ։ Ներքին զգում էր, վոր մարքի ուժը ահա, ահա պիտի հաղթվի կրքերի զորությունից։ Աչքերի յոտենները նա կարոտում էր Սամսոնի ուղղությանը։ Թող այդ մարդը նրա հետ վարվի խիստ, անողոք. այս և միայն այս կարող է Մելանիային փրկել, պահպանել նրան հնարավոր անհանգից։ Ներքին նա փափագում էր, վոր Սամսոնը խանգի Թևկուղ անտեղի զայրանա կատաղի և կշտամբե նրան ամենավիրավորական խոսքերով։

Մինչդեռ Սամսոնը վոչ միայն չէր խանդում, այլ և վիրին աստիճանի համբերող էր։ Դոնե այսպես էր յերևում արտաքուստ։

— Այսօր միասին գնանք ոպերա,—ասում էր Մելանիան, վոր սովորաբար մենակ էր գնում Թատրոն։

— Լավ, գնանք,—պատասխանում էր Սամսոնը, Թևև առելով ատում էր ոպերան։

— Այսօր սպասավորին հրաժարել եմ այսուհետև ցելլինգերով ու սյուրթուկով նստել կառապանի մոտ. Չերքեզկան ու գաղուհին զանգես տարել են։

— Լավ ես արել,—պատասխանում էր Սամսոնը, Թևև ամեն մի ցելլինգերի թշնամի էր, մանավանդ սպասավորների ցելլինգերին։

— Եզուց խոհարարին ուզում եմ արձակել, չեմ հավանում։

— Արձակիր,—պատասխանում էր Սամսոնը, Թևև խոհարարը շատ լավ էր պատրաստում նրա սիրած կովկասյան կերակուրները։

Այս անսահման հլուԹյունը, վերջապես, սկսեց ձանձրացնել Մելանիային։ Ինչ է նշանակում այս։ Ինչու՞ Սամսոնը այդպես խեղճացել է, կամքից զրկվել և ներկայացնում է իր դասակարգի մարդկանց կատարյալ հակապատկերը։ Անկարելի չէ, վոր այդ հլուԹյունը մի հնարին միտք չունենա, մի ավելի խոշոր պատճառ, քան սերը դեպի Մելանիան։

Մի որ Մելանիան փորձի համար ասաց, Թե վճռել է անգլերեն լեզվի դասեր վերցնել։ Կա մի պոլսեցի յերեխասարդ ուսուցիչ, վորին ուզում է վարձել վորպես ուսուցիչ։

— Ե՞ն, փորձիր յեԹե ուզում ես,—համաձայնվեց Սամսոնը։

— Ուրեմն Թույլ ես տալիս։ Իսկ Յուզանովը իր կնոջը չի Թույլ տալիս։

— Յուզանովն ինձ համար որինակ չէ։ Լեզուներ սովորելը լավ բան է։ Աստված են, մի լեզու իմացողը մեկ մարդ է, հինգ լեզու իմացողը—հինգ մարդ։

Մելանիան մի անհամբեր շարժումն արավ և լռեց։

Գնալով՝ Սամսոնի հլուԹյունը սկսեց ներա հնամար դառնալ արդեն վոչ միայն ձանձրալի, այլ և... զզվելի։ այլ ևս այդ հլուԹյան մեջ նա տեսնում էր ԹուլուԹյուն, բարոյական ուժերի բացակայուԹյուն։ Մի բան, վոր առհասարակ ատում էր ամեն մի տղամարդի մեջ։

Մի որ առավոտը, Թեյից հետո, Մելանիան ասաց.

— Սամսոն, այս յերեկո ուզում եմ պիմակահանդես գնալ, Թույլ կտա՞ս։

— Գնա։

Մելանիան գիտեր, վոր Սամսոնը ամբողջ հոգով հակառակ է պիմակահանդես գնալուն, և այս անգամ կատաղից կհիմնի գնա։

— Դու զարմանալի մարդ ես,— գոչեց նա ներվային քաշփոթ։

— Ինչո՞ւ։

Մելանիան մռայլվեց և հանկարծ արտասանեց.

— Չիմ սիրում այդ տեսակ ազատությունն։ Հասկանում ես, չեմ սիրում, զզվում եմ...

Սամսոնը նայեց նրա կերեսին զարմացած։ Կար ժամանակ, երբ Մելանիան սաստիկ ձգտում եր հենց այդ տեսակ ազատություն ունենալ, իսկ այժմ ինչ պատահեց։

— Մեղա Թե միտքդ հասկանամ,— արտասանեց նա, ուսերը վեր քաշելով։

— Չե՞ս հասկանում,— գոչեց Մելանիան նույն չղալին կերանակով,— ավելի վատ քեզ համար։ Ուզում ես վոր պարզ խոսեմ։ Դու խեղճ մարդ ես, իսկ կես խեղճ մարդկանց չեմ սիրում։

— Ցե՞ս եմ խեղճ մարդ,— կրկնեց Սամսոնը, ոտն հեզնությամբ ժպտալով,— կերևի դու ինձ դեռ լավ կես ճանաչում.

— Վո՛չ, այդ չեյի ուզում ասել։ Դու խեղճ չես, այլ չափից դուրս շատ ես սիրում ինձ։

— Տեր ամենակարող աստված,— կարողացավ միայն մըրմնջալ Սամսոնը։

— Մի սիրիր ինձ, այո՛, մի սիրիր...

— Ասա, ասա, տեսնենք ել ինչ ես ասում։

Հանկարծ Մելանիայի կոկորդի կերակները փքվեցին, կապտեցին, կերևի մկանունքները ազավազվեցին, կուրծքը բարձրացավ ուժգին։ Սկսեց հեկեկալ։ Սամսոնն արդեն սալեց։ Քանի մի վարկյան լուռ նայեց կնոջը, ապա մոտեցավ և ձեռը դրեց նրա ուսին։

— Մելանի՛ա, արդյոք հիվանդ չես դու։

Մելանիան մի բռալե թուլլ տվեց բուռն արտասունքին դուրս հոսալու, ապա մի քիչ զսպեց իրան, վոտքի կանգնեց։

— Ա՛խ,— ասաց նա, արցունքները արագ, արագ սրբելով,— կես ինքս ել չեմ հասկանում ինչ եմ ասում։ Դու սիրում ես ինձ, վո՛չ միայն ինձ՝ այլ և ծնողներիս, քույրերիս ու կեղբայրներիս։ Բայց ինձ թվում է, վոր դու այդպես չէիր լինես, ընդհակառակը, պիտի իմ գլխին բռնակալ դառնայիր։ Այո՛, այնպես, ինչպես հին ժամանակի ամուսինները։ Ուզում եմ, վոր դու ինձ վրա գոռայիր, չթույլ տայիր ինձ տնից դուրս գալ, թողնես մենակ, ինքդ գնայիր կլուբներում, հյուրանոցներում ու այդիներում քեֆ անես ուզում եմ, հարբած տուն գայիր, ինձ հայհոյեիր, ծեծեիր, հասկանում ես, ծեծեիր վոտներիդ տակը գցելով։ Կարող ես այդպես անել, ասա, կարող ես։

Սամսոնն արձանացել եր տեղն ու տեղը։ Նա չեր հավատում իր ականջներին։

— Ցեթե չես կարող հարբել, հայհոյել, ծեծել, գոնե հետս վարվիր այնպես, ինչպես իրանց կանանց հետ վարվում են այժմյան ամուսինները։

— Այո՛ն։

— Խաբիր ինձ, դավաճանիր, աչքիս առջև սիրուհիներ պահիր. մի խոսքով, վատ ամուսին լինիր, շատ վատ, շատ կոպիտ, անպիտան, կեղտոտ, գազան։ Այնքան կեղտոտ, այնքան գազան, վոր ամբողջ քաղաքը խոսի քո մասին, վոր ամենը քեզ ատեն ու հայհոյեն։ Քեզ ատեն ու հայհոյեն, իսկ իմ մասին ցավեն, ասեն. «խեղճ կինն, անբախտ կինն, ինչպես տանջվում և մարդու ձեռքին»։

Մի ինչվոր սուր միտք անցավ Սամսոնի ուղեղով։ Բայց աշխատեց իսկույն ևեթ ազատվել այդ մտքից։ Ծանր եր նա, դաժան, դարշելի։ Նա ձեռով մի բացասական շարժումն արավ, մոտեցավ Մելանիային, կերկու մատով բարձրացրեց ծնոտը, նայեց ուղիղ աչքերի մեջին և արտասանեց։

— Մելա՛նիա, հասկանում ես ինչ ես ուզում ինձանից։

Ձեվ, անցնելով սենյակի մյուս ծայրը, կես կիսով ու ավելացրեց.

— Զգո՛ւշ, Մելանիա, կեթե ուզենամ վատ մարդ լինել, շատ վատ կլինեմ. իմացիր, շատ վատ։

Այս ասվեց հասարակ կեղանակով, բայց այնպիսի համոզիչ ուժով, վոր Մելանիան մի վարկյան սարսափեց։ Նայեց ամուսնու կերեսին և զգաց, վոր արդարև, կեթե Սամսոնը կասենա, կարող և շատ վատ ամուսին դառնալ։ Նրա խորշոմած ճակատը այդ պահին սքողված եր տարօրինակ սովերով։ Կիսաթառամ աչքերի մեջ կերևում եր տանջող կասկդի կուրությունը, վոր կարող և անգամ հանցանք գործել։

Բայց, այնուամենայնիվ, Մելանիան չզղջաց։ Նա ասաց.

— Ինչ ուզում ես, արա՛, միայն փոխվիր։ Կամ հին մարդ կեղիր, կամ նոր մարդ, կամ բռնակալ կամ դավաճանող։

Ասաց, կարծես, հակառակ իր կամքի. միայն կենթարկվելով ինչ-վոր տարերային ուժի ազդեցության...

IX

Այսպես, ուրեմն, Սամսոնը շատ և սիրում Մելանիային, իսկ Մելանիան, ընդհակառակը ուզում և տալով նրանից։ «Ուզում եմ, վոր հարբած առնն դաս, հայհոյես ինձ, ծեծես»։ Ցնթե Սամսոնը այդ չի կարող անել, թող վարվի նրա հետ այժմյան ամուսինների պես։ «Աբերը ինձ, դավաճանիր, աչքիս առջև սիրուհիներ պահեր»։

Ցնթե Սամսոնը մինչև այժմ կասկածումեր, այսոր համոզվեց, վոր ինքն արդեն ատելի չե դարձել Մելանիայի համար։ Ահա ինչու Մելանիան պահանջում և, վոր Սամսոնը ատի նրան. նա փոխադարձություն և պահանջում։

«Կամ հին մարդ չեղիր կամ նոր մարդ, կամ բռնակալ կամ դավաճանող»,—հնչում եր Սամսոնի ականջին Մելանիայի վերջին խոսքերը։ Վիրը լինել. բռնակալ, թե՞ դավաճանող։ Դավաճանել Մելանիային։ Ո, վիչ՝ այս չի կարող անել Սամսոնը։ Նրա հայացքով տղամարդուն ներելի չե անել ամեն ինչ, քանի վոր ամուրի չե, իսկ չերբ մի անգամ մարդ ամուսնացավ, պիտի հավատարիմ մնա ամուսնական առագաստին։ Վոչ, Սամսոնը դավաճանել չի ուզում, նա մինչև անգամ զզվում և այս մտքից։ Ցնվ վերջապես, ինչպես դավաճանել։

«Ի՞նչպես», կրկնում եր Սամսոնը դառն կսկիծով։ Այս բառի մեջ նա զգում եր մի թունալի հեգնություն, մի սոսկալի ծաղր։ Դավաճանել. այո, Սամսոնի համար հասկանալի չե, թե ինչ եր ուզում ասել Մելանիան այս բառով...

Նա շրթունքները անխնա կրծոտում եր մի ծանր, անտանելի մտքից, մի ցավի դիտակցությունից, վորի հատար դեղ չկար ուր, անիրավ սրենքները բնության, մինչև չկա վոչ մի վիրկարար միջոց ձեր քայքայիչ զորության դեմ։ չկա, նա բոլոր միջոցները փորձել և արդեն և հիասթափվել...

Ուրեմն բռնակալ դառնալ։ Փակել Մելանիային տանը, գոռալ, հայհոյել, ծեծել։ Ցնվ ինչու չե։ Ցնթե մինչև այժմ Սամսոնը կատարյալ ազատություն և տվել կնոջը՝ ապրել ուզածին պես, արել և հակառակ իր հայացքների, միայն այն պատճառով, վոր սիրել և նրան, չի կամեցել ավելի ճիշտ, չի կարողացել վշտացնել այդ չերևակային։ Այժմ Մելանիան ինքն և ասում, թե ձանձրացել և այս ազատությունից։

Հարգանքի զգացումը ավելի լե ճնշում նրան, քան ատելությունը։ Սամսոնի «լավ մարդ» լինելը տանջում և նրան։ Ո՛հ, այժմ միայն Սամսոնը հասկանում և այս բառը։ Լավ մարդու դեմ մեղք գործելը այնքան հեշտ չե, վորքան «բռնակալի կամ դավաճանողի» դեմ։ Խիղճը թույլ չի տալիս։ Թող Սամսոնը վատ մարդ դառնա. ժանավանդ վատ հռչակվի հասարակության մեջ, այն ժամանակ Մելանիան իրան ազատ կհամարի և... Իսկ այժմ կաշկանդված և...

Այս մտքերի ազդեցությամբ Սամսոնն զգում եր այնպիսի կսկիծ, վորի նմանը չերբեք չեր զգացել։ Ցեղել եր աղքատ, անպաշտպան, կրել եր մարդկային արհամարհանքների ծանրությունը։ Դառնալով վաճառական, չերկու անգամ մոտիկից տեսել եր առևտրական աշխարհի համար այն սոսկալի վիշապի աչքերը, վոր կոչվում և անանկություն։ Լսել եր պարտատերերի ծաղրն ու հայհոյանքները։ Իբրև սիրող վորդի, քառասունութ ժամ դիտել եր մահամերձ մոր տանջանքները։ Իբրև սիրող հայր, կրել եր առաջին զավակի մահվան հարվածը։ Նա տեսել եր և ուրիշ շատ թշվառություններ, բայց չերբեք այնպես չեր տանջվել, վորպես այժմ, չերբեք։

Նա չերևակայում եր իրեն բռնակալ ամուսնու դերքերում և ինքն էլ սոսկում բոլորից, ինչ վոր կարող եր և ընդունակ պահու այդ դերքում։ Մինչև այժմ նա խանդել եր, այո, բայց խանդել եր միայն Մելանիայի չերևակայական։ Իսկ այժմ հանկարծ առաջ և գալիս մի գարշելի, մի զժոխային կասկած—արդյոք, Մելանիան չի՞ դավաճանել։

Ցնվ ցնթե դավաճանել և, ով և նրան մոլորեցնողը։ Վերջին ժամանակ նա այնքան հեռու չե պահում իրեն տղամարդկանցից, վոր դժվար և կասկածել վորևե մեկի մասին։

Փերուզյանը—անցավ հանկարծ Սամսոնի մտքով։ Ինչու չե. ցնթե նա չերևակայող չե։ Բայց վոչ, այս անկարելի և, ինչ անպատճառ, իրենց հանցավոր միտք։ Փերուզյանը հարգում և Սամսոնին այնքան, վերաբերվում և Մելանիային այնպիսի պատկառանքով, Մելանիան սառն և դեպի նա այնչափ, վոր ամոթ և անդամ կասկածել նրանց հարաբերությանը։

Սակայն վորքան Սամսոնը աշխատում և դուրս հանել մտքից այդ մարդուն, այնքան նրա չերևակայող ու թարմ կերպարանքը սպառնում եր նրան...

Այսպես տևեց մի ամբողջ շաբաթ։ Բանը հասավ այնտեղ, վոր Սամսոնը ցանկացավ կրճատել Փերուզյանի այցերը։ Այս նը-

պատակով նա պրակտնապես հրաժարվեց անտառի կտպալից հենց աճուրդի- որը: Փիրուզյանը չհասկացավ նրա խնդրանքի միտքը, միայն մութ կերպով զգաց, որ Սամսոնի մեջ վերջին որերը կատարվում է ինչ որ փոփոխություն: Նա զգուշացավ և մի քիչ կրճատեց իր այցերը:

Այժմ Սամսոնը կասկածով էր վերաբերվում Մելանիային, հետևում էր նրա յուրաքանչյուր քայլին: Նա տակավին չէր վարվում իբրև բռնակալ, բայց արդեն մոտ էր այդ աստիճանին: Ցավ մերձենում էր առանց ինքնաբերը վորոշման, այլ այնպես, անգիտակցաբար: Նա կարծում էր, որ Մելանիան գողում է իր արածների մասին և շուտով կսկսի բողոքել մարդու մի քանի թեթև խաուրթյունների դեմ: Բայց պատահեց հակառակը: Մի որ Սամսոնը Մելանիային արվիլից ինչ որ պարլերևկուլի գնալու հենց այն պահին, երբ տիկինն արդեն հագնված էր և դրսում սպասում էր լծված կարիքը: Մելանիան իսկույն ուսերից գցեց շղարշե մուշտակը ասելով.

— Շատ լավ, ես չես թողնում՝ չեմ գնալ:

Սամսոնը զգաց. նա վոգնում էր միայն իր ուժը:

— Գնա, քանի որ պատրաստվել ես,— ասաց նա:

Բայց Մելանիան սկսեց նրա առջև մեկ մեկ գցել իր արդուզարդը:

— Գնա, ասում եմ,— կրկնեց Սամսոնը:

— Որ արգելում ես, ինչպես գնամ:

— Չեմ արգելում:

— Վոչ, արգելում ես:

Սամսոնը բարկացավ, ձայնը բարձրացրեց:

— Ասում եմ քեզ, որ թույլ եմ տալիս:

— Թույլ ես տալիս, բայց ինքդ դոռում ես. Ուշես իրավունք, դոռա:

— Մելանիա,— գոչեց Սամսոնը, ձայնը ավելի բարձրացնելով.— մի հանվիր:

— Արդեն հանվել գցել եմ: Մազերս էլ բաց արի: Ընդ, կատաղում ես, աչքերդ կարմրում են, բռունցքներդ սեղմում ես: Զլինի՞ թե ուզում ես ծեծել, ասե. ծեծիր, ունես իրավունք:

Այն ինչ Սամսոնը վոչ կատաղած էր, վոչ աչքերը կարմրել էին, վոչ մանավանդ բռունցքները սեղմել: Նա միայն բարկացած էր:

— Ծեծել,— կրկնեց նա,— ժամանակ ժամանակ այնպիսի բաներ ես ասում, վոր ձեռներս քոր են գալիս:

— Ավելի լավ, ավելի լավ: Ցես դեմ չեմ, ծեծիր, ծեծիր, ինչքան քեֆդ ես: Ես մի խեղճ, անպաշտպան կնիկ եմ, ծեծիր...

Ցավ նա սկսեց հեկեկալ, ընկնելով թախտի վրա: Սամսոնը ակամա մեղմացավ. Ավելի. նա պատրաստ էր մոռենալ, գրկել ու համբուրել Մելանիային, մինչև անգամ ներում խնդրել: Բայց զսպեց իրեն. թող չկարծի այդ կինը, թե իր ամուսինը շատ էլ թուլամորթ է: Նա ասաց.

— Դու խելագարվել ես:

— Խելագարվել եմ, այո,— հատատեց Մելանիան,— իմ տեղը ով չէ խելագարվիլ: Ուրիշն, փակիր տանը, մի թողնիր դուրս, կարող եմ գժություններ անել, հասկանում ես, կարող եմ գժություններ անել...

Այսպիսի տեսարաններ կրկնվեցին մի քանի անգամ: Ցավ ամեն անգամ Մելանիան, կարծես, աշխատում էր Սամսոնին տրամադրել այնպես, որ մարդը կորցնի համբերությունը, կատաղի և վերջապես, բռունցք բարձրացնի նրա գլխին: Իսկ Սամսոնը դեռ կարողանում էր իրան զսպել: Նա ուրիշ բան էր մտածում...

X

Այն որից, երբ Սամսոնի սրտում կասկած ծագեց, կամենում էր Մելանիայի հետ խոսել Փիրուզյանի մասին: Նա ուզում էր իմանալ կնոջ կարծիքը այդ մարդու վերաբերմամբ և գուցե հենց սեփական խոսքերով բռնել նրան:

Մի որ նա հարցրեց.

— Մելանիա, ինչու Արտյուշն էլ առաջվա պես շուտ-շուտ չի գալիս մեր տունը:

— Ցես ինչ գիտեմ, հարցրու իրանից:

— Իսկ չես գիտեմ: Նա քեզանից վիրավորվել է:

— Ինչու:

— Լավ չես ընդունում նրան,— պատասխանեց Սամսոնը և կրկնամատ հայացքով նայեց կնոջ երեսին:

Ե՞ս, թե դու,— արտասանեց Մելանիան, չշփոթվելով ամուսնու ցամաք հայացքից:

— Այդ, ճշմարիտ ես ասում. ես էլ լավ չեմ ընդունում նրան: Ուզում ես միտքս իմանալ. շատ ուրախ եմ, որ նա հիմա քիչ-քիչ է երևում իմ տանը:

— Պատճառը:

— Հենց այնպես։ Մինչև անգամ լավ կլինի, որ խակի ել չգա այսօրհնան։

— Դու այդ ուզում ես։

— Իսկ դու չե՞ս ուզում։

— Ինձ թող, ասաված սիրես։ Ազգականը քոնն ես, դու ա-սա, ուզում ես, որ նա խակի չգա մեր տունն։

— Ուզում եմ,— պատասխանեց Սամսոնը հանկարծ, փորձի համար։

— Լավ,— ասաց Մելանիան և լռեց։

Հետևյալ որը Փիրուզյանն չեկավ։ Սամսոնը տանը չեր։ Մելանիան հրամայեց ապասավորին՝ հայտնել թե պարոնը և տիկինը տանը չեն։ Մինչդեռ ապասավորը նախասենյակում հաղորդում եր այս խոսքերը Փիրուզյանին, նա անմիջապես գոչեց.

«Ժորժիկ, Ժորժիկ, ապա թե կարող ես, ինձ բռնիր»։ Ցնվ սկսեց վազվզել, բարձրաձայն ծիծաղել։

Մի ժամ անցած՝ նա իր արարքը պատմեց Սամսոնին։

— Ուրեմն Արտյուրն իմացավ որ դու տանն ես,— հարցրեց Սամսոնը զայրանալով։

Այո, տանը և առողջ.

Սամսոնի աչքերը կատաղությունից փայլեցին։

— Մելանիա, դու քանի գնում, վնասդ կորցնում ես,— գոչեց նա,— ինչու՞ համար ես ինձ խայտառակում իմ ազգականի մոտ։

— Ինքդ ուղեցիր, որ նա մեր տունը վոտ չդնի։

— Ցնս...Կատակ եյի անում։

— Կատակ, հա՛, դու...կատակ,— հեգնաբար ծիծաղեց Մելանիան,— մինչև դու կատակ անել ել գիտես, չեյի իմանում, նորություն։

— Ցնս քեզ փորձելու համար ասացի, թե չեմ ուզում Արտյուրին մեր տանը տեսնել։

— Ինձ փորձելու համա՞ր։

— Մելանիա։

— Ինձ փորձելու համար,— կրկնեց Մելանիան, ինքն իրեն կորցնելով,— ա՛ռ, ուրեմն, ուրեմն... դու ինձ կասկածում ես։

— Այո՛. կասկածում եմ. չի՛ կարելի քեզ կասկածել, ինչ ես Մելանիայի աչքերը պսպղացին։ Նա կամեցավ հեկեկալ բայց ճիպ արավ և իրեն զսպեց։ Նա միայն ասաց.

— Այդ եր պակաս... կասկածել ինձ...

— Ինչո՞ւ, դու կին չե՞ս, ինչպես բոլոր կանայք։

— Ցնս մի անբախտ եմ, ուրիշ վո՛չինչ,— արտասանեց Մելանիան շնչասպառ։

— Անբախտ,— կրկնեց Սամսոնը դառն հեգնանքով, չեթե դու անբախտ ես, կկամենայի իմանալ՝ ով է բախտավոր քո ծանոթներից։ Որը մի տեսակ կնրակուբ ուտողը, թե տարին մի ձեռք հագուստ չունեցողը; Ո՞ւմ է նախանձում ամբողջ քաքաքը. քեզ թե՞ մի ուրիշին։

— Սամսո՛ն, միամիտ մի ձևանալ։ Դու շատ լավ գիտես, թե բախտավորությունը լավ ուտել-խմելու ու շքեղ հագուստների մեջ չե։

— կկամենայի գիտենալ այն ինչ է, որ մեր դարում չի կարելի է ունենալ դրամի զորությամբ։

Ի՞նչ է,— կրկնեց Մելանիան սրտի կսկիծով,— ինչ է...

Ցնվ մի սուր հայացքով ուղիղ նայեց ամուսնու աչքերին։ Սամսոնը հակացավ նրա թուրնալի, բայց արդարացի մխքը։ Հակացավ և շրթունքները կրծոտելով, լռեց։

— Լռում ես,— մրմնջաց Մելանիան և նույն վայրկյանին մի ներկարատև հարվածող ծիծաղ դուրս թռավ նրա կրծքից։

— Մելանիա,— գոչեց Սամսոնը խռպոտ ձայնով,— դու չափ ու սահման կորցնում ես։ Մելանիա. մարդ չպիտի մոռանա իր անցյալը։

Այս արդեն Մելանիայի կծու ակնարկի պատասխանը չեր, այլ մի տեսակ փախուստ բուն խնդրից...

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով, պարզ խոսիր...

— Ժամանակ և հասկանալու, որ քեզ նման յերիտասարդ ու գեղեցիկ կանայք հազարավոր են, իսկ քեզ պես ապրում և հազարից մեկը...Հասկանում ես, ինչ եմ ասում...

Հասկանում ե, արդյոք, Մելանիան։ Ի՞նչպես չհասկանալ, յերբ մարդ խոսում և այնքան պարզ, յերբ նրա յուրաքանչյուր բառի, ձայնի ամեն մի հնչյունի մեջ զգացվում և միլիոնատիրոջ թուրնալի արհամարհանքը դեպի մի կնոջ չբավոր անցյալը։ Մելանիան գինաթափ յեղավ, գլուխը թեքվեց կրծքին, ձեռները վեր պրկեց։ Ցնթե նա Սամսոնից յերիտասարդություն և պատվի

իր վիճակի համար փոխանակ շնորհակալ լինելու, հանդիմանում է բարեբարին։

Մի քանի վարկյան Մելանիայի մաքերը շփոթվեցին։ Սակայն մի բան նրա համար պարզ էր ավելի, քան ցերը և ե. այն վոր, վերջապես, հասել է ժամանակը, յերբ պիտի յերես առ յերես կանգնի այդ մարդու դեմ, անդիմակ, և ասի բոլորը, ինչ վոր կուտակվել և սրտում վերջին յերկու-յերեք տարվա ընթացքում...

XI

Նա ձեռով սրբեց ճակատն ու աչքերը. կարծես, ուշը ժողովելու համար։ Ա՜ռ, ուրեմն. Սամսոնը նրան բարեբարութիւն է արել, ամուսնանալով նրա հետ։

— Յեթե յերեսովս պիտի տալիր աղքատութեան. ինչու՞ ամուսնացար,—զոչեց նա,—ասա, ինչու՞ ամուսնացար։

— Յերեի նրա համար, վոր դու չել յերեսովս տաս ծերութեան,—հեգնեց Սամսոնը։

— Յես ունիմ իրավունք, դու չունես։ Դու քո կամքով ամուսնացար, իսկ ինձ ամուսնացրին։ Հասկացիր գոնեպես թյունը։ Դու ինձ փողով գնեցիր իմ ծնողներից...

— Թող չծախեին...Բայց լուր, բավական է։

Լուռ։ Վոչ. առանց այդ էլ, յերկար ժամանակ է լուռ։ Հիմա առիթ են տալիս խոսելու, և պիտի խոսի։ Նա միշտ տանջվել է, միշտ, թեև ուրիշները նախանձել են նրան՝ այսինքն նրա ազատ մանդներին ու տուալետներին, կառքերին ու ձիերին, ճաշերին ու ընթրիքներին։ Նա ծիծաղել է, յերգել, նվագել, թոչկոտել բայց տանջվել է։

— Ինչու՞, ինչու՞ ես տանջվել—հարցրեց Սամսոնը։

— Վորովհետև չեմ կարողացել քեզ սիրել, ուզեցել եմ սիրել չեմ կարողացել։

— Շնորհակալ եմ, վոր գոնե ուզեցել ես սիրել։

— Յես կատակ չեմ անում,—շարունակեց Մելանիան,— սըրտիս ցավն եմ հայտնում։ Մարդ. դու ապրել ես ու վերջացրել կյանքդ, իսկ յես նոր եմ սկսում ապրել, հասկանում ես, նոր-նոր միայն։ Ջի վոր ես քսանչորս տարեկան եմ, անսահման, ինչպես ապրեմ քեզ հետ։ Ինչով ես ուզում ինձ բախտավորացնել։ Բազմաթիվ ծառաներով, այս շքեղ տնով, թանդագին հագուստներով, վուշով ու քարեղենով։ Լավը, յես այն կանանցից չեմ, հասկանում ես, չեմ էլ ուզում լինել։ Ջեմ ուզում ուտել ամուսնուս հարստությունը, սիրել ուրիշներին։ Ինչ ես աչքերդ պսպղացնում. ինչ ես կատաղում, մի՞թե չգիտես, վոր կան այս տեսակ կանայք։ Յես ինքս ճանաչում եմ որիորդներ, վոր յերազում են գոնել հարուստ ու ծեր ամուսիններ, վորպեսզի նրանց փողերը ծախսեն, իսկ սիրեն ուրիշներին։ Այո, կան, շատ կան այդպիսիները, քեզ էլ ե հայտնի, վոր կան։ Բայց ես չեմ ուզում նրանց օրինակին հետևել, հասկանում ես, չեմ ուզում։

Նա միայն աշխատել է ինքն իրեն խաբել։ Սկզբում, յերբ սկսեց ճանաչել իրեն, հասկանալ իր անբախտությունը, ուզում էր իր նման շատ շատերի պես լուռ խոնարհվել ճակատագրի առջև։ Բայց չկարողացավ։ Հետո փափագեց աշխարհ տեսնել, խմանալ ինչպես են ապրում ժամանակակից կանայք։ Մի տարվա մեջ նա շատ բան տեսավ. շատ բան ուսումնասիրեց և այն, ինչ վոր տեսավ-ու ուսումնասիրեց, շուտով զզվեցրեց նրան։ Այնուհետև աշխատեց գլուխը խաբել հասարակական գործերով։ Յեվ անա կես տարի, միայն կես տարի անցած, այսոր այս էլ և նրան զզվեցնում։ Մարդիկ յերեսին կեղծավորում են, յետևից ծաղրում, յերեսին խելոք ու լուսավորված կին համարում, յետևից — փառամոլ, parvenue, выскачка։ Նրան չարախոսում են՝ թե «սիրեկան և փնտրում»։ Այժմ նա ուզում է բոլորից և ամեն բանից յերես դարձնել ու ապրել ինքն իր սրտի համար, ապրել սիրող կնոջ կյանքով։ Յեվ հանկարծ... սեր չկա... պահանջ կա, բայց սեր չկա։ Իսկ քանի վոր սեր չկա, ինչի՞ է նման կյանքը և ինչ ոգուտ հարստությունից։

— Ասա. ինչ ոգուտ։ Ջեմ ուզում քո հարստությունը. չեմ ուզում, յերդվամ եմ Ժորժիկիս անունով։ Ամբողջ բոլորն ինձանից և փոխարենը տուր ինձ կյանք, վերջ թե հարուստ, այլ բախտավոր կյանք։ Յես դպել եմ ուզում ու ապրել։ Յես ուզում եմ իմանալ, ինչ ասել և յերիտասարդական սեր, ինչ ասել և առնասարակ սեր...

— Ասա, վոր ուրիշ տղամարդ ես ուզում,ընդհատեց Սամսոնը կոպտաբար։

Յեվ հոգու խորքում զգաց, վոր ճշմարտում է։

Մի՞թե, յեթե Մելանիան ուրիշ տղամարդ ուզենա, չի կարող դոնել գաղտնի, և մի՞թե յեթե այդպիսի հանցավոր միտք ունենա այդքան պարզ կխոսի։ Վերջ, Սամսոնն ավելի ճիշտ կասեր, յեթե գոնե նույն խոսքերն արտասաներ առանց «ուրիշ» բառի։

— Յեթե նույնիսկ այդպես լիներ,— զոչեց Մելանիան ան-

սովոր համաձայնությամբ,—ինչ կա զարմանալու. մինչև չես ըզդում, որ ունիմ իրավունք...

— Մելանիա,—գոռաց Սամսոնը, բոլորովին բորբոքվելով խելահորույս կնոջ հանդուգն խոսքերից,— խայտառակ կին, բավական է...

— Ինչու խայտառակ: Որ ուրիշների պես թագցնեմ զգացածս ու մտածածս: Որ չերեսիդ չեմ շողոքորթում ու չհանվիղդ խաբում ու անպատվում քեզ: Սա, դու ինքդ չերևատարդ հասակումդ չես սիրել: Ձեվն չես սիրել—դու մարդ չես, չեվն սիրել ես—ապրել ես: Բայց ինչ եմ ասում: Դու սիրել էլ ես, սիրահարվել էլ ու ուրիշ շատ բաներ էլ արել: Միայդ բեր ասածներդ, հիշիր ինչեր եկիր պատմում չերբեմն, անկեղծության րոպեներին: Ա՛ա, ամաչում ես: Ինչու չէիր ղեկդիր, վորես էլ սիրեմ: Ինչու նոր ծլող ծաղիկը կարելիր վոսկի մկրատով: Ինչու ինձ խլեցիր ծնողներիս գրկից, այն ժամանակ, չերբ չես չերևակա եկիր ինչու ասա, ինչու:

Նա թուլացած ընկղմվեց գահավորակի վրա և սկսեց հեկեկալ:

Սամսոնը, մի ձեռը բազկաթոռի մեջքին հենած, մյուսը սեղմել եր ճակատին և նայում եր հատակի մի կետին:

Հեկեկանքը դադարեց: Մելանիան, աչքերը սրբելով, վոտքի կանգնեց, մի վայրկյան մտածեց՝ անշարժ կանգնած: Հետո մի դրական շարժում անելով ձեռով, անցավ արագ քայլերով յուր ննջարանը, վոր կից սենյակն եր: Բայց արավ պահարանը, վերցրեց այնտեղից բոլոր յուր ակնեղեններները, վերադարձավ և շպրտեց հատակի վրա, գոչելով.

— Սրանցով ես պարծենում, սրանցով: Վերցրու, քեզ լինի, չեմ ուզում...

Այժմ Սամսոնը նստած եր գահավորակի վրա լուռ, անշարժ: Զգիտեր ինչ անել, լիզուն կաշկանդվել եր: Կնոջ խոսքերի մեջ նա զգում եր վորոշ չափի ճշմարտություն, մանավանդ իր անցյալի վերաբերմամբ, վորի դառն հետևանքը կրում եր այժմ: Գունատ եր, վորպես աշնան ծառից պոկված տերև: Աչքերը անդիտակցաբար հառեց ցերուցան սփռված ոգիների, ապարանջանների վզնոցների, մատանիների ու բռոշների վրա, վորոնց խոշոր ու մանր ադամանդները գորգի վրա պսպղում կլին նուրբ մանիշակագույն փայլով: Ձեվ կարծես, այս շինծու առարկաների մեջ եր վորոնում իր թշվառության հիմքը: Մինչև այսպես չէր: Մինչև

իր կյանքի լավագույն շրջանը այս ադամանդներին տիրանալու համար չէր գործադրել: Նա կամեցավ առաջ հարստանալ, հետո բախտավորվել: Ինչպես չհասկացավ, վոր տիրելով մեկին, գրկվում և մյուսից: որեցոր քայքայվում և, գլուխը քաշ վոսկիներ հավաքելով, անդիտակցաբար, մերձենում և գերեզմանին:

Ինչպես չզուշակեց, թե փողով կյանք չի կարելի գնել, թե ժամանակը գետ և, վորի ջուրը յերբեք հետ չի գառնում: Ինչու յուր գոյության վաղվանց շրջանը անցկացրեց սիրուհիների ու անառակ կանանց գրկերում, իսկ կնոջ համար պահեց նրա վողորմելի մնացորդը: Ձեվ ահա այսոր նրա յերեսին են շպրտում այս ադամանդները ու փոխարենը պահանջում յերիտասարդության... առնական ուժ: պահանջում և այն, վոր նա միայն ունի իրավունք պահանջելու, վորովհետև նա սիրուհի չե, այլ կյանքի հավիտենական ընկերուհի...

— Շնորհակալ եմ,—հնչեց նրա ականջին Մելանիայի աղեղն փոքր ինչ հանդարտված ձայնը,—շնորհակալ եմ արած լավություններիդ համար: Բայց այսուհետև չշարունակես, խնդրում եմ, պահանջում: Այժմ քո բարերարությունը ինձ տանջում և, հասկանում ես, ուղղակի տանջում...

Ձեվ, մի վայրկյան կանգ առնելով, ավելացրեց.

— Վաղը կգրեմ ծնողներիս, վոր այսուհետև էլ իրավունք չունեն քեզանից ոգնություն ստանալու: Ձես չեմ ուզում հարբատահարվել, դու էլ մի հարստահարվիր...

XII

Մելանիան կատարեց իր խոսքը: Հետևյալ որն իսկ գրեց մանրամասն նամակ մորը: Նկարագրեց իր ընդհարումը Սամսոնի հետ. պարզեց մինչև այժմ գաղտնի պահած վիշտը, վերջապես, հայտնեց պարզապես, թե այժմ անբախտ և, այնքան անբախտ, վոր հազիվ կարողանա ապրել այդ մարդու հետ:

Ցերեկը որ անցած, պատանեկանի փոխարեն անձամբ լեհան նրա ծնողները: Ցերեկի արդեն շատ ազդու եր գրված Մելանիայի նամակը: Դա մի վոչ այնքան ծեր դուդ եր—մարդը գեր-գեր, մոտ հիսուն տարեկան, կինը մարդուց հազիվ չորս-հինգ տարով փոքր, տակավին թարմ, նուրն իսկ գեղեցիկ:

Ներանք անմիջապես բացատրություն պահանջեցին իրենց աղջկանից: Մելանիան ասաց, թե բոլորը գրել և նամակում և ուրիշ ասելք չունի:

Սամսոնը ընդունեց իր զոքանչին ու անտրոջը սառը, չբարևեցավ նրանց հետ խոսել իր ընտանեկան ընդհարման մասին։ Ջուլդը վշտացավ։ Հետևյալ որը նա վորոշեց խնդիրը ինչպես էլ լինի, բոլորովին պարզել։ Այս անգամ Մելանեան համառոտ ու գրական եղանակով կրկնեց բոլորը, ինչ վոր գրել էր նամակում։ Նա այլևս չի կարող Սամսոնի հետ պայրել, նրա հոգին ուտելախիղճը տանջում է, զգում է իրան ստորացած մի մարդու առջև, վորին չի սիրում և չէրքնք չի սիրել և չի կարող սիրել։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ,—գոչեց տիկին Նազանին, Մելանեայի մայրը։

— Որովհետև ծեր է,—պատասխանեց Մելանեան այնքան լուրջ ու կտրուկ եղանակով, վոր Թուլլ չէր տալիս վոչ մի հակաճառութիւն։

— Չէ՛մ,—վրնթփնթաց Սերգել Արտեմիչը, Մելանեայի հայրը,—լավ պատճառ է, որովհետև լինիս։

Մելանեան մի սուր հանդիմանական հայացք ձգեց հոր երեսին և հարցրեց։

— Քանի՞ տարեկան ես, պապա։

— Քառասուն ու իննս լրացավ անցյալ ամիս։

— Իսկ դո՞ւ, մամա։

— Քառասունչորս։

— Քառասունիննը—քառասունչորս, զանազանութիւնը հինգ տարի. հիսուն ու յերկու—քսանուչորս զանազանութիւնը քսան և ութ տարի։ Պապա, աղջկադ ամուսինը քեզնից հինգ տարով ծեր է։ Աա՛, ինչո՞ւ ինձ ավելցիր այդ մարդուն։

— Սամսոն Ֆրանցուլյանը քաղաքի ամենալավ վիճաբանչերից մեկն էր.—խելոք, որինավոր մարդ ու միլիոնների տեր...

— Ցավ ծեր,—ավելացրեց Մելանեան անսովոր համառութեամբ։

— Չեմ հասկանում, ինչ խա՞ մի գլուխ կրկնում ծեր, ծեր ու ծեր,—գոչեց տիկին Նազանին,—լավ կլիներ՝ յերթ քեզ տված լինեինք մի քաղցած յերիտասարդի։

— Այ՛, մամա, ավելի լավ կլիներ։

— Այժմեան փչացած յերիտասարդներից մեկին—հարցրեց Սերգել Արտեմիչը։

— Թեկուզ մի շալլատանի,—պնդեց Մելանեան նույն համառութեամբ։

— Սերգե՛յ,—գարձավ տիկին Նազանին իր կողակցին, դու հեռացիր, Թող մեզ մենակ։

Սերգել Արտեմիչը հասկացավ ամուսնու միտքը և չսպասեց կատարել նրա հրամանը։

Նազանին նստեցրեց աղջկան իր մոտ, գահավորակի վրա և մի ձեռով գրկեց նրա մեջքը, մյուսով շոյելով մազերը, ասաց։

— Հիմա կարող ես սիրտդ բաց անել։ Ես կնիկ եմ, ամեն բան կհասկանամ, մի ամաչիր։

— Մամա, Թող ինձ—արտասանեց Մելանեան, յերեսն ամոթով մի կողմ դարձնելով,—առանց այդ էլ չես շատ բան ասացի։

Տիկին Նազանին բարկոք համարեց ուղղակի դիմել բուն խնդրին։

— Մելանիա,—ասաց նա, հառաչելով,—մի բան հարցնեմ, չնեղանաս։ Ասա, քեզ խելքից հանող չկա՞։ Եհ, ով գիտե Թիֆլիսն է։

— Ի՞նչ ես ուզում ասել։

— Եհ, մեջտեղ մի ուրիշ տղամարդ չկա՞։

— Չէ՛մ,—արտասանեց Մելանեան, դառնութեամբ գլուխը յերերելով,—գիտեի, վոր այդ պիտի հարցնես։ Վոչ, մամա յես վոչ վոքի չեմ սիրում և չեմ էլ ուզում սիրել, քանի վոր այս տանն եմ ապրում։

— Յերդվի՛ր։

— Յերդվում եմ Փորժիկիս անունով։

— Վոչ վոքի չես սիրում ու ելի մարդուդ հետ չես ուզում ապրել։ Չեմ հասկանում։ Միեծում է քեզ Սամսոնը։

— Յերանի Թե ծեծեր...

— Հետդ վատ է վարվում։

— Վո՛չ։

— Սառում է քեզ։

— Ընդհակառակը. հիմա ավելի է սիրում։

— Ազատութիւն չի՞ տալիս։

— Այնքան է տալիս, վոր յես ինքս զղվել եմ։

— Սրտիդ ուզածը չի՞ կատարում։

— Կատարում է։

— Կարելի է սիրուհինիդ է պահում։

— Վո՛չ, վո՛չ, վո՛չ. մամա, այդ բոլորից է վո՛չ մեկը։

— Ուրեմն կամ յես ծերացել եմ ու վոչինչ չեմ հասկանում, կամ գոնե խելագարվել ես։

— Մամա, միամիտ մի ձևանար, դու էլ կլինես, հասկացիր դրությունս։ Մի բոպե միտդ բեր այն ժամանակը, յերբ դու իմ

հասակի եյեր։ Միտդ բեր ու յերևակայիր քեղ մի հիսուն ու յերկու տարեկան մարդու պրկում։

— Հիսուներկու տարին տղամարդի համար ծերություն չե։

— Բայց..., Սամսոնը ծեր ե, հասկացիր, ծեր...

— Այդ վոչ վոք չի կարող ասել, նրան տեսնելով։

— Բայց յես եմ ասում, հասկանում ես, յես... Ախ, մամա, ի սեր Աստծու, խնայիր ինձ, մի տոխպիր...

Մայրը նայեց աղջկա աչքերին և այնտեղ կաթդաց նրա խոսքի վերջը։ Նա գլուխն անզոր թեքեց կրծքին։

— Ուրեմն,— արտասանեց նա կակազելով,— ուրեմն... Մելանիա...

— Երեխանիքը... Առաջ, մամա, բայց հիմա... Ախ, բավական ե, վերջապես...

Այն, ինչ վոր արտահայտում եյին յերիտասարդ կնոջ հուսահատական շարժումները, այնքան համոզիչ եյին և այնքան, միևնույն ժամանակ վշտալի, վոր Նազանին բոլորովին զինաթափ յեղավ և ուժասպառ թիկն տվեց գահավորակին։ Ավելի նա զգաց խղճի խայթ. զգաց և կարեկցեց աղջկան։

Նույն որն յերեկոյան նա, առանձնանալով իր կողակցի հետ, յերկար ու յերկար խորհրդակցեց։ Բայց խնդիրն անլուծելի եր։ Տիկին Նազանին փորձեց մարդուն համոզել՝ Սամսոնից բացատրություն պահանջելու։ Սերգեյ Արտեմիչը դրականապես մերժեց։

— Ամոթ ե,— ասաց նա,— վոր հարցնեմ ել, միևնույն ե վոչինչ չի ասիլ...

— Հապա ինչ անենք։

— Զգիտեմ։

Յերկուսն ել անզեն ու անզոր նայեցին միմյանց յերեսին։ Յերկուսն ել զգացին, վոր գործված սխալն անուղղելի ե և վոր իրանք իրանց ձեռքով դժբախտացրել են իրանց հաբատար զավակին...

XIII

Սուր վերավորանքի հետ Սամսոնը զգում եր նաև խղճի սուր խայթոց։ Վորքան հանդարտակ լինելին Մելանիայի խոսքերը, այնքան իմաստն արտայայտի եր։ Մեղադրանքը պարզ եր, հիմնավոր և... անհերքելի։ Ախ, յեթե միայն ծերությունը լիներ... Բայց ինչ կարելի ե առարկել մի անտոլք ու տոկալի փաստի դեմ, վորի ծանրությունը նա զգում ե առանց Մելանիայի մուքի ակնարկների ել։ Ինչով իրան պաշտպանի, քանի վոր գիտե՝ սերելը քիչ ե, պետք ե ունենալ նաև սիրելու իրավունք, այսինքն մի ջոց։

Դեռ ամուսնության յերկրորդ տարին նա զգաց, վոր շուտով պիտի զրկվի այդ միջոցից։ Ցավ յերբ զգաց, վոր սկսում ե զրկվել, շատ մտածեց, շատ աշխատեց ու չգտավ վոչ մի հնար բնությանն հարվածի դեմ։ Նա համոզվեց, վերջապես, վոր վոչ վոք, վոչ վոք չի կարող ոգնել իրան այս դեպքում, թեկուզ զոհի իր բոլոր միլիոնները։ Ճակատագրի դեմն հեգնանք. անբախտությունը սկսվեց հենց այն պահուն, յերբ նա հույս ուներ ապրել մի նոր, ավելի հանգիստ, ավելի յերջանիկ կյանքով...

Ի՞նչ անել այժմ, յերբ նրանից պահանջվում ե անկարելին։ Բաժանվել Մելանիայից, ազատություն տալ պահանջողին՝ գնա ուր ուզում ե ապրի, ում հետ նա կամենում ե։ Բավականանալ ամուսնական կյանքի այն առաջին յերկու-յերեք կիսաբախտավոր տարիներով, յերբ դեռ ուներ փոքր ի շատե իրավունք իրեն ամուսին։

Մի պահ զղաց, վոր չեթե բարոյական քաջություն ունենա, պարտավոր ե այդպես անել. չե վոր չի կարելի առանց իրավունքի, բանի տիրանալ մի թարմ եյակի կյանքին։ Սակայն... միայն մի պահ, հետո ինքը սարսափեց իր մտքից։ Բաժանվել մի պահ, հետո ինքը սարսափեց իր մտքից։ Բաժանվել Մելանիայից, մի սիրուն եյակից, վոր զարգարում ե նրա կյանքը և հյութ տալիս նրա չոր ու ցամաք զոյությանը։ Գցել նրան մի ուրիշի գիրկը և, դիտելով հեռվից, տանջվել բարոյապես, զառնալ ծաղրի ու խոսակցության առարկա... Ո՛ր, վոչ, վոչ, այդ անկարելի ե, այդ վեր ե նրա ուժերից. Ուրեմն, ինչ. տոխպել յերիտասարդ կնոջը կենակցել իր հետ, մի մարդու, վորին չի սիրում և յերբեք չի կարող սիրել, դուցե, իրավ, հակառակ իր կամքի ցանկության։ Մեջն անպիտություն չե այդ։ Իսկ նա վոչ միայն գործում ե այդպիսի անպիտություն, այլ և Մելանիայի յերեսին ե տալիս այդ անպիտությունը, համարելով նրան բարեբարոյության։

Ցավ, հալածվելով այս մտքերից, Սամսոնը տանջվում եր։ արդեն առաջ ել չեր սիրում հասարակությունը, իսկ այժմ բոլորովին յերես դարձրեց նրանցից։ Վոչ մի տեղ չեր գնում, վոչ վոքի չեր ընդունում, իսկ աներոջ ու զոքանչի հետ խոսել ան-

գամ չեր ուզում։ Բնազդմամբ զուշակում եր, վոր Մելանիան պարզել եր նրանց իր վշտի պատճառը. մի բան, վորից այնքան ամաչում եր Սամսոնը։ Ա՜հ, սարսափելի դրություն. ո՞ւմ հայտնի իր ցավը, ո՞վ կըկարեկցի նրան և, վոր ամենագըլխավորն և, ո՞վ կարդարացնի նրա կապը Մելանիայի հետ։ Վոչ վոք։ Նա այս լավ գիտեր, ուստի լուռ ու մունջ փակվել եր ինքն իր մեջ։ Յերբեմն նրա սրտում ծագում եր հուսատու նշույլ. գուցե Մելանիան դղջա, ներում խնդրի անողոք կշտամբանքի համար և հաշտվի իր վիճակի հետ, զգաստերով պահանջել անկարելին, անբնականը։ Բայց այս հույսն էլ նրան վոչինչ ապագա չեր խոստանում։ «Հետո»... կրկնում եր նա, և գլուխը թուլացած թեք-վում եր կրծքին, ձեռները ընկնում երկու կողմ։ Այո, հետո. իսկ նրա անդորրությունը, վոր անբաժանելի և...

Տիկին Նազանին և Սերգել Արտեմիչը բարվոք համարեցին խնդիրը թողնել անվորոշ և հեռանալ այն քաղաքը, վորտեղից յեկել եյին։ Զգում եյին, վոր իրանց ներկայությունը անչափ նեղում և Սամսոնին, այնինչ ցավը զորմանալու և վոչ մի միջոց չեյին կարողանում գտնել.

Ճանապարհ ընկնելու որը Նազանին մի անգամ ևս փորձեց համոզել Մելանիային, թե ուրիշ հնար չկա, պետք և հպատակվել ճակատագրին։ Բայց դուր։ Մելանիան սառն յեղանակով հարցրեց.

— Մամա, յեթե մի որ վերադառնամ քեզ մոտ, կընդունե՞ս ինձ։

Նազանին սարսափեց։ Բայց զգում եր, վոր դուստրը արդեն անասնական դժբախտ և, ուստի ճարահատյալ պատասխանեց.

— Վո՛ր ծնողը իր զավակին կմոռնա փողոցում։

Մելանիան զգացվեց, փաթաթվեց մոր պարանոցին, համբուրեց և հետո սկսեց հեկեկալ, կրկնելով.

— Ախ, ինչ անբախտ եմ, ինչ անբախտ եմ։

Մի որ, նախաճաշից առաջ, սպասավորը Սամսոնին հայտնեց, թե Փերուզյանը հարցնում է՝ կընդունի՞ նրան, արդյոք։ Սամսոնը հրամայեց ընդունել։

Փերուզյանը ներս մտավ նախկին բարեկամական ժպիտն յերեսին, ամուր սեղմեց իր ազգականի ձեռը և նստեց նրա դեմ ու դեմ։ Սամսոնը, վոր պրասեղանի քով զբաղված եր ինչ-վոր հաշիվներով, թերթերը հավաքեց, մի կողմ դրեց և հարցրեց ուր եր մնացել մինչև այժմ հյուրը։ Հայտնվեց, վոր Փերուզյանը վերջին յերկու շաբաթը անց և կացրել Բագվում, միայն այսոր առավոտ և վերադարձել։ Նա վճռել և նավթային գործերով զբաղվել և յեկել և Սամսոնի աջակցությունը խնդրելու։

Սամսոնին հայտնեցին, թե նախաճաշը պատրաստ և։ Նա հյուրի հետ անցավ սեղանատունը։ Այնտեղ Մելանիան, սղոսկի քով նստած, կերակրում եր ժորժիկին։ Նա հյուրին ընդունեց անխոսուն, դլխի թեթև շարժումով պատասխանելով նրա խոնարհ բարևին։

Փերուզյանն իսկույն զուշակեց, վոր մարդ ու կնոջ հարաբերությունները լարված են։ Հոգու խորքում այս անգամ անկեղծ խղճաց Սամսոնին. նայելով նրա անսովոր մռայլ դեմքին։ Նա խոսում եր նավթային նոր շահարվանների և արդյունաբերական ապիսուսի մասին։

Հանկարծ նա դադաց խոսքի խայթ յուր հանցավոր միտումների պատճառով։ Նա դղջաց։ Բայց դղջաց վոչ այնքան վորևե բարոյական սկզբունքի հիման վրա, վորքան այն մտքից, վոր զուր եյին իր հանդուգն միտումները և յերբեք չեն կարող իրագործվել։ Մելանիայի ամբողջ հյությունը հակացնել եր ատելի նրան, թե շնորհ այդ կնոջն ուզիլ ճանապարհից շատ ել դյուրին չե և թե ինքը շատ ել ճիշտ գաղափար չե ունենում նրա մասին։

Նա վորոշեց զգուշ վարվել։ Ինչու՞ զուր տեղը զրկվի Սամսոն Փրանգուլյանի պես մի հզոր դրամատիրոջ բարեկամությունից այն ժամանակ, յերբ իր նոր ձեռնարկների գործի համար կարող և նրա աջակցությանը։ Նա աշխատեց գուցե ամենաբարոյություն դեպի Մելանիան և կարողացավ Սամսոնի սրտից ջնջել շար կասկածի վերջին նշույլը։

Մի շաբաթ անցած, նա գարձյալ այցելեց Փրանգուլյաններին։ Այս անգամ յեկել եր վերջին հրաժեշտը տալու։ Նա թողնում և Թիֆլիսը ու հետաքրքրում բագու յերկար ժամանակով։

XIV

Խորհում եր Մելանիան դիշեր ու ցերեկ և չեր կարողանում վորևե վորոշում հայտնել։ Նա որ որի վրա ավելի եր համոզվում, վոր չեր կարող յերկար ժամանակ մնալ անորոշ ու ծայրաստիճան լարված դրության մեջ։ Նա զգում եր, վոր Սամսոնը նրա համար ուսումնասիրում և վոչ որերով, այլ ժամերով և հետևում և անվերապահ։ Յերկու ամուսինների մեջ բարձրանում եր մի

պատանեկ, վորին չեր կարող խորտակել վոչ մի առողջ բանակա-
նութիւնն։ Յեվ Մելանիան սկսեց վախենալ Սամսոնից, առաջին
անգամ զգալով նրա տանջալի լուռության մեջ ինչ-վոր չարագու-
շակ մի բան։ Մնալ այդ մարդու հետ մի հարկի տակ թվում եր
նրան և վտանգավոր և զազրելի։ Ինչ անել, արդյոք, թողնել նը-
րան և վերադառնալ ծնողների մոտ, թե դիմել այն ապօրինի
այն վատթար և այն սովորական գործած մեջոցին իր դրության
հետ պայմանավորվելու համար, վորին դիմում են շատ շատերը
Դավաճանութիւն։ Դժվար իրագործելի եր թե մեկը, թե մյուսը։
Ինչ պիտի պատասխաներ հարյուրավոր հետաքրքրվողների հար-
ցին «ինչու բաժանվեցիր»։ Պատճառ պիտի բներ Սամսոնի ծի-
րությունը։ Բայց չե՞ վոր նրանք կարող եյին ասել, «ո՞ւր եր քո
խելքը ամուսնանալիս»։ Առարկել նրա ֆիզիկական անկարու-
թյունը։ Ոո, վոչ, այդ ամոթալի չի և նա չի կարող կրել հատա-
րակության ծաղրն ու ծիծաղը։ Իսկ միայ որինական ամուսնու
հարկի տակ, ուզել նրա մահը, խարել ու դավաճանել դեմ ե
նրա ամբողջ եյությանը և կրկնակի վատանգավոր...

Յեվ այսպես, այս յերկդիմի դրության մեջ Մելանիան տա-
ռապում եր անսահման։

Այն ինչ Սամսոնը սիրելով Մելանիային դաժան սիրով
կատարում եր ժամանակի և բնության դեմ այնպես, վոր կար-
ծես, նրանց անողոք որենքները հատկապես նրա համար եյին հո-
րինված։ Նա անխնա եր մարդկությունը և նրա հնարած բոլոր
պիտություններըը, վոր անզոր եյին նրա անզորության դեմ։ Յեվ
աշխարհը նրան թվում եր սառն, անհուրբնական։ Կյանքի նպատա-
կան շուքի մեջ զգում եր իրան խորթ, յեկվոր և հարատության
մեջ չքավոր, վորպես մի արհամարհված մուրացիկ։ Գարնան մերձա-
վորությունը բորբոքելով նրա որ որի վրա աճող արյունը, ավելի
զգալի և ավելի դաժան դարձնելով անփոխարինելի կորուստը։ Յեվ
մարդկանցից փախչելով, ինքն իր մեջ զգում եր այնպիսի ամա-
յություն, վոր կարծես, հոգին բաժանվել եր և պիտում եր մարմնի
առուցումը հեռվից։ Կենդանի կմախք, վոր այրվում եր առանց
Ջնրմանալու։ Նա հոգու ամբողջ կարողությամբ ատում եր բնու-
թյունը և բոլորը ինչ վոր նորոգվում ու թարմանում եր նրա
մեջ։ Ծառերի նորաձիլ տերևները, ծաղերի ծլվլոցը, յեղանակի
փափկությունը, յերկնի պայծառությունը և յերկրի ժպիտը, բո-
լորը, բոլորը, կարծես, ծաղրում եյին նրան անողոք և անամոթ
ծաղրով։ Նա կկամենար տեսնել ամեն ինչ հնացած, թառամած և

անզոր, ինչպես ինքը։ Նա պատրաստ եր, յեթե ունենար գերբ-
նական զորություն, մի հարվածով մեռցնել բոլոր կենդանի եակ-
ների մեջ կյանքը և բոլորին դարձնել իր պես այրվող կմախք։

Նա սկսեց ատել Մելանիային, չդադարելով սիրել նրան ան-
զոր սիրով։ Յերկու հակադիր, միմյանց ջնջող զգացումների մեջ
բաժանվեց յերկու տարբեր մասերի։ Մի ներքին ուժ դրդում եր
նրան, ամեն անգամ Մելանիային հանդիպելիս, փաթաթվել նրա
պարանոցին և անվերջ համբուրել, շոյել, միանալ ու ձուլվել նրա
հետ, մեռելության ձուլարանում։ Մի ուրիշ ներքին ուժ թելա-
դրում եր նրան. «հարձակվիր այդ յերիտասարդ կնոջ վրա, բըռ-
նիր նրա գեղեցիկ կոկորդը, խեղդիր, սպանիր և հետո սիրիր...
նրա գերեզմանը»...

Այլևս պարզ եր նրա համար, վոր յուր սիրո զգացման ա-
մենաթույլ մի արտահայտության Մելանիային պատճառում է
ղվանք։ Յեվ խոցոտված և արյունոտված ինքնասիրությունը
ուժ եր տալիս նրան այդ զգացումը զսպելու, մինչդեռ առեղ-
ծյան բուռն զգացման դեմ որ որի վրա դառնում եր անզոր, ան-
պաշտպան։ Նրա գլխի մեջ ծագում եյին մեկը մյուսից մռայլ
մոքերը, վորոնք գլխավորապես պատում եյին՝ մի առանցքի շուրջը։
Այդ առանցքը Մելանիայի յերիտասարդությունն եր, մանավանդ
գեղեցկությունը։ Ոո, անտեսանելի անըմբռնելի զորություն, յե-
թե չես կարող վերադարձնել նրա կորցրած առնականությունը,
զարձրու այդ կնոջը նրա հասակին ու թառամած արյունին հա-
մապատասխան մի եակ։ Այո, թող այժմ Մելանիան զրկվի իր
գեղեցկությունից, վորպեսզի նա այլքան չսիրվի և վորպեսզի
Սամսոնը այդքան չտանջվի, այսքան չխանդի և վորպեսզի ամեն
վայրկյան չմտածե, արդյոք Մելանիան մի ուրիշին չի՞ սիրում։

Մելանիայի ներքին անբացատրելի ատը զարգանում եր
ոը որի վրա։ Այժմ, ամեն անգամ Սամսոնին տեսնելիս, ցնցվում
եր։ Աչքին նա իր անկողնակալը փոխադրել եր մի ուրիշ սենյակ
և պիշերում եր առանձին և յեթե չքաշվեր, ամեն պիշեր կկոտրեր
իր ննջարանի դռները։ Հակառակ նախկին սովորության մերթ
ընդ մերթ նա պիշերները հանկարծակի արթնանում եր և միշտ
ականջ դնում դեպի կից սենյակը, ուր պիշերում եր Սամսոնը։

Ինքը Սամսոնը աշխատում եր շատ անգամ իրան նրանից
հեռու պահել նամանավանդ այն պահերին, յեր առեղծյան
զգացումը բորբոքվում եր նրա մեջ առանձին ուժով։ Այդ ժա-
մերին մի շատ դաժան ցանկություն կլանում եր նրա հո-

պին և խլացնում առողջամտության ձայնը։ Նրա բանականությունը մթագնում եր և նրա առջև պատկերանում եր Մելանխալի այլանդակված մարմինը, ոտ, վոչ ամբողջը, այլ միայն յերեսը... Չե՛ վոր այսպիսով և միայն այսպիսով կարող և լուծվել անլուծելին։

Նա լուռ պայքարում եր մի դիվային ցանկության դեմ, վոր սակայն զարդանում եր որ որի, ժամ ժամի վրա, և ավելի ու ավելի յենթարկում նրան իր զորությանը...

XV

Գիշերվա յերեք ժամն եր։ Սամսոնը դեռ անքուն եր իր սենյակում։ Սեղանի վրա վառվում եր փոքրիկ լամպարը, աղոտ լուսավորելով նրա մռայլ կերպարանքը։ Նա պառկած եր թիկնեվար տաճկական բազմոցի վրա, ձեռները գլխատակը դրած։ կար այդ պահին ինչ վոր հրող շերտ նրա դեմքի վրա և աչքերի մեջ։

Նա վոտքի յելավ և սկսեց անց ու դարձ անել։ Մերթ նա կրծատում եր շրջունքները, մերթ ծանր հառաչում եր, մերթ նրա աչքերը պսպղում եյին, մերթ կարծես մարում ինչպես հեռավոր փարոսի լույսը։

Նա վերցրեց սեղանի վրայից լամպարը, անցավ հաջորդ սենյակ, իր ննջարանը։ Այժմ այնտեղ յերկուսի փոխարեն դրված եր միայն մի անկողնակալ, այժմ նա սառն եր, անհյուրընկալ առ միշտ զրկված կյանքի մի ժամանակվա ջերմությունից։ Նա սկսեց ծուլորեն կամաց կամաց հանել հագուստը։ Դուրս բերեց ժիլետի գրպանից ժամացույցը, նայեց, դրեց անկողնակալի գլխի քով գտնվող փոքրիկ սեղանի վրա։ Գիշերվա յերկու կես ժամն եր։ Յերբեք նա այդպես ուշ չեր պառկում անկողին մտնելու. Նա դեն ձգեց փողկապը, հանեց կոշիկները, հագավ հողաթափերը և դարձյալ սկսեց անց ու դարձ անել։ Յերկու անգամ նա մոտեցավ դռներին և ականջ դրեց հաջորդ սենյակը, վոր առաջ Ժորժիկինն եր, այժմ Մելանխային ծառայում եր վորպես ննջարան։

Գիշերային անդորը լուության մեջ լսվում եր յերիտասարդ կնոջ առողջ ու կանոնավոր շնչառությունը։ Նա քնած եր խորը քնով—գոնե այնպես թվաց Սամսոնին, յերբ կիսով չափ բաց արավ դռները և նայեց։ Փոքրիկ սեղանի վրա վառվում եր այն գեղեցիկ լամպարիկը՝ վարդագույն լուսամփոփով, վորի լույսով Սամսոնը շատ անգամ եր սքանչացել Մելանխալի մարմնի գեղեցկությամբ։ Բայց յերբեք, յերբեք այդ մարմինը չեր յեղել նրա աչքում այդքան գեղեցիկ, վորքան այդ դիշեր։ Մեռաքսյա դիմի սեզոն վերմակի մի ծայրը յեռ եր ծալվել և ցուցադրել նրա ուռուցիկ կուրծքը, վորի վրա հանգչում եյին խիտ մազերի ալիքաձև հյուսերը։ Վերև այդ մազերը կազմում եյին մթին շրջանակի նման սքանչելի մի պսակ։ Այդ ձեռքը հանգիստ տարածված եր կողքով, իսկ ձախ ձեռը գլխի շուրջը կազմում եր մի ուրիշ շրջանակ։ կենսասիրության հաղթող չստացած ժպիտն եր յերևում Մելանխալի հեշտալի շրթունքների վրա։

Սամսոնը ներս մոտ կամացուկ, վորպես մի հանցավոր՝ սրբության տաճարը։ Նա գալիս եր վոչ իր հանցանքները խոստովանելու ու քավելու, այլ գործելու մի նորը և այնպիսին, վորի նմանը յերբեք չեր գործել—տաճարից դողանալու այն, ինչ վոր ամենասուրբն եր, ամենաթանգարժեքը։ Դանի մի վայրկյան նա նայեց Մելանխալի դեմքին։ Նայեց այնպես, վորպես անթի դայլը համեղ պատառի վրայ, վորին ճաշակելու կարողությունից զուրկ և։ Նա սքանչանում եր և տանջվում։ Այն ինչ՝ դիվային մեքը պաշարում եր նրան ուժգին, և նա զգում եր իր անզորությունը նրանից ազատվելու։ Այո, այո, այդ կինը շատ յերիտասարդ և, շատ սիրուն, շատ հրապուրիչ, շատ կենսաթրթիռ և շատ խստապահանջ իր մարմնավոր յերջանկության վերաբերմամբ։ Նա չի կարող իր ալրվող արյունը խառնել մի անզորի ցրտության և ապիկարության հետ։ Նա պիտի փնտրե մի ուրիշին, այս են պահանջում բնության որենքները և այս է դրոշմված Մելանխալի ախտաբորբոք մարմնի ամբողջության վրա։ Գուցե արդեն փնտրում է, գուցե արդեն գտել է։ Ինչ, զրկվել այդպիսի մի գանձից, դառնալ խաբված ամուսին, ծաղրված ու ծաղրանված ամենից։ Ոո, վոչ, վոչ, վոչ, այդ անկարելի յե և յերբեք, յերբեք չպիտի թույլ տալ...

Սակայն ինչպես դիմադրել բնության պահանջի գորությանը. ինչպես այդ կնոջն ապահովել մոլորությունից։ Միայն մի միջոց կա ապահովության—այլանդակել այդ զմայլելի մարմինն այնպես, վոր վոչ վոք չհրապուրվի նրանով և վոչ վոք չկամենա նրան մերձենալ բացի իր որինական տիրոջից։ Այն ժամանակ Մելանխան սարսափած կլինի սիրել Սամսոնին և միայն նրան։

Նա սարսափեց, մտածելով, վոր այն, ինչ վոր չի ուզում անել գերբնական ուժը, պիտի անե ինքը... իր ձեռքով։ Սարսափեց, բայց չփախավ դիվային մոքից, վոր ընդամենը մի չարաճ

եր, վոր հզացել եր և այժմ ձգտում եր իրագործվել դիշերային լռության մեջ, յերբ տանը ամենքը քնած են։ Վոճիրը սոսկալի յե, հակամարդկային և հակաբնական, բայց նա չի ուղղված այդ դեղեցիկ եակի դեմ։ Նա կապրի, բայց իր դեղեցկությունից զըրկված։

Նա նայեց յերկարատև հայացքով Մելանիայի սիրուն հուշքերին, վորոնցով շատ անգամ եր հիացել։ Ահա վորտեղ և նրա դեղեցկությունը, ահա ինչն և ավելի դյուրին աղավաղել։ Բավական և մատների մի թեթև շփում և նա կխախտվի հավիտյան...

Սամսոնը ձեռը տարավ վարտիկի գրպանը։ Այժմ նա այլևս ինքն իրան չեր պատկանում։ Նա դուրս բերեց գրպանից մի փոքրիկ սրվակ և մի կտոր բամբակ։ Նա ինքը կատարափեր իրանից, յեթե այդ պահին նայեր հայելուն։ Նա ուշադիր կարդաց սրվակի խորագիրը և գլուխը դրակառորեն շարժեց։

Մելանիան շարունակում եր հանդիստ քնել մինչդեռ դիրքում։ Թվում եր մի ինչ-վոր խորն յերազ ընդգրկել և նրան իր անշարժության մեջ։

Սամսոնը դուրս բերեց սրվակի խցանը և պատրաստվում եր հեղուկը կաթեցնել մյուս ձեռում բռնած բամբակի վրա նույն պահին, յերբ Մելանիան ծանր հառաչելով, շարժվեց։ Սամսոնը կանգ առավ և, սրվակը գրպանը դնելով, նայեց։ Այժմ Մելանիան յերեսը դարձրել եր դեպի պատը, բայց դարձյալ քնած եր խորը քնով։ Այս անգամ նրա շքեղ գիսակները հեռացել եյին ուսերից և թափվել բարձի վրա։ Նրանց փարթամությունը զայրացրեց Սամսոնին։ Ակամա նրա հայացքը դարձավ դեպի կնոջ առատ սեռանը և կանգ առավ մի հարդյա զամբյուղակի վրա։ Նա հուշիկ քայլերով մոտեցավ սեղանիկին, շոշափեց զամբյուղակը, վոր լի եր թելի կապոցներով, ասեղներով, կոճակներով և այլ մանր մունր իրերով։ Լավեց պապղուն մկրատի սուր հնչյունը, վորից Սամսոնը ցնցվեց այնպես, վորպես կարող և ցնցվել մարդը ոձի մերձավոր շվվոցից։ Նա դարձյալ նայեց Մելանիայի մազերին և, մկրատը վերցնելով, մոտեցավ։ Կապարային լռության մեջ լավեց սուր մկրատի զգուշավոր չխկոցը, և Մելանիայի շքեղ գիսակները, արմատից անջատվելով, թափվեցին բարձի վրա և այն տեղից ծանրորեն դեպի հատակը վորպես սպանված թռչուն։ Սամսոնը ժամանակ չկորցրեց իր դժոխային դիտավորությունը մինչև վերջը իրագործելու։ Նա շտապով դուրս բերեց գրպանից սրվակը, թափեց մի քանի կաթիլ նրա մեջ պարունակված հեղուկից բամբակի վրա և թեքվեց դեպի Մելանիան։ Հանկարծ նրա ձեռը դողաց։ Նա մի քայլ յետ կանգնեց։

Մելանիան հանդարտիկ աչքերը բաց արավ և նայեց յետևի վայրկյանին, յերբ չարության գործիքը պիտի տա միշտ այլանդակել նրա դեղեցկությունը։ Նա գլուխը բարձրացրեց, նստեց անկողնի մեջ, աչքերը յածելով շուրջը մղձավանջից արթնացածի պես։ Բայց արթնացավ նա այն վայրկյանին, յերբ նըշմարեց Սամսոնին, վոր կիսամերկ կանգնած եր սենյակի մեջտեղում, լուռ, անշարժ, մի ձեռում պահած սրվակ, մյուսում բամբակը։ Նա արձակեց մի թույլ ճիչ և վոտքի կանգնեց։ Նա ձեռնոցով շոշափեց գլուխը և արտասանեց.

— Գլուխս... չկա...

Նայեց աջ ու ձախ, վեր ու վար և տեսավ հատակի ու բարձի վրա սփռված մազերը, և սարսռեց ամբողջ մարմնով։

— Այս ինչ և,—գոչեց նա, սարսափած հայացքը ամուսնուն դարձնելով։

Սամսոնը լուռ եր։ Մի չարաբնդ ժպիտ աղավաղել եր մարդու դեմքը։

— Ինչ ես անում այստեղ, ինչ ես արել—նորեն գոչեց Մելանիան։

Սամսոնը անդիտակցաբար հատակի վրա ձգեց ձեռում բռնած բամբակը, վոր այրում եր նրա մատները։ Մելանիան արագ հարձակվեց, վերցրեց գետնից բամբակը, մոտեցավ լամպարին, աչքերը հեռացնելով Սամսոնից։ Նույն վայրկյանին մատների ծայրում զգաց այրոց, դեն ձգեց բամբակը և ծնաց տեղն ու տեղը ապշած։

— Ցես ուզում եյի քեզ բժշկել անբարտավանությունից,— արտասանեց Սամսոնը, և նրա ձայնը հնչեց այնպիսի չարախնդությամբ, վորից Մելանիայի մարմինը պատեց սառը քրտինքով։

— Ա՜ա,—աղաղակեց սարսափած կինը և թուլացած ընկավ անկողնակալի վրա։

Նա ամեն բան հասկացավ, և՛ այն, ինչ վոր եր, և՛ այն, ինչ վոր պիտի լիներ, և՛ այն, ինչ վոր չպիտի լիներ։ Սակայն հասկացավ նաև, վոր դիվային դիտավորությունը հրեշավոր մարդու իրագործվել և միայն կիսով չափ։ Նույն վայրկյանին վոտքի ելավ և շտապով անցավ հարևան սենյակը, ուր քնած եր ծորժիկը դայակի հետ։

Սամսոնը լսեց, թե ինչպես դռները փակվեցին, բանալին

պատեց, և դժաց վոր այլևս ամեն ինչ վերջացած է, վոր բանալին այլ պատրյալը կարեց ամեն մի կապ իր և Մելանիայի միջև։ Նա չկարողացավ իրագործել յուր գաղտնի միտումը—պրկել կնոջը գերեզկությունից, վորպեսզի առնիշտ տիրե նրան վորպես մի սեփականություն, վոր ուրիշ վոչ վոքի չի կարող պիտանի լինել։

Նա անցավ յուր սենյակը և յերեսնիվար պառկեց անկողնակալի վրա, բռունցքները սեղմելով գլխին։ Այն միջոցը, վորով նա անաջող փորձեց պաշտպանել Մելանիային մոլորությունից և ապահովել յուր ընտանեկան պատիվը, այժմ նրան թվաց սոսկալի յերազ...

Առավոտյան տասնումեկ ժամն եր, յերբ Սամսոնը բաց աբավ անքնությունից ուռած ու կարմրած աչքերը։ Ներս մտավ սպասավորը և, լուռ տվեց նրան մի ծրար։ Նա բաց արավ ծրարը. Մելանիայի ձեռագիրն եր, նամակը գրված եր համառոտ և շատ դրական։ Մելանիան գրում եր, թե հասկացել է նրա չար դիտավորությունը։ Մի մարդ, վոր ընդունակ է այդպիսի դիտավորության, չի խորշիլ անգամ սպանության մտքից։ Նամակը վերջանում եր այս խոսքերով.

— Ձես վերադառնում եմ ծնողներիս մոտ, թողնելով ամեն ինչ և ամենը, նույն իսկ ժորժիկիս։ Ձես ազատում եմ կյանքս և պեղեցկությունս։ Ձես ուզում եմ ապրել, գալ ու ապրել։

— Ձերը գնաց տիրուհիդ,—հարցրեց Սամսոնը խեղդված ձայնով։

— Առավոտյան գնացքով։

Սամսոնը ամոթահար, հուսահատ և ուժասպառ թավալվեց անկողնակալի վրա, վոր վաղուց եր նրա գազանը և այժմ գարձավ նրա համար ցուրտ դերեզման...

Հոկտեմբեր 1901 թ.
Թիֆլիս

ՅԵՎԳԻՆԵ

ԴՐԱՍԱ 3 ԳՈՐԾ·

ՆՎԻՐՎՈՒԱԾ Ե ԴԵՐԱՍԱՆ·
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

Սուտչին ավգամ ներկայացված է 29 հոկտեմբերի 1901 թ·
Թիֆլիսի տրիասական ընկերության թատրոնում.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻՀՐԱՆ ԱԼՎԵՐԴՅԱՆ, քաղաքում հայտնի փաստաբան, 35 տարեկան։

ՅԵՎԳԻՆԵ ԱԼՎԵՐԴՅԱՆ, նրա կինը, 24 տարեկան։

ՀՌԻՓՍԻՄԵ ՄԻՐՎԱԼՅԱՆ, Յեվգինեյի մայրը, 38 տարեկան այրի։

ՄԱՐԹԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ, Միհրանի քույրը, 38 տարեկան այրի։ Նախկին վարժուհի։

ՀԱՄԱԶԱՍՊ ՎԱՐՍԱՄՅԱՆ, Միհրանի մորեղբոր որդին և ոգնականը, 28 տարեկան։

ԱՐԳԱՐ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ, ինժեներ-տեխնոլոգ, գործարանատեր։ Միհրանի բարեկամն ու հասակակիցը։

ԱՐՇԱԿ ՍԱՌԱՓՅԱՆ, Յեվգինեյի մորեղբոր որդին։ Նախկին սպա, այժմ անգործ, 36 տարեկան։

ԴԱԲՐՈ ԱԶԱՐՅԱՆ, 36 տարեկան։

ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ ՋԱՐՈՒՀԻ, 35 տար.
ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ, 52 տար.
} ամուսիններ։

ՅԵՐՄՈՆԵ, Ալվերդյանների աղախինը։

ԴՐԱԳԻՐ.

Գործողությունը կատարվում է նահանգական մեծ քաղաքում։ Ներկայացնելու իրավունքը վերապահված է հեղինակին։

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

Բեմը ներկայացնում է Ալվերդյանների բավական հարուստ պարտադված հյուրասենյակը։ Դեպի ձախ յերկու դուռ—խորքինը տանում է սեղանատուն, ավանսցենայի կողմինը—Յեվգինեյի ննջարանը։ Այս յերկու դռների միջև դրված է թախտ թանգագին մոքետաքանեով ու բարձերով։ Խորքում նույնպես յերկու դուռ, վորոնցից ձախինը տանում է դեպի նախասենյակ, աջինը դեպի Միհրանի առանձնասենյակը։ Աջ պատի վրա լուսամուտներ դեպի փողոց։ Այս պատի տակ դրած է դաշնամուր, մոտը մի սեղան,

վրան գեղարվեստական իրեր, լուսանկարներ դիտակով հանդերձ։ Սեղանի մոտ բարձր պատվանդանով բրոնզյա լամպար ասեղին ձեռագործ պատուանդանով։ Սորքի յերկու դռների միջին ուղղությամբ բեմի մեջտեղում դրած է գահամորակ, շրջապատված շքեղ բազկաթոռներով։ Ձ կողմում մի որորվող բազկաթոռ (качалка)։ Ամենուրեք սենյակի ազատ ևնարմար անկյուններում փոքրիկ ցածր փափուկ նստարաններ։ Պատերին կախված են լուսանկարներ և դրավյուրներ։ Առհասարակ ամբողջ կահ-կարասին կրում է նոր ձեռք բերված հարստության դրոշմ։ Ամեն ինչ նոր է և ժամանակակից։ Յերեկոյան 8 ժամին է։ Սենյակը լուսավորում է դահավոր բակի առջև սեղանի վրա դրած և դաշնամուրի մոտ գտնվող բրոնզյա լամպարներով։

ՏԵՍԻԼ I

Տիկ. Մարթա յեվ Յերմոնե

Վարագույրը բարձրանալիս Յերմոնեն անձնուռցիկով մաքրում է բազկաթոռները, իսկ տիկ. Մարթան բրոնզյա լամպարի մոտ նստած կարդում է ինչ-որ գիրք.

Տ. ՄԱՐԹԱ.—Շուտ արա, գործդ վերջացրու, ութ ժամից անց է, սամովարը կուշանա։

ՅԵՐՄՈՆԵ.—Իսկի յել չի ուշանա։

Տ. ՄԱՐ.—Ելի հակառակեցիր, ախար հայ ես ե։

ՅԵՐ.—Հայն ինչ է վոր...

Տ. ՄԱՐ.—Հալը գոռոզ է, կոպիտ է, հակաճառող։

ՅԵՐ.—Իսկի յել հակառակող չե։

Տ. ՄԱՐ.—(Ծպտալով) Դե լավ, գնա սամովարի հոգս տես, քե չե՝ կբարկանամ։

ՅԵՐ.—Իսկի ել չես բարկանա, Գնում եմ։ (Գնում է ձախ կողմի խոհրի դռներով սեղաճատուց։ Ձախ բեմի ավանցսենյակի կողմի դռներից, ճիշարանից դուրս է գալիս Յեվգինեն)։

ՏԵՍԻԼ II

Տիկ. Յեվգինե յեվ տիկ. Մարթա

Տ. ՄԱՐ.—Յերեխան քնեց։

ՅԵՎԳԻՆԵ.—Վերջապես, քնեց։ (Նստում է դաշնամուրի մոտ յերեսը դեպի Մարթան։ Լռություն)։ *Տեր աստված, ինչքան տխուր է առանց Մինրանի։*

ՄԱՐ.—(Գիրքը ծալելով յեվ ձնկան վրա դնելով) Մի կես ժամ ուշացավ, ելի տխրեցիր։ Ախ, սիրահարներ, սիրահարներ, շուտով ձեր ամուսնության տասնհնգօրա ամիսը կլրանա, ելի կարծես, յերեկ եք պսակվել։ Այդպես չի կարելի, մի քիչ պակասեցրեք ձեր կրակը։ (Ծպտում է)։

ՅԵՎԳ.—Մինչև ուրախ չես, վոր յեղբայրդ սիրվում է։

ՄԱՐ.—Ընդհակառակը։ Ինչ շատ լավ հայտնի չե, թե վոքքան թանգ է ինձ համար Մինրանի բաղդավորությունը։ Սիրիր նրան Յեվգինե, նա հազվագյուտ մարդ է։

ՅԵՎԳ.—Այժմ յես նրան ճանաչում եմ ավելի, քան թե դու։

ՄԱՐ.—Այո՛, կընշանակե գիտես, վոր յեթե նրան վշտացնես—կըղժբաղդանա։

ՅԵՎԳ.—(Թեթև հառաչելով) *Ինչո՞ւ պիտի վշտացնեմ, քանի վոր սիրում եմ։*

ՄԱՐ.—Իսկ նա քեզ ուղղակի պաշտում է։ Նա չի ել կարող ուրիշ կերպ սիրել։ Նրա բնավորությունն անխառն է, հաստատ և, այսպես ասած, ամբողջ։ Այդ տեսակ մարդիկ յերբ սիրում են, սիրում են անկեղծ, խորը և անվերջ սիրով։ Բայց, շողոքորթություն չհամարես, դու ել նրա նման ես։ Դուք յերկուքդ, իմ կարծիքով, միևնույն բնավորության տեր եք։ Զարմանալի չե, վոր ասում են, թե միայն կոնտրաստներն են միմյանց սիրում։

ՅԵՎԳ.—Գիտեմ, կա իմ մեջ նրա արժանավորություններից վորևե մեկը թե չե, գիտեմ, վոր վոչ միայն սիրում եմ նրան, այլև հարգում։ Նա այն մարդն է, վորին վաղուց ստեղծել եք յերևակայությունս և վորին յես ուշ ճանաչեցի։ Յարգում եմ նրա սրտի պարզությունը, խելքի կորովը, կամքի ուժը։ Այո, նա գորեղ կամքի տեր է։ Միմիայն յուր խելքին և պարտական այն դիրքը, վոր նա ունի մեր քաղաքի հարյուրավոր փաստաբանների մեջ։ (Վեր է կենում շրջում)։

ՄԱՐ.—Սրբի, այդ խոսքերիդ յամար քեզ համբուրեմ։ (Վեր է կենում ու համբուրում)։ Այդ կարծիքը պատիվ է բերում քեզ, Յեվգինե։ Նշանակում է, վոր դու յերախտագետ ես, իսկ յերախտագիտությունը մեր ժամանակում մեծ արժանիք է։ Յեվ ինչպես չլինել յերախտագետ։ Հակառակ ընդհանուր ախտի նա, չհավիտակվեց վոչ ոժիտով և վոչ կալվածքով և շատ հարանացուների մեջ քեզ ընտրեց. քեզ, վոր համարյա վոչինչ չունեիր, բացի անձնական արժանավորություններ-

բից։ (Լռում է յեվ, նայելով Յեվգինեյին, ժպտում)։ Մեկայն իմացիր, վոր յերեք մի որ դու նրան վշտացնես, կատեմ քեզ։ Իսկ դու դիտես, թե վորքան եմ սուում, յերբ սուում եմ։

ՅԵՎԳ.—(Նայում է աչքերին, ափսաեցով ժպտալ)։ Դիտեմ... աչքերդ արտահայտում են։ (Ցերմոնեն ներս է մտնում լրագրերը ձեռքին)։

ՅԵՐ.—(Տալով լրագրները տիկ. Մարթային) Խանջալոզների ազգությունը բերեց։

ՄԱՐ.—Այո, այո, յես եկի խնդրել։ (Կանգնելով լամպարի մոտ, շտապով բաց է անում համարներից մեկն ու նայում)։ Այն է, վոր կա։

ՅԵՎԳ.—Այդ ինչ է։

ՄԱՐ.—Սբաթալյանի ինքնասպանության գործի հայիվը։ (Յեվգինեն ցնցվում է)։

ՅԵՐ.—խնդրել է, վոր եզուց առավոտ հետ ուղարկեք։

ՄԱՐ.—Աաա, լավ։ (Ցերմոնեն գնում է)։ Ուրեմն, հենց այսոր յերեկո պիտի կարդալ։ Բայց, վոչ հիմա. շաբաթ յերեկո չե, յերեկը հյուրերը կգան։

ՅԵՎԳ.—(Հետաքրքրված) Այդտեղ ամբողջ գործն է տպված։

ՄԱՐ.—Զգիտեմ, ինձ հետաքրքրում է մամուլի կարծիքը։

ՅԵՎԳ.—(Խլելով լրագրերը) Տուր ինձ, ես ուզում եմ կարդալ։

ՄԱՐ.—(Զարմացած) Ինչու՞ այդպես խլեցիր։ Ուզում ես—միասին կարդանք։

ՅԵՎԳ.—Վոչ, վոչ առանձին-առանձին... (Ուզում է գնալ)։

ՄԱՐ.—Ո՞ւր ես գնում։

ՅԵՎԳ.—Իմ ննջարանը՝ կարդալու։

ՄԱՐ.—Ինչու՞ յես այդպես շտապում։

ՅԵՎԳ.—(Ետ դարձվելով) Վոչինչ. հենց այնպես. (Ջանգակի ձայն)։ Ա՜հ, հյուր է գալիս։ Դու զբաղեցրու, յես խնդուքն... (Գնում է նույն դռներով. վոտեղից յեկել եր)։

ՄԱՐ.—(Նայում է նրա յետեվից զարմացած)։

Տ Ե Ս Ի Լ III

Տ. Մարթա յեվ Սահակյան

ՍԱՀԱԿՅԱՆ.—(Ներս է մտնում Ֆրակով։ Նա մի փոքր հարբած է, բայց իրան պահում է խիստ կանոնավոր)։ Քույր Մարթա, ամենախորին հարգանքներս...

ՄԱՐ.—Հըմ, եկի քիփդ լավ եմ տեսնում։ Այդ վո՞րտեղից։

ՍԱՀ.—Բուրժուական ճաշից եմ գալիս։ (Ընկղմվելով ոտաթոռ բազկաթոռի վրա) Ներեցեք, քույր Մարթա, այս բազկաթոռը նպաստում է մարսողության։ Միրզաջանովների տանն եկի, իրանց փեսացվի ծնողներին ճաշ եկին տալիս Ե՛ն, քույր Մարթա, մեր հասարակությունը լուսավորվել է։ Այժմ պահանջում են, վոր ֆրակով գնանք ճաշի։ Տասնուհինգ տարուա մեջ Միրզաջանովների սրտերը փոխվել են փայլուն կոշիկների, փափախը—ցիլինդրի, չուխան—ֆրակի։ (Հանելով ժիլետի գրպանից մի սիգար)։ Կարելի՞ է։ (Մարթան գլխով նամանայության նշան է անում, նստելով բազկաթոռներից մեկի վրա)։ Մերսի։ Այո, այո, մեծ հառաջադիմության մեջ է մեր ազգը։ (սիգարը վառում է)։ Պարոն Միրզաջանովը դեռ չի սովորել կերակուրը պատառաքաղով ուտել, լաքեյին «պատրոն» է ասում. Տիկին Միրզաջանովն ասում է. «աղջիկս կա-դը-պատր է սովորում», «տղաս վալանչել է ածում»։ Հայերեն արժանի չի համարում խոսելու։ Մի խոսքով, շիլափլավ։

ՄԱՐ.—Ճաշն յերկար տևեց։

ՍԱՀ.—Այո։ Հետո յերիտասարդները նստեցին բակարա խաղալու, յես մի փոքր մոկ արի, սիրտս պղտորվեց, փող չունենալ, վոր բաղդս փորձեմ։ Քույր Մարթա, տխուր ե, չա՞ տխուր։

ՄԱՐ.—Ամուսնացեք...

ՍԱՀ.—(Ետ տալով ժիլետի դատարկ գրպանները) Սրանցո՞վ։ Մինչև անգամ ժամացույց էլ չունիմ. դրավ եմ դրել հյուրանոցի սրճարանում։

ՄԱՐ.—Ինչու՞ չեք ծառայում։

ՍԱՀ.—Ո՞վ է պաշտոն տալիս, վոր ծառայեմ։ Ինձ հրավիրում են ճաշերի, ընթրիքների, յերեկույթների, հյուրասիրում են Ռեդերների շամպանիայով, Հանրի Կլեյնի կամ Ուլմանի սիգարներով, իսկ պաշտոն չեն տալիս։

ՄԱՐ.—Ցերեի, անընդունակ են համարում։

ՍԱՀ.—Անընդունակ։ Ցես մի ամբողջ ոտա յեմ կառավարել, մի քոսոտ բաղդասարի կամ Մաթևոսի կոնտորա կառավարել չե՞մ կարող։ (Երջում է)։ Վոչ, այդ չե, քույր Մարթա, ընդունակ եմ, բայց լռել չգիտեմ։ Ո՛ո, լռելու արհեստը շողոքորթելու արհեստից էլ շահավետ է։ Ցես ճանաչում եմ մարդիկ, վորոնք համարվում են խելոք, վորովհետև գիտեն լռել և խոր-

հրդեհավոր կերպով իրանց քիթը քորել։ Քիթ քորելն յերկ
տաղանդ ե։ (Մարթան ծիծաղում ե)։ Բայց դուք ծիծաղում
եք, (զանգի ձայն) ձեզ հետ լուրջ խոսել չի կարելի։ Ան
հյուրերը։ Գրաղ կզամ, վոր Գալամքարյաններն են։ Ով լինի
չլինի, նրանք ամեն շաբաթ յերեկո այստեղ են։ (Ներս ե
մտնում տիկին յեվ պարոն Գալամքարյաններ։ Կինը հագնված
ե ճեղ, մարդը ճնճուկավ ե)։ Տեսնք... Ռոմեո և
Ջուլիետտա։

ՏԵՍԻԼ IV

Նոյնիսկ յեվ Գալամքարյաններ, հետո Ցեվգինե

Տ. ԳԱԼ.—(Բարեվելով, իսկ Մարթայի հետ համբուրվելով) Ա՜խ, Մարթա, յերեք իսմանաս ինչքան հոգնած եմ, կցավես։ (Նստում ե) Այսոր յերեք նեսատ եմ ուշեցել, չորրորդն ել բաց եմ թողել։ Ամբողջ քաղաքն ել չափչփել եմ։ Անիծվի այսպես քաղաքը, մի հատ բնակարան չեմ գտնում խեղճ տաճկահայ վորբերի համար։

ՄԱՐ.—Ելի՞ վորբեր։

Տ. ԳԱԼ.—Այո, այո, ել մի՛ ասա։

Գ. ԳԱԼ.—(Նստում ե, այուրտուկի փեշերը զգուշությամբ հետ քաշելով)։ Լոխ ել յեկել են մեր գլխին թափվել։ (Ծպտում ե)։

ՍԱՌ.—Լո՛խ։ (Մարթան հանդիսաճաբար նայում ե Սառափյանցին)։

Գ. ԳԱԼ.—Ըմբո, փռակդ նոր ըմ տեսնում, եղ հինչ ա՞ղ... (Ծրթում ե)։

ՍԱՌ.—(Սիգարէթ ծուխը հրճուանքով արձակելով գլխից վեր) Տեսնցնելի վեչեր ըմ քինելական... (Մարթան, հագիվ ծիծաղը զսպելով, դարձյալ հանդիսաճաբար նայում ե Տրան)։

Տ. ԳԱԼ.—Բայց վճռեց ե տիկին Ցեվգինեն։

ՄԱՐ.—Մի քիչ զբաղված ե։

Տ. ԳԱԼ.—Յերևի տնտեսությամբ։ Ախ, յերանի նրան։ Հավատացնում եմ, ճաշելու ժամանակ չունիմ այդ տաճկահայերի ձեռքից։

Գ. ԳԱԼ.—Ել տալուց նըղացանք, աղպեր, ողբմըն հա՛ ողբմ...

ՍԱՌ.—Շատ ըն ոգուտ։ (Մարթան դարձյալ հանդիսաճաբար նայում ե Տրան)։

Տ. ԳԱԼ.—Չկարծես, Մարթա, վոր այսոր հյուր եմ յեկել, Ջեքսոնի հետ գործ ունիմ։ Ախ, գլուխս տրաքում ե, չգիտեմ վորի՞ տանեմ կամ վորի մասին մտածեմ։

Գ. ԳԱԼ.—Ջորն ասեմ, յես զորը խոստովանեմ։ (Միծաղում ե հազալով)։

ՍԱՌ.—Շատ դժուար և գործիչ կանանց դրությունը։

Գ. ԳԱԼ.—Աստված, ձեռ յեկալ ասկի գործերից, ողուշաղվի պերապիր. Ո՛զըմ չի... (Ծպտում ե)։

Տ. ԳԱԼ.—Բարեկե, մարդ մենակ իր համար չպիտի ապրի։ Այսորվա որն ամբողջ քաղաքում յես եմ ճնշացել մեկ ել տիկին Պամպադուրյանը, մյուսները հեռացել են աստղաբեզից։ Այժմ բոլոր հույսերս տիկին Ցեվգինեի վրա յեն։ Մենք վճռել ենք նրան ել յեթի տակ քաշել։ Ցերիտասարդ, խելոք, զարգացած. նա շատ ոգտակար կլինի հասարակության համար։ (Նկատում դռներից դուրս ե գալիս Ցեվգինեն գուցաս յեվ հուզված)։ Ահա և ինքը։ (Համբուրվում ե Ցեվգինեյի հետ)։ Ցես վոր չգամ ձեր տուն, դուք խակի չեք ել հարցնիլ մեռած եմ թե կենդանի։

ՍԱՌ.—(Առանձին)։ Այդ մեկը Հուդայի համբույր եր։

Ցեվգ.—(Բարեվելով մյուս հյուրերին) Ներեցեք, այս քանի որերս տակար եյի, թե չե—վաղուց եյի պատրաստվում ձեզ այցելելու։

Տ. ԳԱԼ.—Տկար եք։ Դուք այժմ ել, կարծես, առողջ չեք. դուք գունատ եք, մինչև անգամ դողում եք։

ՄԱՐ.—Տիկինը ճիշտ և ասում, Ցեվգինե, դու գունատ ես։ Ի՞նչ պատահեց։

Ցեվգ.—(Տ. Գալամքարյանի խոհարդավոր հայացքից շփոթված) Ցե՛ս... ճշմարիտ... վոչինչ. (Աշխատում ե ժպտալ)։ Գլուխս մի քիչ պտտում ե, սիրտս բաբախում։

Տ. ԳԱԼ.—Արյան սակավությունից կլինի, այո, դրանից կարող ե մարդու գլուխը պտտել։ (Նայում ե իր տաղանդավոր խոհարդավոր)։

Ցեվգ.—Վոչինչ, անցավ, նստեցեք խնդրեմ։ (Նստում են)։ Եհ, ասացեք, տիկին, ինչ նորություն, ինչով եք զբաղված։

Տ. ԳԱԼ.—Մինչև տիկին Գալամքարյանին հարցնել կարելի՞ չե, թե ինչով և զբաղված։ Հենց հիմա այդ մասին եյի գանգատվում։ Ձեզ մոտ ել գործով եմ յեկել։

Ցեվգ.—Հրամայեցեք։

Տ. ԳԱԼ.—Մի նոր ընկերություն ենք կազմել, դուք ել պիտի անդամ գրվեք։

ՍԱՌ.—Ընկերություն՝ ընկերական վոչին ապահովելու համար—ահա բոլոր հայ ընկերությունների նպատակը։

Տ. ՓՁԼ.—Դուք ամեն լուրջ բան կատակ եք դարձնում, պարո՛ն Սառափյան։

Գ. ԳԱԼ.—Կիրափառ ըս խոսքս, Սռափով։

Տ. ԳԱԼ.—(Ցեվգինեյին)։ Իսկապես, չես սխալ ասացի. ընկերուքյուն չէ, այլ շատ մտիկ ծանոթներից մի փոքրիկ շրջան։

ՅԵՎԳ.—Նպատակը։

Տ. ԳԱԼ.—Աղքատ հարսնացուներին ոժիտ տալ։

ՍԱՌ.—Գարոն Բաբսեղ, շնորհավորում եմ։

Գ. ԳԱԼ.—Ախ՛...

ՍԱՌ.—Նոր ընկերուքյունը ձեր մազազինի փոած ապրանքները կնազդացնի։ (Մարքաց բախուն ծիծաղում է)։

Գ. ԳԱԼ. Ըմբո, չես հիբի լեմ փոած ապրանք ծախալ...

Տ. ԳԱԼ.—(Ցեվգինեյին) Հուսով եմ, որ չէք մերժիլ։ Անդամավճարը միանուագ յերկու հարյուր րուբլի չի։

ՅԵՎԳ.—Չպիտեմ։ Ամուսնուցս կհարցնեմ, հետո պատասխան կտամ։

Տ. ԳԱԼ.—Ձեր ամուսնուց՝ Ա՞յդ ինչ ասել է—խոնարհուքյո՛ւն, սեր, քե յերկյուղ։

ՅԵՎԳ.—Վոչ մեկը կամ դուցե յերեքն էլ միասին։

ՄԱՐ.—Կեցցե՛ս, Ցեվգինե։

Գ. ԳԱԼ.—Լիսիմ ես, Զարուհի, խոնարհուքիոն, սեր, յերկեող, երեքն էլ միասին. լյավ պիեսա հաս։

Տ. ԳԱԼ.—Խոնարհուքյունն ու յերկյուղը դեն դցեք, տիկին, սերը պահեցեք, վորովհետև մենք քսաներորդ դարի սկզբումն ենք ապրում.

ՍԱՌ.—Բրավո, աղջը մեծ առաջադիմուքյան մեջ է... (Տ. Գալամբարյանը Սառափյանի վրա ատելուքյան հայացք է ձգում)։

ՄԱՐ.—Ով սիրում է,—նա պետք է խոնարհվի և վախենա։ Խոնարհվի սիրելուց, վախենա՝ սիրուց զրկվելուց։

Գ. ԳԱԼ.—Մի քիչ բրքին եր, ամա քեփս յեկավ։ (Կնոջը)։ Դու էլ վըեր մի քիչ խոնարհվիս, փիս չենի հաս։ (Ծիծաղում ու հարում է)։

ՅԵՎԳ.—Վիրտեղ կկամենայիք թեկ խաղ, այսաեղ, թե սեղանատանը։ (Ուզում է գնալ)։

ՄԱՐ.—Ինարկե, այստեղ։ Սեղանատանը շատ տոթ է։ Բայց դուք մի գնար, չես ինքս կկարգադրեմ։ (Գնում է սեղանատուն, ձեռով նշան անելով «Ցեվգինեյվն՝ նստել։ Նույն վայրկյանին ներս են մտնում նախասենյակի դռնից Սիհրանը, Սուլթանյանը յեվ Վարսամյանը)։

ՏԵՍԻԼ V

Նրանք, Սիհրան, Սուլթանյան յեվ Վարսամյան

ՍԻՀՐԱՆ.—(Բարեվելով ուրախ ու զվարթ) Հյուրերը, ավելի քանդպուին այրպիրիդ չեր կարող լինել ինձ համար։ (Սառափյանին)։ Աա, ֆռակով, հասկացա, Սիրդամանոցների ճաշին ես յեղել։ (Գալամբարյաններին). Հուսով եմ, այս յերեկոն լավ կանցկացնենք։ Հաղիվ կարողացա այս անպիտանին (ցույց տալով Սուլթանյանին) բերել այստեղ։

ՅԵՎԳ.—(Սուլթանյանին) Մի՛թե այդքան ձանձրանում եք մեր տանը, վոր ուժով են բերում ձեզ։

ՍՈՒԼ.—Ո՜ր, վոչ տիկին։ Ձեռ մի՛շտ հոդիպես հանդստանում եմ ձեր ընկերուքյան մեջ։ Ցերեկ զբաղված չլինելի, չես ինքս կձանձրացնեյի ձեզ իմ այցելուքյուններով։ (Հյուրերը ցնծում են։ Վարսամյանը բռնում է մի համեստ անկյուն)։

Տ. ԳԱԼ.—(Հեգնաբար) Արդյոք, ինչով և զբաղված մեր ինժեներատեխնոլոգը։

ՍՈՒԼ.—(Ձեռ տալով) Նյութականով, տիկին, նյութականով։

ՄԻՀ.—Ցեվգինե, մեզ թեյ տալու չեն, թե՛ չե։

ՅԵՎԳ.—Ախ, Մարքան ամեն բան ուշացնում է։ (Մոտենում է սեղանատան դռներին, նայում ներս, յես դառնում)։ Իսկույն։

ՄԻՀ.—(Վարսամյանին) Համազասպ, ի՞նչ ես այդ անկյունում թաղնըվել. մոտեցիր, տիկիններին զբաղեցնելու, խոկ ես զբաղում եմ աղջկաս սեռնելու։ Ամբողջ որը չեմ տեսել նրան։ (Գնում է)։

ՅԵՎԳ.—Քնած է, զդուշ, վոր չզարթեցնես։

Տ. ԳԱԼ.—(Ցեվգինեյին) Ի՞նչ քնքուշ հայրիկ է։ (Դառնալով տղամարդկանց)։ Պարոննե՛ր, ինչո՞ւ որինակ չէք վերցնում պարոն Սիհրանից։ Տեսնում եք ամուսնական կյանքի քաղցրուքյունը։ (Ցերմոնեն բեյ է բերում ու բաժանում)։

ՍՈՒԼ.—Ամուսնուքյունը, տիկին, վիճակախաղ է։ Ձեռ Սիհրանի տոմսակը տարել է ամենախոշոր դուժարը, այդ չի նշանակում, վոր մեր տոմսակները փուչ չեն դուրս գալ։

Տ. ԳԱԼ.—Ինչպես Արաբաջյանքինը։ Ախ, իրեսս, կարդացել եք Թիֆլիսի լրագրներում այդ պատմուքյունը։ (Նայում Ցեվգինեյին)։

ՍՈՒԼ.—Ինչպես չե, ուր գնում եմ, այդ մասին եմ լսում։ Դա մի սարսափելի դրամա յեր։

ՍԱՌ.—(Վեր գիտե տիկին Գալամեարյանի յետին միտքը)։ Այո, դա յեղեռնագործություն է և անմիտ յեղեռնագործություն։

Գ. ԳԱԼ.—Հունգոր Զարուհին ա ասըմ, թամամ բնաբուռնիթոն ա։

Տ. ԳԱԼ.—Մի գործ, վոր ամոթ է բերում մեր ինտելիգենցիային։

ՎԱՐ.—(Վեր գրաղված է գեղարվեստական իրերով ծածկված սեղանի մոտ, լուսանկարները դիտակով նայելով)։ Ինտելիգենցիան, արդյոք, ինչ ղեր է կատարում այդտեղ։

Տ. ԳԱԼ.—Պարոն Արաբաջյանը համարվում է իր կնոջ ինքնասպանության պատճառը, իսկ նա համալսարանական է։

ՎԱՐ.—Ցավ ինչ։ Մթթե մի մարդու մեղքը պիտի ամբողջ դասակարգի վզին փաթաթել։

ՍՈՒԼ.—Իմ կարծիքով, այդ Արաբաջանյանն այնքան էլ աթժանի չէ այն հալածանքին, վորին յենթարկել է նրան հասարակական կարծիքը։

ՄԻՀ.—(Ներս է մտնում) Քնած է, հարբած պես։ (Նստում է Ցեվգիենի մոտ յեվ սկսում ականջ դնել խոսակցությանը)։

Տ. ԳԱԼ.—Դուք արդեն չափազանց ներողամիտ եք դեպի Արաբաջյանը։ Յերևի, գործին լավ ծանոթ չեք։ (Ներս է մտնում Մարքան մի բաժակ թեյ ձեռին խառնելով)։

ՍԱՌ.—Ձես էլ լավ ծանոթ չեմ այդ գործին։

ՄԻՀ.—Այդ ինչ է, բաթռումի գրամայի մասին է խոսում։ Ո՛ո, յես շատ լավ գիտեմ։ Թիֆլիս յեղած ժամանակս մի որ մտա պատը և կարգացի ամբողջ գործը։ (Ցեվգիենիին) Ձես քեզ դեռ չեմ պատմել։

ՑԵՎԳ.—Վոչ. բայց մի քանի րոպե առաջ կարդացի լրագրում։

ՄԻՀ.—Ո՛ո, վոչ, ես ավելի մանրամասն գիտեմ։ Դա մի նշանավոր յերևույթ է։

Տ. ԳԱԼ.—Հապա, հապա, պատմեցեք, շատ հետաքրքրական է։

ՄԻՀ.—Ձես կպատմեմ մեկայն եյականը։ Այդ Աւաքել Արաբաջյանը համառ կերպով, նախապրյալ միտումով և սխտեմատիկաբար հալածել է իր կնոջը։ Հալածել է գիշեր-ցերեկ, անդադար, վորպեսզի հուսահատեցնի նրան։ Նա զրկել է կնոջն ամեն հաճույքից, յերբեմն չի թույլ տվել ուտել անգամ, հետը խոսել է՝ միշտ կոպիտ, շատ անգամ հայհոյանքներով։ Ամեն քայլում հիշեցրել է նրան իր անցյալի սխալը և խայթել, խայթել է կարիճի պես։ Ցավ այս բոլորն այն որջից, յերբ կինն անկեղծ, ազնվաբար կարող չեմ ասել նույնիսկ հերոսաբար, խոստովանել է իր անցյալի սխալը։ Նա ներում է խնդրել մարդուց արտասուքն աչքերին, վոտներին ընկած։ Մի մոռացեք, վոր այդ սխալն անբաղդ կինը գործել է գրեթե մանուկ հասակում։ Մարդու սիրտը չի մեղմացրել, նա չի ներել։ Նա, ընդհակառակը, պահանջել է թշվառից աճապարանոթյուն գործել։ Նա թույն է բերել տուն, դիտմամբ թողել է կնոջ ննջարանում, սեղանի վրա։ Նա ուզեցել է ազատվել կնոջից իր պատիվն իբրև մաքրելու համար։ Ցավ մաքրել է. տիկին Արաբաջյանը թունավորվել է, թունավորելով արդանդում և՛ մի անմեղ եակի։ Ահա մոայլ յեղելությունը։ Հետաքրքրական է կնոջ տանջանքը, բայց այդ մի սարսափելի տրագեդիա յե, վոր ես չեմ նկարագրիլ, խնայելով ձեր ներվերը։

Տ. ԳԱԼ.—(Նայելով Ցեվգենեյին) Կարելի յե յերևակայել։

ՍՈՒԼ.—Ցավ մ՛թթե այդ մարդը, վորին դու գրեթե հրեշացրիր, ինքը չի՞ տանջվել։

ՑԵՎԳ.—(Վեր այս խոսակցության ամբողջ միջոցին, մի անկյունում, սակայն հասարակության տեղ, նստած, խորին ուշադրությամբ լսում է, յերբեմն ցնցվելով)։ Տանջվե՛լ է։

ՄԻՀ.—Այո, տանջվել է և այժմ էլ տանջվում է։ Նրա հոգեկան դրությունն էլ մի տրագեդիա յե, բայց ինչ է այդ տրագեդիան գործված հանցանքի համեմատ։

ՄԱՐ.—Ցավ ինչը պիտի տանջե նրան խիստ։ ցանկալի յե իմանալ։

ՍՈՒԼ.—Խղճի խայթոցը։

ՎԱՐ—Խղճի խայթոց...(Հեգնաբար)։ Եհ, պարոններ, ում չի հայտնի, թե ինչ է խիղճ ասված բանը վոմանց համար։ Նեղն ընկած ժամանակ ամենազգայուն մարդն անգամ իր խղճի առջև դուրս է բերում այնպիսի ճարպիկ կոմպրոմիսներ, վորոնք կամաց-կամաց հանգստացնում են նրան ու թմրեցնում։

Տ. ԳԱԼ.—(Շարունակելով նայել Ցեվգիենիին) Այո, ճիշտ է, բայց հասարակական կարծիքը։

Գ. ԳԱԼ.—Լոխ եղ թքում ըն անասուածի իրեսին։

ՍԱՌ.—Լռի՛ր Վոչ, պարոն Բարսեղ, հասարակական կարծիքն ոպերեսային դատավոր է. ավազակին դատելով, նույն ավազակի հետ կանկան է պարում։ (Բոլորը ծիծաղում են, բացի Ցեվգիենիից)։

Գ. ԳԱԼ.—(Հազալով յեվ ծիծաղելով) Գյափը ինչ, Սաւիով։

ՎԱՐ.—Մենք գիտենք միայն վրդովվել, իսկ պատժել—յերբեք։

Գանցնի մեկ, շատ-շատ յերկու տարի, ամեն ինչ կմոռացվի և գուք, ես, բոլորս նորից կսկսենք սեղմել նույն Աւրաբաջյանի ձեռքը, նորից հարցնենք ցույց տալ նրան:

ՄԱՌ.—Այդ Աւրաբաջյանը հիմար է: Ցեթե յես չինեի նրա տեղը կատիպեյի այն անպիտանին կնոջս հետ ամուսնանալ, ինքս էլ խաչնեղբայր կլինեյի: (Բոլորը ծիծաղում են, բացի Ցեվգինեից):

Գ. ԳԱԼ.—(Ծիծաղելով ու հազալով) Վըեյ, մըյեռա, Սաֆով մըյեռա...

Տ. ԳԱԼ.—Իսկ գուք, պ. Սուլթանյան, ինչ կանեյիք:

ՍՈՒԼ.—Յես կարձակեյի կնոջս, ազատվելով նրան նյութապես (Ցերմոնեն գալիս է յեվ բաժակները հավաքում):

ՄԱՐ.—Ո՞վ է ելի թեյ ցանկանում: (Բոլորը լուռ հրաժարվում են):

Տ. ԳԱԼ.—Իսկ գուք ինչ կանեյիք, պարոն Ալվերդյան, յեթե այդ Աւրաբաջյանի տեղը լինեյիք: (Ցեվգինեն ցնցվելով ուշադրությունը լարում է):

ՍԱՌ.—(Առանձին) Ո՛ճ...

ՄԻՀ.—Ց՞ես... Կներեյի:

Տ. ԳԱԼ.—Ձեր կնոջ անպատվությունը...

ՄԻՀ.—Այո:

ՑԵՎԳ.—(Հանկարծ արձակում է թեյով ճիչ) Ա՛հ...

ԱՄԵՆՔԸ.—Ի՞նչ պատահեց:

ՄԻՀ.—(Վախեցած, վոտքի կանգնելով) Ցեվգինե՛...

ՑԵՎԳ.—Վոչինչ... (Աջխատում է ժպտալ): Կալծակը...

ՍԱՌ.—(Մոտենալով լուսամուտին) Ցեվ ինչ կալծակ: Ահա և' սաստիկ վորոտում: (Լավում է վորոտում):

Գ. ԳԱԼ.—Յեղիա մարգարեյի քյուրքը ձղեցին:

ՍԱՌ.—(Ծիծաղում է) հա հա հա, քյուրքը:

Տ. ԳԱԼ.—(Մոտենում է Ցեվգինեյին յեվ սուր հայացքով ճակատից յերեսին): Դուք կալծակից նք ավելի վախենում, քե վորոտից: (Ցեվգինեն տխուր ժպտում է): Ինչու ընդհատեցիք հետաքրքրական խոսակցությունը: (Նստում են): Հա, ուրեմն, պարոն Միհրան, դուք կներեյիք:

ՍՈՒԼ.—Այդ ինձ համար անհասկանալի յե:

ՄԱՐ.—Միհրան, այդ ինչ ես ասում:

Գ. ԳԱԼ.—Եղ հունց կներեյիր, խնդքս խակի պես չի կորում:

ՍԱՌ.—Այո, հունց:

ՎԱՐ.—(Վոտքի է կանգնում, հանկարծ վոգեվորվելով) Ձեմ հասկանում, ինչու և ձեզ զարմացնում Միհրանի յեղածը: Մի թե տիկին Աւրաբաջյանն անբարոյական է ասել: Անպիտանի մեկը նրան մոլորեցրել և համայա թե մանուկ հասակում—որիորդը տասնուհինգ տարեկան է յեղել: Մի թե դա այնպիսի մեծ հանցանք է, վորի համար ամուսինը պիտի տանջը նրան մինչև ինքնասպանություն: Ասացեք, խնդրեմ, վոր տղամարդն և մինչև ամուսնությունը իրան մաքուր պահում: Կարող եք ցույց տալ մի այդպիսի տղամարդ: Ի՞նչու կանայք ներում են մեր ամենազզուելի կեղտերն, իսկ մենք չենք ուզում ներել նրանց սխալը: Յես թույլ եմ տալիս, վոր Աւրաբաջյանը կարող եր չափազանց կատաղել կնոջ դեմ նրա անցյալի պատճառով: Թույլ եմ տալիս, վոր նա պիտի իրան խայտառակված համարեր: Բայց ուր եր այդ մարդու ներքին զգացողությունը, վոր հիշեցներ նրան իր սեռական անցյալը, ուր անշուշտ կան կեղտեր: Ինչու թշվառ կինը նկրել և նրան այդ կեղտերը, իսկ ինքը-վոչ: Վորովհետև մեկը կին է, մյուսը տղամարդ: Վորովհետև հասարակական կարծիքից ամբողջությունը կանանց վրա յե ծանրացած: Բայց չե՞ վոր այդ անարդարություն է, սոսկալի անարդարություն: Ցեվ ինչու գոնե մի անգամ չբողոքել անարդարության դեմ: (Տիրում է մի րոպե վայրկյան լռություն: Ցեվգինեն, իր խռովությունը թագցնելու համար, մոտենում է դաշնամուրին յեվ սկսում կամացուկ, դողդողուն ձեռներով յեվ ներվային frfrել նոտաներ: Տ. Գալամքարյանը շարունակ դիտում է նրան, իսկ Սառափյանը դիտում է տիկ. Գալամքարյանին: Միհրանը, լսելով Վարսամյանին, հավանության ցնցումներ է անում):

ՍՈՒԼ.—Տարօրինակ բողոք: Մոռանամ հարազատ կնոջս կեղտը, թե ինչ և բողոքում եմ անարդարության դեմ: Ազատ ինձ այդ տհաճ բողոքից:

ՎԱՐ.—Սխալը, պարոն Սուլթանյան, և վոչ կեղտը, սխալը: Սակայն կարելի յեր և' կեղտը մոռանալ, յեթե մեր աշխարհահայացքն ավելի լայն լիներ: Ով գիտե, գուցե ապագայում հասկանանք, վոր տղամարդի և կնոջ բարոյական պատասխանատվությունները հավասար են, հասկանանք նաև, վոր հանցանք ներելը հանցանք գործել չե: Իսկ սխալը, հափշտակվելը, անպիտաններից խաբվելն այժմ էլ կարող ենք ներել պետք է ներենք, մինչև անգամ պարտավոր ենք ներել:

ՍՈՒԼ.—Այդ մասին ես ձեզ հետ կվիճեմ յետո: Այժմ թողնենք, տիկին Ցեվգինեն ձանձրանում է:

Տ. Գ.Ա.Լ.—Ձես այդ վազուց եմ նկատում։

ՍԱՌ.—Ինդրենք տիկնոջը, մեզ համար մի բան նվագի։

ՍՈՒԼ.—Այ, այդ լես հասկանում եմ։ Տիկին, մի գրկեք մեզ հաճույքից։

ՍԱՌ.—Ցավոքենն նազ անողներից չե։

Գ. Գ.Ա.Լ.—Լմբա, խե պըտի նազ անի, խե, մունք հռվընք։ (Ցավոքենն նստում է դաշնամուրի մոտ յեվ նվագում ձեռքն ընկած առաջին նոտան։ Վարսակյանը յեվ Մարթան մի անկյունում վիճում են։ Միհրանը ծխելով անցուդարձ է անում խորքի պատի տակ հանդարս քայլերով)։

Տ. Գ.Ա.Լ.—(Առաջնին ամուսնուն) Նկատեցիր քանի անգամ դուչը փոխեց։

Գ. Գ.Ա.Լ.—Ա կնիկ, թռչար տեսնենք, պեն չունիա...

ՍԱՌ.—(Պատրաստ է լսում, ինտո) Հիանալի է, հիանալի... բայց այդ, կացիք, կացիք, այդ ծանոթ բան է...

ՑԱՎՈՒՆԵ.—Շոպենի նոկտյուրն է «կաթիլ» անունով. յես շատ եմ սիրում... ամբողջ որը պյուպետի վրա յեմ... վոչ—մելանխոլիա, վոչ—վիշտ, այլ հիվանդ հոգու տատապանք։ (Կամացկամաց ձեռքերը քաշվանում են, գլուխը թեխվում է կրծքին)։

ՄԱՐ.—(Մոտենալով Ցավոքենին) Ախ, ինչ պատահեց, դու գունատվեցիր։ Ցավոքենն նվագում է) Ուշքը գնում է... Ջուր... (Բոլորը շփոթվում են, շրջապատելով Ցավոքենին։ Սառափյանը ջուր է մոտեցնում)։

ՄԻՀ.—(Վախեցած) Ցավոքենի...(Ջոհում է նրա առջեվ)։

Տ. Գ.Ա.Լ.—(Ամուսնուն) Լավ ուշադրություն դարձրու, այդ բոլորը նրանից է...

Գ Գ.Ա.Լ.—Փիհ...

ՑԱՎՈ.—(Ուշքի գալով) Վոչինչ, մի վախենաք։ (Միհրանի ոգնությամբ վեր է կենում, նիգն անելով ժպտալ) Կայծակն ինձ վախեցրեց։ (Հյուրերին) Ներեցեք, խնդրեմ, գլուխս պատեց, ուրիշ վոչինչ... Անցավ, բոլորովին անցավ։ Նստեցեք, ուրիշ բան կնվագեմ... (Սկսում է նվագել ուրախ բան։ Բայց հյուրերն այնքան շփոթված են, որ չեն վստահանում ձանձրացնել տանտիրուհուն)։

Գ. Գ.Ա.Լ.—Եղ մուզիկը վոր կա մարդու սրինը տակն ու վրա անըմ...

ՍՈՒԼ.—(Պատրաստ) Գոնե յես չեի կամենալ ձեզ ձանձրացնել, տիկին։ Դուք, յերևի, տկար եք կամ հոգնած, հանգստացեք...

ՄԻՀ.—(Դաշնամուրի կափարիչը ծածկելով) Ձես քեզ արգելում եմ...

Տ. Գ.Ա.Լ.—Բարեկ, գնանք...

ՄԻՀ.—(Տիկին Գալամբարյանին) Դուք կնեքեք...

Տ. Գ.Ա.Լ.—Ի՞նչ բան կա։ Ձես առանց այդ ներելու ել յերկար մնալ չեյի կարող. Ձես գործով եյի յեկել։ (Ցավոքենին, վոր տակավին գունատ կանգնած է դաշնամուրի մոտ) Ջմռանաք իմ առողջության մասին պարոն Միհրանից Թուլլովություն խնդրել։

ՄԻՀ.—Այդ ինչ Թուլլովություն է։

ՍԱՌ.—(Հեգնաբար) Տիկինը մի նոր ընկերություն է հիմնել, առաջարկում է Ցավոքենին անդամ գրվել։ Մի խոսքով, յերկու հարյուր ռուբլու գործ է։

ՄԻՀ.—(Տիկ. Գալամբարյանին) Իմ ամուսինն ազատ է անելու ինչվոր ցանկանում է, իսկ իմ գրպանը միշտ նրա տրամադրության տակ է։

Տ. Գ.Ա.Լ.—(Ցավոքենին խոնարհաբար) Լսում եք, ազատ եք անելու, ինչ կամենում եք։ Գնահատեցեք, ցտեսություն.

Գ. Գ.Ա.Լ.—Ջեզ տեսութիոն։ Սառափյան, թաթդ տոր տեսնեմ, քը մատադ։ (Սեղմում է ձեռքը)։

Հյուրերը գնում են։ Միհրանն ու Մարթան ուղեկցում են նրանց միևչեվ նախասենյակ։

ՍԱՌ.—(Դռների մոտ, բոյորից թաղուն բռնելով Միհրանի թևը) Մոտըդ հիսուն ռուբլիկա։ (Միհրանը վարտիկի գրպանից հանում է ու տալիս յերկու հատ նախապես պատրաստված 25-անոց) Մերսի... (Մոտենում է Ցավոքենին, վոր կանգնած է սենյակի մեջտեղում)։ Ցավ շատ լավ ես անում, վոր այդ խորամանկ տիկին Գալամբարյանին պատիվ չես անում մինչև նախասենյակ ճանապարհ գնելու։ Հետո կասեմ պատճառը։ Ցտեսություն։ (Դռների մոտ հանդիպում է Միհրանին ու Մարթային) Ցտեսություն։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ VI

Ցավոքենն, Միհրան յեվ Մարթա

Մինչեվ Միհրանի յեվ Մարթայի վերադառնալն Ցավոքենն ժողովում է ուշքը բոլորովին յել ժպտում նրանց յերեսին։

ՄԱՐԹԱ.—Դու մեզ վախեցրիր, Ցավոքենն, մի՛թե կարելի է այդչափ ներվային լինել։

ՅԵՎԳ.—Դատարկ բան եր, անցավ, չարժե մտածել...

ՄԻՀ.—Ցես քեզ հարյուր անգամ խնդրել եմ, յերբ արամագիր չես, —հյուրեր չընդունել։ Ինձ համար քո հանգստությունն ամեն բանից թանգ է։

ՄԱՐ.—Լրագրները վերտեղ թողեցիր։

ՅԵՎԳ.—Քո սենյակում, սեղանի վրա։

ՄԱՐ.—Ընթրիքի չսպասեք ինձ։ (Դնում է ձախ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՏԵՍԻԼ VII

Միհրաձ յեվ Յեվգինե

ՄԻՀ.—(Պաուզա) Վերջապես, մենակ ենք։ (Համբուրում է) Նստիր։ Ցես ուզում եմ մի բանի մասին խոսել քեզ հետ։ (Նստում են բազկաթոռների վրա դեմ ու դեմ) Մի վախենար, վախենալու վոչինչ չկա։ Գիտես ինչ, Յեվգինե. ահա մի քանի ամիս է քեզ փոխված եմ տեսնում։ Կարծես, քեզ անհանգստացնում է ինչ-վոր վիշտ, հոգս, վերջապես, մի միտք է քանի գնում է, այդ փոփոխությունն ավելի ու ավելի նկատելի է դառնում։ Ասա, ինչ է պատահել։

ՅԵՎԳ.—(Վերկենալով) Այդ մասին այսոր վոչինչ մի հարցրու։

ՄԻՀ.—Ներողություն, դու իրավունք ունես։ Դու ուկար ես, գնա, ուրեմն, հանգստացիր։ (Վեր է կենում)։

ՅԵՎԳ.—(Քնքշաբար) Նեղացար։ (Ծպտալով) Ցես ուկար չեմ, անցավ, մի նեղանար։

ՄԻՀ.—Բայց դու ինձ խաբել չես կարող, դու մի հոգս ունես, մի կեղծիք, կեղծիքը քեզ չի սազում։

ՅԵՎԳ.—(Հառաչելով) Ջի սազում... (Ձակատը շփելով) Թող ինձ, ցես ուզում եմ քեզ համար նվագել...

ՄԻՀ.—Ցերաժշտությունը քեզ հուզում է։

ՅԵՎԳ.—Ցերը հյուրերի ներկայությամբ եմ նվագում, իսկ յերբ հյուրեր չկան, հանգստությունն է տալիս իմ ներվերին։ (Նստում է դաշնամուրի մոտ։ Միհրաձը տարակուսած կանգնում է նրա մոտ։ Յեվգինեն սկսում է նվագել ինչ-վոր մելամաղձոտ յեղանակ, բայց շուտով թողնում է յեվ գլուխը բեռում կրծքին ու լռում։ Պաուզա) Վոչ, չեմ կարող, ձեռներս չեն շարժվում։ (Միհրաձին ուսերը բարձրացնելով, տարակուսած նայում է նրան շուռունակ) Ո՛ո, ինչ տոթ է, կարծես, ոդ չկա։ (Վեր է կենում, լուսամուտներից մեկի վարագույրը յես բաց անում) Ի՞նչ հիանալի յերեկո է, անձրևից հետո լուսին։ Ի՛նչ մաքուր է յերկինքը։ (Մոտենում յեվ պատկեցնում բոցկլտ լամպարի լույսը։ Ներս է սփռվում լուսնի մեղմ կաթնագույն լույսը)։

ՄԻՀ.—Բայց դուրս է, կարող ես մրսել, հեռու կաց։ (Բռնում է թեվից յեվ լուսամուտից հետացնում։ Հետո լուսամուտը ծածկում է, լամպարի լույսն ավելացնում յեվ նայում նրան ուշադիր)։

ՅԵՎԳ.—Ցերանի թե մրսելն ու հիվանդանալն։ Ցերանի մեռնելն։ Ախ, տեր աստված, վորքան անտանելի է։

ՄԻՀ.—(Պաուզա) Յեվգինե, նայիր ինձ... (Մոտենում է ու ձեռից բռնում) Ցես քեզ միշտ խելոք կին եմ համարել....

ՅԵՎԳ.—Խելո՛ք... մի ասա այդ բանը։

Լուռ տեսարան

ՄԻՀ.—Դեհ, ասելու ես թե ինչի մասին ես մտածում։

ՅԵՎԳ.—Աաճա՛։ Լավ։ Նստիր ահա այստեղ։ (Նստում են) Լսիր, ցես վաղուց ուզում եյի քեզ պատմել մի պատմություն, հետքայթ, ինչպես կամենաս հասկացիր։ Ցես այդ կարզացել եմ չգիտեմ ինչ գրքում է յերբ, բայց ինձ վրա շատ խոր ազդեցություն է արել։ Լսո՞ւմ ես։

ՄԻՀ.—Լսում եմ։

ՅԵՎԳ.—Յեղել է չի յեղել, չգիտեմ ուր, աոինք հեռու Արևելքում, Արաբիայի թե Հնդկաստանի մի հարուստ քաղաքում մի ազգատ այրի։ Նրա ամուսինը, մի ազնիվ ու քաջ զինվոր, մեռնելով, իր կնոջ ու միակ աղջկա համար չի թողնում վոչ մի ժառանգություն, բացի իր զենքերը։ Բայց աղջիկը մորից ժառանգում է մի հոգևոր հատկություն—ծայրահեղ ինքնասիրություն։ Այդ աղջիկը վոչ շատ գեղեցիկ է յեղել, վոչ ազգ, վոչ շատ խելոք և վոչ հիմար։ Մայրը սիրում է նրան ավելի քան իր աչքի լույսը, փայփայում է մայրական անկաշառ սիրով։ Վոչինչ չի խնայում նրա համար, խաչ է նրան իր կարողությունից ավելի ուսում և կրթություն։

ՄԻՀ.—Այդ հետաքրքրական է, հետո...

ՅԵՎԳ.—Մի որ այդ աղջկան տեսնում է մի ազնիվ, յեռանդուն, խելոք մարդ, (Նայում Միհրաձի աչերին) մի խոսքով, մարդը հավանում է և խնդրում նրա հետ ամուսնանալ։ Մայրն ուրախությամբ համաձայնվում է։ Աղջիկը չի սիրում այդ

մարդուն, յերկար ժամանակ կռվում ե ինքն իր հետ, բայց հետո նուչնպես համաձայնվում ե... (Զգացված) իր մորը բաղդավորացնելու համար: Նա ամուսնանում ե ագնիվ մարդու հետ առանց սիրու, բայց հետո, յերբ ճանաչում ե նրան, սկսում ե վոչ միայն սիրել, այլ ուղղակի պաշտել, պաշտել ինչպես կուռք: Իսկ բարի մարդը սիրում ե նրան: հավատում և շրջապատում ե շքեղությամբ և այն բոլորով, ինչ վոր գեղեցկացնում ե կնոջ կյանքը...

ՄԻՀ.—(Պաուզա) Հետո...

ՅԵՎԳ.—(Հառաչելով ու ճակատը շփելով) Բայց շուտով մարդու յերախտիքը սկսում ե ուտել նրան—ուտել ցեցի պես: Չե վոր նա չքավոր ծնողների զավակ ե: Մարդը նվաստում ե նրա վիշտը և պատճառը հարցնում: Մի որ կինն ընկնում ե նրա վոտներին և ասում. «քո անունն սերն ե ինձ տանջողը... յես մեծ պարտքի տակ եմ—ահա իմ վիշտը: Յես ինքնասեր եմ, չեմ կարող տանել այդ պարտքը»: Ագնիվ մարդն ապշած արտասանում ե. «դու խելագար ես, առաջին անգամն եմ տեսնում, վոր սիրող կինն իր ամուսնու սիրուց տանջվի»: «Այո, պատասխանում ե կինը, քո սերն ե ինձ տանջում: Մի սիրիր ինձ և վոչ միայն մի սիրիր, այլ և ատիր, վարվիր հետս կոպիտ, ծեծիր ինձ. հայհոյիր, և յես պակաս կտանջվիմ, (Պաուզա) Մարդը չի կատարում նրա տարօրինակ խնդիրը: Այն ժամանակ ինքնասեր կինը կամաց կամաց մաշվում և վշտերից, թոքախտ և տառնում ու մեռնում: (Պաուզա) Ահա և ամբողջ հեքյաթը: (Վեր ե կենում):

ՄԻՀ.—(Վոր խորասուզված լսում ե մինչեվ վերջը, մի փոքր լռությունից հետո) Յեվ դա հեքյաթ ե...,

ՅԵՎԳ.—Հեքյաթ...

ՄԻՀ.—Դու բոլո՞ր պատմեցիր:

ՅԵՎԳ.—Բոլորը:

ՄԻՀ.—(Վոտի ե կանգնում կամացուկ, նայելով Յեվգինեի յերեսին) Վաչ, կարծեմ մի բան մոռացար: Այդ հեքյաթն ինձ ծանոթ ե: Ինքնասեր կինը լինում ե բարոյապես իր մարդուց շատ բարձր: Այնքան բարձր, վոր մարդու բոլոր արժանավորությունները նսեմանում են նրա մոտ: Ինքնասեր կինը լինում և այնքան գրավիչ, այնքան հրապուրիչ, վոր իր մի ժպիտով վարձատրում ե ամուսնու բոլոր բարությունները

(Համբուրում ե): Յեվգինե, դու չես կարողանում հեքյաթներ պատմել, ավելի լավ ե պատմիր յեղելություն:

ՅԵՎԳ.—Յեղելություն: (Պաուզա. Միհրանը նայում ե նրան: Յեվգինեն յերկու ձեռները դնում ե նրա ուսերի վրա, նայում աչերին) Վորքան բարություն կա քո աչքերում: (Ձայնը դողդողում ե) Իսկ յես... (Աչերը լցվում են արտասուքով) Բավական ե... (Ձեռները վերցնում ե Միհրանի ուսերից յեվ հեկեկալով վազում դեպի ննջարան):

ՄԻՀ.—(Ապշած նայում ե նրա յետեվից յեվ յերբ Յեվգինեն բոլորովին անհետանում ե, պաուզա) Չեմ հասկանում... (Ձեռը սեղմում ե ճակատին):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐԱՐՎԱԾ Բ·

Նույն սենյակը, նույն կահ-կարասին ցերեկով: Կեսօրյա մեկ ժամն ե: Լուսամուտները դեպի փողոց բաց են: Հատակի նաև կահ-կարասիի մի մասի վրա սփռվել են ապրելյան արեգակի ախորժալի ճառագայթները:

ՏԵՍԻԼ I

Հռիփսիմե, Մարթա, հետո Յեվգինե

ՀՌԻՓ.—(Ներս ե մտնում ճախասեռնյակի դռներից գլխարկով ու վերարկվով: Նայում ե շուրջը: Վոչ վոքի չտեսնելով, մոտենում ե ճախ Միհրանի առանձնասենյակի դռներին, ականջ դնում: Ձայն չլսելով, մոտենում ե ննջարանի դռներին, ուզում ե ներս մտնել, թողնում ե մտադրությունը, յես դառնում: Ձախ կողմի խարիսի, այն ե սեղանատան՝ դռներից ներս ե մտնում Մարթան հագնված՝ գլխարկով) Ա՜հ, վհրատեղ ևք: (Համբուրվում են) Մոռնում եմ ներս, վոչ վոք, ազախին էլ չկա, իսկ դռները բաց զողերի համար:

ՄԱՐ.—Այդ, յերևի, Միհրանն ե մոռացել ազախնին կանչել, վոր դռները փակի: Նա մոռացկոտ ե:

ՀՌԻՓ.—Ժննյան տանն ե:

ՄԱՐ.—Այո: Ուշ ե զարթնել, հագնվում ե:

ՀՌԻՓ.—Նո՞ր: (Նայելով իր ժամացույցին) Մեկն ե, չլնի թե հիվանդ ե:

ՄԱՐ.—Զգուշեմ, բայց ահա և՛ ինքը: (Ներս է մտնում Ցեվգինեն ննջարանի դռներից: Նա հագած է տնային, բայց թանգագին խոտից նուռաձեվ կարած շրջագգեստ) Բարի կեսօր...

ՅԵՎԳ.—Այո, ուշ եմ զարթնել: Միայն լուսաբացին եմ աչքերս փակել: (Համբուրվում է մոր հետ):

ՀՌԻՓ.—Ինչու:

ՅԵՎԳ.—կարդում եյի:

ՀՌԻՓ.—Ձերբ պիտի ձեռք վերցնես կարդալուց: (Մարթային) Ցերեկայութիւնից գրքերի սիրահար է: Պատահել է, որ մի գիրք ուժով ձեռքից խլել եմ, թագցրել, կես ժամ չանցած՝ մի ուրիշն է վերցրել: Ցավ է իրա:

ՅԵՎԳ.—(Մարթային) Ո՞ւր ես այդպես պարբասավում:

ՄԱՐ.—(Ձեռնոցները հագցնելով) Ուզում եմ տիկին Սուրաթյանին այցելել: Բայց առաջ պիտի մտնեմ տիկինդալամքարյանի մոտ: Միհրանն ինձ տվեց 200 ռուբլի, որ այսօր անպատճառ տանեմ այն նոր ընկերության համար:

ՀՌԻՓ.—(Ցեվգինեին) Մարդուն ինչ է անում, ասա ինչ:

ՅԵՎԳ.—Ծոյությունը նրան տարել է դրոսեցնելու: (Մարթային) Մի տանիր այդ փողերը:

ՄԱՐ.—Ինչու:

ՅԵՎԳ.—Ցես այդպես եմ կամենում:

ՄԱՐ.—Խնայողություն է այդ, քիչ կապրիր:

ՅԵՎԳ.—Ինչպես կամենաս—հասկացիր, միայն այդ փողերը մի տանիր:

ՄԱՐ.—Լավ: Վերցրու: (Տալիս է փողերը):

ՅԵՎԳ.—Պահիր մոտդ, կվերադարձնես Միհրանին:

ՄԱՐ.—Չեմ հասկանում միտքդ: Դեհ, ներիր, ժպրիկ, կես շտապում եմ, բայց շուտով կվերադառնամ:

ՀՌԻՓ.—Ցես էլ յերկար չեմ նստելու: (Մարթան գնում է):

ՏԵՍԻԼ II

ՅԵՎ.—Այդ ուր ես շտապում, մամա: Գլխարկդ վերցրու, միասին նախաճաշ կանենք:

ՀՌԻՓ.—Չե, պետք է գնամ հորաքրոջդ մոտ: Յերկու ամիս է չեմ տեսել: ամոթ է: Նա քեզ շատ է սիրում, միշտ գովում է: Ով քեզ սիրում է, կես էլ նրան եմ սիրում: Դու ասա տեսնեմ, ինչու այսոր աչքերդ թրթված է:

ՅԵՎԳ.—Ասացի, վոր անքուն եմ յեղել:

ՀՌԻՓ.—Ախ, ճշմարիտ ասացիր: Ուշքս տեղը չէ: Գիտես, ծեննյա, քո պատկվելուց հետո ուշքս խակի վրես չի լինում: Ուրախությունից է, ուրախությունից: Դու բաղդավոր ես, կես էլ հարբածի պես եմ: Աչքիս լույս, հոգիս, (համբուրում է) որից որ սիրունանում ես, այ, ինչ ասել է լավ ապրել: Այդ ինչ է, էլի նոր հագուստ: Ախ, վոսկի է, վոսկի Միհրանը, թագուհու պես է պահում քեզ: Ցերեկ ժոտս եր, հարյուր երդում անդամ գովից քեզ: Ինձանից էլ չնորհակալ է, վոր քեզ նման աղջիկ եմ պահել, մեծացրել նրա համար: Նա շատ ուրախ է քեզանով, շատ...

ՅԵՎԳ.—(Հեգնաբար ծիծաղելով) Ավելի կուրախանա, յերբ ամեն բան կիմանա:

ՀՌԻՓ.—Նա ամեն բան գիտե, ամեն բան, Ցես նրան բոլորը պատմել եմ: Նա այնպես սիրում է հորդ հիշատակը վոր ուզում է նրա անունով մի վորդեգիր պահել:

ՅԵՎԳ.—Այդ քեզ ինքն ասաց:

ՀՌԻՓ.—Ինչպես չե, հենց յերեկ: Այ, կարծեմ, առաջիկա սեպտեմբերից մեկին վերցնելու է:

ՅԵՎԳ.—Ցես չեմ թողնիլ:

ՀՌԻՓ.—Բան, ինչու:

ՅԵՎԳ.—Չի հարկավոր: Առանց այդ էլ մենք նրան շատ ենք պարտական:

ՀՌԻՓ.—Պարտականն: Ինչով: Փառք ասածու, ուրիշ գոքանչների պես նրա ընծքին չեմ նստել ու ներա հացով չեմ ապրում:

ՅԵՎԳ.—Ցես նրան արժանի չեմ...

ՀՌԻՓ.—Ո՛վ ասաց արժանի չես: Պուկոշկիկ Մերվելովի աղջիկն ոնց չի արժանի: Ցերեկ նա բարի է, խելոք, փող շատ ա աշխատում, պատիվ ունե, դու էլ գեղեցիկ ես, խելոք, հրեշտակի պես մաքուր...

ՅԵՎԳ.—(Հառաչանքը թագցնելով) Մաքուր, ո՜ո, տեր աստված, այս ինչ տանջանք է... (Վեր է կենում, մտենում յուսամուտներից մեկին):

ՅԵՎԳ.—(Ահագնությամբ իջնելով իրան) Անքուն եմ, անքուն: Դու վոր գնաս, կես պառկելու եմ անկողին...

ՀՌԻՓ.—Շատ լավ կանես, վորդի... ահա կես գնացի... (Համբուրվում է: Լսվում է զանգի ձայն):

ՅԵՎԳ.—Ահա, տեսնում ես, մի ժամ հանգիստ չեն թողնում: Ցերեկ հյուր է: Ցես դեռ ժպրիս կարգի չեմ բերել: Մի փոքր

սպասիր, չես իսկուն կգան։ (Գնում է ննջարանի դռնեռով։ Ցերմոնեն ներս է հրավիրում Գաբրո Ագարյանին ասելով՝ «Այստեղ են»)։

ՏԵՍԻԼ III

Հովիսիմե յեվ Գաբրո Ագարյան

ԳԱԲ. ԱՋ. (Հագնված է նաբակով, նորածեվ։ Ցերեսին սիրալիր ժպիտ, ձեվերը նուրբ, ձայնը մեղմ յեվ բարեհամբույր։ Հեռվից գլուխ տալով, մոտենում է Հովիսիմեյին) Հուսով եմ չենք ժոռացել։

ՀՈՎԻՍ.—Վահ. Գաբրո... Այդ վիր աստծուց։ (Գաբրո Ագարյանը համբուրում է նրա ձեռը, իսկ նա Ագարյանի ճակատը)։

ԳԱԲ.—Փոդի աստծուց, մայրիկ, մամոնայի։ Ամենքը փոդի համար այստեղ են վազում, չես ել վազեցի։

ՀՈՎԻՍ.—Շատ ուրախ եմ, վորդի, համեցեք, նստիր, վորտեղ քեֆը կը։ Գաբրոն նստում է բազկաթոռի վրա, սպասելով սակայն, վոր նախ Հովիսիմեն նստի) Վահ վահ, աչքերիս չեմ հավատում։ Աստ է, ինչ կա, գործով ես յեկել։

ԳԱԲ.—Հապա։ Ինձ ուղարկել են այստեղ իրրև ներկայացուցիչ մի նոր ընկերության։

ՀՈՎԻՍ.—Հա, ով գիտե, հոր պիտի փորնք, նավթ հանենք...

ԳԱԲ.—Այո, այդպիսի մի բան։ Աստենք, ինչպես ես, դուք, Ցեվգինեն։ Լսել ենք, լսել ենք։

ՀՈՎԻՍ.—(Պարծանքով ցույց տալով շուրջը) Տեսնում ես ելի, դիմի ժենյային համար է սարքած։

ԳԱԲ.—(Դիտելով շուրջը) Հիանալի է, շատ ուրախ եմ։ Աստում են, շատ խելոք ու աղնիվ մարդ է ու շատ լավ փաստաբան։

ՀՈՎԻՍ.—Մի խոսքով, ժենյան բաղդավորվեց, գոհությունն աստծու։ Եհ, ձերոնք ինչպես ին։

ԳԱԲ.—Իմ քույրն ել անցյալ շաբաթ նշանվեց։

ՀՈՎԻՍ.—Վահ, ասա, վոր ուրախանամ ես։ Վորն է նշանվել։

ԳԱԲ.—Փոքրը, Լիզան...

ՀՈՎԻՍ.—Մեռ հետ։

ԳԱԲ.—Մի բժիշկ ուսանողի։

ՀՈՎԻՍ.—Աստված յերկուսին ել մեծ բաղդի արժանացնի։ Հավատա, վորդի, քույրերիդ ել ու քեզ ել միշտ հարազատ վորդուս պես եմ սիրել։ Շատ ուրախ եմ։ Աղջիկս բաղդավորվելուց հետո ուզում եմ, վոր ամբողջ աշխարհը բաղդավորվի։

Ախ, ինչպես ես սիրում, ինչպես ես սիրում ժենյային...

ԳԱԲ.—(Ծխախոտի արծաթե տուփը գրպանից հանելով) Կարելի՞ է։

ՀՈՎԻՍ.—Ինարկե, վահ, մոռացել ես. վոր չես ել եմ ծխում։

ԳԱԲ.—(Առաջարկում է ծխախոտ) Ցես ձեր վոչ մի սովորությունը չեմ մոռացել։ Այս շատ լավ պապիրոս է (Հովիսիմեն վերցնում է ծխախոտ։ Ագարյանը վառում է լուցկի, նախ տալիս է նրան ծխելու, ապա ինքն է ծխում) Ինքը հոգալ ցանց է նրան ծխելու, ապա ինքն է ծխում) Ինքը հոգալ ցանց է հատուկ ինձ համար պատվիրել իր գործարանում։ Մի մեծ արկղ բերել եմ հետս։ Ցեթե թույլ տաք, վաղը մի քանի հատյուր կուղարկեմ ձեզ համար։

ՀՈՎԻՍ.—(Նկելով) Շատ լավը է։ Իսկի չես փոխվել, ելի են Գաբրոն ես, միշտ քաղաքավարի, բարի, կավակեր...

ԳԱԲ.—Իսկ դուք փոխվել եք, չաղացել եք, ջահելացել, սիրունացել...

ՀՈՎԻՍ.—(Նոյնպես) Այս որհնված քաղաքում ամենքը չաղանում են...

ԳԱԲ.—Որհնված։ Այդ ինչպես ես, վոր ուրիշներն անիծում են այս քաղաքը, իսկ դուք որհնում եք։

ՀՈՎԻՍ.—Մեղք են գործում անիծողները, վորդի։ Այս քաղաքի նման քաղաք չկա։ Ֆռ Թիֆլիսն ինչ է սրա մոտ։ Այստեղ ամեն բան լավ է։ Մարդիկ խելոք են, աշխատասեր, իսկ բարեվիճակն ել մի ասա, այստեղ չար մարդ չկա։ Մեկ ել, վոր այստեղ նախանձ չկա, վորդի, իսկ Թիֆլիսում, ան ոհ ոհ, մարդ են ուտում։ Ցեթե ժենյան այնտեղ այնպես բաղդավորվեր, ու ու ու, ամենքը նախանձից կտրաքվեն, ել բան չեր մնալ—չհնարեն, վոր աղջկա իր մարդուց բաժանեն։ Այստեղ մարդիկ ժամանակ չունեն նախանձելու։ Ան, ինչ ուշացավ ժենյան։ Ցես մի քիչ վազում եմ, վորդի, կնեբես։ Ահա գալիս է։

ՑԵՎԳ.—(Ներս է մտնում յեվ, նկատելով Գաբրոյին, ցնցվում է, արփոթվում յեվ մնում անշարժ)։

ՏԵՍԻԼ VI

Նրաեք յեվ Ցեվգինե

ՀՈՎԻՍ.—(Վիճաղելով) Զհանդչեցի...

ՑԵՎԳ.—(Մոտենում է սեղանատան դռնեռին՝ մտածում) Ցերմոնե՞ (Շտապով ներս է մտնում Ցերմոնեն։ Ցեվգինեն ուզում է նրան մի բան ասել, բայց մտածում է, վերսկան շարժումն է ա-

Ճառ, հետո ձեռով նշան է անում նրան հեռանալու։ Ցերմնեն գնում է զարմացած։ Զարմացած է նաեվ Հռիփսիմեն)։

ՀՌԻՓ.—Ժննյա, չես ճանաչում Գաբրոյին. մեր բարի, քաղաքավարի հարևան Գաբրո Ազարյանին։

ԳԱԲՐՈ.—(Ցեվգինեն դուրս գալու րոպեից վոտքի է վեր կացել յեվ անշարժ կանգնած ժպտալով սպասում է նրա հայացքին) Ցերեվի, շատ փոխվել, ծերացել եմ։ (Մոտենում է յեվ կամենում Ցեվգինեյի ձեռը համբուրել)։

ՑԵՎԳ.—((Ձեռը կամացուկ, մորից թագուն, խլում է նրանից) Բարև ձեզ...

ՀՌԻՓ.—Հիմա ճանաչեցիր։

ԳԱԲ.—Աչքից հեռու—մտքից ընկած. եհ, ինչպես կհրամայիք ձեզ անվանել այժմ։ Առաջ ինձ համար փոքրիկ Ժննյա եյիք, այժմ Ցեվգենիա Պավլովնա, թե տիկին Ալլերդյան։ (Առանձին) Տեր աստված, վորքան գեղեցկացել է։

ՀՌԻՓ.—Գաբրոն ամեն բան լսել և Միհրանի մասին։ Ժննյա, շնորհավորիր նրան, Լիղան նշանվել է։

ՑԵՎԳ.—(Անհարթեր) Այո։

ԳԱԲ.—Այո, տիկին, թե նշանվել և և թե շուտով պիտի ամուսնանա—պիտեմ, բայց թե յերկար ժամանակ կապրի մարդու հետ—աստված պիտի։

ՀՌԻՓ.—Ի՛նչ ես ասում, վորդի, ալ այ այ։ Նստիր, ինչ ես կանգնել...

ԳԱԲ.—Մեր ժամանակում կնոջ համար մարդուց բաժանվելն ավելի հեշտ է, քան ամուսնանալը։

ՀՌԻՓ.—Եհ, դու ելի առաջվա կատակասերն ես, Ժննյա, չես փոխվել, բայց շուտով կգամ։ (Գաբրոյին) Այսօր, յերևի, այստեղ կճաշես, իսկ վաղն անպատճառ իմ մոտն ես։ (Վեր է կենում)։

ՑԵՎԳ.—Մամա, աշխատիր շուտով վերադառնալ, գործ ունեմ։

ՀՌԻՓ—Լավ, լավ (Գնում է)։

ՏԵՍԻԼ V

Ցեվգինե յեվ Գաբրո Ազարյաններ

ՑԵՎԳ.—(Ուղեկցում է մորը մինչեվ նախասենյակ, սպասում է մինչեվ նրա բոլորովին դուրս գնալը յեվ դռները ծածկում. հետո մոտենում է սեղանատան դռներին, նայում դեպի ներս, դռները ծածկում, հետո կանգնում է բեմի մեջ տեղում ու նայում Գաբրոյին վոտից մինչեվ գլուխ)։

ԳԱԲ.—(Ամբողջ ժամանակ վոտքի վրա աչքերով հետեվում է նրանց դեմքի արտահայտում է մերթ զարմացում ու տարակուսանք, մերթ ուրախություն յեվ հրճվանք) Վերջապես։ (Հարձակվում Ցեվգինեին համբուրելու)։

ՑԵՎԳ.—(Առանց տեղից շարժվելու. ձեռը բարձրացնում է այնպես խիստ, վոր Ազարյանը բեվեռվում է տեղն ու տեղը. հետո նայում է նրան խորին արհամարհանքով. մի փոքր ժամանակ լռություն) Ցնա դրա համար չառանձնացա ձեզ հետ։

ԳԱԲ.—(Տակավին ձեվացնում է, թե չի հասկանում նրա խիստ տրամադրությունը, ժպտում է) Ներիր, մոռացա, վոր կնոջ համար զգուշությունը կնա առաքինություն է։

ՑԵՎԳ.—(Մղելով ինքն իր հետ կռիվ, վորպեսզի կարողանա սառնարյուն լինել) Ինչու՞ եք յեկել։

ԳԱԲ.—Անա սիրող և հարգող բարեկամի համար ավելի քան անհասկանալի մի հարց։ Ներիր, Ժննյա, չեյի սպասում։

ՑԵՎԳ.—(Վրդովվելով նրա սառնությունից) Մի՛ համարձակվիք ինձ հետ խոսել յեղակի։

ԳԱԲ.—(Փոխ ինչ շփոթվում է, սակայն իսկույն իշխում է իրան յեվ Ցեվգինեյի տրամադրությունը կատակի վերածում) Կարծեմ վարագույրների յետևում վոչ վոք չի թագնված, թե ազախինը սովորություն ունի դրան յետևից ականջ դնելու։ Գեղեցկության թշնամին բամբասանքն է, իսկ բամբասանքի աղբյուրը—ծառաները։ Մի պահեք, տիկին, հայ ծառաները. նրանք չափից դուրս հետաքրքիր են...

ՑԵՎԳ.—Թողնք ձեր կատակները և պատասխանեցեք. ինչու՞ համար եք յեկել։

ԳԱԲ.—Զարմանալի հարց, յեկել եմ ինչպես ուրիշները, գործով, պաշտոնով...

ՑԵՎԳ.—Իմ տունը, այստե՞ղ։

ԳԱԲ.—Աա, այդպես ասացեք։ Ալցելության։ Չե՞ վոր մենք բարեկամներ ենք...

ՑԵՎԳ.—Ուրեմն, լսեցեք, այդ կլինի ձեր առաջին և վերջին այցելությունը։ Այս մեկ։ Յերկրորդ՝ դուք չեք համարձակվիլ վոտք դնել իմ մոր տունը։ Հասկանո՞ւմ եք։ (Արտասանելով այս խոսքերը, մոտենում է լուսամուտներից մեկին յեվ հայացքը հառում դեպի փողոց)։

ԳԱԲ.—(Հիասթափված, լռում է, խորհում, հետո) Արդյո՞ք, խիստ չե՞ք վարվում ինձ հետ։

ՅԵՎԳ.—(Տակավին պահպանելով սառնարյունություն) Համենայն դեպս, վստահում եմ ավելի մեղմ, քան դուք վարվեցիք ինձ հետ,

ԳԱԲ.—Ձես ձեզ վրա բռնություն դործ չեմ դրել։

ՅԵՎԳ.—(Ցերեսը արագ դարձնելով դեպի նա) Բռնություն։ Դուք ավելի վատ միջոց եք գործ դրել։ Յեթե լինելիք ավազակ և ինձ անպատվելիք, այսօր չես հազար անգամ պակաս կառնչվելիք։ Բայց վոչ, դուք հափշտակեցիք ինձ քաղցր լեզվով, վոր սրից ու կրակից զորեզ եւ Ձեմ հերքում, դուք ինձ դուր եյիք գալիս, վորովհետև գեղեցիկ եյիք։ Բայց մի ժողանաք, վոր կյանքն ինձ համար մի մթին աշխարհ եր։ Ճշմարիտ ես, մի որ դուք ինձ թվացիք ասպետ։ Ասպետի ասպետ, վոր պատրաստ և իր կյանքը վտանգի յենթարկել մի խեղճ աղքատ աղջիկ կրակից ազատելու։ Բայց ինչ պետքի, վոր կրակը հենց դուք ինքներդ եք։ (Սկսում է անց ու դարձ անել)։

ԳԱԲ.—Զգիտեյի, վոր իմ սերը ձեզ համար կրակ եր։

ՅԵՎԳ.—Սեր։ (Դառն ձիծաղ) Հա հա հա, սեր։ Ծաղր, խաբեություն, անարգանք և վոչ սեր։ Ցես մինչև այսօր չեմ կարողանում ինձ հաշիվ տալ, ինչպես պատահեց այդ։ Բայց այդ որն ցես վոչ միայն հավատում եյի ձեզ, այլև հաճելի եր ինձ՝ հավատալ։ Ցեվ դուք, ոգտվելով այդ բանից, զործ դրեցիք ձեր լեզուն, այդ թունավոր դեղը։ Նա կամաց կամաց վարակում եր արյունս, ապանում եր իմ մեջ ամոթի զգացումը, և ապանեց։ (Ընկղմվում է գահավորակի վրա յեվ յերեսն ամոթից ձեռներով ծածկում)։

ԳԱԲ.—(Լսում է ցրտած, հեռվում կանգնած, հետո մի բանի բայլ մոտենում) Ցեվգինե, այդ բոլորն անցած բաներ են։ Ինչու՞ եք քրքրում անցյալն և ինքներդ ձեզ տանջում։ Այն որից հետո մենք մի քանի տարի ել յեղել ենք հարևաններ և՝ բարեկամներ։

ՅԵՎԳ.—Ցես ձեզ յերբեք չեմ սիրել։

ԳԱԲ.—Բայց չեք ել ասել, յերբեմն մինչև անգամ թույլ եք տվել ձեզ փաղաքշելու։ Մթթե կարող եք հերքել այդ։

ՅԵՎԳ.—(Ցնցվելով)։ Ո՛ո, զզվելի բոպեներ։

ԳԱԲ.—Ինչու։ Զզվելի կլիներ այն ժամանակ, յեթե այդ որից հետո ձեզ չհամբուրեյի։ Բայց յես վոչ միայն համբուրում, այլև սիրում եյի ձեզ։ Այո, այո, սիրում եյի և, վկա յես Աստված, ուր-

խու թյամբ կամուսնանալի ձեզ հետ, յեթե հանգամանքները նեըելին։ Իմ վզին մեծ լուծ կար—մայրս և քույրերս։ Ավելացրեք և՛ այն, վոր այդ մինչդեռ յես անգործ եյի։ Այժմ, Ցեվգինե, պետք է մոռանալ անցյալն և ապրել նոր զգացումներով։ Դուք ժամանակակից կին եք, կրթված, զարգացած, դուք պիտի հեռու լինեք նախապաշարումներից։

ՅԵՎԳ.—(Դլուխը բարձրացնելով, վեր է կենում)։ Հետո... Հետո։

ԳԱԲ.—(Խռխռալով)։ Այն որից անցել է իննը տարի—մի ամբողջ հավիտենականություն։ Դուք տեղափոխվել եք ուրիշ քաղաք, հաջող կերպով ամուսնացել և անդ մի տարուց ավել է, վայելում եք հանգիստ ամուսնական կյանք։ Այժմ վոչ վոք չգիտե ինչ է յեղել ձեր անցյալում, վոչ վոք, բացի ինձանից...

ՅԵՎԳ.—(Զայրացած)։ Վոչ վոք։ Սուտ եք ասում։ Վոր դուք դոնե մի անգամ պարծեցած չլինեք ձեր հաղթությամբ, դուք. հա հա հա։ Ո՞վ չգիտե, վոր դուք և ձեզպիսիները հենց նրա համար եք ինձ նմաններին մոլորեցնում, պատվից զրկում, վոր հետո պարծենաք։ Դա ձեր հերոսությունն է։ Բայց բավական է։ Լսեցեք, յես վոչ միայն չեմ աշխատել ձեր լեզվի վրա վորևե սանձ դնել, այլև կազատեմ նրան ամեն մի սանձից։ (Սկսում է անց ու դարձ անել)։

ԳԱԲ.—(Ապշելով)։ Այդ ինչպես։

ՅԵՎԳ.—Կարդացե՞լ եք Աբարաջյանի մասին լրագրերում։

ԳԱԲ.—Ի՞նչ եք ուզում ասել։

ՅԵՎԳ.—Այն, վոր յես կհետևեմ այն թշվառ կնոջ որինակին։

ԳԱԲ.—Ցեվ կխոստովանեք ձեր ամուսնուն։

ՅԵՎԳ.—Այո։

ԳԱԲ.—(Պառկում)։ Դուք այդ չեք անիլ։

ՅԵՎԳ.—Ցեվ ով կարգելի ինձ։

ԳԱԲ.—Դուք չեք կամենալ ձեզ կործանել։

ՅԵՎԳ.—Լավ է կործանվել, քան թե ապրել այնպես, ինչպես այժմ։

ԳԱԲ.—Չե՞ վոր ձեր ամուսինը ձեզ սիրում է ու հավատում, կնշանակե նա ձեզ համարում է անարատ։

ՅԵՎԳ.—Այո, բայց յես խիղճ ունիմ։

ԳԱԲ.—Ցեվ մթթե այդ խիղճը թույլ կտա ձեզ մի հարվածով կործանել յերեք կյանք։ Ասում են ձեր ամուսինը լավ մարդ է։ Ցեթե ձեզ չեք խնայում, խնայեցեք գոնե նրան։

ՅԵՎԳ.—Խնայել խաբելով, խնայել սատրությամբ. խնայել այնպես,

ինչպես խնայել եմ մինչև այժմ։ Ոո, վոչ, դա խնայել
նշանակում, այլ բարոյապես կողոպտել մի ապնիվ մարդ
Գիտեք ինչ ասել և խղճի խայթոց։ Ոո, վոչ, չէիմ գիտե
նայեք—այս առնը վոտք չելիք դնել։ Իսկ յես գիտեմ մ
տարի յե նա ինձ տանջում և։ Սկզբում դեռ վոչինչ, վորո
հետո պետակցությունս թեթևած եր, վորովհետև Ալվերդյանի
չելի սիրում, վորովհետև ամուսնացել եյի նրա հետ հենց այն
պես, ինչպես ամուսնանում և առհասարակ կանանց մեծ մասը
Բայց հետո սկսվեց տանջանքս, չերը սիրեցի նրան
(Թեթև պառւզա)։ Անցյալ որն չերը այստեղ խոսում եյին Ա
բաքաջյանի մասին, յես հազիվ զսպեցի ինձ, վորպեսզի հեն
հյուրերի ներկայությամբ չընկնիմ ամուսնուս վոտներին
չասեմ. «յես ևս մի տիկին Աբաթաջյան եմ»։ (Պառւզա)։ Բայ
այն, ինչ վոր չարեցի այն որը, կանեմ այսոր, վորովհետև
պարտավոր եմ անելու և չեմ կարող չանել... (Ընկղմվում
բազկաթոռի մեջ յեվ աչքերը ճառում դեպի անորոշ տարածու
թյուն)։

ԴԱՔ.—*(Մի փոքր լռությունից հետո անկյունից բայլերով մոտենում*
դանդգնում նրա գլխի մոտ։ Պառւզա)։ Յես լսել եմ, վոր դուք
ունեք մի սիրուն յերեխա...

ՅԵՎԳ.—*(Յեցվում է)։ Յերեխա...*

ԴԱՔ.—*Վորին, չերեխ, սիրում եք Թե դուք և Թե ձեր ամուսինը*

ՅԵՎԳ.—*Մեզ փոքրիկ։*

ԴԱՔ.—*Ահա հենց այդ խեղճ փոքրիկի համար դուք պիտի խնայել*
ձեզ...

ՅԵՎԳ.—*(Տակավին ինքնամոռացության մեջ)։ Մեզ Մարգո...*

ԴԱՔ.—*Մի մոռանաք և՛ ձեր մորը...*

ՅԵՎԳ.—*(Ուշի գալով)։ Մայրս...*

ԴԱՔ.—*Այո, այդ բարի և միամիտ կնոջը...*

ՅԵՎԳ.—*(Աջագույքամբ վոտի յե կանգնում կատաղած)։ Վորի բ*
բնակամությունը դուք այդպես ապականեցիք։ Ոո, բավակ
և, հեռացեք...

ԴԱՔ.—*Կհեռանամ, իհարկե, բայց խոսք ավեք, վոր չեք կատա*
րիլ ձեր անմիտ վճիռը։

ՅԵՎԳ.—*Ի՞նչ, ի՞նչ իրավունքով եք պահանջում ինձնից այդպիսի*
խոսք։

ԴԱՔ.—*Սիրող մարդու իրավունքով։*

ՅԵՎԳ.—*Սեր... Մի սրբապղծեք այդ բառը։ Կան բերանները, վո*

րոնք իրավունք չունեն նրան արտասանելու։ (Ձսպելով իր
հուզումը, մոտենում է սեղանատան դռներին)։

ԴԱՔ.—*Ի՞նչ եք կամենում անել։*

ՅԵՎԳ.—*Կանչել աղախնին, վոր ձեր վերարկուն պահի։*

ԴԱՔ.—*(Պառւզա, վորի միջոցին Դաբրոյի մեջ տեղի յե ունենում հո*
գեկան պատերազմ. նա նայում է Յեվգինեյի հոգին)։ Յես
կկտամ առանց աղախնի ոգնության ել։ Բայց, Աստված սի
րեք, մի կործանեք ձեզ։ Դուք այդքան յերիտասարդ եք, գե
ղեցիկ, կյանքը ձեզ ժպտում է, յերես մի դարձնեք նրանից։
Յեվգինե, յես ձեզ լավ չեյի ճանաչում, այժմ ճանաչեցի։
Խոսովանվում եմ, յես ձեզ համարում եյի մեկն այն կա
նանցից, վորոնք... վորոնք... այդչափ լուրջ չեն նայում կյան
քին... բայց աչքերս բացվեցին և այժմ ձեզ տեսնում եմ ձեր
իսկական գույնով։ Յես մոլորված եյի և ահա այժմ գղջում
եմ... դռնե այս բանին հավատացեք...

ՅԵՎԳ.—*(Հեգնական դառն ծիծաղով)։ Հա հա հա, գղջում եմ, հա*
հա, գղջում եմ. այդպես շուտ։ (Պառւզա)։ Բավական է, բա
վական է, այս բոպեին ամուսինս կարող է դալ. յես չեմ
ուզում, վոր դուք հանդիպեք միմիանց։ Գնացեք...

ԴԱՔ.—*(Ամոթից ընկճված)։ Յեվգինե...*

ՅԵՎԳ.—*Գնացեք, գնացեք, խնդրում եմ, յես առանց այդ էլ շատ*
եմ տանջվում։ (Մոտենում է նախասենյակի դռներին)։

ԴԱՔ.—*Դռնե մի մեղմ հայացք, նեբման մի թուլլ ժպիտ։*

ՅԵՎԳ.—*Առանց նայելու նրան, տանջանքով ցույց է տալիս ձեռով*
դռները։ Դաբրոն մոտենում է դռներին, տակավին հուսալով,
վոր Յեվգինեն կմեղմանա։ Բայց տեսնելով, վոր նրա դեմքի ար
տահայտությունը չի փոխվում, գնում է ամոթահար հանգարտ
բայլերով։

ՅԵՎԳ.—*Սպասում է մինչեվ Ագարյանի հեռանալը, ծածկում է*
դռները, բնկղմվում աթոռի վրա յեվ գլուխը դնելով բեվերի
վրա, դառն հեկեկում է։ Այնուհետև, մի վճռական շարժում
անելով, վոտի յե կանգնում, աչքերը արբում, ուժգր ժողովում,
մի հանի վայրկյան անցուդարձ անում։ Հետո մոտենում է սե
ղանատան դռներին, բաց է անում։ Ներս է մտնում աղախինը։

ՏԵՍԻԼ VI

Ցեվգինեն յեվ Ցերմոնեն:

ՅԵՎԳ.—Դայակը վերադարձավ:

ՅԵՐՄ.—Իակի յել չեն, կոֆեն պատրաստ է:

ՅԵՎԳ.—Հավաքիր: Ցես չեմ ուզում: (Պառկա: Ցերմոնեն ուզում է գնալ, լսում է գանգի ձայն): Ցերեկ, պարոնդ է: (Ցերմոնեն գնում է ճախասենյակի դռներով: Ցեվգինեն իջնում է իրա ուժը բոլորովին ժողովելով յել նստում դատճամուրի մոտ: Նվագում է ուրախ յեղանակ):

ՏԵՍԻԼ VII

Միհրաճ յեվ Ցեվգինե:

ՄԻՀ.—(Հագած է ֆռակ: Նա գալիս է դատարանից յեվ շատ ուրախ է: Դռների առջեվ պարտֆեյլը տալիս է Ցերմոնեին, վոր իսկույն տանում է նրա առանձնասենյակը, երկինց յես դառնում սեղանատուն):

Ահա, այդ ինձ դյուր է գալիս. յերբ գործից վերադառնալիս քեզ տեսնում եմ դաշնամուրի մոտ, հագնված, ուրախ, մոռանում եմ հոգնածությունս: (Մոտենում է ու համբուրում): Շարունակիր, շարունակիր, յես ուրախ տրամադրության մեջ եմ... մի գործ տարեցի փառահեղ կերպով: Դատարանն արդարացրեց այն անմեղ թուրքին, վորին թշնամիները ցույց էին տվել իբրև յեղբայրասպան: (Նստում է մոտը): Պետք է տեսնիր, թե խեղճն ուրախությունից ինչպես եր լալիս: Ո, վորպիսի հոգեկան յերջանկություն է տեսնել անմեղին շղթաներից ազատված և զգալ, վոր նրա ազատության մեջ դու յել դեր ես կատարել: Նվագիր, նվագիր, այդ յեղանակը համապատասխանում է իմ հոգեկան տրամադրությանը...

ՅԵՎԳ.—(Վերջացնելով նվագումը: Պառկա): Շնոր հ դրսում:

ՄԻՀ.—*Վատ չեն: Բայց յերկու շաբաթ ևս և աֆրիկյան տաքերը կսկավին: Եհ, հոգ չեն, կիմախչենք: Լավ. մայիսի մեկից մինչև սեպտեմբեր բոլոր գործերս հանձնում եմ Համազասպին և չորս ամիս քեզ հետ պատում եմ Ցեվրոպայում: Այո, դու պետք է տեսնես ինչպես են ապրում քաղաքակրթ ազգերը: Հույս ունեմ, վոր չես ասիլ, թե վատ միտք է: (Ձեռքերը վերցնում է իր ձեռքերի մեջ):*

ՅԵՎԳ.—*Մրքե քո գլխում կարող է վատ միտք ծագել:*

ՄԻՀ.—*Ո, մի ասա, յերբեմն շատ վատ մտքեր են ծագում: Որինակ, այն յերեկո. այն ինչ հեքիաթ եր, ասե: Աստված գիտե մի վայրկյանում ինչեր զգացի. Բայց հետո բանը հասկացա: Ցերեխա. ինչու՞ մինչև հիմա ինձանից թագցնում եյիր... (Նայում է Ցեվգինեյի աչերին խորհրդավոր): Մրքե սիրող հայր չեմ... Իարկե, իարկե, այդ դրությանն մեջ կնոջ բնավորությունը փոխվում է: Բայց, խոր ասածու, կապրիզներ վորքան քեֆդ է ունեցիր, միայն ինձ մի վշտացրու: Ցեթե վոչ, գիտես, իրավաբան եմ, որենքով կդատեմ. մեկ ել տեսար վորոշեցի—գրկել բոլոր իրավունքներից և աքսորել վոչ այնքան հեռու տեղեր, այսինքն—խոհանոց, վոր ինձ համար ձվածեղ պատրաստես: Աա, կերթանս...*

ՅԵՎԳ.—*Ուրախությամբ: (Հեռանում է):*

ՄԻՀ.—*Ո, գիտեմ, կերթաս: Դու խոհանոցից սարսափող կանանցից չես. այն կանանցից, վորոնք իրանց սալոններումն են խոհարարուհի: Բայց յես քեզ չեմ ուզարկիլ: Վոր այդ քընքուշ ձեռները կոշտանան... Ցերթիք, փառք աստծու, քո բախտից իմ գործերն այնքան լավ են գնում, վոր կարող ես մեկի տեղ յերեք խոհարար պահել: Սակայն... (Վեր է կենում) սատիկ ցանկանում եմ Մարգուին համբուրել: Հուսով եմ, վոր մեր նազելի որիորդը տանն է:*

ՅԵՎԳ.—*Վոչ:*

ՄԻՀ.—*Աա, թափառական, յերբեք տանը չի նստում: Բայց յեղանակը լավ է, թող ազատ ոդ շնչի: Բաս, քիչ եր մնում մոռանայի: Սպասիր: (Մոտենում է սեղանատան դռներին): Ցերմոնե, Ցերմոնե: Այստեղ բեր պորտֆեյլս: (Վերադառնում է Ցեվգինեյի մոտ: Ցերմոնեն բերով անցնում է Միհրաճի առանձնասենյակը): Իսկույն կտեսնես. մի թերթ այսուրպրիզ: Վաղուց է քեզ նվերներ չեմ արել: Բայց թուղթ տուր կանխավճարը առանալ... (Գրկում է Ցեվգինեյին յել համբուրում):*

ՅԵՎԳ.—*(Առանձին): Ո, ինչ տանջանք: Աստված իմ... (Ցերմոնեն բերում է պորտֆեյլը):*

ՄԻՀ.—*(Առնելով պորտֆեյլը, աղախնին նշան է անում հեռանալու: Ցերմոնեն գնում է սեղանատան դռներով: Միհրաճը բաց է անում պորտֆեյլը, հանում է մի քանի ակցիաներ յել առաջարկում է Ցեվգինեյին): Ահա, այս բոլորն այսօր, դատարան գնալիս, մտա «Եղիպարով» և ընկերության գրասենյակին և*

դնեցի քո ու Մարգոյի անունով։ Վերցրու, փոխարինը մի ոժիտ, ոո, վոչ, մի համբույր... (Համբուրում է)։

ՅԵՎԳ.—(Վոր ամեն անգամ ամուսնու համբույրից ցնցվում է, վերցնում է թղթերը, նայում)։ Ի՞նչ բաներ են։

ՄԻՀ.—Նավթային ընկերության ակցիաներ։

ՅԵՎԳ.—Վոչինչ չեմ հասկանում այս թղթերից։ (Գնում է թղթերը դաշնամուրի վրա)։

ՄԻՀ.—Քո ինչ բանն է։ Դու ուրիշ հոգով ես կըթված։ Հայրդ դինվորական է եղել։ Նա քո մոտ միշտ խոսել է հրացանների ու թնդանոթների մասին։ Բայց, սիրելիս, ժամանակիս զրել զինքերից մեկն էլ այդպիսի թղթերն են։ Պահիր քեզ համար, տարվա վերջը դիվիդենտ կստանաս։ (Ուզում է գրկել)։

ՅԵՎԳ.—(Ձեռ է խաչվում) Մ՛հ...

ՄԻՀ.—Դու չքա ուզում, որ քեզ համբուրեմ։

ՅԵՎԳ.—(Ձիզ է անում ժպտալ)։ Այո, չեմ ուզում։

ՄԻՀ.—Ա՛ա. հասկանում եմ. դու ինքդ ես ուզում համբուրել։

ՅԵՎԳ.—(Վոտքի կանգնելով) ասում եմ, այլևս ուժ չմնաց ինձանում...

ՄԻՀ.—(Նկատելով նրա այլայլվելը)։ Ինչ ասացիր... ուժ չմնաց...

ՅԵՎԳ.—(Նայելով լուսամուտով դեպի փողոց)։ Այո, չմնաց...

ՄԻՀ.—(Վոտքի կանգնելով)։ Յեվգինե՛...

ՅԵՎԳ.—(Ձեռքը դարձնելով նրան) Ի՞նչ ես կամենում ինձանից, ինչ...

ՄԻՀ.—Յեթե հիվանդ ես, պիտի բժիշկ հրավիրել։ (Ուզում է մոտենալ դռներին)։

ՅԵՎԳ.—Վոչ վոչ, հարկավոր չէ։ Ոո, յերանի թե հիվանդ լինեյի։

ՄԻՀ.—Ասա, ինչ է պատահել։ Կարելի չէ ազգականներիդ մասին վատ լուր ես լսել, գուցե մայրդ հիվանդ է կամ մի կարիք ունի։ Ասա, չե՞ որ յես քեզ համար վոչինչ չեմ խնայում։ Յեվգինե՛... (Գրկում է)։

ՅԵՎԳ.—(Ազատվելով նրա գրկից)։ Թո՛ղ, մի գրկիր ինձ...

ՄԻՀ.—(Ավելի ու ավելի զարմանալով, դարձյալ մոտենում է նրան ու գրկում։ Այս անգամ Յեվգինեն ուղղակի նրում է նրան)։ Դու ինձ հրաժ ես։

ՅԵՎԳ.—Վոչ—քեզ, այլ ինձ եմ հրաժ քեզանից ինձ...

ՄԻՀ.—Յեվ դա... կատակ է...

ՅԵՎԳ.—Կատա՛կ... տանջանք է։

ՄԻՀ.—Ո՞վ է տանջվում. ինչո՞ւ։

ՅԵՎԳ.—Նա, վոր արժանի չի տանջվելու և շուտով նա, վոր արժանի չէ... (Արտասանում է խուլ ձայնով, հագիվ զսպելով հեկեկանքը)։

ՄԻՀ.—(Ձակատը շփելով)։ Ահա հանելուկ... «Նա, վոր արժանի չի և շուտով նա, վոր արժանի չէ»։ Վոչինչ չեմ հասկանում, վոչինչ... բայց... դու սխալվում ես, դու հիվանդ ես, դառանցում ես... Յեվգինե՛, վատ մտքեր են ծագում գլխումս, իմ մեջ կասկածներ են հղանում... պարզ խոսիր... (Յեվգինեն լուռ է)։ Վերջապես, այդ չափից դուրս է... (Մոտենում է յեվ բռնում նրա ձեռը)։

ՅԵՎԳ.—(Նայելով Միհրանին վշտալի հայացքով)։ Յեվ ինչո՞ւ, ինչո՞ւ դու ուրիշ մարդ չես, կոպիտ, դեհնիկ, չար մարդ։ (Ջեռը ազատում է նրա ձեռից յեվ հեռանում)։

ՄԻՀ.—(Ապշած բեվեռվում է մի եվնույն տեղում, աչքերը հառելով Յեվգինեյի վրա։ Պառկա)։ Ա՛ա...

ՅԵՎԳ.—(Պառկա)։ Ինչո՞վ պիտի վարձատրեմ քո բոլոր բարեքյունները, յեթե վոչ... անկեղծությամբ... Այո, այո, միմիայն անկեղծությամբ։ Մի նայիր ինձ այդպես, քո հայացքն ինձ կսպանե...

ՄԻՀ.—Վախենո՞ւմ ես, այո, վախենո՞ւմ ես։ (Լռում է յեվ շարունակ նայում)։

ՅԵՎԳ.—(Մի բանի վայրկյան անց ու դարձ անելով, հանկարծ կանգ է առնում նրա առջեվ։) Մի հարց... (Ձակատը շփելով պառկայից հետո վճռական շարժումն է անում)։ Այն յերեկո դու տում եյիր, թե յեթե դու լինեյիր Արաքաջյանի տեղը, կներեյիր կնոջդ անցյալը...

ՄԻՀ.—Տում եյի, հետո...

ՅԵՎԳ.—Արդյոք, համոզմունքո՞վ եյիր տում։

ՄԻՀ.—Այդ ինչ հարց է... (Պառկա։ Ձայնը բարձրացնում է)։ Այդ ինչ հարց է... (Պառկա։ Բռնում է Յեվգինեյի ձեռը յեվ ուժգին թոթափում)։ Ինչ հարց է այդ...

ՅԵՎԳ.—Ոո, ինչ ամուր ես սեղմում ձեռս, դու յերկաթի ուժ ունես։

ՄԻՀ.—(Տակավին բաց չթողնելով նրա ձեռը)։ Ասա, ինչո՞ւ ես հարցնում...

ՅԵՎԳ.—Հարցնում եմ նրա համար, վոր յես... յես... մի անպիտան կին եմ, յես... արժանի չեմ... վոր յես... մի... մի տիկին Արաքաջյան եմ...

(Արտասանելով այս բառերը, ձեռն ազատում է Միհրանի ձեռքից յեվ թուլացած ընկնում է թաղթի վրա։ Յերկարատեվ պաուզա, վորի ժամանակ Միհրանը քարացած կանգնած է միեվնույն տեղ, մի ուժեղ ցնցումից հետո։ Իսկ Յեվգինեն յերկու ձեռներով յերեսը ծածկած է։ Վերջապես, Միհրանը շփում է աչքերը, նայում շուրջը, հետո ինքն իրան, կարծես, հավատիանալու համար՝ յերազումն է թե արթուն)։

ՄԻՀ.—Ա՛յս ի՞նչ է... յերազ... Թէ՞ ցնորվել եմ... Բայց... կարծեմ խելքս գլխիս է... Ահա նա, ահա մեր... հյուրասենյակը... ծանոթ իրեր... Որը ցերեկով... Իմ փափաքշանքներից հետո... Հենց այստեղ, ինքն իր լեզվով։ (Մոտենում է ու ձեռը բռնում)։ Յետ վերցրու ասածդ... յետ վերցրու։

ՅԵՎԳ.—Հաղիվ կարողացել եմ ասել։

ՄԻՀ.—(Թոթափելով նրա ձեռը ուժգին)։ Վոչ, վոչ, վոչ, ասա, վոր ինձ փորձում եյիր, ասա, վոր ցնորված ես։ Դեհ, ասա՛... Աղաչում եմ, լսում ես, չեմ ատիպում, այլ աղաչում եմ, աղերսում եմ, լսիր, յես տանջվում եմ... Ժպտա, վոր իմանամ, թե սուտ եր, ինձ փորձում եյիր... Յես կատա՛ք կեղ ամբողջ կյանքս մի վայրկյանում, միայն հերքիր, հերքի՛ր ասածդ...

ՅԵՎԳ.—Յես բոլորն ասացի։

ՄԻՀ.—Ուրեմն չե՞ս հերքում... չե՞ս հերքում... Աա, դարչելի՛... (Ուզում է հարձակվել նրա վրա, բայց վայրկյանաբար զսպում է իրան)։ Գազանը, գազանը պիտի դառնի՛։

(Ներս են մտնում տիկ. Հռիփսիմեն յեվ տիկ. Մարթան դրսի հագուստով յեվ ապշած մնում)։

ՄԻՀ.—(Հեկեկալով փաթաթվում է Հոջ պարապուցին)։ Մա՛րթա, Մարթա...

ՅԵՎԳ.—(Ընկնում է մոր գիրկը)։

Մարթան, կարծես, իրողությունը գուշակած, ատելությամբ լի հայացքով նայում է Յեվգինեյին։ Իսկ Հռիփսիմեն վոչինչ չհասկանալով, ապշած նայում է Միհրանին։

ՎԱՐԱԳՈՒՅՐՆ ԻՋՆՈՒՄ Ե ՀԱՆԴԱՐՏ

ԱՐԱՐՎԱԾ Գ·

Բեմը ներկայացնում է Միհրանի ընդարձակ առանձնասենյակը։ Յերկու դուռ—խորքում յեվ ձախ. խորքինը տանում է նախասենյակ, վորի մյուս կողմումն է Միհրանի փաստաբանական գրասենյակը, ձախինը տանում է հյուրասենյակ։ Աջ պատի վրա դեպի փողոց լուսամուտներ։ Տնացիներն եյ յեվ մուտք ունին ձախի դռներից։ Աջ պատի տակ դրած է Միհրանի գրասեղանը, վրեն հեռախոսի ապարատ, թանաքաման, թղթեր, պաշտոնական գովրձեր, խորքի պատի տակ գրքերի պահարան դարաններով, բոլոր յերկաթե դրամարկղ։ Ձախ կողմում կաշվեծածկ գահավորակ յեվ բազկաթոռներ, սեղան, վրեն ամսագրեր։ Մի տուփ՝ ծխախոտով լի յեվ այլն։ Հատակին սփռած է պարսկական գորգ։ Պատերին մի քանի գրավյուրներ յեվ մի քանի թատրոնական նշանավոր գործիչների նաեվ յեվրոպական հռետորների պատկերներ։

ՏԵՍԻԼ I

Վարսամյան յեվ Գրագիր

Վերագույրը բարձրանալիս Վարսամյանը, Միհրանի գրասեղանի մոտ կանգնած, թղթերի մեջ փնտրում է մի վոր թուղթ, իսկ գրագիրը մի թերթ ձեռին, գրիչն ականջի վրա դրած, կանգնած է խորքի դռների առջեվ։ Մի քանի վայրկյան լուռ յուն։

ՎԱՐ.—Ձգիտեմ վորտեղ է դրել նա այն թուղթը։ (Դադարում է փնտրել)։ Լավ, ասա այժմ արտագրեցիք այդ խնդիրը, ինչը կգա, կհարցնեմ։

ԳՐԱԳ.—(Յերեսը դարձնում է դուրս գնալու, իսկույն չեն է դառնում. պաուզա)։ Գրասենյակում մի քանի այցելուներ են սպասում։

ՎԱՐ.—Իսկույն կգամ։

ԳՐԱԳ.—Նրանք ուզում են անձամբ պարոն Ալվերդյանին տեսնել։

ՎԱՐ.—Ասացեք, վոր Ալվերդյանն վոչ վոքի չի ընդունում։

(Գրագիրը գնում է։ Վարսամյանը, գրասեղանի մոտ կանգնած, ձեռը հենում է նակատին յեվ մտածում։ Խորքի դռներից ներս է մտնում Սատափյանը)։

Վարսամյան յեվ Սառափյան

ՍԱՌԱՓ.—(Ձակատը թաշկինակով արբեյով)։ Ահա քեզ և գարնան սկիզբ. արդեն տաքն զգալի յե։ (Բարեվելով)։ Հըմ, եվի մինուրն տրամադրության մեջ և մեր պարոնը.

ՎԱՐ.—Անփոփոխ։

ՍԱՌ.—Զարմանալի և. հասկանալ չեմ կարող ինչ և պատահել այս տանը։ Մինրանը խոմ այդպես և, Մարթային խոսեցնել չի լինում, իսկ Յեվգինեն իր ննջարանից դուրս չի գալիս։ Գնաք և, վերջապես, պատճառն իմանալ։ (Գայլերն ուղղում ե դեպի ձախի դռները)։

ՎԱՐ.—Կարծեմ, հրամայված և վոչ վոքի չընդունել։

ՍԱՌ—Ահա թե ինչ։ Տարօրինակ և, տարօրինակ, վոչինչ չեմ հասկանում։ Ահա, ով վոր գալիս և։ (Ձախ դռներից ներս և մտնում Մարթան տխուր դեմքով)։

ՏԵՍԻԼ III

Նրանք յեվ Մարթա

ՄԱՐ.—Գլխով սառն պատասխանելով Սառափյանի բարեվին, դառնում ե Վարսամյանին)։ Թիֆլիսի լրագրները սատցվ՚ել են։

ՎԱՐ.—(Ցույց տալով գանավորակի առջեվ դրած սեղանը)։ Բոլորն ա՛յստեղ և։

(Մարթան մոտենում ե սեղանին, լրագրներ վերցնում յեվ քայլերն ուղղում դեպի ձախի դռները)։

ՍԱՌ.—Յեվգինեյին կարելի՞ յե տեսնել քույր Մարթա։

ՄԱՐ.—(Սառն), Հարցրեք աղախնին։ (Գնում ե)։

ՍԱՌ.—(Վարսամյանին)։ Տեսա՛ր, հեհ... վոչ պետք և ինչպես և և ծանոթանալ այդ կոմեդիայի բովանդակության.

ՎԱՐ.—Լավ և յեթե կոմեդիա և և վոչ դրամա...

ՍԱՌ.—Ինչ ասացի՞ր...

ՎԱՐ.—Վոչինչ... (Ձախ դռներից գալիս ե Հռիփսիմեն—Յեվգենեյի մայրը՝ տխուր յեվ հուզված)։

ՏԵՍԻԼ IV

Նրանք յեվ Տիկին Հռիփսիմե

ՀՌԻՓ.—Մինրանն այստե՞ղ չե։ (Տեսնելով Սառափյանին)։ Արշակ լավ ե, վոր քեզ տեսա։ Դու ինձ հարկավոր ես։

ՍԱՌ.—Փառք աստծու, յես ել մեկին հարկավոր եղա։ Հրամայիր, հորաքույր...

ՀՌԻՓ.—Գիտես ինչ... բայց (Նայում ե Վարսամյանին, վոր այդ միջոցին գրասեղանի մոտ կանգնած ինչ-վոր գրում ե օտապով մի կտոր թղթի վրա)... Բարով, վորդի...

ՎԱՐ.—(Գլուխ տալով)։ Յես ձեզ չեմ խանգարիլ։ Վերջացրի։ (Դրիչը թողնում ե սեղանի վրա, վերցնելով գրած թղթերը) Աբշակ, յեթե Մինրանը հարցնի իմ մասին, ասա՝ գրասենյակումն եմ։ (Գլուխ տալով Հռիփսիմեյին, գնում ե խորի դռներով)։

ՀՌԻՓ.—Ինչ հասկացող տղա յե։ Ախ։ Արշակ. ես անբաղդ եմ։ Ոգնի՛ր. այս քաղաքում, բացի քեզանից, մոտիկ ազգական չունեմ...

ՍԱՌ.—Ի՞նչ և պատահել...

ՀՌԻՓ.—Մի հարցնիլ վորդի, վոչ մի բան մի հարցնիլ. միայն ոգնի՛ր...

ՍԱՌ.—Բայց ինչպես ոգնեմ, ասա՛ ոգնեմ, յերբ վոչինչ չեմ հասկանում։

ՀՌԻՓ.—Չի յել հարկավոր՝ վոր հասկանաս, վորդի, դու միայն, ահ...ո՛ւր... այո, ասա Մինրանին, ասա... վոր... մի խոսքով հաշտեցրու նրան...

ՍԱՌ.—Ո՞ւմ հետ հաշտեցնեմ։

ՀՌԻՓ.—Ժենյայի։

ՍԱՌ.—(Զարմացած)։ Մինրանը կռվել և Յեվգինեյի հե՞տ... Քանի՞ր կատաքին... երկինքը կպատռվի՞։

ՀՌԻՓ.—Չեն կռվել,-վորդի, այլ այլ... ինչպես ասեմ... (Առանձին)։ Ախ, ինչ դժվար և դաղտնիք պահել... (Նրան)։ Գիտե՞ս ինչ, վորդի. ասա Մինրանին, վոր սուտ և, վոր Ժենյան... խելքը գլխին չե... փոքումն և... մի խոսքով, հանգստացրու նրան... (Սկսում ե լաց լինել)։

ՍԱՌ.—(Ձեռը ճակատին զարնելով)։ Աա, հիմա հասկացա... Մի խոսքով ասա, վերջացրու ելի... Յեվգինեյին գրպատել են։

ՀՌԻՓ.—Գրպատել են, իհարկե, գրպատել են...

ՍԱՌ.—Լուր են տարածել, վոր նրա անցյալը նման ե Արաբաջյանի անցյալին... Յեվ տարածողն և տիկին Գալանքարյանը։

ՀՌԻՓ.—Ի՛նչ, դու մի բան լսե՞լ ես։

ՍԱՌ.—Այո, լսել եմ։

ՀՌԻՓ.—Ուրեմն, խոսում են։

ՍԱՌ.—Խոսում են։

ՀՌԻՓ.—(Թուլացնում ընկղմվում է գահավորակի վրա)։ Տունս քանդվեց...

ՍԱՌ.—(Ոտքի վեր է թռչում)։ Լավ, ուշքի եկ, հորաքույր... Աշխարհում չի գտնվել մի ցինիկ, որը հավատա այդ դըժպարսուիթյանը։

ՀՌԻՓ.—Բայց ինչ անեմ, որդի, ինչ անեմ, աղջիկս ձեռքից գնում է, բաղդս չուրն է ընկնում...

ՍԱՌ.—Վեր կաց, հորաքույր, քայլերի ձայն եմ լսում։ Չպիտի աղմուկ բարձրացնել։

ՀՌԻՓ.—(Վեր կենալով)։ Այո, այս, չպիտի աղմուկ բարձրացնել... Յերևի, Մարթան է գալիս... ոո, չես չեմ կարող նրա յերեսը տեսնել։ Նա ուզում է հետս կռվել։ Այս դռներով կըդնամ... (Գնում է խորհի դռներով)։

ՏԵՍԻԼ V

Միհրաճ յեվ Սառափյաճ

ՄԻՀ.—Ներս է մտնում ցնայիճ պիջակով. գիշերային շապկով, ոտիքը վերով բարձրացած։ Նա գալիս է ննջարանից յեվ յերեվում է, վոր գիշերն անհանգիստ է անցկացրել։ Մտերի մեջ խորասուզված, չնկատելով Սառափյանին, մոտենում է գրասեղանին, նայում թղթերին, հետո մոտենում է գրերի պահարանին, այնտեղ եվս ինչ-վոր վորոնում յեվ ապա դարձյալ մոտենում է գրասեղանին։ Այս ամբողջ ժամանակ Սառափյանը տարակուսած նայում է նրան մերթ ընդ մերթ գլուխը յերերելով։

ՍԱՌ.—(պառկած. մոռենում է)։ Ինչ երկար ես քնում։

ՄԻՀ.—(Սթափվելով)։ Աա, այդ դու յես... այդպես վաղ...

ՍԱՌ.—Լավ վաղ է... արդեն մեկ ժամն է։

ՄԻՀ.—(Մեխենաբար)։ Արդեն մեկ ժամն է։ (Նստում է գրասեղանի հով, բաց է անում արկղերից մեկը) Այս ինչ է այստեղ (Հանում է արկղից մի ռեվոլվեր)։ Այս ինձ նվիրել է, ով, այո, այո, այն Թուրք բեգը, վորի յեղբորը պաշտպանեցի։ Ինչքա... Անցյան այն ժամանակները, յերբ մարդիկ կյանքի բարդ խնդիրները լուծում էին զենքով, Իսկ այժմ... (Անհամարհանքով ռեվոլվերն զնում է սեղանի վրա յեվ շարունակում արկղում վորոնել)։ Վերջապես, նվիրում եմ քեզ, հարկավոր կգա, դու նախկին զինվորական ես։

ՍԱՌ.—(Վերցնում է ռեվոլվերն ու նայում)։ Հիանալի ռևոլվեր է, ամերիկական վերջին սիստեմայի... (Դնելով գրպանը) Շնորհակալ եմ։ (պառկում)։ Զարմանում ես...

ՄԻՀ.—(Շարունակ վորոնելով արկղի մեջ)։ Գոթյե ունես հետս...

ՍԱՌ.—Ուզում էի առաջարկել մի քիչ զբոսնելու ինձ հետ։ Յեղանակը վատ չե, թեև մի քիչ տաք է։

ՄԻՀ.—Ճես ցկեղնները յերբ եմ զբոսնել... (Հանում է արկղից մի թուղթ, նայում է վերնագրին, վեր է կենում, մոտենում խորհի դռներին)։ Ո՞վ կա այստեղ։ (Գալիս է գրագիրը)։ Այս թուղթը վաղը կարտպրեք և կներկայացնեք դատարանին,

ԳՐԱԳ.—Հա, հենց մենք էլ այդ էինք փնտռում։ (Վերցնում է թուղթը)։

ՄԻՀ.—Մեկ ժամից է, կոպեցեք զբասենյակն ու գնացեք։ (Գրագիրը գնում է)։ Զարմանալի վոլորմելի հակներ կան աշխարհում. այդ ապուշը, մինչև ամեն որ չարձակեմ պարապմունքից, ինքնագլուխ չի գնա։ Կարծես, այդ սորկական պաշտոնը հաճելի է նրա համար։ (Սառափյանին է դառնում պառկածից հետո)։ Ե՞լ ինչ կասես...

ՍԱՌ.—Վոչինչ...

ՄԻՀ.—Այդ քիչ է... Բայց դեմքդ ցույց է տալիս, վոր մի բան ուզում ես ասել. ինչ եր խնդրում քեզանից հորաքույրդ։

ՍԱՌ.—(Զարմանալով ու շփոթվելով)։ Հորաքույրս...

ՄԻՀ.—Այո, իմ գոքանչը... Ջի վոր մի փոքր առաջ նա այստեղ լալիս եր քո առջև։ (Նայելով նրան խորհրդավոր)։ Յերբեմն մարդ կարող է պատի յետևից էլ զգալ, թե ինչ են խոսում իր մասին։ (Մտածում է)։ Բայց ինձ համար միևնույն է, ինչ ուզում են։—Թող խոսեն։ Հասկանում եք, միևնույն է... (Ձեռով մի շարժումն անելով, դարձյալ նստում է գրասեղանի հով։ Խորհի դռներից ներս են մտնում Սուլթանյանն յեվ Վարսամյանը)։

ՏԵՍԻԼ VI

Միհրաճ, Սուլթանյան, Սառափյան յեվ Վարսամյան

ՄԻՀ.—(Տեսնելով նրանց, աշխատում է ձեվանալ անհոգ ու զվարթ)։ Աա, Կովկասյան ամերիկացի, բարով։ Ի՞նչ է ասում քո դործնական փիլիսոփայությունը...

ՍՈՒԼԹ.—Իմ դործնական փիլիսոփայությունը պատվիրում է ինձ ներկայացնել քեզ ամերիկական հաշիվ և պահանջել

քեղանից կորցրած ժամանակիս համար վարձ։ Այդ ինչ
պատահել, բարեկամ, ժխնեբալի չին ես տասցել, թե մի
նիստրի պաշտոն, ահա յերբորդ անգամն է գալիս ես, ա
ասում են, «չի ընդունում»... (Նստում գրասեղանի հով։ պա
ուզա)։ Ծանոթացար իմ մեքենապետի գործի հետ։ Բա
այդ ինչ է, դու նիհարել ես և, կարծես, ծերացել... Ի
և պատահել...

ՄԻՀ.—Ծանոթացա քո մեքենապետի գործի հետ։

ՍՈՒԼԹ.—Հըմ, հույս կա՞, որ նրան արդարացնեն։

ՄԻՀ.—(Առանց նրան նայելու, դեպի անորոշ տարածություն
Հեռվ մարդ։ (Վարսամյանին յեվ Սառափյանին)։ Յերեխա
կայեցեք մի համեստ և աշխատասեր մարդ։ Նա ունի մ
յերիտասարդ կին—գեղեցիկ և վոչ հիմար, բարոյական
բայց վերին աստիճանի կենսասեր։ (Հառաչանքը գսպելով
Ամուսիններն ապրում են հանգիստ և յերջանիկ։ (Հուզվում
և պատմա)։ Անպարիզ և գալիս մի ինչ-վոր ֆրանտ, յեր
կար ժամանակ հետամուտ և լինում գեղեցիկ կնոջը։ Յեր
կու տարի կինը մաքառում և նրա հրապարակների դեմ
վերջը (Հուզմամբ գսպելով)... մոլորվում և... ևն... կորցնում
և խելքը...

ՍՈՒԼԹ.—Աբի ու հանկարծ կնոջ հոգեբանությունը։

ՄԻՀ.—Մարդն իմանում է իր անպատվությունը և կնոջը նախա
զգուշացնում։ Կինն առաջ հերքում է, հետո հանձն է ա
նում հանգստանքն և խոստանում է ձեռք վերցնել մոլորու
թյունից... Բայց չի կարողանում։ Յերեք տարի մարդ
տանջվում է, կարող եք յերևակայել ինչպես։ (Սուլթանյանին)։
Գործին կցած է նրա հիշատակարանը. դա տառապող հոգու
մի ամբողջ տրագեդիա յե։ (Զսպելով նուզմունքը, նորից դառ
նում է Սառափյանին յեվ Վարսամյանին)։ Մի որ նա, վոր
սից վերադառնալով, հանդիպում է կնոջը սիրականի գըր
կում...

ՎԱՐ.—Յեվ իսկույն, իհարկե, ֆրանտին սպանում...

ՄԻՀ.—(Հառաչելով)։ Ո՛, յերջանկությունը մարդու համար այն
քան հազվագյուտ բան է, վոր յերբ ձեռքն է ընկնում,
առանձնով և պահում նրան։ Այդ ամուսինը դու հույս
ունենում իր ընտանեկան հանգստությունը վերականգնե
լու։ Նա զսպում է իրան։ Այն ինչ ֆրանտը, կարծելով
վոր հասել է իր վերջին ժամը, գրպանից հանում է մի պա

նակ՝ պաշտպանվելու համար։ Ամուսինն ասում է նրան,
«հանացիր, ես չեմ ուզում մարդասպան դառնալ»։ Սակայն
Ֆրանտը թուլ է տալիս իրան մի արհամարհական ձիծաղ։
Յեվ ահա այդ ձիծաղը, իբր «լիակ անարգանք, կարում է
անպատվածի համբերությունը. Թշվառն արձակում է հրա
ցանը, և Ֆրանտը թավալվում է իր սիրուհու վոտների
տակ։

ՎԱՐ.—(Գաուզա) Յեվ այժմ կինը վոլբում է իր սիրականին,
խնարկե։

ՍՈՒԼԹ.—Ընդհակառակը, նա լալիս է իր ամուսնու մասին։ Յեվ
հենց նա ինքն և ինձ խնդրել մի լավ փաստաբան վար
ձել իր մարդու համար։

ՎԱՐ.—Ահա այսպես կարող եիր ասել. «աբի ու հանկարծ կնոջ
հոգեբանությունը»։ (Միերացին)։ Բայց ես զարմանում եմ,
ահա յերեք տարի յե քո ոգնականն եմ և չեմ հիշում, վոր
մի գործ քեզ այնքան հուզած լինի, վորքան այդ մեքենա
պետի գործը...

ՄԻՀ.—Անց ու դարձ անելով)։ Ինձ հուզում են այդ մարդու քա
շած տանջանքները։ Վորքան համբերություն, վորքան հո
գեկան ուժ պետք է ունենա մի մարդ, վոր կարողանա
զսպել իր մեջ գազանին երեք տարի շարունակ... Իսկ նա
մի հասարակ մեքենապետ է, գրեթե անկիրթ...

ՍՈՒԼԹ.—Իմ կարծիքով, աշխարհում յերկու տեսակ մարդիկ գի
տեն հերոսաբար կրել իրանց վիշտը—փիլիսոփաներն և
աշխատանքի մարդիկ։ Յեվ դրանք են կազմում մարդկու
թյան բարոյական արիստոկրատիան։ Մուսեները մինչին հակ
ներ են և խաղալիք իրանց ճակատագրի հաճույքին...

ՄԻՀ.—(Նայելով Սուլթանյանին խոր յեվ տարոիցնակ հայացքով)։
Այո։

ՍՈՒԼԹ.—Այո։ Ով յերկնքում չի սավառնում մաքերով կամ ամ
բողջ եյությամբ կպած չե յերկրին, ծառի ճյուղի պես յերեր
վում և ամեն մի թեթև հոգմից... Ինչ և ե, ես շատ ուրախ
եմ, վոր իմ մեքենապետի գործն այդքան քեզ հուզել է,
այդ կնշանակի, վոր դու նրան կպաշտպանես զգացումով։
Շատ ուրախ եմ։ Դեհ, ցտեսություն, ես գնամ Թշվառի ըն
տանիքին ուրախացնեմ, վոր հույս կա նրան արդարացնե
լու։ (Դառնալով Սառափյանին)։ Իսկ հետո ուզում եմ քեզ
հետ «Յեվրոպա» հյուրանոցում մի լավ ճաշել։ Գնանք։

ՍԱՌԱՓ.—Ահա այդ բարձր և ամեն մի փիլիսոփայությունից (Միհրանիկին)։ Ցտեսություն։ (Վ.արսամյանին) Մտածիր վոր քան կամենում ես խորը, բայց մի սպասիր կյանքից կատարյալ երջանկություն, այլ վերցրու այն, ինչ-վոր տալիս է, թեև կուզ մի ուրախ ճաշ շամպանիայով։ (Սուլթանյանից Ցես քո խոնարհ ծառան. Ցտեսություն. (Սառափյան յ Սուլթանյան գնում ևն խորհի դռնեռով)։

ՏԵՍԻԼ VII

Միհրան յեվ Վ.արսամյան

ՄԻՀ.—(Մտերի մեջ խորասուզված մի բանի վայրկյան լուռ անց ու դարձ է անում։ Պառկա։) Ի՞նչ ես կարծում նա իրավ ցի՞ յե։

ՎԱՐ.—Ո՞վ։

ՄԻՀ.—Սուլթանյանը. նա ասում է՝ վոր յերկինքում չի սավառնում կամ յերկրին կպած չի իր ամբողջ նյությամբ, յերերում է ամենաթեթև հոդմից։

ՎԱՐՍ.—(Վ.ար շարունակ նայում է յուրաքանչյուր շարժմանը։) Նա մի բանում իրավացի յե, այն է՝ աշխատանքի մարդիկ ավելի հեշտությամբ են կրում իրենց վիշտը։ Այո, ես կարծում եմ, չկա վիշտ, վորին կարելի չլինեը խեղդել աշխատանք ասված առյուծի ճիրաններով։ Այս տեսակետից զարմանալի յե ինձ համար քո վերջին ժամանակվա ծանրությունը...

ՄԻՀ.—(Հանկարծ կանգ առնելով, նայում է նրան խորը-խորը)։ Ինչո՞ւ ես այդ ասում։

ՎԱՐ.—(Կամենալով ուղղել իր անզգուշությունը։ Ցես այդ չեմ ուզում ասել։ Ահա մոտ յերկու շաբաթ է, դու գործով ես հետաքրքրվում, վոչ վոքի չես ուզում ընդունել։ Ցեթե այդպես շարունակես, շուտով մենք կզրկվենք կլիենտներից։

ՄԻՀ.—Ցեվ այդ քեզ շատ կոխբեցնի։

ՎԱՐ.—Այո, վորովհետև դու կարող ես կորցնել տարիների ընթացքում ձեռք բերած հռչակդ...

ՄԻՀ.—(Դառն ծիծաղելով)։ Հռչակ, հա հա հա, հռչակ։ Մի թե վոր ևս հռչակ կամ լավ անուն կարող է մարդուն բաղդավորեցնել։ Մարդու այստեղը (խփելով կրծքին) պիտի հանգիստ լինի... այստեղը...

ՎԱՐ.—Ցես կարծում եմ, յերբ մարդ կատարում է իր պարտականությունները, նրա սիրտը միշտ հանգիստ պիտի լինի...

ՄԻՀ.—Մի թե, միամիտ և մաքուր յերիտասարդի խոսքեր։ Բայց շատ մարդիկ են ընդունակ կատարելու իրենց պարտականությունները, ամ, շատ մարդիկ։ (Կանգնելով նրա դեմ ու դեմ ու նայելով ուղիղ աչքերին)։ Համաձայնվ, ես գիտեմ ինչ և ուզում ասել, ինչ ես մտածում այս բոպեին, այո, այո, պիտեմ ինչ պարտականության մասին է խոսքդ։ Դու ինձ մեղադրում ես մտքումդ, այնպես չե, համարում ես ինձ քուլամորթ, այո, ասա։ Ինչո՞ւ ես յերեսդ դարձնում, մի թե ես հիմար եմ, մի թե չդիտե՞մ բարեկամիս աչքերի մեջ կարդալ նրա մտքերը։ Այո, այո, դու ամեն բան գիտես, միայն հանճարեղությունը, այդ կեղծ զգացումը թույլ չի տալիս քեզ ինձ բացարձակ հանդիմանելու։

ՎԱՐ.—Միհրան։

ՄԻՀ.—Ջուր մի կեղծիր, Համաձայնվ։ Մեր բարոյական հայացքները միևնույնն են, և այսքանը բավական է։ Սակայն պաշտպանների և իրականության մեջ կա ահագին խորխոռատ։ Գիտեմ, դու ուզում ես, վոր ես հերոսաբար անցնեմ այդ խորխորատը։ Կանցնեմ, կանցնեմ, տալիս եմ քեզ պաշնիվ խոսք։

ՎԱՐ.—(Ուրախանալով)։ Այո, յուսամ... Բայց ես այդպես էլ հասկացած եյի, ուրիշ կերպ չեր կարող լինել։

ՄԻՀ.—Այն յերեկո—հիշում ես—յերբ դու խոսում եյիր Աստված Յանկ մասին, քո յուրաքանչյուր բառն իմ մեջ ավելի ու ավելի ամրացնում եր իմ գաղափարը։ Քո մեջ ես տեսնում եյի մի հզոր պաշտպան։

ՎԱՐ.—Ապացուցիր, ուրեմն, վոր մեր բարոյական աշխարհն ամայի չե, վոր մենք ես ունենք մարդիկ բառի ընդարձակ նշանակությամբ, գործի և վոչ խոսքի մարդիկ...

ՄԻՀ.—Կաշխատեմ։

ՎԱՐ.—Դե, թույլ տուր, ուրեմն, սեղմել ձեռդ իբրև հավատարիմ վինակից։ Ցես խոստանում եմ հետևել քո որինակին, յեթե իմ կյանքի հանգամանքներն ել այդպես հյուսվեն։ (Սեղմում է ձեռը)։ Ցտեսություն, ես հեռանում եմ, վորպեսզի այդ արամադրության մեջ տեսնվես նրա հետ... Ցտեսություն։ (Դռնի դռնեռի մոտ դարձյալ սեղմում է նրա ձեռը յեվ գնում)։

Տ Ե Ս Ի Լ VIII

Միհրաձ մեճակ, հետո Մարթա

ՄԻՀ.—Ազնիվ տղա, նրան համարում են առլատոյական (Նստում է գրասեղանի մոտ, վերցնում է մի գործ յեվ սկսում է կարդալ։ Յախի դռներից ներս է մտնում Մարթան յուվ, ոտաբոբիկ յեղբարձ գլաղված, կամացուկ մոտենում է գահավարակի առջեվ դրած սեղանին յեվ, կանգ առնելով, նայում նրան վճռակցությամբ։ Միհրանը, ըստ յերեվույթին, կարդում է, բայց միեղբ նրան է ուղղված է իր վճռով։ Մերթ ընդմերթ նա ցնցվում է։ Վերջապես, գործը շարունակում է դեն, վեր է կենում յեվ անց ու դարձ անում, Հանկարծ նկատելով Մարթային, կանգ է առնում)։ Դարձյալ

ՄԱՐ.—Այո, և միշտ, քանի վոր տանջվում ես։

ՄԻՀ.—Ձես այլևս չեմ տանջվում։

ՄԱՐ.—Ո՞վ հավատաց։ Նայիր հայելուն, տես ինչ եյիր և ինչ ես դարձել։ Այս յերկու շաբաթվա ընթացքում դու տասը տարով ծերացել ես։ Դու պիշերները քուն չունես, ցերեկները հանգիստ։

ՄԻՀ.—Լավ կանես, յեթե իմ մասին հոգալու փոխարեն, մտածես քո վաստունքի մասին։ Դու նրան հալածում ես։

ՄԱՐ.—Ձես նրան միայն ատում եմ, ուրիշ կերպ չեմ կարող վարվել մի կնոջ հետ, վոր անբախտացրել և իմ միակ յեղբորը

ՄԻՀ.—Ատում ես և չես զգում, վոր նա ինքն անսահման տանջվում է։

ՄԱՐ.—Ցերևի, խղճի խայթոցից, չէ՞։ Ցեթե նա խիղճ ունենար, քեզ հետ չեր ամուսնանալ...

ՄԻՀ.—Մարթա...

ՄԱՐ.—Այո, յեթե նա խիղճ ունենար, քեզ չեր խաբի։

ՄԻՀ.—Նա վոչ միայն ինձ չի խաբել, այլև իմ վերաբերմամբ վարվել է ազնվաբար։

ՄԱՐ.—(Դառն ներգնությամբ) Մերթ... Ցես այն ժամանակ նրան ազնիվ կհամարեյի, յեթե նա իր խոստովանությունն աներ ամուսնանալուց առաջ։

ՄԻՀ.—Այն ժամանակ խոստովանելն այնքան մեծ քաջություն չեր լինելու, վորքան այժմ։ Ցերբ կինը հանուն անկեղծության հրաժարվում է ճաշակված յերջանկությունից—հանկանում ես, ճաշակված—նա արժանի չե հիացման։ Քանի վոր նա հարմարացու եր, ինձ չեր սիրում, կարող եր վշտացնել ինձ սառնարյուն։ Այն ժամանակ նա չդիտեր ինչ ասել և փոխադարձ սիրո քաղցրություն, իսկ այժմ դիտե։ Ա ինչն եմ յես հերոսություն համարում։ Արդյոք, շատերն են ընդունակ այդ տնսակ քայլի, ոչ եյ մեր կանանցից ոչ մեկ լավ հայտնի յե, վոր յես նրան հավատում եյի ինչպես սրբուհու։ Ցեվ յեթե ամբողջ քաղաքը նրան չարախոսեր — դարձյալ իմ հավատը դեպի նա չեր խախտվիլ։ Ուրեմն, ինչ դժվարություն կար նրա համար իր անցյալն ինձանից թաքցնելու, յեթե չունենար նուրբ խիղճ, ազնիվ հոգի... յեթե չխերեր ինձ...

ՄԱՐ.—Դեղեցիկ խոսքեր, վորոնք պատիվ են բերում միայն քեզ, բայց նրան չեն արդարացնում։

ՄԻՀ.—Վոչինչ չի կարող նրան այնպես արդարացնել, վորպես հենց իր խոստովանությունը և վոչ վոք չկիկարող նրան այնքան խիստ դատապարտել, վորքան նա ինքը...

ՄԱՐ.—(Գաուզա։ Մոտենում է յեղբորը)։ Լսիր, Միհրան, մանուկ հասակից մենք յեղել ենք ընկերներ, քո վշտերն և ուրախությունները մեն են յեղել, քո անունն ու պատիվը ես եմ համարել։ Մեր ծնողների մահից հետո յես քեզ համար յեղել եմ մայր և հայր... Ուսուցչություն անելով, քեզ ոգնել եմ, վոր բարձրագույն ուսում ստանաս։ Ուրեմն. ինչպես կարող եմ սառնարյուն վերաբերվել քո ճակատագրին։ Ասում եմ. ջնեղում եմ։ Գուցե, բայց մի մոռանար, վոր կա հասարակական կարծիք, բարեկամների թաղումն արհամարհանք, թշնամիների չար ուրախություն։ Այս բոլորը դու պետք սկզբում կարողանաս արհամարհել։ Ցեվ այն ժամանակ կասես նրան ավելի, քան կարող եյիր ասել այժմ, յեթե այդպես չմոտածեյիր։ Ուրեմն, մերթ ավելի լավ չե խնդիրը լուծել հենց այմմ (Գաուզա)։ Արձակիր նրան։

ՄԻՀ.—Այդ և քո բոլոր ասելիքը։ Հասարակական կարծիք, բարեկամների արհամարհանք, չդիտեմ եվ ինչ։ Մարթա, այդ բոլորից ավելի բարձր ու թանգ և ինձ համար իմ ներքին դատավորի ձայնը։ Ցես գիտեմ, վոր բարոյականք կողմից մեր ինն տասնյերորդդարյանը պատկանում և հասարակության, գիտեմ վոր կան ավանդություններ, վորոնց չի կարելի վոտնատակ անել անպատիժ։ Բայց յես ուզում եմ հպատակվել իմ խղճի ձայնին... Իսկ նա, այդ ձայնն ինձ

ասում է. «Յեվգինեն արժանի չի ներման»։ Վոչ, այդ ձայն ավելի չի ասում։ Նա ասում է. «Յեվգինեն բարձր բարոյական կանոնների տեր կին է»։ (Մարթան ապշած նայում է նրան) Զարմացիր, բայց այս մի այնպիսի հատոզմունք է, վորին չի կարող խեղդել իմ մեջ վոչ մի հասարակական նախապաշարմունք։ (Պառկա)։ Միթե չես նկատում, վոր ընկերական նիստ ու կացի պայմաններն անհատները չեն ստեղծում։ Սակայն անհատները կարող են արհամարհել նրանց և մինչև անգամ վոչնչացնել... Ինչ ասել կուզի, չես չեզի կամենա, վոր նրա անցյալն այդպես լիներ, բայց մտածիր, ով եմ ինքս, ինչ է, վերջապես, իմ սեփական անցյալը։ Այո, ինչ է։ Յեթե նա հազիվ պատանեկական հասակում ընկել է մի խաբեբայի թակարդը, ինձ վոչ վոք չի խարել, չես ինքս եմ խաբել,.. Այո, այո, թեև իմ խաբեբայությունն այնքան ստոր չի եղել, վորչափ այդ պարոնինը, բայց խաբեպայություն է յղել... Յես ևս մոլորեցրել եմ կանանց... Ինչու՞ Յեվգինեն ինձ ներել է իմ անցյալի կեղտերը, իսկ յես չպիտի կարողանամ նրա անցյալի ակամա սխալը մոռանալ։ Յեվ վոչ միայն սխալը, այլ թեկուզ կեղտերը, յեթե լինեին կեղտեր...

ՄԱՐ.—Վարսամչանի խոսքերը...

ՄԻՀ.—Աա, այդ խոսքերը վոչ Վարսամչանինն են և վոչ ինձ։ Դրանք խոսքեր չեն, այլ արդար բողոք որևէքի ուժ ըստացած անիրավության դեմ.,. Յեվ յես զարմանում եմ, վոր դու կանանց իրավունքների պաշտպանդ, ընդդեմ ևս մի այդպիսի բողոքի։

ՄԱՐ.—Բայց յես չեմ ուզում, վոր բողոքողը իմ ցեղակիցը լինի։ Չեմ ուզում, վոր նա լինի զարհավոր բերդի դեմ առաջին գնդակ արձակողը։

ՄԻՀ.—Յեվ ուզում ես, վոր նա լինի բարոյական պարապիտ, հոգեկան քաշուքշտունից զուրկ։ Ուզում ես, վոր նա լինի մեկն այն վողորմելիներից, վորոնք սորկաբար հնձծում են հասարակական կարծիք ասված բռնության ներքո... Վոչ վոչ յես չեմ կամենում և չեմ կարող լինել այդպիսի մարդ...

ՄԱՐ.—(Լռությունից հետո)։ Այո, տեսնում եմ, վոր իմ և քո հայացքների մեջ պա անդունդ։ Այդ անդունդը մենք չենք կարող լցնել վիճաբանությամբ։ (Կռվելով խմբից իր հետ. պառկա)։ Ուրեմն... Թող նա բաժանի մեզ...

ՄԻՀ.—Մարթա...

ՄԱՐ.—Ինչու՞ կեղծել. այդպիսի մի կնոջ հետ յես մի հարկի տակ ապրել չեմ կարող։ (Սկսում է արտասվել)։

ՄԻՀ.—(Դրգռվելով) Մի վիրավորիր նրան։ (Զախ դռների մեջ յերեվում է Յեվգինեն։ Նա գունատ է, նիհար վերջին ժամանակի կրած հոգեկան հուզումներն ու տանջանքները նրա դեմքին տվել են հեզություն, Նրա աչերի արտահայտությունը վշտալի յե, սակայն հանգիստ։ Աչերի տակ յերեվում են թեթև կնճիռներ, բայց վիշտը դեմքի գեղեցկությունը նրբացրել է։ Մարթան, տեսնելով նրան. շտապով սրբում է իր աչերն յեվ ատելությամբ լի հայացքը հառում նրա յերեսին։ Միևդեռ Յեվգինեն նայում է նրան հանգիստ հայացքով, վորի մեջ յերեվում է նրա հոգու հպարտությունը։ Մարթան արագությամբ յերեսը դարձնում է նրանից, Յեվգինեյի դեմքով սահում է մի տեղի կիսահեգնական յեվ նեղսրտության ժպիտ։ Մարթան բայլերն ուղում է դեպի խորքի դռները)։

ՅԵՎԳ.—(Հանգիստ մի հանի բայլ առաջ է շարժվում)։ Սպասեցեք

ՄԱՐ,—(Նայելով նրան անզուսպ ատելությամբ)։ Ի՞նչ եք կամենում...

ՅԵՎԳ.—Յես ձեզ խնդրում եմ մնալ..

ՄԱՐ.—(Դառն հեգնությամբ յեվ կծու)։ Մնալ այս ոդում... Այստեղ... յես կխեղդվեմ...

ՄԻՀ.—(Դառն ճանդիմանությամբ) Մարթա, Մարթա։

ՄԱՐ.—Յես կվերադառնամ միայն քո վերջին վճիռն իմանալու համար։ (Դնում է)։

ՏԵՍԻԼ IX

Յեվգինե յեվ Միհրան

Միհրանը մոտենում է լուսամուտին, մի հանի վարկյան նայում դեպի փողոց մտախոհ, հետո մոտենում է գրասեղանին, նայում գրված հայացքով թղթերին, ապա նստում է, արմունգները դրնում սեղանի յեզրին յեվ գլուխը հենում ձեռների ափերին. Յեվգինեն մոտենում է գահավորակին յեվ, մի ձեռը հենելով սեղանին նայում է նրան։

ՄԻՀ.—(Բավական յերկարատեվ լռությունից հետո, ձեռները հեռացնում է յերեսից, բայց դարձյալ Յեվգինեյին չի նայում)։ Ինչ ևիր կամենում ասել Մարթային։

ՅԵՎԳ.—Յես ուզում եյի խնդրել, վոր նա իր յեղբորը. . մենա
չթողնի...

ՄԻՀ.—Ինչ և նշանակում այդ:

ՅԵՎԳ.—Այն, վոր ինձ համար անհամեմատ ավելի հեշտ և լավ
նրա նախատինքները, քան տեսնել քո լուռ տանջանքները...

ՄԻՀ.—Ինչ և մնում ինձ անել, յեթե վոչ լռել... Իսկ հետ
(զգացված ձայնով) մոռանալ...

ՅԵՎԳ.—Մոռանալ.., Ով կարող և մարդուց անհնարինը պահան
ջել: Յես այդ մասին չեմ ել յերազում անգամ:

ՄԻՀ.—Յերբեմն մոռանում եմ, արդյոք, ավելի լավ չէր լինի, յե
թե վոչինչ չիմանայի: Հարյուր բախտավորներից ինսուն
ինն ապրում և իլյուզիայով, թող մեկն ել յես լինեյի...

ՅԵՎԳ.—Ցավ յես շարունակելի խաբել: Տեսնել քեզ յերջանիկ և
ամեն վարկյան զգալ, վոր դու խավարի մեջ ես, վոր քո
յերջանկությունը հիմնված և մի սերտ կնոջ կեղծիքի վրա
վոչ:

ՄԻՀ.—Ճիշտ և, ճիշտ և, յես այդ մասին շատ եմ մտածել: Բայց
և այնպես յերևակայությունս ամեն վարկյան պատկերաց
նում և այդ քստմնելի տեսարանը բոլոր իր մանրամասնու
թյուն: Գիշեր-ցերեկ իմ աչքերի առջև կանգնած և քեզ մոլո
րեցնողի կերպարանքն և հալածում և ինձ իր հանգուցն
ու լերբ արհամարհանքով:

ՅԵՎԳ.—Հեշտ չի դիմանալ վիրավորված պատվի զգացմանը...

ՄԻՀ.—Պատվի՞... Վոչ դու սխալվում ես: Ինչպես դու ինձ հետ
յեղար անկեղծ, կլինեմ և յես իմ պատիճը յես արատավոր
ված չեմ համարում: Սխալը քո անցյալումն և և վոչ ներ
կայում: Ինձ տանջում և միայն այն միտքը, վոր դու յերբ
ևե, թեկուզ մի ժամով, պատկանել ես այդ մարդուն: Դա
իհարկե, նախապաշարմունքն և, այո նախապաշարմունք
բայց և... տանջանք... (Վեր և կիցնում յեվ չափազանց հուզ
ված անցուդարձ անում. մի ֆանի վարկյան լուռություն): Ան
ցյալ որն յերեկոյան, մենակ նստած այս սեղանի մոտ, թեյ
եյի խմում, հանկարծ բաժակի մեջ, թեյի յերեսին կենդանի
նկարվեց նա: Յես խելագարի պես գոռալով վոտքի թռա
թվաց ինձ, վոր նա ծիծաղում և քեզ վրա դիվային ծիծաղով
Ամեն տեղ, ամեն տեղ նրան եմ տեսնում: Նրա ուրվականն
ինձ հալածում և դիշեր-ցերեկ: (Պառկա:) Բայց... բայց...
յես կազատվեմ, կազատվեմ այս հիմար հալյուցինացիայից

և կմոռանամ բոլորը, (Ընկղմվում և գահավորակի վրա յեվ
ճակատը ձեռներով սեղմում: Պառկա):

ՅԵՎԳ.—(Դառն տանջանքով): Դու յերբեք չես մոռանալ...

ՄԻՀ.—(Դուխին առագորեն բարձրացնելով յեվ վոտքի կանգնելով):
Ինչու՞: Միթե յես այդքան անզոր եմ հոգով, թուլամորթ... Ցեթե յես
կարողացա զսպել իմ մեջ նախահայրերիցս ժառանգած առ
յականության կուպիտ վոգին, ինչու՞ չեմ կարող ավելին ա
նել:

ՅԵՎԳ.—Ինձ համար ավելի լավ կլիներ, յեթե չզսպեիր այդ վո
գին: Այն քոսկին յերը, մթնած աչքերով հարձակվելով ինձ
վր, քիչ եր մնում սպանելիր ինձ, յես յերկյուղ չունեյի: Մի
հարված, և յես կստանայի իմ արժանի վարձն ու ամեն ինչ
կվերջանար: Իսկ այժմ... Վոչ, Միհրան, մի խաբիր քեզ:
Ներել—դուցե կարողանաս, բայց մոռանալ—յերբեք:

ՄԻՀ.—Ողբալի...

ՅԵՎԳ.—Պետք և անել այն, ինչ-վոր պահանջում և քո քույրը:
Ինչու՞ կարծել. ինձ համար ավելի լավ և զրկվել ամեն բա
նից, քան դառնալ խղճալի: Նա, վոր մի ժամանակ ապրել և
սիրո շքեղ պալատում, չի կարող կանգնել նույն պալատի
դռների մոտ և վողորմություն խնդրել:

ՄԻՀ.—Գիտեյի, վոր հպարտ ես, բայց չգիտեյի, վոր այդչափ յե
սամոլ ես:

ՅԵՎԳ.—Յեսամո՞լ...

ՄԻՀ.—Այո, յեսամոլ: Դու այս տանից ուզում ես հեռանալ այն
պատճառով, վոր չես կարող տմնանել իմ տանջանքները: Դա
յեսամոլության նուրբ տեսակներից մեկն և:

ՅԵՎԳ.—Թող այդպես լինի: Բայց, հեռանալով այստեղից, կթե
թևացնեմ քո տանջանքները: Վիրավորված մարդու ցավը
կրկնապատկվում և, յերբ նա տեսնում և այն զենքը, վո
րով վիրավորվել և: Միայն իմ բացակայությունը կարող և
բուժել քո վերքը...

ՄԻՀ.—Այդ և, ուրեմն, քո կարծիքով, խնդրի լուծումը:

ՅԵՎԳ.—Յես կարծում եմ, վոր ուրիշ յելք չկա: Պետք և բուժ
վենք:

ՄԻՀ.—Յերբե՞ք, յերբեք. դու պիտի մնաս իմ տանը հենց ինձ
բժշկելու համար: Ի՞նչ պատիժը դու արդեն ստացել ես, բա
վական և. մենք չես չգիտեմ ինչ և կատարվում այս բոսե
լին քո հոգում: Դու պետք և մնաս իմ տանը:

ՅԵՎԳ.—*Ձեմ կարող... վերջապես իրավունք չունեմ...*

ՄԻՀ.—*Ցեվ ոմ և խլում քեզանից իրավունքը:*

ՅԵՎԳ.—*Իմ խիղճը։—Հավատա, այդ միակ յելքն և, չկա ուրիշ չկա։ Շրթե յես մինչև այսօր հետաձգել եմ, պատճառը մայրս եր։ Յես սպասում էի, որ հարվածի ուժը մի փոքր թուլանա նրա մեջ։ Այսօր յես հաջողեցի համոզել նրան, որ ինձ համար ուրիշ յելք չկա։ (Լուրյուն)։ Իրենները կապկապած են, ճնում և միայն... (Ձնշված ձայնով) վերջին անգամ նայել քեզ։ (Ցերեսը դարձնում և նրանից որ պեսզի արտասուքը թագցնի)։*

ՄԻՀ.—*(Նայում և նրան հանկարծությամբ յեվ սիրով լի հայացքով։ Նրա դեմքն արտահայտում և ջերմ ցանկություն գրկել ու համբուրել Ցեվգինեյին՝ բայց իմքնասիրությունը չի թույլ տալիս նրան այդ անելու։ Պաուզա)։ Բավական և բավական և։*

ՅԵՎԳ.—*(Կարնատեվ բայց զորեղ պատերազմից հետո, վճռողաբար)։ Մնաս բարով... միայն... (Տատանվում է) բայց վոչինչ...* Բացատական շարժումն և անում ձեռով յեվ բայլերն ուղղում դեպի ձախ կողմի դռները։ Ներսի սենյակից լսվում և դայակի ձայնը, որ որոր և յերգում յերեխայի համար, խորին զբաղեցնում յերեվում և Մարթան։ Լսելով դայակի յերգը, Ցեվգինեն զորեղ ցնցվում է, դողում յեվ հազիվ վոտքի վրա մնալ կարողանալով, հենվում և դռների շրջանակին)։

ՄԻՀ.—*(Նայում և շարունակ Ցեվգինեյին)։*

ՅԵՎԳ.—*(Լուրյունից հետո) Յես շատ եմ մտածել նրա մասին...* (Խուլ ձայնով, արտասանելով յուրաքանչյուր բառն առանձին) *Նա քեզ և պատկանում... Յես նրան թողնում եմ այստեղ...*

ՄԱՐԹԱ.—*Ցեվ ուրիշ կերպ էլ չի կարող լինել...*

ՄԻՀ.—*(Ցնցվում է հրոջ ձայնից)։ Վոչ, կարող և լինել...* (Մոտենում և Ցեվգինեյին)։

ՅԵՎԳ.—*(Ուժասպառ ընկնում և Միհրանի գիրկը)։ Ա՜հ...*

ՄԻՀ.—*(Պաուզա)։ Մարթա, մոտեցիր... ոգնիր... Ցեվգինե՜...* Մարթան տեղից չի շարժվում յեվ նայում և նրանց արհամարհանքով, իսկ յերբ Միհրանը գրկում և Ցեվգինեյին, ցնցվում և Միհրանը հանդարտիկ Ցեվգինեյին նստեցնում և աթոռի վրա, աչխատելով նրան ուշքի բերել։ Ներսի սենյակից տակավին լսվում և դայակի յերգը, որ հետզհետե ցածանալով ընդհատվում և։

ՅԵՎԳԻՆԵ.—*(Աչքերը բանալով, նայում և Միհրանին, հետո հանդարտիկ չոքում և նրա առջեվ յեվ, վերցնելով նրա ձեռը, ամուր սեղմում և շրթունքներին)։ Ձեմ կարող, չեմ կարող...*

ՄԻՀ.—*(Ձեռը խլելով, գրկում և նրա գլուխը։ Պաուզա)։ Համոզմունքով ներեցի, սիրելով կմոռանամ... (Ցերեսը դարձնելով Մարթային, ձեռով նշան և անում նրան հեռանալու)։*

ՄԱՐԹԱ.—*Մոռացիր և ինձ։ (Գնում է)։*

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Ի Ց Ր

1901 թ. Հուլիս-Ոգոստոս, Կոջոր։

ՆԱՄՈՒՍ

Դրամա 4 գործ.

Ա Ն Զ Ի Ն Փ

1) ԲԱՐԽՈՒԴԱՐ, Ասիական դերձակ, առաջ 48 հետո 57 տար.
2) ՍՄԲԱՏ, Նրա վորդին, առաջ 12 հետո 21 տարեկան
3) ՀԱՅՐԱՊԵՏ, Կավե ամաններ ծախող, առաջ 45 հետո 54 տար.
4) ՍԵՅՐԱՆ, Նրա վորդին, առաջ 11 հետո 20 տարեկան.
5) ՌՈՒՍՏԱՄ, Վաճառական, 32 տարեկան.
6) ԶԱՎԱԴ — 35 տար.
7) ՄԱՐՏԻՐՈՍ, — Անորոշ տարիքով
8) ԶԱՀԱՆԳԻՐ — Ռուստամի հասակակից
9) ԵԳՈՌ, — 25 տարեկ.
10) ՀԱՄԲԱՐՁՈՒՄ — Ռուստամի ծառան . . . 25 տ.
11) ԱՂԱԲԵԳ, Հարսանիքի հյուր . . . . 18 տ.
12) ՍԵՐԳԵՅ-ԲԵԳ, Հարսանիքի թամադա . . . 40 տ.
13) ԽԱԶԵՂԲԱՅՐ, Յերիտասարդ։
14) Ա. Հյուր
15) Բ. Հյուր
16) Գ. Հյուր
} Յերիտասարդներ-տղամարդիկ։

Կ Ա Ն Ա Ճ Ք

1) ԳԻՒՂՆԱՋ, Բարխուդ. կինը առաջ 38 տ. յետո . 47 տ.
2) ՍՈՒՄԱՆ, Բարխուդ. տղիկը, առաջ 9 հետո . 18 տ.
3) ՄԱՐԻԱՄ, Հայրապետի կինը. առաջ 40 հետո . 49 տ.
4) ՍԱՆԱՄ, Ռուստամի մայրը . . . . 50 տ.
5) ՇՊՊԱՆԻԿ, Միջնորդ կին . . . . 40 տ.
6) Ա. Հյուր
7) Բ. Հյուր
8) Գ. Հյուր
} Միջին տարիքի կանայք։

Ա Ն Խ Ո Ս

Հյուրեր, հարևաններ, անցորդներ — յերկու սեռից։
Քահանաներ, տիրացուներ, երաժիշտներ, վոտնավորներ*)։
69 Գործողությունը կատարվում է Շամախի քաղաքում 1859 — Թվականներին։ Նախերգանքի և առաջին արարվածի մեջ անցնում է ինը տարի։

*) Վոտնավորները կոչվում են այն հյուրերը, վորոնք սպասավորի դեր են կատարում։

ՍՈՒՍԱՆԻ ՅԵՎ ՍԵՅՐԱՆԻ ՆՇԱՆԱԿԻՒԼԸ ՅԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

Յերկու տնակների մէջ յեղած պարիսպը նոր խորտակվել է յերկրաշարժից. և նրանց կանաչազարդ գավիթները բեմի ա-ռաջին մասում միացել են: Դեպի աջ Բարխուդարի մի հարկանի տնակն է տափակ կտուրով և յերկու լուսամուտներով: Ձախ Հայրապետի մի հարկանի տնակն է տափակ կտուրով և մի լուսամուտով—դեպի գավիթ: Յերկու տնակների առջև նեղ քարա-շեն սաքուներ: Գավիթների հետին մասը ներկայացնում է խոր-տակված պարսպի ավերակը, հետո փայտեա ցանկապատ յերկու-մինը տանում է դեպի Հայրապետի, աջ կողմինը դեպի Բարխու-դարի տնակը: Ամանոնից սկսած գավիթների յերկու յերրոր-դական մասը դեպի խորքը ծածկված է խարիսներով, թաղիքնե-րով և հասարակ կապերտներով: Վրա խառն է խառն դարսած են մեծ քանակութեամբ մահիները, նեղքնարկ-ներ և այլն: Մի չքնաղ վարագուրը բոլոր կիսում է յերկու մասի: Այդ վարագուրը ամբողջ ժամանակ ժողոված է, միայն դրծո-ղութեան վերջումն են բաց անում: Խորքում, պարսպի աջ և ձախ կողմերում յերկու մեծ թիթեղներ, վորոնցից մեկը Բարխուդարի մյուսը Հայրապետի տնակին և պատկանում: Ցանկապատի յեսակը փողոց է, այնուհետև քաղաքի ավերակները: Վաղ յերեկո յե, ա-րեգակի դեղնագույն ճառագայթները վռակեղծել են հեռավոր ավերակները: Ողջ մէջ քանձր փոշի, որը հետզհետե մթնում է:

ՏԵՍԻԼ 1.

Վարագուրը բարձրանալիս խուլ դղրդոցներ, գոռում-գոչուններ, բարձր լացի յեվ զանգերի ձայներ.—Այս բոլորը սկզբում խլացուցիչ են, ապա գնալով թուլանում և վերջապես դադարում է, յերբ մուքը բոլորովին տիրում է:—Փողոցով անց-նում են խումբ-խումբ տաղտապրիկ յեվ կանայք, մեծ մասամբ վոտաբաց, գլխաբաց, փոշով ծածկված: Շատերը բեռնավորված են տնային իրերով—կանայք զրկած կամ մեջքների վրա տա-նում են յերեխաների: Մի քանի պատգարակներ, վրան դիակ-ներ յեվ հետևից լացող յեվ կուրծք ծեծող կանայք զզգված մազերով:

ՄՄԲՈՑՏ.—(Վարագույրը բացվելուց բավական անցած գալիս է հոգ-նած, փոշոտ, հրթիռը արբելով: Տասներկու տարեկան պատանի է, հագած կապտագույն արխալուղ, կարճ չուխայով, մեջքին ուրծաքյա զոտի, գլխին Բուխարայի մորթուց ցածր յեվ կլոր գդակ, վոր այն ժամանակ «զարիբպդիե» անունն էր կրում: Վոտներին հասարակ ռուսական կոշիկներ, վորոնց աններկ անկարուղդի մեջ են մտցրած վարդիկի ծայրերը: Առաջ է գա-լիս յեվ նստում է Սուսանի ու Սեյրանի անկողինների միջեվ հատակի վրա, գդակը գլխից վերցնելով): Ո՜ֆ, վոտներս կոտրվեցին, հոդիս բերանս յեկավ:

ՍԵՅՐԱՆ.—(Նստած է նախ հատակի վրա փռած անկողնի մեջ հա-գուստով: Տասնումեկ տարեկան պատանի յե: Հագած է ամա-րային սպիտակ արխալուղ չքից, մեջքին ուրծաքյա գոտի վոս-ներից հասարակ ռուսական կոշիկներ: Գլուխը փաթաթած է կապույտ բաճկինակով: Մի հանի ժամ առաջ նրան դուրս են բերում փլատակների տակից, ուսի փոշոտ է): Գնացիր Թուրքերի թաղը:

ՄՄԲ.—Հենց այնտեղից եմ գալիս. ել տեղ չթողեցի. Շելի, Մեյ-դանի, Սարի-Թորփաղ: Տեսա քանդված մեչիդները, բաղ-նիքները, քարվանսարանները:

ՍՈՒՍԱՆ.—(Նստած է հագուստով աջ կողմի անկողնի մեջ: Ինքը տա-րեկան սիրուհադեմ աղջիկ է, հագին կարմիր շապիկ, մանի-շակագույն մեհյանյա արխալուղ բաց կրծքով յեվ տերեվաձեվ բելերով: Գլխին կապած է նուրբիս: Վոտներին կոպիս յեվրո-պական կոշիկներ): Ասում են Թուրքերից շատ մարդ է սպանվել, հշմարիտ է:

ՄՄԲ.—Շատ, շատ-շատ: Դալա-բազարի բաղնիքից տասնուչորս մարդ դուրս բերեցին տափակած, արյունաթաթախ: Աչքս տեսածը համրերի մինչև վախտն եմ, շատ է, ինչ հա-րյուր, ինչ յերկու հարյուր: Հայերից քիչ մարդ է սպանվել, այն էլ բազարում: Հորին տանում են նրանց դիակները: Դե՜հ, հիմի դուք պատմեցեք, ինչպես մնացիք հոգի տակ: (Գրպանից դուրս է բերում մի խնձոր յեվ կրծոտելով ուտում):

ՍԵՅՐԱՆ.—Մենք մեր փողոցում եյինք: Յես Սուսանի համար մեր ծառից Թութ եյի քաշ տալիս քարերով ու փայտերով: Առաջ առաջ յերկինքը վորոտաց:

ՍՈՒՍԱՆ.—(Վրդովելով) Ելի ասաց յերկինքը: Տափի տակից եր,

ՍՈՒՍԱՆԻ ՅԵՎ ՍԵՅՐԱՆԻ ՆՇԱՆՎԻԼԸ ՅԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

Յերկու տնակների մեջ յեղած պարիսպը նոր խորտակվել և յերկրաշարժից և նրանց կանաչազարդ պավիճները բեմի առջին մասում միացել են: Դեպի աջ Բարխուդարի տնակն և տափակ կտուրով և յերկու լուսամուտներով: Ձախ Հայրապետի մի հարկանի տնակն և տափակ կտուրով և մի լուսամուտով—դեպի դավիճ: Յերկու տնակների առջև նեղ քարաշեն սաքուներ: Դավիճների հետին մասը ներկայացնում է խորտակված պարսպի ավերակը, հետո փայտեա ցանկապատ յերկու ծուռ ու մուռ դռնակներով դեպի փողոց, որոնցից ձախ կողմինը տանում է դեպի Հայրապետի, աջ կողմինը դեպի Բարխուդարի տնակը: Ամանակից պակաս դավիճների յերկու յերրորդական մասը դեպի խորքը ծածկված և խախերներով, թաղիքներով և հասարակ կապերտներով վրա խառն ի խառն դարսած են մեծ քանակութեամբ մակները, ներքնակներ և այլն: Մի չքնա վարագույրը բոլոր կիսում է յերկու մասի: Այդ վարագույրը ամբողջ ժամանակ ժողոված և, միայն դործողութեան վերջումն են բաց անում: Խորքում, պարսպի աջ և ձախ կողմերում յերկու մեծ թթենիներ, որոնցից մեկը Բարխուդարի մյուսը Հայրապետի տնակին և պատկանում: Ճանկապատի յետեը փողոց և, այնուհետև քաղաքի ավերակները: Վաղ յերեկո յե, արեգակի դեղնագույն ճառագայթները վռակեղծել են հեռավոր ավերակները: Ոդի մեջ թանձր փոշի, որը հետզհետե մթնում է:

ՏԵՍԻԼ 1.

Վարագույրը բարձրանալիս խուլ դղրդոցներ, գոռումգոչումներ, բարձր լացի յեվ զանգերի ձայներ—Այս բոլորը սկզբում խլացուցիչ են, ապա գնալով թուլանում և վերջապես դադարում են, յերբ մութը բոլորովին տիրում է:—Փողոցով անցնում են խումբ-խումբ տղամարդիկ յեվ կանայք, մեծ մասամբ վոտաբաց, գլխաբաց, վուշով ծածկված: Շատերը բեռնավորված են տնային իրերով:—Կանայք գրկած կամ մեջքներին վրա տարնում են յերեխաներին: Մի քանի պատգարակներ, վրան դիակներ յեվ հետևից լացող յեվ կուրծք ծեծող կանայք գզգզված մազերով:

ՄՄԲԱՏ.—(Վարագույրը բացվելուց բավական անցած գալիս է հոգնած. փոշոտ, ֆրիլնքը արեվով: Տասներկու տարեկան պատանի է, հագած կապտագույն արխալուղ, կարճ չուխայով, մեջքին արծաթյա գոտի, գլխին Բուխարայի մորթուց ցածր յեվ կլոր գդակ, վոր այն ժամանակ «զարիբալդի» անունն եր կրում: Վոտներին հասարակ ռուսական կոշիկներ, վորոնց աննեռկ անկարուղդի մեջ են մտցրած վարդիկի ծայրերը: Առաջ է գալիս յեվ նստում է Սուսանի ու Սեյրանի անկողինների միջեվ հատակի վրա, գդակն գլխից վերցնելով): Ո՜ֆ, վոտներս կոտրվեցին, հոգիս բերանս յեկավ:

ՍԵՐՅԱՆ.—(Նստած է նախ հատակի վրա փռած անկողնի մեջ հագուստով: Տասնուվեց տարեկան պատանի յե: Հագած է ամառային սպիտակ արխալուղ չքից, մեջքին արծաթյա գոտի վոտներին հասարակ ռուսական կոշիկներ: Գլուխը փաթաթած է կապույտ բաճկիճակով: Մի քանի ժամ առաջ նրան դուրս են բերում փլատակների տակից, ուսի փոշոտ է): Գնացքը Թուրքերի թաղը:

ՄՄԲ.—Հենց այնտեղից եմ գալիս. և տեղ չթողնցի. Շելի, Մեյդանկի, Սարի-Թորփաղ: Տեսա քանդված մեչիդները, բազնիսները, քարվանսարանները:

ՍՈՒՍԱՆ.—(Նստած է հագուստով աջ կողմի անկողնի մեջ: Ինքը տարեկան սիրունատես աղջիկ է, հագին կարմիր շապիկ, մանիշակագույն մեսախյա արխալուղ բաց կրծքով յեվ տեռվածել բելերով: Գլխին կապած է նուրբ: Վոտներին կոպիտ յեվրոպական կոշիկներ): Ասում են Թուրքերից շատ մարդ է ապրանվել, հշմարիտ է:

ՄՄԲ.—Շատ, շատ: Դալա-բազարի բազնիսից տասնուչորս մարդ դուրս բերին տափակած, արյունաթաթախ: Աչքովս տեսածը համրերի մինչև վախճանն: Եվ, շատ է, ինչ հատուկ, ինչ յերկու հարյուր: Հոյերից քիչ մարդ է ապրնվել, այն էլ բազարում: Հորին տանում են նրանց դիակները: Դե՛հ, հիմի դուք պատմեցեք, ինչպես փրկվեցիք հողի տակ: (Գրպանից դուրս է բերում մի խնձոր յեվ կրծոտելով ուտում):

ՍԵՅՐԱՆ.—Մենք մեր փողոցում եյինք: Ցես Սուսանի համար մեր ծառից թութ եյի քաշ տալիս քարերով ու փայտերով: Առաջ առաջ յերկինքը վորոտաց:

ՍՈՒՍԱՆ.—(Վրդովելով) Եյի ասաց յերկինքը: Տափի տակից եր,

տափի տակից, կարմիր կոճղ եր մռնչում։ Դրպանից հանում ե ծամոն յեվ սկսում ե ծամել)։

ՄՄԲՍՏ.—Լավ, Թող պատմի։

ՍԵՅՐԱՆ.—(ժպտալով) Շները վռնացին, հավերը կչկչալով դե ու դեն փախան։ Տափը լռվեցավ, տները որորվեցին։ Ցե վախից կուչ յեկա։ Սուսանը վազեց, փեշերս բռնեց, «վա մամա, վայ մամա» կանչելով։

ՄՄԲ.—Հետո, հետո.

ՍԵՅՐ.—Հետո փախանք։

ՄՄԲ.—Փողոցի մեջտեղով պիտի փախչեիք։

ՍԵՅՐ.—Շվարվել եյինք, մոռացանք, պատերի տակով փախանք։ Շափռյանց տան առաջ դռխա վրա մի մեծ բան ընկավ։

ՍՈՒՍ.—Հիմնց Շափռյանց դուռն եր։

ՍԵՅՐ.—Գլուխս պտտեց, աչքերս մթնեցին, ընկա յերեսիս վրա։

ՍՈՒՍ.—Ցես ել ընկա։

ՍԵՅՐ.—Մեկ ել հանկարծ գլուռ-գլուռ հող, քար, փայտ թափվեցին մեր գլխին։

ՄՄԲ.—(դեն գցելով կերած խնձորի միջուկը)։ Ուշքդ չգնաց։

ՍԵՅՐ.—Չե, գլուխս չարդվել եր, արյուն եր գնում։ Աստծու զորմությունով դուռը մեր վրա յեր, չքողեց, վոր ճիլվենք։ Բայց շունչս կտրվում եր։ Սուսանը լաց եր լինում։ Սիրտս մղկտում եր։ Ուզում եյի խոսել, ձայնս փորիցս դուրս չեր գալիս. վերջը աչքերս մթնեցին, ել վոչինչ չեմտես։

ՍՈՒՍ.—Ցես տեսնում ել եյի, լսում ել եյի։.

ՄՄԲ.—Ինչ եյիր տեսնում։

ՍՈՒՍ.—Կարմիր կովին։

ՍԵՅՐ.—Կարմիր կով չկար։

ՍՈՒՍ.—(վիրավորված ursմsnւթյամբ) Սուտ ես ասում, կար, աչքովս տեսա։ Նա մեր տնից մեծ եր, մեր ծառից բարձր։ Աչքեր ուներ—արոճով լիքը գավաթների պես, բերան ուներ—վառած թոնրի նման։ Ալով եր դուրս գալիս այնտեղից վռվռալով։ Լեզուն այսքան եր, այ, ել ավելի. պոզերը սուր-սուր, ծուռ-ծուռ։ Մի մռնչում եր, վոր մաղերս փշաքաղվում եյին, մարմինս դարզանդում եր։

ՍԵՅՐ.—(ճանգիսս) Ցես քեզ ասում եմ տափի տակին կարմիր կով չկար։ Յերեխ լիներ, ես ել կտեսնեյի։

ՍՈՒՍ.—Ցես ել քեզ ասում եմ կա, կա ու կա։ Դու չգիտե՞ս, վոր

աշխարհը այդ կարմիր կովի մեջքի վրա ե կանգնած։ Նա հազար վոտներ ունի։ Յերբ մենք չարություն ենք անում, մեր ծնողների խոսքը չենք լսում, կարմիր կովը կատաղում ե, մեջքը թափահարում ե, տափը շարժվում ե, տները թափվում են, մարդիկ տակն են ընկնում։ Թող Սմբատը ասի յերեխ լինած չես հավատում։

ՄՄԲ.—Ցես մի որ մեր վարժապետին հարցրի, նա ասաց, վոր տափի տակին վոչ կարմիր կով կա, վոչ ել ապիտակ. (վեր ե կենում)։

ՈՈՒՍԱՆ.—(վեցանալով, բաց ե անում աչ ձեռի հինգ մատները դդի մեջ յեվ ճանկ անում վարժապետի հասցեյին)։ Առա՛ հողս քո վարժապետի գլխին, նա ինչ ե հասկանում։

ԴՐՍԻՑ.—(լսվում ե բավականին յերկարատեվ դղրդյուն)։

ՈՈՒՍ.—(սարսափած վոտի ե թռչում)։ Ա՛խ, տեսար, ելի կարմիր կովը կատաղեց։

ՍԵՅՐ.—(սարսափած, վոտի ե թռչում)։ Տափը շարժվում ե։ Փախչենք։

ՄՄԲ.—Իսկի մի վախենաք, տափը հանդարտ ե, գնամ տեսնեմ ինչ պատահեց (վազում ե բեմի խորքը)։

ՈՈՒՍ.—(իրար ձեռից բռնած, երկյուղով նայում ե դեպի խորքը

ԴՐՍԻՑ.—(շարունակ լսվում ե աղմուկ, սակայն վոչ առաջվա պես սաստիկ։ Ձանգերը դադարել են)։

ՄՄԲ.—(ինչ հետո կալիս ե)։ Վոչինչ, մի վախենաք, Ջոխուանց տան մնացած պատն եր, իրանք թափեցին, վոր անցնողների վրա չընկնի։

ՏԵՍԻԼ 2.

Նույնի յեվ Մարիամ

ՄԱՐԻԱՄ.—(Գալիս ե ձախ կողմի տնակից, ձեռին մի վառած մոմ, վոր դնում ե իրանց տան սեմի վրա։ Մոտ հասուն տարեկան կին ե, հասարակ տեղական հագուստով. գլխին բռ. ե կապած, ուսերին գցած հասարակ ինամաե շալ)։ Մոբին բնակավ, յերկինք յերկիր խավարվեց։ Ինչ մեղք եյինք արել, յերկնային դատավոր, վոր այսպես պատժեցիր մեզ։ Պահպանեցեք, բալաներս, պահպանեցեք, մի լսեք այդ զարհուրելի ձայները, մի տեսնեք այդ դիակները, վոր տանում են փողոցով Որհնյալ լինի աստծու զորությունը, որհնյալ լինի, վոր ձեզ

ազատեց։ (Ձեռքերը դեպի յերկինք բարձրացնելով) Տեր, դու սրանց պահես պահպանես փորձանքներից։

ՄԵՅՐ.—(Նստում է իր աթոռակի մեջ) Մամա, յես քաղցած եմ։

ՍՈՒՍԱՆ.—(Նստում է աթոռակի մեջ) Յես էլ։ (Ծամոնը դուրս է բերում բերանից)։

ՄԱՐ.—Քար կտրվեմ, բալաներս, այսոր անոթի յեք. գնամ հաց ու պանիր բերեմ ձեզ համար (ուզում է գնալ)։

ՏԵՍԻԼ 3։

Նույնի յեվ Գյուլնազ

ԳՅՈՒԼՆ.—(Գալիս է աջ կողմի դռնից ձեռքին մի վառած մոմ, որ դնում է իրանց տան սաֆրի վրա։ Կռանա տակին մի կոպույ սփռոց յեվ մյուս ձեռքին ափսեներ. Մարիամից մի բիչ յերիտասարդ կին է, ավելի սիրուն։ Հագնված է Մարիամի պես, բայց ճնամաշ չէ)։ Համբերիր, ա կնիկ, ես սեղան եմ պատրաստում։ Մենք էլ անոթի յենք, մեսաին մի բան ուտենք. (սփռոցը սփռում է հատակի վրա յեվ ափսեները վրաց դարսում)։

ՄԱՐ.—Աստված ինձ հավիտյան անոթի թողեց։ Ախ, Գյուլնազ, քանդվեցինք-պրծանք։ Գնացել եյի մարդուս դուքանը տեսնելու։ Այնքան կուժ ու կուլայից քսան հատ չէի տեսել, չիմ փշրվել և, մոխիր դարձել (արտասվում է)։

ԳՅՈՒԼՆ.—Ինչ անենք, մինիկ ազայիդ կյանքին մատաղ մարդուդ կուժ ու կուլան։ Մի կտոր հաց միշտ կճարենք, բայց զավահները ճարել չենք կարող։

ՄԱՐ.—(Աչքերը թաշկինակով սրբելով) Դե, դրուստ ես ասում, ինչ ասեմ, փառք յերկնավորին (սկսում է ոգնել Գյուլնազին)։

ԳՅՈՒԼՆ.—Փառք, փառք և փառք, վոր դրանց կյանքն առավ ու մեկել մեզ բաշխեց։ (Ցույց է տալիս Սուսանիկն ու Սեյրանիկն նայելով դեպի երկինք)։ Արարիչ աստված, ինչ կապույտ և յերկինքդ, ինչ պայծառ են աստղերդ, բայց չգիտեմ ինչու յես բարկանում մեզ վրա։

ՍՈՒՍ.—Մամա, իմ աստղը վիրն է (վեր է կենում)։

ԳՅՈՒԼՆ.—Այ, տեսնում ես, այն պզտիկն է, յոթ յեղբայրների մոտ։ Աստված քեզ յոթի տեղ մի յեղբայր և տվել, աղաչիր նրան, վոր պահի պահպանի մինիկ յեղբորդ չար աչքից, չար նեթթից (սեղանի շուրջը ներքնարկներ է գցում)։

ՄԱՐ.—Եհ, յես էլ գնամ, ինչվոր ունիմ, բերեմ (գնում է աճ կողմի դռներով յեվ իսկույն գալիս, բերելով մի հաճի լիքը ափսեներ, ողու օիս յեվ բաժակներ)։

ՍՄԲ.—Յես մինչև լույս չեմ քնելու։

ՍՈՒՍ.—Յես էլ։

ՍԵՅՐ.—(Վոսկի բոչելով) Հափ հափ հուռա, քեֆ ենք անելու։

ՄԱՐ.—Սուս, ամոթ ե, լսում ես լացի ձայները։ Ամբողջ քաղաքը ապի մեջ ե։ (Բերած ամանները դնելով սփռոցի վրա) Քամած մածուն, խաշած ձվեր, այս էլ մի քիչ ձուկ։

ԳՅՈՒԼՆ.—(Դնելով սփռոցի վրա բերած ափսեները) Այս էլ պանիր, թթվեղեն, խաշած հավ, արաղ։ Սմբատ, այն ճրագները մեջ տեղ դիր։

ՍՄԲ.—(Վերցնում է սաֆուեների վրայից Մարիամի յեվ Գյուլնազի բերած մոմերը յեվ դնում սփռոցի վրա։

ՏԵՍԻԼ 4.

Նույնի յեվ Հայրապետ

ՀԱՅՐԱՊԵՏ.—(Գալիս է խորի ցանկապատի ձախ կողմի դռնակից։ Քառասունհինգ տարեկան տղամարդ յեվ ճիշտ, բայց զվարթ դեմքով, բիչ ալեխառը կարճիկ միրուքով, շատ հաստ ու ցած ընկած բեխերով։ Հագած է կապտագույն արխալուղ, սեվ խուճացած չուխա կարճ թեվերով։ Մեջքին կապած է մոխրագույն հաստաբուկ ասույա գոտի։ Վոտներին հագած է սպիտակ գուլպաներ յեվ հոշեր չնուճիներ), վոտից մինչեվ գլուխ ծածկված է փոշով։ Հասնելով կապերտների սահմանին, հագուստը թափ է տալիս յեվ այնպես առաջ գալիս)։

ՄԱՐ.—Ծեկա՞ր, վերջապես։ Ի՞նչ նոր խաբար ես բերել։

ՀԱՅՐ.—Տեսա բոլոր ազգականներիդ ու ազգականներիս։ Շատ չյանց տան պատերը ճաքել են, ջնաս չունեն։ Մաղաքանց կտուրը թափվել ե, դա էլ ջնաս չունի, Ճատաի կտուրանց տունը տակն ու վրա յե յեղել, ինձ հարցնես, դա յել ջնաս չունի։ Սամա վոր Մարմարանց հավաբունը ընկել ե, յերկու հավ ե սատկել, դա մեծ ջնաս ե բողբաշի համար։

ՄԱՐ.—Տնաքանդ, ունեցած չունեցածդ ձեռքիցդ գնացել ե, ելի հանաքներ ես անում։

ՀԱՅՐ.—Քառ ու քահաննամը, վոր գնացել ե (ուզում է Մարիամին գրկել, բնդդիմությունը տեսնելով, զսպում է իրան) Մի

ազատեց: (ձեռները դեպի յերկինք բարձրացնելով) Տեր, դու սրանց պահես պահպանես փորձանքներից:

ՍԵՅՐ.—(նստում է իր անկողնի մեջ) Մամա, չես քաղցած եմ:

ՍՈՒՍԱՆ.—(նստում է անկողնի մեջ) Ցես ել: (ծամոնը դուրս է բերում բերանից):

ՄԱՐ.—Քար կտրվեմ, բալաներս, այսոր անոթի չեք. դնամ հաց ու պանիր բերեմ ձեզ համար (ուզում է գնալ):

ՏԵՍԻԼ 3:

Նույնի յեվ Գյուլնազ

ԴՅՈՒԼՆ.—(Գալիս է աջ կողմի դռնից ձեռին մի վառած մոմ, որ դնում է իրանց տան սամվի վրա: Կռանո տակին մի կոպույտ սփռոց յեվ մյուս ձեռին ափսեներ. Մարիամից մի բիչ յերիտասարդ կին է, ավելի սիրուն: Հագնված է Մարիամի պես, շալը ճնճամաշ չե): Համբերիր, ա կնիկ, ես սեղան եմ պատրաստում: Մենք ել անոթի չենք, մեսին մի բան ուտենք. (սփռոցը սփռում է հատակի վրա յեվ ափսեները վրան դարսում):

ՄԱՐ.—Աստված ինձ հավիտյան անոթի թողեց: Ախ, Գյուլնազ, քանդվեցինք-պրծանք: Գնացել եյի մարդուս դուքանը տեսնելու: Ախքան կուժ ու կուլայից քսան հատ չի ճնացել, չեմ փրվել ե, մոխիր դարձել (արտասվում է):

ԳՅՈՒԼՆ.—Ինչ անենք, մինիկ սպասիր կյանքին մատաղ մարդուդ կուժ ու կուլան: Մի կտոր հաց միշտ կճարենք, բայց զավակները ճարել չենք կարող:

ՄԱՐ.—(Աչքերը բաճկինակով սրբելով) Դե, դրուստ ես ասում, ինչ ասեմ, փառք յերկնավորին (սկսում է ոգնել Գյուլնազին):

ԳՅՈՒԼՆ.—Փառք, փառք և փառք, վոր դրանց կյանքն առավ ու մեկել մեզ բաշխեց: (ցույց է տալիս Սուսանցին ու Սեյրանցին նայելով դեպի երկին): Արարիչ ասվածդ, ինչ կապույտ և յերկինքդ, ինչ պայծառ են աստղերդ, բայց չգիտեմ ինչու յես բարկանում մեզ վրա:

ՍՈՒՍ.—Մամա, իմ ասողը վիրն ե (վեր է կենում):

ԳՅՈՒԼՆ.—Աչ, տեսնում ես, այն պղտիկն ե, յոթ յեղբայրների մոտ: Աստված քեզ յոթի տեղ մի յեղբայր և ավել, ապահիր նրան, վոր պահի պահպանի մինիկ յեղբորդ չար աչքից, չար նիաթից (սեղանի շուրջը ներճարկներ է գցում):

ՄԱՐ.—Եհ, յես ել դնամ, ինչվոր ունիմ, բերեմ (գնում է ած կողմի դռներով յեվ իսկույն գալիս, բերելով մի խանի լիքը ափսեներ, ողու ջիս յեվ բաժակներ):

ՍՄԲ.—Ցես մինչև լույս չեմ քնելու:

ՍՈՒՍ.—Ցես ել:

ՍԵՅՐ.—(վոտի բռչելով) Հափ հափ հուռա, քնի՛ք ենք անելու:

ՄԱՐ.—Սուս, ամոթ ե, լսում ես լացի ձայները: Ամբողջ քաղաքը սպի մեջ ե: (բերած ամանները դնելով սփռոցի վրա) Քամած մածուն, խաշած ձվեր, այս ել մի քիչ ձուկ:

ԳՅՈՒԼՆ.—(դնելով սփռոցի վրա բերած ափսեները) Այս ել պանիր, թթվեղեն, խաշած հավ, արագ: Սմբաս, այն ճրագները մեջ տեղ դիր:

ՍՄԲ.—(վերցնում է սառուների վրայից Մարիամի յեվ Գյուլնազի բերած մոմերը յեվ դնում սփռոցի վրա:

ՏԵՍԻԼ 4.

Նույնի յեվ Հայրապետ

ՀԱՅՐԱՊԵՏ.—(Գալիս է խորհի ցանկապատի ձախ կողմի դռնակից: Քառասունհինգ տարեկան տղամարդ յեվ ճիճար, բայց զվարթ դեմքով, բիչ ալեխառը կարճիկ միրուքով, ջաս հաս ու ցած ընկած բեխերով: Հագած է կապտագույն արխալուղ, սեվ խուճացած չուխա կարճ թեվերով: Մեջքին կապած է մոխրագույն հաստարակ ասույա գոտի: Վոտներին հագած է սպիտակ գուլպաներ յեվ բոթե չմուշկներ), վոտից մինչեվ գլուխ ծածկված է փոշով: Հասնելով կապերտների սահմանին, հագուստը բափ է տալիս յեվ այնպես առաջ գալիս):

ՄԱՐ.—Ցնկա՞ր, վերջապես: Ի՞նչ նոր խաբար ես բերել:

ՀԱՅՐ.—Տեսա բոլոր ազգականներիդ ու ազգականներիս: Շամչյանց տան պատերը ճաքել են, ջլաս չունի: Մաղաքանց կտուրը թափվել ե, դա ել ջլաս չունի, Ճասոի կտուրանց տունը տակն ու վրա յե յեղել, ինձ հարցնես, դա յել ջլաս չունի: Ամա վոր Մարմարանց հավաբունը ընկել ե, յերկու հավ ե սատկել, դա մեծ ջլաս ե բողբաշի համար:

ՄԱՐ.—Տնաքանդ, ունեցած չունեցածդ ձեռքիդդ գնացել ե, ելի հանաքներ ես անում:

ՀԱՅՐ.—Ջառ ու ջահաննամը, վոր գնացել ե (ուզում է Մարիամից գրկել, բնդդիմությունն տեսնելով, զսպում է իրան) Մի

կատր հայց միշտ կճարենք (սեղանը տեսնելով) Ոհո, սեղան եք պատրաստել։ Այդ լավ է, քաղցած եմ։ Արագ կլա՞ս։ Կա՞ կլ ինչու՞ ենք սպասում։ Բարխուդարը տանը չէ՞, (բողոքում ու վերցնում ու ծամում)։

ՄԱՐ.—Շուտով կգա։

ԴՐՍԻՑ.—(Հեռվից լսվում է թմբուկների, ծնծղաների ձայներ։ Թուրերը վողբում են իրանց մեռելներին, գոռալով «Շան Հուսեյին, վայ Հյուսեյին»)։

ՄԵՅՐ.—Այդ ինչ է։

ՀԱՅՐ.—Թուրքերը շախսեյ վախսեյ են անում իրանց մեռելների համար։

ՍՈՒՍ.—(Գրկելով Գյուլնազին) Մամա, չես վախենում՞ եմ։

ԳՅՈՒԼՆ.—Մի վախենար, բալաս։

ՄԱՐ.—Գիշերվա խավարին այդ ձայները մարդու զարհանդեցնում են։

ԳՅՈՒԼՆ.—Կարծես դժոխքից են գալիս։

ՀԱՅՐ.—(Բարխուդարին տեսնելով) Ցեկ, ա մարդ, քաղցած մոռանք։

ՏԵՍԻԼ 5.

Նույնի յեվ Բարխուդար

ԲԱՐԽՈՒԴԱՐ.—(Գալիս է աջ կողմի դռներից մի յերկար յեվ օտ բարակ չիբուխ ծխելով։ Բարձրահասակ խոժոռ ու մռայլ դեմքով մարդ է, սափրած յերեսով։ Հագած է յերկար բեվերով չուխա, տակից ներս ձեվի արխալուղ, լայն յեվ տերեվածեվ բեվերով ու բաց կրծքով։ Մեջքին, արխալուղի վրայից կապած է կապույտ մեսախա գոտի։ Գլխին դրած է յերկար, սրածայր գդակ։ Ծառասուն յեվ ութ տարեկան է։ Քայլում է ծանր, միշտ գլուխը ետարտ բարձրացրած։ Շախսեյ վախսեյի հասցեին)։ Քանդվից, տակն ու վրա յեղավ շեն քաղաքը։ Դա աստծու արդար պատիժն եր, վոր յեկավ մեր գլխին (կատերտներին հասնելով, չմուշկները հանում է յեվ այնպես առաջ գալիս)

ՀԱՅՐ.—Ինչու՞ աստծու արդար պատիժը հենց մեզ և հասնում։ Ուրիշ քաղաքներ չկան։

ԲԱՐԽ.—Վոչ մի տեղ չկա այն ապականությունը, ինչվոր այժ անիծված յերկրում։ Հավատ չմնաց, որենք չմնաց, բոլորը վոռնատակ տրին մարդիկ։ Ո՞վ եր տեսել, վոր հայ քրիստոնյան մոռանա խաչ ու խաչվառ, չուզենա լսել զանգերի ձայն, պատ ու ծոմ չպահի։

ՀԱՅՐ.—Ելի լյութերականների գե՞մ ես կատաղել։

ԴՐՍԻՑ.—(դադարում է շախսեյ վախսեյը)։

ԲԱՐԽ.—(ավելի զրգռվելով) Քանդվի նրանց տունը, վոր մեր տները քանդեցին։ Տեսնված բա՞ն է վոր հայ քրիստոնյան պահվի իր հոյչեղբոր կամ մորաքրոջ աղջկա հետ։ Ի հարկե, նա յերկինքից մոխիկ է անում, տեսնում է այս ամենը ու մեզ պատժում է։ Թացն ել այրվում է չորի կրակով։

ՀԱՅՐ.—Իմ կարճ խելքով լյութերականությունը շատ լավ բան կլիներ, յեթե թուլ տար արագ գինի խմել։

ԲԱՐԽ.—(կատաղի հայհոյանք ձգելով նրա վրա)։ Հայրապետ։

ՀԱՅՐ.—Լավ, լավ, հանաք արի։

ԳՅՈՒԼՆ.—(Բարխուդարին) Նստիր, յերեխաները քաղցած են։

ԲԱՐԽ.—(նստում է ծալապատիկ սեղանի հոլ, չիբուխը մի կողմ դնելով) Նստեցեք։

ԱՄԵՆՔԸ.—(նստում են ավրոցի օրորը—ծալապատիկ, կանայք սպասելով, վոր առաջ տղամարդիկ նստեն, փոխրերը սպասելով մեծերի նստելուն)։

ՀԱՅՐ.—(Բարխուդարի յեվ իր բաժակները ոդի ածելով)։ Ե՛հ, Բարխուդար, խմիր, Աստված գնացողների հոգին լուսավորի, մնացողներին ազատ նոր-նոր փորձանքներից։

ԳՅՈՒԼՆ.—Ամեն, տեր աստված։

ՄԱՐ.—Ամեն։

ՀԱՅՐ.—(Բաժակը զարկելով Բարխուդարի բաժակին) Դցիր, ունայնություն ունայնությանց, ասում է Տեր-Իսրայելը. այսոր բաղումն ենք, հզուց հոդում։ (Բաժակը դատարկում է մի կումով, գլուխը դեպի մեջքը թեքելով. անմիջապես բրվեղեց է ուտում) Ողբնավոր թուռնդ արագ է։

ԲԱՐԽ.—(Նախ բաց ուտելը, յերեսն յերեք անգամ խաչակնքել է)։ Հոդումն ենք, թե բաղում, ասյ աստված, վոր չմոռանանք վախն աստծուց և ամոթը մարդկանցից։ (ոդի յե խմում)։

ՀԱՅՐ.—(Նորից լցնելով յուր բաժակը) Իհարկե։

ԲԱՐԽ.—(խմում է ծապով, իմիճ իր մտերով հափշտակվելով)։ Բայց մարդիկ վոչ վախ ունեն, վոչ ամոթ։ Վերտեղ և մեր հայրենի և պապերի ճշմարտությունը։ Աբուռ չի ճնացել, հայտ չի ճնացել, նամուս ասած բանը այսոր ճրագով են փնտրում,

չկա։ (Ցուր բաժակը բռնում է, վորպեսզի Հայրապետը լցնի)։ Զղվել եմ մարդկանցից, Հայրապետ, զղվել։ Շուռնը չնայելով այն չի անում, ինչ վոր նրանք (խմում է)։

ՀԱՅՐ.—Դրուստ խոսողի ձին թամքած պիտի լինի, վոր ճշմարտությունն ասի ու նասի վրեն, փախչի։ Եհ, ինչ գործ ունինք ուրիշների հետ, ամեն մարդ ինքն և պատասխանատու յուր մեղքերի համար։

ԲԱՐԽ.—(Իր դատարկ բաժակը տալով Հայրապետին)։ Կանանց համար եմ ածիր, թող մի քիչ նրանց սրտերն էլ բացվին։ (Դատարկ դարելով ուտել, մտածում է)։

ՀԱՅՐ.—(Բարխուդարի բաժակը լցնելով, տալիս է Մարիամին իր բաժակը տալիս է Գյուլնազին)։ Եմեցեք մեր ընտանիքների բարեկամության կենացը։ Ինչպես մինչև այսոր ենք սիրել հարևանությունն արել, ատ ատոված, վոր այսուհետև էլ անենք։ Ի՞նչ կասես, Բարխուդար։

ԳՅՈՒԼ.—(Ձեռքը ծածկելով, բաժակը բարձրացնում, և Բարխուդարի կողմը յեվ խմում)։ Ամեն։

ՄԱՐ.—(Ձեռքը շալով ծածկելով, բաժակը բարձրացնում և Հայրապետի կողմը յեվ խմում)։ Ամեն, ուր ատոված։

ՀԱՅՐ.—Հույս յերկնավորին, վոր ինչպես մեր հայրերն ու մայրերն են մինչև գերեզման հաշտ ապրել, մենք էլ ապրենք։ Ի՞նչ կասես, Բարխուդար։ Այ մարդ, ինչի՞ մասին ես մտածում։

ԲԱՐԽ.—(մի վեռակաց շարժում անելով)։ Յերեխաներ, կերթ կշտացաք։

ՍՈՒՍ.—(բերանը ոճձեռնոցիկով սրբելով)։ Յես կշտացա։

ՍԵՑՐ.—Յես էլ։

ԲԱՐԽ.—Դե, քնելու ժամանակ է։

ՍԵՑՐ.—(վեր է կենում պառկում յուր աթկողնի մեջ)։

ՍՈՒՍ.—վեր է կենում գնում պառկում իր աթկողնի մեջ)։

ՄԱՐ.—(վեր է կենում Սեյրանին ծածկում վերմակով)։

ԳՅՈՒԼ.—(վեր է կենում Սուսանին ծածկում վերմակով)։

ԲԱՐԽ.—Հայրապետ, յեկ մի բան անենք, վոր ատոված էլ հիշի մեզ վանի, մարդիկն էլ։

ՀԱՅՐ.—(դադարելով ուտել) Աաա, Բարխուդար, ասա, դու գիտես, վոր քո ամեն մի խոսքը ինձ համար որենք է։

ԲԱՐԽ.—Ա հնանիք, մոա յեկեք, լավ բան եմ ասելու։

ՄԱՐ
ԳՅՈՒԼ } (գալիս նստում են յեվ ուշադրությունը յարում Բարխուդարին լսում)։

ՍՄԲ.—(ուզում է գնալ պառկելու)։

ԲԱՐԽ.—(Մեքսիին) Դու մնացիր, հարկավոր ես։

ՍՄԲ.—(նստում է յեվ ուշադրությունը յարում)։

ԲԱՐԽ.—Լսիր, Հայրապետ։ Այդ պարիսպը, վոր բաժանում եր մեր տները, քանդվեց։

ՀԱՅՐ.—(հառաչելով) Քանդվեց։

ԲԱՐԽ.—Քեզ եմ հարցնում, ձվ քանդեց։

ՀԱՅՐ.—Դե, իհարկե, յերկրաշարժը։

ԲԱՐԽ.—(վոգեվորված) Չե, Հայրապետ։ (Ձեռքը հանդեսավոր բարձրացնում է յերկինք)։ Նա քանդեց, նա ինքն իր ձեռքով։ Ինչո՞ւ համար քանդեց, քեզ եմ հարցնում։

ՄԱՐ.—(խորը հառաչելով)։ Նրա համար, վոր մեզ ծախսի մեջ դցի։

ԲԱՐԽ.—Մեղք ես գործում, Մարիամ բաջի, այպես չե։ Աստված այդ պարիսպը քանդեց, վոր մեր տները միացնե։ Քանդեց, վոր մեր բարեկամությունը ավելի հաստատե։

ՀԱՅՐ.—(վոգեվորվելով) Ափարիմ, Բարխուդար, ափարիմ։ (ոդի յե խմում)։

ԲԱՐԽ.—Համբերիր, թող խոսքս վերջացնեմ։ Ականջ դրեք, ա կնանիք, ինչ վոր պիտի ասեմ, կեսը ձեզ համար է։

ՀԱՅՐ.—Մոա նստեցեք, մի ամաչեք։ Հետ քաշեցեք չալներդ, վոր ականջներդ բացվին, լավ լսեք։

ՄԱՐ.—(յերեսը բաց անելով, Գյուլնազին ծանջում է)։ Սիրտս թըրթռում է։

ԳՅՈՒԼՆ.—Իմն էլ։

ԲԱՐԽ.—(միջոց նանդիսավոր)։ Հայրապետ, Մարիամ բաջի, դուք մարդ ու կնիկ մի հատիկ աչքի լույս տղա ունեք։

ՄԱՐ.—(խորը հառաչում է, աչերը աղերսաձիով դեպի վեր բարձրացնելով)։

ԲԱՐԽ.—Մենք էլ մարդ ու կնիկ մի տղա ունինք ու մի աղջիկ։

ԳՅՈՒԼՆ.—(խորը հառաչում է, աչերը աղերսաձիով դեպի վեր բարձրացնելով)։

ԲԱՐԽ.—Ցեկեք, ձեր տղային բաշխեցեք մեզ, մենք էլ մեր աղջկան բաշխենք ձեզ։ Ինչ կասեք, հը՞։

ԱՄԵՆՔԸ.—(տարակուսաձիով նայում են իրարու)։

ԲԱՐԽ.—(ժպտում է)։

ՀԱՅՐ.—(ճակատը սրբելով) Բարխուդար, չեմ իմանում ասածդ պարզ չէ, թե խելքս է մթնել. ես բան չհասկացա։

ԲԱՐԽ.—Վոր չհասկացար, պարզ կասեմ։ Մինչև որս ձեր մեր բանն ու մեր Սուսանը մեծացել են միասին, ինչպես մի տան յերեխաներ։ Ասածու կամքն եր, վոր նրանք այսոր միասին ինան փլատակների տակ, միասին էլ ազատվեն։ Դե վոր այդպես է, ուրեմն, աստված կամեցել է, վոր նրանք իրանց վողջ կյանքն էլ միասին ապրեն, ծերանան ու մի տան մեջ մեռնեն, Հիմի հասկացար։

ՄԱՐ.—(Գյուղացուն ուրախ ուրախ բռթելով) Աղջի լսեցիր։

ԳՅՈՒՂՆ.—Լսում եմ, լսում։

ՀԱՅՐ.—(Հափշտակվելով) Ջո բերանով ինքը սուրբ հոգին է խոսում, մարդ։ այդ ինչ լավ բան ասացիր։

ԲԱՐԽ.—Յեկեք այս դիշեր, այդ բաց յերկնքի տակ, այդ պըլպլան աստղերի վկայությամբ, վերևից մեզ մաիկ անող աստծու ու հրեշտակների որհնությամբ Սուսանին և Սեյրանին նշանենք. ինչ կասեք, հը՞։

ՀԱՅՐ.—(ավելի վոգեվորված, Մարիամին) Լսում ես, ա կնիկ, դե խոսիր ելի, ինչ ես պատրաստվել։

ՄԱՐ.—Աստված շնորհավոր անե։

ԳՅՈՒՂՆ. Աստված շնորհավոր անե։

ՍՄՐ.—Ամեն։

ՀԱՅՐ.—Ա՛յ մարդ, այդ վոր սուրբը միաքղ այդպես լուսավորեց (Մարիամին) Դե, ա կնիկ, ծափ տուր, պար գանք, հարսնացու ունես, տղադ նշանվեց։ (Դպակն ուրախությունից մի կողմը շպրտելով) Ապա, Սմբատ, անա հափ հափ հուռռա։

ՅԱՐԽ.—Հանդարտ, ձայնդ գլխիդ մի գցիր, մարդիկ սգի մեջ են։ Յես իմ աղջիկը տալիս եմ քո վորդուն, վոր մեր բարեկամությունը հաստատվի վորդոց վորդի, հավիտյանս հավիտենից։ Թող ինչպես մեր և ձեր մեջ այդքան տարվա ընթացքում չուրը չրաբերությունով չի անցել, չանցնի մեր զավակների, թոռների ու ծոռների մեջ էլ։

ՄԱՐ.
ԳՅՈՒՂՆ. } (Միաձայն) Ամեն, տեր աստված, ամեն։

ՅԱՐԽ.—Ինչպես աստված քանդեց այդ պարիսպը, թող այդպես էլ քանդվի ու վոչնչանա այս յերկու տների մեջ ամեն մի հակառակություն, տարաբերություն, նախանձ։

ՄԱՐ.
ԳՅՈՒՂՆ. } (միաձայն) Ամեն, ամեն։

ՀԱՅՐ.—Մարդ ես, Բարխուդար, մարդու լեզվով ես խոսում։ (ոգի է խառնում)։

ԲԱՐԽ.—(ավելի վոգեվորվելով) Տեսնում եք այն յերկու թթի ծառերը. մեկը մերն է, մյուսը ձերը, մեկը մեր բադում է, մյուսը ձեր բադում։ Տեսեք ինչպես են բարձրացել իրարու խառնվել։ Այստեղ էլ խառն է Աստծու մատը։ Հենց այդ ծառերի տակ խաղալով են մեծացել մեր զավակները։ Թող նրանց աստղերը միանան այդ ծառերի պես։

ՀԱՅՐ.—Միանան։

ՄԱՐ.
ԳՅՈՒՂՆ. } (միաձայն) Ամեն, ամեն։

ԲԱՐԽ.—Աչխարհը մեծ է, մարդիկ շատ, բայց նամուսով մարդ շատ քիչ կա։ Հայրապետ, յես մինչև հիմա քեզ նամուսով մարդ եմ ճանաչել, հենց այս պատճառով էլ ուզում եմ, վոր իմ աղջիկը քո տունը մտնի, այնտեղ ապրի ու այնտեղ մեռնի։

ՄԱՐ.—Աչքիս լույսի պես կպահեմ նրան, չեքեն աստված մեզ մի կտոր հաց կտա։

ԲԱՐԽ.—Այդ մասին շատ ելի մի մտածիր, Մարիամ բաջի։ Աստված ինչպես մեզ չի թողել քաղցած, մեր զավակներին էլ չի թողնել,

ՄԱՐ.—Յերանի այդպես լինի։

ԲԱՐԽ.—Այդպես էլ կլինի, այդպես էլ կլինի, քիչ մտածիր։ Յերկիրը շարժվեց, մարդիկ փչացան հարյուրներով, քո մարդու կուժ ու կուլան միայն կոտրավ. ինչ արած, աստծու կամքն եր. եգուց մարգուդ դուքանը ելի կսարքենք։

ՄԱՐ.—(Հառաչելով) Ինչդվի,

ԲԱՐԽ.—Իմ փողով, Մարիամ բաջի, իմ փողով։ Յես ունիմ, շատ չեմ, բայց ձեզ բավական եմ։

ՄԱՐ.—Աստված հազարապատիկը տա... Աստված...

ԲԱՐԽ.—(խիստ ընդհատելով)։ Չե, չե, առանց շնորհակալության։ Բարեկամների մեջ նազ ու բաղն ավելորդ է։ Ապրելն ինչ բան է, անասուններն ու թռչուններն էլ են ապրում. բայց մարդ կա, վոր նամուսի համար կյանքը զոհաբերանա, մարդ էլ կա, վոր շան չափ ամոթ չունի։ Նամուս, նամուս, նամուս։ Ով ունի այդ գոհարը,—մարդ է, ով չունի—անա-

սուն է։ (տեսնելով, որ Հայրապետը հուզմունքից արտասվե[լ է]) Ի՞նչ պատահեց քեզ, մարդ աստծու։

ՀԱՅՐ.—*(աչքերը սրբելով, ծպտում է) Վայ[ելենչ], խոսքերդ սրտիս պան (ուզում է ողի ածել)։*

ՄԱՐ.—*(շիշը խլելով Հայրապետից) Խոսքերը չեն, այ քեզ [ինչը] պավ սրտիդ։ Հերիք է։*

ՀԱՅՐ.—*(ափերսելով) Ա. կնիկ, քող տեսնենք, ա կնիկ։*

ԳՅՈՒԼ.—*Սղջի ինչի եմ նստել. գնամ մուրաբա բերեմ, բերենք քաղցրացնենք (վեր է կենում)։*

ՄԱՐ.—*(վեր կենալով) Քող չես բերեմ։*

ԳՅՈՒԼ.—*Իմը նաբինջի չե։*

ՄԱՐ.—*Իմը սերկևիլ է։*

ԳՅՈՒԼ. *Ձես վարդի մուրաբա չել ունիմ։*

ՄԱՐ.—*Ձես ընկույզ էլ ունիմ։*

ՀԱՅՐ.—*Լավ, մի կռորվեք. գնացեք, երկուսդ էլ բերեք։*

ԳՅՈՒԼ.—*(գնում է աջ կողմի դռնեռով)։*

ՄԱՐ.—*(գնում է ձախ կողմի դռնեռով)։*

ՏԵՍԻԼ 6.

Նույնի, առանց Գյուլնազի յեվ Մարիամի

ՀԱՅՐ.—*(կնոջ յեռեվից նայելով, իր հաւար ողի է ածում) Բարխուդար, Բարխուդար, [ինչ] ասեմ։*

ԲԱՐԽ.—*(լուրջ, մտազբաղ) Սմբատ, գնա ավետարանդ ու պրե[ծ]բեր այստեղ։*

ՍՄԲ.—*(ծապով գնում է աջ կողմի դռնեռով յեվ իսկույն յեր[կ]ու յիս, ձեռին հնամաւ կազմով մի ավետարան, մի փեռյա [գ]յեվ կադամաճ)։*

ՀԱՅՐ.—*(նայելով դեպի Սուսանի ու Սեյրանի աննկողինները) Ինչ անուշ են քնած։ Քնեցեք, քնեցեք անմեղ քնով, [ե]րկինքն հրեշտակները ձեզ պահապան լինին (ողի խառնում)։*

ՏԵՍԻԼ 7.

Նույնի. Մարիամ յեվ Գյուլնազ

ԲԱՐԽ.—*Բերեք, տեսնենք ինչ եք բերել։*

ՄԱՐ.—*(ձախ կողմի դռնեռից գալով, սփռոցի վրա յե գնում յ[եր]կու տեսակ մուրաբա)։*

ԳՅՈՒԼ.—*(աջ կողմի դռնեռից գալով, սփռոցի վրա յե դնում յերեք տեսակ մուրաբա)։*

ՀԱՅՐ.—*Բաց արեք երեսներդ, որես դենը մենք քույր ու յեղբայրներ ենք։*

ԲԱՐԽ.—*(շար լուրջ ընդիմանալով Ձե, Հայրապետ, քույրն ել պիտի ամաչի յեղբորից։ Ինչպես երանց մայրերն են յերեսները միշտ տղամարդկանցից ծածկել, քող երանք ել ծածկեն (մի գդալ մուրաբա ուտելով, Սմբատին)։ Նամբր ու այդ սուրբ ավետարանի կողքին գրիր [ինչ] վոր ասեմ.*

ՍՄԲ.—*(յերկու գդալ մուրաբա է ուտում, Ավետարանը բաց է անում, դնում է ծնկների վրա յեվ պատրաստվում է գրել նրա կազմի ներսի կողմում)։*

ԲԱՐԽ.—*(հանդիսավոր) Գրիր։ Հազար ութ հարյուր հիսուն ու [մ]ին թվի ամի տյառն մերո Հիսուսի Քրիստոսի։*

ՍՄԲ.—*Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի։*

ՀԱՅՐ.—*(երեսին խաչակնքում է, մուրաբա ուտում, ծուռ ծուռ նայելով ողու շիշին, ապա Մարիամին)։*

ԲԱՐԽ.—*Մալիս ամսի տասին, հրամանաւք աստծո, յեղալ է յերկրաշարժ մեծ։ Ձյուլում։*

ՍՄԲ.—*Ձյուլում։*

ԲԱՐԽ.—*Բազում տներ, քարվանսարաներ, յերեք մեչիթ, չորս բաղնիս քանդյալ է։*

ՍՄԲ.—*Քանդյալ է։*

ԲԱՐԽ.—*Բազում մարդիկ կոտրյալ և վասն մեղաց մերո, անօրենութեանց։*

ՍՄԲ.—*Անօրինաց։*

ԲԱՐԽ.—*Ձունքի անիրավ լուսաբերհնութեյուն եկեալ մտյալ է տներ քաղաքս, բրիշակ արարյալ է։*

ՍՄԲ.—*Բրիշակ արարյալ է։*

ԲԱՐԽ.—*Իժ ոձի զավակ Ձորամբի։*

ՍՄԲ.—*Ձորամբի։ Հայրիկ, այդ ով է։*

ԲԱՐԽ.—*Այն անիծված լեհաց քարոզիչը, վոր լուսաբերհանութեյունը բերավ, մտցրեց այստեղ։ Գրեցիր։*

ՍՄԲ.—*Գրեցի։ Իժ ոձի զավակ Ձորամբի։*

ԲԱՐԽ.—*Տակը խազ քաշիր։*

ՍՄԲ.—*Քաշեցի։*

ԲԱՐԽ. *Հիմի գրիր։ Մեր Սուսանն ու Հայրապետի տղա Սեյրանը նշանցյալ են Շափալյանց կտուրի տակ։ Հրաժանաւք աստծո*

վողջ, առողջ հանյալ ես։ Մեր ամենեցուն մեծ ուրախութիւն
Գրկեցիք։

ՄՄԲ.—*Գրեցի։*

ԲԱՐԽ.—*Տակը խազ քաշիր։ Հիմի մի մատ նեղքեն գրիր։ Այս գ*
շեր ի մէջ անդանի ուխտեալ ենք Սուսանիկն նշանել Մ
բանի հետ։ Պրախճան։

ՄՄԲ.—*Պրախճան։*

ԲԱՐԽ.—*Յետ հրամանաւդ ասածս, ինչը տարի անցած պսակիլ*
ենք։

ՄՄԲ.—*Պսակելու ենք։*

ԲԱՐԽ.—*Տասն ասուված, վոր արժանանան սուրբ սեղանին։*

ՄՄԲ.—*Սուրբ սեղանին։*

ԲԱՐԽ.—*Ամէն։*

ՀԱՅՐ.—*Ամէն։*

ԳՅՈՒԼՆ.—*Ամէն,*

ՄԱՐ.—*Ամէն, տեր ասուած։*

ԲԱՐԽ.—*Վերջացրիր։*

ՄՄԲ.—*Վերջացրի։*

ԲԱՐԽ.—*(Մարիամին յետ Գյուլնազին) Հիմի լավ ականջ դրեք։ Պ*
նի տարեկան է Սէյրանդ, Մարիամ բաջի։

ՄԱՐ.—*Սառչին վարդավառին տասներկուսը կլրանա։*

ԲԱՐԽ.—*(Գյուլնազին) Քանի տարեկան է մեր Սուսանը։*

ԳՅՈՒԼՆ.—*Ավետարանի կողքին գրած է նրա ծնունդը։ Յետդարձ*
է գրել։

ՄՄԲ.—*(Նայելով ավետարանի կազմի ներսից) Սեպտեմբերի հնգի*
ինչը տարեկան կլինի։

ԲԱՐԽ.—*(Ճանդիսավոր) Այս գիշեր մենք նրանց նշանեցինք։ Մե*
պսակելի որենքով եղուցվանից եկ նրանք չպիտի տեսնեն
իրարու։ Գյուլնազ, Սուսանն եկ չպիտի տանիս դուրս գ
Մարիամ բաջի, դու եկ հասկացրու վորդուդ, վոր եկ Սուսա
նի յերեսը չպիտի տեսնեն։ Ինչը տարին կանցնի, մենք մե
ուխտը կկատարենք. լսեցիք (Չիբուխը յցնում է)։

ԳՅՈՒԼՆ.—*Լսեցինք։*

ՄԱՐ.—*Ինչպես հրամայեցիր, այնպես եկ կանենք։*

ՀԱՅՐ.—*(Դուրս բերելով արխալուխի գրպանից մոգնիս, կայծակ*
քար յեվ աբեր իր բե չիբուխը վառելու)։ Հայրապետ, ինչ
պես յես ու դու մեր կնկա յերեսը մինչև հարսանիքի յեր
րորդ որը չենք տեսել, քո վորդին եկ չպիտի տեսնե

հարսնացուին։ (Աբեքը դնելով կայծակաքարի վրա, մագնիսով
զարկում է) Տղա յեվ աղջիկ այսպես են, այ։ Յեթե նրանք
միմյանց տեսնեն, կրակ կառաջանա և մեջ տեղ իմ ու քո
նամուսը կայրվի այս գավի պես։ Վայ այն որին, յերբ նը
բանք մինչև իրանց հարսանիքը կտեսնեն միմյանց։ Յես իմ
ձեռքով կխեղդեմ իմ աղջկան եկ քո վորդուն եկ։ (Սմբատին)
Տուր ինձ այդ ավետարանը։ (Չիբուխը դնում է մի կողմ, ա
վետարանը վերցնում է, գդակը մի կողմ դնելով, յերեք անգամ
յերեսին խաչակնքում է յեվ ավետարանը համբուրում ու ճա
կատին դնում) Ամենքդ համբուրեցեք այս սուրբ ավետարա
նը և ասացեք «ուխտ եմ անում»։ (Ավետարանը տալիս է Հայ
րապետին. չիբուխը վերցնում)։

ՀԱՅՐ.—*(ավետարանը համբուրելով տալիս է Գյուլնազին) Ուխտ եմ*
անում։

ԳՅՈՒԼՆ.—*(ավետարանը համբուրելով տալիս է Մարիամին) Ուխտ*
եմ անում։

ՄԱՐ.—*(ավետարանը համբուրելով տալիս է Սմբատին) Ուխտ եմ*
անում։

ՄՄԲ.—*(Յերեք անգամ համբուրում է ավետարանը)։*

ԲԱՐԽ.—*Հիմի կարող ենք ասել. ասուած շնորհավոր անե։*

ԱՄԵՆՔԸ.—*ասուած շնորհավոր անե։*

ԲԱՐԽ.—*(Վեր կենալով) Դե, սեղանը հավաքեցեք, գնացեք քնե*
լու։

ԱՄԵՆՔԸ.—*(Վեր են կենում)։*

ՄԱՐ.—*(կանգնում է Սեյրանի անկողնի գլխին, աղոթում, ապա ե*
ուղղելով դեպի յերկինք) Տեր, դու իմ մինուիկ զավակին պահ
յիր փորձանքի մեջ, դու երան ազատեցիր։ Տեր, ամեն բան
քո ձեռքին է։ Դու այսուհետև պահիր, պահպանիր նրան։

ԴՅՈՒԼՆ.—*(կանգնելով Սուսանի անկողնի գլխին, նայում է թախ*
ծալի հայացքով բնած աղջկան)։ Քնիր, սիրուն աղջիկս, քնիր,
Քող հրեշտակները պահպանեն քեզ։ (մեկուսի) Ա՛խ, սիրտս
վառ բան է գուշակում։

ԲԱՐԽ.—*(Ձեռով նեռան է անում Գյուլնազին չքյա վարագույրը*
բանալու յեվ չիբուխը ձեռին գնում է իր տաղ առջեվի սա
ռույի վրա նստում)։

ՀԱՅՐ.—*(նստում է իր տաղ առջեվի սառույի վրա)։*

ԳՅՈՒԼՆ.—*(չքյա վրագույրը բաց է անում յեվ ընտանիքներ բաժա*
նում միմյանցից) բարի գիշեր։

ՄԱՐ.—*Բարի գիշեր։*

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ինձը տարի անցած

Բավական ընդարձակ մի սենյակ ասիական անաղարտ կահ-կարասիով։ Որքում, դեպի ձախ մի թևանի աններկ դուռը, որ առնում է դեպի գավիթ. դեպի աջ յերկու լուսամուտ առանց ապակիների աններկ վեղկերով, որոնք բաց են։ Մի թևանի մի դուռ ևս ձախ պատի մեջ։ Այս դուռը տանում է բնակարանի յերկրորդ սենյակը և խոհանոցը։ Հատակը ծածկված է գեղնադույն խսիրներով, որոնց վրա յերկու հասարակ կապերտներ։ Պատերը պատառ չունեին, ներկված են պարզ կապույտ կավով։ Աջ պատի ամբողջ յերկայնութեամբ առաստաղից մոտ մի արշին ցածը նեղ խորշ (ռաֆ), ուր շարեշար դրած են դանազան հին չինական անոթներ—իրերով զարդ։ Յերկու մոտավորապես յերեք արշին բարձրութեամբ և լայնութեամբ քառակուսի խորշ խորշեր (ջամխուդան) նույն պատի մեջ։ Ձախ պատի մեջ ևս յերկու նույնանման խորշեր, միայն ավելի փոքր։ Առաջին խորշերի մեջ դարսված են անկողիններ (վերմակներ, ներքնարկներ, բարձեր)։ Փոքր խորշերի (թախչա) մեջ դանվում են անագին անոթներ և պաշարեղենք։ Անոթներ և սեղաններ չկան։ Պատերի տակ ձգված են ներքնարկներ, (մինդարներ)։ Որքում յուսամուտների առջև քով քովի դրած են յերկու մեծ իրքիթի անդուկներ, ծածկված փոքրիկ գորգերով։ Աջ պատի առջև թախտ, նույնպես գորգով ծածկված։

Տ ե ս ի լ ։

Սուսան յեվ Սուսամբար

Նստած են դեմու դեմ ու դեմ անդուկների վրա։ Սուսանը թոռ է գործում, Սուսամբարը գուլպա։ Բավական յերկարատեվ լռութիւն։ Լուսամուտներից յերեվում են խտատերեվ թթենու ճյուղեր, որոնց վրա բազմաթիվ ճնճղուկներ ծլվլում են։ Դռնից մերթ ընդ մերթ լսվում են շրջավաճառների յերգեցիկ ձայներ։

ՍՈՒՍԱՆ.—(Դարձել է բարձրահասակ, վայելչակազմ, գեղեցիկ, տասնութ տարեկան աղջիկ։ Հագած է լայն փոխան, դեղնագույն մեծամայա շապիկ, վորի վրան բեհեզյա ջյապկան, գլխին բեհեզյա նուբիխ, ճակտի վրա յեզրերը վոսկեքել ժապավենով։ Նուբիխի վրան ապիտակ բոռ. խիս ու յերկար մազեր, վոր այժմ հինցյալած են, մի խոշոր հյուսվածոով բնկել են բիկուճ-ների վրա յեվ հասնում են մինչեվ մեջքը։ Լսում գործում է, մերթ ընդ մերթ, հառաչելով յեվ բախծալի հայացքներ ձգելով դեպի բրեզին)։

ՍՈՒՍԱՄԲ.—(Սուսանին հասակակից աղջիկ է, վոչ գեղեցիկ, բայց հմայակրելի, գվարթ դեմքով, վառվռուն աչքերով. հագած է ապիտակ կտավյա շապիկ, վրան կանաչագույն արխալուղ, կուրծքը բաց, թեվերը տերեվածեվ, գուլավոր լայն փոխան։ Գլխին կապած է մեծամայա նուբիխի առանց վորեվե զարդի։ Պատրաստ է գործել։ Հառաչում է)։ Աղջի, Սուսան։

ՍՈՒՍԱՆ.—(Մտազբաղ աշխատում է մեքենաբար)։

ՍՈՒՍԱՄԲ.—(Մի բիչ անցած) Սուսան։

ՍՈՒՍԱՆ.—(Լուռ է)։

ՍՈՒՍԱՄԲ.—(Անհամբեր) Աղջի, Սուսան։

ՍՈՒՍԱՆ.—Սթափվելով իր մտքերից) Հը։

ՍՈՒՍԱՄԲ.—Ջոռ։

ՍՈՒՍԱՆ —Ջոռ ել, գլխում ել։

ՍՈՒՍԱՄԲ.—(Մի կողմ դնելով ձեռագործը) Մին դեն դիր այդ սատանի տոպիկը. մի քիչ հանգստանանք։ Մատներս փետացան շատ գործելուց։

ՍՈՒՍԱՆ.—(Հառաչում է, դադարելով գործել) Ռւֆ, (ձեռներն ազոր դնում է ծնկների վրա)։

ՍՈՒՍԱՄԲ.—Ել ինչ ուֆ. հոգիներս դուրս յեկավ։ Մի քիչ խոսենք, սրտներս բացվին։

ՍՈՒՍԱՆ.—Եհ, խոսքս ել է պրծել, գրույցս ել։

ՍՈՒՍԱՄԲ.—Դե, լավ, պառավ կնկա պես մի քացախիր։ Տես, ծառերն ինչպես են ծլվլում։ Աչի կուտ ածենք, տեսնենք կգան ուտելու։ Ունե՞ք (վեր է կենում)։

ՍՈՒՍԱՆ.—Թախչումը հազի փշրանքներ կլինեն։

ՍՈՒՍԱՄԲ.—(Մոտենում է փոքր խորշերից մեկին, վարագույրը բանալով, վերցնում է հացի փշրանքը յեվ լուսամուտից դուրս թափում բիչ-բիչ)։ Ծիվ, ծիվ, ծիվ, ծիվ։ Յեկան հավաքվեցին։ Ոհո, ինչ շատ են։ Ելի յեկան, գրանք ինձ ել կուտեն։ Կերեք,

կերնք։ Մի կովիք։ Ամոթ և։ Տես այն պոչը կտրածը ի՞նչ չարն և։

ՍՈՒՍԱՆ.—(Նայելով լուսամուտից) *Երանի ձեզ, վոր ազատ, հ մարձակ։ Վորտեղ ուզում եք, այնտեղ եք թռչում։ Այդ ծ ռերն էլ, այդ սարերն էլ, դաշտերն էլ, արար աշխարհ ձեզ համար և։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Եյ, չար Հուլիանոս, թող ընկերդ էլ ուտի։ Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ... Դե, հերիք և։ (դադարում է վուրացնե ածել) Չիստ, չիստ, գնացեք, կորեք։*

ՍՈՒՍԱՆ.—(Մտազբաղ) *Թռան, գնացին ուրախ-ուրախ։ Ո, հազա յերանի ձեզ։ Գոնել են մեզ տուն, դռներն յերևաներիս ծա կել, մարդու կերպարանք չենք տեսնում։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Դու ծաքն ես նախանձում։*

ՍՈՒՍԱՆ.—(Հառաչելով) *Ա՜հ, ինչպես չնախանձեմ։*

ՍՈՒՍԱՄԲ.—(Բարձրաձայն ծիծաղելով) *Հա, հա, հա, ծաքն և նախանձում։ Հա, հա, հա։*

ՍՈՒՍԱՆ.—*Ինչո՞ւ չես ծիծաղում։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Ծիտը թռչկոտում է ծառի վրա, դու թառ ես լինում ծառի տակ, ծառի տակ։ (Ծափ է տալիս ու պարում)։*

ՍՈՒՍԱՆ.—*Ի՞նչ ես ուզում ասել։*

ՍՈՒՍԱՄԲ.—(Շարունակելով)։ *Կարմիր թթի ծառի տակ, ծառի տակ։ Համ կերդում ես, համ պաչում, համ պաչում ես համ կերդում, ծառի տակ։*

ՍՈՒՍԱՆ.—*Մասխարա։*

ՍՈՒՍԱՄԲ.—(Դադարում է պարել)։ *Թե, լավ, ես ամեն բան գի տեմ, ամեն բան։*

ՍՈՒՍԱՆ.—(Շառագունելով)։ *Ի՞նչ գիտես։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Այն գիտեմ, վոր դու նրա հետ գիշերները թագուն թագուն տեսնվում ես ծառի տակ։*

ՍՈՒՍԱՆ.—(Վախեցած, ձեռը դնում է Սուսամբարի բերանքին) *Սուս, լեզուդ փորդ գցիր։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Ցես մեզա ասածու։ Լավ մի վախեցար, վոչ վոքի չեմ ասիլ։ (Դուրս է Սուսանիկը յեվ միասին սկսում են բայ լել յես ու առաջ) Երանի քեզ, շատ լավը և։ Ցերեկ մեր տան առաջով անցնում եր։ Ախ, ինչպես մեծացել և, սիրունացել բոյը չինար, մեջքը նազիկ, աչերը նախշուն-նախշուն, բ խերը բարակ-բարակ։*

ՍՈՒՍԱՆ.—(Ցերջանիկ)։ *Համաձա՞յն ես։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Ով չի համաձայնիլ։ Նմանը չկա մեր քաղաքում։ Փողոցներով անցնելիս կանայք դռների յետևից նրան են մատիկ անում. բայց ափսոս։*

ՍՈՒՍԱՆ.—*Ինչո՞ւ ափսոս։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Աստւմ են վատ ջահելների հետ և խառնվել ու մեքեքին փչացնել։*

ՍՈՒՍԱՆ.—(Ուրմտությամբ)։ *Սուտ են ասում, սուտ են ասում։ (Թողնում է Սուսամբարի ձեռքը)։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Դե լավ, մի փրփրիր, հոգս բամբասողների գլխին։ Դու ինձ այն տես հարսանիքը կերը և։*

ՍՈՒՍԱՆ. (Ցիտում է)։ *Չեմ իմանում։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Իսկ ես գիտեմ իմ հարսանիքը կերը և։ Վարդավառից հետո։*

ՍՈՒՍԱՆ.—*Ուրեմն, աչքդ լույս։*

ՍՈՒՍԱՄԲ. *Եհ, շատ հարկավոր և, ուզում է թող չլինի։*

ՍՈՒՍԱՆ.—*Նշանածիդ չե՞ս սիրում։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Սկսս վիրն և, ինչ ես խոսում։ Ցերեսը տեսել եմ, վոր սիրեմ կամ չսիրեմ։ Ասում են մի չոփուռ տղա կա, քիթն էլ ծուռ։*

ՍՈՒՍԱՆ.—(Ջեռը ծնկան զարկելով)։ *Վայ, քոռանամ. քիթը ծռուռ, խեղճ Սուսամբար, ինչո՞ւ կեն քեզ նրան տալիս։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Եհ, ում ուզում են թող տան, ինձ համար միևնույն է, ճակատիս ինչ վոր գրված է, այն է կատարվելու։ Դեհ, որը մթնեց, գնամ-կորչեմ, թե չե հայրս կգա, ինձ տանը չի տեսնիլ, մորս հետ կկռվի (վերցնում է իր ձեռագործը սնդուկի վրայից, շալը գցում է գլխին)։ Եգուց կգամ մեր տուն։*

ՍՈՒՍԱՆ.—*Չե, Սուսամբար. ծնողներս չեն թողնում ազգականբարեկամներիս տուն գնալ։*

ՍՈՒՍԱՄԲ.—*Եհ, գեղեցիկ լինելն էլ մի բան չե։ Իմ ծնողները չեն վախենում, վոր դաշտներն ինձ կփախցնեն։ Մնաս բարով։ (Համբուրվում է Սուսանի հետ յեվ գնում է խորքի դռնով)։*

ՏԵՍԻԼ 2.

Սուսան մենակ, հետո Գյուլնազ

ՍՈՒՍԱՆ.—*(Սուսամբարին ուղեկցելով մինչեվ խորքի դուռը, կանգնում է այնտեղ, նայում բրենու ծառերին, հանգստում, ձեռը*

հեռացած դրան կողմից։ Ապա սթափվելով, գալիս է սեղյակի կենտրոնը)

ԳՅՈՒԼՆ.—(Գալիս է ձախ կողմի դռնով կռնատակին մի խայտ բղես մեռախոյա չարտով՝ ծալած։ Մազերը դադարել է ճերկել հինայով, ուստի բավական ճերմակել են։ Ինքը տարվա մեջ նկատելի ծերացել է)։ *Գնաց Հռուսիկի ազջիկը։*

ՍՈՒՍԱՆ. *Գնաց։*

ԳՅՈՒԼՆ.—*Ինչո՞ւ թողիր։ Ձես ուզում եյի հորաքրոջդ մոտ գնալ նա հիվանդ է։*

ՍՈՒՍԱՆ.—(Սրտմտությամբ) *Մաման, հերիք է ինչքան ինձ տանջեցիք։* (*Բայլում է*)։

ԳՅՈՒԼՆ.—(*Հառաչելով*) *Ձես ինչ անեմ։ վորդի, հորդ ասա։ Նա չի հրամայել, վոր քեզ տանը մենակ չթողնեմ։*

ՍՈՒՍԱՆ. —(*Խորին վշտով*) *Հայրս, հայրս, նրա խաստությունը ինձ դերեզման կիջեցնի։ Մաման, մաման, ես չեմ կարող դիմանալ այս կյանքին։* (*Փաթաթվում է մոր պարանոցին ու լալիս*)։

ԳՅՈՒԼՆ.—*Լավ, լաց մի լինիր։ Սիրտս մղկտում է արտասուքդ տեսնելիս։*

ՍՈՒՍԱՆ.—*Չեմ կարող, չեմ կարող։*

ԳՅՈՒԼՆ.—*Ձեթե իրավունքն իմ ձեռքին լիներ, քեզ ոտսի շորեր կհագցնեյի, գլխիդ ձյապ կդնեյի ու կասեյի. «գնա, բալաս, գնա ուր ուզում ես, ապրիր ինչպես կամքդ է»։ Բայց ես մայր եմ. հայր չեմ։ Դու գիտես, վոր ես ինքս էլ գերի չեմ քո հոր ձեռքում։ Լավ, սրբիր աչքերդ։ Ամուսնացիր վոդորմած ե. կարելի յե շուտով հարսանիքդ լինի։*

ՍՈՒՍԱՆ.—(*Աչքերը սրբելով*) *Իմ հարսանիքը վաղուց պիտի լիներ։ Ձգիտեմ ինչու չեք ձգձգում։*

ԳՅՈՒԼՆ.—*Ելի հալրդ է մեղավոր։ Ամուսնացիր, ինչ ուզես իր մտքում։ Ձերը հարսանիքիդ մասին խոսք եմ գցում, աչքունքը թթվեցնում է։*

ՍՈՒՍԱՆ.—)*Հեռանալով*)։ *Ձեմ վոչինչ չի ասում.*

ԳՅՈՒԼՆ.—*Վոչինչ։*

ՍՈՒՍԱՆ.—(*Զսպում է իրան բռնացրոսիկ ժպիտով*)։ *Լավ, մաման, գնա, ուր ուզում ես, թող ինձ մենակ։*

ԳՅՈՒԼՆ.—*Լավ, շատը հանգերել ես, քիչն էլ համբերիր։ Ամառը չլինի, թող աշունքին լինի հարսանիքդ։*

ՍՈՒՍԱՆ.—*Գնա, մաման, գնա հորաքրոջս մոտ նա խեղճ է, մենակ է։*

ԳՅՈՒԼՆ.—(*Ձարտով բաց անելով յեվ նրա մեջ փաթաթելով*) *Ե՛հ, գնում եմ, միացիր մենակ, ինչ անեմ, թող այս անգամ հայրդ կատաղի ինձ վրա։ Տունը սրբիր, հետո սամավարը կդնես։* (*Գնում է դեպի խորքը*)։

ՍՈՒՍԱՆ.—*Գնա յես անգործ չեմ միալ* (*Դյուլճագին ուղեկցելով մինչեվ խորի դուռը, չմուշկները դրսում դնում է նրա առջեվ յեվ հետո գալիս է յես, դրսից բերելով մի չորթ ավել*)։

Տ Ե Ս Ի Լ 3.

Սուսան մենակ, հետո Սեյրան

ՍՈՒՍԱՆ.—(Սկսում է հատակը ավլել, հաճդարս յերգելով մի տեղական յեղանակ)։

ՍԵՅՐ.—(*Բավական ժամանակ անցած՝ լուսամուտից ցույց է տալիս իր գլուխը։ Քսան տարեկան գեղեցկադեմ, բարձրահասակ յերիտասարդ է դարձել։ Ձերեսը մաքուր է, բարակ բեխերով, գլխին կլորածեվ յեվ վոչ այնքան բարձր գդակ Բուխարայի մորքուց կարած։ Վոտներին յեվրոպական կոշիկներ*)։ *Սուսան, Սուսան։*

ՍՈՒՍԱՆ.—(*Լսելով իր անունը, ցնցվում է։ Տեսնելով Սեյրանին, ավելը ձեռքից բաց է թողնում*)։ *Սեյրան։*

ՍԵՅՐ.—*Նա ինքն է։* (*Դուխան ավելի յե բարգրացնում*)։

ՍՈՒՍԱՆ.—*Ձուր ես յեկել, հեռացիր, ախ, շուտ հեռացիր։*

ՍԵՅՐ.—*Բարձր մի խոսիր, թող ներս մանեմ։*

ՍՈՒՍԱՆ.—*Վոչ, վոչ, գնա, հեռացիր, չի կարելի։*

ՍԵՅՐ.—*Շատ լավ կարելի է* (*Բարձրանալով լուսամուտ, ներս է ցատկում*)։ *Ոհ, հազիվ քեզ տեսա։* (*Հեվալով*) *Մի շաբաթ որ ու գիշեր հանում եմ—չես յերևում։* (*Մոտենում է Սուսանին*)։

ՍՈՒՍԱՆ.—(*Հետ անում է դեպի ձախ, յերկյուղից ճնշասպառ*)։ *Գնա, ասում եմ, գնա, հայրս կարող է գալ։*

ՍԵՅՐ.—*Հայրդ չի, նրա պապն էլ գերեզմանից դուրս գա, չեմ հեռանալ մինչև վոր չասեմ, թե ինչու համար եմ յեկել։*

ՍՈՒՍԱՆ.—(*Բղավովին ճիպսված*)։ *Ախ, տեր աստված, դա վախ չունեն, ամոթ չունեն։ Սեյրան աղաչում եմ, ինձ թողես, գնա։*

ՍԵՅՐ.—*Ասում եմ վոտս դուրս չեմ դնիլ, մինչև վոր հետդ չխոսեմ։*

ՍՈՒՍԱՆ.—*Դե միացիր, ես փախա։* (*Վազում է դեպի ձախ կողմի դուռը*)։ *Չեմ թողնիլ տեղիցդ շարժվես։ Լսիր, Սուսան, լսիր. մեր ծնողները մեզ նշանել են յերկրաշարժի որը, վոր ինքը տարուց հետո պսակեն։ Ինքը տարին լրացել է, մի տարի*

իմ ալ ասեցի, բայց մեր հարսանիքի մասին խոսք չկա մեջ տեղ։ Ինչ է պատճառը։

ՍՈՒՍԱՆ.— (Միշտ յերկյուղով աջ ու ձախ նայելով) Ձեզ քեզ ասել եմ, վոր ինքս էլ չգիտեմ։ Գնա, հեռացիր։

ՍԵՅՐ.— Ինչ է ասում հայրդ։

ՍՈՒՍԱՆ.— Նա վոչինչ չի ասում, վոչինչ։

ՍԵՅՐ.— Սուտ մի խոսիր, Սուսան։ Ել ես համբերությունն չունեմ այս անորոշ դրության մեջ մնալու։ Կամ այս, կամ վոչ։ Կամ ես պիտի պահվիմ քեզ հետ կամ այս սուրը սիրտս պիտի խրեմ։ (Հետ անելով չոխայի փեշը, ցույց է տալիս մեջքին կապած դաշույնը)։

ՍՈՒՍԱՆ.— Ախ, Թող, Թող սուրը։ Հայրս հենց այդպիսի բաներ համար քեզ չի սիրում։

ՍԵՅՐ.— Ջի սիրում։ Ուրեմն, ճշմարիտ են ասում, վոր նա ինձ համարում է փչացած, կորած մարդ։ Աստ, լսում ես։

ՍՈՒՍԱՆ.— Ձես հորս հետ չեյի կարող խոսել քո մասին։ Նա մորս ել վոչինչ չի ասում, բայց մի անգամ այն դռան յետևից լսել եմ նրանց խոսակցությունը քո հոր հետ։

ՍԵՅՐ.— (Հետաքրքրված)։ Ի՞նչ էլին խոսում։

ՍՈՒՍԱՆ.— Հայրս ասում եր, վոր դու ուսումդ կիսատ ես թողել ու դուրս յեկել ուսումնարանից։

ՍԵՅՐ.— Կիսատ թողի. վորովհետև վարժապետն ինձ ծեծում եր։ Հետո։

ՍՈՒՍԱՆ.— Ասում եր, վոր ուսումնարանից հետո մտար հորդ դուքանը, այնտեղ էլ չկենացիր։

ՍԵՅՐ.— Վորովհետև հայրս էլ ծեծում եր ինձ։ Ե՞լ ինչ եր ասում։

ՍՈՒՍԱՆ.— Ասում եր, վոր քեզ աշակերտ ուղեցին իրան, արհեստ չսովորեցիր, փախար։

ՍԵՅՐ.— Առաջինը, ես դերձակ չեյի ուզում լինել։ Յերկրորդ, Սուսան, հորդ մասին մի խոսիր։ Ձեռք ամիս աշակերտ յեղա նրա մոտ, այնքան ծեծեց ինձ, վոր վրաս ճնաց մի կաշի և մի վոսկոր։ Նա մարդ չե, Սուսան, նա ֆաուստ և խաների ժամանակից ճնացած։ Նա ինձ ինչով ասես ծեծում եր—չիբուխով, գազով, մկրատով, մինչև անգամ արդուկով։ Նա ինձ բարձրացնում եր իր յերկար ուսերի վրա և գետնին զարկում ինչպես մի կատվի, ինչպես մի շան ձագի։ Ձես ինչպես ինձալի այդ տեսակ մարդու մոտ։

ՍՈՒՍԱՆ.— (Մտազբաղ) Ճշմարիտ և, հայրս շատ խիստ մարդ է։

ՍԵՅՐ.— Ծեծը, Սուսան, վատ բան է մարդու համար, շատ վատ բան։ Ծեծը վոչ միայն մարդու մարմինն է ցավեցնում, հոգին էլ է տանջում։ Թող ինձ խրատեն, նախատեն, հայհոյեն, անիծեն, թող անից դուրս անեն, առանց հաց ու ջրի թողնեն, բայց չծեծեն։ Ձես ծեծը անպատվություն եմ համարում։ Նամուս ունեցող մարդ չի կարող թույլ տալ, վոր մի ուրիշ մարդ իրան վրա ձեռք բարձրացնի։

ՍՈՒՍԱՆ.— (Լսել է ուշադիր, մեղամաղձոտ, մտազբաղ)։ Ճշմարիտ ես ասում, Սեյրան, ճշմարիտ ես ասում. ծեծվելը չես էլ եմ ամոթ համարում։ Բայց ինչ արած, ինչ արած, քանի վոր մենք պետք է հնազանդվենք մեր ծնողներին, թեկուզ նրանք մեզ կաթ էլ տան։

ՍԵՅՐ.— Վոչ, Սուսան, չպիտի հնազանդվենք։ Խոնարհվենք, սիրենք, հարգենք, բայց չծողնենք, վոր մեզ հետ վարվեն ինչպես անասուններին հետ։ Ձես այսպես եմ հասկանում և այսպես էլ պիտի անեմ այսուհետև. ել վոչ վոքի, վոչ վոքի չեմ թույլ տալ գլխիս մի մազին դիպչելու։ Ձե վոր հիմա չես ել եմ ուզամարդ, չես էլ նամուս ունեմ. վայ նրան, վոր կփորձի իմ պատվին դիպչել. կտոր կտոր կանեմ այդպիսուն։

ՍՈՒՍԱՆ.— (Նայելով Սեյրանին, հափշտակվել է նրանով յեվ մոռացել է իր յերկյուղը)։ Գիտեմ, դու քաջ ես, քո կռների մեջ ուժ կա և սրտիդ մեջ խանի հպարտություն։ Դու կարելիա ժամանակիդ ել հպարտ եյիր և վոչ վոքի չեր համարձակվում քեզ դիպչել։ Ախ, յերանի անցած գնացած օրերին, յերանի մեր ազատ մանկության, հազար յերանի։

ՍԵՅՐ.— (Վոգեվորվելով) Ուրեմն մի՞տք և մեր մանկությունը, հիշում ես դու այդ օրերը (բռնում է նրա ձեռը)։

ՍՈՒՍԱՆ. Մի՞թե կարող եմ մոռանալ։ Ո, Սեյրան, ես ամեն բան հիշում եմ, ամեն բան։

ՍԵՅՐ.— (Զվարթ) Մինչև անգամ կաբմիր կովին։

ՍՈՒՍԱՆ.— Ախ, Թող հանաքներդ։ Ձես իմ յերեխայությունը հիշելիս արտասվում եմ։ Մի՞տք և ինչպես եյիր բարձրանում մեր և ձիր Թթի ծառերի վրա և ինձ համար Թութ Թափ տալիս։

ՍԵՅՐ.— Ինչպես կարող եմ մոռանալ։ Ձերիք անգամ քո պատճառով ծառից ընկել եմ, քիթս ու պռունդս ջարդել։

ՍՈՒՍԱՆ.— (Ամեի՛ն ու ամեի՛ն հափշտակվելով աղջկանով)։ Ախ, ես ժամերով նստում եմ լուսամուտի մոտ, մտիկ եմ անում մեր

ծառին, ձեր ծառին, հիշում եմ այդ յերջանիկ որը։ Սիրտս մղկտում է, արտասուքը խեղդում է ինձ։ Պատահում է, վոր ուզում եմ դնալ գցել ինձ ջրհորի մեջ և խեղդվել (արտասվում է)։

ՍԵՅՐ.—Լաց մի լինիր, Սուսան, մի տխրեցնիր ինձ. կարճ ենք տեսնվում միմիանց. մի լաց լինիր (Մի ձեռով գրկում է Սուսանին, մյուսով սկսում է շոյել նրա մազերը)։ Ինչ բարձրացել ես, ինչ սիրունացել, մազերդ յերկարել են, թանձրացել։ Հինա մի դնիր, Սուսան, հինան թրքուհուն է սազում։ Առանց հինայի մազերիդ գույնը ավելի գեղեցիկ է։

ՍՈՒՍԱՆ.—(Աչքերը սրբելով) Մայրս չի թողնում, ասում է հինան պլխացավը վռնդնում է։

ՍԵՅՐ.—Դու պլխացավ ունես։

ՍՈՒՍԱՆ.—(Հառաչելով) Ա՜հ, պլխացավ կլ ունեմ, սրտացավ էլ (բղոռոցից մոռացվում իրան, բռնում է Սեյրանի ձեռը յեվ տանում դեպի իր կուրծքը) Դիր ձեռդ կրծքիս, տես ինչպես է թռթռում սիրտս. կասես բռնած ծիտ լինեի։ Ա՜հ, յես ուժ չունեմ (գլուխը թեքում է Սեյրանի ուսին)։

ՍԵՅՐ.—(Հափշտակվելով) Ա՜հ, հիմա տեսնում եմ, վոր դու ինձ սիրում ես ինչպես յես քեզ։ Սուսան, Սուսան։ (Սեղմում է Սուսանի գլուխը իր կրծքին)։

ՍՈՒՍԱՆ.—Յերանի այսպես մեռնեի, վոր դու ինձ թաղեիր։

ՍԵՅՐ.—Վոչ, մի ասա, դու չես մեռնիլ, դու իմը պիտի լինես (Հանկարծ ամուր գրկում է յեվ պինդ համբուրում նրան)։

ՍՈՒՍ.—(Ձեռից խայթվածի պես սթափվում է) Վայ, այդ ինչ արիր (Ազատվում է Սեյրանի կրծքից)։ Գնա, շուտ հեռացիր։ Յես ինքս ինձ մոռացա։ Հայրս, մայրս, խայտառակվեցի, դու ինձ պաչեցիր. գնա, գնա (հեռանում է սարսափած)։

ՍԵՅՐ.—Մի վախենար, Սուսան, քալ յեկիր։ Դու իմ հարսնացուն ես, յես քո փեսացուն. դու իմն ես, յես քոնը։ Վոչ վոք իրավունք չունի մեր մեջ մտնելու։ Թող մի անգամ էլ (արագ հարձակվում է Սուսանի վրա, գրկում, ամուր համբուրում) Եգուց յերեկոյան քեզ կպսակեմ ձեր ծառի տակ։

ՍՈՒՍ.—(հազիվ ազատվելով Սեյրանից, յերեսն ամոթից ծածկում է յերկու ձեռներով) Յես կորա։

ՍԵՅՐ.—(վազում է դեպի լուսամուտ, Բարխուդարին տեսնելով)

ՏԵՍԻԼ 4

Նույնի յեվ Բարխուդար

ԲԱՐԽ.—(Ներս է մտնում խրճիթի դռնից։ Իննը տարվա մեջ շատ էլ չի փոխվել, միայն գլխի կարճ խուզված մասերն ավելի յեն սպիտակել։ Հագնված է այնպես, ինչպես իննը տարի առաջ։ Ուզում է դռների մոտ չմուշկները հանել. տեսնում է Սեյրանին Սուսանին համբուրելիս, վազում է նրա չմուշկներով)։ Լիրբ, լիրբ։ (վազում է Սեյրանի յետեվից, չի կարողանում բռնել)։

ՍԵՅՐ.—(Ցատկում է լուսամուտից դուրս)։

ՏԵՍԻԼ 5

Սուսան յեվ Բարխուդար

ՍՈՒՍ.—(դողդողալով, սարսափած վերցրել է ավելը յեվ ուզում է նա տակը սրբել)։

ԲԱՐԽ.—Ի՞նչ եր անում նա այստեղ։

ՍՈՒՍ.—(ավելը բաց է թողնում ձեռից)։

ԲԱՐԽ.—(ձայնը բարձրացնելով) Ի՞նչ եր անում նա այստեղ։

ՍՈՒՍ.—(ուզում է պատասխանել, լեզուն կաշկանդվում է)։

ԲԱՐԽ.—Յես քեզ եմ հարցնում, ինչ գործ ուներ այդ լակոտն այստեղ։

ՍՈՒՍ.—(դողդողջուն ձայնով) Ցնկել եր քեզ տեսնելու։

ԲԱՐԽ.—(դառն հեգնությամբ) Հաա, շատ շնորհակալ եմ։ Անառակ։

ՍՈՒՍ.—(ձեռներն իրար գցելով, աղերսական) Մեղայ աստծու, հայր, մեղայ աստծու։

ԲԱՐԽ.— (Բռնում է Սուսանի թևից յեվ քաշելով նրան, տանում է դեպի ձախ կողմի դուռը)։ Ցնկ այստեղ, յնկ, յես քեզ ցույց կտամ թե դու ում աղջիկն ես։

ՍՈՒՍ.—Ախայիր, ներիր (հեռվում է հորն յեվ գնում մյուս սենյակ, ու նչում է)։

ՏԵՍԻԼ 6

Գյուլնազ յեվ Սմբատ

ԴՈՒԼՆ.—(գալիս է խորի դռնով։ Չմուշկները հանում է դրան մոտ, չարուճը վերցնում է յեվ ծալում)։ Ախր դու ինչ գործ ունես նրանց հետ։

ՍՄԲ.—(Գալիս է մոր հետ խորի դռնով: Քսանումեկ տարեկան չերիտասարդ է: Հագած է սեվ սաիթնից արխալուղ, վրան կարճ բեվերով չուխա վազմաճերով: Գլխին կլոր դդակ, ոտքերին չեվրոպական կոշիկներ) *Նրանք թափվեցին մեզ վրա ծեծելու: Ես ու Սկյրանը փայտերով հարձակվեցինք նրանց վրա և մի լավ խրատեցինք:*

ԳՈՒԼԻՆ.—(Գալիս է բեմի կենտրոնը, լսում է Սուսանի ձայնը) *Այդ ինչ է պատահել չերեխայիս* (Զարտավը մի կողմ շպրտելով վազում է դեպի ձախ կողմի դուռը): *Աման:*

ՍՄԲ.—*Հայրիկը ծեծում է նրան* (տրտմությամբ) *Ա՜հ:* (վրդովված անց ու դարձ է անում)

ՏԵՍԻԼ 7

Սմբատ չնվ Բարխուդար

ԲԱՐԽ.—(Գալիս է ձախ կողմի դռնով առանց դդակի: Չափազանց գրգռված է) *Անառակի ծնունդ, անառակ:* (Սմբատին տեսնելով) *Ապա, դնա այս րոպեիս Հայրապետին կանչիր այստեղ:*

ՍՄԲ.—*Ինչ է պրիկ, որ եկի ծեծեցիր:*

ԲԱՐԽ.—*Ծեծե՞լ, ծեծելն ինչ է: Ես շամփուրները պիտի շիկացնեմ կրակի վրա և մեկ մեկ դալեմ նրա մատները:*

ՍՄԲ.—*Այդքան էլ խստությունն:*

ԲԱՐԽ.—*Ձայնդ կտրիր, լսրը. չեթե դու նամուսով չեղբայր ես, պետք է խանչալը բազաբի մեջ խրես այդ լակոտի փորը, փորոտիկը թափես մարդկանց առաջ: Նա համարձակվի իմ տունը մտնել, նամուսս վոռնատակ անե՞լ: Ես ցույց կտամ նրա հորը: Գնա, կանչիր այդ մարդուն շուտ:*

ՍՄԲ.—(Ջատով գնում է խորի դռնով): *Մյուս սենյակից* (լսվում է Սուսանի ճիչկտացիը):

ԲԱՐԽ.—(մոտենում է ձախ կողմի դռանը չեվ դեպի մյուս սենյակը) *Քիչ պնդգնգա, շուն, թե չե՝ եկի կդամ:*

ՍՈՒՍ.—(դուրս է նչալ):

ԲԱՐԽ.—(վերցնում է պատի փոխ խորհրի մեկից չերկար ու բարակ չիբուխը, դուրս է դեռում արխալուղի գրպանից դարը թամբակուի խակը, մի տեղով թամբակու դնում ձեռնեցի մեջ տրորում չեվ լեցնում չիբուխը չեվ մագիխը կայծակահարիչ գարկելով վառում է աբեթը ու չիբուխը ծխում):

ՏԵՍԻԼ 8

Բարխուդար չեվ Դյուլճազ

ԳՅՈՒԼՃ.—(Գալիս է ձախ կողմի դռնով, գուցաս արտավելով) *Աեսիրա, անհոգի, վռնբառեղ եր քո ասածը, ինչ որի ես գցել չերեխայիս:*

ԲԱՐԽ.—*Ինչ խոսիր: Որը սլինել է, մամ վառիր:*

ԳՅՈՒԼՃ.—*Մինչեր չերկինք ու չերկիր, այս որը չեսոնելի: Ասված, ասուած, չերանի այն հնոլը, վոր զավակ չունի* (վերցնում է պատի խորհից մի ոմռ, վառում է լուցկիյով չեվ դնում է սենյակներից մեկի վրա):

ԲԱՐԽ.—*Շուն ցնդնելիր ինձ համար ավելի լավ կլինեիր՝ քան այդ տեսակ ապլելիկ:* (անց ու դարձ է անում հուզված):

ԳՅՈՒԼՃ.—*Ինչո՞ւ, ինչ սի մեղք է գործել:* (ավելը վերցնում է հատակի վրայից, սրսպ սրբում է սենյակը չեվ խորհի դռներով դուրս գցում):

ԲԱՐԽ.—*Ամոթ չունես, հարցնում ել ես: Ես քեզ քանի՞ անգամ եմ ասել, սի թողնիր աղլկանդ տանը մենակ. ինչ ես չարշռվը գլխիդ՝ փողոցները չափչփում:*

ԳՅՈՒԼՃ.—*Ես փողոցները չեյի չափչփում. գնացել եյի քրոջդ տեսնելու: Նա մահամերձ է* (կարգի չե բերում սենյակը)

ԲԱՐԽ.—*Թող ամենքը սատկեն. ինձ համար իմ տան պատիվն է միայն թանգ: Ես գլխիս դդակ ունեյի, դու նրան վերցրիր՝ և շուն ու գայլերի առաջ գցեցիր:*

ԳՅՈՒԼՃ.—*Ախը ինչ սի մեծ մեղք է, վոր հարսացուն տեսնում է իր եշանածի հետ:*

ԲԱՐԽ.—*Դու տեսնում եյիր ինձ հետ, չերբ հարսնացու եյիր:*

ԳՅՈՒԼՃ.—*Ձերանի տեսնելի, քեզ նման դազանի կինը չեյի լինել:*

ԲԱՐԽ.—(կատաղելով, սպառնալով չիրուխով) *Սուս, թե չե քեզ ել ապլկապ որը կգցեմ:*

ԳՅՈՒԼՃ.—*Ա՜հ, անիծվի քեզ նման մարդը:*

ՏԵՍԻԼ 9

Նաւչիճ Հայրապետ չեվ Սմբատ

ՀԱՅՐ.—(Գալիս է խորի դռնով: Հագնված ճ այնպես, ինչպես ինքը տարի առաջ: Ներացել է: Շեմուշկներն թողնում է դռան մոտ, գդակը վերցնում): *Վողորմի սատված:*

ԳՅՈՒԼՆ.— աստված ողորմի։

ԲԱՐԽ.—Խոով կենա ժամը քո գլխին։

ՀԱՅՐ.—(ապտեղով, մի հայլ ճեռ և գնում) Մարդ աստծու, կա
ղեցուց եմ գալիս։

ԲԱՐԽ.—Ցեսիրս Հնդստան դուրս կգա, վոտաբաց, գլխաբաց գ
նե դուռ վողորմություն կհավաքեմ, այս խայտառակ
թյունը չեմ տանիլ։

ՀԱՅՐ.—Բան ասա, բան հասկանամ, ինչ ես պատահ կինկա գ
անեծք կարդում (գդակը դնում է գլխին)։

ԲԱՐԽ.—Քաշիր տվիդ կապը, Հայրապետ, քաշիր ասում եմ ք
չե նրան էլ կսպանեմ, աղջկաս էլ, քեզ էլ, ինձ էլ։ Չեր
չե, վոր ինքը լրբացել է, հերիք չե, վոր այս լակոտին
փճացրել է (ցույց է տալիս Սմբատի վրա. վոր այդ վարկյան
գալիս է խոհի դռնով)։ Հիմա իմ անունն է քաղաքի բ
բանը կցկել։ Չե, չե, Հայրապետ, իմ նամուսը չի տանիլ
քանը։

ՄՄՐ.—(Դնում է ձախ կողմի դռնով այդ վարկյանին իսկ
Բարխուդարը մտնելիս է անում իրեն)։

ՏԵՍԻԼ 10

Նույնի, առանց Սմբատի

ՀԱՅՐ.—(Գյուլնազին) Ա՛ կնիկ, գոնե դու՛ս ասա, ինչ է պատա

ԳՅՈՒԼՆ.—((առանց նայելու Հայրապետին) Ի՞նչ դիտեմ, Սեյրան
յնկել եր մեր տունը։

ՀԱՅՐ.—Հենց այդ։

ԲԱՐԽ.—Աա՛ նվի, լեզուդ չի՛ զարում։ (Հայրապետին) Աչքովս տ
սա նրանց գրկված, համբուրվելիս։

ՀԱՅՐ.—Ա՛յ թե ինչ,

ՄՅՈՒՍ ՍԵՆՅԱԿԻՑ։ (մյուս սենյակից լսվում է Սուսանի ձ
ցնոցը)։

ԳՅՈՒԼՆ.—Քիչ տնքտնքա, տնքտնքդ, քիչ։ (գնում է աջ կող
դռնով)։

ՏԵՍԻԼ 11

Նույն առանց Գյուլնազի

ՀԱՅՐ.—Բաս չես դնամ նրա գլուխը շների բաժին դարձնեմ,
թեկուզ խանչալ քաշի ինձ վրա։ (դիմում է դեպի խոհի
դուռը)։

ԲԱՐԽ.—Սպասիր։

ՀԱՅՐ.—(կանգ է առնում)

ԲԱՐԽ.—Ցես դրա համար չեմ կանչել քեզ։ Ցեթե դու խրատող
հայր լինելիր, մինչև հիմա կխրատեիր։

ՀԱՅՐ.—Ինչ ես խրատել, քիչ եմ ծեծել։ Ել ճիպոտ չմնաց տանը
վոր վրեն կոտրած չլինեմ։ Վոր չխրատվեց, ինչ անեմ։ Դու
էլ ես ծեծել, կարողացար մարդ շինել։

ԲԱՐԽ.—Ականջ դիր։ (հուզմունքը զսպելով) Այս յերեկո բազարից
տուն եմ գալիս, մեր փողոցի անկյունում մի քանի ջահել
ջուհուլներ, հավաքված, լախկոթու են տալիս։ Մոտեցած
չմոտեցած՝ նրանցից մեկն ասում է, «դա չի՛ Սեյրանի հետ
պիչերներն իբենց։ Ծառի տակ պատչվող աղջկա հայրը»։
«Դա է», պատասխանում է մյուսը։ Լսում եմ թե չե՝ քիչ է
մնում խլքս գլխիցս թռչի։ Աչքերս արյուն են կոխում, ու
դում եմ յետ գառնալ, լրբերի գլուխները ջարդել, բայց մը
ածում եմ՝ նրանք ինչ մեղք ունեն, լսել են, խոսում են։
Անիծում եմ չար սաթայելին, ճանապարհս շարունակում։
(ձայնը ընդհատելով) Գալիս եմ տուն անիծածին խրատե
լու։ Ներս եմ մտնում։ Ո՛, Հայրապետ, թշնամիս չտեսնի աչն,
ինչ վոր յես տեսա։ Վորդիդ գրկել է աղջկաս, պաչում է։
Ուզում եմ բռնել լակոտիդ, վոտներիս տակ գցել, փախչում
է։ Աչքերս մթնում են, բռնում եմ աղջկաս թևից, տանում
մյուս սենյակ։ Դե լսիր ինչպես է տնքտնքում։

ՀՈՒՍՅ.—Անսիրտ ես, Բարխուդար, անսիրտ։

ԲԱՐԽ.—Ցեթե մայրը վրա չհասներ, չլսեր, ով գիտե
կարելի յեր ծեծելով սպանելի։

ՀՈՒՍՅ.—Կսպանելիր, կսպանելիր, յես քեզ ճանաչում եմ։

ԲԱՐԽ.—Ի՞նչ արած, ծեծել եմ, համ էլ խղճում եմ։

ՀՈՒՍՅ.—Այդպես չի կարելի, Բարխուդար, դու շատ խիստ ես, շատ։
Նրանք ուսարներ չեն, նշանածներ են։ Եսոր եզուց պիտի
պսակվեն։

ԲԱՐԽ.—(ծիծաղում է դառն հեգնությամբ) Հա, հա, հա... եղույց պիտի պատկվենս:

ՀԱՅՐ.—Ի՞նչու չես ծիծաղում, միթե այդպես չե:

ԲԱՐԽ.—Դու կտեսնես (բարձր ձայնով): Սմբաթա:

ՀԱՅՐ.—Ի՞նչ չես ուզում անել:

ԲԱՐԽ.—Կտեսնես. տառս իմ (ավելի բարձր) Սմբաթա...

ՏԵՍԻԼ 12

Նույն, Սմբաթ, հետո Գյուլնազ յեվ Մարիամ

ՄՄԲԱՏ.—(շտապով գալիս է ձախ կողմի դռնով) Համմե:

ԲԱՐԽ.—Բեր այստեղ մեր ավետարանը, կանչիր մորդ այստեղ:

ՄՄԲ.—(ներս է գնում նույն դռնով յեվ իսկույն վերադառնում է Գյուլնազի հետ, ձեռին ճշամաճ կազմով ավետարանը):

ՀԱՅՐ.—Ախլքս վոչինչ չի կարում:

ԲԱՐԽ.—Ցես չեմ թողնիլ, վոր մարդիկ ասեն, թե Բարխուդարի կոտրած ամանը կոտրողին ավից, վոր կոծկի:

ԳՅՈՒԼՆ.—(ներս մտնելով Սմբաթի յետեվից): Յերեխաս տաքությունն է, դառանցում է:

ԲԱՐԽ.—(Սմբաթին) Տուր ինձ այդ ավետարանը, գրիչդ բեր:

ՄՄԲ.—(Ավետարանը Բարխուդարին տալով, փոխրիկ խորշերի միջից վերցնում է յեվ բերում է մի կաղամաղ յեվ մի փետրյա գրիչ):

ՄՄՐ.—(գալիս է խորհի դռնով հուզված 9 տարվա մեջ շատ է ծեր Մազերը բոլորովին ճերմակել են: Գալիս է առանց չարուխ գլխին մի հասարակ շալ) Ի՞նչ է պատահել այս տանը: Ձեր լսեցի վոր..,

ԳՅՈՒԼՆ.—(ընդհատելով) Ա՛խ, Մարիամ բաջի, աշխարհը խավար է դարձել և մեր գլխին: Յեկ, յեկ, յերեխայիս մին ճար տես (Գնում է ձախ կողմի դռնով):

ՄՄՐ.—(գնում է Գյուլնազի յետեվից):

ՏԵՍԻԼ 13

Նույն, առանց Գյուլնազի յեվ Մարիամի

ԲԱՐԽ.—(Նստում է սնդուկներից մեկի վրա, գրիչը թաթախում է թանաքամանի մեջ) Վոր բերեղ և գրված այն անառակների մասին:

ՄՄԲ.—(ցույց է տալիս ավետարանի կազմի մեջ այն տեղը, ուր նշանակված Սուսանի յեվ Սեյրանի ճշանվելը) Ահա այստեղ:

ԲԱՐԽ.—անուն հոր և վորդո և հոգույն սրբո: (գրիչը հանդիսավոր բարձրացնում է): Ինձը տարի սրանից առաջ յես ուխտեցի իմ աղջկան քո վորդուն տալ, այսոր ինքս իմ ձեռքով ջնջում եմ իմ ուխտը: (ուզում է ջնջել):

ՀԱՅՐ.—(կրոնական սարսափով բռնելով Բարխուդարի ձեռքը) Կաց մարդ, մի անիր, աստված քեղ կպատժի:

ԲԱՐԽ.—Թող պատժի (հրելով Հայրապետին ջնջում է Սմբաթի գրածը, մի բանի ուղղամ գիծ քաշելով նրա վրա) Վերջացավ: Թող իմ պատասխանն յերկնքում լինի, յերեխ յես վառ բան արի:

ՀԱՅՐ.—(մեկուսի) Այս մարդը մեղ կործաններու յի: (Բարխուդարին) Ուրեմն՝ եղ աղջկանդ չես տալիս իմ վորդուն:

ԲԱՐԽ.—(ավետարանը Սմբաթին տալով, վեր է կենում) Վոչ յես աղջիկ ունեմ, վոչ դու վորդի:

ՄՄԲ.—(արտմտությամբ) Հայր,

ԲԱՐԽ.—(խիստ) Քո բանը չե:

ՀԱՅՐ.—Լավ մտածիր, ինչ արիր:

ԲԱՐԽ.—Ինչ վոր արի, արած է:

ՀԱՅՐ.—Իսկ մեր քառասուն տարվա բարեկամությունը:

ԲԱՐԽ.—Ցես եղույվանից կհրամայեմ, վոր չինեն պարիսպը մեր տանդի մեջ:

ՀԱՅՐ.—(նախատագրին խոնարհորդի հեզությամբ) Լավ, թող քո ասածը լինի:

ԲԱՐԽ.—Ցես իմ նամուսը բարեկամության համար ծախել չեմ կարող:

ՀԱՅՐ.—(գլուխը ետ դայլերն ուղղում է դեպի խորհի դուռը)

ՏԵՍԻԼ 14

Նույնի, Սեյրան, հետո Մարիամ յեվ Գյուլնազ

ՍԵՅՐ.—(շտապով գալիս է խորհի դռնով, հուզված, առանց գդակի) Սպասիր:

ՀԱՅՐ.—Պակասը դու եղիր (կանգ է առնում):

ՄՄԲ.—(խորը ընկերական կեցամբացիով) Ողջույն:

ՍԵՅՐ.—Սուս, յես եվ իմը պիտի ասեմ, հետո ինչ ուզում են, թող անեն:

ՀԱՅՐ.—(գայրացած) Դուրս կորիր այստեղից, դուրս ասում եմ:

ՍԵՅՐԱՆ.—Դու լուիր, դու լեզու չունես այդ մարդու մոտ (Բարխուդարին): Լսիր, ջառ ու ջանանամը դու էլ, քո բարեկամութիւնն էլ, պատիվն էլ նամուսն էլ: Ինձ համար այդ բոլորը Սուսանի մի յեղունգին չարժէնս: Դու ուզում ես խլել ինձանից: Չես կարող. սիրկինքը վկա չես կարող: Ձեզ քեզ կպատանես, այլ չեմ թողնիլ:

ԲԱՐԽ.—(ծաղրաբար) Մրթմրթ:

ՍԵՅՐ.—Ձես քեզ ասում եմ չեմ թողնիլ: Ո՞վ ես դու, ինչ իրավունքով ես ծեծում նրան: Ձես լսում եմ նրա ձայնը: Դա դան, ինչ ուզէք և արել նա, վոր տանջում ես: Նա իմ հարազատն է, ես նրա նշանածը: Ուզեցինք տեսնվել, տեսնվեցինք: Քեզ ինչ, կամ ձեզ ինչ: Ի՞նչ իրավունքով եք մէջ ընկնում, ինչ իրավունքով:

ԲԱՐԽ.—(Հայրապետին) Դուրս տար այդ անպատկառին, թե չ գլուխը չների կէրակուր կշինեմ: (ուզում է հարձակվել Սեյրանի վրա):

ՄՄԲ.—(Բարխուդարի բերից բաշելով) Համբերքր, թող տեսնենք ինչ է ասում:

ՏԵՍԻԼ 15

Նույնը, Մարիամ յեվ Գյուլնազ

ՄԱՐ.—(դուրս է գալիս ձախ կողմի դռնով այն վարկյանին, յերբ Բարխուդարը ուզում է հարձակվել Սեյրանի վրա) Ամեն տեսածդ, կարող է սպանել յերեխային:

ՍԵՅՐ.—Մի վախենար, մայր քո վորդուն սպանողը դեռ չի ծնվել: (Բարխուդարին) Ինչ ես ձայնդ գլխիդ գցում: Ո՞վ ես ուզում վախեցնել: Ել յես առաջվա յերեխան չեմ, ել քո դռոցներն ինձ համար յերկյուղալի չեն: Ջնջեցիր, հա ապտաբանի վրա արած ուխտդ: Այդ է քո աղնիվ խոսքը: Դրանդից չարժե նա: Մարիկ արեք այդ գոռոզին, դեռ յերեխ ունի նամուսի մասին էլ խոսելու:

ՀԱՅՐ.—(կատաղի) Սուս, սուս, անասուն, թե չե կատաղում եմ:

ԳՅՈՒԼՆ.—(գալիս է ձախ կողմի դռնով)

ԲԱՐԽ.—Անեծք քեզ, չար սաթայել, աչքերս արյուն է կտխում:

ՄՄԲ.—(հուզմունքից դողդողով մոտենում է Սեյրանին) Գնա, հետդ յերբ հետո յես քեզ հետ կխոսեմ:

ՍԵՅՐ.—Դուս մի խառնվիր, իմ բանը այդ մարդու հետ է: Դու յել ես տանջվում նրա ձեռքին, դու էլ դիտես նա ինչ պատան է:

ԲԱՐԽ.—Շուն, շան դավակ (հարձակվում է Սեյրանի վրա յեվ չիբուխով յերկու անգամ զարկում նրան):

ՄԱՐ.—Վայ ապահով (մոտենում Գյուլնազին յեվ գրկում նրան):

ՍԵՅՐ.—(ձեռը տանելով դեպի մեջքին կապած դաշույնը) Ձես քո փորոտիքը դուրս կածեմ, անիրավ:

ՀԱՅՐ.—(խելագարած) Ազա, հերիք է, ազա, ամոթ է, (բռնում է Սեյրանին յերկու ձեռներով, Գյուլն ընկնում է):

ՄԱՐ.—(աղերսական) Սեյրան, Սեյրան:

ՄՄԲ.—(կատաղում է) Դաշույնիդ ձեռ մի տալ, թե չե՝ յես էլ ուզեմ: (Ձեռը տանում է դեպի իր չուխայի տակ թաղցրած դաշույնը):

ԳՈՒԼՆ.—(բռնում է Սմբատի ձեռները յետեվից) Ձես քեզ չեմ թող նել խառնվելու, չեմ թողնիլ: Ինչ ուզում ես—թող անեն:

ՍԵՅՐ.—(ազատվելով Հայրապետի ձեռներից) Ձերկինքը վկա այդ վերջին պահիդ կփշրեմ, յեթե Սուսանը չլինեք: Բայց այդ հարվածը յես չեմ տանիլ, յեթե Սուսանին խլես ինձանից:

ԲԱՐԽ.—Ձես կտոր, կտոր կանեմ նրան, շներին կգցեմ, քեզ չեմ տալ:

ՍԵՅՐ.—Այդ կտեսնենք:

ՄՈՒՍ.—(ներսից տատապաճով) Մամա, մամա:

ԳՈՒԼՆ.—Գալիս եմ, անբախտ, գալիս եմ (օտապով գնում է ձախ):

ՍԵՅՐ.—Դա նրա ձայնն է, ով դիդե մեռնում է: Ձես ուզում եմ նրան տեսնենք: (դիմում է դեպի ձախ դուռը):

ԲԱՐԽ.—(կանգնում է ձախ դռան առաջ պատպաճողական դիրքում) Քո գերեզմանը կտեսնես նրան չեմ տեսնել:

ՍԵՅՐ.—(դաշույնը մերկացնելով) Դե, կեր. գազան:

ՄՄԲ.—(արագ մերկացնում է դաշույնը յեվ Սեյրանի դեմ կանգնում) Կանգ առ: Ձես քո կողմն եմ, բայց չեմ թողնիլ հորս սպանես:

ՄԱՐ.—(գլուխը արագ բաց անելով, չոքում է յերկուսի մեջ տեղ, մազերը ոտքերի առաջ) Ներկինքնք կարմիր արյունով ճերմակ մազերս:

ՍԵՅՐ.—(սարսափով նետ է կանգնում) Մայր. (դաշույնը գցում է գետնի մեջ):

(ատաղձագործ) Մարիամ բաջի (լուրյուն) Վեր կաց: (պա
ուլյը դնում է պատյանի մեջ):

ՀԱՅՐ.—*(այնքան ծփոթվել է, որ չգիտե ինչ անե. Ձեռները աչ*
դախ տարածելով, մերթ սրան է դիմում մերթ նրան):

ԲԱՐԽ.—*(լուրյուն. արձանի պես կանգնած է ձախ դռան առաջ*

ՄԱՐ.—*(վեր է կենում մազերը ժողովելով. Ճչչասպառ է, դողդո*
է անորոշ ինչյուներ է արթնում):

ԲԱՐԽ.—*(Հայրապետին ու Մարիամին) Տեսաք այդ բոլորը. կատա*
ցաք: Դի բարի ճանապարհ: Իմ տան դռները այսուհետև
ձեզ համար չեն բացվիլ (մի բանի քայլ առաջ է գալիս):

ՄՄԲ.—*Հայր, չես քեզ պաշտպանիլ, բայց քո արարմունքը պարտ*
պահել չեմ կարող: Սուսաննը Սեյրանի հարսնացուն է,
նրա հետ էլ պիտի պսակվի:

ԲԱՐԽ.—*(ուշադրություն չդարձնելով Մարիամի վրա: Հայրապետին*
յեվ Մարիամին սառը յեղանակով) Դուք դեռ այստեղ եք

ԳՅՈՒՂՆ.—*(յերեվում է ձախ կողմի դռան մեջ) Մի արա, մայր*
մի արա:

ԲԱՐԽ.—*Բարխուդարը իր թքածը լպղնելից չեն:*

ՀԱՅՐ.—*(գդակը հագնելից վերցնելով) Լավ, քո ասածը լինի: Բայց*
յերկինքը վկա, Բարխուդար, լավ բան չես անում (նուզվում
Մնաս բարով, Գյուլնազ բաջի, յես քեզանից շնորհակալ եմ
(Մարիամին խղճուկ ձայնով) Գնանք, ա կնիկ:

ՄԱՐ.—*(մազերը ծակելով) Գնանք:*

ՍԵՅՐ.—*Լսեցեք, յերդվում եմ իմ նամուսով, վոր Սուսաննը կ*
իմը կլինի կամ գերեզմանինը: (Աջակ բայլերով գնում է խոր
դռներով):

ՀԱՅՐ.—*(հետևում է Սեյրանին, ձեռները դեպի յերկինք բարձրաց*
րած):

ՄԱՐ.—*Թող ասածու դառաստանին մնա մեր ամենքի դառը (*
նում է Հայրապետի հետևից, աչքերը սրբելով):

ՄՄԲ.—*(նայում է Բարխուդարին դառը նանիմանությամբ):*

ՍՈՒՍ.—*(մյուս սենյակից տառապանքով) Մամա, մամա:*

ԳՅՈՒՂՆ.—*(հեկեկալով գնում է ձախ կողմի դռնով):*

ԲԱՐԽ.—*(պատռատում է չիբուխ ծխելով)*

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Ի Ց Ր

ԱՐԱՐՎԱԾ ՑԵՐԿՐՈՐԴ

Դուստամի բնակարանը: Հարսանիքի տեսարան

ՍՈՒՍԱՆԻ ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի շատ ընդարձակ սենյակ, կահավորված կես ասիական և կես յեվրոպական յեղանակով: Հատակը ծալը և ի ծալը ծածկված և թանձր պարսկական գորգերով: Դռների պատի խորքի մեջ, վոր տանում են դեպի դավիթ, դռներ աջ պատի մեջ, վոր տանում են բնակարանի մյուս սենյակները: Ցերկու նեղ ու յերկար ճաշի սեղանները, մեկն աջ, մյուսը ձախ պատի առջև: Ցերկուսն էլ ծածկված են կապույտ սփռոցներով, Ձախ պատի մեջ լուսամուտներ: Ոտնավորները արխալուղներով, առանց չուխայի, ևս չուստեր հագած, սեղանները պատրաստում են հարսանիքի խնճույքի համար, մերթ աջ կողմի դռներով, մերթ խորքի դռներով բերելով հարկավոր իրերը: Հետզհետե խորքի դռներով գալիս են հյուրերը, զինավորապես տեղական հագուստներով: Նրանք, վորոնք չմուշկներ ունեին հագած, թե կին և թե տղամարդիկ, խորքի դռների մոտ դրսում հանում են իրանց չմուշկները և դուլպաներով ներս մտնում: Կանայք ներս մտնելով, իրանց չարշաֆները վերցնում են, տղամարդիկ գդակները վերցնում են և տալիս աջ դռների մոտ կանգնած մի պատանու, վոր տանում և մյուս սենյակ: Ամենքը հագել են իրանց լավագույն զգեստները, տղամարդիկ մեծաքանակ արխալուղներ, կանայք թավշյա մինթաններ, բեհեզյա չադրաներ, արխալուղներ: Կանանց մեծամասնության մեծաքանակ չադրիների յեզրերը ու փեշերը զարդարված են վոսկե դրամներով: Մի քանի կանանց գլուխները զարդարած են վոսկե պսակներով (դիադեմ): Աբևելյան ճոխ շքեղություն, գույների առատություն: Հատակավոր կանայք յերեսաբաց են, յերիտասարդներից շատերը աքցոտած են իրանց յերեսները տղամարդկանցից:

ՏԵՍԻԼ 1.

Հյուրեր—կանայք

Ե. ՀՅՈՒՐ.—(Խորհի դռնեռով ներս մտնելով ուրիշ յերկու կանանց հետ, չարժվիլ վերցնում է, տալիս աջ կողմի դռնեռի մոտ կանգնած պատանուն) Բազդավոր ասողի տակ և ծնվիլ Գյուլնազի աղջիկը, ինչ ասեմ։

Բ. ՀՅՈՒՐ.—(աչելով նույնը, ինչ վոր առաջինը) Տես ինչ առուն ու տեղ և մտնելու, կես կուշա կես քաղցած մի դերձակի աղջիկ ու սեղանները։

Գ. ՀՅՈՒՐ.—(չարժվիլ գնոխարեն) Ես է գցած գլխին, Հագնված և նամեմատաբար հարուստ) Աղջիկն այնքան սիրուն և, վոր արժանի չի ավելի հարուստ առուն մտնելու։

Ա. ՀՅՈՒՐ.—Հոգեմ նրա սիրուն գլուխը։

Բ. ՀՅՈՒՐ.—Տափը մտնե լաստածը։

Ա. ՀՅՈՒՐ.—Լպստած լինի լավ և, լակլակած և։

Գ. ՀՅՈՒՐ.—(կօտամբանքով) Աղջի, քիչ բամբասեցիք, հերիք և։

Բ. ՀՅՈՒՐ.—Իակի լել բամբասանք չե. յերևում է, վոր դու կամ ու կուլա ծախող Հայրապետի տղա Սեյրանի մասին չե լսել։

Գ. ՀՅՈՒՐ.—Ինչ պիտի լսելի։

Ա. ՀՅՈՒՐ.—Աչխարհից բնկնաբար ևս։

Բ. ՀՅՈՒՐ.—Վոդջ քաղաքն և խոսում։

Գ. ՀՅՈՒՐ.—Ինչ և խոսում։

Ա. ՀՅՈՒՐ.—Վոր Սուսանը Սեյրանի հետ գնշերնեքը անցկացրել և։

Բ. ՀՅՈՒՐ.—Իրանց Թթի ծառի տակ։

Ա. ՀՅՈՒՐ.—Վոր սիրկ-բիրկ են արել. դրկվել են, պատչվել։

Բ. ՀՅՈՒՐ.—Վոր հայրը տեղն ու տեղը յերկուսին էլ բռնել և ու մի լավ գնքսել։

Ա. ՀՅՈՒՐ.—(աչ ու ձախ նայելով) Սուս, պատճառավոր և յերիկ

Ա. ՀՅՈՒՐ.—(ծեծկլտուքով) Վիժվել և։

Գ. ՀՅՈՒՐ.—(վրդովված) Հերիք և, հերիք։ Վոր վզովս թոկ գցեք, խեղդեք, այդ բանին չեմ հավասար։ Այն խոնարհ, պարկեշտ Գյուլնազի աղջիկը չեր կարող այդպիսի բաներ անել։

ՏԵՍԻԼ 2.

Նույնք յեվ Սաճամ

ՍԱՆԱՄ.—(Գալիս է աչ կողմի դռնեռով, մոտ նիստուց տարեկան գեղեցիկ առողջ ու գեղեցիկ կին է բարեհամբույր դեմքով։ Հագած

բավեյա մարենագույն մինքանա, վոր փեշերի յեզերքը զարդարված են բանգագին մատկով։ Մինքանայի տակից, սպիտակ մեսախյա շապիկի վրա, կապած է կարմիր գույնի մեսախյա գոտի, վոր ուրախությամբ ներս է։ Մազերը հինցյալած չեն, ուսերի ներսական են։ Ուրախ յեվ զվարթ) Համեցեք, համեցեք։ Բարով հազար բարի յեք յեկել։

Ա. ՀՅՈՒՐ.—(հանդուրվում է Սանամի հետ) Աչքդ լուս, ա կնիկ, աչքդ լուս։ Ինչ աղջիկ ուզեցիր, ինչ աղջիկ, հրեշտակ է. խելոք, պարկեշտ։ (ոչխարների գրպանից դուրս է բերում մի մեծ ճուռ վոսկե բղոյով ծածկած, վրեն մեխակներ ցցած յեվ տալիս է Սանամին)։

Բ. ՀՅՈՒՐ.—(Համբուրվելով Սանամի հետ) Վոդջ քաղաքն և գովում հարսնացվիդ, ասում են նմանը չկա։

(տալիս է Սանամին ծխախոտի մեծ տուփի չափ մի կանճես)։

Գ. ՀՅՈՒՐ.—(վրդովված մեկուսի) Քեր աչքը դուրս գա (Համբուրվում է Սանամի հետ, վոչինչ չի տալիս) ասելած ասա, վոր յերկուսն էլ բաղդավոր լինեն, ինչ ասեմ։ (Խնդույն հեռանում յեվ խառնվում է մյուս հյուրերին)։

Ա. ՀՅՈՒՐ.—(յերրորդ հյուրի հասցեին) Շնորքդ կտրվի, մի մեխակ էլ բնբենյիր աչքալուսի համար։

Բ. ՀՅՈՒՐ.—Յերևում է, վոր չար մարքով է յեկել։

ՍԱՆԱՄ.—Աղքատ կնիկ է, չունեն, ինչ բերեր։ (մի յերիտասարդ կնոջ, վոր ոգնում է սեղան պատրաստողներին)։ Աղջի, Զավահիբ, ասա նուռն ու կանֆետը տաք մյուս սենյակը։

ՅԵՐԱՇԻՇՏՆԵՐ.—(չորս հոգով գալիս են խորհի դռնեռով յեվ առանց գրակներր վերցնելու, խոնարհ գլուխ են տալիս Սանամին, մի անկյունում նստում յեվ սկսում են լարել իրանց գործիքները)։

ՍԱՆԱՄ.—(մոտենում է խորհի դռնեռին, յեկող հյուրերին բնդունելու համար, վոտանց հետ համբուրվում է, ցվերներն բնդունելով)։

ՀՅՈՒՐԵՐ.—(տալիս են Սանամին, բացի հաղցրավենիքներից, արծաթյա բաժակներ, գդալներ, ամարամաններ յեվ այլն)։

ԴՐՍԻՑ.—(ամա հետից լսվում է զուռնայի ձայն, վոր հետզհետե մոտենում է)։

ՀՅՈՒՐԵՐ.—Գալիս են, գալիս են։

ՍԱՆԱՄ.—(հյուրերին) Տեղ բաց արեք։

ՀՅՈՒՐԵՐ.—(կանգնում են աչ ու ձախ յերկու շարեռով)։

ՏԵՍԻԼ 3.

Նույնի յեվ Աղաբեգ

ԱՂԱՔԵՑ.—(Մի յերիտասարդ՝ արխալուղով, չուխայով, յեվրոպական կոշիկներով, ձերս ե վազում խորի դռներով գուցաս, ճեխալով) Ահ, նամարդներ, ինչպես փախան։

ՍԱՆԱՄ.—(վախեցած) Ի՞նչ ե պատահել։

ՀՅՈՒՐԵՐ.—(շրջապատելով Աղաբեգին)։ Ի՞նչ ե պատահել, ի՞նչ ե պատահել։

ԱՂԱՔ.—(ճնշապատառ) Թշնամի մարդիկ հարսանիքը ուզում եյին փչացնել։

ՀՅՈՒՐԵՐ.—Ովքեր եյին, ովքե՞ր։

ԱՂԱՔ.—Չճանաչեցինք։ Լսեցինք ինչպես պատահեց։ Հարսանիքը ժամից դուրս յեկավ, ճանապարհ ընկավ ալսաեղ։ Գյոզլանցի անին հասած չհասած՝ հանկարծ մեզ վրա սկսեցին քարեր թափվել։ Մի մեծ քար գիպավ Ջահ ամնոփ Թևին, Ջահը նրա ձեռից ընկավ, հանգավ։ Մենք ճեացինք խավարի մեջ։ Միայն Թագավոր-Թագուհու մոմերն եյին լուսավորում բարձրացավ հառայ հուռայ։ Մենք չվարվեցինք։ Կանայք վար նասուն բարձրացրին։

ՍԱՆԱՄ.—(աճիապաբեր) Հետո՞։ հետո՞։

ԱՂԱՔ.—(տակավին հեվալով) Ռուստամը գոռաց։ «Ադա, Ջահը վառեցեք»։ Դղուլ Մաթոսը Ջահը վառեց, ինչ տեսանք, մոտասը-տասներկու Ջահել տղերք վայտերով և խանչալներով գալիս են մեզ վրա։

Գ. ՀՅՈՒՐ.—Թուրքե՞ր։

ԱՂԱՔ.—Հայե՞ր։ Նրանք հայերեն եյին հայհոյում։ Ռուստամը մի ձեռքով գրկեց նորահարսին, մյուսով խլեց խաչեղբոր Թուրը և ասլանի պես գոռաց «ով վոր նամարդ չե, Թող առաջ գա»։ Մերոնք սիրտ առան։ Ջուխանները հանեցին, Թևներին փաթաթեցին, վազեցին չորս Մնացորդների չափառներից մի մի վայտ գուրս բերեցին։ Մի քանիսն ել խանչալներ ունեյին։ Սկսեցինք կռվել։

ՍԱՆԱՄ.—Վաղորմած ասլաված։

ԱՂԱՔ.—Նամարդները յերկար չդիմացան։ Սկսեցին մեկ-մեկ փախչել։ Վերջը մեջ տեղ ճեաց մնկը վազից մինչև գուխը կսկսթաթաթա։

ՍԱՆԱՄ.—Ո՞վ ե՞ր, ախ ասլաված, ով ե՞ր։

ԱՂԱՔ.—Չճանաչեցինք։

ՀՅՈՒՐԵՐԻՑ ՎՈՄԱՆԵ.—(իրարու ճօսնցեր են ուռու, բե ճանաչում են)։

ԱՂԱՔ.—Նա գոռում եր իր ընկերների վրա։ «Ես, բենամուս ընկերներ, վերտեղ եք փախչում, կանգ առեք»։ Բայց վոչ-վոք կերդներ, վեր նրան։ Փախան։ Նամարդը սկսեց հայհոյել Ռուստամին, նորահարսի ծնողներին։ Հարբած եր այնպես, վոր վոտքի վրա կանգնել չեր կարողանում։ (Ջուռնայի ձայնը մոտենում ե)։

ՍԱՆԱՄ.—(յերկու ձեռները ծնկներին գարկելով) Վայ ինձ, ուրախ որս սնացրին։

ՀՅՈՒՐԵՐ.—Հարսանիքը գալիս ե, գալիս ե, (իրարացնում)։

ԱՂԱՔ.—Իսկի մի վախենաք, Սանամ խանում, իսկի մի վախենաք, վոչ վոքի գլխի մազին ձեաս չի հասնի։ Հարսանիքը գալիս ե ուրախ-ուրախ, գնանք առաջ (գնում ե խորի դռներով)։

ՀՅՈՒՐԵՐ.—(ճանապարհ են բաց անում յեկողների համար)։

ՍԱՆԱՄ.—(ծտապով գնում ե խորի դռներով)։

ՏԵՍԻԼ 4.

Նույնե, Ռուստամ, Սուսան, Սուսամբար, Շպպանիկ, խաչեղբայր, հաճացա, տիրացուներ, ևոր հյուրեր յեվ այլն։

ՇՊՊ.—(ներս ե գալիս խորի դռներից ամենից առաջ։ Բարձրահասակ չոր-չոր կազմվածքով կին ե հառասուն տարեկան։ Հագած ե կապույտ զոտի, վոտերին հագած են սեվ չուստեր։ Գլխին կապած ե հասարակ ճուրխի յեվ բոռ։ Ձեվերը համարձակ են, շարժումներն ազատ, վոչ վոքից չի ամաչում։ Ցերեժիօցներին)։ Պատրաստվեցեք։

ՀՅՈՒՐԵՐ.—Հենց վոր ներս մտնեն հուռա կանչենք (Ջուռնի ձայնը ընդհատվում ե։ Հաճացան յեվ տիրացուները յերգում են հարսանիքի շարականը)։

ՇՊՊ.—Ճանապարհ բաց արեք Թագավոր Թագուհու համար։ Ռըբախացեք, ալ Ջամահաթ, ուրախացեք, գալիս են։

ՌՈՒՍՏ.—(Գալիս ե խորի դռներով Սուսանի հետ։ Բարձրահասակ, հաղթանդամ տղամարդ ե, վոչ ավել քան չորեսունհնգերկու տարեկան։ Ցերեսը սափրած ե, դեմքը յուրջ, մի քիչ մռայլ

աչքերը խորը թաղված, ունքերը թավ։ Հագած է մեծամոլ ծաղկազարդ արխալուղ, վորի յեզրերը կրծքի վրա զարդարված են վոսկեքելով (բաճքա)։ Սեվ չուխա յերկար, տերևվածել բերով, վոսկեքիլ ծոպերով։ Կոշիկները յեվրոպական են։ Դրխաբաց է։ Գլխակը կրում է հանգիստահանցներից մեկը։ Կրծքին խաչածեվ կապած է րոս ճիճ սովորության կանայ կարմիր ժապավեններ։ Մի ձեռքին մի հաստ վարած մոմ, մյուսը կրծքին դրած)։

ՍՈՒՍ.—(Գալիս է Ռուսաստի հետ։ Հագած է բեհեզյա չյոփոյան, մեծամոլ կարմիր տապիկի յեզրերը վոսկե դրամներով զարդարված, վարդագույն արլասյա վարտիկ։ Փաթաթված է շարսաղի մեջ, յերեսը ծածկված է սպիտակ նուրբ յեվ ցանցաձողարով)։

ՍՈՒՍԱՄԲ.—(Ներս է մտնում Սուսանի յեհեվից նույնպես փաթաթված չարսովի մեջ, միայն յերեսը բաց է։ Ամբողջ ժամանակ ձեռքալով հսկացնում է Սուսանիկին, բե ինչ պիտի անել յեվ առհասարակ դեկավարում է նրան։ Նա իմիք նոր է ամուսնացել յեվ գիտե ձեվերը)։

ԽԱՉԵՂԲ.—(Մի յերիտասարդ, հոգնիստավոր հագնված, գալիս է անմիջապես Սուսանբարի յեհեվից։ Վ.զոլը հաս է արած մի յերկայն բուր արծաթյա պատյանով։ Մի ձեռքում բռնած է մի մեծ մոմ, մյուսում իր գդակը, վոր ներս մտնելով, անմիջապես տալիս է վոսկեվորներից մեկին։ Իսկույն յեվ յեր բուրը մերկացնում է յեվ բռնում դռների գլխին, վորպեսզի նորապսակները նրա տակովն անցնեն)։

ՍՄԲ.—(Ներս է մտնում խաչեղբորից յեվ Սուսանբարից հետո Սահմի հետ միաժամանակ։ Հագած է արլասի արխալուղ, նոր չուխա։ Վոտներին յեվրոպական նոր կոշիկներ։ Գդակը ձեռքում է)։

ՇՈՂ.—(Սեղանի վրայից վերցնում է ճիրագարակ ափսե յեվ դնում Ռուսաստի վոտների տակ)։

ՌՈՒՍՏ.—(Սուսանի հետ բրի տակով անցնելով, վոտով զարկում է յեվ ափսեն փշրում)։

ԱՄԵՆԲՂ.—*Ասված չհորհավոր անե։*

ՇՈՂ.—*Հուռռա։*

ԱՄԵՆԲՂ.—*Հուռռա, հավ, հավ հուռռա։*

ՔԱՀԱՆ. ՑԵՎ ՏԻՐԱՑ.—*Շարականը ընդհատվել էնե։* (Ներս գալով զգեստները ճանում են յեվ խառնվում հյուրերին)։

ՇՈՂ.—(յերաժիշտներին) *Շախշախի ածեցեք։* (Հանդիսականներին) *Տեղ բաց արեք ինձ համար։*

ՅԵՐԱԺԻՇՏՆԵՐ.—(Նվագում են)։

ՀՅՈՒՐԵՐ.—(Ծափ են տալիս)։

ՇՈՂ.—(Սեղանի վրայից վերցնում է մի ափսե յեվ գլխի վրա բռնելով, պարում է) *Շորոշ, այ շորոշ։ Տվողին ասված տա, չտվողին ինքը վողորմի։ Շորոշ, այ շորոշ, Բոյիդ մատաղ, Ռուստամ ապա, տես ինչ հարս եմ բերել քեզ համար, շորոշ, ալ շորոշ, ալ շորոշ։ Ցերեկը որ, յերեկը գիշեր կհամբերես, կտեսնես, թե չհավանես, ինձ կխեղդես։ Շորոշ, այ շորոշ։ Տվեք, այ Ջամահաթ, յես ձերն եմ, դուք իմը։ Շորոշ, այ շորոշ։ Սուսան խանում, դուխթա պղպալի, թաղլան զուշ, Ջինը Ջավահիր։ Շորոշ, այ շորոշ։ Ռուստամն է Ռուստամ զալ, Ջահիլ Ջիվան, բայը չինաբ, ինքը ասլան, ասլան բալասի, Նամուս զրկաթով, փառք ու պատվով։ Շորոշ, այ շորոշ։ Տվեք, տվեք։ Սուսանն է մարալի պես, խանում-խաթուն, Տվեք, տվեք։ Սուսանն է մարալի պես, խանում-խաթուն, Խեղք ունի ծովի պես, սիրտ ունե վոսկի չե, հոգ ու մաղաք, բիլ ու բուլբուլ։ Շորոշ այ շորոշ։* (Ընթոց բառը արտասանում է ամեն անգամ, յերբ ներկա յեղողները դրամ են գցում ճոռ ափսեի մեջ յեվ, միյեվնույն ժամանակ շարունակ պարում է)։

ՌՈՒՍՏ.—(Մի վոսկե դրամ է գցում Շապանիկի ափսեի մեջ)։

ՍՈՒՍ.—(Յերեք ռուբլիանոց դրպադրամ է գցում ափսեի մեջ)։

ՍԱՆԱՄ.—(Մի բղպադրամ է գցում)։

ՍՄԲ.—(Մի հանի արծաթե դրամներ է գցում)։

ԽԱՉԵՂԲ.—(Մի բղպադրամ ե գցում)։

ՀՅՈՒՐԵՐԻՑ ՎՈՄԱՆԲ.—(զանազան դրամներ են գցում)։

ՇՈՂ.—(դրամներն ժողովելով, դադարում է պարել յեվ ժողովածը դնում է գրպանը, յերաժիշտներին ծաղրական նշան անելով)։

ՍԱՆԱՄ.—(յերաժիշտներին) *Բաղդադի ածեցեք* (սկսում է պարել ծանր ու հանդիսավոր յեղանակով)։

ՍՄԲ.—(պարում է Սանամից հետո)։

ՀՅՈՒՐԵՐ.—(զանազան բղպադրամներ բրջում են յեվ կպցնում պարողների ճակատին)։

ՊԱՐՈՂ.—(Բացի Շապանիկիից, ժողոված փողերը տալիս են յերաժիշտներին)։

ՍԱՆԱՄ—(դադարելով պարել, համբուրում է նորապսակներին)։ *Շնորհավոր, այ վորդիներ, ասածու ձեռը ձեզանից անպա-*

կաս լինի։ Բազդավոր լինենք, մի բարձի ծերանանք, ծիլ ծաղկիք, պտուղներ տաք, ես էլ տեսնեմ, փառավորվեմ։

ՀՅՈՒՐ.—Ամեն, ամեն։

ՍՈՒՍ.
ՌՈՒՍՏ. } (Համբուրում են Սաճատի ձեռքը)։

ՍԱՆԱՄ.—Դե, համեցեք, նստեցեք, կանայք այս կողմ, տղամարդիկ այն կողմ։

ՅԵՐԱԺԻՇՏ.—(մի առ ժամանակ դադարում են, յետո սկսում են նվագել զանազան յեղանակներ. միայն հանդարտ)։

ՀՅՈՒՐԵՐ.—(նստում են՝ կանայք ձախ, տղամարդիկ աջ կողմի սենդանների հով։ Մեծամասնությունը գուլպաներով է յեվ չգիտե սեղանի հով նստելու ձեվը, ինչպես յեվ դանակ պատառաքաղ գործ ածելը, ուստի պատահում են ծիծաղելի սխալներ։ Փոխրամասնությունը յեվրոպական կոշիկներով է։ Կանանցից յերկուսը բաուկրավով են, մեկը նագնված է յեվրոպական տարազով։ Տղամարդանց մեջ յեվս կաց յեվրոպական տարազով նագնվածներ, կաց յերկու յերեք փորիկ չինովնիկներ կոճակներով։ Սրանք իրանց նպատ են պահում)։

ՍՈՒՍ.—(Սուսամբարի բերադրությամբ վերցնում է չարովը յեվ նստում յերեսոդով սեղանի գլխում, ափանսեների կողմը)։

ՍՈՒՍԱՄԲ.—(տեզավորվում է Սուսանի մոտ, նույնպես չարովը վերցնելով)։

ՌՈՒՍՏ.—(մոմը հանգցրել է, տվել վոսնավորներից մեկին յեվ կարգադրություններ է անում, մերթ նստելով սեղանի գլուխը, ափանսեների կողմ, մերթ վեր կենալով)։

ՍԱՆԱՄ.—(մեծ մասամբ վոտքի վրա յե, իսկ նստում է Սուսանի դեմ)։

ՅԵՐԱԺԻՇՏ.—(մերթ դադարում են, մերթ նվագում)

ՎՈՍՆԱՎՈՐ.—(խորի դռներից կերակուրներ են բերում ու բաժանում, կերակուրները յերեք տեսակ են. նախ տալիս են տապակած գառը, ապա խնձորի դոլմա յեվ վերջը փլավ, հետո տանձ ու խնձոր)։

ՌՈՒՍՏ.—(հուզված ձայնով խոչեղբորը) Ջհմացանք ովքեր են։

ՀԱՋԵՂԲ.—(վոր նստած է Ռոստոմի մոտ) Ջհանուչկին։

ՌՈՒՍՏ.—Այս քաղաքում յես ճշնամիներ չունեմ։ Տասնևյոթ տարի յե՛ս հետաքրքիր եմ Դարստան։

ՀԱՋԵՂԲ.—Լավ, հանգստացիր, մենք կիմանանք ովքեր ելին այդ երեքը և մի լավ կպատժենք։

ՌՈՒՍՏ.—(կատաղությունը ճգիվ զսպելով) Ղարա Ռուստամի վրա հարձակվել, այն էլ այսօրվա օրը։ Իմ պատվին դիպչողի գլուխը ուսերի վրա չեմ թողնիլ

ՀԱՋԵՂԲ.—Աչքունքդ բաց արա, հյուրերդ քեզ են նայում։

ՌՈՒՍՏ.—(զսպելով իրան վոտքի յե կանգնում, բարձր ձայնով) Բարեկամներ, յեթե ինձ մադի չափ սիրում եք կամ պատվում, պետք է այս յերեկո մի լավ քեֆ անեք,

ՀՅՈՒՐԵՐ.—Քեֆ, քեֆ, հափ հափ հուռռա։

ՀԱՋԵՂԲ.—Թամադա ջոկեցեք, թամադա։

ՀՅՈՒՐԵՐ.—Սերգեյ բեգը, Սերգեյ բեգը։ Պրոսիմ, պրոսիմ։

ՍԵՐԳԵՅ ԲԵԳ.—(փոքրահասակ տղամարդ է հագած պատոնեայի կոճակավոր բանկոն, տակից արխալուղ։ Վեր է կենում տեղից ճագ ու բազով) Ղասապատա, ինձ նեբեցեք, այսոր մի քիչ քեֆս լավ չի։

ՀՅՈՒՐ.—Անդրում ենք, խնդրում ենք։

ՍԵՐԳԵՅ ԲԵԳ.—(կոտրատվելով) Խնայեցեք։

ՀՅՈՒՐ.—Չի կարելի, չի կարելի կենացդ, հուռռա։

ՌՈՒՍՏ.—Սերգեյ-բեգ, յեթե ինձ սիրում ես։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—(իբր թե ակամա համաձայնելով) Դե, ինչ արած, ազա Ռուստամի խնդիրը չեմ կարող չկատարել։ (բաժակը բարձրացնելով աջ ու ձախ գլուխ է տալիս) Շնորհակալ եմ, շնորհակալ եմ (նստում է)։

ՍՈՒՍ.—(յուզված յերեսոդի տակից) Նա եր, նա ինքը։ Յես ձայնից ճանաչեցի։ Ա՜հ, խեղճ տղա։

ՍՈՒՍԱՄԲ.—Դու նրան դեռ խղճում ես։ Խեղճ մարդն այդ խայտառակ բանը չեր անիլ։

ՍՈՒՍԱՆ.—Նա անբաղդ է, Սուսամբար, շատ անբաղդ։

ՍՈՒՍԱՄԲ.—Ինչքա՜ն չես ասում, վոր լակած եր, վոտքի վրա կանգնել չեր կարողանում։

ՍՈՒՍԱՆ.—Հենց անբաղդությունից է հարբում։ Ախ, Սուսամբար, այս քողն ինձ խեղդում է։ Ուզում եմ պատռել, դեն գցել։

ՍՈՒՍԱՄԲ.—Հիմար հիմար մի խոսիր։ Կանցնի, կմոռացվի, և դու բազդավոր կլինես Ռուստամի հետ։ Տես ինչ տղամարդ է, նմանը չկա այդքան մարդկանց մեջ։

ՍՈՒՍԱՆ.—Յես նրան էլ եմ խղճում։ Ախ, ինչքա՜ն յուր չհանել ջիվան կյանքը կապեց ինձ նման մի անբաղդի հետ։ Տեր, ուրախ ինձ ուժ դիմանալու։ (աչերը սրբում է ծոպի տակ)։

կաս լինի։ Հապշտապ լինենք, մի բաթի ծերանաք, ծլիք ծաղկիք, պտուղներ տաք, յես եւ տեսնեմ, փառավորվեմ։

ՀՅՈՒՐ.—Ամեն, ամեն։

ՍՈՒՍ.
ՌՈՒՍՏ. } (Համբուրում են Սաճառի ձեռքը)։

ՍԱՆԱՄ.—Դե, համեցեք, նստեցեք, կանայք այս կողմ, տղամարդիկ այն կողմ։

ՑԵՐԱԺԻՇՏ.—(մի առ ժամանակ դադարում են, յետո սկսում են նվագել զանազան յեղանակներ. միայն հանդարտ)։

ՀՅՈՒՐԵՐ.—(նստում են՝ կանայք ձախ, տղամարդիկ աջ կողմի սեղանների հով։ Մեծամասնությունը գուլպաներով է յեվ չգիտե սեղանի հով նստելու ձեվը, ինչպես յեվ դանակ պատառաքաղ գործ ածելը, ուստի պատահում են ծիծաղելի սխալներ։ Փորձառությունը յեվրոպական կոշիկներով է։ Կանանցից յերկուսը բառակիրավով են, մեկը հագնված է յեվրոպական տարազով։ Տղամարդանց մեջ յեվս կան յեվրոպական տարազով հագնվածներ։ կան յերկու յերեք փորիկ չինովնիկներ կոճակներով։ Սուրճ իրանց հպարտ են պահում)։

ՍՈՒՍ.—(Սուրճարքի բերդությամբ վերցնում է չարոխը յեվ նստում յերեսով սեղանի գլխում, ավանտանի կողմը)։

ՍՈՒՍԱՄԲ.—(տեղավորվում է Սուսանի մոտ, նույնպես չարոխը վերցնելով)։

ՌՈՒՍՏ.—(մոմը հանգցրել է, տվել վոսկավորներից մեկին։ Յեվ կարգադրություններ է անում, մերթ նստելով սեղանի գլուխը, ավանտանի կողմ, մերթ վեր կենալով)։

ՍԱՆԱՄ.—(մեծ մասամբ վոտի վրա յի, իսկ նստում է Սուսանի դեմ)։

ՑԵՐԱԺԻՇՏ.—(մերթ դադարում են, մերթ նվագում)

ՎՈՍՆԱՎՈՐ.—(խորի դռներից կերակուրներ են բերում ու բաժանում, կերակուրները յերեք տեսակ են. նախ տալիս են տապակած գառը, ապա խնձորի դոլմա յեվ վերջը փլավ, հետո տանձ ու խնձոր։

ՌՈՒՍՏ.—(նույնպես ձայնով խաչեղբորը) Ջիմաքաթր ովքեր են։

ԽԱՉԵՂԲ.—(վոր նստած է Ռոստոմի մոտ) Ջհանդանչեցի։

ՌՈՒՍՏ.—Ախ քաղաքում յես Թշնամիներ չունեմ։ Տասնևյոթ տարվ յի հնազանդ եմ Դադաշեան։

ԽԱՉԵՂԲ.—Լավ, հանդստացիք, մենք կիմանանք ովքիր եկին այդ երեքը և մի լավ կպատժենք։

ՌՈՒՍՏ.—(կատաղությունը ճգիվ գսպելով) Ղաբա Ռուստամի վրա հարձակվել, այն էլ այսորվա որը։ Իմ պատվին դիպչողի գլուխը ուսերի վրա չեմ թողնիլ

ԽԱՉԵՂԲ.—Աչքունքդ բաց արա, հյուրերդ քեզ են նայում։

ՌՈՒՍՏ.—(զսպելով իրան վոտի յի կանգնում, բարձր ձայնով) Բարեկամներ, չեքն ինձ մազի չափ սիրում եք կամ պատվում, պետք է այս չերեկո մի լավ քեֆ անենք,

ՀՅՈՒՐԵՐ.—Բեհ, քեհ, հափ հափ հուռռա։

ԽԱՉԵՂԲ.—Թամադա ջոկեցեք, թամադա։

ՀՅՈՒՐԵՐ.—Սերդեյ բեզը, Սերգեյ բեզը։ Պրոսիմ, պրոսիմ։

ՍԵՐԳԵՑ ԲԵԳ.—(փորհաճասակ տղամարդ է հագած պատռոնեայի կոճակավոր բանկոն, տակից արխալուղ։ Վեր է կենում տեղից գազ ու բազով) Ղասպադա, ինձ ներեցեք, այսոր մի քիչ քեֆս լավ չի։

ՀՅՈՒՐ.—Ախդրում ենք, խնդրում ենք։

ՍԵՐԳԵՑ ԲԵԳ.—(կոտրատվելով) Խնայեցեք։

ՀՅՈՒՐ.—Չի կարելի, չի կարելի կենացդ, հուռռա։

ՌՈՒՍՏ.—Սերդեյ-բեգ, չեքն ինձ սիրում եսւ

ՍԵՐԳ. ԲԵԳ.—(իբր թե ակամա համաձայնելով) Դե, ինչ արած, ազա Ռուստամի խնդիրը չեմ կարող չկատարել։ (բաժակը բարձրացնելով աջ ու ձախ գլուխ է տալիս) Շնորհակալ եմ, շնորհակալ եմ (նստում է)։

ՍՈՒՍ.—(յուզված յերեսորի տակից) Նա եր, նա ինքը։ Յես ձայնից ճանաչեցի։ Ա՜հ, խեղճ ազա։

ՍՈՒՍԱՄԲ.—Դու նրան դեռ խղճում եսւ Ախզմ մարդն այդ խայտառակ բանը չեր անիլ։

ՍՈՒՍԱՆ.—Նա անբաղդ է, Սուսամբար, շատ անբաղդ։

ՍՈՒՍԱՄԲ.—Ինչու՞ չես ասում, վոր լակած եր, վոտքի վրա կանգնել չեր կարողանում։

ՍՈՒՍԱՆ.—Հենց անբաղդությունից է հարբում։ Ախ, Սուսամբար, այս քողն ինձ խեղդում է։ Ուզում եմ պատռել, դեն գցել։

ՍՈՒՍԱՄԲ.—Հիմար հիմար մի խոսիր։ Կանցնի, կմոռացվի, և դու բաղդավոր կլինես Ռուստամի հետ։ Տես ինչ ազամարդ է, նմանը չկա այդքան մարդկանց մեջ։

ՍՈՒՍԱՆ.—Յես նրան էլ եմ խղճում։ Ախ, ինչու՞ չուր ջանել ջիվան կյանքը կապել ինձ նման մի անբաղդի հետ։ Տեր, ուզիր ինձ ուժ դիմանալու։ (աչքերը սրբում է ծոպի տակ)։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—(վոտի յե կանգնում, աճձեռոցիկը կոծիից կապած, լիճ բաժակը բարձրացնելով) Որչէլ կամպանիա, լանցնք։

ՀՅՈՒՐ.—Հրամայիր, հրամայիր, ազա Թամադա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Բաժակներդ լիք-լիք անանեմ։

ՀՅՈՒՐԵՐ.—(զլարճանում են, օտապում են իրենց բաժակները լցնել) Պատրաստ ենք, պատրաստ ենք։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Աչեղբայր, ալլահվերզին։

ԽԱՉԵՂԲ.—Խոսքդ շաքարով։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Ամենք Թագավոր Թագուհու կենացը։ Ազա հափ, հափ, հափ ուռա։

ՀՅՈՒՐԵՐ.—Հափ, հափ, հափ ուռա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Հուռա։

ՀՅՈՒՐԵՐ.—Հուռա, Թագավոր Թագուհու կենացը (շաները մոտեցնում են Ռուսստամին)։

ՌՈՒՍՏ.—(վոտի յե կանգնում յեվ աջ ու ձախ պուխ տալիս)։

ՍՈՒՍԱՆ.—(Վոտի յե կանգնում Սուսամբարի թելադրությամբ յեվ պուխ տալիս կանացց)։

ՍԵՐԳ.—(յերամիջոցներին, նրանալոզաբար, իր ձեռը կողիից կոբցած) Ազա, մի չարդահ ածնցնք։

ՌՈՒՍՏ.—(միջոց մտապրաղ) Մինչև վոր չիճանամ ովքեր եյին և ինչու հարձակվեցին, չեմ հանգստանալ։

ԽԱՉԵՂԲ.—Փորոցի լակոտները եյին, քո արևը վկա։ Հարբած չան որի եյին։

ՌՈՒՍՏ.—Ցնս հանգիստ մարդ եմ։ վոչ վոքի ձլաս չեմ տալիս։ Բայց յերբ ուզում են ինձ անպատվել, մտանում եմ ամեն բան, մինչև անգամ հարբազատ մորս չեմ խնայիլ։

ԽԱՉԵՂԲ.—Հանգստացիր, Ռուստամ, հանգստացիր, ի սեր աստծու։ Հյուրերը կարող են ախրել։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—(վոտի կանգնելով) Ազա Ռուստամ։

ՌՈՒՍՏ.—(սրտփիլով) Հրամայիր, ազա Թամադա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Ալլահվերզին քեզ մոտ։

ՌՈՒՍՏ.—Ծատա յեմ։

ՍԵՐԳ.—Աչեղբոր կենացը։

ԽԱՉ.—(բաժակը ձեռից վոտի յե կանգնում յեվ աջ ու ձախ գլուխ տալիս, բաժակը գարկելով Ռուսստամի բաժակին)։

ՅԵՐԱԺԻՇՏ.—(ամեն մի կենաց խմելիս տուբ են նվագում)։

ՍՈՒՍԱՆ.—(Սուսամբարին) Աչքիցս չի հեռանում նրա ձեռքի բանքը։

ՍՈՒՍԱՄԲ.—Կհեռանա, կմոռանա։ Յեթե յես լինեյի քո տեղը, այսուհետև նրա անունն էլ կմոռանայի։ Մարդ քանի գնում, այնքան դուբ և գալիս ինձ։ Իսկական ոդամարդ եր

ՍՈՒՍԱՆ.—Ձեմ կարող սիրել նրան, չեմ կարող։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Դասպատ, ալլահվերզին ինձ մոտ։ Թագավոր Թագուհու ծնողների կենացը։ Հուռա, Սանամ խանում (մոտենում է յեվ բաժակը գարկում)։

ՀՅՈՒՐ.—Հուռա, հուռա (շաները մոտենում են յեվ բաժակ գարկում Սանամի հետ) Աչքդ լույս, աչքդ լույս։

ՍԱՆԱՄ.—(վոտի կանգնելով, աջ ու ձախ օճորհակալություն է անում)։

ՍՈՒՍԱՄԲ.—(Սուսանիկը) Քիչ լաց յեղիր. բավական է կանչանին, ամոթ է։

ՍՈՒՍԱՆ.—Աստված, աստված, ինչքա՜ն ես տեղծել կնիկ ասված արարած։ Շունը, կատուն ավելի բաղդավոր են քան նա։

ՍՈՒՍԱՄԲ.—Քիչ խոսիր, մենք վոր չիմենայինք, ոդամարդին մյանց չեյին ուտիլ։ Թող այժմ կատոբվեն մեզ համար, ցավ նրանց։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—(վոտի յե կանգնում, բիտանը արքելով, բաժակը միջնեղին)։

ՅԵՐԱԺԻՇՏ.—(դադարում են նվագել)։

ՀՅՈՒՐ.—(ուշադրությունները լարում են)։ Սուս, սուս։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Դասպատա, զա,

ՀՅՈՒՐ.—(միաձայն)։ Զա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Ըդդալովվին։

ՀՅՈՒՐ.—Ըդդալովվին։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Նաշևդո։

ՀՅՈՒՐ.—Նաշևդո։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Դարաղոզո։

ՀՅՈՒՐ.—Դարաղոզո։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Սմբաթա։

ՀՅՈՒՐ.—Սմբաթա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Բարխուդարիչա։

ՀՅՈՒՐ.—Բարխուդարիչա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Ղոնդախասաղովա։

ՀՅՈՒՐ.—Ղոնդախասաղովա։

ՍԵՐԳ. ԲԵԳ. Ոն-ժա։

ՀՅՈՒՐ.—Ոն-ժա։

ՍԵՐԳ. ԲԵԳ.—Ղոնդախասապյանցա։
ՀՅՈՒՐ.—Ղոնդախասապյանցա։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Վիպիոմ։
ՀՅՈՒՐ.—Վիպիոմ
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Հուռռա։
ՀՅՈՒՐ. – Հուռռա։
ՇՊՊԱՆԻԿ.—Հոդս քեզ նման թամադի գլխին։ Ոնժե, մոնժե, պիպիոմ, միպիոն։ Իսկի իմ կենացը չես խմում։ Այնտղվա հարսանիքը կես եմ սարքել։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Ղասպադա, եքսարա։ Զազդարովիչ նաշեղո պրանգիպի Շպպանիկ։
ՀՅՈՒՐ.—Հուռռա։
ՄԻ ՔԱՆԻ ՀՅՈՒՐ.—Թող պար գա, Թող պար գա, պար ենք ուզում։
ՄԻ ՀՅՈՒՐ.—Առանց շոքոշի, առանց շոքոշի։
ՇՊՊԱՆ.—(վեր է կենում անձնեռնոցիկը վզին գցելով, յերաժիշտներին)։ Ջումլումի ածելիք։
ՀՅՈՒՐ.—Ջումլումի։
ՅԵՐԱԺԻՇՏ.—(ելնում են մի տարորինակ յեղանակ)։
ՇՊՊԱՆ.—(պարում է յերկու րոպեի չափ)։ Ծափ տվեք։ (հյուրերը ծափ են տալիս)։ Հա ջան, հա ջան։ (մոտենում է մերթ Ռուսաստին, մերթ Սուսանիկին) Բոլիդ մատաղ, ջանիդ զուրբան։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Աֆարիմ։
ՀՅՈՒՐ.—Մաշալլա, մաշալլա։
ՇՊՊԱՆ.—(դադարում է պարել, նստում է հոգնած)։ Պարելացավի դաք, ալ չամահաթ, վոսկորներս էլ են պարում։
ՍՈՒՍԱՆ.—(Սուսամբարին) Ճշմարիտ է, վոր ասում֊ինքնապաններին առանց դատ ու դատաստանի յե դժոխք ուղարկում։
ՍՈՒՍԱՄԲ.—Այդպիսի բաների մասին խոսելու ժամանակը չե։
ՍՈՒՍԱՆ.—Դե, ասա, մի՛ տանջիր։
ՍՈՒՍԱՄԲ.—Այո, ճշմարիտ է։
ՍՈՒՍԱՆ.—Ուրեմն ինքնասպաններին փրկություն չկա մյուս աշխարհում։
ՍՈՒՍԱՄԲ.—Չկա։
ՍՈՒՍԱՆ.—Թեկուզ անմեղ լինին։
ՍՈՒՍԱՄԲ.—Թեկուզ յեկեղեցի շինած լինին։
ՍՈՒՍ.—(յերեսին խաչակնքելով) Մեղա քեզ, տեր։

ՀՅՈՒՐՐ. – (կերել կշտացել են։ Չմարսումում են։ Շատերը նստրբել են։)։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—(յերաժիշտներին) Ադա մեն սպաս զաբուր ածիցեք։ (յերաժիշտները ելնում են)։
ՍՈՒՍԱՄԲ.—(խաչեղբորը) Շատ ես լեկտրացնում։ Ձես համբերություն չունեմ։ Զար կասկածն ընկել է սիրտս, կրծոտում է։
ԽԱՉԵՂԲ,—Համբերիր, համբերիր։
ՍՈՒՍ.—(Սուսամբարին տանջանքով) Ո՜ն, շոգ է, շոգ է, չես խեղդվում եմ։
ՍՈՒՍԱՄԲ.—(Սուսանիկին հանգստացրով) Սիրա աս, արիացիր, խնդալիր ծնողներիդ։
ՍՈՒՍ.—(դառը հեգնությամբ) Ծնողների՞ս։ Վոչ, Սուսամբար, յես միայն մորս եմ խղճում, միայն մորս։
ՌՈՒՍՏ.—(խաչեղբորը) Վերջացնելու են, թե չե։
ԽԱՉ.—Իսկույն։ (մոտի յե կանգնում) Պարոններ, ադա թամադայի կենացը։
ՀՅՈՒՐ.—Շուտ է, շուտ, չենք ուզում։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Սիլանա։ Վոչ վոք իրավունք չունի ինձ կարգ ու կանոն սովորեցնելու։ Ձես խանի Պողոսանց տանն եմ թամադա յեղել։ Խաչեղբայր, բաժակդ լցրու, շարաֆ խմիր։
ՀՅՈՒՐ.—(իրենց բաժակները լցնելով) Շարաֆ, շարաֆ։
ԽԱՉ.—Հնազանդում եմ։ (մի բաժակ գինի է դատարկում)։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Սիլանա։ Ձես պար գալ եմ ուզում։
ՀՅՈՒՐ.—Աֆարիմ, աֆարիմ, մաշալլա, մաշալլա։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—(ընդհանուր աղմուկի մեջ վոտի է կանգնում մի ձեռքն ծոր, միուսում բաժակը։ Յերաժիշտներին) Ադա Թբիլիսի ածելիք (յերաժիշտները ելնում են։ Սերգեյ-բեգը պարում է յերկու րոպեի չափ)։
ՀՅՈՒՐ.—(վոմանք ծափ են տալիս, վոմանք չրմա են գարկում իսկ մի յերկուսը դանակներով ներդաշնակորեն գարկում են ափսեին։ Պետ է այս բոլորի մեջ պանպանել վարոց ներդաշնակությունը։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—(դադարելով պարել, հոգնած բռիները սրբելով, նստում տեղը յեվ իսկույն վոտի յելնում) Ղասպադա։
ՀՅՈՒՐ.—Մի լավ կենաց, մի լավ կենաց, ծարավ ենք։
ՍԵՐԳ. ԲԵԳ.—Սիլանա, Ղասպադա, եքսարնի։ Ջա։
ՀՅՈՒՐ.—Ջա։

ՍԵՐԳ. ԲԵԴ.—Հղդաբովյն։
ՀՅՈՒՐ —Հղդաբովյն։
ՍԵՐԳԵՑ ԲԵԴ.—Նաշեզու։
ՀՅՈՒՐԵՐ.—Նաշեզու։
Ս. Բ. Ոբշէի։
Հ. Ոբշէի։
Ս. Բ. Կամպանի։
Հ. Կամպանիա։
Ս. Բ. Հափ։
Հ. Հափ։
Ս. Բ. Հափ։
Հ. Հափ։
Ս. Բ. Հափ։
Հ. Հափ։
Ս. Բ. Հուռա։
Հ. Հուռա։
Ս. Բ. Հուռա։
Հ. Հուռա։
Ս. Բ, Հուռա։
ՀՅՈՒՐԵՐ.—Հուռա։ Ապրի մեր Թամադան, ապրի մեր Թամադան։
Ա. ՀՅՈՒՐ.—(Տղամ. հարբել չե, վոսկի ե կաճցնում յերեռալով)։ Ցնա ճառ եմ ուզում ասել։
ՇՊՊԱՆ —Հասա դլխիդ աված, լուլի լուլի ես անում կանգնած տեղդ, նաախը։
Ա. ՀՅՈՒՐ.—(Տղամ.) Ճառ։
ՀՅՈՒՐ.—Ցնառ։ (Հարբածին ցասկացնում են)։
ՅԵՐԱՁ.—(տարացնակում են մեզի յեղանակ ցվագել)։
Բ. ՀՅՈՒՐ.—(տղամ. հարբած ե, վոսկի ե կաճցնում յերեռալով։ Ցնա ուզում եմ մուխամբաղ ասել (մեծ յեվ կատրակապույտ բիրը ցցում ե ոդի մեջ)։
ՇՊՊԱՆ. Հը, դու էլիր պակաս քո բաղըմչան քիմով։ Նաախը տեղդ, տըննդել պուպուզ։
ՀՅՈՒՐ. (ցասկացնում ե Բ. հյուրին) Նաախը, նաախը,
ՍՈՒՍ.—(Սուսամբ)։ Քանի դրանք ուրախանում են, այնքան յես տխրում եմ։ Սուսամբար, ինձ մի վատ բան ե պատահելու կասնես։
ՍՈՒՍԱՄԲ.—Ախ. հոգիս բերանս բերեցիր քո ախ ու վախով։
ՌՈՒՍՏ.—(խոչեղբորը) Աշխատիր, վոր շուտ գնան այդ մարդիկ

ԽԱՋ —Խակուչն, խակուչն։
ՍԵՐԳ. Բ.—Դասպատ, մեկ ել խմենք Թագավոր Թագուհու կենացը և ասենք. աստված շնորհավոր անե։
ՀՅՈՒՐ.—Ամեն, ամեն։ Թագավոր Թագուհու կենացը. հուռա։
Ա. ՀՅՈՒՐ.—(տղամ. յերգելով) Մեր Թամադան հարբած ե, հարբած ե։
ՀՅՈՒՐ.—Սուս, Սուս։
ՍԵՐԳ. Բ.—Ցնա վերջացրի։
ԽԱՋ.—(վոսկի յելնելով) Ադա Թամադայի կենացը։
ՌՈՒՍՏ.—(վոսկի կանգնելով) Սերսկ բեզ, շատ շնորհակալ եմ, շատ։
ՀՅՈՒՐ.—Հուռա, ադա Թամադայի կենացը, (վեր ե կենում)։
ՎՈՏՆԱՎՈՐՆԵՐ.—(առագ առագ սեղանները բաշում են պատերի տակ յեվ բեմը յայնացնում)։
Բ. ՀՅՈՒՐ։ (տղամ. յերաժիշտներին) Ղայթաղի ածեցեք։
ՅԵՐԱՁ.—(լեզգու պարերգ են ցվագում)։
ՀՅՈՒՐԵՐ.—(յերկու սեռից ներքով պարում են)։
ՍՈՒՍ.—(Սուսամբարի ոգնությամբ բաշվել ե մի անկյուն, սակայն միշտ ավանտենի մոտ(եգուց կգնաս մորս տեսնելու։
ՍՈՒՍԱՄԲ.—Անպատճառ։ Բան ունեմ ասելու։
ՍՈՒՍ.—Համբուրիր նրան, սիրտ տուր, ասա, վոր ուրախ եմ բաղդավոր։
ՍՈՒՍԱՄԲ.—Ցնվ շուտով հորս ել կուբախացնեմ, չէ։
ՍՈՒՍ.—Այո, այո, Սուսամբար. Թող հանդիստ լինի. յես անմեղ եմ։ Հետո կգամ ինձ մոտ։ Մինակ մի Թողնիր ինձ, Սուսամբար, յես կարող եմ խելագարվել։
ՍՈՒՍԱՄԲ.—Չեմ Թողնիլ, մի վախեցար։ Բայց յերեսդ սկեսրիդ տխուր ցույց չտաս։ վաղը չե մյուս որը կգամ քեզ տեսու Թյան։ Դե, ճիտս բարով։ (համբուրում ե յեվ աջ կողմի դրուցների մոտ ստացալով չարովը պատուց, գնում ե խորի դռներով)։
ՀՅՈՒՐ.—(Պարերը վերջացնելուց հետո, սկսում են ցրվել, կանացից վոմանք համբուրում են Սուսանին, մի քանի պատավ կանայք հետաքրքրված բարձրացնում են Սուսանի հոդը։ Վոմանք ճիաճում են նրա գեղեցկությամբ, վոմանք դժգոհություն ցնացնում են նրա գեղեցկությամբ, վոմանք ցնացնում են նրա գեղեցկությամբ, վոմանք դժգոհություն

ՍՄԲ.—Լավ, Սուսան, յերեխա մի լինիր, սիրա առ, դու բոլոր դավոր ես։

ՍՈՒՍ.—Վոչինչ, վոչինչ։ Մամային չասես, վոր լաց եղար։

ՇՊՊԱՆ.—(մոտենում է Սուսանիկ Սանամի հետ) Աղջի, լաց լինելը վնաս է, նե, չի, դա չսազեց այսօրվա որին։ Բոյիդ Շպարնիկը մատաղ։ (Համբուրում է Սանամին) Գեղոզանների գեղոզի խանումների խաթուն, տես ինչ տուն եմ բերել քեզ։ Մանի պողոսի աղջիկն ել այսպիսի տուն չի տեսել։ Դնե, միատ բարով, աչքիս լույս։ (Սանամին) եղուց կգամ։ Մալաթիա պատրաստիր. (գնում է խորհի դռներով, պարելով յեվ չրթունքը զարկելով)։

ՌՈՒՍՏ.—(փող է տալիս յերաժիշտներին յեվ Սմբատին ուղեկցում է, նրա հետ դուրս գալով խորհի դռներով)։

ՄՐՉՈՒՄԲ ՀՅՈՒՐԵՐ.—(յերաժիշտներին պատվիրում են ցվագելով դուրս գալ յեվ գնում են նրանց հետ ներհին դռներով)։

ՅԵՐԱԺԻՇՏ.—(այդ խմբի հետ դուրս են գալիս խորհի դռներով, ցվագելով։ Բավական յերկար ժամանակ լսվում է ցվագածուքյունը, կամաց կամաց թուլացնալով)։

ՍՍՆԱՄ.—(Սուսանին)։ Դե, գնանք բալաս, հանգստացիր։ (տանում է աջ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ 5.

Բեմի վրա մնում են առաջին, յերկրորդ յեվ յերրորդ տպատարդ հյուրերը։

Գ. ՀՅՈՒՐ.—Գնանք, մենք հենք միայն մնացել։

Ա. ՀՅՈՒՐ.—(ճարպած) Յես ել ուզում եմ կոնծել։

Բ. ՀՅՈՒՐ.—Յես ել, ես, գինի բերեք։ Բայց այստեղ վոչ վոք չկա։

Գ. ՀՅՈՒՐ.—Դրսումն են քեֆ անում, գնանք։

Ա. ՀՅՈՒՐ.—(բարձր) Գինի։

Գ. ՀՅՈՒՐ.—Մի քիչ քիչ խմենք, լեզուները ել ավելի կբացվի սակը փչելու համար։

Բ. ՀՅՈՒՐ.—Սմե՛ռ։ (բռունցքը բարձրացնելով) Եյ, ես սուտ ասող չեմ։ Ուզում եր հարսին ձեռքից խլել ու փախցնել։

ՏԵՍԻԼ 6.

Նույնք յեվ Ռուստամ

ՌՈՒՍՏ.—(Ներս է գալիս խորհի դռներով, կրծքից վերցնում է կացնաչ կարմիր ժապավենները, խնամքով ծալում է մի կողմ դրնում։ Ուշացած հյուրերին տեսնելով, կամենում է մոտենալ, բայց լսելով Բ. հյուրի վերջին խոսքերը, կանգ է առնում յեվ ականջ դնում)։

Ա. ՀՅՈՒՐ.—Յես քեզ ասում եմ բանը պրծած է, դու ել ասա. «հա պրծած է»։

Բ. ՀՅՈՒՐ.—Յեթե այդպես լիներ, աղջկան կտային Սեյրանին։

Ա. ՀՅՈՒՐ.—(ծիծաղում է) Հը, հը, հը, հիմար ես, հիմար։ Յեթե Սեյրանին տային, ամենքը պիտի ասեին «կոտրած ամանը կոտրողի վրին կապեցին»։

Բ. ՀՅՈՒՐ.—Իսկ հիմա խայտառակությունը պարտակել են, այ քեզ տանձի կոթ։

Գ. ՀՅՈՒՐ.—Իմ կարճ խելքով այդ բոլորը սուտ է, գուր բամբասանք։

Ա. ՀՅՈՒՐ.—Գլուխդ պտտվել է, այ ինչ կասեմ քեզ։ Յերեք որից հետո կտեսնես Ռուստամի սիրուհիները։

ՌՈՒՍՏ.—(ցնցում է յեվ դողում նուզմուզիից) Տեր, մեղայ քեզ ասածս։

Գ. ՀՅՈՒՐ.—(նկատել է Ռուստամին, ընկերներին կամացուկ) Սուս, նա այստեղ է։ (բարձր) Գնանք։

Բ. ՀՅՈՒՐ.—(սեղաններին նայելով) Գինի չբերեցին։

ՌՈՒՍՏ.—(առաջ է գալիս) Համեցեք։ Նստեցեք, յես կբերեմ գինի։ (ձայները դողում են նուզմուզիից)։

Ա. ՀՅՈՒՐ.—Ջե, առանց յերաժիշտների համ չունի։ Ասածդ չնորհավոր անի։ Հարնիֆ ես, Ռուստամ աղա, հարնիֆ։ Բարի գիշեր (գնում է խորհի դռներով)։

Գ. և Բ. ՀՅՈՒՐ.—Բարի գիշեր (գնում են խորհի դռներով)։

ՏԵՍԻԼ 7.

Ռուստամ յեվ Սանամ

ՌՈՒՍՏ.—(ուշացած հյուրերին ուղեկցելով մինչեվ խորհի դռները, յես է գալիս շփոթված, այլայլված։ Ձեռը հենում է սեղանին, մի բանի վարկյան մտածում, ապա արագ քայլերով մոտենում է աջ կողմի դռան յեվ դեպի մյուս սենյակ) Մայրիկ։

ՍԱՆԱՄ.—(բեմի յեսեվից) Այստեղ եմ։ ուրախ դեմքով գալիս է ոտ կողմի դռներով) Ինչ հարս ես, ինչ հարս։ Մարալ ես։ մարալ Ի՞նչ ես ուզում, բոյիդ մատաղ ես։

ՌՈՒՍՏ.—Ո՞ւմ ես բերել իմ տունը։

ՍԱՆԱՄ.—(չհասկանալով Ռուստամի տրամադրությունը, ուրախ) Հարս եմ բերել, մատաղ լինեմ, հարս։ Ան, վերջապես, ասված լսեց աղոթքներս և իղձս կատարեց։ Հիմա յես բաղդավոր եմ։

ՌՈՒՍՏ.—(ձայնը բարձրացնելով) Ցնս քեզ հարցնում եմ ում ես բերել իմ տունը։

ՍԱՆ.—(շփոթելով) Այսինքն ինչպես թե ում։

ՌՈՒՍ.—(ավելի խիստ յեղանակով) Ո՞վ է մտել իմ առաստաղի տակ, ասա։

ՍԱՆԱՄ.—Ղոնդաղասազանց Բարխուդարի աղջիկը։ Պարկեշտ, լոնարհ, պատվով, նամուսով Գյուլնազի մինիկ աղջիկը։

ՌՈՒՍՏ.—Դու լավ ես ճանաչում այդ աղջկան։

Սան.—Յերես ծառը պատուղից և ճանաչվում, պատուղն էլ ծառից և ճանաչվում։

ՌՈՒՍՏ.—(տանջանքով) Փշած ես, մայր, փշած ես այդ պատուղը։

ՍԱՆ.—(յերկյուղից մը բայլ ետ կանգնելով) Ի՞նչ ես ասում, վորդի, լավ կշռիր խոսքերդ։

ՌՈՒՍՏ.—Այս րոպեին այստեղ յերկաք հոգի խոսում եյինն նրա մասին։ Ցնս մի քանի խոսքեր լսեցի, ասեղների պես ցցվեցին սրտիս մեջ։ Մայր, դու ինձ խաբել ես։

ՍԱՆՍ.—Սուս, սուս արա։ Ցնս քեզ համար հարս եմ բերել, վոր ձյունի պես ճերմակ և, արևի պես պայծառ։

ՌՈՒՍՏ.—Բայց նրա մասին ելին խոսում, մայր, ականջովս լսեցի։

ՍԱՆ.—Ի՞նչ եյին ասում։

ՌՈՒՍՏ.—Ձեմ կարող ասել, լեզուս չի դորում. բայց լավ բան չեյին ասում, մայր, լավ չեյին ասում։

ՍԱՆ.—Թող ինչ ուզում են դուրս տան, մեզ ինչ։ Զար լեզուները ում չեն բամբասում։

ՌՈՒՍՏ.—(տանջանքով) Բայց յես ում հավատամ, ասա, ում։

ՍԱՆ.—Ջո մորը։

ՌՈՒՍՏ.—Դու խելոք կին ես, մայր, այդ գիտեմ, բայց դյուրահավան ես, քեզ խաբելը դժվար չե։

ՍԱՆ—.Հարցրու Շպանդիկին, նա ամեն տուն մտնում է։ Նա մեր քաղաքի բոլոր աղջիկներին ճանաչում է։

ՌՈՒՍՏ.—Այդ շունը հինգ մանեթի համար լուր հոգին կծախի սատանային։

ՍԱՆ.—(դառը կատակությամբ) Մեղք մի գործիր, վորդի։ լավ չե։

ՌՈՒՍՏ.—Ցնս քեզ ասում եմ՝ հարսդ մի արատ ունե։

ՍԱՆ.—(վճռական յեվ հանդարտ) Ի՞նչ արատ, ասա ելի։

ՌՈՒՍՏ.—Ցնս ինչ գիտեմ։ Տասնյոթ տարի չե յես այս քաղաքից հեռացել եմ։ ուժ եմ ճանաչում, վոչ վոքի։ Մայր, դու պիտի զղույշ լինելիր, շատ զգույշ։

ՍԱՆ.—Ռուսաստան, յես աղջիկների մեջ աղջիկ եմ ընտրել քեզ համար, վոր մեր քաղաքի գոհարներից մեկն ե։ Աղքատ, բայց պատվավոր ընտանիքից։ Հարցրու ուզումես Ղոնդախազանց Բարխուդարի մասին։ Կիմանաս թե ինչ մարդ ե նա։ Նրա նման աղնիվ, նրա նման նամուսով մի ուրիշը չը կա այս քաղաքում։

ՌՈՒՍՏ.—Ցնս հավատում եմ քեզ, մայր, բայց լսիր, յես իմ կյանքի մեծ մասը Դաղստանում եմ անցկացրել, չեչեններին, ղազի դմուխցիների, ավարցիների մեջ։ Ցնս լեզգի յեմ։ Լեզգին կարող է ամեն բան տանել, բացի անպատվությունից։ Ցնս նամուսի գերին եմ, մայր, յես չեմ կարող տանիլ։ Ցնս նամուսի գերին եմ, մայր, յես չեմ կարող տանել վոչ մի արատ ինձ վրա։ Ասա, ում քեր ելին իմ հարսանիքի վրա հարձակվողները։

ՍԱՆ.—Ցնս ինչ գիտեմ, վորդի, այնտեղ ելի, վոր իմանամ։

ՌՈՒՍՏ.—Բայց ինչո՞ւ հարձակվեցին, ինչ ելին ուզում։

ՍԱՆԱՄ.—Հանգստացիր, վորդի, հանգստացիր։ Եգուց բանը կպարզվի, կիմանանք։ Յերևի, փողոցային լակոտներ ելին։ Ինչ կան մեր քաղաքում։

ՌՈՒՍՏ.—Վոչ, մայր. վոչ, այստեղ մի բան կա, վոր ամենքը գիտեն, բացի ինձանից։ Դու ել գիտես, դու ել, և թագնում ես ինձանից։ Լսիր. մայր։ (բռնում է նրա ձեռը ամուր)։ Ցնս կարող եմ մորդ սպանել։ (բաց է թողնում Սանամի ձեռը յեվ հեռանում)։

ՍԱՆ.—Ասածու սիրուն, խելք գլուխդ հավաքիր։ Ցնս քո մայրն եմ, ոտար չեմ։ Ծնողն յուր զավակի թշնամին չի կարող մտնել, այն ել մինիկ զավակի։

ՌՈՒՍՏ.—Վոչ վոչ, համբերել չեմ կարող։ Ցնս պետք է հենց այս գիշեր իմանամ ամեն բան։ (ուզում է գնալ աջ դռներով)։

ՍԱՆԱՄ.—Վո՞րտեղ ես գնում։

ՌՈՍՏ.—Գնում եմ նրա հետ խոսելու։

ՍԱՆԱՄ.—(դողալով, խիստ), Չի կարելի։

ՌՈՒՍՏ.— Ի՞նչու։ (ուզում է գնալ).

ՍԱՆԱՄ.—(անցնում է առագ յեվ կանգնում աջ դռան առջեվ պատրաստ չեն քեզ հետ խոսելու։

ՌՈՒՍՏ.— Մայր, այժմ յես նրա ամուսինն եմ որենքով։

ՍԱՆԱՄ.—Վոչ, դու նրա ամուսինն չես։ Անկարելի յես։ Դու նրան կառնես հարսանիքիդ յերբորդ գիշերը։ Դա մեր պապիրի և տատերի ավանդությունն է։ Յես քեզ չեմ թողնի նրան վոտնատակ անել։

ՌՈՒՍՏ.—(հուսահատված) Անիծվեն ձեր որենքները, անիծվեն ձեր ավանդությունները։ Յերեք որ պետք է սպասեմ, մինչ վոր նրանից լսեմ ճշմարտությունը։ Յես կխենթանամ։

ՍԱՆԱՄ.—(հանդարտ մոտենում է Ռուստամին, մի բաճի վայրկյան նայելուց հետո, ձեռը դնում է նրա ուսին)։ Տեսնում ես այս ճերմակ մազերը, վորդի, (հուրխի տակից դուրս է բերում ալեխառը գիսակը)։ Նրանք քեզ համար են ճերմակել։ Աչքս ճանապարհիդ ջուր է կորել, յեկեղեցիների շեմքերն եմ մաշել, սրբերի գերեզմաններին եմ քսել ճակատս։ Ադիբսել եմ յերկնավորին այսորվա որին արժանանալու, վերջապես արժանացել եմ։ Ի՞նչ ես ուզում հիմա, սևացնե՞լ որս։ Մի արա վորդի, մի արա, խնդրեմ եմ։ (Միևնույն գրպանից դուրս է բերում բաճիճակը յեվ աչքերը արբում, Ռուստամից հետևցնելով)։

ՌՈՒՍՏ.—(արմունկը սեղանին յենած, ճակատը ձեռին դրած լռել է, մտազբաղ։ Քիչ լռություն։ Զղջում է յուր կոպտությանը մասին)։ Ներիր, մայր, յես մի վորը չափն անցա։ Ով դիտե, կարելի յե այն մարդկանց խոսակցությունը սխալ հասկացա, կարելի յե ուրիշի մասին եյին խոսում։ Ո՞, յերանի այդպես լիներ։ (վեր է կենում) Լավ, յես կհպատակվեմ ձեր ավանդություններին, կսպասեմ յերեք որ, միսս առաջին-րովս կկռծռտեմ, կսպասեմ։ (հանկարծ նորից հուզվելով) Բայց վայ ինձ, յեթե իմ հարսն այն չե, ինչ վոր դու յես ասում, վայ այն ժամանակ։

ՍԱՆԱՄ.—Թող վայը դա մորդ գլխին յեթե քեզ խաբել եմ։ Հանգիր բերիր և կառնես։

ՌՈՒՍՏ.—Ո՞վ կարող եր ասել, վոր ուրախ որս ադով պիտի վերջացնեմ։ (աչքերը արբեցով, հանդարտ հայեցով գնում է ետ կողմի դռնեցով)։

ՌՈՒՍՏ.—(գալում է Սահամի յեսեվից, ուսերը տարակուսանքով շարժում, հառաջում յեվ նստելով աթոռի վրա, բռնում է մտածմունքների մեջ)։

ՎԱՐԱԳՈՒՀԻ

ԱՐԱՐՎԱԾ ՑԵՐՐՈՐԴ

ՍԵՅՐԱՆԻ ՎՐԵԺԸ

Ռուստամի խանութը Թեյմուր-խան Շուրա քաղաքում։ Բեմը ցած միջնորմով բաժանված է յերկու մասի։ Այդ միջնորմը, խորքից սկսվով, հասնում է մինչև կեսը, այնպես, վոր չի խոչընդոտում տեսարանի միությունը։ Աջ կողմը ներկայացնում է բուն խանութը, լի ամեն տեսակ ապրանքներով, սկսած մահուդեղենից մինչև ուտելիքներ և ըմպելիքներ։ Աջ պատի վրա շինած դարակները ծանրաբեռնված են այդ ապրանքներով։ Նույն պատի առջևի «զայտուլկան», վորի վրա խառն ի խուռն դարսած են ապրանքները։ Խորքում, դեպի աջ, մի մեծ ապակյա ցուցափեղկ (витрина), վորի ապակյա դարակների վրա գարսած են գույնզգույն ըմպելիքներով լեքը շշերը։ Այդ ցուցափեղկի քով, դեպի ձախ, մի դուռ, վոր տանում է դեպի փողոց։ Ձախ կողմը բեմի ներկայացնում է կես դիմահարուն։ Մեջ տեղ մի կլոր սեղան առանց ծածկոցի, քովը մի քանի նստարաններ (табуретки)։ Ձախ պատի մեջ դուռը, վոր տանում է դեպի Ռուստամի ննջարանը և խոհանոց։ Նույն պատի վրա, դեպի խորքը, կախած է տեղական գորգ, վորի վրա քարշ են արած մի սև յետիևջի, մի լեզգու սպիտակ շուլլայի յերկայն մազերով, մի զույգ ատրճանակ, կոտ, արծաթապատ կոթերով, մի չախմախի յերկայն հրացան։ Խորքի պատի մեջ մի լուսամուտ փակ փեղկերով։ Այդ լուսամուտի միջով անցկացրած է մեջ տեղ վառվող յերկաթյա վառարանի ծխնելույզը դեպի փողոց։ Բեմը լուսավորվում է յերկու հնաձև լամպարներով, վորոնցից մեկը կախված է առաստաղից հյուրասենյակ—դիմահարն մեջ, մյուսը խանութում։ Բացի դրանցից յերկու շարժական լամպարներ, մեկը դասատվակայի, մյուսը կլոր սեղանի վրա։ Ձասատվակայի վրա լեռացող սամավար, վրան թեյամաններ։ Ծննդյան յերեկո յե։

Համբարձում, հետո Ջավադ յեվ Ռուսաստ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.—(Խանութի գործակատար, վոր միչեվնույն ժամանակ ծառայի պաշտոն ե կատարում։ Բանուհինց տարեկան սափրած յերեսով յեվ կարճ խուզած մազերով։ Հագած ե յերկայն արխալուղ, վրեն կապած ե շատ բարակ կաշվե գոտի, վորի ծայրը հանում ե մինչեվ ծնկները։ Վոտներին Դաղստանի չուստեր։ Վարագույրը բարձրանալիս՝ զաստոյկայի մոտ կանգնած՝ ծուկ ե կոտորում յեվ շամփուրներին անցկացնում խորովելու։ Հանդարտ ձայնով յերգում ե պարսկական յեղանակով)։

Դադ, ինձի վորսացին,
Շամփրի վրա խորովեցին.
Դադ, ինձի լափեցին,
Վոսկորներս ձգեցին։

*ՋԱՎԱԴ.—(Ներս ե մտնում խորին դռներով, յերբ Համբարձումը դադարել ե յերգել։ Ցերեսուհուհինց տարեկան տղամարդ ե յերկայն ու լայն միրուքով, բավ ուժիերով։ Հագնված ե այնպես, ինչպես բուն լեզգի։ Գլխին ոեվ շուլլաճի, ուսերին յեափնջի վորի տակից յերկայն չուխա յեվ գրեթե նույն յերկայնությամբ արխալուղ, վոտներին չուստեր յեվ կրկնակոշիկներ։ Մեջքին կապած ե չուխայի տակից նստարակ դաշույն։ Խոսում ե ամվրդով, ձեվերն ու շարժումները ծանրաբարո յեվ նպարտ են։ Ցեափնջին ծածկված ե ձյունով)։ *Շնորհավոր Զնունդ Քրիստոսի։* (Համբարձումին նշխար ե տալիս։ Ցափնջին վերցնում ե ուսերից, ձյունը թափ ե տալիս դուռն ու տոն յեվ բերում կախ ե անում միջնարմի վրա խաչուրի կողմից։ Կրկնակոշիկները թաղնում ե անկյունում)։*

ՀԱՄԲ.—Որնյալ ե Զնունդ Քրիստոսի։ (Կրոնական յերկյուղածությամբ նշխարը բերանն ե դնում)

ՋԱՎԱԴ.—Ո՞վ կա։

ՀԱՄԲ.—Մենակ ե։ Զյուն ե՞ գալիս

ՋԱՎԱԴ.—Բուք ե սկսվում։

ՀԱՄԲ.—Իսկ և իսկ ծննդյան յերեկո յե։

ՌՈՒՍՏ.—(գալիս ե ձախ կողմի դռնով։ Հագած ե սեվ վոչ յերկայն արխալուղ, վրեն դեղնագույն չուխա ուղտի բրդից, Գլխաբաց ե։ Մուայլ դեմքը պարզվել ե։ Ուրախ ու գվարթ)։ Ջավաղ։

ՋԱՎԱԴ.—Շնորհավոր Զնունդ Քրիստոսի։ (Նշխարհ ե տալիս)։

ՌՈՒՍՏ.—(Նշխարը բերանը դնելով)։ Որնյալ ե Զնունդ Քրիստոսի։

ՋԱՎԱԴ.—Ինչու՞ յեկեղեցում չեյիր։ (Անցնում ե միջնորմի մյուս կողմը յեվ նստում սեղանի հով)։

ՌՈՒՍՏ.—Ղազի-Ղմուխից մի քանի ծանոթ լեզգիներ եյին յեկել ապրանք առնելու, չկարողացա գալ։ Այ տղա Համբարձում, չայ բեր։

ՋԱՎԱԴ.—Ի՞նչ լուր ունիս մեր քաղվածից։

ՌՈՒՍՏ.—Հենց այս րոպեին մորս նամակն եյի կարդում։ Ելի մի թեթև յերկրաշարժ ե յեղել (նստում ե)։

ՋԱՎԱԴ.—Անիծվին այդ յերկրաշարժները, վոր մեզ ոտար յերկրներ գցեցին։

ՀԱՄԲ.—(Բերում ե յերկու բաժակ թեյ յեվ դնում կլոր սեղանի վրա)։

ՌՈՒՍՏ —Բանի տարի ե չես յեղել հայրենիքում։

ՋԱՎԱԴ.—Առաջիկա գարնին տաս տարին կլրանա։ (Թեյ ե խրմում)։

ՌՈՒՍՏ.—Ջե՞ս կարոտել։ (Թեյ ե խմում)

ՋԱՎԱԴ.—Ո՞վ ունիմ այնտեղ, վոր կարոտեմ։

ՌՈՒՍՏ.—(Հառաչելով)։ Ա՜հ, յերեք թևեր ունենայի, այս րոպեիս կթռչեյի այնտեղ։

ՋԱՎԱԴ.—Այդպես չե՞ւս։ Ցերեք ամիս չկա այնտեղից գալը։

ՌՈՒՍՏ.—Այո, բայց այժմ այդ յերեք ամիսը ինձ յերեք տարուց ծանր և թվում։

ՋԱՎԱԴ.—(Նենգամիտ խորհրդավորությամբ)։ «Այժմ» (բառեկամաբար) հասկանում եմ, բարեկամ։

ՌՈՒՍՏ.—(Լուրջ) Մի ծաղրիր, Ջավադ, դու պսակված չես, դրժվար թե հասկանաս ինչքան քաղցր և ընտանիքը։ Գործերս չթողին, վոր այս Ջրտրհենքին այնտեղ անցկացնեմ, բայց գարնին անպատճառ գնալու յեմ։

ՋԱՎԱԴ.—Վոր այդպես կարոտում ես, բեր ընտանիքդ այստեղ։

ՌՈՒՍՏ.—Մայրս չի ուզում գալ, իսկ նրան չեմ կարող մենակ թողնել։

ՋԱՎԱԴ.—Այդ պատճառները իրանց հայրենիքի ավերակներն ել են պաշտում։

ՌՈՒՍՏ.—Այն որից, վոր պսակվել եմ, ինձ համար ել սիրելի յեն դարձել այդ ավերակները։

ՋԱՎԱԴ.—Ահա թե ինչ։

ՌՈՒՍՏ.—(վոգեվորվելով)։ Ցես կարող եմ ասել, Ջավադ, վոր չես ապրուստ առանց կնոջ։

ՋԱՎԱԴ.—Տեսնում եմ, տեսնում եմ։ Առաջ դու անխոս, մարդ մարդ էիր։ այժմ բլուբլյուլ ես դարձել։ (հառաչելով)։ Ցես բանի քեզ։

ՌՈՒՍՏ.— Գնակվիր, Ջավադ, գնակվիր, ընտանիքը քաղցր բան է։

ՋԱՎԱԴ.— Այո, քաղցր է, բայց չար մարդիկ այդ սրբությունն էլ են ապականում։

ՌՈՒՍՏ.— (նուզվելով) Ա՜հ, մի հիշեցնիր ինձ այդ, Ջավադ, մի հիշեցնիր։ Ցես իմ քաշած տանջանքները քեզ պատմել եմ։ Այդ յերեք որը ինձ թվում եր, վոր աշխարհը գլխիս խավարվեց։

ՋԱՎԱԴ.— Ինչ յերևելությունն եր քո կողմից ուշադրություն դարձնել կեղտոտ ու հոտած մարդկանց բարբաջանքներին։

ՌՈՒՍՏ.— Ցավ ոտ եյին զրպարտում, ասում եմ, Սուսանին իր նամուսի գերի Բարխուդարի աղջկան։ Մարդ պետք հոգի չունենա այնպիսի մի անմեղ հրեշտակի վրա կեղտ գցելու համար։ Եհ, տերը նրանց հետ, հոտած եյին, իրենց ել չգիտեին ինչ եյին խոսում։ Այժմ յես հավատում եմ իմ կնոջը։ Հավատում եմ ինչպես մի սրբի և սիրում։ Այժմ ինձ վոչ վոք և վոչինչ չի կարող խաբել։ Այ տղա, համբերում, եվի չայ բեր։ (ծխում է ծխախոտ յերկայն յեղեգյա մունդշտուկով)։

ՋԱՎԱԴ.— Ցես ել չեմ ուզում։

ՌՈՒՍՏ.— (նայելով իր գրպանի ժամացույցին) Ինչու՞ յեն ուշանում մեր հայրենակիցները։ Ցես քաղցած եմ։ Ջուկը դիր կրակի վրա, Համբարձում։

ՀԱՄԲ.— Ես սհաթին (ձուկ անցկացրած ատլիսուրցները վերցնում է յեվ գնում ձախ կողմի դռնեռով)։

ՏԵՍԻԼ 2.

Նույնը յեվ Մարտիրոս

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Գալիս է խորքի դռնով։ Նիհար, փոխրանված մարդ է աճորուց տարիով։ Վրեն այնքան հագուստ կա, վոր յերեք աճպարտ ավելի հաստ է յերեվում։ Ներս մտնելով, դուռը բանամուխով ծածկում է, ապա յափնջին վերցնում, ձյուղը բաց է տալիս յեվ ճանդարտ բաց է անում միջնորմի վրա)։ Բարով ձեզ։

ՌՈՒՍՏ.— (լսելով դռան ձայնը, առաջ է յեկել Մարտիրոսին ընդունելու) Ասածու բարին։

ՄԱՐՏ.— Դրսում մի սրհավիրք է սկսվել, վոր գազանը գազանությունով անխոչ դուրս չի գալ (հանում է հաստ մուշկյա ձեռնոցները, ապա խոստ մուշված յայն վերարկուն, այնուհետեվ մի յայն չուխա, նեղտ բալղրը)։ Ջուռնը կարկին պես է գարկում մարդու յերեսին։ Մարմինը փետացել է (սկսում է բաց անել վզին փաթաթած յերկայն կարմիր շարֆը)։ Ասացի գնամ տաղ Ռուստամի մոտ վայ է, չգնամ վայ եւ։ Ցերթ գնամ, կարող եմ մրսել, առանց այն ել դյուքամ ունեմ։ (յերեք անգամ հազում է) Իսկ յերթ չգնամ, տղա Ռուստամը կարող է նեղանալ։ (Բաց է անում յերկրորդ չուխայի վրա կապած հաստ ատլյա գոտին։)

ՋԱՎԱԴ. Հեր որհնած, ել դուքանումդ հին փալաս մալաս չկաը, վոր վրեդ թափկիր։

ՄԱՐՏ.— (ուշադրություն չդարձնելով Ջավադի խոսքերին) Ցերկու ձեռ կրակի մեջ եյի։ (բաց է անում մի յերկրորդ գոտի, ապա հանում է բաղիիյա յայն կրկնակոճիկներ, վորոնց տակից ուրիշ կոճիկներ) Նատեցի, մոտծեցի, վերջն ինքս ինձ ասացի. «դնալու յեմ, ինչ վոր լինելու յեն, թող լիներ։ Ցեվ յեկա։ (վերջին բառի հետ յերեսաց է գալիս կարճ արխալուղով կարճ սիրամարկով, սեվ Ֆուրաշկայով մի ցնիար, փորը մեջքին կապած մարդ)։

ՌՈՒՍՏ.— Շատ ուրախ եմ։ Մի բաժակ չային ինչ կասես։

ՄԱՐՏ.— (մոտենալով վառարանին ձեռքերը տաքացնում է) Վատ չեր լինել։

ՌՈՒՍՏ.— Կոնյակիվ։

ՄԱՐՏ.— (սարսափած) Ցեհովան փրկի ինձ։ Ցես վաղուց եմ ձեռք քաշել գժոխքի չրերից։ (Նստում է սեղանի հով, կաճխապես սեղմելով Ռուստամի յեվ Ջավադի ձեռքը)։

ՌՈՒՍՏ.— (մի բաժակ բեյ է ածում յեվ դնում Մարտիրոսի առաջ)։

ՄԱՐՏ.— (Ջավադին) Ցեղբայր Ջավադ, ինչու՞ յե մեզ կանչել յեղբայր Ռուստամը այս զարհուրելի գիշերին։

ՋԱՎԱԴ.— Կանչել է, վոր այս աղիր լերկոն մեսաին անցկացնենք։ Ջի վոր ծննդյան յերեկո յի։

ՄԱՐՏ.— (ջերմեռանդորեն) *Դիտեմ, դիտեմ։ Այս յերեկո մարդու վորդին ծնվել է Բեթղեհեմում, ախոռի մեջ։* (Դեպի վեր նայելով) *Տեր.*

ՋԱՎԱԴ.— (առաջարկելով մի կտոր ճեխարք) *Ա՛ռ, պառդ բաց արա։*

ՄԱՐՏ.— *Յեհովան Ներսի քեզ, յեղբայր Ջավադ, մի՞թե չես պահանջում։*

ՋԱՎԱԴ.— (ճեխարքը դնելով յուր բերանը) *Ախ, չես միշտ ժոռանում եմ։ Վոր դու լուսերական ես։*

ՄԱՐՏ.— *Նշխարքն չես այն ժամանակ ես ուտում, յերբ հիշատակ ես է յերևակայությամբ։ Այժմ, դոհությունն յերկնավորին, չես հավատացյալ քրիստոնյա չեմ։ Բայց չէ՞ որ ծնունդը մենք ել ենք տոնում. միայն ազոթքով ազոթքով։* (Ձեռները իրարու կցելով, գլուխը ներքուբյամբ բոհում է դեպի մեջքը, աչքերը ուղղում է դեպի յերկինք). *Ամենակալ, ամենաիմաց, դու քո միևնույն վորդուն վերցրիր, ուղարկեցիր այս փչացած աշխարհը, վոր մեզ ազատի գեհենից։ Նա յեկավ մեր մեղքերը հավաքեց, մի մեծ տոպրակի մեջ ածեց, վերցրեց տաբավ գժոխք թափեց։ Մենք ազատվեցինք, բայց հեթանոսները, փարիսեցիները և սադուկեցիները նրան տանջեցին, խաչ հանեցին, վոտները ծակեցին, նա մեռավ, թաղվեց, յերեք որից յետո հարություն առավ, նստեց հրեշտակների թևերի վրա, բարձրացավ յերկինքը, նստեց հրեշտակների թևերի վրա, բարձրացավ յերկինքը, կողքիդ նստեց։ Թող որինվի նրա անունը։ Ամեն։* (Ձերեսին չի խաչակնքում)։ *Այսպես ենք մենք տոնում ամենս տոնը։* (Սկսում է բեյ խմել յերաշելի դեմքով)։

ՏԵՍԻԼ 3.

Նույնի, Ջանանգիր յեվ Ցեզոռ

ՋԱՀԱՆԳ.— (Գալիս է խորհի դռնով։ Հագած է վոչխարի մորթից մուշտակ, վրեն սեվ չուխա, տակից կարճ արխալուղ։ Զուխայի վրայից յափնջի։ Գլխին դրած է կլոր, ցած գդակ, վոր ծածկված է բալըղով։ Յափնջին յեվ բալըղը վերցնելով բաց է տալիս։ Կարմիր դեմքով, առողջ, զվարթ տղամարդ է մի քիչ հաստ փորով։ Ցերեսը սափրած է, բեխերը վոլորած)։ *Մեռա՛, ձեր արևը, մեռա։ Ջյուն չե՛. փոթորիկ է։*

ՑԵԶՈՌ.— (գալիս է Ջանանգիրի հետ խորհի դռնով։ Հագնված է այնպես, ինչպես Ջավադը։ Բալըղը յեվ յափնջին բաի է տալիս յեվ հարց է անում միջնորդի վրա։ Գեղեցիկ դեմքով յերիտասարդ է հաճունիցգ տարեկան) *Բարին Շահզադից և փըչում։ Բարի յերեկո դարդիմաններին* (առաջ է գալիս խոտոր հայերով՝ ձեռ է տալիս ու ճստում)։

ՋԱՀԱՆԳ.— *Ոհո, յեղբայր Մարտիրոս, դու յել այստեղ ես։ Ի՞նչ է ասում Յեհովան։* (Ձեռով զարնում է Մարտիրոսի ուսին)։

ՄԱՐՏ.— *Կամաց, չտյա թափեցիր։*

ՌՈՒԻՍ.— *Ել վոչ վոքի չեմ սպասում, դուռը կարելի չե կողպել* (փակկում է խորհի դուռը յեվ նիզը գցում)։

ՑԵԶՈՌ.— *Ցերթե այս յերեկո յել գինի չկանես, յեղբայր Մարտիրոս, դլխիդ եմ ածելու։*

ՄԱՐՏ.— *Սատանայի ջուրը իմ փորը չի մտնել։*

ՋԱՀԱՆԳ.— *Բայց ինչու՞ դարնջուր խմում ես, անիրավ։*

ՄԱՐՏ.— *Գարնջուրը գինի չե։ Սարգիս վարպետն ասում է, վոր մեր հավատացյալ յեղբայրները բաղելում գարնջուր են խմում* (նայելով փակ լուսամուտին)։ *Կարծեմ այդտեղից քամի չե փչում. ականջս պաղեց* (տեղը փոխում է)։

ՌՈՒԻՍ.— (աջ կողմից բերում է մի կապույտ սփռոց յեվ գցում սեղանի վրա) *Համբարձում, փլավը դամի դրել ես։*

ՀԱՄԲ.— (այդ միջոցին գալիս է ձախ դռնով)։ *Դրել եմ։*

ՌՈՒԻՍ.— *Խորոված բեր, յերթե պատրաստ է։*

ՀԱՄԲ.— *Աչքիս վրա։* (գնում է աջ կողմ, զանազան ուտելեղեններ է բերում, դնում է սեղանի վրա։ Բերում է նայիվ յերկու կուլա գինի եվ մի բանի կավե գավաթներ, նետո գնում է ձախ կողմի դռնով)։

ՄԱՐՏ.— (Համբարձումի յետեվից)։ *Տես խորոված հում չլինի, կարող է ջլասել։*

ՌՈՒԻՍ.— (Մարտիրոսի առջեվ դնելով մի ափս գարեջուր յեվ մի բաժակ). *Այս ել քո Բաղելի հավատացյալ յեղբայրների համբյոքը, գարնջուր։* (Ամենքը նստում են սեղանի շուրջը)։

ՑԵԶՈՌ.— (մի բաժակ ողի խմելով), *Ափսոս վոր սազանդարները չկան։*

ՌՈՒԻՍ.— *Համբարձումին ուղարկեցի, չկարողացավ գտնել։*

ՄԱՐՏ.— *Սազանդան սատանան է հնարել, վոր մեզ շեղի աստծու ճանապարհից։ Հիսուսի աշակերտները սազանդա չունեցին։*

ՋԱՀԱՆԳ.— *Ցերթե Հիսուսի անունը շատ ես տալու, չես վեր կենամ կոբչեմ։* (Ողի յե խմում)։

ՄԱՐՏ.— աչքերը հեզությամբ ուղղելով դեպի վեր, ձեռքերն իրար կցելով)։ Ով ասված, ներիր այս հեթանոսին, վորովհետև չի հասկանում, թե ինչ է ասում։ Նա չգիտե, վոր ճշմարիտ քրիստոնյան պարտավոր է ամեն որ, ամեն ժամ, ամեն դեպք և ամենքյան և իր գիշերի լիշել քո սուրբ անունը և աղոթել։ Ներիր, տեր, ներիր։ Ամեն։ (Դառնում է խրմում)։

ՀԱՄԲ.— (Ձախ կողմի դռնից բերում է մի ջամփուր խորոված ձուկ յեվ պահում է Ռուստամի առջեվ)։

ՌՈՒՍՏ.— Ձուկը ջամփուրից ճանում է մի մեծ ափսեյի մեջ յեվ դնում սեղանի վրա)։

ՋԱՎԱԴ.— (Մի բաժակ գինի ածելով)։ Տղերք, շնորհավոր Զատիկ Քրիստոսի։

ՄԱՐՏ.— Ձեվ Հիսուսի, վորդո մարդո,

ԱՄԵՆՔԸ.— Որհնյալ Զատիկ Քրիստոսի։ (Գավաթները զարկում են իրար յեվ խմում)։

ՋԱՀԱՆԳ.— Ցեղբայր Մարտիրոս, մի շամախու շիքյաստա ասա։ (Ձուկ է ուտում)։

ՄԱՐՏ.— Հիսուսի աշակերտները շիքյաստա միքհաստա չեյին ասում։

ՅԵԳՈՈՐ.— Բայց դու առաջ ասում եյիր. յես շատ եմ լսել։

ՄԱՐՏ.— Առաջ յես հեթանոս եյի։ (Ձուկ է ուտում)։

ՋԱՎԱԴ.— Այսինքն, հայ լուսավորչական։

ՋԱՀԱՆԳ.— Այդ աներամբ լուսավորչականներին հեթանոս է անվանում։ (Ձուկ է ուտում)

ՋԱՎԱԴ.— Տղերք, զգաստներդ լեցրեք։

ՋԱՀԱՆԳ.— (Ձոր գավաթը լեցնելով)։ Պատրաստ եմ ծառայելու։

ՋԱՎԱԴ.— Ամենք մեր անբասիր քաղաքի կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Ամենք, ամեն։

ՋԱՎԱԴ.— Ասված տա, վոր վերջապես, երբ հողը հանգարտվի, քարը քարի վրա մնա։

ԱՄԵՆՔԸ.— Ամեն, ամեն։

ՄԱՐՏ.— Մինչև վոր բոլոր հեթանոսները Հիսուսի ավետարանը չընդունեն, մեր քաղաքը միշտ տակն ու վրա յե լինելու։ (Աչքերը վեր ուղղելով)։ Տեր, կարծում եմ, վոր քո սիրած խոսքն ասացի։

ՋԱՀԱՆԳ.— Ցեղբայր Մարտիրոս, չգիտե թե քեզ այս կոմների համար փառատոր են նշանակել։

ՅԵԳՈՈՐ.— Ցերեկ։ Գլուխս տարել եմ յուր քարոզներով։ Շարունակ հորդորում եմ ինձ ավետարանական դառնալ։

ՄԱՐՏ.— Մեր պարտականությունն է և՛ տունջյան և՛ գիշերի աշխատել մոլորյալ վոչխարներին ճանապարհի բերելու (գարեջուր է խմում)։

ՋԱՎԱԴ.— (Նորից լեցնելով յուր գավաթը)։ Տղերք, խմենք մեր դարպիմանդ ընկերոջ կենացը։ Ռուստամ, ապրես և լավ ապրես։ (Բաժակը զարկելով Ռուստամի բաժակին, խմում է)։

ԱՄԵՆՔԸ.— Ամեն, ամեն։ (ածում են նույնը)։

ՄԱՐՏ.— Աբրահամի և Իսահակի յեհովան քեզ պահի պահպանի մեղքերից։

ՌՈՒՍՏ.— Շնորհակալ եմ, բարեկամներս։ Շատ ուրախ եմ, վոր հրավերս ընդունեցիք, յեկաք։ Կարոտել եյի։ Ոտար յերկրում մարդու հոգին փառավորվում է յուր հայրենակիցներին տեսնելիս։ Ձեր կենացը։

ՅԵԳՈՈՐ.— Տղերք, այսոր յես բազարում մի նոր շամախեցի տեսա։

ՋԱՀԱՆԳ.— Ո՞վ եր։

ՅԵԳՈՈՐ.— Չճանաչեցի։ Մեր հարևան լեզգի Ոսմանից ատրճանակ եր գնում։ Ձահել տղա յեր, բարձրահասակ, բարակ բեղերով, դեղնած յերեսով։

ԴՐՍԻՑ.— (Ցերկու անգամ զարկում են գողոցի կողմի դուռը)։

ՀԱՄԲ.— (Դալիս է ձախ կողմի դռնից, բերելով յերկու ջամփուր խորոված ձուկ)։

ՋԱՎԱԴ.— Կարծես, դուռը ծեծեցին։

ՌՈՒՍՏ.— (Շամփուրները առնելով Համբարձումից) Տես ով է։

ՅԵԳՈՈՐ.— Ո՞վ պիտի լինի այս ասրասվելի յեղանակին։

ԴՐՍԻՑ.— (Նորից յերկու անգամ զարկում են դուռը)։

ՋԱՀԱՆԳ.— Համբարձում, առաջ հարցրու, գնաս նեբս թող։

ՅԵԳՈՈՐ.— (Ծիծաղելով) Ջանանզերն ալի յուլյ տվեց իր քաջությունը։

ՋԱՀԱՆԳ.— Անցյալ տարի մի այսպիսի գիշեր լեզգիները տասնհերկու հոգով մտան զարաբաղցի Ղահրամանի դուքանը, իրան ել սպանեցին, յեղբորն ել, ծառաներին ել, ապրանքն ել թալանեցին։

ՄԱՐՏ.— Զգուշությունը լավ բան է։

ԴՐՄԻՑ.— (Ցերեկով աճգամ զարկում են դուռը)։
ՀԱՄԲ.— (Մոտիցել է խորխի դռանը)։ Ո՛վ կա։
ՌՈՒՍՏ.— Բաց արա, ով վոր ես։
ՀԱՄԲ.— (Դուռը բաց է անում։ Քամին ուժգին բախվ ներս խուժում, բերելով ձյունի կույտեր)։
ՄԱՐՏ.— Ցես կարող եմ մրսել։ (Վերադարձ գցում է ուսերին)։

ՏԵՍԻԼ 4.

Նույնի յեվ Սեյրանց

ՍԵՑՐԱՆ.— (Ներս է մտնում յափնջու մեջ փաթաթված, գլուխը ու յերեսը բալլղով ծածկած)։
ՌՈՒՍՏ.— (Վեր է կացել ճյուրին ընդունելու)։ Ո՛վ կա, բարե կամ։
ՍԵՑՐԱՆ.— Ասածու հյուրը։
ՌՈՒՍՏ.— Աչքիս վրա տեղ ունի ամեն մի հյուր։
ԱՄԵՆԻՔ.— (Վոտի յեն կանգնում յեվ ճայում ճորեկին)։
ՍԵՑՐԱՆ.— Ղարիբ եմ, մի տեղ կըտաս ինձ։
ՌՈՒՍՏ.— (Սիրալիր)։ Ղարիբների համար իմ դռները միշտ բաց են։ Համբարձում, վերցրու դարիբի յափնջին։
ՍԵՑՐ.— Չի հարկավոր։ (Ինքը վերցնում է յափնջին յեվ, առանց ձյունը թափ տալու, շպրտում է մի անկյուն։ Ցերեսը բաց է անում)։
ՌՈՒՍՏ.— (Նայում է Սեյրանին, չի ճանաչում. միջս սիրալիր)։ Ուրախ յեկ, նստիր, պատմիր բաց արա, յեթե հայ քրիստոնյա յես։
ՍԵՑՐ.— (մոտենում է սեղանին)։
ՅԵԳՈՐ.— (Նորեկին ճանաչել է մինչեվ Սեյրանի սեղանին մոտենալը)։ Տղերք, ձեր աբոը վկա, այսօրվա իմ տեսած ամենամեծ դան է։
ՋԱՎԱԴ.— (Հանգիստ նստելով իր տեղը)։ Հինգ չինենք վեց կանենք, Ցեկողը մեր գլխի վրա տեղ ունի։ Նստիր, ասածու հյուր։
ՍԵՑՐ.— Առանց բալլղը գլխից վերցնելու, բայց յերեսը բաց, ամուր գլուխ է տալիս ամենքին յեվ նստում սեղանի ծայրին, ձեռը հենելով դաստյակին։ Տխուր է, գունատ։ Աչքերը կարմրած են, բայց դիմքն արտահայտում է մի անխախտ վճիռ։

Մինչեվ այժմ չի նայել Ռուստամին յեվ ափսոսում է խույս տալ նրա հայացքներից)։
ՌՈՒՍՏ.— (Հանգիստ նստում է յուր տեղը)։ Այ տղա, Համբարձում, մի գավաթ բեր, գինի տուր։ Փլավը բեր։
ՄԱՐՏ.— (Սեյրանին) Քամին թռնդ է դրսում։
ՍԵՑՐ.— Քամի չկա։
ՄԱՐՏ.— Ինչպես թե չկա։ Ջիս լսում ինչպես է մռնչում գայլի նման։
ՀԱՄԲ.— (Յերկու կույտ ճոր գինի յեվ մի գավաթ ավելացնում է սեղանի վրա։ Ապա գնում է ձախ կողմի դռնով յեվ վերադառնում է ձեռին մի մեծ ոկուտեղ փլավ, վոր դնում է սեղանի վրա)։
ՍԵՑՐ.— (Առանց Ռուստամին նայելու, նրա առաջարկած գինին արհամարհաճեռով մերժում է)։ Արաղ ավելք ինձ։
ՋԱՎԱԴ.— (Ողի յե ածում Սեյրանի համար)։ Համեցեք։
ՍԵՑՐ.— (մի կումով դատարկում է ողու բաժակը)։ Կարելի յե մեկն ել խնդրել։
ՋԱՎԱԴ. (Ճորից ողի յեցնելով)։ Մեկն ել կարելի յե, տասնըմեկն ել։
ՋԱՀԱՆԳ.— Մինչև կըհասնես մեր դրագուսին։ (փլավ է ածում յուր համար)։
ՄԱՐՏ.— Ցեվ հետո կսկսես տատանանքի հետ գայթաղի պարել։ (փլավ է ածում յուր ափանի մեջ)։
ՍԵՑՐ.— (մի կումով դատարկում է ողու յերկրորդ բաժակը)։ Ցես տատանանքի հետ շատ եմ պարել։
ՄԱՐՏ.— Տեր մեղա քեզ։
ՍԵՑՐԱՆ.— (դատարկ բաժակը բռնելով գավաթի առջեվ)։ Մեկն ել։
ՋԱՎԱԴ.— Աչքիս վրա։ (լեցնում է նրա բաժակը)։
ՋԱՀԱՆԳ. (Ցեգոդին) Տղան որինավոր կոնծում է։
ՅԵԳՈՐ.— Աչքիս կսակածելի յե յերևում։ (փլավ է ուտում)։
ՋԱՎԱԴ.— (Սեյրանին) Ամենուց հետո բերանդ բան դիր, թե չե սիրտդ կը խառնի։ (դնում է Սեյրանի առջեվ խորոված ձուկ)։
ՍԵՑՐ.— Ցես քաղցած չեմ, ծարավ եմ։ Հիմի գինի տուր։
ՋԱՎԱԴ.— (գինե յե ածում Սեյրանի համար)։
ՋԱՀԱՆԳ.— (Սեյրանին)։ Շիքյաստա ասել գիտես,
ՍԵՑՐ.— (կտրուկ)։ Ցես հոխկաբազ չեմ։ (խմում է)։
ՄԱՐՏ.— Լավ ասաց։

Շիրվանզադե—12

ՅԵԳՈՈՐ.— (մեկուսի Ռուսաստանից)։ Ոհո, շատ ֆունդ է կորտ
տում։

ՌՈՒՍՏ.— (Սեյրանից)։ Համեցեք, փլավ կեր։

ՍԵՅՐ.— Ցես իմ փլավը կերել եմ վազուց։ Հիմի դու կեր։ (Ս
րեսը դարձնում է Ռուսաստանից)։

ՌՈՒՍՏ.— (զգում է անախորժություն, բայց զսպում է ի
բաժակը բարձրացնելով) Բարեկամ, ով վոր էլ վոր ես, ը
քով հազար բարի յես չեկել։ Տղերք, խմենք մեր անծան
հյուրի կենացը (ինչ կում է անում չեխ գավարը դնում է ա
դանի վրա)։

ԱՄԵՆՔԸ.— Խմենք, խմենք։ (խմում են)։

ՍԵՅՐ.— (Զոռ) չնորհակալ եմ (խմում է մի գավաթ գինի չեխ գ
վաթը շպրտում է նահակի վրա) Ցեղկ։

ՄԱՐՏ.— Ճաշնճ եր ընկել գավաթի մեջ հը։

ՍԵՅՐԱՆ.— Ուրիշ գավաթ տվեք (Նայում է Ռուսաստանին գ
տուկ)։

ՀԱՄԲ.— (բերում է մի ճոր գավաթ չեխ դնում Սեյրանի առ

ՅԵԳՈՈՐ.— (մեկուսի, Ջավադին) Թող դեռ սեսնենք։

ՌՈՒՍՏ.— Գինին ընտիր գինի յե, նոր եմ ստացել Սաղիան

ՍԵՅՐ.— (Առանց Ռուսաստանին նայելու) Լավ է, շատ լավ
(գավաթը բռնելով Մարտիրոսի առջեվ)։ Եյ, ծիպլի ծատ
գինի ածա ինձ համար։

ՄԱՐՏ.— (վշտացած, կոմիքական շարժումով) Իմնչ, ծիպլի ծ
տուր, իմնչ ասել և ծիպլի ծատուր։ (սեղանակիցներին) Լ
ցիք։

ՋԱՎԱԴ.— Ատածու հյուր, պա մեր ընկերն է ու բարեկ
(լեցնում է Սեյրանի գավարը գինով)։

ՄԱՐՏ.— Հիսուսի խոնարհ ծառա, Ծըկըտանց Մարտիրոս է
նունս։ Ծիպլի ծատուրս վորն է։ Ցես վաճառական եմ։

ՍԵՅՐ.— Գիտեմ, դուք ամենքդ վաճառականներ եք։ Առևտուր
ծախում, փող աշխատում, քեֆ անում և պատիվ տա
այդ մարդուն (առանց նայելու ցույց է տալիս Ռուսաստ
կողմը։ Խմում է)։

ՅԵԳՈՈՐ.— (Ջավադին) Ցես սկսում եմ կատաղել։

ՋԱՎԱԴ.— (Ցեգորին) Համբերիր (ճորից լեցնում է Սեյրանի գ
վարը գինով)։ Մարի քեզ հյուրասիրողի կենացը։ Ռուսաստ
մեր պարծանքն է։

ՍԵՅՐ.— Այո, պարծանքը։ Լավ, լավ (խմում է)։

ՄԱՐՏ.— (տակավին վրդովված)) Չե, ինչ կասեք, ա. ծիպլի ծատուր։ Արյունս խառնեց (գարեջուր է խմում)։

ՋԱՎԱԴ.— Բայց, բարեկամ, դու մեզ չասացիր թե վորտեղից ես յեկել, ով ես։

ՍԵՅՐ.— Մի վոսպիր, կիմանաս։

ՌՈՒՍՏ.— Ինչ հարկավոր է իմանալ ով է և վորտեղից է յեկել։ Բավական է, վոր դարիր է և հայ քրիստոնյա (Սեյրանին)։ կեր, խմիր, բարեկամ, ինչպես քո տանը։ Դրանք լավ տղերք են, աղնիվ, պատվական ընկերներ։

ՄԱՐՏ.— Բայց նա ինձ ծիպլի ծատուր անվանեց, թող ասի սես ննենք, իրենք ով են։

ՅԵԳՈՈՐ.— Այո, յես էլ ուզում եմ իմանալ ով է մեզ հետ սեղան նստել (հուզված ձայնով Սեյրանին)։ Եյ, պարոն, անունդ ինչ է։

ՍԵՅՐ.— (սառը, անուշադիր) Սեյրան (թերեվ լուրյուն)

ԱՄԵՆՔԸ.— (նայում են իրար)։

ՍԵՅՐ.— Ճանաչեցիք։

ՋԱՎԱԴ.— Շահարի Շիրվանում քառասուն Սեյրան կա։ Լե
զարդ ասա։

ՍԵՅՐԱՆ.— Կուժ ու կուլա ծախող Հայրապետի տղա Սեյրան։ (նայում է գաղտուկ Ռուսաստին, վոր տեսնի ինչ տպավորություն գործեց նրա վրա. ճորից թերեվ լուրյուն)։

ՌՈՒՍՏ.— (ցնցվում է) Դա նա յե (զսպում է իրան)։

ՍԵՅՐ.— (ամենից, վոր միմյանց յերեսին են նայում բացի Ջավադից) Ելի չճանաչեցիք։

ՋԱՎԱԴ.— Ցես ճանաչեցի (Ռուսաստին ճոճոցեով խնդրում է չնուզվել)։

ՋԱՎԱԴ.— Հիմի յեմ հասկանում, թե ինչու գավաթը փշրեցիր. բրուտի վորդին միայն աման կոտրել կարող է սովորել։

ՍԵՅՐ.— (յերկիմաստ) Ճշմարիտ ես ասում, յես աման կոտրող եմ։

ՄԱՐՏ.— Թեև դու ինձ ծիպլի ծատուր անվանեցիր, բայց յես կասեմ, վոր քո հայրը հեթանոսների մեջ լավ մարդ է։ Նա մի ժամանակ ուզում եր մեր սուրբ հավատն ընդունել և Հիսուսի Քրիստոսի աշակերտ գրվել ձեր հարևան դերձակ Բարխուդարը չթողեց։ Գնաք և ասած, աղա Ռուսաստամ, վոր անեղ աստծու գառներին Ճշնամի չե։ Նա մեզ չի սիրում։ Թող տերը փրկե իրան գեհենի կրակից։ (Սեյրանին) Բայց դու չմոռանաս, վոր ինձ ծիպլի ծատուր ասացիր։

ՋԱՎ.— Տղերք, դիշերն անցնում է, ժամանակ է Թուստամի հանդիստ թողնելու։ Դավաճներդ լեցրեք։ (լեցնում են)։

ՍԵՅՐ.— (լեցնում է յուր գավարը ու խոսքն չեվ եղ դադարնում)։

ՋԱՎ.— (Սեյրանցին) Լավ ես կռնծում, խոսք չունեմ։ Բայց, բարեկամ, մի քիչ սպասիր, բան ունեմ ասելու։ (Վոտի յե կանգնում)։ Տղերք, շնորհակալություն ասենք մեր դարդի մանդ ընկերոջն ու բարեկամին։

ԱՄԵՆՔԸ.— (բացի Սեյրանցից) Շնորհակալություն, շնորհակալություն։

ՋԱՎ.— Ռուստամ, առավոտ մի ուրախություն հաղար անի, հազար հոգսերդ մի։

ԱՄԵՆՔԸ.— (բացի Սեյրանցից) Ամեն, ամեն։

ՋԱՎ.— Ռուստամ, սեղանդ միշտ բաց լինի սրտիդ պես, սիրող ուրախ սեղանիդ պես։ Վատ որդ այս լինի, լավ որդիդ որ չունենի։ Գործիդ հաջողություն, կյանքիդ յերկարություն։

ԱՄԵՆՔԸ.— (բացի Սեյրանցից) Ամեն, ամեն։

ՋԱՎ.— (վոգեվորվելով) Միշտ մեր պարծանքը լինես քո նամուսով, քո պատվով, քո մեծ ու պատիկ հանդիսելով։ Ռուստամ, դու Դաստանում աղնիվ և քաջ մարդու անուն ես հանել, փառք ու պատիվ քեզ։ Մենք հպարտանում ենք, վոր ունինք քեզ նման հայրենակից և բարեկամ։ Այսպես ե, չե՞ տղերք։

ԱՄԵՆՔԸ.— (բացի Սեյրանցից) Այդպես ե, այդպես ե։

ՋԱՎ.— Մենք գիտենք, վոր դու քո նամուսի համար առյուծ ես, բայց գիտենք, վոր դու մնծերի մոտ մեծ ես, պատիկների մոտ պատիկ, զորավորների դեմ զորավոր, անզորների համար պաշտպան, վոր վոչ գայլերից ես վախենում, վոչ դևերից ես արհամարհում։ (բարձր) Ապրի մեր Ռուստամը (գավարը դատարկում է)։

ԱՄԵՆՔԸ.— (բացի Սեյրանցից) Ապրի, ապրի (գավաթները գցում են Ռուստամի գավաթին յեվ խմում)։

ՄԱՐՏ.— Թող յեհովայի որհնությունը քեզ վրա լինի։ Ամեն։ (նայելով Սեյրանցին կատաղի հայացքով)։ Ծիպլի ծառուց։

ՋԱՎ.— Դեհ, տղերք, մեկ ել լեցրեք բաժակները։

ԱՄԵՆՔԸ.— (լցնում են գավաթները բացի Սեյրանցից)։

ՋԱՎ.— Տղերք, ես այստեղ չեկա ամենից առաջ։ Ցեկա ու Թամին տեսա ուրախ, զվարթ։ Նա նոր յուր ընտանիքին

նամակ եր ստացել։ Նա այնքան ուրախ եր, վոր տեսնելիք չունեք ճանաչելու են, բարեկամներ, մենք պատված չենք, հասկանալ չենք կարող ընտանիքի քաղցրությունը։ Բայց մեր ընկերը, գոհություն ասածո, այդ քաղցրությունը վայելում է։ Այսպես ե, թե՞ չե։

ԱՄԵՆՔԸ.—(բացի Սեյրանցից) Այդպես ե, այդպես ե։

ՋԱՎ.—Դեհ, խմենք, ուրեմն, Ռուստամի ընտանիքի կենացը։ Տայ ասածած, վոր նա միշտ բախտավոր լինի, միշտ այնպես ուրախ, ինչպես յես տեսա նրան այսօր։

ԱՄԵՆՔԸ.—(բացի Սեյրանցից) Ռուստամ, ընտանիքիդ կենացը (գավաթները զարկում են Ռուստամի ձեռ յեվ խմում)։

ՋԱՎ.—Մի բան ել ասեմ, խոսքս վերջացնեմ։ Հասկացող մարդիկ ասում են, վոր ընտանիքն առանց զավակների բաղդավոր չե։ Եհ, այս ել խմենք և ասածուց խնդրենք, վոր նա մեր Ռուստամին շուտով պարգևի իր նման մի զոչ տղա։

ԱՄԵՆՔԸ.—(բացի Սեյրանցից) Ամեն, ամեն, ամեն, հուռռա...

ՄԱՐՏ.—Ցխսուսը կպարգևի։

ՍԵՅՐ.—(միջս նստած է, մինչ բոլորը կանգնած են։ Խորհում է, ըրթռւնցիները կրծոտելով)։

ՑԵԳՈՒՆ.—(շարունակ դիտել է Սեյրանցին, բավականին գրգռված) Եյ, ղարիբ, վՒր ես կենալու վոտքի, թե՞ չե, խմելու ես այս կենացները, թե չե՞։

ՋԱՀԱՆ.—Ղարիբը հարբել է, շարժվել չի կարող։

ՑԵԳՈՒՆ.—(մեկուսի Ջավադին) Սատանան ասում է դրա կողքը ծակիր (ձեռը սեղմում է դաշույնի դասակին)։

ՋԱՎ.—Համբերիր։

ՍԵՅՐ.—(բարձր) Եյ, ով է հարբած, յես։ Տեսնենք։ (վոտի յե կանգնում, ուղղում իրան, մի հայացք ձգում բոլորի վրա յեվ, գլուխը բարձրացնելով, աջ ձեռը սեղմում դաշույնի դասակին, ձախ ձեռով գավարը բարձրացնում)՝ Թամադա։

ՋԱՎ.—Լսեցեք, լսեցեք, ղարիբն է խոսում։

ԱՄԵՆՔԸ.—(լարում են իրանց ուշադրությունը)։

ՍԵՅՐ.—Թամադա, ինչպես հրամայեցիր, յես ել խմում եմ, ցանկանում նրան յերկար կյանք, առողջություն, հարստություն, տուն-տեղ, բաղդավորություն, ձեզ նման զարդիմանդ ընկերներ, այսպես ուրախ ուրախ սեղաններ և ինձ նման անկոչ հյուր։

ՋԱՎ.—Ապրես քաջեկամ, ապրես։

ՋԱՀԱՆԳ.—Մարդը խոսել խնացել է։
ՅԵԳՈՒՐ.—Թող տեսնենք ինչ է ասելու։
ՄԱՐՏ.—Բայց չես ծիպլի ծառուրը չեմ ներել նրան։
ՌՈՒՍՏ.—(ամբողջ ժամանակ միյեվնույն դիրքում կաճգճած, տա-
րուճակ դիտում է Սեյրանին)։
ՍԵՅՐ.—Թամադա, դու ասացիր, վոր Ռուստամը ձեր պարծանքն
է, վոր նա Դաղստանում ազնիվ մարդու ու քաջ տղամար-
դու անուն ունի։ Բայց դու այն էլ ասացիր, վոր նա յուր
նամուսի համար առյուծ է։ Ցես հարցնում եմ այդ մարդուն,
ինչ ասել է նամուս (գավաթը դնում է սեղանի վրա յեվ ձե-
ռը ավելի ամուր սեղմում դաշոյնի դասակին։ Անհնգիը տա-
րակուսանքով նայում են նախ միմյանց, ապա Ռուստամին։
Իսկույն յուր հարցի պատասխանը չստանալով, ինչ լուրյունից
հետո)։ Չ՞ը, հարցնում եմ, ինչ ասել է նամուս։
ՌՈՒՍՏ.—(հուզմունքը հազիվ զսպելով) Նամուսը գեղջ դյուղա-
ցիների կերակուրը չի։
ՍԵՅՐ.—(դառն ներգնուրյամբ) Աֆարին, աֆարին, իսկ և իսկ իմ
ուզածն ասացիր (գավաթը բարձրացնելով)։ Թամադա, ինչ-
պես հրամայեցիր, ցես ել խնդրում եմ ասածուց, վոր նա այդ
մարդուն պարգևի մի դոչ տղա։ Ցանկանում եմ, վոր այդ
տղան լինի այնքան նամուսով, վորքան ինքը։ (Սիմատում
է դառն ծիծաղով)։
ԱՄԵՆՔԸ.—(բացի Ռուստամից) Շատ լավ, շատ լավ։
ՍԵՅՐԱՆ.—Ցա ասում, վոր տղան լինի հարազատ ծնունդ, վոր
նա աչքունքով, յերեսմերկուսով նմանվի այդ մարդուն, վոր
ամեն մի տեսնող ասի, ահա, դա Ռոչաբյանց Ռուստամի տղա-
վակն է, իսկ և իսկ նրանն է, ուրիշինը չե։
ՋԱՀ.—(լուրջ, խիստ) Հեռո՛, հեռո՛։
ՍԵՅՐԱՆ.—Վորովհետև, լսեցնք, վորովհետև, անհնգ չար սատա-
նին։
ՋԱՀԱՆ.—Վորովհետև գինին գլխիդ շատ է գոռում։
ՅԵԳՈՒՐ.—(ծորից գրգռվելով) Թողեք, թողեք տեսնենք ինչ է դուրս
տալիս։
ՍԵՅՐ.—Վորովհետև հաստատ գիտեմ, վոր Ռուստամի տղան կամ
աղջիկը—ասածուն է հայտնի—նմանելու է յուր խիստ հայրը։
ՋԱՀԱՆ.—(հեգնաբար) Բան ասաց, լավ, տեղդ նստիր, պատաս-
խանդ տուր։

ՌՈՒՍՏ.—Իսկական հոգը։ Ի՞նչ էս ուզում ասել, տղա։
ՍԵՅՐ.—Հարիֆ ես, հասկացիր ինչ ասացի։ Ա, յեղկ (առանց խոս-
լու գավաթը շարտում է ճաշակի վրա։ Ընդհանուր ծիծաղուրյուն,
նույնուն Լուրյուն մի բանի վարկյան)։
ՋԱՀ.—Եյ. Ղարիբ, դու հարբած չես, դու խելագար ես։
ՅԵԳՈՒՐ.—(կատաղի) Ինչո՞ւ փշրեցիր գավաթը։
ՍԵՅՐ.—Փշրելով գավաթը, ցես փշրում եմ այն մարդու նամուսը,
վորին այդքան պատիվ եք տալիս։
ՌՈՒՍՏ.—Լակո՛տ (կորցնելով իրեն իրաև, ուզում է հարձակվել Սեյ-
րանի վրա, բայց նույն վայրկյանին զսպում է իրան) Վոչ,
վոչ, պետք է լսել մինչև վերջը։
ՅԵԳՈՒՐ.—Շատն, շատ վորդի։ (դաշույնը մերկացնելով, ուզում է
զարկել)։
ՋԱՀ.—Գնա, կորիր այստեղից, լիրբ։
ՌՈՒՍՏ.—Կացեք։ Ցես չեմ թողնիլ այդ մարդու գլխի մի մազին
անգամ դիպչել։ Նա իմ հյուրն է։ Մեն մենակ մարդու վրա
հարձակվելը նամարդուրյուն է։ (միանգամայն զսպելով իրան,
դառնում է Սեյրանին) Տղա, չես քեզ չեմ ճանաչում։ Անու-
նըդ լսել եմ, բայց քեզ առաջին անգամն եմ տեսնում։ Դու
չեկար, դուռս ծեծեցիր, չես բաց արի։ Ասացիր ասածու հյուրն
եկար, ընդունեցի։ Ասա, ինչո՞ւ համար ես եկել։
ՍԵՅՐ.—(տանջանքով) Նամուսի համար եմ եկել, նամարդ, նամուսի
համար։ Տանջանքն ու հուսահատուրյունն են ինձ բերել
այստեղ։ Սարեր ու ձորեր եմ անցել, անքուն գիշերներ եմ
անցկացրել, անհուն տառապանքներ եմ քաշել, վոր գամ և
վերջապես երեսիդ ասեմ այն, ինչ վոր ասացի։ Չնախացաբ,
լավ, ավելի պարզ կխոսեմ։ Ես մի տղա չեմ, վորին մոլոր-
ը մատով եյին ցույց տալիս։ Ծնողներիս միակ զավակն
եյի։ Ցես ունեցել մի հարսնացու, վոր գոհար եր գոհարների
մեջ։ Նրա կյանքումն եյի ապրում, նրա շնչումն եյի շնչում
չես, Դու նրան խլեցիր իմ ձեռքից։ Խլեցիր, ոգավելով նրա
պապան հոր խստուրյունից և քո հարստուրյունից։ Դու ինձ
անպատվեցիր, ստորացրիր։ Այսոր իմ ընկերների յերեսին
նայել չեմ կարող։ Նրանք ծաղրում են ինձ, նրանք
ինձ անվանում են աննամուս։ Շատ եմ մտածել, շատ եմ,
տանջվել հենց այսոր, հենց այս յերեկո, մինչև վոր վճռել եմ
գալ այստեղ, գալ և այս ազիզ յերեկո, հենց քո ընկերների
առաջ, վրեժս առնել։ Դե, չես իմն արի, արա դու էլ, ինչ վոր
ուզում ես։

ՌՈՒՍՏ.—Լակոտ, սուտ ես ասում։ Իմ կինը քո հարբնացած չի լինել։

ՍԵՅՐ.—Ամբողջ մեր վաղորդը դիտես։ Վկա չեն մեր բոլոր հարևանները։

ՌՈՒՍՏ.—Ցես չեմ ուզում ճանաչել քո հարևաններին։ Սուտ ես խոսում. ասում եմ, սուտ ես։

ՍԵՅՐ.—Քո աներոջ ավետարանի կողքին ես գրված։

ՌՈՒՍՏ.—Գրված է և ջնջված։ Լակոտ, յես ուրիշի պատառը գողացողներից չեմ։ Դեհ, ալ մի՛ յերկաբացնիր, չոքիր իմ առաջ, չոքիր և ներողություն խնդրիր, յեթե կյանքը քեզ համար։

ՍԵՅՐ.—Յեթե յես քեզ նման մարդուց վախենայի, այստեղ չէի գալ, աննամուս։

ՌՈՒՍՏ.—(վազում է դեպի ձախ պատը, վերցնում է հաց ու դաշույնը յեվ հարձակվում է Սեյրանի վրա)։ Կատր-կատր պիտի և աներ շուն շան ձագին։

ՋԱՎ.—(բռնում է Ռուստամին) Ցես չեմ թողնիլ վոր ձեռնդ կեղտոտես։

ՋԱՀԱՆԳ.—(նույնպես բռնելով Ռուստամին)։ Թող գնա կորչի լիրբ։

ՄԱՐՏ.—(ձեռները իրար կցելով, աչերը ուղղում է դեպի վեր)։ Ո՛վ սուրբ, Հիսուս. ազատիր մեզ արյունհեղությունից։

ՌՈՒՍՏ.—(աչխատելով ազատվել Ջավադի յեվ Ջահանգիրի ձեռներից)։ Թողնք լինձ, յես նրան չեմ սպանիլ։ Վոչ, վոչ, նրան ուրիշ կերպ պիտի պատժել։ Նա ողամարդ և, նա մեն մենակ յեկել և այստեղ վրեժ առնելու։ Դաղստանում այդպիսին թշնամու հետ կռվում են։ Փռեցնք հատակի վրա մի յափնջի։ Մենք կկռվենք դաշույններով։ Ցեվ ով մեղանից վախենում է յափնջուց դուրս դրից, նա և վախկոտը։ Դե, շուտ փռեցնք յափնջին։

ՍԵՅՐԱՆ.—(արագությամբ յուր յափնջին փռում է հատակի վրա, մերկացած դաշույնը ձեռին)։ Համեցեք. յես պատրաստ եմ։ Կռիվը մի մարդ պիտի ուենենա։ Թող մեկն ու մեկը մեզնից կորչի։

ՋԱՎԱԴ.—(Մռնչալով)։ Կորիր, լիրբ, կորիր, ասում եմ։ Վաղը յես քո հաշիվը կվերջացնեմ։ (Ռուստամին, հագիվ պահելով նրան)։ Ցես չեմ թողնիլ քեզ այդ շան հետ մի յափնջու վրա կռիվ անել։ Դա անպատվություն կլինի։

ՄԱՐՏ.—(Ձեռները իրար կցելով)։ Ցեհովա, Ցեհովա, Աբրահամի Իսահակի աստված։

ՑԵԳՈՒՆ.—Ցես կկռվեմ նրա հետ յափնջու վրա։ (Ուզում է մերկանալ)

մեցնել, դաշույնը մերկացնելով)։

ՌՈՒՍՏ.—(Ձիգ ածելով ազատվել Ջավադի յեվ Ջահանգիրի ձեռներից)։ Վոչ վոք, վոչ վոք, բացի ինձնից։ Նա իմ ձեռքով պիտի պատժվի, միմիայն իմ ձեռքով։ (Կրծոտում է իրան բռնող ձեռները)։ Ա՜ա, թողնք, ասում եմ, յես կխելագարվեմ։

ՍԵՅՐ.—(կատաղի ծիծաղով)։ Հա, հա, հա, ինչպե՜ս և կապտել (դաշույնը դնում է պատյանի մեջ)։ Կատաղիր, փրփրիր, ալրվիր։ Քո կնիկն առաջ իմն է յեղել։

ՌՈՒՍՏ —(ցնցոտիպես)։ Ապացո՛ւյց, ապացո՛ւյց եմ ուզում

ՍԵՅՐ.—(կրնկի ծիծաղով)։ Հա, հա, հա, ապացո՛ւյց։ Գնա, բաց արա կնոջդ կուրծքը և տես խալը, սև խալը նրա աջ ծծի տակ։ (Յափնջին արագ վերցնում է յեվ դուրս վազում խորշի դռնով։ Ֆռֆին վզգալով ձյունի կույտեր է թափում ներս։ Ամենքը սարսափի մեջ են։ Լռություն)։

ՑԵԳՈՒՆ.—Նա դուրս յեկավ քո հարկի տակից, այժմ յես կարող եմ նրան սպանել։ (Յափնջին վերցնելով, վազում է փողոց)։

ՀԱՄԲ.—(ամբողջ տեսարանի միջոցին կուչ յեկած կանգնած է մի անկյունում։ Շտապով ծածկում է խորշի դուռը)։

ՏԵՍԻԼ V

Նույնք, առանց Սեյրանի յեվ Ցեգոնի

ՌՈՒՍՏ.—Ինչ ասաց նա։ Խալը, սև խալը կրծքի վրա։ Ա՜հ, ճաքեց սիրտս, կատր կատր յեղավ։ Դե, թողնք, դե բավական է, անիրավները, բավական է (ազատվում է Ջավադի յեվ Ջահանգիրի ձեռներից), խալը, սև խալը։ (թուլացած նստում է աթոռի վրա, դաշույնը ընկնում է ձեռից)։

ՋԱՎ.—Ջուր տվեք, ուշքը գնում է։

ՀԱՄԲ.—(շտապով ջուր է մատուցանում)։

ՌՈՒՍՏ.—Վոչ, ուշքս վրես է։ Գնդակները ևն պատում մարմնիս մեջ։ (ջուրը մերժելով) Վոչ, վոչ, յես կնիկ չեմ, վոր ուշաթափվիմ։ Մի վախենաք, չեմ մեռնիլ։ Խալը, սև խալը։ Համբարձում։

ՀԱՄԲ.—Այստեղ եմ, տեր։

ՌՈՒՍՏ.—Գնա, ձիս թամքիր։

ՋԱՎ.—Տեսքի չեկ, Ռուստամ, շունն անգամ չի հավատալ այդ լուրի խոսքերին։

ՋԱՎ.—Ցեգոնը կսպանի նրան,

ՄԱՐՏ.—Ցեհովան կպատժի նրան։

ՌՈՒՍՏ.—Խակուչն, խակուչն Թամքիը ձիս, առանց մի բոպե ուշացնելու։

ՀԱՄԲ.—Բուքը սաստկացել ե, քամին ծառերը և տունեում արմատից։

ՌՈՒՍՏ.—(կատաղի)։ Լսիր, շուն, ձիս սասում եմ։ (վեր ե կենում)։

ՀԱՄԲ.—(Շտապով գնում ե ձախ կողմի դռնով)։

ՋԱՎ.—Բայց ի՞նչ ես ուզում անել։

ՌՈՒՍՏ.—Լավ խաբեցին, լավ քանդեցին տունս, լավ կեղտոտեցին յերեսուն ու յերկու տարվա պատիվս։ Ռուստամը մի լպստած պատառ ուտող, Ռուստամը մի անասնակ կինոջ մարդ։ Ո՞վ խլեց իմ գլուխը գլխիցս։ Մայր, մալը, ես այդ աղջկան չեյի ճանաչում, վոչ ել նրա ծնողներին։ Ձես վոչ վոքի չեյի ճանաչում այն անիծված քաղաքում։ Թամքիը ձիս, Համբարձում, Թամքիը, գլուխս ուսերիս վրա չի կանգնում, բայց յես կպահեմ նրան։ Կպահեմ, մինչև վոր տեսնեմ այդ խալը։ Ինչ հիմարն եմ յես։ Ինչո՞ւ յերբեք չեմ նայել նրա կրծքին։ Լավ, շատ լավ, հիմա կտեսնենք, կտեսուզենք։ Թամքիը Համբարձում, Թամքիը նժույգս։ Նա ինձ հինգ որում կտանի տեղ կհասցնի։

ՄԱՐՏ.—Սմենակարող ասուված, այս յեղանակիցն։

ՋԱՎ.—Ամոթ ե, Ռուստամ, խնկքի յեկ, կինդ անմեղ ե։

ՋԱՀԱՆ.—Իհարկե, անմեղ ե։

ՌՈՒՍՏ.—Լռեցեք. դուք ինձ չէ՞ողիք, վոր յես ժամանակին նրա լեզուն կտրեմ, այժմ ուշ ե։ Ի՞նչ, անմեղ ե։ (դառը ծիծաղ) Հա, հա, հա, ձվ կարող ե հասատատել։ Ձոթը սարերի յեռևում, մի պառավ կինոջ ձևրքին, մեն մինակ, Ղաբեցին ինձ, Ջավադ, շատ անասուած խաբեցին։ Կրծքի խալը, ա՛ խալը։ Ա՜հ, ինչու՞ յես թռչուն չեմ, վոր այս գիշեր հասնեմ այնտեղ։ Բայց վոչինչ, իմ ձին լաքե ե։

ՋԱՀԱՆ.—Այս ուշ գիշերին, այդ գարհուրելի յեղանակիցն։

ՄԱՐՏ.—Քամին մռնչում ե գալի պես։ Դու Դաղստանի ձորերում կթագվես ձյունի տակ։

ՌՈՒՍՏ.—Ինձ համար այսուհետև վոչ քամի կա, վոչ ձյուն, վոչ ասուած։

ՄԱՐՏ.—(սարսափած Ռուստամի վերջին խոսքերից)։ Ձիսուս, Ձիսուս, ինչ ասաց նա։

ՌՈՒՍՏ.—Ամեն ինչ խավարվեց աչքումս։ Ձես անհամմուշ, իմ յերեխան ուրիշինը։ Անիծվիս դու, Համբարձում, ինչո՞ւ ուշացար։ Հա, պետք ե հաղնվել։ (վերցնում ե ձախ կողմի անկյունում դրած յերկար կոշիկները, հագնվում ե, մեջքին դաշույնը, հագնում ե վերարկուն, ուսերին գցում յափնջին յեվ գլխին դնում սպիտակ չուլյաճին)։

ՋԱՎ.—Դոնե սպասիր մինչև առավոտ, Թող լուսը բացվի։

ՌՈՒՍՏ.—Լուսը չի բացվելու, Ջավադ, արեգակը խավարեց։ Լսեցեք, բարեկամներս, խանութս հանձնում եմ ձեզ։ Ով դիտե ինչ կարող ե պատահել։ Յեթե հետ չգամ, ծախսեցեք ամեն բան, գոյացած դումարը մորս ուղարկեցեք։

ՀԱՄԲ.—(գալիս ե ձախ կողմի դռնով)։ Ջին պատրաստ ե։

ՌՈՒՍՏ.—Դեհ, ճիտցեք բարով, տղերք։ Ինչ արած, ասուած կամեցավ, վոր մեր ազիզ յերեկոն այսպես վերջանա։ Մնաք բարով։

ՋԱՎ.—Դոնե համբուրվենք (համբուրվում են)։ Բարի ճանապարհ։ (հուզված) Դնա, պետք ե գնալ։

ՋԱՀԱՆ.—(համբուրվելով) Փող ունե՞ս մոտդ։

ՌՈՒՍՏ.—(գրպանը տեսափելով) Բավական ե, ինչ վոր կա։ Մնաս բարով, յեղբայր Մարտիրոս։ (համբուրվում ե)։

ՄԱՐՏ.—Հիսուսի երեսուներկուն լինի քո ընկերը։ Տես, չմրսես։

ՌՈՒՍՏ.—(վերցնելով պատից fաշ արած մեռակը, գնում ե ե ձախ կողմի դռնով)։

ՋԱՎ.
ՀԱՄԲ. — (հետևում են նրան)։

ՋԱՀԱՆ.—Դու չես ուզում ճանապարհ դնել։

ՄԱՐՏ.—Վախենում եմ դուրս գալ, կարող եմ մրսել։

ՋԱՀԱՆ.—(գնում ե ձախ կողմի դռնով)։

Տ Ե Ս Ի Լ VI

Մարտիրոս յեվ Ցեզոռ

ՑԵԶՈՌ.—(Խորքի դուռը բացվում ե սոսկալի դղրդյունով, Քամին ավելի յե սաստկացել։ Հոգնած յեվ ուժասպառ)։

ՄԱՐՏ.—(սարսափ.) Սպանեցիք։

ՑԵԶՈՌ.—Դժբաղդաբար, վոչ։ Գնաց, անհայտացավ խավարի ու բուքի մեջ։

ՄԱՐՏ.—(հառաչելով) Գոհություն աստծու։ Թե չե ինձ ել վիպի կանչելին։ Դուռը ծածկիր։ Վուու, ինչպես ե փչում, մարմինս զարդանդում ե։

ՔԱՄԻՆ.—(Քամին սուլում սասիկ)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Ց Ր

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՍԹՈՐԴ

ՌՈՒՍՏԱՄԻ ՎՐԵԺԸ

Տեսարանը ներկայացնում է Ռուստամի բնակարանը Շահաբում։ Նույն սենյակը, ինչ վոր յերկրորդ գործողության ժամանակ, նույն կահ-կարասին, հարկավ, բացի ճաշի սեղաններից։ Պատերի տակ դրած են հնաձև ընկուզենու աթոռներ։ Ձախ պատի առջև դեպի ավանտեն, մի մեծ կլոր մխոտանի սեղան, առանց ծածկոցի։ Ա՛լ պատի առջև, յուսամուտների մոտ մի թախտ, պարսկական գորգով ծածկված։ Վառարան չկա, նրա փոխարեն սենյակը տաքացնում է թախտից վոչ հեռու դրած մի մեծ երկաթյա կրակարան (մանգալ) վրեն մի յերկաթյա կրակակալ։

ՏԵՍԻԼ Ի.

Սաճամ յեվ Շպպանիկ

ՍԱՆԱՄ.—*(Նստած է թախտի վրա մի վոտը ծալած, մյուսը ձգած։ Ուրախ տրամադրության մեջ է։ Ձեռին բռնած է մի յերկայն հաստ ծխամորճ կեռասի կարմրագույն փայտից։ Մեծամորճ ծխակից վերցնում է ընտիր ծխախոտ յեվ լեցնում ծխամորճի կավե կարմրագույն գլուխը։ Հագած է մեխակագույն բոխչա արխալուղ, յեզրերը վոսկեքելով զարդարած, կապտագույն մշտաֆսյա շապիկ, գունավոր փոխան։ Վոտներին յեվրոպական կոշիկներ)։ Անցյալ որն ինքն ասաց։*

ՇՊՊ.—*(Նստած է Սաճամի դեմուդեմ ծալապատիկ։ Հագնված է սվիլի հասարակ բան հարսանիքի յերեկո։ Վոտներին սեվ չուստեր, գլխին մի հասարակ կինեմոնագույն շալ։ Անկարգ մազերը կիսով չափ սոդել են բուխ բուխ յեվ չոր չոր դեմքի քիչ նման է գնչուհու)։ Հապա, դե շուտ ասա, վոր ես էլ ուրախանամ և։ Ուրեմն քանի՞ ամիս է։*

ՍԱՆ.—*Իմ հաշվով պետք է վոր չորս ամիս լինի։*

ՇՊՊ.—*Սպասիր յես ասեմ (հաշվում է մատների վրա)։ Հիմի հունի-*

վարումն ենք, չե՞։ Հա, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, դա յել հունիս։ Ամռով համբարձումանին կունենաս մի գեղացի թոռնիկ։

ՍԱՆ.—*Յերանի տղա լինի։* (Ծխամորճը լեցրել է, նստած է ածում Շպպանիկին կրակ դնելու ծխախոտի վրա)։

ՇՊՊ.—*Անպատճառ տղա կլինի, սիրտ ուրախ պահիր։* (Վեր է կենում, յերկաթյա կրակակալով վերցնում է մի վառ կրակ մանգալից յեվ դնում Սաճամի ծխամորճի վրա։ Ցերբ սա ծխախոտը վառում է, ածուխը վերցնում է ու գցում մանգալի մեջ)։

ՍԱՆ.—*Դո՛ ինչից գիտես, վոր տղա կլինի։* (Ծխում է)։

ՇՊՊ.—*Անցյալ որը պոչավոր աստղ յերևաց յերկնքի վրա. որենք է վոր պոչավոր աստղ յերևալու տարին միայն տղաներ են ծնվում։*

ՍԱՆ.—*Աստված քո ասածը կատարե։* (տեսնելով Սուսանիկին, աչքով ուզում է շպրտել գուշագնում է Շպպանիկին)։

ՏԵՍԻԼ

Նույնիսկ յեվ Սուսան

ՍՈՒՍԱՆ.—*(գալիս է ձախ կողմի դռնեռվ. ձեռին մի սկուտեղ, վրեն յերկու բաժակ սուրճ կաթով։ Գլուխը ծածկած է շեկ վասկեզարդ նուրբ խոպիով, կարմիր թոռով։ Հագնված է աննման շեղ, բան իր ծնողների տանը։ Վոտներին ավելի նուրբ յեվրոպական կոշիկներ։ սկուտեղը դնում է Շպպանիկի ու Սաճամի առջեվ յեվ ուզում է հեռանալ)։*

ՇՊՊ.—*Կանդնիր, մի լավ մոտիկ անեմ քեզ, այ մարդ։ Յերեկ ծնողներիդ մոտն եյիր։*

ՍՈՒՍԱՆ.—*(հեռահրվված)։ Ի՞նչպես են։*

ՇՊՊ.—*Հայրդ ուրախ, մայրդ ուրախ—բաղդավոր։ Եհ, ապրիր հիմա, լվվա, տես ինչ տուն բերից քեզ Շպպանիկը։* (Սաճամին)։ *Բայը չինար, աչքերը գիլաս գիլաս, ունքերը զամով քաշած, մատներ ունեն շիմշադի պես։* (վեր է կենում պիճդ գրկում է Սուսանին յեվ համբուրում)։ *Ըհ, Շպպանիկը մախամաղ մախամաղ Թշերիդ մատաղ։*

ՍՈՒՍԱՆ.—(*ամոթխածությունից, կարմրելով յերեսը դարձնում է յեվ լուռ գնում է ձախ կողմի դռնով*)։

ՏԵՍԻԼ 3.

Սաճամ յեվ Շպպանիկ

ՍԱՆԱՄ.—Ինչդ չկրնխայնն ամաչեցրիր։

ՇՊՊ—Հը, սաա տեսնեմ, շնորհակալ ես ինձանից, թե չե։ (Նստում է յեվ սկսում սուրճ խմել պնակից)։

ՍԱՆԱՄ.—Տափից մինչև չկրկինք շնորհակալ եմ, տափից մինչև չկրկինք։ (Ծխամորճը դանդաղորեն մի կողմ դնելով, սկսում է սուրճ խմել բաժակից)։

ՇՊՊ.—Համ սիրուն, համ խելոք, համ էլ պատվով, մեծ ու պատիվ ճանաչող։

ՍԱՆ։—Յեվ ամոթով, ո, շատ ամոթով. շատ պարկեշտ։ Տեսնում ես այս լուսամուտները, այս կրկնք չորս ամսվա մեջ մի անգամ էլ չի մտածել, վոր փողոց մտիկ անի։

ՇՊՊ.—Բեզ էլ սիրում է, իհարկե, ու պատվում։

ՍԱՆ.—Որովհետև նրա ծնունդը։ Ամեն գիշեր ինքն է շինում ամերսը ու ինձ պատկեցնում։ Մինչև քնելս մեջքս ճմռում է։ Շաբաթ որերը գլուխս լվանում է։ Էլ չեմ խոսում չեզել կարելու մասին։ Ինձանից գոլմա է եփում, վոր մատներդ էլ հետը կուտես։ Թոռ գործելուց նմանը չկա։ Մի խոսքով, կարող եմ ասել, վոր վոսկի է։

ՇՊՊ.—(ուրախ ուրախ)։ Տեսնում ես, տեսնում ես։ Դե, Թող որ ինքն էլ Թշնամիներս ասեն Շպպանիկն այս, Շպպանիկն այն է։ Դիդիրի դի, դիր դիդիրի դիր։ (Չրմա է զարկում յեվ նստած տեղը պարում)։ Դիլ, դիլ, դիլ։

ՍԱՆ.—Աղջի, դե պար ես գալիս, մարդավարի պարիր, վոր քեֆս բացվի։

ՇՊՊ.—Աչքիս վրա։ (Շալը գլխից դեն գցելով, առագ վոտի յեվ կանգնում յեվ սկսում է պարել, չրմա զարկելով)։ Ա՛յ հապա, հա... Ծափ տուր, ծափ տուր, Սանամ խանում։ Դիրիրի, դիրիրի, դիդի, դիդիլ, դիդիլ, դիդիլ։ Ծափ տուր հա, ուխա, ուխա, չալղուս բռնից, չալղուս բռնից։ (պարում է)։

ՍԱՆ.—(ծափ տալով, շարունակ կուշ կուշ ծիծաղում է բարձրաձայն)։ Ջմեռնես, դու Շպպանիկ, չմեռնես, սպանեցիր ինձ։ Դե, լավ. հերիք է Թե չե, իմ պաս էլ բռնում է։ (Նստած տեղը պարում է)։

ՇՊՊ.—(դադարում է պարել յեվ, շալը գլխին գցելով, նստում է)։ Ո՛ւֆ, հոգնեցի։

ՍԱՆԱՄ.—(տակավին ծիծաղելով)։ Ո՛ւֆ, Թուլացա, Թուլացա, Սատկած, գիշեր-ցերեկ պարում ես։

ՇՊՊ.—Ինչդու չեմ պարիլ։ Վոչ փող ունեմ, վոչ պարտք։ Մի մարդ ունեմ զուռնաչի, գիշեր ցերեկ փչում է։ Ջփչելիս՝ կռնծում է։ Հենց վոր գլխին զարկում եմ, լափաշվում և ձկնի պես, խռմփում և խոզի պես։ Այս քաղաքն իմ տունն է, քոռ ու քաչալ իմ դուշն է։ Այստեղ ուտում եմ, այնտեղ խմում, ապՋիվներին պահում, խալաթները ստանում։ Բայց քեզանից նեղացած եմ, Սանամ խանում, շատ եմ նեղացած։

ՍԱՆ —Ինչդու, ա կնիկ։

ՇՊՊ.—Մի՞ռդ է ինչ ոչին բերեցիր գլխիս հարսանիքի մյուս որը, յերբ յիկել եյի խալաթս ստանալու։

ՍԱՆ.—Ախ, Շպպանիկ, մի՛ խոսիր դրա մասին։ Ո, չգիտես Ռուստամս ինչ դրության մեջ եր այդ յերեք որը։ Տունը քանդվի բամբասողներին, ինչ ասեմ։

ՇՊՊ—Ախար չե՞ վոր յես Շպպանիկն եմ։ Գաղտը կաթնա և, յես չերեվի, կարող եմ ալաչես էլ խառնել, այնպես էլ։ Բայց ես աննամուս չեմ, չեյի Թողնի, վոր քեզ նման պատվավոր կնոջ տունը Թաց պատառ մանե։

ՍԱՆ.—Դե, անցածն անցել է, Թողնենք։ Հիմա վորպես ինձանից այնքան շնորհակալ ես, այնքան, վոր ասել չեմ կարող։ Նա Սուսանին սիրում է իր աչքի լույսի պես։

ՇՊՊ.—Ըըհ, Շպպանիկը Ռուստամիպ չանին մատաղ, յերբ ե՞ պալոս։

ՍԱՆ.—(հառաչելով)։ Վալլահ, չգիտեմ։ Առաջ գրել եր, Թե Ջորհնենքին այստեղ կըլինեի. չեկավ։ Հիմա գրում է, Թե զատկին է գալու։

ՇՊՊ.—Նամակ գրելիս ինձանից շատ շատ բարով ասա և գրիր, վոր այն ոսոխած մարդուս համար մի կտոր լեզուս շալ բան չխոսացու։

ՍԱՆ.—Աչքիս վրա։ Մատիս Թել կապիր, վոր չմոռանամ։ (մեկնում է ձեռը)։

ՇՊՊ.—(իր շալի ծոպերից մի Թել պոկելով, կապում է Սանամի մատին)։ Յերեք տարին մի չոխա յի մաշում, այնքան հոբրում և ու փողոցներում շնթռնում։ Հոգիս դուրս եկավ շատ ծեծելուց։ (Լսում է յերեկոյան զանգերի ձայն)։

ՍԱՆ.—(յերեսին խաչակնքելով)։ Ջան՝ զերը տվին։ Այսոր կիրակմուտ և, պետք է յեկեղեցի գնալ։ (բարձր)։ Աղջի, Սուսան (վեր է կենում)։

ՏԵՍԻԼ 4.

Նայիմ ու Սուսան

ՍՈՒՍԱՆ.— Համմե՛ր: (Յերեվում է ձախ կողմի դուռերի մեջ):
ՁԱՆ.—Զարշուվա տուր ինձ:
ՍՈՒՍԱՆ.—(դուրս է գալիս ձախ կողմի դուռերից Սաթամի չարսովը ձեռքին):
ՇՊՊ.—(վեր է կենում): Եհ, յես էլ գնամ, մի քանի տներ ունեմ մտնելու: (Սուսանին): Ձեկ, մին էլ պահեմ այդ թշերդ: (համբուրում է Սուսանին): Բարով մնաս: (գնում է խորի դուռերով):
ՍԱՆ.—(Սուսանի ոգևորյամբ փաթաթվել է չարսովի մեջ): Ձեռ չեկնեցի եմ գնում. չախրես առանց ինձ: (գնում է խորի դուռերով):

ՏԵՍԻԼ 5.

Սուսան մենակ, հետո Սուսամբար

ՍՈՒՍԱՆ.—(ուղեկցելով Սաթամին յեվ Շպպանեկին մինչեվ խորի դուռը, յես է գալիս, դասարկ բաժակները վերցնում է, տանում ձախ դռներով, վերադառնում է մի տեսակ հոգնած: Հառաչում է, Նորից զանգի ձայն: Ցնցվում է, յերեսին խաչակնքում: Զոռում է հատակի վրա յերեսը դեպի առեվելք յեվ աղոթքում երեք անգամ հակատը հպելով հատակին): Ձերկնային դառավոր, մի բան եմ խնդրում քեզանից՝ արտասուքը աչքերիս, վոր այն խնդմ տղան ինձ մոռանա և իմ անբաղդ ծնողները բաղդավորվենե: Ամեն: (վոտի է յելնում):
ՍՈՒՍԱՄԲ.—(գալիս է խորի դռներով, չարսավով յեվ յեվրոպական կոշիկներով): Բարով, Սուսան: (համբուրվում է: Չարսավը վերցնում է ու մի կողմ դնում):
ՍՈՒՍԱՆ.—(ուրախանալով): Ինչ լավ արիր, վոր յեկար, սիրտս ճաքում եր տխրությունից:
ՍՈՒՍԱՄԲ.—Դռները մոտ սկեսրիդ պատահեցի, ասաց մենակ ես, յեկա: (հատում է):
ՍՈՒՍ.—Վորտեղ ե՞լիր: (նստում է):
ՍՈՒՍԱՄԲ.—Մարխամ բաղնու մոտ:
ՍՈՒՍ.—(հետաքրքրված), Ինչպե՞ս և խնդճ կինը:

ՍՈՒՍԱՄԲ.—Եհ խնդճ ասես, Թողնես: Գառավել և, լարել կուչ յեկել:
ՍՈՒՍ.—(տխուր): Անբծում եր ինձ:
ՍՈՒՍԱՄԲ.—Նա քեզ չի անիծում, Սուսան. ծնողները և անիծում: Զանգերի ձայը վոր լսեց, սկսեց կուրծք թափել, ասելով կանչեց, «Կնիկդ որս ընկնի, Բարխուդար: Ասում եր: Տափը փուշ դառնա, նա վոտաբաց, ֆառաշները ընկնեն նրա հետևից, վազ տա, վազ տա, տեղ չհասնի, ամեն ալոնը, կակծալի հառայը, դագ ու բեդադը, յերկինք բարձրանա, աստծուն չհասնի: Ինչ գիտեմ, ելի այս տեսակ հազար ու մի անեծքներ:
ՍՈՒՍ.—(խորին սարսափով): Ամեն, ամեն, Սուսամբար, իմ ծնողները այդ անեծքների տակից դուրս գալ չեն կարող: Իմ պիշեր ցերեկվա աղոթքները չեն փրկել նրանց: Ու սարսափելի չե: Նրան էլ տեսար:
ՍՈՒՍԱՄԲ.—Սեյրանի մասին ես հարցնում: Նա այստեղ չե:
ՍՈՒՍ.—Այստեղ չե՞:
ՍՈՒՍԱՄԲ.—Ահա մոտ յերկու շաբաթ է գնացել է Դաղստան:
ՍՈՒՍ.—(վախեցած): Դաղստան: Ինչո՞ւ համար է գնացել:
ՍՈՒՍԱՄԲ.—Լեզգու շալ բերելու: Մայրն ասում է, ուզում է այժմ առուտուրով պարապել: Բայց դու ինչո՞ւ վախեցար. սպրանեցիր:
ՍՈՒՍ.—Վոչինչ, վոչինչ: Սիրտս մի կասկած ընկավ: (աջխատում է զսպել իրան):
ՍՈՒՍԱՄԲ.—Ձես զարմանում եմ քեզ վրա, Սուսան: վոր դու ելի մտածում ես Սեյրանի մասին:
ՍՈՒՍ.—Կարո՞ղ եմ չմտածել, քանի վոր ես եմ նրա անբաղդության պատճառը:
ՍՈՒՍԱՄԲ.—Իսկի էլ դու չես, հայրդ է մեղավոր:
ՍՈՒՍ.—Վոչ վոչ, Սուսամբար, ես եմ մեղավորը: Ճշմարիտ է, հայրս խիստ մարդ է, բայց նա իր նամուսի դեմքին է ու եր խոսքի տերը: Նա պատվիրել եր, վոր ես մինչև պսակվելս չտեսնվեմ Սեյրանի հետ, չպիտի տեսնվեյի:
ՍՈՒՍԱՄԲ.—Եհ, ինչ պատահեց, վոր տեսնվեցիր, աշխարհը տակն ու վրա՞ յեղավ:
ՍՈՒՍ.—Հարցրու հորս, տես ինչքեր եր ժամածում իմ մասին:
ՍՈՒՍԱՄԲ.—Գիտեմ: Նա կարծում եր, վոր դու...
ՍՈՒՍ.—(ընդհատելով): Հապա, հենց այդ եր, վոր տանջում եր

չէ պահվելու։ Շատ անգամ ամոթից ոնից դուրս չեր գալիս։

ՍՈՒՍԱՄԲ.—Գիտեմ։ Հարսանիքիդ յերրորդ օրը լես ձեր տանն եյի։ Ա՛հ, ինչպես ուրախացան ծնողները, երբ Շալախինը պարելով և յերգելով մտավ և աչքալուսսասաց։ Մարդ ասում եր, վոր հարդ Թոկ եր սապնել վզովը գցելու, յերեխ դու պարզ յերես դուրս չգայիր։ Յերանի գիտենային այժմ նա զղջում է, վոր քեզ փչացած եր համարում։

ՍՈՒՍ.—Զղջում է, Սուսամբար, զղջում է։ Ամեն անգամ ինձ տեսնելիս ամոթից կարմրում է։ Բայց ինչ ոգուտ, վոր ինձ էլ անբարդացրեց, այն խնդճ տղային էլ։ Լսիր, Սուսամբար։ Սրանից յերեք որ առաջ երազումս տեսա նրան։ Ասված իմ, ինչպես եր փոխվել։ Ցես մոտեցա նրան, ձայն բռնեցի։ Թվում եր, վոր մենք երեխաներ ենք, իրար ծաղ տակ։ Ասում, ասացի, խոսիր, Սնյորան, ինչո՞ւ յես տխուր։ Հայրդ-ծեծե՞լ է քեզ։ Նա չխոսեց, ձայն չհանեց։ Ծուռ-ծուռ մոիկ արավ յերեսիս, շուռ եկավ և հեռացավ։ Մնացի մենակ։ Ա՛հ, նա փախչում եր ինձանից ինչպես մի զզվելի ոձից։ Ցես գոռացի և ինքս իմ ձայնից զարթնեցի։

ՍՈՒՍԱՄԲ.—Կարող եմ ասել, վոր դա շատ լավ երազ է։ Նա քեզ և մոռացել, դու էլ նրան կմոռանաս, պրծավ գնաց։

ՍՈՒՍ.—Ցես առավոտյան բաց արի «Ցերազգիրքը». նայեցի։ Այնտեղ ասված է. «որը չար է, յերբոր յերրորդ օրը փոտորիկ»։ Այսոր յերրորդ որն է, առավոտից դես յես աչ ու սարսափի մեջ եմ։ (Գրկում է Սուսամբարին յեվ ճանկռոտ յալիս)։

ՍՈՒՍԱՄԲ.—(ճամբուրելով Սուսանին, ծայում է նրա գլուխը)։ Լավ, հանգստացիր։ Հոգես Ցերազգիրք չինողի գլուխն էլ խելք չտեսա, վոր նրա ասածը կատարվի։

ՍՈՒՍ.—Սիրտս, սիրտս է վկայում, վոր իմ գլխին մի փորձանք է գալու։

ՍՈՒՍԱՄԲ.—Ուֆ, հոգիս բերանս բերեցիր քո ախ ու վախով։ Դե, հերիք է ինչքան յաց եղար։ Գնա զարմնդ ըներ, ածեմ մի քիչ քեֆդ բացվի։

ՍՈՒՍ.—(աչերը սրբելով ու Սուսամբարից բաժանվելով)։ Գարմն չունեմ, Սուսամբար, կոտրվից, դեն գցեցի։

ՍՈՒՍԱՄԲ.—Գիտես ինչ. յեթե այսուհետև լաց ես լինելու, յես քո առնը վոտ չեմ դնիլ։

ՍՈՒՍ.—(ծպտալով)։ Լավ, լավ. մի նեղանար, էլ լաց չեմ լինիլ։

ՍՈՒՍԱՄԲ.—Ավելի լավ է յեկ նստենք այստեղ և մոիկ անենք փողոցով անցնողներին։ Դա մեր միակ զվարճությունն է։ (մոտենում է լուսամուտին յեվ նստում թախտի վրա։ Լուսամուտից դուրս նայելուց հետո)։ Սպասիր, սպասիր, աղջի, այդ ձիավորն ում է, վոր մոտենում է մեր դռներին։ Աղջի, մարդ գալիս է, մարդ։ (ծափ է տալիս ուրախ ուրախ)։ Այս էլ քո յերազը։ (վեր է կենում)։

ՍՈՒՍԱՄԲ.—(ցնցվել է) Սիրտվում ես, մարդս զատկից առաջ չի կարող գալ։

ՍՈՒՍԱՄԲ. Բեզ բան են ասում։ Նա ինքն է, սպիտակ ձիով, շուկահիից ճանաչեցի։ Այ, տես, ձիուց ցած յեկավ, ներս է մտնում (յես դառնալով)։ Դեհ, աչքդ լուսս։ Բայց ինչ պատահեց քեզ։

ՍՈՒՍԱՆ.—(գունատվել է, դողում է) Դա լավ նշան չե Սուսամբար։

ՍՈՒՍԱՄԲ.—Հիմար հիմար մի խոսիր։ Վազիր առաջը, վզովը փաթաթվիր։ Դե շուտ. լավ, ես կգնամ, վոր պաչպչելդ չտեսնեմ։

ՍՈՒՍ.—(իջնելով իրան) Ա՛հ, Սուսամբար, աղաչում եմ, ինձ մենակ չթողնես։

ՍՈՒՍԱՄԲ.—Գնա, գնա։

ՍՈՒՍ.—(գնում է խորի դռնեռով)։

ՏԵՍԻԼ 6.

Նույնի յեվ Ռուստամ

ՍՈՒՍԱՄԲ.—(Զարշոլը վերցնում է յեվ պատրաստվում է գնալու)։

ՌՈՒՍՏ.—(գալիս է խորի դռնեռով ճանապարհի հագուստով, ձեռքին մի խուրջին։ Դեմքը հոգեկան տանջանքներից յեվ հոգնածությունից աղավաղվել է։ Ներս մտնելով, խուրջինը դնում է մի անկյունում, վերցնում է ուսերից հրացանն ու յեափնջին։ Նայում է Սուսամբարին յեվ զլխի շարժումով պատասխանում է նրա բարեվին)։

ՍՈՒՍԱՄԲ.—(յերեսը շալով ծածկելով)։ Բարով հազար բարի յեկար։ (տեսնելով, վոր իր ներկայությունն անախորժ է Ռուստամին, փաթաթվում է չարշովի մեջ յեվ գնում է դեպի խորի դուռը, ուր հանդիպում է Սուսանին)։

ՍՈՒՍԱՆ.—(հեռ է գալիս խորի դռնիով։ Նռանիներով խնդրում է Սուսամբարին իրան մենակ չթողնել)։

ՍՈՒՍԱՄԲ.—(մերժում է Սուսանի խնդիրը յեվ դուրս գնում)։

ՏԵՍԻԼ 7.

Ռուստամ յեվ Սուսան

ՍՈՒՍ.—(Առաջ է, գալիս. նիստած է, բայց ուժը ժողովել է։ Կանգնում է Ռուստամից հեռու, սպասողական դիրքում)։

ՌՈՒՍՏ.—(բավական լուռ յուն յունից հետո) Ո՞վ եր այդ կինը։ (ծուլ-լանին վերցնում է յեվ մի կողմ դնելով նստում)

ՍՈՒՍ.—Վալաղանց Սուսամբարը։

ՌՈՒՍՏ.—Վորտե՞ղ է սկեսուրդ։

ՍՈՒՍ.—Յեկեղեցի յե դնացել։

ՌՈՒՍՏ.—(մենակսի) Ինձ համար ապրելը։ (հառաչում է) Ծառան ձին տարա՞վ ախոռատունը։

ՍՈՒՍ.—Տարավ։

ՌՈՒՍՏ.—Պիտի ասելիր, վոր գարի ու գարման շատ տար։

ՍՈՒՍ.—Ամացի (վերցնում է խուրջինը, հրացանն ու յեաթիցքին-տանում մյուս սենյակ յեվ իսկույն վերադառնում)։

ՏԵՍԻԼ 8.

Նույնի յեվ Սանամ

ՍԱՆԱՄ.—(դռնից) Ղոթբ յես ասում։ Ա՛հ, ա՛հ (ծանրով ուրախ գալիս է խորի դռնով) Ռուստամ, բալաս, թարթափիլ անեմ վառնելիդ տակ։ Յեկիր։ Բարով հազար բարի յես յեկել (չարտով վերցնում է յեվ Ռուստամին մի բանի անգամ համբուրում)։ Կարոտած մայրդ բոլիդ մատաղ։ Աստված աղոթքներս լսեց։ Աղաչում եյի նրան, վոր ինձ շուտ արժանացնի տեսությանդ, արժանացրեց։ Թող մեկ ել կարոտս առնեմ։ (ուզում է կրկին համբուրել)։

ՌՈՒՍՏ.—(սառս. բայց վոչ կոպիտ, հրում է Սանամին, վոտքի է կանգնում) Բավական է։

ՍԱՆ.—(հիասթափված) Ջեռ թողնում, վոր քեզ համբուրեմ, ամոթ քեզ։ (տոնը փոխելով) Ախ, կուրանամ ես, խելքս ասավ առել է։ Դու ցրտից ես դալիս։ Աղջի, Սուսան, ծառայիր հրամայիր սամավարը դնի, վոր մարդդ տաք տաք չայ խմի։

ՍՈՒՍ. (ուզում է զնալ ձախ կողմի դռնեով)։

ՌՈՒՍՏ.—Հարկավոր չե։

ՍՈՒՍ.—(կանգ է առնում)։

ՍԱՆ.—Ինչ է պատահել քեզ, վորդի, ինչու աչքունքդ թրթռված է։

ՌՈՒՍՏ.— Հինգ որ ու հինգ գիշեր եմ անցկացրել ձիու վրա։

ՍԱՆ.— Հինգ որ ու հինգ գիշե՞ր, քար կարվի մայրդ։ Նա տաք տնում նստի, դու Դաղստանի սարերը չափչփիս ձյուն ու ձմեռ։ Հանգստացիր, վորդի, հանգստացիր։ Աղջի, Սուսան, տեղը պատրաստիր մարդուդ համար։ Կուզե՛ս։

ՌՈՒՍՏ.— (թող պատրաստի, ծխախոտ է ծխում, վեր է կենում ու սկսում հետ ու առաջ քայլել)։

ՍՈՒՍ.— (մյուս սենյակից բերում է մի վերմակ, մի ներքնակ յեվ սկսում անկողին պատրաստել թախտի վրա։ Հետո վառում է յերկու մոմ սեղանի վրա)։

ՍԱՆ.— Բայց առաջ մի բան կեր, հետո կհանգստանաս։ Ցերեկ քաղցած ես, լավ ճաշը ունեմ, փլավ պատրաստեմ։

ՌՈՒՍՏ.— (ներվային) Ցես վոչինչ չեմ ուզում, վոչ ուտել, վոչ խմել, գլուխս մի ցավեցնիր։

ՍԱՆ.— (վշտացած) Լավ, լավ, չեմ յեփիլ, մի նեղանար, բայց գիտես...

ՌՈՒՍՏ.— (անհամբեր ընդհատելով) Գնա սենյակդ։

ՍԱՆ.— Դու ինձ դժբա ես անում։ Լավ, լավ (հանկարծ մի բան հիշելով ներքնազիս ժպիտով) Հա, հասկացա, ինչ միամիտն եմ։ Լավ, լավ գնում եմ։ Դե, ի հարկե, դու ջահիլ, նա ջահիլ։ Մի բարձի ծերանաք, վայելեցեք։

ՌՈՒՍՏ.— (վրդովելով) Հիմար-հիմար բաներ ես խոսում, պառավ։

ՍԱՆ.— Ցես մեղա ասածու, յես մեղա ասածու, ել չեմ խոսիլ։ Ինչ անեմ, ուրախությունից խելքս կորցրել եմ։ Տեսար, Սուսան, տեսա՞ր։ Զասացի՞ քեզ, վոր այս գիշեր լավ յերազ եմ տեսել։ Գիտե՞ս, Ռուստամ, դու նստած եիր ապիտակ ձիու վրա։ Սպիտակ ձին անմեղության է։

ՌՈՒՍՏ.— (խիստ) Մի յերկարացնիր։ Բարի գիշեր։

ՍԱՆ.— Գնում եմ, գնում եմ, վորդի։ Բարի գիշեր։ Տերը քեզ հետ (հանդարտ քայլերով գնում է ձախ կողմի դռնեով, թագուն արտասվելով)։

ՏԵՍԻԼ 9.

Ռուսաստան չեկ Սուսանի.

ՌՈՒՍՏ.— (Անցուդարձ է անում, բեղերը ներվային վոլտրելով։ Ուսանց Սուսանին նայելու)։ Կողպիր այդ դռները։

ՍՈՒՍ.— (Վոր վերջացրել է գործը, կանգնել է մի անկյունում տրխուր, հեզ, բայց արդեն վճռական դեմքով. ծածկում է ձախ դուռը)։

ՌՈՒՍՏ.— (Նստում է անկողնի վրա չեկ նայում Սուսանին զննական հայացքով) Մոտ չեկ։

ՍՈՒՍ.— (անշարժ է)։

ՌՈՒՍՏ.— (ձայնը բարձրացնելով) Մոտիկ ներ, ասում եմ։

ՍՈՒՍ.— (մի քանի քայլ առաջ է գալիս)։

ՌՈՒՍՏ.— Մոտիկ արա աչքերիս։

ՍՈՒՍ.— (նայում է նրա աչքերին չեկ սարսափած չերեսը դարձնում)։

ՌՈՒՍՏ.— Ինչու վախեցար։

ՍՈՒՍ.— Աչքերդ արյուն է կոխել, մի նայիր ինձ այդպես (չերեսը ծածկում է ձեռներով)։

ՌՈՒՍՏ.— Դուռը կողպեցիր։

ՍՈՒՍ.— Ծածկեցի։

ՌՈՒՍՏ.— Ձես քեզ հրամայեցի կողպել (վեր է կենում, արագ մոտենում ձախ կողմի դռանն, կողպում չեկ բանալին վերցնում)։ Ահա, այսպես։ Ա՛հ, չերեք կարելի լիներ ձեր ամբողջ այսպես կողպել և բանալին շպռտել աղբանոց (բանալին ձգում է հատակի վրա) Անպատկառ։

ՍՈՒՍ.— (ուժգին ցնցվում է, բայց իսխում է իրան չեկ գլուխը հպարտ բարձրացնում)։ Ինչու չես ինձ անպատվում։

ՌՈՒՍՏ.— Նրա համար, լիրբ, վոր դու ինձ խայտառակել ես ամբողջ քաղաքում։

ՍՈՒՍ.— Ինչով եմ քեզ խայտառակել։

ՌՈՒՍՏ.— Հարցրու այս անկողնին։ Ասա, քանի՞ անգամ ես անպատվել այդ անկողինը նրա հետ։

ՍՈՒՍ.— Չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել։

ՌՈՒՍՏ.— Անմեղ մի ձևանար, չես համբերություն չունիմ։ Պատմիր բոլորը, ինչ վոր արել ես։

ՍՈՒՍ.— Ձես վոչինչ չեմ արել, Թող ինձ հանգիստ։

ՌՈՒՍՏ.— Խոստովանիր, ասում եմ, քանի վոր ուշ չե։ Ասա։ Ձանազանում ես կուժ ծախող Հայրապետի տղա Սեյրանին։

ՍՈՒՍ.— (ցնցվում է, բայց չեկ իսկույն արիանում) Ճանաչում եմ։

ՌՈՒՍՏ.— Դե, դե, շարունակիր, պատմիր։

ՍՈՒՍ.— Ձես պատմելու վոչինչ չունիմ։ Բոլորը հայտնի չե քեզ։ Սեյրանը մեր հարևանի վորդին եր։ Մեր ծնողները չերեխա ժամանակներս մեզ նշանել են այնպես, ինչպես սովորություն և մեզանում նշանել։ Մենք մեծացել ենք, նա փչացել և։ Հայրս չի հավանել նրան և ինձ տվել և քեզ։ Բայց ինչու համար և հարց ու փորձը, քանի վոր դու ամեն բան գիտես։

ՌՈՒՍՏ.— Ձես ել կարծում եյի հիմարի պես, վոր ամեն բան գիտեմ։ Անպատկառ։

ՍՈՒՍ.— Մի անպատվիր ինձ անմեղ տեղը, գլխիդ վրա աստված կա։

ՌՈՒՍՏ.— Չկա իմ գլխին աստված։ Նա ինձանից խռովել և այն որից, չերբ դու վոտք ես դրել իմ տունը։ Դե, մի չերկաբացնիր, ասա, սիրե՞լ ես այդ լակոտին։

ՍՈՒՍ.— (Ինչ տատանվելով, վճռական) Սիրել եմ։

ՌՈՒՍՏ.— (ցնցվելով) Ա՜, լավ, շարունակիր։

ՍՈՒՍ.— (արիանալով) Ականջ դիր, Ռուստամ, չես վոչ մարդկանց ղրպարտություններից եմ վախենում, վոչ քո դաշույնից, վորի վրա այդպես սեղմել ես ձեռդ։ Ձես միայն մի չերկյուղ ունիմ։ Դա աստծո անեղ դատաստանն և։ Այն որը, չերբ դու և չես կկանդնենք այդ դատաստանի առաջ, դու կզղջաս քո ասածները համար։ Ձես անմեղ եմ քո անկողնի մոտ։

ՌՈՒՍՏ.— Սուտ ես ասում, լիրբ, սրանից հինգ որ առաջ քո սիրականը իմ խանութում, չորս ընկերներիս և ծառայիս առաջ, խոստովանեց, վոր դու պատկանել ես նրան։

ՍՈՒՍ.— (անչափ զայրացած) Այդ անկարելի չե, սուտ և։ Սեյրանը չեր կարող այդ ասել։

ՌՈՒՍՏ.— Բայց արա կուրծքդ։

ՍՈՒՍ.— Ձես վախենում եմ քեզանից։ Դու կարող ես ինձ սպանել։

ՌՈՒՍՏ.— (անեղագոչ) Կուրծքդ։

ՍՈՒՍ.— Մի արա, մեղք եմ, մի արա։

ՌՈՒՍՏ.— Կուրծքդ (հարձակվում է Սուսանի վրա)։

ՍՈՒՍ.— (փախչում է դեպի խորքի դուռը) Ողնեցեք, ողնեցեք, նա ուզում է ինձ մորթել։

ՌՈՒՍՏ.— (մոտենում է յեվ բռնում Սուսանիկն) *Ջայնդ կորիր, շան ապրիկ։*

ՍՈՒՍ.— (չոռում է Ռուստամի առաջ) *Ազատում եմ, մի սպանիր, խեղճ եմ, խնայիր։*

ՌՈՒՍՏ.— (գցնում է Սուսանի կուրծքը) *Ահա, ահա նա, քո անմաղությունը։ Սև խալը, խալը։ Ցնա խանչալիս ծայրով դուրս կբերեմ և շներին կշպրտեմ։ Սատկիր, անասուն։* (դաշույնը խրում է Սուսանի կուրծքը)։

ՍՈՒՍ. (ընկնելով հատակի վրա) *Արգանդիս չնչեիան վկա, անմեղ եմ։*

ՏԵՍԻԼ 10

Նույնի յեվ Սանամ

ՍԱՆԱՄ.— (մինչեվ Սուսանի մեռնիլը դուռերի յետեվից գոռում է) *Ինչ պատահեց* (ուժգին զարկելով դուռերին)։ *Բաց արեք, բաց արեք։*

ՌՈՒՍՏ.— կանգնում է մի անկյունում, արյունոտ դաշույնը ձեռքին յեվ ճայում է Սուսանիկին)։

ՍԱՆԱՄ.— *Ինչ պատահեց։*

ՌՈՒՍՏ.— *Աստծու դատաստանը կատարվեց, մայր։ Ուրախացիր քո բնած հարսով։*

ՍԱՆԱՄ.— (տեսնելով Սուսանի դիակը, սարսափած)։ *Գազան, գազան, այդ ինչ արիր։* (վազում է դեպի լուսամուտ, կոտրում ապակին յեվ դեպի փողոց) *Ոգնություն, ոգնություն, այստեղ յեկեք։*

ՏԵՍԻԼ 11.

Նույնի, հարեվանուհիներ յերկու սեռից յեվ Սեյրանը

ՀԱՐԵՎԱՆՆԵՐ.— (Ներս են խուժում խորքի դռներից կանայք յեվ տղամարդիկ։ Ոմանք գիշերվա հագուստով են)։

ՍԵՅՐԱՆ.— (վազում է ներս խորքի դռներից նահապարտի հագուստով։ Գուցաս է, մազերը գզգզված, աչքերը կարմրած, նեղլացած է)։ *Բռնեցեք Ռուստամին, մի թողնեք մտնենա Քոչքի ծառին։ Ցնա սուտ եմ ասել, Սուսանն անմեղ է։ Մայրս և տեսել բաղնիսում, չես չեմ տեսել։*

ՌՈՒՍՏ.— (ցնցվում է Սեյրանի խոսքերից) *Նա անմեղ եր, հոգիս էլ կորավ* (դաշույնը ձեռքից բաց թողնելով, ընկնում է հարեվանների գիրկը)։

ՍԵՅՐԱՆ.— (տեսնելով Սուսանի դիակը, առձակում է վայրենի ձիչ) *Ա՜ա, աս, նա ընկած է։ Վեր կաց, Սուսան, վեր կաց, քեզ համար թուխ եմ թափ տալիս,* (բռնում է ներկա յեղողներից առաջինն պատահողին յեվ բախահարում իբրեվ ծառ) *վեր կաց* (կատաղի ձիչ) *Ա՜հ, ահ, ահ...*

ՄԻ ՀԱՐԵՎԱՆ.— *Նա խելագարվել է. կապոտանք նրան։*

ՅԱՆԱՄ.— *Բալաս վայ, վայ բալաս* (կուրծքը կեղեհում է)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ավերակների վրա

Դրամա չորս արարվածով ՅԵՎ ՀԻՆԳ պատկերով.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՀՔՈՒՆԵՍ ՓՈՒԱՆԳՈՒԼՅԱՆ, Հայոնի վաճառական – 60 տարեկան
ՆՈՐԳԻՉ, նրա ամուսինը—50 տարեկան։
ԼԵՎՈՆ, նրանց մեծ որդին—27 տարեկան։
ՍԱՄՈՒԵԼ, նրանց կերկրորդ որդին—22 տարեկան։
ՀՎՕՍԱՆՆԱ, նրանց աղջիկը—23 տարեկան։
ԱՐԱՄԱԶԴ ԱՂԱՎԵԼՅԱՆ, Հքաոնեսի գլխավոր գործակատարը, հետո խոշոր ձեռնարկող—33 տարեկան։
ՆՈՅԻՄԶԱՐ, Արամազդի քույրը, անպսակ ալրի—32 տարեկան։
ԱՆՅԱ, Արամազդի կերկրորդ քույրը, որխորդ—21 տարեկան։
ԴԻՎՈՐԳ ԱԴԻԼԲԵԿՅԱՆ, որին հասարակորեն կոչում են Ժորժ, Լևոնի գիշերագիական ընկերը և Ովաննայի նշանածը—28 տարեկան։
ՇԱՄԻԼ-ԲԵԳ ՄԵԼԻՔ-ԱՂԱԶԱՆՅԱՆ, Արամազդի գործընկերը—38 տարեկան։
ՆՈՒՆՈՒՖԱՐ, Փռանգուլյանների աղախինը։
ՉԱՎԱՂ, նախ Փռանգուլյանների, հետո Արամազդի ծառան—37 տարեկան։
Թուրքակ Թռչուն վանդակի մեջ Ադավեյանների տանը։

Գործողությունը կատարվում է 189... թվականներին։ I և արարվածները ու IV արարվածի կերկրորդ պատկերը կատարվում են Փռանգուլյանների տանը, II արարվածը և IV-ի առաջին պատկերը Ադավեյանների տանը։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Ֆռանգուլյանների բնակարանը: Մեծ սենյակ, կահավորված հարուստ, բայց հնածեվ կահկարասիով:

*Աջ *) պատի մեջ յերկու դռներ, վորոնցից առաջինը*) տանում են Աթանեսի սենյակը, յերկրորդը, վոր գրեթե անկյունն է գտնվում, դեպի նախասենյակ: Խորի պատի մեջ դռներ, վոր տանում են սեղանատուն յեվ այնտեղից բնակարանի խորքը: Ձախ պատը ներկայացնում է յերկու հնածեվ լուսամուտներ, մեջտեղ ապակյա դռներ, դեպի պատշգամբ՝ փողոցի վրա:*

Բեմի մեջտեղում հին ձեվի թանգագին դրուագյալ (incuste врезной) սեղան, առանց ծածկոցի. վրեն մի մեծ, սեվացած արծաթյա ափսե, մեջն այգեհոմներ: Սեղանի քով ընկուզենյա ծանր աթոռներ: Աջ պատի առջեվ. յերկու դռների միջեվ գահավորակ, առջեվը փոքրիկ սեղան սփռոցով ծածկված, քովը յերկու բազկաթոռ: Խորքի պատի առջեվ, դռների ձախ կողմում վառարան, վրեն հնածեվ ժամացույց, աջ կողմում թախտ, ծածկված Խորասանի թանգագին գորգերով, վորի մի ծայրը հասնում է ծածկում, մյուսը—պատի մեջեվ առաստաղ: Թախտի վրա վոսկեթել հյուսվածքով ծածկված բարձեր: Ամենուրեք թանգագին յեվ զանազան յերկրների գորգեր, վորոնք սենյակին գլխավոր զարդն են են կազմում: Պատերի վրա վերջին կաթողիկոսների պատկերներն ու կոնդակները:

Դաշնամուրը դրած է ծախ պատի առջեվ, դեպի ավանդատունը: Դրսում, պատշգամբի վրա ծաղկամաններ յեվ բույսեր, վորոնք բավական խտատերեվ լինելով, կանաչեղենի մի թուփ են կազմում:

ՏԵՍԻԼ Ի.

Ջավադ յեվ Նունուֆար

Վաղ գարուն է, առավոտ: Լուսամուտները բաց են, վարագույրները հետ քաշած: Արեգակի հարուստ ճառագայթները տարածվել են ներս յեվ, հետզհետե առաջ գալով, հասնում են մինչեվ բեմի կեսը յեվ ապա, տեսարանի ընթացքում կրճատվելով, կամաց կամաց չքանում են:

Բեմի հետվից լսվում է ջութակի մեղմիկ յեվ դանդաղ ձայները: Սաժուելն է յուր սենյակում նվագում:

**) «Աջ ու ձախ», ինչպես և «Առաջին-յերկրորդ» միշտ պիտի ընդունել սաղարակութեան կողմից: Ծ. Հ.*

Ջավ.—(Վարագույրը բարձրանալիս պատշգամբի վրա ցնցուղով ջուրն է ծաղիկներն ու բույսերը):

Նուն.—(Գալիս է աջ կողմի յերկրորդ դռներից մի մեծ սպիտակ լաթ ձեռքին յեվ սկսում է արագ արագ սրբել կահ-կարասին: Նրանից թուխ թուխ կին է ժամացակից առաջ բառնում: Հագած է մաքուր օրջազգեստ որվա տակի առիքով, կրծքին կապած է սպիտակ գոգնոց):

Մի ճաճի վայրկյան լուռ գործողություն:

Ջավ.—(Հանկարծ նետ է ցատկում պատշգամբից կոմիքական թռիչքով, ջրի ցնցուղը ձեռքին: Ծպտուն, անհոգ դեմքով, վարդագույն աչքերով յեվ սեվ, հաստիկ բեղերով: Հագած է կապտագույն արխալուղ, վրեն կիսամոնոգագույն պիջակ, մեջքին արծաթյա գոտի: Վզով գցած է ժամացույցի մի յերկայն արծաթյա շղթա: Խոսելիս ձեռներով, գլխով յեվ մանավանդ ուսերով հատապատասխան շարժումներ է անում: Դիմախաղը վերին աստիճանի հարուստ է): Վայ բաջի, առնես քանդվեց:

Նուն.—(միանգամայն անվրդով, առանց գործն ընդհատելու): Չ'ըմ, ելի ինչ ուզես կծնիր:

Ջավ.—Թուրքի գլխին ջուր թափեցի:

Նուն.—(ծիծաղում է) Այ անշնորք:

Ջավ.—Յավաշ ասանեմ ինչ է անում: (գլուխը դուրս է բերում պատշգամբի դռներից, չհատարձակվելով ամբողջ մարմինով դուրս գալ) Գեղ, գեղ: (բռունցք է ցույց տալիս):

Նուն.—Ուշդունց է տալիս:

Ջավ.—Շատ թունդ: Գեղ: Շիշ փափագը թրջվիլ է: Արաքչինը բաց է արել: կանդալն յերևում է: Գեղ: Ընը, հեռանում է, դնաց: Լավ. պրծանք: Ախար, ռվ է տեսել, վոր ծառերը բերեն, հավաքեն տանը: Դա ել ռուսից սովորեցինք: (Նորից ուզում է պատշգամբ դուրս գալ, բայց հանկարծ, յեղանակով հափշտակված, կանգ է առնում յեվ ֆիգուրամբ ցույց է դեպի պատշգամբ: Կարճ լռություն) Նունուֆար:

Նուն.—Աամ:

Ջավ.—Ախբեր, մի տես ե:

Նուն.—Ելի գժությունդ բռնեց:

Ջավ.—Գաբուռնն յեկավ նախշուն թևերով:
Աղբյութս խառնեց պես պես ձևերով:
Մին մոթկ արա ե, ալ պայծառ արևին, կապույտ յերկնքին: Հրեն ե, նավը թևերը բաց արած լողում է կանաչ ծո-

վի վրա նորահարսի պես։ Ախ, այդ Սամուել տղան էլ վատ չութակ չի ածում, սիրուս մըզկըտ-մըզկըտ է անում։ Բայց ինչ էլ վոր լինի, մեր գարունքի տեղը չի բռնիլ։

ՆՈՒՆ.—*Հըը, հլի սկսեց իր Շամախին գովել։*

ՋԱՎ.—*(Ցնցուղը դնելով հատակի վրա)։ Տես, Նունուֆար, աշխարհում տեղ չի ծագել վոտքիս տակովը արած չը լինեմ։ Ովվի այս կողմից չեմ խոսում, աա, այն կողմից։ Տես, դա կրասնոսկի, դա Զաբչիվ, դա Խիվա։ Եմիրը չեմ, Եմիրի չալման եմ տեսել, մինչև Սամարղանդ հասել եմ, Շամախիի պես քաղաք... աստաֆուռուլլա։ (Ցնցուղը ծուլորեն վերցնում է)։ Ցերեկ հլի մին մուխամբաղ գրեցի։ Ինար Հայկական կարդացել ես։*

ՆՈՒՆ.—*Չե։*

ՋԱՎ.—*Սայադ-Նովա։*

ՆՈՒՆ.—*Չե։*

ՋԱՎ.—*Զարգյաթն լինչպես։*

ՆՈՒՆ.—*Նրան էլ չեմ կարդացել։*

ՋԱՎ.—*Ե՜հ, դե դա չե պատճառը, վոր պատիվ չես անում ինձ հլի։*

ՆՈՒՆ.—*Ինչո՞ւ, դու ին ես վոր։*

ՋԱՎ.—*Յա՛ռ, հըը, չես շահիը—Զավադն եմ։ Այ, այս մեծուքյամբ դավթարները ունիմ շարադրած։ Դես մարիկ արա, Շամախին մինչև որս լերկու մարդ ե ովել. ինը Զարգյարն ե, մինն ե չես, ուրիշը չկա, լավ իմացիը (Ուզում է գնալ պատօգամբը, բայց լսելով Նարգիզի ձայնը, նորից կանգ է առնում)։*

ՏԵՍԻԼ II

Նույնի յեվ Նարգիզ հետո Ովսաննա

ՆԱՐԳԻԶ.—*(Բեմի հետեվից)։ Ջավադ, Ջավադ։*

ՋԱՎ.—*Այստեղ եմ, խանում։ (տեղից չի շարժվում)*

ՆԱՐԳ.—*(յերեվում է խորհի դռների մեջ։ Լիֆ-լիֆ, բայց դեղնած բեռնակին է, հպարս հայլուածքով յեվ նրամայողական, գոռոզ ձեվերով։ Հագած է տոնային շրջազգեստ, ուսերին գցած է Քիրմանի շալ։ Ալեխառն մազերը սանրած են հարթ)։ Շուտ արա, բաղար գնա, ադաղ գոնների մոտ քեզ է սպասում։*

ՋԱՎ.—*Ծիծեռնակի պես թռա։ (Դանդաղորեն հայերեն ուղղում է դեպի յերկրորդ դռները)։*

դեպի յերկրորդ դռները)։

ՆԱՐԳ.—*Ցնթե թագա ձուկ բիրել են, թող մի հատ առնի։*

ՋԱՎ.—*Լավ։ (Դնում է աջ կողմի յերկրորդ դռներով, ցնցուղը տանելով)։*

ՆԱՐԳ.—*(Նունուֆարին)։ Դու էլ գնա, սամավարը հավաքիր։*

ՆՈՒՆ.—*Այս բոպեյին։ (Դնում է խորհի դռներով, ճանապարհին պատահում է Ովսաննային)։*

ՈՎՍ.—*Նունուֆար, այս նամակը գցիը փոստարկղ։ (Գալիս է խորհի դռներով ձեռքին ծրար։ Նուրբ կազմվածքով, բավական սիրուն, բայց շատ նիհար որիորդ է։ Ձեվերը նիրբ են յեվ նուրբ։ Հագած է նույնպես տոնային ուրախ հագուստ։ Բացի մի խոշոր ադամանդյա բոլոցից վոչինչ ակնեղեն չկա վրան։ Հանդարտ մոտենում է դաշնամուրին յեվ, վոտքի վրա կանգնած, սկսում է անփույթ ինչ-վոր ուրախ յեղանակի ակորդներ տալ)։*

ՆՈՒՆ.—*(Նամակը առնելով, գնում է աջ կողմի յերկորդ դռներով)։*

ԲԵՄԻ ՀԵՏԵՎՈՒՄ.—*(Սամուելն դադարում է ջութակ նվագել։ Մի հաճի տոպե անցած նորեն նվագում է մի ուրիշ յեղանակ յեվ հետո բոլորովին ընդհատում)։*

ՏԵՍԻԼ III

Նարգիզ յեվ Ովսաննա

ՆԱՐԳ.—*(Թախտի բարձերն ուղղում է յեվ գալիս նստում է հանդարտ գահավորակի վրա)։ Քանի ու յերեք տարիդ եվ լրացավ, ասեղնանք այժմ ինչ ես մտածում։*

ՈՎՍ.—*(Անփույթ) Ինչի՞ մասին, մայրիկ։*

ՆԱՐԳ.—*Դու դիտես ինչի մասին եմ ասում։ Ցնթե պսակվելու չես, ասացիք, վոր պատրաստություն տեսնենք, թե չե...*

ՈՎՍ.—*(Ցերեկը դարձնելով դեպի Նարգիզը, նույն անփութությամբ)։ Թե չե, ինչ, մայրիկ...*

ՆԱՐԳ.—*Ովսաննա, մեր քաղաքում շատ քիչ բան ե հարկավոր մի աղջկա բամբասելու համար։*

ՈՎՍ.—*Ցնտո՞։*

ՆԱՐԳ.—*Ցնտո այն ե, վոր դու այսոր պետք ե նրանից մի հատուտ խոսք վերցնես։*

ՈՎՍ.—*Լավ, բավական ե, մայրիկ, այսոր իմ ծննդյան որն ե, հյուրերը պիտի գան, չվիճենք։ (Մոտենում է լուսամուտներից մեկին յեվ նայում է դեպի դուրս)։*

ՆԱՐԳ.—(Խորին հանդիմանությամբ)։ Ովսաննա, մայրական համբերությունն ել չափ ու սահման ունի։

ՈՎՍ.—(Գրգվելով)։ Ինչ ես կամենում, մայրիկ, ինչ։ Ցես խոսք չեմ կարող նրան ասիլել ինձ հետ ամուսնանալու։

ՆԱՐԳ.—Ասիլել... Ո՞վ է այդ ասում։ Քեզ համար նշանածներ են պակաս մեր քաղաքում։ Ցես միայն ուզում եմ, որ դու մեր տան պատիվը պահպանես, ուրիշ ոչինչ։ Գալիս է—գնում, ոչ հարսնացու ես, ոչ ազատ։ Ցես այդ չեմ կարող թույլ տալ այսուհետև։ Ցես ինքս կխոսեմ նրա հետ։ (Վեր է կենում)։

ՈՎՍ.—(Դռակաց յեվ խիստ)։ Դու այդ չես անիլ։

ՆԱՐԳ.—(Նույնպես դրական)։ Կանեմ և հենց այսօր։

ՈՎՍ.—Մայրիկ, տեսնում ես այս լուսամուտը։

ՆԱՐԳ.—Ի՞նչ ես ուզում ասել։

ՈՎՍ.—Նա բավական բարձր է փողոցից։ Ցերթե դու ժորժին մի խոսք, մի բառ կասես կամ վորևե ակնարկ կանես իմ մասին, այն ժամանակ... մկղբը քեզ վրա...

ՆԱՐԳ.—(Ազգված) Դժեր ևք դուք, կապկու դժեր, ամեն բան կըրնի և ձեզանից սպասել։ (Բայլերն ուղղում է դեպի խորի դռները, բայց, զանգակի ձայն լսելով, կանգ է առնում)։

Նախասենյակում

ՆԱՐԳ.—(Վերադառնալով բեմի կենտրոնը)։ Տես ով և։

ՈՎՍ.—(Մոտենում է ձախ կողմի յերկրորդ դռներից, բաց է անում, ցայտում է դեպի նախասենյակ յեվ ետ է գալիս)։ Աբամադի քույրերն են։ Գալիս են ինձ շնորհավորելու։

ՆԱՐԳ.—(Առհամարհանքով)։ Ոհ, կարոտել եյի նրանց, վոր լուրջ նոր բացված, վազում են գլխիս։

ՏԵՍԻԼ IV

Նույնն, Նոյիմզար յեվ Լեյլի

ՆՈՅԻՄԶԱՐ.—(Գալիս է ձախ կողմի յերկրորդ դռներով։ Կարմիր ոյ տերով, առատ կիճ է ունեսւ ձեվերով, հագած է յեվրոպական շրջազգեստ, իսկ գլուխը կրում է վրան թասակրավ)։ Բարով ձեզ։ (Սեպհական արժանավայելության գիտակցությամբ ձեռ է տալիս Նարգիզին յեվ Ովսաննային)։ Շնորհավոր ծնունդ, բարի գավոր լինիք։

ԼԵՅԼԻ—(Կայտառ, գեղեցկադեմ, ամոքված։ հասես որիորդ է։ Հագնված է լիովին յեվրոպական տարազով տաս հասես, բայց վոչ ուշադրավ։ Աչքի յեն ընկնում հարուստ գանգուր մազերը պարզ գլխարկի տակից։ Լուռ ներս է մտնում յեվ խոնարհ բարևում)։

ՈՎՍ.—(Ընդունում է հյուրերին սիրալիր, բայց հպարտ։ Լեյլիի հետ համբուրվում է)։ Շնորհակալ եմ։ Շատ ուրախ եմ ձեր գալուն։ (Հրավիրում է գահավորակի կողմ)։

ՆԱՐԳ.—Հյուրերին ընդունել է գլխի թեթև շարժումով, դեմքին մի ներգնական ժպիտ)։ Ներեցեք, չեթե պատրաստ չենք։ Մենք ուշ ենք զարթնում։

ՆՈՅԻՄ.—Դե պարտք համարեցինք ամենից առաջ գալ։ (Դուրս է բերում սեվ, մեծախոյա պելերինի տակից մի տուփ խաղցրավեճիկ յեվ դնում է ամերիկյան աննկյունի կլորիկ սեղանի վրա)։

ՆԱՐԳ.—Կարող ևք նստել։ (Ինքը չի նստում) Ձեր խղճալքն ընչեր մեր մոտից դուրս գալիս։

ՆՈՅԻՄ.—Չգիտեմ։ (Նստում է բազկաթոռի վրա, ձեռները հենում գավազանի կոթիկն)։

ՈՎՍ.—Մրթե Արամազդը թողնում է ծառայությունը հայրիկի մոտ։ Ցես այդ չգիտեի։ Որիորդ Լեյլի, նստեցեք այստեղ, մոտս։ (Նստում է յեվ սկսում է Լեյլիի հետ խոսել առանձին)։

ՆԱՐԳ.—Ցերևի հարստացել ե։ Ժամանակները փոխվել են, հիմա գործակատարները շատ շուտ են հարստանում։

ՆՈՅԻՄ.—Ցերանի թե այդպես լիներ։

ՆԱՐԳ.—Իհարկե, ով չի ուզում, միայն թե ազնիվ ճանապարհով հարստանան։ Մենք քանի քանի գործակատարներ ենք ունեցել, վորոնք այսոր որինավոր վաճառականներ են։ Տրեխներով գալիս են մեզ մոտ, կոշիկներով գնում։

ՆՈՅԻՄ.—Իմ յեղբայրն իսկի տրեխներ չի հագել։

ՆԱՐԳ.—Ցես որինակի համար եմ ասում... Նա ել դյուզական ազատ, չէ... Դե ամենքին մարդ դարձնողը մենք ենք ել...

ՈՎՍ.—(Հանդիմանական յեղանակով)։ Մայրիկ, մարդիկ մարդ են դառնում իրանց խելքով և վոչ մեզնով։

ՆԱՐԳ.—Ցերևի, քաղցած չենք։ Դե, իհարկե, լուսը նոր և բացվել։ Մեզ մոտ հյուր գալիս են տասներկու ժամից սկսած։

ՆՈՅԻՄ.—(Արդեն վիրավորված)։ Դե մենք չգիտենք գյուղականի սղշկերք ենք։

ՆԱՐԳ.—Մեր ժամանակում ել ազնվականություն ենք ենք։ Այնքան

սրա ու նրա հետ նստեցինք, վերկացանք, վոր կարգ ու կա-
նոն մոռացանք։ (Նստում է յեվ սուր հայացքով նայում Լե-
յլիին։ Մեկուսի) Ի՞նչ առողջ և անթծվածը...

ԼԵՅԼԻ.—Այո, որիորդ, կարդում եմ, ինչ-վոր ձեռքս և ընկնում

ՈՎՍ. Միայն հայերեն, թե՞ ռուսերեն էլ։

ԼԵՅԼԻ.—Ռուսերեն մի քիչ դժվարությամբ եմ հասկանում։

ՈՎՍ.—Փուչ է, շուտով կսովորեք։ Ցեկեք շուտ շուտ ինձ մո-
յես ձեզ շատ հետաքրքրական դրքեր կտամ։

ՆՈՅԻՄ.—Շնորհակալ ենք։

ՆԱՐԳ.—(Շարունակ նայել է Լեյլիին)։ Ովսաննա, նայում եմ այդ
աղջկան... (Լեյլիին) Անունդ մոռացել եմ։

ԼԵՅԼԻ.—(Շփոթվելով) Լեյլի։

ՆԱՐԳ.—Նայում եմ Լեյլիին և մտածում եմ ինչ լավ կդար քո հա-
գուստը նրա վրա (դառնում է Նոյիմզարին) Զորս-հինգ հա-
գուստ ունի աղջիկս, բոլորն էլ համարյա նոր, չի հագնում
մոդայից դուրս են յեկել։

ՆՈՅԻՄ.—Տվեք ձեր աղախնին։

ՆԱՐԳ.—Ափսոսում եմ։ Հըը, Ովսաննա, ինչ կասես, բախտին
Լեյլիին։

ՆՈՅԻՄ.—(Կատաղության նշաններ է անում մեկուսի)։

ՈՎՍ.—(Մոր փոխարեն ամաչել է)։ Մայրիկ, դրա ժամանակը չ
(Աջխաուսում է Լեյլիին զբաղեցնել)։

ՆՈՅԻՄ.—(Այլեվս չկարողանալով իրան զսպել) Իմ քույրը ձ
աղջկանից համ հասակով բարձր է համ էլ նրա պես լա
չե... (Մեկուսի) Կերթար...

ԼԵՅԼԻ.—(Բոլոր փոխարեն ամաչել է, շփոթվել, նայում է նրան նա
դիմանուրյամբ)։

ՆԱՐԳ.—(Սաստիկ խայթվել է)։ Հա, իհարկե. անտաշ է։

ՆՈՅԻՄ.—(վեր է կենում) Լեյլի, ժամանակ է գնալու։ (Նարգիզին
Մնաք բարով։

ՈՎՍ.—(Վեր կենալով) ինչո՞ւ եք շտապում։

ՆՈՅԻՄ.—(Կծված) Շատ վոր նստանք, շի՛ կնայեն։ Լեյլի
գնացի։

ՈՎՍ.—Ճաշին խնդրեմ շնորհ բերեք։

ՆԱՐԳ.—(Թագուն նշան է անում Ովսաննային, վոր չհրավիրե)։

ՆՈՅԻՄ.—Շնորհակալ ենք... Ձենք կարող։ Լեյլի, ես գնա
(Գնում է աջ կողմի յերկրորդ դռներով)։

ԼԵՅԼԻ.—Մնաք բարով (շփոթված, ամոթխած գլուխ է տալիս Նար-
գիզին, իսկ Ովսաննայի ձեռը սեղմում է)։

ՈՎՍ.—Ցտեսություն, Լեյլի։ Ցես հաշվին ձեզ անպատճառ կսպասեմ։

ԼԵՅԼԻ.—(Ավելի շփոթված) Վոչ, վոչ, չսպասեք։ Ցտեսություն։
(Գնում է Նոյիմզարի ետեվից)։

ՈՎՍ.—Սիրալիր ուղեկցում է Լեյլիին մինչեվ դռները)։

ՆԱՐԳ.—(Նկատել է բաղցրավենիքի տուփը, վերցնում է, նայում յեվ
արհամարհանքով տեղը դնում)։ Դես նայիր, կանգնկա էլ են
բերել...

ՏԵՍԻԼ V.

Ովսաննա յեվ Նարգիզ, ետո Նուշնուշար

ՈՎՍ.—(Վերադառնում է առագ քայլերով բեմի կենտրոնը, վեր-
դովված է մոր դեմ)։ Մամա՛, պետք է ասած, վոր չատ սի-
րելի ընդունեցիր իմ հյուրերին, շա՛տ։ Դու նրանց ուզակի
վռնդեցիր մեր տնից։

ՆԱՐԳ.—Շատ լավ արի։ Թող գնան իրանց յեղբորը պատմեն.
վոր մյուս անգամ չհամարձակվի իր գլխից մեծ բաներ բըռ-
նել։ Անպատկառ, չի ամաչում մի բոպե մտածել, վոր կա-
րող է Ֆոնդուկյաններին փեսան լինել։

ՈՎՍ.—Բայց քույրերն ինչ մեղ ունեն, վոր իրանց յեղբայրն
ինձ առաջարկություն է արել։

ՆԱՐԳ.—Այդ գյուղականները շատ յերախտամոռ են առհասա-
րակ։ Ագքատ ու հպարտ. յես նրանց ուզում եմ բարություն
անել, նրանք վիրավորում են ինձ ու քեզ։

ՈՎՍ.—Նախ դու սկսեցիր, մայրիկ. քո ամեն մի խոսքը ուղղա-
կի վիրավորանք եր նրանց համար։

ՆԱՐԳ.—Թող լինի։ Այդպիսիներին, վոր մի քիչ յերես տանք,
վզներովս կբփաթաթվին։ Ամեն մարդ պիտի իր տեղը լավ
ճանաչի։ Տես, կանգնկա են բերել քեզ համար։ Ով գիտե
վոր բաղկալից են առել... վերցրու, դեն գցիր, վոր հյու-
րերս չտեսնեն այդ կեղտոտ տուփը...

ՈՎՍ.—(Վերցնում է բաղցրավենիքի տուփը). Վոչ թե դեն կը գը-
ցեմ, այլ կը դնեմ ամենալավ տեղ, վոր քո ազգականները
տեսնեն։ (Տուփը դնում է դաշնամուրի վրա)։ Ամեն մի նվեր
հարգանքի չի արժանի։ Մեծ քրոջ մասին ասա, ինչ վոր

ուզում ես, բայց Լեյլին շատ համակրելի աղջիկ է։ Ձեզ խնդրեցի նրան, վոր շուտ շուտ գա մեր տունն։ Արժե նրա հետ բարեկամանալ։

ՆՈՒՆՈՒՖԱՐ.— (Գալիս է խորհի դռներից)։ Ամռում, Լևոն աղան զարթնեց։ (Սպասում է հրամաններին)։

ՆԱՐԳ.— Ա՛հ, վերջապես։ Գնամ, տեսնեմ գիշերն ինչպես է անց կացրել։ (Ուզում է գնալ խորհի դռներով)։

ՈՎՍ.— Մայրիկ, սպասիր մի րոպե։ (Մոտենում է կիսածայն) Ձեզ քիչ խորհուրդ եմ տալիս Լևոնին շատ էլ չձանձրացնել մայրական խնամքով։

ՆԱՐԳ.— Ինչո՞ւ։

ՈՎՍ.— Վորովհետև նա հիվանդ է։

ՆԱՐԳ.— Գիտեմ։ Ուրեմն չես իմ հիվանդ վորդուն պիտի առանց խնամքի թողնեմ։

ՈՎՍ.— Հենց այդ է, վոր չգիտես այդ ինչ հիվանդություն է։ Քո ծայրահեղ հոգատարությունը, քո ախ ու վախն ու հաչանքները ավելի բորբոքում են նրա վերքերը, քան թե թեվացնում (հեռանում է մորից)։

ՆԱՐԳ.— Չեմ հասկանում։ (Գնում է խորհի դռներով)։

ՈՎՍ.— Մի որ կը հասկանաս, բայց ուշ կլինի (Պատրաստվում է դաշնամուր նվագելու յեվ սկսում է)

ՆԱԽԱՍԵՆՅԱԿՈՒՄ ՉԱՆԳԱԿ

ՆՈՒՆ.— (Գնում է աջ կողմի յերկրորդ դռներով նախասենյակի դռները բացելու)։

ՏԵՍԻԼ VI,

Ովսաննա յեվ Ժորժ

ՈՎՍ.— (Նվագում է մի բեթեվ բան կես րոպեի չափ)։

ԺՈՐԺ.— (Գալիս է աջ կողմի յերկրորդ դռներից։ Գեղեցիկ դեմքով, նորաձեվ հագնված յերիտասարդ է, ձեվերը նավակնային կիրք։ Ցերեսը սափրած է, ցածի շուրթի վրա բողած է մի մասնաչափ մորուս, բեղերը խնամքով սանրած են։ Հանդարտ քայլերով մոտենում է Ովսաննային յեվ ձեռը մեղմիկ դնում նրա ուսի վրա)։ Բարև, շնորհավորում եմ։

ՈՎՍ.— (Ուրախ ցնցվելով, խաղն ընդհատում է յեվ ոտի յելնում)։ Դու ես։

ԺՈՐԺ.— Չելիը սպասում այդպես վաղ։ (Սեղմում է Ովսաննայի ձեռը ամուր)։ Ծաղիկների փունջը բերեցիր։

ՈՎՍ.— Վոչինչ չեմ սառցել։

ԺՈՐԺ.— (Ջեռնոցները հանդարս հանելով)։ Անպիտաններ, միշտ այդպես անճիշտ են։ Բայց յես քեզ համար ավելի թանգագին նվեր եմ բերել։ Ջեռնոցները գցում է ամուր գլխարկի մեջ, գլխարկը դնում է մեջտեղի սեղանի վրա)։

ՈՎՍ.— Ցերևի, մի ուրախալի լուր։ (Անհամբեր)։ Հապա, հապա։ Նստիր։

ԺՈՐԺ.— (Հառաչելով)։ Այն բարդ խնդիրը, վոր ինձ արգելում եր մեր ամուսնության որը նշանակելու, վերջապես լուծվեց։ (Հանդարս նստում է)։

ՈՎՍ.— Հուսով եմ բարենաջող։ (Նստում է Ժորժի մոտ)։

ԺՈՐԺ.— Այո։ Գոնե այնքան, վոր յես այժմ կարող եմ քեզ հաստատել իմը։ (Առնում է Ովսաննայի յերկու ձեռները) Ուրախ ես, ասա՛,

ՈՎՍ.— (Ուրախությունից ծփորված)։ Այո, ի հարկե։ Ցավ ավելի քեզ, քան թե ինձ համար։ Դու շատ հյիր մտածում, շատ հյիր ճնշված։

ԺՈՐԺ.— (Տակավին Ովսաննայի ձեռը բռնած)։ Ախ, Ովսաննա, սեթե իմանայիր, թե ինչ բարոյական տանջանքներ եմ քաշել շատ կը ցավելիր իմ մասին, (Ջեռները բաց թողնելով)։ Բայց վոչինչ, կաշմարն անցավ, այժմ պետք է աշխատել ամեն ինչ մոռանալու։

ՈՎՍ.— Կաշմարն անցավ։ Կընշանակե, այժմ կարող ես պատմել, թե այդ ինչ խնդիր եր, վոր ինձանից թագցնում հյիր։

ԺՈՐԺ.— Ոո, ի հարկե, կպատմեմ։ Բայց վոչ այսոր կամ վաղը, վոչ-շուտով։ Միայն այն ժամանակ, յերբ մենք կըլինենք ամուսիններ։ Իսկ առ այժմ դնա յայտնիր ծնողներիդ, վոր յես քո նշանածն եմ։ Միայն վոչ իմ ներկայությամբ, վոչ, վոչ, յես չեմ սիրում այդպիսի տեսարաններ, հետո...

ՈՎՍ.— Մի փոքր առաջ մայրս նախատում եր ինձ, վոր յես վոչ հարմնացու եմ, վոչ ազատ...

ԺՈՐԺ.— Գիտեմ, սիրելիս, գիտեմ։ Բայց ինչ արած, հանգամանքները շատ բարդ հյին։ Եհ, վերջապես, մի որ բոլորը կիմանան և, հուսով եմ, կներեն...

ՈՎՍ.— (Զարմանալով) Կներեմ... ինչը...

ԺՈՐԺ.— (Վեր է կենում ծփորությունը թագցնելու համար)։ Հավ,

Թողնենք, քո հարցասիրությունն ինձ համար ախորժելի չէ...

ՈՎՍ.— (Վեր է կենում)։ Շատ լավ, չեմ ձանձրացնելու։ Ուրիշ հայտնեմ մորս։

ԺՈՐԺ.— Անպատճառ։ Բայց գիտես, յերևի ծնողներդ կը կամենան հանդիսավոր նշանախոսություն սարքել։ Այդ բանն յես չեյի ուզենալ։ Ինչ հարկավոր է այդ չինական ձևակերպությունը։ Աա, ինչ կասես։

ՈՎՍ.— Յես համաձայն եմ։ Յես էլ չեմ սիրում այդ ավելորդ բաները։ Ինձ համար կարևորն ուրիշ բան է։ (Նայում է ժորժին սիրալիր)։

ԺՈՐԺ.— Գիտեմ։ Մեր փոխադարձ սերն ու հարգանքը, այնպես չէ։

ՈՎՍ.— Գլխով համաձայնության ճոճան է անում, սիրալիր ժպտալով)։

ԺՈՐԺ.— Բայց այնուամենայնիվ, ահա քեզ մի փոքրիկ գրավական ծնողներիդ հանդստացնելու համար։ (Հանում է ծոց մատից մի մատանի յեվ հագցնում է Ովսաննայի մատին)։ Թանգ բան չէ, բայց մորս նվերն է, ուրիշն անգին։ Ինչքան հառաչեցիր, կարծես դու ուրախ չես։

ՈՎՍ.— (Թույլ է տվել ժորժին մատանին հագցնելու, հառաչել է)։ Վոչինչ, մի վատ նախազգացում... տարօրինակ է թվում։ Զնայելով, վոր վաղուց յերազում եյի այս որվա մասին, բայց մի տեսակ յերկյուղ պաշարեց ինձ։ Այս մատանին այնպես հեշտ դուրս յեկավ քո մատից։ Վոչինչ, վոչինչ, ասում են ուրախությունը տարօրինակ զգացումներ և զգեցնում մարդու սրտում։ Նայիր։ (Համբուրում է մատանին)։

ԺՈՐԺ.— Յերեխա։ (ժպտում է, նեցո յուրջ) բայց թողնենք մեր զգացումները մտիկ ապազայի համար։ Լավ, Ովսաննա։ (Բռնում է Ովսաննայի ձեռը)։ Յես սկսել եմ անկեղծությամբ, ուզում եմ մինչեվ վերջը լինել անկեղծ։ Մի մոռանար, վոր յես վոչինչ չունեմ, գիտես, վոչինչ, բացի իմ պիտուքյունից և արհեստից։

ՈՎՍ.— (Ձեռը խլում է ժորժից աննուշ վշտացած) Միայն այդքանը, ուրիշ վոչինչ (նայում է աչերի մեջ խորը հայացքով)։

ԺՈՐԺ.— Յեվ սիրուց դեպի քեզ։ Աչս եյիր ուզում։ (Ուզում է նորից ձեռը բռնել)։

ՈՎՍ.— (Ձեռը դարձյալ խլում է)։ Զարմանալի յեմ, վոր այդ բանը միշտ պետք է քեզ հիշեցնել։

ԺՈՐԺ.— Ովսաննա, մենք դեռահասներ չենք, սերը խոսքերով չի ապացուցվում։

ՈՎՍ.— Լավ, լավ, յես վոչինչ չեմ պահանջում քեզնից։ Ինչ եյիր ուզում ասել։ Վոր աղքատ ես։ Այդ յես վաղուց գիտեմ։ Ծնողներս էլ գիտեն։ Բայց չե վոր յես հարուստ եմ և ինչ վոր ունեմ քեզ է պատկանելու։

ԺՈՐԺ.— (Շինծու հպարտությամբ) Ոհ, վոչ, յես այդ չեմ կամենում։ Ինչ ուժիսը քեզ է միայն պատկանելու։ Յես միայն ժամանակավոր պիտի ոգտվիմ նրանից, շատ շատ մի տարի, մինչև վոր...

ՈՎՍ.— (Ձեռով փակում է ժորժի բերանը) Սուս, բավական է, այդ մասին այլևս վոչ մի խոսք, յես արգելում եմ...

ԺՈՐԺ.— (Ովսաննայի ձեռը սեղմում է իր շրթունքներին)։ Հպատակվում եմ... Դե՛հ, թույլ տուր ինձ հեռանալու, ապա թե վոչ կարող են հյուրերը գալ և կըսկսվին շնորհավորությունները, որ՛ևեանք հալչն հալչն։

ՈՎՍ.— Ճաշին, ի հարկե, կը գաս։

ԺՈՐԺ.— Կաշխատեմ։ Բայց վոչ, յես կը գամ իրիկնադեմին, յերբ հյուրերը ցրված կը լինեն։

ՈՎՍ.— Դու գիտես։

ԺՈՐԺ.— Ուրեմն, ցտեսություն։ (Գրկում է Ովսաննային)։ Կարեվո՞ր յե։

ՈՎՍ.— Այժմ, այո՛։

ԺՈՐԺ.— Աոաջ համբուրում է Ովսաննային մի անգամ)։

ՈՎՍ.— (Զգացված յեվ սաստիկ ծփոթած, մեղմ հրում է ժորժին) Բավական է։

ԺՈՐԺ.— (Դլխարկը սեղանի վրայից վերցնելով)։ Ուրեմն, իրիկնադեմին։ Ցը տեսություն։ Դու կտեսնես, թե ինչպես կերջանկացնեմ քեզ։ Ցը՛ (Գնում է աջ կողմի յերկրորդ դռնեորով)։

ՈՎՍ.— (Նայում է ժորժի յետևից սիրալիր հայացքով, յերջանիկ ժպտում։ Հանկարծ տխրում է, մտածում)։ Զարմանալի յե՛ (Ձեռը սեղմում է սրտին։ Նայում է մատանուն, համբուրում է հանկարծակի յեվ ուրախ ուրախ վազում խորհի դռնեորով)։

ՏԵՍԻԼ VII.

Աբաճես յեվ Աւրամազդ

ԱԲԱՃԵՍ.— (Գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեւրով։ Միջահասակ, կարճ խուզած ալեխառը մազերով, բանձր կեռ ունճեւրով, ներմակ, կարճ, հաստ բեղերով, սափրած յերեսով մարդ է։ Հայացքը խիստ է, խոլվածքը ծանր, հպարտ, ձայնը խռոխս։ Հագած է լայն պաւրտուկ, լայն վարտիկ, ոսկայած շապիկ ծալած ոձիքով։ Աւրամազդին)։ Գնում ես ելի։ (Հեգնական տոնով վրի մեջ լսվում է բարկություն)։ Լավ, լավ, գնա, ո՞վ է քեզ զորով պահում։ Բայց ասա տեսնեմ, չնորհակալ ես հեռանում ինձանից, թէ անշնորհակալ։

ԱՒՐԱՄԱԶԴ.— (Առողջ յեվ ամուր կազմվածքով տղամարդ է, խելոք, առնական, համարձակ դեմքով։ Սեվ բարակ բեղեր, կարճ խուզած միրուք, ամուր սեղմված շրթունքներ։ Հագնված է շատ պարզ, բայց մաքուր։ Ձեվերը ազատ են յեվ զերծ հաճոյանալու ձգտումից)։ Անշնորհակալ լինելու իրավունք չունիմ։ Ձես ձեզանից վատություն չեմ տեսել։

ԱԲԱՃԵՍ.— (Նստելով գահավորակի վրա ծանր ու բարակ, հանում է գրպանից «տեռղորմյան», ցույց տալով Աւրամազդին դիմացի բազկաթոռը)։ Ասա, տեսնենք, ուր մոտ ես մտիլ։

ԱՐ.— (Նստում է գրակը ձեռքին)։ Վոչ վոքի։

ԱԲ.— (Ունճեւրը վեր բարձրացնելով) Ձես ծառայելու հե՞։

ԱՐ.— Վոչ։

ԱԲ.— Հապա՝ հուշտ ինչի՞ վրա յես գրել։

ԱՐ.— Իմ աշխատասիրության և յեռանդի։

ԱԲ.— Դրանցով վոր չի կշտանալ։ Փող-բան։

ԱՐ.— Եհ, մի քիչ ունիմ։

ԱԲ.— Լավ, լավ։ Դե վոր ունիս, կարող ես մի լավ խանութ բաց անել։ Կոշիկների խանութ բաց արա, կոշիկներ։

ԱՐ.— Արդյունաբերական գործարանական քաղաքում միայն ծուլերն ու անպամալուծներն են խանութ բաց անում։

ԱԲ.— Հապա ինչ ես ուզում անել։

ԱՐ.— Ձես մի բնկերություն եմ կազմել։

ԱԲ.— (Զարմացած)։ Ի՞նչ, բնկերություն։

ԱՐ.— Այո։

ԱԲ.— Անհո՞ւնը։

ԱՐ.— (Դուրս է բերում գրպանից մի բուղթ յեվ տալիս է Աբաճեսին)։ Համեցեք, կարդացեք։

ԱԲ.— Տեսնենք, տեսնենք։ (Թուղթը առնում է, ակնոց է դնում յեվ, ձեգնական ժպիտը յերեսին, կարդում է)։ «Торгово-промышленное Товарищество Арамазда Аслановича Агавеляна и других»... (Թուղթը ձգում է սեղանի վրա ծաղրաբար)։ Ոհո, հո հո, շատ թունդ ես վազում, տես վոտդ քարին չդիպչի։

ԱՐ.— (Թուղթը վերցնում է ու դնում գրպանը)։ Ձես հավատում եմ իմ աստղին։

ԱԲ.— Վոր սաբի գլխից ես տեսել աստղդ, հե՞։

ԱՐ.— Տասնուհինգ տարվա մեջ աչքիս առջև այս քաղաք յեկել են փոքրիկ դրամագլխով մի շարք մարդիկ առանց վարկի, առանց ծանոթների և ահագին գործեր ձեռնարկել։

ԱԲ.— (Մի վոտը ծալելով ու տակը դնելով)։ Որինակ, ովքե՞ր։

ԱՐ.— Ձիբեբաը, Առնշտեյնը, Պետերսոնը, Մյուլմանը, վոր մեկն ասեմ։

ԱԲ.— Նրանք կամ հրեաներ են. կամ յեվրոպացիներ։

ԱՐ.— Ձես մի գրքում կարդացել եմ, վոր հայերը շատ հին ժամանակ մրցել են աշխարհի ամենաճարպիկ վաճառականներ — փյունիկեցիների հետ։ Ցեթե մեր նախահայրերը այնպես հաստարձակ են յեղել, ինչու՞ մենք չենք կարող լինել։

ԱԲ.— (Հեգնաբար). Ի հարկե, ի հարկե, հե հե՞...

ԱՐ.— Ի՞նչ արած. ինձը սաբի շարունակ լես աշխատեցի ձեզ համոզել վոր ձեր գործելու յեղանակը հնացել է, պետք է փոխել, դուք արհամարհեցիք իմ ասածները։ Դուք չլսեցիք իմ խորհուրդները։

ԱԲ.— (Գրգռված վոտը հանում է տակից)։ Ապա, ինձանից տղա, դու ով ես, վոր յես քո խորհուրդները լսելի, հե՞։ Վաճառականությունը յես իմ մոր կաթի հետ եմ ծծել։ Իմ հայրն էլ և յեղել վաճառական, պապն էլ, մեծ պապն էլ։ Տեսնում ես այդ խալիճները։ Վորը Թորասանից եր բերված, վորը Թուրքաստանից, վորը Բելուջիստանից։ Յոթանասուն ու հինգ տարի մենք Մոսկվայից սկսած մինչև Թեհրան, Սամարղանդից սկսած մինչև Մանչհասթր առուտուր ենք ունեցել, հիմա գնե պիտի խելք սովորեցնես Ֆրանգուլյաններին։

ԱՐ.— Պարոն Աբաճես, անցան այդ ժամանակները, հիմա մըր-

ցումը դժվարացնել և, վաճառականից այժմ շատ բաներ են պահանջվում։ Վերջապես, այլ և վաճառականության, այլ և արդյունաբերության։

Ա.Թ.— (Վոսկի յե կանգնում վրդովված)։ Շատ ես խելքիդ զոռ տալիս... Լակո՛տ։

Ա.Ր.— (Վոսկի յե կանգնել Աթանեսի հետ միաժամանակ։ Ցնցվում է «լակոտ» բառը լսելիս։ Բայց զսպում է իրան)։ Կարճ լուրջյուն։

Ա.Ր.— (Դուրս է բերում գրպանից մի մեծ ֆառածալ թերթ յեվ տալիս է Աթանեսին)։ Թուլլ ուվեք ներկայացնել ձեզ իմ վերջին հաշիվը։

Ա.Թ.— (Զղջացել է վոր վիրավորեց Աւրամազդին։ Վերցնում է թուղթը։ Մեղմ)։ Դործ սկսե՞լ ես։

Ա.Ր.— Այո՛։

Ա.Թ.— Յե՞րբ։

Ա.Ր.— Վեց ամիս ա։

Ա.Թ.— Վեց ամիս ե ինձ վոչինչ չե՞ս ասել։ (Թուղթը շպրտում է սեղանի վրա)։

Ա.Ր.— Գաղտնիք պահելը ձեղանից եմ սովորել։

Ա.Թ.— Ի՞նչ գործ ե սկսածդ։

Ա.Ր.— Հանքային։

Ա.Թ.— (Զարմացած յեվ բարկացած)։ Ի՞նչ։

Ա.Ր.— Յես գնեցի Հաչի Ղասումից այն հողերը, վոր, հիշում եք, մի ամբողջ ամիս յես հորդորում եյի ձեզ գնել և չգնեցիք։

Ա.Թ.— (Ավելի գրգռված)։ Դու համարձակվեցիր իմ պատառը խլել իմ ձեռքից։

Ա.Ր.— Վոչ, պարոն Աթանես, մի՛այն այդ չեր պատճառը, վոր հողը ձեր ձեռքից դուրս յեկավ։

Ա.Թ.— Բաս ի՞նչ եր ելի։

Ա.Ր.— Թուրքը փողը նադդ եր ուզում։

Ա.Թ.— Նադդ կըտայի։

Ա.Ր.— (Նայում է Աբեղյանին յեվ տխուր ժպտում)։ Դժբաղդաբար չեյիք կարող տալ։

Ա.Թ.— (Կատաղելով)։ Ո՞վ ասաց չեյի կարող տալ։

Ա.Ր.— Ո՞վ ավելի լավ գիտե ձեր գործերը, քան յես։

Ա.Թ.— (Ձայները բարձրացնելով)։ Սո՛ւս... (Ընկրկվել է, ուզվել մտածում է)։ (Լուրջյուն)։

Ա.Ր.— (Նայում է Աբեղյանին կարեկցությամբ)։

Ա.Թ.— (Մի վճռական շարժումն անելով, մոտենում է Աւրամազդին, աջ ու ձախ նայելով, բռնում է նրա ձեռը, կիսածայն)։ Լսի՛ր։ Յեթե բերանիդ մի բառ բաց թողնես մերոնց մոտ, ժանտավանդ դրսում, յես քեզ կոշկիս ծայրով ծովը կշպրտեմ (Բաց է թողնում Աւրամազդի ձեռն ու հետևանում)։

Ա.Ր.— (Արժանապատվությամբ յեվ հանգարձակ)։ Պարոն Ծռանգուլյան, առաջինը այժմ դուք վոչինչ չեք կարող անել ինձ, յերկրորդը, թուլլ ուվեք վերջին խորհուրդը տալ ձեզ. հենց այժմ իսկ հայտնեցեք ձեր ընտանիքին ձեր գործերի դիրքյունը՝ վորպեսզի նրանք իրանց շուտլ ծախսերը կրճատեն։

Ա.Թ.— (Կատաղած, թուղթը վերցնում է սեղանի վրայից)։ Գնանք իմ սենյակը հաշիվդ տեսնեմ։ Յես չկարողացա քո լեզուդ կրճատել։ (Գնում է դեպի աջ կողմի դռները)։

Ա.Ր.— (Հետևում է նրան)։

Ա.Թ.— (Մի պահ կանգ է առնում դռների մոտ)։ Յես միայն փողի պակասություն ունիմ, կրիզիս ես, ուրիշ վոչինչ։ Լսո՞ւմ ես։ Բայց ինչքան ել վատ լինեն Աթանես Ծռանգուլյանի գործերը, նա վոչ մի մարդու ձեռք չի մեկնել։ Լսո՞ւմ ես, վոչ մի մարդու, (Գնում է աջ կողմի առաջին դռներից)։

Ա.Ր.— Տա ասուված։ (Հետևում է Աբաղեսին)։

ՏԵՍԻԼ VIII

Ովսաննա, Սամվել, Նարգիզ, մի վայրկյան Աւրամազդ, հետո Նուռնուջար ու Լեվոն

ՍԱՄՎԵԼ.—(Գալիս է խորի դռներից, Ովսաննայի ձեռը բռնած, ուժով նեռս բերելով։ Մյուս ձեռում բռնած է ջուրթակը կնճռոտցի հետ։ Ծռոջ պես դժգույն, նրբակազմ, հանակրելի դեմքով յերիտասարդ է, հագնված)։ Ովսաննա, Ովսաննա, յեթե քո ժորժին սիրում ես, հինգ րոպե, միայն հինգ րոպե, փոխարենը հարյուրիքիդ յերեկո մինչև լույս կնվագեմ։

ՈՎՍ.— Ոհ, քեզանից ազատվել չի կարելի։ (Նստում է դաշնամուրի մոտ)։

ՆԱՐԳ.—(Ցնկել է Սամվելի ու Ովսաննայի յերեսից)։ Մի ուրախ բան ածեցեք, վոր սիրտս բացվի։ Այսոր յերկու տոն ու-

նեղնք, համ ծնունդ համ նշանագրություն: Ո՛հ, վերջապես (նստում է ու պատրաստվում ականջ դնելու):

ՍԱՄՎԵԼ.—*Ի՞նչ անեմ, առանց ակոմպանիմենտի չեմ կարողանում ըմբռնել: Ահա: (Դնում է պյուպիտրի վրա մի նոտատետր յեվ պատրաստվում ջութակ նվագել):*

ՈՎՍ.—*(Սկսում է դաշնամուր նվագել): Այս ինձ ծանոթ մի յեղանակ է:*

ՍԱՄ.—*(Ջութակ նվագելով): Հրաշալի բան է: Սարազատի ամենասիրելի նոքտուրնը: Այդպես, այդպես, միայն մի փոքր հանդարտ: Հիանալի է:*

(Նվագում են յերեք հատուդ ռոպե)

(Նախասենյակում զանգակ):

ՆՈՒՆՈՒՅԱՐ.—*(Գալիս է խորհի դռնեռով, գնում է աջ կողմի յերկրորդ դռնեռով նվագելու միջոցին յեվ իսկույն նես է գալիս մի մեծ փունջ ծաղիկներ բերելով: Մատենում է Նարգիզին յեվ տալիս է մի այցետոմս):*

ՆԱՐԳ.—*Ովսաննա, տես ժորժն ինչ լավ ծաղիկներ է ուղարկել քեզ համար:*

ՈՎՍ.—*(Խաղը չի ընդհատում): Դիր դաշնամուրի վրա:*

ՆՈՒՆ.—*(Փունջը դնում է դաշնամուրի վրա յեվ գնում է խորհի դռնեռով):*

ԱՐԱՄԱԶԴ.—*(Գալիս է աջ կողմի առաջին դռնեռով մի գրիչ ձեռում, գլխաբաց): Ներեցեք, որիորդ, հայրիկը խնդրում է այստեղ չնվագել: (Գնում է նույն դռնեռով նես):*

ՈՎՍ.—*(Սամվելին): Տնաար: (Մի բանի ակկորդներ յեվս տալով, խաղը ընդհատում է, վեր է կենում, վերցնում փունջը յեվ նրնվաճելով նայում, նոս անում):*

ՍԱՄՎԵԼ.—*(Դադարում է նվագել, գրգռված): Այդ անտանելի է, ուղղակի պատիժ: Այս տանը վոչինչ չի կարելի սովորել:*

ՆԱՐԳ.—*Մի նեղանար, վարդի, հայր է պետք է հարգել: (Վեր է կենում):*

ՍԱՄՎԵԼ.—*Ա՛հ, հարգել իսկ ի՞մ հոգու պահանջները չպետք՞ է հարգել: Հասկացիր, մայր, յես երաժշտությունը պաշտում եմ:*

ՈՎՍ.—*Լավ, մի վրդովվիր, ճաշից հետո կընկրկնենք:*

ՍԱՄՎԵԼ.—*Վոչ, յես ասել եմ և ասածս պիտի կատարեմ: Մինչև նույնն է, այս քաղաքում վոչինչ չի կարելի սովորել: Իմ փրկությունը կամ մայրաքաղաքն է և կամ արտասահմանը: Այս մթնոլորտում ես խեղդվում եմ:*

ԼԵՎՈՆ.—*Իսկ ես արդեն խեղդվել եմ: (Գալիս է խորհի դռնեռից: Հիվանդոս, թուլակազմ յերիտասարդ է, նոսր մազերով, նոսր ուսկեռով, թերթերուսկեռներ թափված: Հագած է շատ յավ կարված մոխրագույն հագուստ: Ձեռները ծածկված են բարակ սեվ ձեռնոցներով, վորոնց յերբեմ չի հանում: Թույլ թույլ նստում է բազկաթոռներից մեկի վրա):*

ՆԱՐԳ.—*(Նայեր է Լեվոնին կարեկցությամբ յեվ տխուր դեմքով աչք վայրկենից, յերբ նա յերվացել է): Այսօր գուցեղ լավ է:*

ԼԵՎՈՆ.—*(Նեռվային): Լավ, մի կրկնիր միևնույն երգը ամեն որ: Զանձրալի չեք ամենքդ: Ինչ ես հառաչում ու թթված դեմքով նայում ինձ: Ո՞ւֆ, ե՞րբ պետք է ազատվեմ այդ հսկողությունից: (Դառնում է Սամվելին): Իսկ քո ջութակը Ո՛ո, ինչ ուրախությամբ յես նրան կփշրեի և վառարան կգցեի: Առավոտից մինչև կես գիշեր ներվերս աղցում ես: Մարդ կարող է ուղղակի խելագարվել այս տանը:*

ՍԱՄՎԵԼ.—*Տեսնում ես, մայրիկ, ամեն կողմից բողոք և արգելք: Թույլ տուր ինձ գնալ, թույլ տուր:*

ՆԱՐԳ.—*Լավ, այսոր ժամանակը չե այդ մասին խոսելու, մի թուղնավորիր մեր ուրախ որը:*

ՍԱՄՎԵԼ.—*Ա՛հ, բռնակալներ: (Աղաղ ֆալետով գնում է խորհի դռնեռով ջութակը տանելով):*

ՏԵՍԻԼ IX

Նույնը, առանց Սամվելի

ԼԵՎՈՆ.—*Թողնք գնա, ինչ նք արգելում:*

ՆԱՐԳ.—*Մեկին թողնի, շատ բապրավորվեցի, վոր մյուսին ել թողնեմ: (Հառաչում է):*

ԼԵՎՈՆ.—*(Դրգռվելով): Ի՞նչ ես ուզում ասել դրանով, ամ. ինչ, պատասխանիր, մի հառաչիր ու պլուխդ շարժիր խորհրդավոր:*

ՆԱՐԳ.—*Լավ: Յես մեղա ասածու, վարդի, կլռեմ, միայն դու մի չարանար:*

ԼԵՎՈՆ.—*Ուզում ես ասել, վոր յես քեզ ձանձրացրել եմ, այո: Սպասիր, սպասիր, շատն անցել է, քիչն է մնում: Կպատվիս ինձանից, քիչ նախատիր ինձ մոքումդ:*

ՆԱՐԳ.—*(Ապշած): Ցնո եմ քեզ նախատում: Ովսաննա, ինչքե՞ր ասում յեղբայրդ:*

ՈՎՍ.—Լևոն, դու անարդար ես։ Մայրիկը վոչ վոքի այս տան այնքան չի սիրում, վորքան քեզ։

ԼԵՎՈՆ.—Հենց այդ ե, վորի դեմ յես բողոքում եմ։ Թող կորչի ծնողական սերը, չեմ ուզում, չեմ ուզում։ Վեր ե կենում։

ՈՎՍ.—(Հանդիմանաբեն)։ Լևոն...

ՆԱՐԳ.—(Մեկուսի) ասածած իմ, ինչքեր եմ լսում։

ԼԵՎՈՆ.—Ովսաննա, դրանք չեն հասկանում, դու պիտի հասկանաս։ Լսիր, ինչ-վոր այդ մարդիկ անվանում են ծնողական սեր, յեհատոլություն ե։ Այո, այո, եսամոլություն, այն ե ամենավատ, ամենաստոր տեսակի։ (Սկսում ե անցուդարձ անել)։

ՈՎՍ.—(Առանձին, կիսաձայն) Մայրիկ, մի հակառակիր, ավելի կբզբզվի։

ԼԵՎՈՆ.—Գազաններն էլ են սիրում իրանց ձագերին, բայց մի այն ապուշները կարող են ասել, ՝թե այդ մի բարձր զգացում ե։ Ո՛հ, ինչ անհուն բերկրություն կլիներ այդ հնարջ անվերջ խնամքից նրա ծանր հառաչանքները լսելու, նրա տխուր աչքերը չտեսնելու համար։ Ձերնք տարի յես նա վողրում և ինձ իր մոտում։ Ձերնք տարի և յես քո դեմքի վրա ժպիտ չեմ տեսնում, մայր։ Ցավ դու չես զգում, վոր այդ ինձ ավելի և տանջում, քան իմ հիվանդությունը։ Քանի ուրախությունը դու պահում ես ուրիշների համար։ Քանի քանի անգամ այս սենյակից այնտեղ, պատի յետևում լսել եմ քո ուրախ ձայնը և ծիծաղը։ Բայց հենց վոր յես յերևացել եմ քո ուրախ ձայնը և ծիծաղը կտրվել և։ Ծիծաղդ ընդհատվել և դեմքդ մի վայրկյանում պատել և մռայլությամբ։ Ցավ դու ինչու, Ովսաննա, գիտես...

ՈՎՍ.—Քեզ սիրելուց, քո մասին ցավելուց։

ԼԵՎՈՆ.—(Դառը ծիծաղով)։ Իմ մասին, հը, հը, վոչ, Ովսաննա, վոչ, չես հասկանում։ Ինձ սիրելուց չե այդ, այլ ինքն իրան սիրելուց։ Նա տխրում ե, վորովհետև իմ ներկայությունը նրան ճնշում ե, իմ տեսքը նրան նեղշնչում ե վիշտ։ Ցավ զրկում եմ նրան ուրախությունից, ես թունավորում եմ նրա հանգստությունը։ Նա վողբում ե վոչ ինձ, այլ ինքն իրան։ Աա, մայրիկ ախպեր ե, թե չե, ասա, խոստովանիր ասա ելի, ինչու՞ յես լռում։

ՆԱՐԳ.—Ի՞նչ ասեմ, վորդի, դու ինքդ ել չգիտես խոսածդ։ Ցավը քեզ չարացրել և։

ԼԵՎՈՆ.—(Վոտը զարկելով հատակին)։ Մի խոսիր իմ ցավի մասին, մի խոսիր։ Հիվանդությունը քայքայում և միայն մարմինը, իսկ միտքս նրբացնում և։ Ա՛հ, չեմ հասկանում վոր դահիճն և ծնողական սեր անվանել հասմոլությունը և վոր պաժան որենքն և սրբագործել այդ բռնությունը։

ՆԱՐԳ.—Աստծու և մարդկանց որենքները։

ԼԵՎՈՆ.—Չեռու տարեք ինձնից ձեր աստծուն։ Ո՞վ և նա, ես նրան մինչև որս չկարողացա ճանաչել։

ՆԱՐԳ.—(Սարսափած)։ Վորդի՛...

ԼԵՎՈՆ.—Այո, այո, չեմ ճանաչում։ Նա ինձ համար ոտաբ և, բոլորովին ոտաբ... Ցես ատում եմ նրան...

ՈՎՍ.—Լևոն։

ՆԱՐԳ.—Ցես չեմ կարող իմ հարազատ վորդուց լսել այդպիսի բաներ։ Դա սրբապղծություն և, ոո, սրբապղծություն։ (Ձեռքերը փակելով գնում ե խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ X.

Լևոն յեվ Ովսաննա

Մի բանի վայրկյան լռություն։

ԼԵՎՈՆ.—(Ընկճված, գունատ, մոտեցել է դաշնամուրին, արմունկները դրել ե նրա վրա յեվ յերեսը ձեռներով ծածկել)։

ՈՎՍ.—(Կամացուկ մոտենում ե Լեվոնին յեվ բեվը բռնում)։ Լևոն։

ԼԵՎՈՆ.—(Գլուխը բարձրացնում ե)։ Ա՛խ Ովսաննա, գանգես մեջ ինչ-վոր ցավ եմ զգում։

ՈՎՍ.—Վոչինչ, կանցնի, կառողջանաս։

ԼԵՎՈՆ.—(Գլուխը հուսահատությամբ շարժելով)։ Վոչ, Ովսաննա, չեմ առողջանալ, իմ բանը պրծած ե։ Ձեզ մայրիկ, ես վերավորեցի նրան։

ՈՎՍ.—Գնա, հանդստացիր, Լևոն, դու չպիտի հուզվիս։

ԼԵՎՈՆ.—(Ուժը ժողովելով)։ Իրավունք ունիմ։ Ցես չպիտի թուլանավորեմ ձեր կյանքը։ Ցեթե ժորժը գա, ուղարկիր իմ սենյակը։ (Թույլ քայլերով գնում ե խորքի դռներով)։

ՈՎՍ.—(Տխուր հայեացքով նայում ե Լեվոնի յետևից)։ Ձեզ յեղբայրը, նա կմահանք և զարձել։

ՏԵՍԻԼ XI.

Ովսաննա յեվ Աբրամազդ

ԱՐԱՄԱԶԴ.—*(Գալիս է աջ կողմի առաջին դռներից, գլխարկը ձեռքին)։ Որիորդ, թույլ տվեք ձեզ միաք բարև ասելու։*

ՈՎՍ.—*(Մտերիմ սրահվելով), Աա, դուք գնում եք։*

ԱՐ.—*Այո, այսուվանից չես այլևս ձեր կառավարիչը չեմ։*

ՈՎՍ—*(Անհարբեր)։ Ինչո՞ւ եք հորս մենակ թողնում։*

ԱՐ.—*Եհ որիորդ, ամեն մարդ ձգտում է անկախ լինելու, բավական է վորքան ծառայեցի։*

ՈՎՍ.—*(Ձեռքը մեկնում է)։ Բարի ճանապարհ։*

ԱՐ.—*(Առագ մոտենում է, զուսպ ջերմությամբ սեղմում է Ովսաննայի ձեռը յեվ իսկույն բաց թողնում)։ Ուրեմն... (Շիտրությունից գլխարկը ճկլտում է ձեռների մեջ)։*

ՈՎՍ.—*(Փուճջը վերցնելով, նայում է, հոս առնում)։ Բա՞ն ունեք ասելու։*

ԱՐ.—*(Տատանվելով)։ Վոչ։ Ձեզանից եյլի սպասում մի խոսք, մի վորևե...*

ՈՎՍ.—*(Անհարբեր)։ Ցանկանում եմ ձեզ կատարյալ աջողություն ապագայում։*

ԱՐ.—*Այդքա՞նը միայն։*

ՈՎՍ.—*(Փուճջը դնում է դաշնամուրի վրա)։ Բարևեցեք ձեր քույրին։ (Մոտենում է լուսամուտին)։*

ԱՐ.—*(Առագ հաղթելով իր շփոթությունը, համարձակ)։ Մի խոսք միայն կկամենայի ասել, որիորդ։*

ՈՎՍ—(Ցերեսը դարձնում է դեպի նա, սառը)։ Լսում եմ։

ԱՐ.—*Ցես համարձակվեցի ձեզ առաջարկություն անել, մերժեցիք արհամարհանքով։ Ունեյիք իրավունք, վորովհետև... ցես ոչ եմ, վոր հանդգնեցի... բայց, ցանկանում եմ, վոր մի ուրիշի հետ դուք լինիք երջանիկ...*

ՈՎՍ.—*(Ցույց է տալիս ժորժի տված մատանին)։ Նայեցեք... ցես արդեն յերջանիկ եմ...*

ԱՐ.—*(Անախորժ ցնցումն)։ Ա՛հ, ուրեմն արդեն վճռա՞ծ է։*

ՈՎՍ.—*Ինչպես տեսնում եք։ Յերթաք բարով։ (Ցերեսը դարձնում է Աբրամազդից)։*

ԱՐ.—*(Չե գնում։ Մտածում է)։*

Լռություն։

ՈՎՍ.—*(Հետ է նայում)։ Ո՞ւմն եք սպասում։*

ԱՐ.—*Կարելի՞ է ձեզ մի հարց տալ, որիորդ։*

ՈՎՍ.—*(Զանձրացած)։ Ա՛հ, ինչ համառն եք դուք։*

ԱՐ.—*Որիորդ Ովսաննա, յեթե խնդիրը միայն ինձ վերաբերվեր, այսքան չեյի ձանձրացնիլ ձեզ։ Բայց անվանեցեք ինձ ինչ կամենաք, ես պարտավոր եմ յերախտագետ լինել այս ընտանիքի վերաբերմամբ։ Այդ մատանին, վորով դուք յերջանիկ եք, ձեր ապագա տանջանքների առաջին ողային է։*

ՈՎՍ.—*(Նկատելի վախեցած)։ Իմ ապագա տանջանքների՞։ Ի՞նչ եք ուզում ասել այդ խոսքերով։*

ԱՐ.—*Ժորժ Աղեքսեկյանի մոտիկ անցյալում կա մի փոքրիկ պատմություն, վոր ձեզ հայտնի չէ։ Զամուսնանաք նրա հետ, մինչև վոր նա չի հայտնել ձեզ այդ... գաղտնիքը։ Ցես իմ բարոյական պարտքը կատարեցի, այժմ միացեք բարով։ (Գլուխ է տալիս յեվ յեռանդուն քայլերով գնում է աջ կողմի յերկրորդ դռներով)։*

ՈՎՍ.—*(Ցնցվել է)։ Սպասեցեք։ (Մի քայլ է անում դեպի աջ կողմի յերկրորդ դռները յեվ կանգ առնում)։ Գնաց։ (Ձակատը շփում է)։ Գաղտնի՞ք... Նա դուբ խոսողներից չէ...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐԱՐՎԱԾ ՑԵՐԿՐՈՐԴ

Արամազդ Աղավելյանի բնակարանը։ Հասարակ կահավորված սենյակ։ Ցերեք դռներ, աջ կողմինը դեպի Նոյեմզարի յվի Լեյլիի բնակարանը, խորքինը դեպի նախասենյակ, ձախինը դեպի Արամազդի ննջարանը։ Աջ պատի առջեվ փոքրիկ թախտ եժանագին գորգով ծածկված, առջեվը սեղան։ Թախտի գլխին, պատի վրա հասարակ հայելի։ Խորքի պատի առջեվ, դեպի աջ անկյուն, ճաշի սեղան, սպիտակ մաքուր սփռոցով ծածկված, քովը պահարան ամանեղենի համար։ Ձախ պատի առջեվ գրասեղան, վրեն մատյաններ, համարակալ յեվ այլն։ Գրասեղանի գլխին, պատի վրա մի մեծ քարտեզ նավթահորերի։

Դռները վարագույրներ չունեն։ Հատակի վրա մի հասարակ կապերտ։ Մի քանի վիեննական դեղնագույն աթոռներ։ Ընդհանրապես անշքություն յեվ մաքրություն։

ՏԵՍԻԼ Ի.

Նոյեմզար յեվ Լեյլի

ՆՈՅԵՄ.—*(Վարագույրը բարձրանալիս, թախտի վրա նստած, ձեռով կար է անում։ Մի ֆանի վայրկյան լռությունից հետո հանկարծ գայրանում է)։* Չեմ կարող մոռանալ, չեմ կարող, ինչ ուզում ես ասա։ Այ հողը ձեր գլուխը, Ծառնդուլոշներ, հողը։

ԼԵՅԼԻ.—*(Նոեմզարի դեմ նստած, կարդում է մի գիրք, աստանցքը հետևած սեղանին յեվ գլուխը ձեռների մեջ բռնած։ Հազիվ է ցնցվում)։* Ելի սկսեցիր։ *(Ընթերցանությունը չի ընդհատում)։*

ՆՈՅԵՄ.—Չես իմանում ինչքան է սիրտս դողվել։ Մի հարցնող չինի. լավ, ասենք մենք գյուղացու աղջիկներ ենք, դու ով ես։ Պարծենում ես, որ յեղբայրս մարդուդ մոտ է ծառայել ես։ Լավ, հիմա էլ չի ծառայում իսոմ։ Այսոր-եգուց լինի հաճ

ՏԵՍԻԼ II.

Նույնի յեվ Արամազդ

ԱՐ.—(Արագ բայլերով գալիս է խորքի դռվերով։ Հագած է ճիճ, ճավրոս պիջակ, երկայն յկոճիկներ։ Զեռներն ու յերեսը փոշի քնչ մրոս են։ Անմիջապես մոտենում է գրասեղանին)։ Շամիչ եկե՞լ ես։ (Դուրս է բերում պիջակի գրպանից դեղնած բղքի մեջ փաթաթած մի բուռը ճավրաճող յեվ դնում է գրասեղանի վրա)։

ԼԵՑԼԻ.—Վոչ։ Լվացվելու յես։

ԱՐ.—Զարժե։ (Նստում է գրասեղանի հով յեվ սկսում է պարապել)։

ՆՈՑԻՄ.—Ի՞նչ նոր լուրեր ես բերել մեզ համար։ (Մոտենում է յեվ գրասեղանի հով նստում)։

ԼԵՑԼԻ.—(Նորից վերցնում է գիրքը յեվ շարունակում է կարդալ)։

ԱՐ։—(Գրչի ծայրով ցույց տալով գրասեղանի վրա դրած ճավրաճողը)։ Ա՛յ, տես, յեթե բան հասկանում ես։

ՆՈՑԻՄ.—(Հեռաֆրֆրված վերցնում է ճավրաճողը ճայում է, ճոճաճում)։ Այս փորվող հորի՞ցն է, լավ նշաններ է տալիս։

ԱՐ.—Ահռապասելի լավ։

ՆՈՑԻՄ.—Ճառնաան կլինի՞։

ԱՐ.—(Ծպտալով)։ Ինչ քիչ բան ես ուզում։ Բավական է, վոր որական մի քանի հազար փութ նավթ լինի։ Բայց... ով գիտե... հոր է, կարող է հանկարծ խփել...

ՆՈՑԻՄ.—Ուրեմն, հույս կա՞։ (Նավթաճողը դնում է գրասեղանի վրա խճամոով ինչպես սրբություն)։ Լսո՞ւմ ես, Լեյլի։ Ե՛հ, դու հենց քո գրքով ես զբաղված։ (Վեր է կենում)։

ԱՐ.—Լեյլին բանաստեղծ է, նրան հանգիստ թող։ (Սկսում է համարակալի վրա արագ արագ հաշիվներ անել)։

ՆՈՑԻՄ.—Ուրեմն, բաժիններդ գինը կբարձրանա։ Ահ, ես էլ ուզում։ Ամուսնուս թողած կոպեկներն էլ գցել գործի մեջ։ Ցերանի չկորչեն։

ԱՐ.—Յեթե կասկածում ես, հենց այսոր քո բաժիններդը կառնեմ մեկին երկու տալով։

ՆՈՑԻՄ.—(Ուրախ)։ Ճշմարի՞տ։ Ջե, հանճաք ես անում։

ԱՐ.—Ցես ժամանակ չունիմ հանճաք անելու։ (Ցես է ճայում)։ Տալի՞ս ես։

ՆՈՑԻՄ.—Ի՞նչ կասես, Լեյլի, տամ թե՞ չե։ Մեկին մեկ աշխատանք է առաջարկում։

ԼԵՑԼԻ.—Ցեռ վոչինչ չեմ հասկանում այդ բաներից։

ՆՈՑԻՄ.—(Արամազդին)։ Տուր փողերը։

ԱՐ.—Իսկույն։ (Բաց է անում գրասեղանի արկղը)։

ՆՈՑԻՄ.—Բայց վոչ, վոչ, համաճայն չեմ։ Կարելի է ուրիշներին ավելի տանե։

ԱՐ.—Ըհը, հիմար չես։ (Շարունակում է պարապել)։

ԼԵՑԼԻ.—Բուլը ու յեղբայը առուտուր են անում։

ՆՈՑԻՄ,—Զե՞ս հավանում։

ԼԵՑԼԻ.—Չի սազում։

ՆՈՑԻՄ.—Շատ հարկավոր է, վոր չի սազում. փող լինի մեջտեղ։

ԱՐ.—Ցես քաղցած եմ, մի բան տվեք ուտելու։

ՆՈՑԻՄ.—Դեռ շատ վաղ է, ճաշ չենք պատրաստել։

ԱՐ.—Դրեք սեղանի վրա մի կտոր հաց ու պանիր—ահա իմ ճաշը։

ԼԵՑԼԻ.—(Գիրքը մի կողմ դնելով, մոտենում է պահարանին)։ Տեսնեմ, ինչ ունենք։

ՆՈՑԻՄ.—Ա՛յ թե ֆանտան խփի, ոո, էլ ինձ հետ խոսել չի լինիլ...

ԼԵՑԼԻ.—Պանիր, մի կտոր ձուկ, երշիկ, այս էլ ապուխտ, գինի... (Հիշած իրերը մեկ մեկ դնում է սեղանի վրա)։ Պատրաստ է։

ՆՈՑԻՄ.—Այսոր մենք էլ առանց տաք կերակրի ճաշեցինք։ Ուրախությունից իմ ախորժակը փակվեց։

ԱՐ.—(Գրիչը ձգել է, մոտեցել ճաշի սեղանին)։ Նստեցեք։ Ուրեմն, ինձ վոչ վոք դեռ չի հարցրել։ Լավ լուր։ (Սկսում է ուտել արագ արագ)։

ԼԵՑԼԻ.—(Նստելով)։ Ահ, քիչ եր մնում մոռանայի։ Ֆռանգուլյանների ծառան եր եկել։

ՆՈՑԻՄ.—(Նստելով)։ Այդ յես չեմ իմացել։

ԼԵՑԼԻ.—Դու տանը չեյիր։

ԱՐ.—Ռուլրեի յեվ իր համար գինի ածելով)։ Լսիր, Լեյլի, վորպես չի վոչինչ չմոռացվի, քաշ արա այն պատին, այ այնտեղ, իմ գրասեղանի գլխին, մի քարեսախտակ և մի քարեգրիչ. և ամեն որ գրիր եկողների անունները։ Ի՞նչ եր ուզում Ֆրանգուլյանների ծառան։

ԼԵՑԼԻ.—Ասում եր, աղան քեզ կանչում է իր մոտ։

ԱՐ.—Ադան ինձ կանչում է իր մոտ։ (Հեգնական ժպիտ)։ Ադան այժմ ինքը կարող է շնորհ բերել մեր տուն և... կգա։ Ձեռ զրաղված եմ։

ՆՈՅԻՄ.—Ֆրանգուլովը մեր տունն գա։ Աշխարհի վերջն է ինչ...

ԱՐ.—Վոչ, Նոյիմզար, աշխարհի սկիզբն է։ Մեր աշխարհի... վրովհետև մենք մի հորից նավթ կհանենք քաշել այս քանի որերը, իսկ միուսից սպասում ենք շատ շատ մի ամից հետո։

ՆՈՅԻՄ.—(Ուրախ)։ Այս քանի որե՞րը և դու ինձ չե՞ս ասում Այ դու, խորամանկ, ուզում եյիր ինձ խաբել, հա՞։ Լավ և, վոր չծախեցի բաժիններս։

ԱՐ.—(Բաժակը զարկելով Նոյիմզարի բաժակին)։ Ասա կեցցե ուխտը և յեռանդը։ (Խմում է)։

ՆՈՅԻՄ.—(Վոգեվորված)։ Կեցցե իմ յեղբայր Արամազդը։ (Խմում է)։

ԱՐ.—Ձեռ վարձեցի ձեզ համար նոր բնակարան։

ՆՈՅԻՄ.—Մի՞թե։ Ահա մի որվա մեջ այսքան ուրախալի լուրեր։ վիրտեղ վարձեցիր։

ԱՐ.—Ալաջալյանի նոր շինած տանը։ Վեց սենյակ բոլոր հարմարություններով։ Ցերկու շաբաթից կտեղափոխվենք։

ՆՈՅԻՄ.—(Ուրախությունից կարմրել է)։ Վեց սենյակ, բոլոր հարմարություններով։

ԱՐ.—(Անտարբեր)։ Ցեվ ելեկտրական լուսով։

ՆՈՅԻՄ.—Մինչև անգամ ելեկտրական լի՞ույս։ Ուրեմն, նոր կարասի չել, այո՛, խոմ չի կարելի այս մաշված աֆոռները լուսավորել ելեկտրական լույսով։

ԱՐ.—(Նույն անտարբերությամբ)։ Ձեռ պատվիրեցի գահավորակ, բազկաթոռներ, պահարաններ, բոլորը, ինչ վոր հարկավոր է...

ՆՈՅԻՄ.—Իսկ ծառա՞։

ԱՐ.—Ինչ մխամիտ կնիկ ես, Նոյիմզար... ելեկտրական լույս և ծառա չունենա՞լ։

ՆՈՅԻՄ.—(Ուրախությունից վեր թռչելով)։ Լեյլի, յես վոչինչ չեմ կարող ուտել։ Վեց սենյակ, ելեկտրական լույս, ծառա, բազկաթոռներ, (Արամազդին)։ Կարմիրը գուռնով, կարմիրը գուռնով պիտի պատվիրեցիր կահ-կարասին, վոր մեր թշնամիների աչքը ծակի։ Ա՛հ, ամեն բանից առաջ հյուրասենյակը պիտի սարքել։ Մի մեծ զրամաֆոն կառնեմ, կդնենք լուսամուտի մոտ և որը մինչև յերեկո կածենք, թող ամբողջ փողոցը լսի։ Ո՛ո, սպասիր, ամբարտավանի աղջիկ ամբարտավան, մենք էլ մերը կասենք։

ԱՐ.—Յես կշտացա։ (Վեր է կենում)։ Բանի՞ ժամն է։ (Նայում է յուր ժամացույցին)։ Ո՛ո, դեռ ժամանակ շատ կա, կարող եմ էլի պարապել։ (Նորից նստում է գրասեղանի մոտ, գրում, հաշվում յեվ այլն)։

ԼԵՅԼԻ.—(Սեղանը ժողովում է, մի բանի կեղտոտ ամանեներ տանում է խոհանոց խորի դռնեռով)։

ՆՈՅԻՄ.—Ա՛հ, հավատալ չի գալիս։ Հիմա կարող եմ նոր կոշիկներս հագնել։ Թող մաշվի։ Վեց սենյակ, ծառա, ելեկտրական լույս, զրամաֆոն։ (Գնում է աջ կողմի դռնեռով)։

ՏԵՍԻԼ III

Արամազդ յեվ Լեյլի

ԼԵՅԼԻ.—(Վերադառնալով խորի դռնեռով, տեսնում է Նոյիմզարը բացակա յե, մոտենում է գրասեղանին)։ Մի րոպե. Արամազդ, լեթե չեմ խանգարում։

ԱՐ.—(Առանց գործն ընդհատելու)։ Չա՛ռ։

ԼԵՅԼԻ.—Այսօր առավոտյան Ովսաննան ինձ կանչել եր իր մոտ։

ԱՐ.—(Գործն ընդհատելով, զարմացած)։ Ովսաննան քեզ կանչե՞ր։ Զարմանալի յե։

ԼԵՅԼԻ.—Վերջերս նա ինձ հետ բարեկամացել է. խնդրում է, վոր ամեն որ գնամ իր մոտ և յերբ ուշանում եմ, մարդ է ուղարկում իմ յեռևույթս։ Արամազդ, դու լավ բան չես արել։

ԱՐ.—Ի՞նչ եմ արել։

ԼԵՅԼԻ.—Զգիտեմ, դեռ գալուդ որը ինչ ես ասել նրան, սիրտը գցել ես զանազան կասկածներ։

ԱՐ.—Այո՛, կասկածներ իր նշանածի վերաբերմամբ, հեռո՛։

ԼԵՅԼԻ.—Նա չափազանց վշտացած է։ Այն որից դես, ասում է հանգստություն չունի։ Արամազդ, դու մարդկանց մասին գուցե տեղը վատ խոսողը չես, այս Ովսաննան էլ է ասում։ Ցերեկի, այդ Ադելբեկյանի մասին մի բան գիտես։ Ովսաննան ուզում է իմանալ։ Յես քեզ խորհուրդ եմ տալիս գնալ և բոլորը բացատրել։ Ցեթե Ովսաննայի նշանածի կյանքում կա մի բան, վոր կարող է դժբախտացնել նրան, դու պարտավոր ես այժմ իսկ զգուշացնել նրան։ (Հեռանում է)։

Ա Ր.—*(Մտածել ե։ Լեյլիի խոսքերից ազդված, գրիչը ձգում ե յեվ վոտքի կանգնում)։ Այո, դու ունես իրավունք, Լեյլի, դու խելոք աղջիկ ես։ Այդ խոսքերը պատիվ են բերում քեզ։ Բայց ինչպես բացատրություն տամ, քանի վոր նա համարյա թե ինձ վռնդել ե իր տնից։*

Լ Ե Յ Լ Ի.—*Նա քեզ չի վռնդել։*

Ա Ր.—*Մերժել—կնշանակե վռնդել։*

Լ Ե Յ Լ Ի.—*Ինչ արած, ուրիշին ե հավանել, ճաշակի բան ե։ Բայց նա քնզ հարգում ե։*

Ա Ր.—*Ուրեմն, կնդունե՞ ինձ, յեթե գնամ մոտը։*

Լ Ե Յ Լ Ի.—*Այո, միայն պետք ե գնալ մի ուրիշ պատրվակով։ Նա այնքան ինքնասեր ե, վոր չի կամենալ քեզ հետ խոսել իր նշանածի մասին, մանավանդ վատ բան լսել նրա վերաբերմամբ։ Նա ինձ հետ ել խոսում ե շատ զգույշ և ակնարկելով։ Հասկանում ես միտքս։*

Ա Ր.—*Հասկանում եմ։*

Լ Ե Յ Լ Ի.—*Ուրեմն...*

Ա Ր.—*Յես կգնամ նրա մոտ, միայն վոչ այսօր։*

Լ Ե Յ Լ Ի.—*Ինչո՞ւ։*

Ա Ր.—*Նախ պետք ե Ովսաննայի հայրը վոտ դնի իմ տունը, հետո յես։ Յես բոպե առ բոպե սպասում եմ ծերուհուն։ Նա պետք ե գա, ստիպված ե գալ։ (Նախասենյակում զանգակի ձայն)։*

Լ Ե Յ Լ Ի.—*Զանգակ, յերևի, նա յե։ (Դնում ե խորհի դռնեռով)։*

Ա Ր.—*Գուցե։ (Նայելով իր ժամացույցին)։ Բայց վաղ ե դեռ։*

Տ Ե Ս Ի Լ IV

Նույնի յեվ Շամիլ-բեգ

Շ Ա Մ Ի Լ-Բ Ե Գ.—*(Գալիս ե Լեյլիի ուղեկցությամբ խորհի դռնեռով։ Գեր, կարմիր յերեսով, հաստափոր մարդ ե, հագած լայն, յերկայն պիջակ, լայն վարտիկ։ Աջ ձեռի ցուցամատի վրա մի մեծ հագիճ վոսկե մատանի առանց քարի, փորի վրա հաստ վոսկե շղթա ժամացույցի. յերեսը մաշուր սափրած ե, գլխի կարճ խուզած մազերը կոշտությունից ճեղ ճակատի վրա ցցվել են ասեղների պես։ Շնչառությունը ծանր ե, ստեպ ստեպ կոկորդը բարձրանալ ե իջնում ե)։ Ագա, Արամազդ, աստված խելքը առել ե, ինչ ե։ (Ձեռը մեկնում ե հեռվից)։*

Լ Ե Յ Լ Ի.—*(Գալիս ե Շամիլ-բեգի հետ, ետևից վերցնում ե գիրքը յեվ նստում ե ճաշի սեղանի մոտ)։*

Ա Ր.—*(Անտարբեր սեղմելով Շամիլ բեգի ձեռը)։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*Հեր որհնած, ինչո՞ւ չես ուզում ընկերության տափը ուսուցչից արալ բերնշտամին։ Ասում են 40,000 ե տալիս։ (Նստում ե թախտի վրա յեվ մեջքը թեռնում ե բարձին յայնարձակ։ Մարթե փոխրիկ գլխարակը դնում ե սեղանի վրա)։*

Ա Ր.—*Ձո բերնշտամը յեթե մի կերո յել ավելացնի այն քառասուն հազարի վրա, ելի չեմ տալ մեր վոսկե տափը։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*(Կարնիկ, կամարաձև ունիերը վերեվ բարձրացնելով)։ Ըմբո...*

Ա Ր.—*Հապա ինչ եյիր կարծում։ Յես հիմար չեմ, վոր աչքերս բաց մեր հարստությունը տամ ուրիշներին։ (Վերցնում ե գրասեղանի վրայից քղքի մեջ փաթաթված ճավքաճողը յեվ ցույց ե տալիս)։ Տես։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*Այդ ինչ ե։*

Ա Ր.—*Հարուն-Ալ-Ռաշիդի խազնան։ Տես, այս դեղին գծերը նավթի յերակներն են։ Ուզում ես, հոտ արա, քեֆդ բացվի։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*(Հոտ ֆռավելով)։ Դեն արա, յես բացի գինու հոտից, վոչինչ չեմ սիրում։ Ուրեմն հույս կա ելի...*

Ա Ր.—*(Նավքաճողը գրասեղանի վրա դնելով)։ Հավատ ել կա, վոչ միայն հույս։ (Առհամարհաճոխով) Հեռ, չարչինները, հենց վոր մի կոպեկ շահ են տալիս, պատրաստ եք չուխաներդ ծախել։ Դուք կոմերսանտի հպարտություն չունիք։ Գրասենյակի համար տեղ գտար։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*Ջե, ցեխ ե, ման գալ չկարողացա։*

Ա Ր.—*կառք կնստեյիր։ (Անց ու դառնալ ե անում, հանախ նայելով ժամացույցին)։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*Պարապտի վրա մեկը նստեցի, ձեռաց կոտրվեց։*

Լ Ե Յ Լ Ի.—*(Ծիծաղում ե)։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*Ծիծաղում ես, հա, քույր Լեյլի։ Այս ամառ պիտի գնամ Եսենտուկ մի քիչ լողանալու։ (Առամազդին)։ Սառը գինի ունե՞ս։*

Ա Ր.—*Լեյլի, Շամիլին գինի տուր։ Իսկ յես գրասենյակ վարձեցի։ (Մոտենում ե Շամիլին)։*

Լ Ե Յ Լ Ի.—*(Պահարանից բերում ե գինի յեվ բաժակ յեվ, դնելով Շամիլի առջեվ, դարձյալ նստում ե յուր տեղը)։*

Շ Ա Մ Ի Լ-Բ.—*Քանով վարձեցիր։*

Ա.Ր.—Տարեկան հազար ու հինգ հարյուր ռուբլով։

ՇԱՄԻԼ-Բ.—(Դինջ ածելով)։ Փաճ, ադա, չլինի թե մեզ ուզում ես չոր տաքի վրա թողնել։ (Խմում է)։

Ա.Ր.—(Ձեռը զարկելով Շամիլ-բեգի ուսին)։ Այժմ պետք է հոգալ գործարանի մասին։

ՇԱՄԻԼ-Բ.—(Նորից բաժակը լցնելով)։ Զավոդ ևլ ուզում ես շինել։ Հեռու կաց, քեզանից նավթի հոտ է գալիս (խմում է)։

Ա.Ր.—Ամեն բան պետք է ունենանք, մինչև անգամ նավթը... Բայց ապագայում։

ՇԱՄԻԼ-Բ.—(Ուռճերը բարձրացնելով)։ Բո բո բո, ադա, տես, փողներիս կվերին քար չգցես, դինի ծախելով եմ աշխատել

Ա.Ր.—Ուզում ես, բաժիններդ ծախիր ինձ, հարյուրին հիսուն աշխատանք կտամ, հը՞,

ՇԱՄԻԼ-Բ.—Դե լավ, դու գիտես, յա պան, յա պռապան։ (Նախասենյակում զանգակի ձայն)։

Ա.Ր.—(Արագ շարժումով)։ Լեյլի, այս՛նա յե։ Այդ շիշը վերցրու։ Շամիլ, անցիր իմ սենյակը։ Լեյլի, դու յել հեռացիր։ Դրսները չես ինքս կբանամ։

ԼԵՅԼԻ.—(Դինու շիշն ու բաժակը դնում է պահարան յեվ գիրքը վերցնելով գնում է աջ կողմի դռնեռով)։

Ա.Ր.—(Շամիլ-Բեգին) Դու դեռ այստե՛ղ ես։

ՇԱՄԻԼ Բ.—(Ծաճր ու բարակ վեր կենալով)։ Ախաը, ինչ ե... ով ե...

Ա.Ր.—Գնա, գնա, հետդ կխմանաս։ (Դարձյալ զանգակ)։

ՇԱՄԻԼ-Բ.—Ո՛ւֆ։ (Տնեսրնեքալով գնում է ձախ կողմի դռնեռով)։

Ա.Ր.—Այդպես, մեկ ել տուր զանգակը, հետո բաց կանեմ։ (Դարձյալ զանգակ)։

Ա.Ր.—Հեե, շատ ե շտապում, (Գնում է խորհի դռնեռով)։

ՏԵՍԻԼ V

Առաքազդ յեվ Աբաեես

ԱԹԱՆԵՍ.—(Գալիս ե խորհի դռնեռով Առաքազդի ուղեկցությամբ։ Նկատելի նիհարել ե յեվ գունատվել։ Հագնված ե այնպես, ինչպես առաջին առավոտում։ Գլխարկը ծանրաշարժ վերցնելով, ձեռնափայտը ձեռին)։ Զարմանում ես, հը՞, վոր յեկել եմ։ (Նայում է աջ ու ձախ)։

Ա.Ր.—Ի հարկե, ով կարող ե, սպասել այս պատվին։ Համեցեք, պարոն Աթանես։ (Աթոռ ե ցույց տալիս բախտի խով)։ Տվեք ինձ ձեր գլխարկն ու ձեռնափայտը։

Ա.Թ.—(Տալիս ե գլխարկն ու ձեռնափայտը)։ Եհ, յեկա ձեր դռը ընկերությունը շնորհավորելու։ Ելի, ինչ վոր լինի, մեր Արամազդեն ես, ծառայել ես ինձ։ (Ծառայել բառը շեշտում ե առանձին)։ Հը՞ը, այս ե ձեր գրասենյակը։ (Նստում է)։

Ա.Ր.—Վոչ, պարոն Աթանես, այս իմ բնակարանն ե, գրասենյակը կբացվի եղուցվանից։ (Աբաեսի գլխարկն ու ձեռնափայտը դնում ե աթկյուռնում, նեե ե գալիս)

Ա.Թ.—Լավ, լավ, շատ լավ, հը՞ը։ (Նայում է շուրջը)։

Ա.Ր.—(Նստելով Աբաեսի դեմ)։ Ինչ կհրամայեք, պարոն Աթանես։

Ա.Թ.—Ինչ կարող եմ հրամայել (կծու ոեգնությամբ) հե. հիմա դու ինքդ ել հրամայող ես դարձել։

Ա.Ր.—Ճշմարիտ ե։ Արդեն հրամանիս տակ ունիմ հինգ գործակատար և շուտով կունենամ քսանուհինգ։

Ա.Թ.—(Զսպելով իր վրդովմունքը)։ Լավ, լավ, ունեցիր, ով և ասում։ (Նայում է դիմացի պատին խոշ արած ֆարեզին)։ Այն ինչ քարտեզ ե, աչքս լավ չի տեսնում։

Ա.Ր.—Այդ, պարոն Աթանես, Ասլերոնյան թերակղզու նավթահողերի քարտեզն ե։

Ա.Թ.—(Մտածելով)։ Հը՞ը... ը՞ը։ (Աչքի տակով նայում է աջ ու ձախ)։ Լուրյուն։

Ա.Ր.—Նիհարել եք այս վերջին որերը, պարոն Աթանես։

Ա.Թ.—(Բարկանալով գլուխը բարձրացնում է)։ Ո՞վ ասաց։

Ա.Ր.—Նկատելի յե։ Մի քիչ ել ծերացել եք։ Լուրյուն։

Ա.Թ.—(Հանկարծ վրդովվում է)։ Ադա, այդ դու՛ ես իմ գործարանի չորս կողմի տափերը վարձով վերցրել։

Ա.Ր.—Այո։

Ա.Թ.—Ինչքի՞ն են հարկավոր։

Ա.Ր.—Հենց այնպես։

Ա.Թ.—Լավ, վոր չորս կողմը բռնել ես, ինձ ճանապարհը տալու յես։

Ա.Ր.—Իհարկե, յես իրավունք ել չունիմ ձեր գործարանի ճանապարհը կապելու։ Կարող եք գնալ-գալ, ինչքան կամենաք։

Ա.Թ.—Ուրիշ ինչ կհրամայեք։

Ա.Ր.—Ուրիշ վոչինչ։ Հենց այդ ելի ուզում իմանալ։

(Նայում է իր ժամացույցին)։ Կարծեմ, բանկը մինչև յերկու

ժամն է բաց, այնպես չէ, պարոն Աթանես։

Ա.Թ.—Գիտես ինչ է։ Ի հարկե, մինչև յերկուսը։ (Վոտքի յե կանգնում)։ Անքաղաքավարի յես, հյուր ընդունել չգիտես։

Ա.Ր.—(Վոտքի կանգնելով) Ինչու՞, յես ինչ ասացի ձեզ, պարոն Աթանես։

Ա.Թ.—Տուր ինձ գլխարկս ու փայտս։

Ա.Ր.—(Չի կատարում Աթանեսի ասածը։ Լուրջ)։ Պարոն Աթանես, դոնե այժմ թողեք այդ ձևերը։ Մենք յերեխաներ չենք, վոր աչքակապուկ խաղանք։ Դուք շատ լավ գիտեք, վոր ամեն բան ինձ հայտնի յե ավելի, քան ում և իցե։

Ա.Թ.—(Շփոթվելով գրգռված)։ Ի՞նչ է հայտնի քեզ, հե՞, ազա պարոն, ինչ է հայտնի։

Ա.Ր.—Նախ և առաջ այն, թէ ինչու համար եք դուք շնորհ բերել։ Տասնուհինգ տարվա մեջ դուք յերբեք իմ համեստ բնակարանն այդ պատվին չեք արժանացրել։ Բայց ինչ արած, մարդիկ հանգամանքների սարուկներն են. շատ անգամ ստիպված են անել այն, ինչ վոր վիրավորական է իրանց անձնասիրության համար։ Դա սովորական յերևույթ է։

Ա.Թ.—Լավ ես խոսում, շատ լավ ես խոսում, ասա։

Ա.Ր.—Կասեմ, ինչու՞ պիտի թագցնեմ։ Վաղը դուք պարտավոր եք բանկին վճարել մի բավական մեծ գումար։ Դուք խնդրել եք, վոր հետաձգեն, չեն համաձայնվել, վորովհետև այլևս ալարչ են։ Ուրեմն ձեր մուրհակները վաղը ուղարկում են նոտարին։ Իսկ այդ յոթանասուն ու հինգ տարի գոյության ունեցող Ֆռանկուլյան ֆերմայի համար... անպատվություն է...

Ա.Թ.—(Կատաղի), Լռի՛ր, լռի՛ր, այդ քո բանը չէ, քո բանը չէ։

Ա.Ր.—Վոչ, մասամբ իմ բանն է, վորովհետև ինձ մոտ եք յեկել։ Դուք դիմել եք ձեր ազգականներին ու բարեկամներին, մերժումներ եք ստացել։ «Ձունենք, կրիվիս է, թե չէ—ուրախությամբ» և այլն և այլն։ Սովորական ստախոսություն, յերբ պղնվություն չունին ուղղակի ասելու չենք տալիս, վորովհետև չենք ճանաչում»։ Ձեվ այսպես, ձեզ ամեն տեղ մերժել են և ձեր հիվանդոտ ինքնասիրությունը վիրավորել։ Ի հարկե, դուք պարտավոր եյիք կես գնով ծախել ձեր անշարժ կալվածներից մեկը, կամ մաքսատանը դարսած ապրանքները, բայց նրանք գրավի տակ են և... մեծ գրավի։ Մնում է գործարանը։ Այն էլ վոչ վոքի հարկավոր չեն, բայց և այնպես ձեր միակ փրկությունը, այսինքն ժամանակավոր փրկությունը նա յե, և ձեր փրկողը միայն յես կարող եմ լինել։ Ահա ճշմարտությունը։ (Անց ու դարձ է անում)։

Ա.Թ.—(Լսել է մերթ կեղծ արհամարհանքով, մերթ կատաղած)։ Դո՛ւ, հա, հա, հա։ (Դառն արհամարհական ծիծաղ)։

Ա.Ր.—Այո, պարոն Աթանես, յես, քո նախկին գործակատարը։ Ձեմ թագցնել, ձեր գործարանը հարկավոր է մեզ, յես նրա շրջապատող հողերը վերցրել եմ տասներկու տարով։ Ուստի խնդրեմ պատասխանեք. ուզում եք ծախել ձեր գործարանը, թե կապալով տալ։

Ա.Թ.—(Զսպված կատաղությամբ)։ Վոչ ծախել եմ ուզում, վոչ կապալով տալ...

Ա.Ր.—Ներեցեք, յես ձեզ... չեմ հավատում։

Ա.Թ.—(Ոտքում է հարձակվել)։ Ձայնդ կտրիր, դյադա։

Ա.Ր.—Սառը չեմ խորը հանդիմանական)։ Պարոն Աթանես։ Լուրյուն։

Ա.Թ.—(Իցից իր ինես կռվել է, վոր զսպի. իրան)։ Տուր ինձ գլխարկս ու փայտս։ Դու պատվել չգիտես այն մարդուն, վորի հացով ապրել ես տասնուհինգ տարի։ Անպատկառ։

Ա.Ր.—(Ցակավին սառը, բայց յուրահանյուր բառը շեշտելով)։ Ցես ձեր հացով չեմ ապրել...

Ա.Թ.—Սատա ես ասում, յես եմ քեզ մարդ դարձրել, յես...

Ա.Ր.—(Դառը ծիծաղ)։ Դուք եք ինձ մարդ դարձրել... Տասնուհինգ տարի ծառայել եմ շան հավատարմությամբ և պահպանել եմ ձեր շահերն այնպես, ինչպես ձեր հարազատ վորդին չեր պահպանիլ։ Ձեր պատճառով ինձ նախատել են, անպատվել, հայհոյել։ Ձեր կոպեկների համար յես մինչև անդամ ծեծել չու ծեծվել եմ, անքուն գիշերներ անցկացրել։ Ցերբեք չեմ մոռանալ այն որը... Մորս դադարը այս անելակում դրած, յես քամու և ցրտի տակ նավից ապրանք եյի ընդունում ձեր հրամանով։ Արտաքուստ զսպելով, ստիպված եյի վիշտս խեղդել և քո հաշիվներն անել։ Ցեվ այսօր, այս բոլորից հետո յես շինական եմ, դյադա, անպատկառ, իսկ դուք ազա յեք... Պարոն Աթանես, գուցե ունեցեք դեպի ուրիշները գոնե այժմ, յերբ ինքներդ կարոտ եք դիմելու։

Ա.Թ.—(Ցակավին գրգռված)։ Ցես վոչ վոքի դիմելու կարոտ չեմ։

Ա.Ր.—*(Կանգ առնելով) Կեղծում եք, կարոտ եք...*

Ա.Թ.—*Տուր ինձ գդակս ու փայտս:*

Ա.Ր.—*(Չի կատարում Աբաճեսի ասածը):*

Ա.Թ.—*(Զայնը բարձրացնելով): Տուր ինձ գդակս ու փայտս: Ձես քեզ հրամայում եմ:*

Ա.Ր.—*(Հանգարս մոտենում է, վերցնում է գրակն ու փայտը, բերում): Համեցեք:*

Ա.Թ.—*(Ներվային խլում է գդակն ու փայտը): Շատ շուտ ես լքդուդ սրել: Զգո՛ւշ:*

Ա.Ր.—*(Հանգարս գլուխ է տալիս):*

Ա.Թ.—*(Մի ճաճի հայլ է անում դեպի խորհի դռները յեվ կանչ է առնում):*

Ա.Ր.—*(Մոտեցել է գրասեղանին յեվ նայում է fարտեզին):*

Ա.Թ.—*(Վճռական մի շարժում անելով): Լավ, ծախում եմ, փողերը համրիր սեղանի վրա—հարյուր հազար ռուբլի.*

Ա.Ր.—*(Հեգնաբար ժպտում է):*

Ա.Թ.—*Համրիր ելի, հարյուր հազար: Ուֆիս, հա՛. ել ինչ ես մեծ մեծ բրդում:*

Ա.Ր.—*Միլիոնների գործ եք կատարել և յերբեք ձեր գործարկղում այդքան գումար չեք ունեցել, ինչ եք պահանջում շինականների և գյադաների մի ընկերությունից: Ձես կգտնեմ այնքան, վորքան արժե ձեր գործարանը: Նրա գինն և վաճառուն հազար:*

Ա.Թ.—*Ղոչաղ ես, շատ ղոչաղ, խոսք չունիմ: Ել ինչ ես կանգնել գլխիս թոկդ վզովս, խեղդիր ելի:*

Ա.Ր.—*Վոչ, պարոն Աբաճեա, ես վոչ վոքի չեմ խեղդելու, յերբեք: Ձեր գործարանն ավելի չարժե: Նրա կաթսաները մաշվել են, մեքենան քայքայվել և, ահագին մեծ գումար հարկավոր ծախսել նորոգելու համար: Կամենաք, թող ուրիշները գնահատեն:*

Ա.Թ.—*Ձես շատ ղալաթ արի, վոր քո տունը վոտ ղրկեի: (Շուռ է գալիս գնալու):*

Ա.Ր.—*Պարոն Ծռանգուլյան, կարող եք վճարել այն փոքրիկ գումարը, վոր ծնում է ձեզ վրա իմ ռոճիկից: Այսոր ժամանակը լրանում է...*

Ա.Թ.—*(Շփոթվելով): Գրիր մի մուրհակ, ես կստորագրեմ:*

Ա.Ր.—*Արժե ութ հարյուր ռուբլու համար ձեր պարտատերերի թիվը ավելացնել: Դատարանում կարող են ինձ նախատել:*

Ա.Թ.—*(Մեկուսի, տանջանքով): Դատարան, ան՛: (Ձպում է իրան): Ինչքա՜ն կարող ես տալ վաղն այդ վաթսուն հազարից:*

Ա.Ր.—*Վաղը քսան տոկոս, ճնացյալը մինչև տարվա վերջը:*

Ա.Թ.—*Իրիկունը յոթ ժամին յես քեզ կսպասեմ մեր տանը:*

Ա.Ր.—*Շատ բարի: Ծառեսւթյուն...*

Ա.Թ.—*Ա՛հ, գազա՛ն: (Գնում է խորհի դռներով):*

Ա.Ր.—*(Ուղեկցում է Աբաճիսին մինչեվ դռները, դեպի ճախասենյակը): Հները գնում են, նորերն են գալիս, մի վըդովվիք, պարոն Ծռանգուլյան: (Գալիս է բեմի կենտրոնը):*

ՏԵՍԻԼ VI

Առամազդ, Շամիլ-բեգ, Նոյիմզար յեվ Լեյլի

ՆՈՅԻՄ.—*(Գալիս է ծապով աջ կողմի դռներով, ուրախ): Ձես բոլորը լսեցի, բոլորն իմացա: Լավ զարդարեցիր նրան, հիանալի յեր: Թող հիմա յել նրա կինը գոռոզանա...*

ԱՐ.—*(Դժկամակ): Նոյիմզար, քո բանը չե, մի խառնվիր:*

ՇԱՄԻԼ-Բ.—*(Գալիս է ձախ Կողմի դռներով, frտիճը արբելով): Ադա, այստեղ յես շոգից խեղդվեցի: Մարդ ասածու, այս սենյակում ինչպես ես ապրում. որինավոր հավաբուն ե): Նոյիմզարից նկատելով): Բարով, ա քուչ: (Ձեռը մեկնում է ներվից):*

ՆՈՅԻՄ.—*Բարով ձեզ: Իմացա՛ք, ով եր յեկել այստեղ:*

ՇԱՄԻԼ-Բ.—*(Առամազդին): Ադա, ղորթ, մին ասա տեսնեմ, այդ ինչ նաղլ եր: Ինչո՞ւ յեր յեկել այդ թաղիը-բաշին:*

ԱՐ.—*(Առագ վերցրել է գրասեղանից մի բանի բղթեր): Հետո, հետո, յես ուշացա:*

ԼԵՅԼԻ.—*(Ցերեկում է աջ կողմի դռների մեջ):*

ԱՐ.—*Լեյլի, այսոր յերեկո յես կլինեմ Ծռանգուլյանի տանը: (Ձեռը զարկելով Շամիլ-բեգի ուսին, զվարթ): Գնանք, պարոն Շոգենավ: (Շատով գնում է խորհի դռներով):*

ՇԱՄԻԼ-Բ.—*Բան, ելի ինձ քաշ ե տալու դես ու դեն: Դեհ, քուչբեր, ցտեսություն: (Հեռվում է Առամազդին): Ադա, կամաց գնա, յես տրաքեցի...*

ՏԵՍԻԼ VII

Նոյիմզար յեվ Լեյլի

ՆՈՅԻՄ.—(Ուրախ)։ Հիմա, Լեյլի), կարող ենք ասել, վոր մեր ասաղն ել դուրս ե գալիս։

ԼԵՅԼԻ.—Հ՜հ։ (Ձեռով մի անտարբեր շարժումն անելով, գնում ե աջ կողի դռնեռով)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

Առաջինն արարվածի տեսարանը։ Պատշգամբի վրա ծաղիկները ու բույսեր չկան։ Յերեկո յե, լուսամուտների վարագույրները իջեցրած են։ Յերկու կերոսինի լամպեր, մեկը դաշնամուրի վրա. մյուսը գահավորակի առջեվ, բեմն աղոտ լուսավորում են։

ՏԵՍԻԼ I

Նարգիզ յեվ Սամվել, հետո Լեվոն։ (Վերջինը բեմի հետեվից)։

ՆԱՐԳԻԶ.—(Գալիս ե խոհի դռնեռով։ Հագնված ե ցնայիճ, ուսերին չկա Քիրմանի շալը)։ *Ուրեմն, դու ուզում ես ինձ հուսահատության հասցնել ելի։ Լավ։* (Բարձրացնում ե լամպերի պատուկգները)։

(Բեմի լուսավորությունն ավելանում ե)

ՍԱՄՎԵԼ.—(Առաջին արարվածի հագուստով, միայն վրեն ամառային վերարկու հագած։ Մի ձեռում բռնած ե ջութակը, տուփի մեջ, մյուսում գլխարկը։ Պատրաստվել ե տնից դուրս գալու)։ *Ջեմ կարող, մայրիկ, հավատա, չեմ կարող այստեղ մնալ։*

ՆԱՐԳ.—*Ախար ինչու՞, ձվ ե քեզ դուրս անում քո հոր տնից։*

ՍԱՄՎԵԼ.—*Այստեղ հայրիկն ե արգելում, այնտեղ Լեվոնն ե շաբունակ արտնջում։ Դու ինձ անվերջ նախատում ես, ովսաննան չի ուզում ինձ ոգնել, լուռ ու տխուր շրջում ե տնեկյակից տնեկյակ։ Այս տուն չե, այլ դժոխք, յերաժշտությունն այստեղ գործ չունի։*

ՆԱՐԳ.—*Վորդիական սեր չկա քո սրտում, սեր, այս ասա։*

ՍԱՄՎԵԼ.—*Մայրիկ, հարյուր անգամ ասել եմ, վոր իմ վորդիական սերն ել, յեղբայրականն ել, բոլոր իմ զգացմունքները այստեղ են, ահա։* (Ձեռով զարկում ե ջութակի տուփին)։

ՆԱՐԳ.—*Հաա՜։ Դե վոր այդպես ե, դնա, վորդի, գնա, յես քեզ պահել չեմ կարող։ Միևքը գլխին մարդն այդ խոսքերը չեր ասիլ։* (Նստում ե վրդովված)։

ՍԱՄՎԵԼ.—Ասուած իմ, չես իմանում բան հասկացնեմ սրանց։ Ինչ ասեմ։

ՆԱՐԳ.—Լսել եմ, որ Ջահել տղերքը սիրահարուում են անառակ աղջիկների վրա ու իրանց ծնողներին թողնում, փախչում, բայց որ փայտի կտորի վրա սիրահարվին—այս չեմ լսել։

ՍԱՄՎԵԼ.—(Դառնութեամբ)։ Փայտի կտոր։ Կարելի չէ խելագարվել ուղղակի այդ խոսքերից։ (Հուսահատ) Մեռաս բարով, մայրիկ։ (Ուզում է գնալ)։

ՆԱՐԳ.—Համբերիր, ուր ես վազում դատարկ դրպանով։ Ինչքան է հարկաւոր քեզ ամսականդ։

ՍԱՄՎԵԼ.—Ես ապրելու չեմ շատ համեստ։ Կաշխատեմ հիսուն ռուբլուց աւել չծախսել։

ՆԱՐԳ.—(Վեր է կենում, գրպանից փողամանը հանելով)։ Վերցրու ես սենեակ վարձել։

ՍԱՄՎԵԼ.—Առ այժմ հիւրանոցում։

ՆԱՐԳ.—(Տալիս է մի հարիւրանոց թղթադրամ)։ Վերցրու, այս ունեցած-չունեցածս։ Հետո տեսնենք ինչ կլինի։ Բայց հոբրիդ փող չվնդրես, կբարկանամ։

ՍԱՄՎԵԼ.—(Փողը վերցնելով)։ Շնորհակալ եմ։ (Համբուրում է մորը)։

ՆԱՐԳ.—(Զգացված)։ Բանդվում է մեր բունը, քանդվում է։

ՍԱՄՎԵԼ.—Մայրիկ, մի վշտանար, չեթե մի որ չես մարդ պիտի դառնամ, իմացիր որ միայն սրանով (ցույց է տալիս ջուրթակը) կարող եմ դառնալ։ Ձես ուրիշ գործի պիտանի չեմ։

ՆԱՐԳ.—Գնա, կարելի չէ լավը հենց քո արածն է։ Գնա, գոնե դու հետս կլինես, մեր խայտառակութիւնը չես տեսնիլ։

ՍԱՄՎԵԼ.—(Զարմացած)։ Խայտառակութիւնը։ Ինչ ես ասում, մայրիկ։

ՆԱՐԳ.—(Ատտասվալի ձայնով)։ Հայրդ սնանկանում է, իսկ յիսրորդ ուղեղը մթնում...

ՍԱՄՎԵԼ.—(Ուժգին ցնցվել է)։ Հայրս սնանկանում է, յեղբայրս... (մտածում է)։

(Լռութիւն)

ՆԱՐԳ.—(Շատ հանդարտ հեկեկում է)։

ՍԱՄՎԵԼ.—(Մախռել է իր ձեռ։ Մի վճռական շարժումն է անում։ Ջուրթակն ու գլխարկը դնում է դաշնամուրի վրա)։ Մայրիկ, ես չեմ գնում։

ԼԵՎՈՆ.—(Բեմի յետեվից։ Ցավագարի ձայնով)։ Նունուֆար, աճո, վճրտեղ եք կորել։

ՆԱՐԳ.—(Գլուխը բարձրացնում է սաստիկով։ Աչքերն արագ սրբում է)։ Լսեցիր։ Որը տասն անգամ նա այդպես կատաղում է։ Գնա, իմացիր ինչ է ուզում։ Ձես սիրտ չունիմ նրան տեսնելու։ Ձեթե կարող ես, տար դուրս. թող մի քիչ զբոսնի։ Ողը նրա վրա լավ է աղդում։

ՍԱՄՎԵԼ.—(Արագ քայլերով գնում է խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ II

Նարգիզ յեվ Աբաւես

ԱԲԱՆԵՍ.—(Գալիս է աջ կողմի առաջին դռներով)։ Ինչ է գոռում ելիւ։

ՆԱՐԳ.—Եհ, ով գիտե։

Ա.Բ.—Դժբաղդութիւնը դժբաղտութեան հետևից յեկավ։ Աստծու որհնութիւնը հեռացավ իմ տնից։

ՆԱՐԳ.—Չի հեռանալ, մի վախենար։ Փորձանք է, յեկել է, պետք է տանենք։ Աշխարհում ով չի յեղել նեղութեան մեջ։

Ա.Բ.—Ձես իմանում, Նարգիզ, չես իմանում ինչ կրակ կա այս տեղ։ (Ցույց է տալիս սիրտը) Ձես, Աբրանես Ծառանգուլյանս, այն որն ընկնում, վոր իմ վոտքով գնամ գործակատարիս տունը։ Նա խոշոր հաշվեցավ, չեթե ինչու համար եմ յեկել։ Ով, նա սատանայի միտքն անգամ կարող է հասկանալ։ Ամեթ, ամեթ։ Այն եվ յիրը։ Ձերեք շաբաթ չանցած այն որից, յերբ հենց այստեղ, այ, այն դռների մոտ (ցույց է տալիս աջ կողմի առաջին դռները) պարծեցա, թե Աբրանես Ծառանգուլյանը իր կյանքում ուրիշին ձեռք չի մեկնել և չի մեկնիլ։ Ախ։ (Թույլ նստում է բազկաթոռներից մեկի վրա յեվ աչքերը հառում է հատակի մի կետին)։

ՆԱՐԳ.—Դու նրանից ոգնութիւն չես խնդրել։

Ա.Բ.—Ինչը գնում եմ գործարանս առաջարկելու, ոգնութիւն խնդրել չէ, բաս ինչ է։ Ճշմարիտ է, նա ինձ նեղը չգցեց, մարդավարի վարվեց, գործարանիս կապակ տվող չկար։ Բայց հենց այս է, վոր ինձ կատաղեցրեց։ Այդ տրնխավորի վորդին, վորի բերանում մոր կաթն ինձ մոտ է չորացել, վոր

ամեն բան ինձնից և սովորել, հանկարծ ինձնից խելոք լինի և ինձ հետ աղնիվ վարվի։

ՆԱՐԳ.—*Ամեն բան քեզանից և սովորել, ուրեմն աղնվություն էլ։*

ԱԹ.—*Բայց նա ինձանից ավելի չի աղնիվ, ավելի, այս և, վոր չեմ կարող նրան ներել։*

ՆԱՐԳ.—*Այդ զարմանալի չի, այդ չես չեմ հասկանում։*

ԱԹ.—*Պետք է իմ տեղը լինես, վոր հասկանաս։ Նախանձում եմ չես նրան, լսում ես, նախանձում։ Թող նա հարստանա, ինչքան ուզում է, այդ վոչինչ, միայն թե մարդիկ չասեն, վոր նա ինձանից խելոք է և ինձանից աղնիվ... Նարգիզ, հիմա կարող եմ խոստովանել։ Լսիր, չէթե չես ժամանակին նրա խորհուրդները լսած լինեիր, այս որին չէիր հասնիլ։ Բայց՝ հենց իմանալով, վոր նա ինձ խելոք խորհուրդներ է տալիս, հակառակն եյի անում, հակառակը։ Ցես մտածում եյի, թող կորցնեմ ամեն բան, գրկվեմ վերջին կոպեկից, միայն թե իմ ասածն անեմ և վոչ թե նրանը։ Ա՛հ, անմանկ, այս հասակո՛վ, յոթանասունն ու հինգ տարվա պատվական ֆիրմայի գլխին կանգնած։ Անպատվությո՛ւն, անպատվությո՛ւն, անպատվությո՛ւն։ (Վեր է կենում յեվ սկսում է ման ու դարձ անել)։*

ՆԱՐԳ.—*Բայց, վառք աստծու, դու դեռ անանկ չես, վաղը մոռհակնեղ կդառնես։*

ԱԹ.—(*Դառը ծիծաղ*)։ *Վաղը։ Իսկ այսօր որը, իսկ հետո, ինացյալ մուրհակները։ Ցերկու հարյուր ութսուն ու հինգ հազար մի՛այն շուն ու գելին եմ պարտական։ Իսկ բանկերը։ Ցեվ ինչ ունեմ դրա դեմ։ Գրավ դրած քարվանսարա, յերկու յերեք հին տներ, ցամաքող նավթահորեր և ծովի ափում թափած մի քանի հարյուր հակ շաքար, բուրդ, կաշի։ Նարգիզ, Նարգիզ, տեսնում ես այս տունը։ Ցերեք կաթողիկոս և ընդունել իր պատերի մեջ և հյուրասիրել, այ նրանց պատկերներն իրանց կոնդակների հետ։ (Ձայները ցածրացնելով, խորհրդավոր։ Ցեվ մեզ կարող են այս անից դուրս քշել...*

ՆԱՐԳ.—(Սարսափելով)։ *Մ՛իթե բանն այդտեղ է հասել։*

ԱԹ.—*Հապա, բաս ինչո՞ւ եմ այսքան տանջվում։*

ՆԱՐԳ.—*Լավ, վոր այդպես է, ինչո՞ւ համար եյիր ինձանից թաքցնում մինչև այսօր։*

ԱԹ.—*Այ, հարցրու։ Ինքս էլ չգիտեմ ինչու։ Սուտ հպարտությո՞ւն, գոռոզությո՞ւն, ուրիշ վոչինչ։ (Նայելով իր գրպանի ժամացույցին)։ Ուղիղ յոթ ժամն է։ Ի՞նչ կլինի իմ դրությունն, չէթե այդ գյադան իր խոսքը չկատարի։*

Նախասենյակում զանգակի ձայն։

ՆԱՐԳ.—*Ահա, զանգակ, յերևի, նա յե՛։*

ԱԹ.—*Ավազակ, ավազակ, ճիշտ նշանակած բոպիկին է գալիս։ Այստեղ էլ յերևում է, վոր մարդ է։ Հրամայիր մեզ չայ տալ։* (Նստում է գահավորակի վրա, տերողորմյան հանում է գրպանից յեվ աչխատում է հանգիստ յերեվալ)։

ՆԱՐԳ.—(*Գնում է խորհի դռնեերով յեվ իսկույն հետ է գալիս*)։ *Նա յե՛։*

ՏԵՍԻԼ III

Աթանես, Առամազդ, Նարգիզ յեվ Նուռնուճար

ԱՐ.—(*Գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեերով։*) *Հագնված է այնպես, ինչպես Առաջին Առարվածում։ Բարև, տիկին։* (*Համբուրում է յեվ հանբուրում Նարգիզի ձեռը, հետո հարգանքով սեղմում է Աթանեսի բույլ մեկնած ձեռը*)։ *Կարծեմ, չեմ ուշացել։*

ԱԹ.—*Վոչինչ, շատ եյ վռազելու պետք չկար։* (*Ցույց է տալիս իր դիմացի բազկաթոռը*)։ *Նստի՛ր։*

ՆԱՐԳ.—(*Վերցնում է դաշնամուրի վրայից Սամվելի ջուբակն ու գլխարկը, տանում է խորհի դռնեերով, բողնում է մյուս սենյակում յեվ յետ է գալիս*)։

ԱՐ.—(*Դուրս է բերում գրպանից մի բուղթ, բաց է անում յեվ դնում է Աթանեսի առջեվ*)։ *Ահավասիկ, պարոն Աթանե՛ս։*

ԱԹ.—*Ի՞նչ թուղթ է այս։* (*Նայում է կեղծ տեսամարտանոցով*)։

ԱՐ.—*Այդ—գործարանն ինձ ծախելու պայմանագիրն է։*

ԱԹ.—*Իսկ փողը։*

ԱՐ.—*Մոռա՛ս է։*

ՆՈՒՆ.—(*Խորհի դռնեերով բերում է յերկու բաժակ թեյ յեվ, դնելով սեղանի վրա, նայում է Նարգիզին*)։

ՆԱՐԳ.—*Մի բաժակ էլ ինձ համար բե՛ր։* (*Նստում է, Առամազդին*) *Նստեցի՛ք։*

ԱՐ.—*Շնորհակալ եմ։* (*Նստում է*)։

ԱԹ.—(*Թուղթն անփույթ հրում է իրանից*)։ *Լավ, շատ լավ...Հը՛ը...*

ԱՐ.—*Ցես կամենում եյի ձեզ հետ մի ուրիշ գործ էլ անել...*

ԱԹ.—*Ի՞նչ գործ։* (*Թեյ է խմում*)։

ՆՈՒՆ.—(*Նարգիզի համար թեյ է բերում խորհի դռնեերով յեվ իսկույն յետ է գնում*)։

Ա.Ր.—Չեկի՛ք կամենալ արդյոք, ձեր ցամաքած հորերի վիճակները մեքենաների հետ ծախել մեր ընկերությանը։ Միևնույնն է, նրանք ձեզ հարկավոր չեն։

Ա.Թ.—Իսկ ո՞ւ ինչին են հարկավոր, պարոնս։

Ա.Ր.—Ցնս կտեղեպափոխեմ նրանց իմ հողի վրա։ (Թեյ է խմում)։

Ա.Թ.—Հը՛ը։ Լավ, թեյդ խմիր, դու դիտես, որ չես այս սենյակում դործ չեմ կատարում։

ՆԱՐԳ.—(Հեգնական, բայց հագով զսպված ձախանձով)։ Ուրեմն, դուք հիմա հանքատեր եք, հա՞։

Ա.Ր.—Այո, տիկին։

Ա.Թ.—(Նարգիզին)։ Բաս, բաս, ազա չե, հը՛։

ՆԱՐԳ.—(Շրթունքները ծռմռելով)։ Ահա թե ինչ։

Ա.Ր.—(Աթաճեսին)։ Թույլ տվեք մի բան ևս խնդրելու։

Ա.Թ.—Հրամայիր, պարոնս, հրամայիր։

Ա.Ր.—Բարի յղեք ինձ մի վկայական տալու, թե չես տասն ու հինգ տարի ծառայել եմ ձեզ հավատարիմ, ազնիվ և դուրս գալիս բոլոր հաշիվները հանձնել եմ ձեզ կանոնավոր։

Ա.Թ.—Ինչի՞դ է հարկավոր, դու հո այսուհետև չես ծառայելու։

Ա.Ր.—Ցնս ուզում եմ այդ վկայականը դնել մի գեղեցիկ շրջանակի մեջ և քաշ տալ մեր գրասենյակում։

Ա.Թ.—(Հավանել է)։ Հաա՛։ Այդ լավ ես, լավ ես։ Դիպլոմ ես, հը՛։

Ա.Ր.—Այո, դիպլոմ մի դպրոցից, որը բոլոր դպրոցների մեջ գլխավարպետն է։

ՆԱՐԳ.—(Հավանել է)։ Այդ խելոք խոսեցիք, չես հավանեցի՛։ Ի հարկե, չերբեք չպիտի մոռանալ, թե ում հացն ես կերել և ով է քեզ մարդ դարձրել։

Ա.Թ.—(Հանկարծ վրդովվելով, չարախնդությամբ)։ Իսկ չեթե չտամ այդ դիպլոմը, հը՛։ Ցեթե ամենքին ասեմ, որ դու ազնիվ չե՞ս ծառայել, գողացե՛լ ես, կողոպտել և այնպես մարդ դարձել։ Այն ժամանակ ի՞նչ կասես, հը՛...

ՆԱՐԳ.—Այն ժամանակ, ի հարկե, ամբողջ քաղաքը քեզ կհավատա... Բայց խեղճ և տղան, ո՛ւր այդ վկայականը։

Ա.Ր.—Տիկին, շնորհակալ եմ ձեր բարեմտության համար։ Բայց խեղճը չես չեմ, այլ... (Զսպում է իրան, դառնում և Աթաճեսին)։ Դուք չեք կարող իմ մասին ոչ մի վատ խոսք ասել, որովհետև ստախոս չեք...

Ա.Թ.—(Ջղայնացել է)։ Լավ լավ, կտամ, այդ ել կտամ։ Ջայները եմ լսում։ Գալիս են։ կխանգարեն մեզ։ Գնանք։ (Վեր է կենում յեվ գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ IV.

Լեվոն, Ժորժ, Ջավադ յեվ Նուռնուճար

ԺՈՐԺ.—(Գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեռով։ Հագնված է ավելի պարզ, բան առաջին արարվածում։ Ձեռնոցներ չունի)։ Ջուր չկնացիր Սամվելի հետ զբոսնելու։ Մաքուր ոդը քեզ համար նեկտար է։

ԼԵՎՈՆ.—Չեմ ուզում Սամվելին։ Նա հսկում է ինձ մորս պատվերով։ Ոո, յես գիտեմ, նրանք այժմ ինձ համարում են ցրնորված։ Բայց փուչ չե, յես վրեժս կառնեմ նրանցից, կառնեմ։ (Գալիս է Ժորժի յեսեվից։ Հագած է ամառային վերարկու, գլխարկ, միջս սեվ ձեռնոցներով է։ Կոկորդին կապած է մի սեվ մեսախայա թաշկինակ։ Այժմ ավելի յե գունատ, աչքերի տակերն ավելի կապտած են, հայացքը շաղված։ Թույլ է տալիս Ջավադին վերարկուն հանելու)։ Թեյ եմ ուզում, թե՛յ։ (Նստում է)։

ՋԱՎ.—(Ցեկել է անմիջապես Լեվոնի յեսեվից աջ կողմի յերկրորդ դռնեռով։ Վերարկուն, ձեռնափայտն ու գլխարկը Լեվոնի տանում է խորհի դռնեռով)։ Ես սհաթին...

ԼԵՎՈՆ.—Չե, Ժորժ, չե, պետք է համաձայնվիս, յեթե մի քիչ խղճում ես ինձ։

ԺՈՐԺ. Քիչ խոսիր. այդ անկարելի յե։

ԼԵՎՈՆ.—(Ձեռները բարձրացնում է ոդի մեջ, վոր ձեռնոցները ցույց տա)։ Իսկ այսպես ապրել կարելի՞ յե։ Ինձ համար այժմ կյանքը վոչ միայն ձանձրալի չե, այլ և ամոթալի։ Տեսա՛ր, յես մինչև անդամ իմ վերարկուն ու ձեռնափայտը չեմ համարձակվում թողնել ընդհանուր նախասենյակում։

ԺՈՐԺ.—(Նստում է։ Անուրբեր)։ Այդ արդեն ավելորդ նախազգուշություն է։

ԼԵՎՈՆ.—Ով գիտե, հանկարծ պատահեց. չե՞ վոր հանցավոր կլինեմ։ Ախ, յես անիծված մարդ եմ, զզվելի թե՛ ուրիշների և թե իմ աչքում։ Ինչո՞ւ, ուրեմն, չես ուզում իմ մերձավորներին ազատել ինձ նման մի ախտավորից։

ԺՈՐԺ.—Ցես չեմ կարող մարդասպան դառնալ։

ԼԵՎՈՆ.—Դե բժշկիր ինձ։ Բժշկիր արմատապես, վոր նորից դառնամ առաջվա առողջ, կայտառ Լեվոնը։ Հիշո՞ւմ ես, վորքան ուրախ եյի, զվարճասեր։ Ախ, յես ձեր ընկերական շրջանների հոգին եյի։ Իսկ այժմ...

ՆՈՒՆ.—(Բերում է խորի դռնեռով մատուցարանի վրա յերկու բաժակ գեյ: Բաժակներից մեկը սովորականից տարբեր ձեվ ունի: Այդ տարածեվ բաժակը դնում է Լեվոնի առջեվ, մյուսը Ժորժի առջեվ յեվ իսկույն գնում է խորի դռնեռով):

ԺՈՐԺ.—Քեզ դարմանում են քաղաքի ընտիր բժիշկները: (Անհասարակ խոսում է ացուցադիր, միշտ գբաղված իր մտով յեվ ստեպ ստեպ նայելով խորի դռներին: Սպասում է Ոսկանյային:)

ԼԵՎՈՆ.—(Գոգովելով): Ա՜հ, անիծվին նրանք իրանց դեղերով, անիծվի ձեր ամբողջ գիտությունը, վոր այնքան անզոր է: (Յուլց է տալիս իր բաժակը) Ահա, տես, զզվանքն իր կնիքը դրոշմել է մինչև անգամ իմ բաժակի վրա: Ազատիր ինձ...

ԺՈՐԺ.—Թեյդ խմիր ու գնա սենյակդ: Ցես ասում եմ, վոր մարդասպան լինել չեմ կարող:

ԼԵՎՈՆ.—Մարդասպան, մարդասպան: Սպանություն կա, վոր մարդասիրությունից գերազանց է: Ցերը մի զզվելի թունավոր սողուն ջախջախում ես կոշկիդ կրունգով, իմացիր, վոր քո արածը բարեբարություն է ամեղների համար: Ցես մի սողուն եմ վարակիչ, հասկանում ես, մի թողնիր ինձ կենդանի: Ա՜խ, եթե իմանայի, վոր ձեռս չի դողալ և գնդակը ուղիղ սրտիս կդիպչի... Բայց թույնը կներգործի խակուն, և յես ամենքից վրեժս առած կլինեմ... Ժորժ, Ժորժ, համաձայնվիր, աղաչում եմ: Մի տող, միայն մի տող գրություն, վոչ վոք չի իմանալ. իմ նամակը կշնջի ամեն կասկած...

ԺՈՐԺ.—(Վոտքի յե կանգնում): Թող այդ, Լեվոն, թող: Ջուր ժամանակ չկորցնենք: Ինձ ուրիշ, ավելի կարող մի բան է զբաղեցնում այս րոպեիս: Ցես կկամենայի քեզ հետ խոսել քո հոր գործերի մասին: Ասում են...

ԼԵՎՈՆ.—(Ընդհատելով Ժորժի խոսքը): Ի՞նչ, ավելի կարևոր բան, իմ հոր գործերը քեզ ավելի յեն զբաղեցնում, քան իմ կյանքը... (Վոտքի յե ելնում):

ԺՈՐԺ.—Աա, դու արդեն սկսում ես ձանձրալի դառնալ: Գնա, մտիր անկողին: (Սկսում է ացց ու դարձ անել, միշտ նայելով խորի դռներին):

ԼԵՎՈՆ.—Եգոիստ, զազրելի եգոիստ, դու գիմնազիստ ժամանակդ էլ անսիրտ եիր: Հասկացիր, ապուշ, հասկացիր. մինչ այժմ այս քայքայված, ախտավոր շինվածքի մեջ մի առողջ կետ կար: Այ (զարկում է իր ճակատին), այստեղ: Այժմ այս էլ և փճում,

հասկանում ես թե չե, այս էլ: Ցես զգում եմ, զգում և տանջվում: (Հուզված ացց ու դարձ է անում):

ԺՈՐԺ.—(Կանգ առնելով, ձեռները վարտիկի գրպանները դրած): Դե լավ, հանգստացիր: Ինչ էլ վոր լինի դրությունդ, կյանքը պետք է քեզ համար ունենա հրապույրը...

ԼԵՎՈՆ.—Լավը, տառում եմ այդպես խոսողներին, ինչպես կամավոր սպրուկները: Ի՞նչ եք ձեր վողորմելի թաթերով կպել կյանքին, ինչպես չեզոքների վորդերի ծառի խոնավ բունին: (Կանգ է առնում, դողալով) Տա՜ր, տա՜ր ինձ այդ թույնը, ասում եմ, դա միակ բարիքն է, վոր կարող է անել քեզ նման մի չեսամոլի: Ջե՜ս տալիս, ասա, չե՜ս տալիս,

ԺՈՐԺ.—Ցես քեզ համար իմ անունը վտանգի յենթարկել չեմ կարող:

ԼԵՎՈՆ.—Ասա, ուրեմն, չե՜ս տալիս: Դե, կե՜ր... (Կատաղած հարձակվում է Ժորժի վրա յեվ ուզում է նրան խեղդել):

ԺՈՐԺ.—(Աշխատելով ոնիկն ազատել): Լևոն, Լևոն, ի՞նչ ես անում, խելքի յեկ: Ա՜հ, նա խելագարվեց: (Բարձր ձայնով) Ջավադ, Նունուֆար... (Ցերկյուղից գունատվել է):

ՏԵՍԻԼ V

Նույնը, Ջավադ, Նունուֆար, Ոսկանյա յեվ մյուսները

ՋԱՎ.—(Վազում է ձախ աջ կողմի յերկրորդ դռներով): Վա՜յ: (Ազատում է Ժորժին) Լևոն աղա...

ՆԱՐԳ.—(Գալիս է խորի դռներով): Ա՜հ:

ՈՍԿ.—(Գալիս է խորի դռներով): Ի՞նչ պատահեց:

ՆՈՒՆ.—(Գալիս է խորի դռներով)

ԱՔ.—(Գալիս է աջ կողմի առաջին դռներով): Այդ ի՞նչ գոռոց է:

ԱՐ.—(Գալիս է աջ կողմի առաջին դռներով)

ԼԵՎՈՆ.—(Բաց է թողել Ժորժի ոնիկը: Դողում է վոտքից մինչեվ գլուխ: Շնչասպառ: Աշխատում է ուշքը ժողովել): Ա՜հ...ահ: (Ձակատին զարնելով): Այստեղը, այստեղն է մեղավորը... դատարկ-վում է...չորանում է: (Կատաղելով ատելի դեմ) Հեռացե՜ք, մի մոտենաք ինձ... դուք գարշելի յեք:

ԱՐ.—(Մոտենում է Լեվոնին): Լևոն, մի հուզվիր, խնդրում եմ:

ԼԵՎՈՆ.—(Հեռվելով Արամազդի ուսին): Ա՜հ, Արամազդ, դրանք անասուններ են... Դու յես իմ միակ բարեկամը... Թող սատկեն դրանք...

ԱԹ.—Տարեք անբաղդին իր սենյակը։

ԼԵՎՈՆ.—(Աթաճեսին)։ Անբաղդը դու ես, ծերուկ։ (Առամազդին, որ գրկել է իրան) Թող, թող ինձ։ (Դողդոջ ֆայտերով, ընդհանուր լռության մեջ գնում է խորհի դռնեռով)։

ՆԱՐԳ.—(Հուսահատված)։ Վողորմած ասալած, ինչ մեղքերիս համար ես ինձ այսքան տանջում։ (Ջավադին յեվ Նուռուջահրին) Ցեկեք ինձ հետ, տանենք նրան իր սենյակը։ (Գնում է խորհի դռնեռով)։

ՋԱՎ.—(Գնում է խորհը դռնեռով)։

ՆՈՒՆ.—(Գնում է խորհի դռնեռով)։

ԱԹ.—(Առամազդին)։ Արի գնանք, արի, գործներս վերջացնենք։ Նրա բանը պրծած է։ (Գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ԱՐ.—(Գնում է աջ կողմի առաջին դռնեռով, մի տխուր հայացք ձգելով Ովսաննայի յեվ Ժորժի վրա)։

ՏԵՍԻԼ VI

Ովսաննա յեվ Ժորժ

ՈՎՍ.—(Վախեցել է Ժորժի մասին)։ Ինչ եր անում նա քեզ։

ԺՈՐԺ.—Ուզում եր խեղդել, հագիվ ազատվեցի։ (Տակավին գոնացած է)։

ՈՎՍ,—Ասված իմ, ասված իմ, ինչ է պատահում նրան։ (Նըստում է)։

ԺՈՐԺ.—Սովորական մի բան, վոր հաճախ հետևանք է այդ տեսակ հիվանդության։

ՈՎՍ.—Մի՞թե դեղ չկա նրան բժշկելու։

ԺՈՐԺ.—Միակ դեղը ինքնասպանությունն է։ Նա ինձանից թոշներ պահանջում, չհամաձայնվեցի գրկել կատաղից և հարձակվից վրես։

ՈՎՍ.—(Զարհանալով յեվ վրդովվելով)։ Միակ դեղը ինքնասպանությո՞ւն է։ Ցեվ դու այդ պտում ես ինձ, նրա քրոջը։

ԺՈՐԺ.— Ինչ արած, նրա ճակատագիրն է։

ՈՎՍ. — (Հանկարծակի վեր կենալով)։ Լռի՛ր, քո խոսքերից զարհուրելի ցրտություն է փչում, լռի՛ր։

ԺՈՐԺ.— Պետք է վողջամիտ լինել, Ովսաննա, պետք է մոռանալ նրանց մասին, վորոնց վրա մահը դեռ չի դրել իր դրոշմը։ Իմ Լևոնը կփախչ է, պետք է այդ նեխվածքից ազատել մերձավորներին։

ՈՎՍ.— (Ականջները փակելով)։ Բավական է, բավական է, ես չեմ կարող քեզ լսել։ Այդքան քաբասբտություն քեզանից չեմ կարող սպասել։

ԺՈՐԺ.— Ովսաննա, չեթե այդ շարժուն դիակի ձեռքին զենք լիներ, կսպաներ ինձ։ Ինչի՞ւ։ Բնության վեր որենքի հիման վրա։ Նա ժահ է, ես կյանք։ Նա ատում է ինձ, ինչպես ես սիրեմ նրան կամ խղճամ. Ա՛հ, թողնենք այդ, խոսենք մեր մասին։ Ասա ինձ, վերջացա՞ն քո պատրաստությունները։

ՈՎՍ.— (Նայել է նրան յերկարատեվ, զննող հայացքով)։

ԺՈՐԺ.— Ինչի՞ւ ես այդպես զննում։ Նո՞ր ես տեսնում ինձ։

ՈՎՍ.— Այո, կարծես թե նոր եմ տեսնում... Կարծես, դու այն չես, ինչ վոր յերեսակայել եմ մինչև այսօր։

ԺՈՐԺ.— (Մոտենում է, Ովսաննայի ձեռը բռնում ֆիֆտաբար)։ Լավ, Ովսաննա, յերեխա մի լինիր, նստիր այստեղ, խոսենք մեր մասին։ Ժամանակն անցնում է, շոգերը մոտենում են, հարկավոր է...

ՈՎՍ.— (Ձեռը խլելով Ժորժից, իրան գոպում է)։ Շատ լավ, խոսենք... Նախ և առաջ ասա. այն ինչ գաղտնիք է, վոր չես ուզում ինձ հաղորդել։

ԺՈՐԺ.— Ո՛ո, դարձյալ մեևնույն յերգը։ Ինչ համառն ես, Ովսաննա, հարյուր անգամ ասել եմ, վոր քեզանից վոչ մի գաղտնիք չունիմ։

ՈՎՍ.— Իսկ յես համոզված եմ, վոր ունիս և թագցնում ես ամենայն զգուշությամբ։ Այո, ունիս, և թվում է ինձ, վոր յեթե յես իմանամ այն, ինչ վոր ցանկանում եմ իմանալ, պիտի ժպրաղանամ։ (Անց ու դարձ է անում)։

ԺՈՐԺ.— (Զեվանում է վիրավորված) Ուրեմն, դու ինձ չե՞ս հավատում, Ովսաննա։

ՈՎՍ.— Հավատում եմ և կամենում եմ հավատալ անպայման — ահա ինչու դու պարտավոր ես ասել բոլորը, ինչ վոր վերաբերվում է քեզ։

ԺՈՐԺ.— (Ձեվանալով վրդովված)։ Այդ, վերջապես, անտանելի յե, Ովսաննա, դու կարող ես ինձ հուսահատության հասցնել։ Չեմ հասկանում, ինչ կա իմ կյանքում, վոր քեզ հայտնի չլինի։ Ցես մի անհայտ ընտանիքի զավակ չեմ։ Ովքեր են իմ ծնողները, հայտնի յե քեզ և քո ծնողներին։ Ցեղբայրդ

իմ գլխավորական ընկերն է յեղել։ Վերջապես, յես պատմել եմ քեզ իմ ամբողջ կյանքը։

ՈՎՍ.— Սուս, սուս, բոլորը չես պատմել։ Կա մի բան, որ յես չըգիտեմ, կա, կա, ու կա։

ԺՈՐԺ.—(Աշխատում է ծիծաղել)։ Յերևակա, յերևակա։ (Մոտենում է յեվ ձեռը բռնում)։ Նատիր, նատիր, իրականի մասին խոսենք։ (Ինքը նստում է, Ովսաննայի ձեռը բռնած)։ Աստ ինձ, հայրդ ինչո՞ւ է այնքան տխուր։

ՈՎՍ.—(Թույլ տալով, որ Ժորժն իր ձեռները բռնի, չի նստել), ինչպես չլինեի տխուր, այնպիսի վորդի ունենալով։

ԺՈՐԺ.—Բայց մի՞դ է միայն պատճառը, թե՞ կա և ուրիշ բան։

ՈՎՍ.—Ուրիշ ինչ կարող է լինել։

ԺՈՐԺ.—Զգիտեմ, այսօր լսեցի, վոր իբր թե նրա գործերը վատ են։

ՈՎՍ.—(Ձեռները Ժորժից խլելով)։ Ա՛հ, նրա գործերն ինձ չեն հետաքրքրում։

ԺՈՐԺ.—(Մտազբաղ, վոսկի կանգնելով)։ Այդպես չե՛, Ովսաննա, այդպես չե՛։ Ինձ հետաքրքրում են։

ՈՎՍ.—Խոսիր իր հետ, ինչ վերաբերվում է ինձ, յես չեմ հանդըստանալ, մինչև վոր իմ հարցի պատասխանը չստանամ։

ԺՈՐԺ.—(Անհամբեր)։ Ա՛հ, դու արդեն չափն անցար։ Ո՞վ է գցել քո սիրտն այդ կասկածն իմ մասին, ո՞վ, ասա՛։

ՈՎՍ.—Աա, վերջապես, դու այդ հարցը տվեցիր։ Յես վաղուց եյի սպասում։ Ճանաչո՛ւմ ես Արամազդին։

ԺՈՐԺ.—(Հեգնաբար)։ Ինչպես չճանաչեմ այդ պրիկաշչիկ—ասպետին, վոր քեզ առաջարկություն է արել։ Նա յե՛ս կասկածը գցել։

ՈՎՍ.—Այո՛։ Ահա նրա խոսքերը, վոր շարունակ հնչում են իմ ականջին. «Ժորժ Ադելբեկյանի մոտիկ անցյալում կա մի փոքրիկ պատմություն, վոր ձեզ հայտնի չե՛։ Զգուշացնում եմ ձեզ այդ գաղտնիքը»։

ԺՈՐԺ.—(Նախ շփոթվում է սաստիկ, ապա արագ զսպում է իրան յեվ ցույց է տալիս բարկություն)։ Անպիտան, ահա թե ինչ պես է ջուրը պղտորել։ Յես նրանից բացատրություն կը պահանջեմ։

ՈՎՍ.—Իմ ուզածն էլ հենց այդ է։

ԺՈՐԺ.—Գարշելի՛։ Նախանձից ղրղված, այժմ ուզում է ինձ վրա արատ գցել, այո՛։ Ցեվ դու, Ովսաննա, թույլ ես տվել նրան իմ մասին խոսելու։ Այդ յես չեյի սպասում քեզնից։

ՈՎՍ.—Ցերբ նա այդ խոսքերն ասաց, ինձնից թուլությունն վնդրեց։ Ասաց և իսկույն հեռացավ։ Վոչնչացրու նրան մի բառով, և յես քեզ կսիրեմ ավելի, քան այժմ...

ԺՈՐԺ.—Շատ բարի, յես կաշխատեմ նրան հանդիպել մի վորևե տեղ։

ՈՎՍ.—Դու կարող ես նրան հանդիպել հենց այժմ։ Նա դեռ հայրիկի սենյակումն է։

ԺՈՐԺ.—Վոչ, քո ներկայությամբ անհարմար է, մանավանդ այստեղ. ծնողներդ, յեղբայրդ... շփոթություն... աղմուկ...

ՈՎՍ.—Ընդհակառակը, յես ուզում եմ, վոր հենց իմ ներկայությամբ դու նրա զրպարտությունը ցույց տաս, վորպեսզի ծառաների միջոցով նրան դուրս վռնդեմ այստեղից։ Բայց ահա նա...

ՏԵՍԻԼ VII

Նույնը յեվ Արամազդ

ԱՐԱՄԱԶԴ.—(Գալիս է աջ կողմի առաջին դռներով։ Դեռ դուրս չեկած՝ դեպի Աբաներսը)։ Շատ բարի, շատ բարի, ամենքին կասեմ, վոր ձեղանից յեմ մարդ դարձել։ Ծառություն։ (Մի հառաչանք բերբ գրպանը դնելով, հայերեն ասղղում է դեպի աջ կողմի յերկրորդ դռները, իբր թե չնկատելով Ովսաննային յեվ Ժորժին)։

ՈՎՍԱՆՆԱ.—Մի բոպե։

ԱՐ.—(Կանգ է առնում). Հրամայեցեք, որիորդ։ (Ժորժի կողմ չի նայում)։

ՈՎՍ.—Ժորժին)։ Հարցրու (ծածկում է խորի դռները յեվ ներս գալիս)։

ԺՈՐԺ.—(Նեղն ընկած մի կերպ իրեն հավաքել է իրան։ Գոռոզ)։ Պարոն, դուք ուզեցել եք ինչ-վոր մութ խոսքերով ինձ կասկածելի դարձնել իմ հարսնացուի աչքում։ Յես ձեղանից բացատրություն եմ պահանջում։

ԱՐ.—Պահանջում եք, շատ լավ։

ԺՈՐԺ.—Յես ինչ դատ ունեմ, վոր վախենում եմ հայտնել Ովսաննային։

ԱՐ.—Որիորդը թույլ տալիս է ասելու։

ՈՂՍ.—Այո՛ (Կանգնում է յերկուսի մեջ, բայց ավելի դեպի իրեն)։
ԱՐ.—(Ժորժին)։ Յես ուզեցել եմ ասել որիորդին, վոր դուք, պարոն Ազելբեկյան այն չեք, ինչ-վոր աշխատում եք յերևալ նրան։
ԺՈՐԺ.—Այսինքն ինչպես։
ԱՐ.—Այսինքն չենթալմեն չեք ձեր հարսնացուի վերաբերմամբ։
ԺՈՐԺ.—Ոհո, դործակատարի բերանում այդպիսի խոսքեր... Արդյոք, ինչպես յես չենթա...լ...մեն... (Բառը ձգձգում է հեգնաբար) չեմ։ Բացատրեցեք։
ԱՐ.—Յեթե որիորդը թուլլ կտա...
ՈՂՍ.—Յես խնդրում եմ։
ԱՐ.—(Տատանվելով)։ Բայց իմ ասելիքը շատ խիստ է մի աղնիվ որիորդի լսելիքի համար։ Վերջապես, այստեղ անհարմար է...
ՈՂՍ.—Յես պահանջում եմ։
ԺՈՐԺ.—(Ձիգն է անում իրան սառը պահելու, բայց արդեն գունատվել է)։
ԱՐ.—(Մի ինչ յերես տատանվում է յեվ ճանկարծ վճռում)։ Որիորդ, պարոնը, վոր ուզում է ձեզ հետ ամուսնանալ, արդեն ունի և՛ կին, և՛... յերեխա...
ՈՂՍ.—(Ձնավատալով լսածին, այլայլված)։ Ի՞նչ...
ԺՈՐԺ.—(Ուժգին ցնցմամբ)։ Լռե՛ք։ (Ուզում է հարձակվել Աբրամազդի վրա)։
ՈՂՍ։—(Մեջ ընկնելով)։ Համբերե՛ք...։
Լռություն։
ԱՐ.—(Առանց շարժվելու, ինքնապաշտպանության դիրքում կանգնած, արհամարհանքով նայել է Ժորժին)։
ԺՈՐԺ.—(Բռունցքները բռնած դողում է ամբողջ մարմնով)։
ՈՂՍ.—(Զորեղ մահառումից հետո, Աբրամազդին)։ Շարունակեցեք...
ԱՐ.—(Լուրջ յեվ տխուր տոնով)։ Ուսանող յեղած ժամանակ պարոնը Մոսկվայում հրապուրում եր իր տանտիրուհու չորս աղջիկներից մեկին և... մոլորեցնում։ Մի տարի անցած, խաբված աղջիկը դառնում է... մայր...
ԺՈՐԺ.—Լռե՛ք, անպատկառ։
ՈՂՍ.—(Վրդովված Աբրամազդի սառնությունից)։ Դուք սուտ եք ասում, դուք զրպարտում եք նրան։
ԺՈՐԺ.—Դուրս վռնդիր նրան։
ԱՐ.—(Դառը ժպտալով, տակավին սառը)։ Սովորական հերքումը կատարելուց հետո, պարոնը զղջում է կամ, ճիշտ

ասած, սառչում է դեպի որիորդը։ Ուսումն ավարտելով, գալիս է հայրենիք, արդեն խելքը գլուխը ժողոված։ Բայց որիորդը չի ուզում այդպես հեշտ բաժանվել։ Սկզբում հավատ դեպի նրա խոստումները, թե շուտով կվերադառնա Մոսկվա, ապա կտսկած, այնուհետև աղաչանք, պաղատանք, արցունքներով թրջված նամակներ։ Վոչինչ չի ոգնում։ Այն ժամանակ որիորդը, հուսահատված, վերցնում է յերեխային, գալիս և այստեղ իր մոր նախատինքից ազատվելու համար։
ԺՈՐԺ.—(Շնչասպառ, բայց արդեն բավական ընկճված)։ Այս բոլորը մի անամոթ պրիկաշչիկի հնարած հեքիաթ է։
ՈՂՍ.—(Ահբողջ ժամանակ նեռեվել է Ժորժի դեմքի արտահայտությանը։ Աբրամազդին)։ Շարունակեցեք։
ԱՐ.—(Միշտ անսուսադիր դեպի Ժորժը)։ Պարոնը մի քանի ոգներ է փընտռում անախորժ հյուրից ազատվելու համար։ Մեկին են ընկնում նրա համալսարանական ընկերները, գործը հանձնվում է ընկերական դատարանին։ Վորոշվում է այսպես. որիորդը կգնա այստեղ, պարոնը յերեխային կտա իր անունը, իսկ մորը կհամարի իր կինը։ Որինական թե ապօրինի—այս միևնույնն է։
ՈՂՍ.—(Շնչասպառ)։ Յետո, հետո...
ԱՐ.—Որիորդը դրականապես հրաժարվում է, ասելով, թե վոչ մի հայն չի կարող այդ մարդու կինը դառնալ, այլ և չի համաձայնվիլ իր յերեխային տալ նրա անունը։ Այդ ժամանակ ընկերները վորոշում են, թե պարոնը պարտավոր է ապահովել դոնե իր զավակին մի վորոշ ամսականով։ Պարոնը, իհարկե, խոստանում է... Որիորդը վերցնում է յերեխային և վերադառնում է Մոսկվա, ահա այդ մասանին ձեզ տալու նախընթաց որը...
ՈՂՍ.—Փաստեր ունեք, փաստեր, յես ձեզ չեմ հավատում։
ԺՈՐԺ.—(Մի ինչ խրախուսված)։ Այո, փաստեր, յես փաստեր եմ պահանջում։ Ումից եք լսել այդ սոսկալի զրպարտությունը։
ԱՐ.—(Կիսով չափ դառնալով Ժորժին)։ Ձանաչում եք բժիշկ Ազիզյանցին։
ԺՈՐԺ.—Նա իմ թշնամին է։
ՈՂՍ.—Յես նրա մասին շատ լավ կարծիք եմ լսել։
ԱՐ.—(Դառնալով Ովսաննային)։ Բժիշկ Ազիզյանցը յեղել է մեկն յերկու դատավորներից որիորդի կողմից։ Թուլլ տվեք կատարել նրա մի անախորժ հանձնարարությունը, որիորդ։

(Դուրս է բերում գրպանից մի նամակ)։ Դուք, անտարակույս, ճանաչում եք ձեր նշանածի ձեռագիրը։ Առեք... (Տալիս է նամակը)։

ԺՈՐԺ.—(Մեկուսի)։ Իմ նամակը։ (Հարձակվում է Ովսաննայի վրա, վոր նամակը խլե)։ Մի կարդա, Ովսաննա, դա մի սարք ղըպարտություն է...

ՈՎՍ.—(Խիստ յեվ սպառնողական ժպիտով)։ Սպասի՛ր...

ԱՐ.—Այդ նամակը որխորդը թողել է բժիշկ Ազիզյանցի մոտ և պարտավորել նրան, վոր ձեզ ցույց տա։ Ահա նրա խոսքերը. «Թող այդ անմեղ աղջիկն իմանա, թե ում հետ է ուզում կապել իր ճակատագիրը»։ Ցեղ բժիշկ Ազիզյանցն ինձ է հանձնարարել այդ նամակը ձեզ տալու։

ՈՎՍ.—(Նայում է նամակի վեճագիրը)։ Սիրելի Ոլգա։ (Ապա ստորագրությունը։ «Քո Ժորժ»։ Այո, այս քո ձեռագիրն է։ (Նստում է շատ կարդում է մտքում, ավելի ու ավելի հուզվելով։ Ապա ձեռները բալացած կողմերին թողնելով, դառը կծամբացնով), Վողորմելի, վորքա՜ն սեր ես շռայլել։

ԺՈՐԺ.—Սուտ է այդ բոլորը, Ովսաննա, սուտ է, մի հավատար։ Ցեղ այդ աղջկան չեմ մոլորեցրել, այլ ինքն է հափշտակվել։ Դա յերիտասարդական մի սխալ է։ Դա մի սովորական բան է, նշանակություն մի տուր, քեզ վոչ վոք չի անհանգստացնիլ, վոչ վոք...

ՈՎՍ.—Ո՛ո, յեթե միայն այդ լիներ։ (Հանում է մատանին յեվ օրպրտում է ժորժի վրա)։ Վերցրեք և հեռացեք այստեղից...

ԺՈՐԺ.—Բայց...

ՈՎՍ.—Հեռացե՛ք, հեռացե՛ք, հեռացե՛ք։ (Ցերեսը դարձնում է ժորժից)։

Լռություն

ԺՈՐԺ.—(Թեվում է յեվ մատանին վերցնում)։

ՈՎՍ.—(Նամակը տալիս է Առամազդին)։ Առեք և գնացեք...

ԺՈՐԺ.—(Միանգամայն ջախջախված)։ Դու չունես իրավունք, Ովսաննա, դու ինձ անպատվում ես մի ղրպարտիչի մոտ...

ՈՎՍ.—Դո՛ւրս, դո՛ւրս, ապա թե վոչ՝ ծեղքերս կտեսնեն իմ խմբայր տառակությունը...

ԱՐ.—(Նամակը գրպանը դնելով)։ Որխորդ, շատ եք խիստ մի լինեք. մեղմացրեք ձեր հարվածը։ Ասացեք այդ պարոնին, վոր հափշտակված է վոչ ձեզնով, այլ ձեր ոժիտով, թե ձեր դրությունը անանկ է, և դուք այժմ վոչինչ չունիք...

ԺՈՐԺ.—(Զարախնդությամբ։ Առամազդին)։ Յեթե այդպես է, ամուսնացեք նրա հետ ինքներդ։ (Գնում է աջ կողմի յերկրորդ դռնեով)։

ՏԵՍԻԼ VIII

Ովսաննա, Առամազդ, Նարգիզ յեվ Նունուֆար

ԱՐ.—(Նայել է ժորժի յեռեվից առհամարհանքով։ Մոտենում է Ովսաննային)։ Լսեցի՛ք, որխորդ...

ՈՎՍ.—Մի՛ ժոռենաք, չես ձեզ արհամարում եմ։ (Այլ յեվս չկարողանալով իրան զսպել, մի բարձր ճիչ է արձակում յեվ, ընկնելով բազկաթոռի վրա, ճեկեկում է)։

ԱՐ.—(Ովսաննայի «արհամարում եմ» բառից հարվածված, մնացել միյեվնույն դիրքում անշարժ)։

ՆԱՐԳ.
ՆՈՒՆՈՒՖ. —(Շտապով մոտենում են Ովսաննային)։

ԱՐ.—(Հուսահատ մեկուսի)։ Արհամարհո՛ւմ է...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՈՐԴ

Պատկեր Առաջին

Արամազդ Աղավելյանի նոր բնակարանը։

Միանգամայն ժամանակակից, բայց առանց վրրոշ ճաշակի կահավորված սենյակ։ Աջ պատի մեջ մի զույգ դռներ, որոնցից առաջինը տանում է Լեյլիի, իսկ յերկրորդը Նոյիմզարի սենյակը։ Ձախ պատի մեջ նույնպես մի զույգ դռներ, որոնցից առաջինը դեպի Արամազդի առանձնասենյակը, յերկրորդը նախասենյակ։ Ետրքի պատի մեջ յերեք բարձր լուսամուտներ։

Պատերի վրա նկարներ չկան։ Աջ պատի վրա մի խումբ ինչ-որ լուսանկարներ։ Ձախ պատի վրա մի մեծ հայելի։ Աջ լուսամտի վրա դրած է մի վանդակ, մեջը թութակ։ Աջ լուսամուտի առջեվ, անկյունում մի դրամաֆոն, որի փողը դարձրած է դեպի փողոց։ Ձախ պատի առջեվ գահավորակ, սեղան, կիսաբազկաթոռներ։ Այս ու այնտեղ աչքի զարնող փայլուն, գույնզգույն եժանագին զարդեր։

Դաշնամուր չկա, վառարան նույնպես։ Առաստաղից քաշ է արած եվկտրական ջահ։

ՏԵՍԻԼ I

Նոյիմզար, Ջավադ յեվ թուրակ

Գարնանային իրիկնադեմ է, որը հետզհետե մթնում է։

Վարագույրը բարձրանալիս գրամաֆոնը նվագում է մի արեվելյան յեղանակ քամանչի վրա, առանց յերգի։

ՆՈՅԻՄ.—*(Գրամաֆոնիցը վոչ հեռու նստած, հրճվանքով ականջ է դնում։ Այժմ թասակրավը բողել է, գլխի մազերը հարդարած են մոդային հավակնությամբ։ Հագուստը նոր է յեվ բաց գույնի։ Մի ֆիչ լսելով, վեր է կենում յեվ լուսամտով նայում է դեպի փողոց)։ Հավաքվեցին, թող ականջ դնեն, խեղճ են։*

ՋԱՎԱԴ.—*(Վարագույրը բարձրանալիս գալիս է ձախ կողմի յերկրորդ դռնեռով ձեռքում մի փոբ ջուր յեվ մոտենում է թութակի վանդակին։ Մեկուսի)։ Ձսիրեցի այդ փոնոգրաֆը, կասես հարփուխ ընկած վոչխարի ձայն է։ (Թութակին)։ Հըմ, աղաբաջի, քեֆդ, հանդ։ Ծարավել ես, հա։* (Վանդակի մեջ ջուր է ածում յեվ կորեկ ավելացնում)։ *Կեր, խմիր, քեֆ արա։ Մի քիչ խոսիր տեսնենք, ինչ ես լեզուդ փորդ դցել։ Ասա.*

«Ջյուլումն յեկավ, դովլաթս տարավ
«Հիմար աշխարհ, քոռ, բաղդ...
Ասա. հիմար, քոռ, հիմար, քոռ...

ՆՈՅԻՄ.—*Այդ ինչ ես սովորեցնում թութակին։*

ՋԱՎ.—*Իմ նոր մուխամմադը։ Այսոր շարադրեցի Աթանես աղայի համար։*

ՆՈՅԻՄ.—*Շատ ես սիրում քո Աթանես աղային ու։*

ՋԱՎ.—*Աթանես աղան աղա յե։*

ՆՈՅԻՄ.—*Հապա ինչու՞ դուրս յեկար նրա մոտից։*

ՋԱՎ.—*Զպահեցին, ինչ անեմ։ Ցնս ասացի «մի փոքր հացով ել կծառայեմ, Նարգիզ խանում, ոռճիկ չեմ ուզում»։ Ասաց. «չե, ավելորդ ես, հիմա Նունուֆարն ել մեզ համար շատ է»։*

ՆՈՅԻՄ.—*Հեհ, չունեին, պրծավ, չոր տափի վրա ինացին...*

ՋԱՎ.—*(Թութակին)։ Ասա, ա հիմար, ասա. «հիմար աշխարհ, քոռ բաղդ»։ Եհ, հենց մի գլուխ կողքդ ես քորում ծուռ քթովդ։*

Գրամաֆոնը դադարում է։

ՆՈՅԻՄ.—*(Ուզում է նորից լարել)։*

ՏԵՍԻԼ II

Նույնը յեվ Լեյլի

ԼԵՅԼԻ.—*(Գալիս է շտապով դրսի հագուստով ձախ կողմի յերկրորդ դռնեռով։ Հագնված է ավելի լավ, բայց հանկես յեվ նուագկով)։ Ա՜հ, մի լարիը, Նոյիմզար, բավական է։ Հավաքվել են փողոցում, մեզ ծաղրում են։ Ասում են. «չտեսներ են»։*

ՋԱՎ.—*(Մեկուսի)։ Սուտ չեն ասում։*

ՆՈՅԻՄ.—*Շատ հարկավոր է, վոր ասում են։ Նախանձից են ասում։*

ԼԵՅԼԻ.—*(Ծանգարում է լարել)։ Վոչ, վոչ, թող խնդրում եմ։ (Ծածկում է լուսամտի փեղկերը յեվ գրամաֆոնի փողը դարձնում է դեպի սենյակ)։*

ՆՈՅԻՄ.—*Լավ, չուզեցի։ Վերտեղից ես գալիս։*

ԼԵՅԼԻ.—Ովսաննայի մոտից: (Դխարկը վերցնում է, դնում է բազկաթոռի վրա յեվ, կանգնելով հայելու առջեվ, մազերն ուղղում է):

ՆՈՑԻՄ.—Ելի՛: Ցես քեզ չասացի, վոր Փրանգուլյաններին տունը վոտ չըզնե՛ս:

ԼԵՅԼԻ.—Անկարելի յե Ովսաննային մենակ թողնել:

ՆՈՑԻՄ.—Շա՛տ ես ցավում, հա՛:

ՋԱՎ.—Դե, իհարկե, պետք է ցավել: Նրանք այժմ համարյա թե աղքատ են:

ՆՈՑԻՄ.—(Առագ դառնալով դեպի Ջավադը): Հը՛, դու դեռ այստե՛ղ յես: Գնա բանի՛դ:

ՋԱՎ.—Ցե՛ս մեղա ասածդու՛ս: (Հեռանում է: Մեկուսի): Բա քա՛, բա՛, աստված ազատի Թաղա Թխած խանութներից: (Թուքը կին): Հիմար աշխարհ, քոռ բաղդ: (Գնում է ձախ կողմի յերկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ III

Նույնզաբ յեվ Լեյլի

ԼԵՅԼԻ.—(Նստում է գահավորակի վրա մտազբաղ): Այո, Փրանգուլյանների դրությունը ցավալի յե, շատ ցավալի:

ՆՈՑԻՄ.—Ցես իսկի՛ել չեմ ցավում:

ԼԵՅԼԻ.—(Խորին կըծամբաճոով): Նույնզաբ, չար մի լինիր:

ՆՈՑԻՄ.—(Մոտեցել է հայելուն ու ցայտում է իր հագուստին): Եհ՛, ասում ես ելի՛: Մենք ել ենք վատ որեր ունեցել, նրանք ցավե՛լ են: Բանն տարեկան յեղբայր կորցրինք, մի անգամ նրանցից մեկը մեր տունն վոտ դրե՛ց: Ջահել ժուռին թաղեցի, ով նրանցից յեկավ ինձ մխիթարելու: Թաղման որը քո այդ Նարգիզ խանումը խնջույք ուներ: Աշխարհն այսպես ե՛, հիմա մենք պիտի խնջույքներ տանք:

ԼԵՅԼԻ.—Բայց մի՛ մոռանար, վոր Աբամազդն Ովսաննային սիրում է:

ՆՈՑԻՄ.—Իսկի՛ել չի սիրում:

ԼԵՅԼԻ.—(Դառը ներգնուրյամբ): Այո, լավ ես հետևում յեղբորդ: Այնորից, յերբ նա պատռել է այդ Աղիլբեկյանի դիմակը, դարձել է անճանաչելի: Նա տանջվում է, Նույնզաբ, գիտե՞ս, տանջվում է: Գիշերները նա քուն չունի, յերբեմն մինչև լուսաբաց պտտում է իր սենյակում, մերթ կիսամերկ, մերթ հագնված: Քանի՛ քանի՛ անգամ, շունչս զսպած, ուշադրությամբ լսում եմ նրա քայլերի ձայնը և ծանր, յերկարատև հառաչանքները: Նա պաշտում է Ովսաննային, իսկ Ովսաննան... (Ձեռով մի հուսահատական շարժումն անելով, վոտի է կանգնում յեվ սկսում է անց ու դարձ անել):

ՆՈՑԻՄ.—Իսկ Ովսաննան ի՞նչ: Ելի փքվում է ու տրաքո՛ւմ:

ԼԵՅԼԻ.—Նա բնավ չի խոսում Աբամազդի մասին, բնավ: Մի քանի անգամ յես դիտմամբ խոսք բացարի՛, նա, կարծես, խուլ և համր Աբամազդի անվան համար...

ՆՈՑԻՄ.—(Բարկանալով): Մի հարցնող լինի, ա՛յժմ ինչովդ ես պարծենում, անպարտավան, ել ի՞նչ ունես գոռոզանալու: Չե՛, Լեյլի, դու անձնասիրություն չունես, դու քո յեղբոր հպարտությունը վոտնատակ ես անում, այդ աղջկա մոտը գնալով:

ԼԵՅԼԻ.—Բայց, հասկացի՛ր, ինքն Աբամազդն է ինձ ստիպում այժմ ամեն որ գնալ Ովսաննայի մոտ և տեղեկություններ բերել նրա մասին:

ՆՈՑԻՄ.—Վոր այդպես է, յես այսոր նրա հետ կխոսեմ: Բայց թողնենք այդ: Գիտես, Լեյլի, այսոր ինչ եմ մտածել: Ախար մենք գաշնամուր չունինք:

ԼԵՅԼԻ.—(Ձեռով մի տրհամարական շարժումն անելով): Ե՜հհ:

ՆՈՑԻՄ.—Այո, այո, դա մեծ պակասություն է:

ԼԵՅԼԻ.—Ո՞ւմ համար. վոչ դու գիտես նվագել, վոչ յես:

ՆՈՑԻՄ.—Այդ մասին ել եմ մտածել: Ցես ուզում եմ յերաժշտություն սովորել:

ԼԵՅԼԻ Այդ հասակո՞ւմ:

ՆՈՑԻՄ.—Ի՞նչ կա վոր... քսան ու իննը տարին մեծ բան է:

ԼԵՅԼԻ.—(Ակամա ժպտալով): Այսինքն յերեսուն ու յերկու տարին:

ՆՈՑԻՄ.—(Վիրավորված): Ի՞նչ ես ամեն անգամ ուզում, յես իմ տարիքը քեզանից լավ գիտեմ: Հապա ինձ նայիր (ինքը նայում է հայելուն). ով կարող է ինձ քսան ու հինգից ավելի ասել: Թատակրավս վերցնելուց հետո շատերն ինձ որիորդ են համարում: (Տոնը փոխելով): Չե, անպատճառ պետք է սովորել: Դժվարը թատակրացը կը, մնացյալը հեշտ է: Ինչու՞ չե, մեր մատները մեզ ո՞ւմ վոսկորից չեն:

ՏԵՍԻԼ IV

Նույնիք, Արամազդ յեվ Շամիլ-Բեգ

ԱՐ.—(Գալիս է ձախ կողմի յերկրորդ դռնեռով, հագնված է այնպես, ինչպես Յերկրորդ Արարվածում)։ *Շատ լավ, շատ լավ, այս յերեկո ել յես կլուբ կերթամ։ Բայց թուղթ յերբեք չեմ խաղալու, այս լավ իմացիր։*

ՇԱՄԻԼ-Բ.—(Գալիս է Արամազդի հետ։ Հագնված է այնպես, ինչպես Յերկրորդ Արարվածում)։ *Լավ, յես կխաղամ, դու մուտս կնքատես։ Փորձել եմ, վոր վոտդ ինձ գալիս է։ Բարրիկոնն քուրբերիս։* (Ընտանեբար ձեռ է տալիս Նոյիմզարիհ յեվ Լեյլիհի)։

ԱՐ.—*Ինձ հարցնող չի յեղել։*

ԼԵՅԼԻ.—*Վոչ։* (Դիմում է Արամազդին հետաքրքրությամբ, բայց աննըկատելի, հետո աչքերով ուղեկցում է նրան մինչեվ դռները)։

ԱՐ.—*(Շամիլ-Բեգին)։ Սպասիր, հագուստս փոխեմ, գնանք։* (Արագ քայլերով գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ V

Նույնիք, առանց Արամազդի

ՇԱՄԻԼ-Բ.—(Նստում է գահավորակի վրա)։ *Քուրը Նոյիմզար, նոր խաբար։*

ՆՈՅԻՄ.—*(Վախեցած)։ Վիշկան այլվի՞լ է։*

ՇԱՄԻԼ-Բ.—(Աչքերը շռելով)։ *Ըմբո՞ղ, ինչ տամ, վոր խեր խոսեք։ Ուրախ խաբար եմ ասում, սրտի մահլաս, մարդու հոգի փրկավորող խաբար։ Նոմեր չորրորդն ել սկսեցինք քաշել։ Գալիս է ու գալիս, աղբյուրի պես։ Որակեն յերեք հազար վուռթ, լավ է, չի՞։*

ՆՈՅԻՄ.—*(Ուրախ)։ Տեսնում ես, Լեյլի, հիմա դաշնամուր չառնել անկարելի յե։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Բայց քուրը Լեյլին չի ուրախանում։ (Լեյլիին)։ Այդ ինչո՞ւ, հա՞ ..*

ԼԵՅԼԻ.—(Գալով բեմի կենտրոնը, մտազբաղ)։ *Ցես ուրախ եմ, վոր Արամազդին կլուբ եք տանում։ Նա յերեկոները միշտ տանն է...*

ՇԱՄԻԼ-Բ.—*Իհարկե, պիտի տանել։ Բաս ել վո՞ր որվա համար ենք փող աշխատում, վոր կլուբ ել չգնանք։ Հիմա մեր ընկերուհյան անունն այնտեղ բերանից բերան է անցնում։ Չայ դիզի, հա, վորտեղ ելիենք, վորտեղ հասանք։* (Ձեռը հանելով սափոր բարձրացնելով)։ *Շամիլ-Բեգ Մելիք-Ազաջանով, նեփթեպատմըշնիկ։ Ձե, Արամազդը հարիֆ է։ Մին այն գրամաֆոն է, ինչ է, սարքեցիք, մի քիչ քեփս բացվի։ Մին բայյաթի—գաջար կամ բայաթի-շիրազ։ (Նայում է դես ու դեն)։*

ՆՈՅԻՄ.—*Իսկ՞ույն։* (Ուզում է գրամաֆոնը լարել)։

ԼԵՅԼԻ.—(Շամիլ-Բեգին)։ *Արամազդը չի սիրում։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Հաա՜։ Դե հարկավոր չե, քուրը Նոյիմզար, մի սարքիր։*

ՆՈՅԻՄ.—*(Հեռանում է գրամաֆոնից)։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Արամազդին վերջերս մի քիչ տխուր եմ տեսնում։ Զգիտեմ, ոլ է նրա հետին կազ ասել։ Ջլինի թե դրուստ է, վոր ասում են, թե դովլաթը դարդ է բերում։* (Դարձյալ նայում է դես ու դեն)։

ՆՈՅԻՄ.—*Այդ ինչ եք փնտռում, Շամիլ-բեգ։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Մի բան ասեմ, չնեղանաք, քուրը Նոյիմզար. ձեր առաջվա կարգ ու սարքն ինձ ավելի եր դյուր գալիս։ Այսաեղ* (վիզը ետ բերելով) *մի բան պակասում է։*

ՆՈՅԻՄ.—*Գիտեմ. դաշնամուր։*

ԼԵՅԼԻ.—*Վոչ. բուֆետ։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Ախարխմ, քուրը Լեյլի, հարիֆ ես, լավ իմացար։* (Նոյիմզարիհ)։ *Ասելս այն է, որ առաջ ամեն բան ձեռքի տակ եր։ Մեկ մեկ յես ինքս եյի մտնենում բուֆետին։ Մախլաս։*

ԼԵՅԼԻ.—*Յերթե գինի եք ուզում, կարող եմ բերել։*

ՆՈՅԵՄ.—*Վոչ, վոչ, այս սենյակում ուտել-խմելն արգելված է։ Ուզում եք, համեցեք սեղանատուն։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Ըմբո՞ղ, այդպես շուտ արխսոկրատ դարձաք։ Լավ, այդ ել չուզեցինք։ Մի քուրը գրամաֆոնն է արգելում, մյուսը գինի, արի ու քեֆ արա, Շամիլ-բեգ։* (Վեր է կենում) *Ձեր զուռը խոսել սովորի՞ց։*

ՆՈՅԻՄ.—*Մեկ մեկ բառ ասում է, չեմ հասկանում։*

ԼԵՅԼԻ.—*(Վեր ցնում է իր գլխարկը բազկաթոռի վրայից յեվ դնում է իր սեղյակը աջ կողմի առաջին դռնեռով)։*

ՏԵՍԻԼ VI

Շամիլ-Բեգ, Նոյիմզար յեվ Թուբակ

ՇԱՄԻԼ-Բ.—(Մոտենում է Թուբակին)։ *Տեսնենք, կարելի յե, յես հասկանամ։ (Թուբակին) Ագա, չուալլալի, ինչ ես քեֆդ*

քաշ արել։ Խոմ ժալոնկատ հորը չի ընկել։ Հըը, ասա, «Շամիլ բեգ, Մելիք-Ադաջանով, Ամամայի մելիքներից»։

ՇՈՑԻՄ.—*Այդ շատ յերկար է, չի կարող ասել։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Ասա. «Շամիլ-բեգ, Շամիլ-բեգ»։*

ԹՈՒԹԱԿ.—(*խուլ*)։ *Բեգ, հիմար, բեգ...*

ՇԱՄԻԼ-Բ.—*Ինչպես, լավ չլսեցի, պարզ ասա։*

ԹՈՒԹԱԿ.—*Հիմար, հիմար, հիմար...*

ՇՈՑԻՄ.—(*Ծիծաղում է*)։

ՇԱՄԻԼ-Բ.—*Հիմար. յես։ Ադա, դու ինձ վիրտուղից ես ճանաչում։*

ԹՈՒԹԱԿ.—*Քոռ, քոռ, քոռ։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Քոռ ել ես ու... կարիր ձայնդ, հառամպադա։* (*Բարկացած՝ վերադառնում է բեմի կենտրոնը*)։ *Լավ բան եք սովրեցրել, խոսք չունիմ։*

ՇՈՑԻՄ.—(*Տակավին ծիծաղելով*)։ *Այդ անպիտան Ջավադը սովրեցրեց մի քիչ առաջ։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Ձեն, շատ ուսումնական դուշ է, մարգու յերեսին ասում է, «քոռ, հիմար»։ Լավ եր, վոր մի պատվավոր մարդ չկար այտեղ, թե չե... (Նայում է իր գրպանի ժամացույցին)։ Եհեհ, Արամազդն ուշացավ։ Ցես վոր կլուբ ուշ եմ գնում—պարտնեորներ չեմ գտնում։*

Նախասենյակում զանգակ։

ՇՈՑԻՄ.—*Ո՛վ պետք է լինի։* (*Մոտենում է ձախ կողմի յերկրորդ դռներից*)։

ՇԱՄԻԼ-Բ.—*Հեչ, վոր մարդ յեկավ, Արամազդին կլուբ տանելը դժվար է։*

ՏԵՍԻԼ VII

Առաջվա, Նոյիմզար, Սամվել յեվ Շամիլ-բեգ

ՍԱՄՎԵԼ.—(*Գալիս է ձախ կողմի յերկրորդ դռներով, գլխարկը վերցնելով։ Տխուր է*)։ *Ներեցեք, տիկին, Արամազդը տանն է։*

ՇՈՑԻՄ.—(*Հպարտ*)։ *Այո, իսկույն կգա, կարող եք սպասել։*

ՍԱՄՎԵԼ.—(*Նայում է շուրջը բեթեվակի*)։

ՇԱՄԻԼ-Բ.—*Դուք Աթանես ադալի վորդին չե՞ք, Բարով։* (*Մոտենալով, ներից առդեն ձեռը մեկնել է*)։

ՍԱՄՎԵԼ.—(*Ռուներով Շամիլ-բեգի ձեռը բույլ, բայց հոգեհավարի*)։ *Ներեցեք, յես ձեզ չեմ ճանաչում։*

ՇԱՄԻԼ-Բ.—*Մելիք-Ադաջանով, Ամամայի մելիքներից, նեփթապոմիշնիկ։*

ՍԱՄՎԵԼ.—*Շատ ուրախ եմ։*

ՍԻ.—*Ցես պատրաստ եմ, Շամիլ։* (*Գալիս է ձախ կողմի առաջին դռներից։ Լվացված, հագուստը փոխած, այժմ յերեվում է գուցա յեվ նկատելի նիհարած։ Տեսնելով Սամվելին, չի զարմանում, առանց վոյեվե ձեվակերպության, բարեկամաբար*)։ *Սամվել բարով։* (*Ձեռ է տալիս*) *Ինչ կհրամայեք։ Նստիր։*

ՍԱՄՎԵԼ.—*Ցերեկ ժամանակ ունիս, մի քանի րոպե նվիրիր ինձ։* (*Նայում է Շամիլ բեգին յեվ ռուներին*)։

ՍԻ.—*Բոլորովին ազատ եմ։* (*Ռուներին ցուցամատով նշան է անում հեռանալու*)։

ՇԱՄԻԼ-Բ.—*Դե, Արամազդ, յես գնացի, դու հետո կգաս, թե չե՝ պարտեորները չեմ գտնիլ։ Ցտեսություն։* (*Գնում է ձախ կողմի յերկրորդ դռներով*)։

ՍԻ.—*Լավ։*

ՇՈՑԻՄ.—(*Մի բանի անգամ զորոզաբար նայել է Սամվելի վրա, գնում է ակամա աջ կողմի յերկրորդ դռներով*)։

ՏԵՍԻԼ VIII

Առաջվազդ, յեվ Սամվել

ՍԻ.—*Ինչ է պատահել. դու այլայլված ես։ Նստիր։* (*Նստում է բազկաթոռներից մեկի վրա, մի ուրիշը ցույց տալով Սամվելին*)։

ՍԱՄՎԵԼ.—*Արամազդ, Լևոնը խելագարվեց* (*Նստում է*)։

ՍԻ.—(*Ազդված*)։ *Ինչ ես ասում, յիրը։*

ՍԱՄ.—(*Հառաչելով*)։ *Աղդեն յերկու շաբաթ է, վոր պարզ նշաններ եր ցույց տալիս, իսկ այս վերջին որերը գարձել եր վտանգավոր։ Այսոր վճռեցինք տանել նրան Մոսկվա և հանձնել մի բուժարան։ Ուշացնել անկարելի չե, պետք է շուտով տանել, և ահա յես յեկել եմ քո ոգնությունը խնդրելու։*

ՍԻ.—*Ինչով կարող եմ, արդյոք, ոգտակար լինել։*

ՍԱՄ.—*Արամազդ, տասնուհինգ տարի դու յեղել ես մեր ընտանիքին ավելի մոտիկ, քան մինչև անգամ յես։ Դու գիտես մեր բոլոր հանգամանքները, ահա ինչու յես գերազանցեցի քեզ բոլոր մեր ազգականներից։ Բացի այս, Լևոնը վոչ վոքի այնքան չի հարգում, վորքան քեզ։*

Ա.Ր.—Դու ուզում ես, որ ես նրան ուղեկցեմ մինչև Մոսկվա։

ՍԱՄ.—Վոչ, այդքանը խնդրելու իրավունք չունեիմ։ Ինձ հետ կը-
լինի մի ֆեյլդշեր, և մենք յերկուսով կարող ենք Լևոնին տա-
նել յերկաթուղով, դժվարը մինչև կայարանն է։ Ահա այս-
դությունն և, որ խնդրում եմ քեզ հանձն առնել։

Ա.Ր.—Շատ բարի։ Ցերբ եք գնում։

ՍԱՄ.—Վաղը, առավոտյան գնացքով։

Ա.Ր.—Առավոտյան գնացքը ճանապարհ և ընկնում ուղիղ ութ-
մին, ես կգամ ձեզ մոտ լուսաբացին։ Ուրիշ։ Ես կկամենա-
յի ավելի դժվար մի հանձնարարություն տանել Լևոնի վե-
րաբերմամբ։ Ես նրան միշտ սիրել ու հարգել եմ։ Նշանա-
զարդացած յերիտասարդ է. յես նրանից շատ բան եմ տե-
սել։

ՍԱՄ.—Դժվար հանձնարարություն յես ունեիմ կատարելու, Աբ-
րամազդ։ (Դուրս է բերում գրպանից մի ծրար յեվ տալիս է Աբ-
րամազդին) Վերցրու։

Ա.Ր.—(Ծրարը առնելով)։ Այս ինչ է։

ՍԱՄ.—Ինչպես տվեց քեզ հանձնելու։

Ա.Ր.—(Շտապով բաց է անում ծրարը յեվ նրա միջից դուրս է բերում
յերկու ուրիշ փոքրիկ ծրարներ, հիասթափված)։ Իմ նամակնե-
րը, որիորդ Ովսաննային գրած։ (Նայում է մեծ ծրարի մեջ)
Ցեվ վոչ մի տոմսակ, վոչ մի բացատրություն (ծրարները գր-
գում է սեղանի վրա յեվ վոտքի յե կանգնում)։ Ա՛հ, Սամվել,
այդքան վիրավորանք յես քո քրոջից չեյի սպասում։

ՍԱՄ.—(Վերկենալով)։ Ինչ արած, ասում են համառությունը պե-
պիսի դեպքերում ամենավատ գործակիցն է։ Ուժով սեր գրա-
վել չի կարելի։ Մոռացիր—ահա բոլորը, ինչ-վոր կարող ես
ասել։

Ա.Ր.—Բայց յես նրանից սեր չեմ պահանջում այս նամակներով, Սա-
մվել իմ զգացումների մասին ակնարկ անգամ չկա։

ՍԱՄ.—Հապա ինչի՞ մասին ես գրել։

Ա.Ր.—Վերցրու և կարդա։ Ցես Ովսաննայի միջոցով առաջարկում
եմ իմ ոգնությունը քո հորը։

ՍԱՄ.—(Ուրախացած)։ Այո՛։

Ա.Ր.—Այո։ Ցես խոստանում եմ իմ բոլոր ուժերը, ճարպկությունը,
հոր ձեռք բերած վարկը գործ դնել Ծերունուն դուրս քա-
շելու անել վիճակից, նրա գործերը վերականգնելու։ (Ըն-
է անում ծրարները յեվ ճամակները տալիս է Սամվելին)։ Ա՛ն

կարգա ծայրե ի ծայր, այստեղ մի բան չկա, վորից յես կա-
րողանամ ամաչել։

ՍԱՄ.—Ցես հավատում եմ քեզ առանց կարդալու էլ։

Ա.Ր.—Վոչ կարդա, կարդա, և բովանդակությունը հաղորդիր քրոջդ,
վոր այդպես վոտնատակ է անում իմ անձնասիրությունը։

ՍԱՄ.—(Վերցնում է ճամակները ու աչքի յե անցկացնում)։

Ա.Ր.—(Նոսում է անց ու դարձ անելով, Սամվելի կարդալու միջո-
ցին)։ Այդչափ հպարտություն։ Ինչպես են ուրիշները կա-
րողանում դրսվել կանանց սիրտը—չգիտեմ։ Մի՞թե ավելի
դժվար է մի աղջկա համառությունը հաղթել, քան յերեկվա
գործակատարից այսօր դառնալ ամբողջ բորսայի նախանձի
առարկան։ Մի՞թե ավելի յե հարկավոր, քան անձնազոհու-
թյունը։

ՍԱՄ.—(Նամակների բովանդակությունից հանկարծ ճափռտակված)։
Աբրամազդ, դու ուղղակի հազվագյուտ մարդ ես։ Այս նամակ-
ները կարող են պատիվ բերել մի ասպետի սրտին ու հո-
գուն։ Գոնե ինձ թույլ տուր սեղմել քո ձեռը և հայտնել
անկեղծ, անկեղծ շնորհակալություն։ (Մոտենում է Աբրամազ-
դին յեվ վոգեվորված բռնում է նրա ձեռը)։

Ա.Ր.—(Հուսահատ յեվ անտարբեր)։ Եհ, թողնենք, չարժե։

ՍԱՄ.—Այլևս ինչն արժե յերախտապիտության, յեթե վոչ մի
այդպիսի վարմունք։ Ծռանգուլյանները կարող են կորցնել
ամեն բան, բայց յերախտապիտություն պետք է ունենան։
Ցես այս նամակները կվերադարձնեմ Ովսաննային, կստիպեմ
նրան կարդալ, վորպեսզի լավ ճանաչի քեզ։ (Ուզում է ճա-
մակները դնել իր գրպանը)։

Ա.Ր.—Վոչ, թող մնա։ Այդ տեսակ վիրավորանքից հետո—չարժե։
Ցես ճանաչեցի, վերջապես քո քրոջը։ Նա իր հոր կատարե-
լատիպն է և համառությունն կողմից։ Տուր ինձ այդ նամակները։

ՍԱՄ.—(Դնում է ճամակները սեղանի վրա)։ Այն ժամանակ իրա-
վունք չունիմ քեզնից վորևե աջակցություն խնդրելու։
Ներիր, վոր նեղություն տվեցի։ Մնաս բարև (Ուզում է գնալ)։

Ա.Ր.—Այդպես չե, մի՛ շտապիր։ Լևոնին մի՛ խառնիր այդ գործի մեջ։
Ցես շատ բան եմ պարտական նրան։ Առավոտը կանուխ յես
կգամ ձեր տուն և ինչ-վոր հարկավոր է, կանեմ։ Այս մեկն
իմ սուրբ պարտականությունն է։ Ցտեսություն։ (Ձեռ է տա-
լիս Սամվելին։)

ՄԱՄ.—Ինչպես կամենաս։ (Գնում է ձախ կողմի յերկրորդ դռներ
Ա.Ր.—(Մի բանի վայրկյան մենակ է։ Անց ու դարձ է անում, ն
ռաչելով, կատաղելով)։

ՏԵՍԻԼ IX

Աւրամազդ յեվ Լեյլի

ԼԵՅԼԻ.—(Դալիս է աջ կողմի դռնեռվ։ Տեսնելով Աւրամազդին ն
սահատված, մի բանի վայրկյան չի վստահում խոսել)։ Կյուրյ
գնալու։
Ա.Ր.—(Սթափվելով)։ Ա՜հ, Լեյլի՛։ Բանի՛ ժամն է։ (Նայում է իր գր
պանի ժամացույցին)։ Տասն է։ Արդեն ուշ է, չարժե։
ԼԵՅԼԻ.—Բայց ահա մի ամսից ավելի չե, վոր դու յերեկոները անդ
դուրս չես գալիս։ Այդ լավ չե։ Ցերեկվա այնչափ աշխատու
թյունից հետո մի քիչ հանգստանալ հասարակության մե
անհրաժեշտ է։
Ա.Ր.—Լսեցի՞ր ով է այստեղ։
ԼԵՅԼԻ.—Այո՛։
Ա.Ր.—Դու դռների հետևից ականջ եյիր դնում, այնպես չէ՞։
ԼԵՅԼԻ.—(Շփոթվելով)։ Այո՛։
Ա.Ր.—Վոչինչ, քեզ ներելի յե։ Ահա՛։ (Յույց է տալիս սեղանի վ
դրած նամակները)։ Ցերկու նամակ եմ ուղարկել նրան ձ
ռայի ձեռքով, յերկուսն էլ վերադարձնում է առանց կարդալ
ԼԵՅԼԻ.—Նա ինձ վոչինչ չի ասել այդ մասին։
Ա.Ր.—Այնքան դեպի ինձ անտարբեր է, վոր տնուննա անգամ չ
արտասանում։ Ա՜հ, յերբեք չեմ մոռանալ այն վայրկյանը
յերբ նա, դուրս վռնդելով այն թշվառին, դարձավ ինձ
ասաց. «Ամի մոտենաք, չես ձեզ արհամարհում եմ»։ Ցես ուզում
եյի նրան խոսքերով մխիթարել, իսկ նա... Ո՛ո, նրա դեմքի
արտահայտությունն այդ վայրկյանին, նրա ձայնի հնչյունը
ձեռի շարժումը, Ցես ինձ զգացի ստորացած, վոչնչացած։ Ցե
ինչո՞ւ, ինչ պատճառով։ Վորովհետև բաց աբի նրա աչքերը
և ցույց տվեցի այն անդունդը, ուր պատրաստվել եր գլոր
վելու։ Բայց չե վոր այդ բարությունն եր իմ կողմից և վ
նախանձ, չարություն։ Շնորհակալության փոխարեն—վիր
վորանք։ Աա՛, Լեյլի, դու նրան ճանաչում ես, ինչ է նշ
կում այդ առեղծվածը։

ԼԵՅԼԻ.—Դժվար է հասկանալ Ովսաննային։ Նա շատ ծածկաժիտ է։
Ա.Ր.—Ցեվ այդ բոլորից հետո դարձյալ չկարողացա ինձ զսպել, մի
անգամ էլ փորձեցի հիշեցնել նրան իմ մասին։ Լեյլի, Լեյլի,
կարծես, մի աներևույթ չար ձեռք բռնել է թևիցս և, հակա
ռակ իմ կամքի ու խելքի, տանում է ինձ անկումից անկումն
Ցես միանգամայն զրկվել եմ իմ անձնասիրությունից, Լեյլի,
հպարտության կաթիլ անգամ չմնաց իմ մեջ։ Սակայն նա կա
րող է արհամարհել ինձ, բայց ինչո՞ւ այդչափ քարասրտու
թյուն, ինչո՞ւ, ինչո՞ւ։ (Անց ու դարձ է անում)։
ԼԵՅԼԻ.—Ցեմ կարծում, վոր Ովսաննան վիրավորելու մտքով է վե
րադարձրել այդ նամակները։
Ա.Ր.—Աչ, Լեյլի, դու ինքդ բարի լինելով, կարծում ես անմեղքն
էլ քո սիրտն ունի։ Չար է այդ աղջիկը, չար, անսիրտ։ Մե
կի փոխարեն պատժում է մյուսին։ Մեղավո՞ր եմ ես, միթե,
վոր այսպես հափշտակվել եմ և խելքս կորցրել։ Այո, լինե
լով նրա հոր գործակատարը, ես պարտավոր եյի ճանաչել
իմ հասարակական դիրքը և համեստ պահել ինձ։ Բայց մի
թե գործակատարը սիրտ չունի, հոգի չունի, միթե նա չի
կարող զգալ, տանջվիլ, ինչպես ուրիշները։
ԼԵՅԼԻ.—Բավական է, քիչ մաշիր սիրտդ։ Չարժե, այսուհետև քեզ
համար բոլոր դռները բաց են, դու կարող ես Ովսաննայից
ավելի սիրուն և ավելի խելոք հարսնացու գտնել։
Ա.Ր.—Վոչ, Լեյլի, վոչ, վոչ վոք չի կարող ինձ այնպես գրավել։ Կամ
Ովսաննան կամ մինչև մահ մենակություն, տխուր և ան
տանելի կյանք։
ԼԵՅԼԻ.—Այս րոպեիս չես կգնահատում նրա ժուռ և բացատրություն
կպահանջեմ։ Դեռ ուշ չե, դեռ կարող ե ինձ ընդունել։ Ջե
կարելի իմ յեղբորն այդպես անպատվել։ Թող իմանա այդ
հպարտը, վոր դու ևս հպարտ ես, վոր այդ նամակներով նրա
նից սեր չես խնդրում, վոր դու մուրացկան չես, այլ ընդ
հակառակը, ինքդ ես առաջարկում քո ոգնությունը։ Թող նա
կարդա գոնե և ամաչի իր արածից։ Տուր ինձ այդ նամակ
ները։ (Ուզում է նամակները վերցնել)։
Ա.Ր.—(Վերցնում է ծառաների Լեյլիից առաջ ու պահում)։ Այդ մա
սին այլևս վոչ մի խոսք։ Բավական է, վորքան ինձ ստորաց
րի։ Թող կորչի զգացումը, սերն ինձ նմանների համար չե
րի։ Թող կորչի զգացումը, սերն ինձ նմանների համար չե
Պետք է մոռանալ և ամեն զգացում խեղդել աշխատության

մեջ։ (Հանկարծ զգացվելով)։ Ահ, այսքան սիրել և այսքան աբհաժարվել ու տանջվել։ (Այլ չեվս չկարողանալով իրաց զսպել, ճոտում է բազկաթոռներից մեկի վրա չեվ, ձեռները սեղմելով գլխին, սկսում է ուժգին հեկեկալ)։

ԼԵՑԼԻ.—(Մոտենում է)։ Արամազդ, մի հուսահատվիր...

Վ Ե Ր Ա Գ Ո Ւ Յ Ց

ԱՐԱՐՎԱԾ ՁՈՐԲՈՐԴ

Պատկեր յերկրորդ

Դարձյալ Ծռանգյուլյաններէի բնակարանը։ Նույն գրասենյակը։ Այժմ չկան գորգերն յեվ դաշնամուրը։ Սենյակը զրկվել է նյեվ ուրիշ զարդերից, ուստի թվում է ամայի յեվ մռայլ։ Որպէս թախտը այժմ ծածկված է մի փոքրիկ հասարակ գորգով։

ՅԵՒԻԼ I

Նարգիզ, Նուշնուֆար, հետո Աբաշես

Ուշ գիշեր է, Բեմի վրա տիրում է կատարյալ մթություն, վարագույրները լուսամուտների վրա իջեցրած են։

ՆՈՒՇ.—*(Վարագույրը բարձրանալիս գալիս է աջ կողմի յերկրորդ դռնիոով մի ծեռում մի դատարկ չեմոդան, մյուսում մոմկալ, վառած մոմով։ Չեմոդանը դնում է բեմի խորումը, իսկ մոմկալը բերում դնում է աջ կողմի սեղանի վրա)։*

Բեմը լուսավորվում է կիսով չափ։

ՆՈՒՇ.—*(Աչքերն ածխությունից տորթով, նայում է շուրջը, նկատելով Նարգիզին թախտի վրա, բեմի խորումը, մոտենում է յեվ կամացուկ զարթնցնում)։ Ծանուռ, խանում։*

ՆԱՐԳ.—*(Վարագույրը բարձրանալիս հագնված պառկած է խորքի թախտի վրա։ Գլուխը բարձրացնում է վախեցած)։ Հը՞, ինչ կա։*

ՆՈՒՇ.—*Մի վախենաք, բան չի պատահել։ Հիմա յես վոտքի եմ, կհակեմ, դնացեք ձեր սենյակը, մի քիչ քնեցեք։*

ՆԱՐԳ.—*(Դանդաղ վերկենալով)։ Քանի ժամն է։*

ՆՈՒՇ.—*Դեռ մութն է։*

ՆԱՐԳ.—*Ձայն լսել ես նրա սենյակից։*

ՆՈՒՇ.—*Հանգիստ քնած է։*

ՆԱՐԳ.—*Թող հանգստանա, ասան ու մեկ գիշեր չի քնել։ Տանում են յերեխայիս, Նուշնուֆար, խլում են նրան իմ ձեռքից։*

ՆՈՒՇ.—*Աստված վողորմած է, կառողջանա, յես կգա։*

ՆԱՐԳ.—*(Ձեռը հուսահատաբար տարժելով)։ Ջե՛, չե՛։ (Հառաչում է)։*

Գնա, ինչ վոր հարկավոր և—բեր պատրաստենք։

ՆՈՒՆ.—*Սամվել ազան ասել և ապասենք իրան։ Հրամայել և բերք ու կես ժամին զարթեցնել։*

Ա.Թ.—*(Բեմի յետեվում բարձրաձայն աղաղակում է)։ Աա, աա...*

ՆԱՐԳ.—*(Ցնցվելով)։ Նո չե։*

ՆՈՒՆ.—*Վոչ, այդ՝ մեծ ազայի ձայնն եր։ (Վազում է դեպի ձախ կողմի առաջին դռներն, բայց կանգ է առնում Նարգիզի հրամանով)։*

ՆԱՐԳ.—*Սպասիր, թող, չես իմանում ինչ պատահեց։ Համ պը վառիր։ Ամեն գիշեր այդպես գոռում է յերազում։ (Մոտենում է աջ կողմի առաջին դռներին)։*

ՆՈՒՆ.—*(Վառում է սեղանի վրա դրած լամպը, մոմակալը վերցնում է յեվ գնում է խորխի դռներով)։*

Բեմը լուսավորվում է ավելի։

Ա.Թ.—*(Ցերեկում է աջ կողմի առաջին դռների մեջ խալաթով, դեմքն այլայլված, մազերը գզգզված)։ Ա՜հ, զարհուրելի յեր, զարհուրելի։*

ՆԱՐԳ.—*Ելի ինչ պատահեց, մարդ։*

Ա.Թ.—*Ցերազ տեսա, յերազ։ Ինձ քաշել եյին դատաստան, նախատում եյին, ասում եյին. «դու խաբեբա յես, դու կլանել ես ուրիշների փողը»։ Թքում եյին յերեսիս, Նարգիզ, թքում եյին։ Ահա։ (Դանդաղ ֆայտերով անցնում է բեմի ձախ կողմը, ձեռները դնելով խալաթի գրպանները)։*

ՆԱՐԳ.—*Լավ, գնա, պառկիր, դեռ գիշեր է։*

Ա.Թ.—*(Դեռ զառանցանքից չի ազատվել)։ Ի՞նչ, ասում ես, մանթին քառասուն կոպեկ տայի։ Չի լինիլ։ Այ, ձեռդ կբռնեմ, փողոցները կընկնեմ, մուրացկանություն կանեմ, այդ չեմ անիլ։ (Առտավախառը ձայնով)։ Ամենքը յերես դարձրին, ամենքը, բարեկամներ, ազգականներ... Մենակ ենք, Նարգիզ, բոլորովին մենակ։*

ՆԱՐԳ.—*Այո, քանի տունդ լիքն եր, գալիս եյին, ուտում, խմում, հազար ու մի գովասանք շռայլում յերեսիդ։*

Ա.Թ.—*Ոո, յերեք յես իմանայի, ամենքին շան պես դուրս կանեյի իմ դռներից։ Չիմացա, չիմացա... (Անց ու դարձ է անում, ձեռները գրպանից հանելով յեվ մտցնելով խալաթի բեկերի մեջ)։*

ՆԱՐԳ.—*Վոչինչ, ասածու վողորմությունը մեծ է, ելի կգան այդ որերը։*

Ա.Թ.—*(Կանգ առնելով)։ Սուս, սուս, հերիք է, ինչքան խաբեցի ձեզ։ Մի վոտս գերեզմանի մեջն է, այն որերն էլ չենք տեսնիլ։ Նա կտեսնի հիմա յերջանիկ որեր, Նա՜։ Զարկը շուռ յեկավ, նրան բարձրացրեց, ինձ տակովը արավ։ (Նրստում է)։*

ՆԱՐԳ.—*Լավ, գնա քնիր, քիչ տանջիր քեզ և մեզ։ Հերիք է իմ ցավը ինձ... այսոր վորդիս ձեռքիցս գնում է...*

Ա.Թ.—*(Չի լսում Նարգիզին, միտս իր մտքովն ղբաղված) Ասում ես, վոր մեր դռները նեղ են նրա համար, շատ է հաստացել։ Չեմ ուզում, չեմ ուզում, վոր դա այստեղ։ Նա կտեսնի ինձ այս դրության մեջ, կուրախանա, յերեսիս քահ քահ կծիծաղի։ Նա կասի. «տեսա՜ր, վոր յես քեզանից խելոք եմ, վոր ղի։ Նա կասի. «տեսա՜ր, վոր յես քեզանից խելոք եմ, վոր վաճառականությունը դու չգիտես, յե՛ս գիտեմ։ Դե գնա ու պարծեցիր այժմ քո յոթանասուն ու հինգ տարվա անուշ նով»։ Հեռ, յերեք յես մի խելքը գլխին ժառանգ կունենայի, ինչպես հայրս ունեցավ, ցույց կտայի այդ լակոտներին։*

ՆԱՐԳ.—*(Դառնագին)։ Ինձ այլեր ինձ, մարդ, խնայիր, մի քրքրիր իմ սրտի խոցը։*

Ա.Թ.—*Ցամաքեց, չորացավ ինձ համար յերկնքի վողորմությունը։ (Լռություն։ Ոտը փոխելով)։ Ցերը են առնում այն անբախտին։ (Նստում է)։*

ՆԱՐԳ.—*Այսոր, մի յերկու ժամից հետո։*

Ա.Թ.—*Փող պետք է տալ Սամվելին, առանց փողի չեն բժշկի նրան։ Բայց փող չկա, չկա։ բոլորը խլեցին ձեռքիցս։*

ՆԱՐԳ.—*Լավ, մի մտածիր. յես փող գտա նրա համար։*

Ա.Թ.—*Գտա՜ր, այո, ինչպես, ուր տվեց։ (Նայում է շուրջը)։ Նարգիզ, ձեր և Ովսաննայի դաշնամուրը։ (Վեր է կենում)։ Աա, ձեր և։*

ՆԱՐԳ.—*(Ընկճված)։ Ծախեցի քրոջդ աղջկանս։*

Ա.Թ.—*Գորգիրը, պապիցս մնացած գորգիրը։*

ՆԱՐԳ.—*Ուղարկեցի քրոջդ տուն պահելու (խորհրդավար)։ Ո՞վ գիտե։*

Ա.Թ.—*(Կատաղելով)։ Ի՞նչպես համարձակվեցիր։ Վոչ մի բան չպետի թաքցնել պարտատերերից, վոչ մի բան, մի ասեղ անգամ։ Թող գան, վեր գրեն, ծախեն աճուրդով, ավերակ դարձնեն տունս, միայն թե չասեն, վոր յես գող եմ։ Ցնա բերել տուր այդ գորգերը, լսո՞ւմ ես, յետ բերել տուր։*

ՆԱՐԳ.—*Լավ, հանգստացիր։*

ԱՔ.—(Ընկճվելով)։ Ի՜նչ որի հասանք։ (Լալիս է)։

ՆԱՐԳ.—Հերիք է, հերիք է, հերիք է...

ՑԱՔ.—(Զսպելով արցունքը)։ Չե, չե, լաց լինելն ամոթ է, կնիկություն, թշնամիներս ավելի կուրախանան։ (Ցոնը փոխում է)։ Գիշերվա վեր ժամանակն է։

Բեմի յեռեվում յեկեղեցական զանգի յերեք ծանր հարված։

ՆԱՐԳ.—Ահա յերրորդությունը տվեցին։ Գնա, պառկիր։

ԱՔ.—(Ցերեսը խաչակնքում է)։ Աղոթք աննկն էլ մոռացա։ Ան, պլուխս տրաքվում է։

ՆԱՐԳ.—Գնա, ասում եմ, գնա բայղուշ, հերիք է։

ՏԵՍԻԼ II.

Նույնի, Սամվել ու Նուռնուճար

ՍԱՄՎԵԼ.—(Գալիս է խորհի դռնեռով, պիջակը հագնելով, հետո փողպատը կապելով։ Նուռնուճարին, վոր նիստվում է նրան)։ Ջեմոդանա մաքրել ես։

ՆՈՒՆ.—(Գալիս է խորհի դռնեռով Սամվելի յետեվից։ Ցույց է տալիս պատի տակ դրած չեմոդանը)։ Այ, Որիորդին զարթեցնեմ։

ՍԱՄՎ.—Ախ։ Բեր այստեղ ճերմակեղենս։

ՆՈՒՆ.—(Գնում է խորհի դռնեռով)։

ՍԱՄՎ.—(Ծնողներին)։ Դուք ինչու համար եք այսպես վաղ զարթնել։ Հայրիկ, գնա պառկիր, ժամանակին յես քեզ կզարթեցնեմ։

ԱՔ.—Չե, կարգադրիր, վորդի, յես բանի պետք չեմ։ Ախ, գլուխս, (Գնում է աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՏԵՍԻԼ III.

Նարգիզ Սամվել, մերթ ընդ մերթ Նուռնուճար.

ՆՈՒՆ.—(Բերում է խորհի դռնեռով ճերմակեղենի մի կապոց)։

ՍԱՄՎ.—(Առաջ բաշելով մի աթոռ)։ Դիր այստեղ։ (Չեմոդանը բերում է բեմի կենտրոնը յեվ սկսում է ճերմակեղենը դասել այնտեղ)։

ՆՈՒՆ.—(Գնում է յես խորհի դռնեռով)։

ՆԱՐԳ.—(Մոտեցել է լուսամուտներից մեկին, վարագույրը բաց է անում)։ Լույսը բացվում է, մշակներն ուրախ ուրախ գնում են իրենց աշխատանքին։ Ցերտնի Նա էլ ձեր մեջ լիներ և ձեզ նման առողջ։

ՍԱՄՎ.—Մայրիկ, շուտով այստեղ կգա Արամազդը։ Ցես նրան խնդրել եմ, վոր ինձ ոգնի Լևոնին կայարան տանելուն սեր աստծու, այնպես արա, վոր հարիկը նրան չվիրավորի։ Առհասարակ չգիտեմ այդ մարդն ինչ է արել ձեզ, վոր ամենքդ նրա դեմ մի տեսակ ատելություն ունիք։

ՆԱՐԳ.—Նա հորդ թողեց նեղ դրության մեջ, հեռացավ, իսկ հիմա բոլորովին յերես է դարձրել մեզանից։ (Սկսում է Սամվելից ոգնել՝ իրերը տեղավորելու)։

ՍԱՄՎ. Դու գիտես, վոր Արամազդը հարկավ պատճառ ունի մեր տունը վոտ չդնելու։

ՆԱՐԳ.—Ո՞վ է մեղավոր, թող իր չափն իմանար։

ՍԱՄՎ.—Ցիթե Ովսաննան կարողանար մարդ ճանաչել, Արամազդի առաջարկությունը կընդուներ ուրախությամբ։

ՆԱՐԳ.—Ի հարկե հիմա ամենքն էլ այդպես կասեն։ Ոտիկաշիկին հարստացել է ու մարդկանց շարքն ընկել։

ՆՈՒՆ.—(Խորհի դռնեռով բերում է ճերմակեղենի մի ուրիշ կապոց, յեվ դնում է նույն աթոռի վրա ու սպասում հրամաններին)։

ՍԱՄՎ.—Զարմանալի գաղափար ունիք մարդու մասին։ Ձեր կարծիքով հարստանալ կնշանակե մարդկանց շարքն ընկնել։ Արամազդը միշտ մարդ է յեղել և ազնիվ մարդ։ (Նուռնուճարին)։ Գնա այժմ հագուստ բեր։

ՆՈՒՆ. —(Գնում է խորհի դռնեռով)։

ՆԱՐԳ.—Այդ վոր ժամանակից դու նրան հավանեցիր։

ՍԱՄՎ.—Հենց այն որից, յերբ նա յեկել է մեզ մոտ ծառայելու։ Ցերեկ քիչ եր մնում ամոթից գետինը մտնեի Ովսաննայի պատճառով։

ՆԱՐԳ. Ինչու։

ՍԱՄՎ.—Արամազդն յերկու անգամ գրում է նրան, թե պատրաստ է հայրիկին ոգնել և խնդրում է համոզել ծնողներին, վոր իր ոգնությունն ընդունեն։ Ովսաննան նրա նամակները յես է ուղարկում առանց քեզ անելու։ Ցեվ յես տանողն էլ հիմարաբար յես եմ լինում։

ՆԱՐԳ.—(Դադարելով Սամվելից ոգնելու, զարմացած նայում է նրան)։ Արամազդն ուզում է ոգնել հորդ։

ՍԱՄՎ.—Այո, մայրիկ, և կարող է ոգնել։ Այժմ նա անագին վարկ ունի մեր քաղաքում։ Ցես կարծում եմ, վոր Ովսաննան չեր վերադարձնիլ այդ նամակները, յեթե գիտենար նրանց բովանդակությունը։ Բայց յերեկ յերեկս յես նրան հայտնեցի,

և նա այժմ էլ պնդում է, թե Աբամազդի անունն անգամ լսել չի կամենում։ Կարելի՞ է մեթե այդքան դառը լինել

ՅՈՒՆ.—(Բերում է խորի դռնեռով Սամվելի սյուրտուկը, վարդիկը, ժիլետը, դնում է նույն աթոռի վրա յեվ անմիջապես գնում է նույն դռնեռով)։

ՆԱՐԳ.—Ի՞նչ արած, մենք ամենքս այդպես ենք, հպարտ։ Անա ինքը, յես կխոսեմ հետը։

ՏԵՍԻԼ IV.

Նույնք յեվ ովսաննա

ՈՎՍ.(Գալիս է շապով խորի դռնեռով)։ Ո՞ւր եմ զարթնել, արդյոք։ (Սամվելին)։ Ասա ինչ պիտի անել։

ՍԱՄՎ.—Պետք է սպասել Հևոնի զարթնելուն։ (Ջեմոդաները կապում է, բանալին դնում է գրպանը յեվ ջեմոդաները վոտով հրելով տանում է պատի տակ)։ Շտապել հարկավոր չե, դեռ ժամանակ շատ կա։

ՆԱՐԳ.—Ովսաննա, գոնե դու խնայիր մեզ այս նեղ որերում։

ՈՎՍ.—Ինչ եմ արել, մայր։

ՆԱՐԳ.—Եվ ինչ պիտի անեյիր, հորդ թողնում ես խայտառակության մեջ։

ՈՎՍ.—Յես, չեմ հասկանում, մայր։ (Նայում է զարմացած Սամվելին)։

ՍԱՄՎ.—Մայրիկն ամեն բան պիտե. յես ավելորդ համարեցի նրանից թագցնել։

ՆԱՐԳ.—(Ովսաննային)։ Ձերնից յես, տեսնում ես, վոր մեր բոլոր թշվառները մեզանից յերես են դարձրել։ Մենք ստիպված ենք հարցնել մեզ ոգնության ձեռք մեկնողին, ով էլ վոր լինի նա...

ՈՎՍ.—(Լուրջ)։ Մայրիկ, յես խնդրում եմ քեզ չխառնվել իմ գործերին։

ՆԱՐԳ.—Բայց այդ միայն քո գործը չե, այլև մերը, ամբողջ ընտանիքինը։

ՈՎՍ.—Յեթե այդպես լիներ, նա իր ոգնությունը հայրիկին իմ միջոցով չեր առաջարկիլ։ (Սկսում է անց ու դարձ անել)։

ՆԱՐԳ.—Եհ, տղա յես, ուղից ամենից առաջ քո սիրտը շահել։

ՈՎՍ.—Տեսնում ես, ուրեմն, լավ եմ արել, վոր նամակները վերադարձրել եմ։ Վերջապես այդ ինձ համար մի անախորժ խոսակցություն է, թողնենք, մի՛ևնույնն է, վոչ վոք չի կարող ինձ վրա ներգործել։

ՍԱՄՎ.—Աբամազդը լուրջ ուշադրության արժանի յերիտասարդ է նույնիսկ քեզանից ավելի արժանավոր մի որիորդի համար։ Այսքանը միայն յես պարտք եմ համարում ասելու։

ՆԱՐԳ.—Այո, յես էլ հիմա տեսնում եմ, վոր շատ որինավոր տղա յե։

ՈՎՍ.—(Դառը ծիծաղելով)։ Անա թե ինչ. չլինի թե մայր ու վորդի դավադրություն եք կազմել իմ դեմ։ Մայրիկ, դեռ յերկու ամիս չի անցել այն ժամանակից, յերբ դու արհամարում եյիր այդ մարդուն և նրա քույրերին. ինչ պատահեց այժմ...

ՆԱՐԳ.—Յերկու ամիս առաջ այս տունն էլ լիքն եր, հիմա տեսնում ես։

ՈՎՍ.—(Կանգ է առնում գրգռվելով)։ Վերջապես, ինչ ես ուզում ինձանից, ասա կարճ-կտրականն։

ՆԱՐԳ.—Ազատիր հորդ խայտառակությունից, ոգնիր հիվանդ յեղբորդ բժշկվելու, պահպանիր մեր տունը, վոր ավերակ չդառնա։

ՈՎՍ.—Այսինքն ծախեմ իմ զգացմունքները, իմ ապագան, իմ ամբողջ կյանքը, միայն ես ուզում։

ՆԱՐԳ.—Եվ ինչու՞ համար ենք քեզ պահել, մեծացրել, վոր այսորվա որը մեզ ոգնության չհասնես։

ՍԱՄՎ.—Մայրիկ, յես բողոքում եմ այդ խոսքերի դեմ։

ՈՎՍ.—Թող ասի, Սամվել, թող։ Վերջապես, մի որ հարկավոր եր պարզել մեր հարաբերությունները։ Հետո, մայրիկ, հետո։

ՆԱՐԳ.—Յես բոնություն գործ չեմ դնի քեզ վրա, յես միայն բացատրում եմ։ Յեթե դու կարողացար սիրել առաջին պատահածին, Աբամազդն այն անհատակ ժորժից հազար անգամ բարձր է։

ՈՎՍ.—(Նայել է մորը խորը հանդիմանական հայացքով)։ Առաջին պատահածի՞ն։ Լավ ասացիր, մայրիկ։ Այդ խոսքերով դու դատապարտեցիր թե՛ քեզ և թե հայրիկին։

ՆԱՐԳ.—(Զայրացած)։ Ովսաննա։

ՈՎՍ.—Այո, մայրիկ, յեթե յես իմ սիրտը նվիրեցի առաջին պատահածին, մեղավորը դուք եք և միայն դուք։ Յես այս չեյի ուզում ասել, բայց վոր յերեսով ավեցիր իմ ակամա սխալը, այժմ լսիր։ Դուք ինձ շրջապատեցիք ձեր շողոքորթ,

հայկատակ ազգականներով և կազմեցիք իմ շուրջը մի անմատչելի պատնեշ։ Ինչ է լեղել իմ կյանքն այս տանը. գնա ուսումնարան, չկ առն, լերը դասերիդ ազատ ես, կպիր մորդ փեշերին և գնա այցելիր ծնողներիդ ազգականներին։ Նատիր ժամերով տգետ ընտանիքների մեջ, լսիր նրաց հիմար զրույցները, գարշելի բամբասանքները, շատ անգամ կեղտոտ սրախոսություններ։

ՍԱՄՎ.—(Մեկուսի)։ Ճիշդ ե, բոլորովին ճիշդ...

ՈՎՍ.—Ձես չունեցի իրավունք մինչև անգամ իմ համակրած ընկերուհիների հետ ծանոթություն անելու։ Հարստի աղջիկ եյի, ինչպես կարող եյի աղքատներին ընկերանալ։ Ձեվ այսպես բռնության ճանկերում անված, հանկարծ պատահեցի մի լրիտասարդի, որ, չգիտեմ ինչպես, անցել եր ինձ շրջապատող պարիսպը։ Ձես չունեցի շրջան ընտրություն անելու, չեյի ճանաչել վոչ մի ուրիշ յերիտասարդ, բացի ձեր ազգականներից։ Այն ինչ, նեխված ճահիճի մեջ ապրելով հանդերձ, յես ունեցի սիրելու ընդունակ սիրտ և սիրելու չափ։ Ձեվ ահա հափշտակվեցի առաջին պատահածով։

ՍԱՄՎ.—Ձեվ այն միակ ծաղիկը քո ճանապարհի վրա դուրս յեկավ ապականված ու թունավոր։ Մայրիկ, Ովսաննան իրավացի յե։

ՆԱՐԳ.—Թող ասի, ինչ անեմ, թող նա յել իմ գլխին թափի իր սրտի մաղձը, ինչպես քո անբասիր լեղբայրը։

ՈՎՍ.—Ան, մայրիկ, յես չեմ ուզում կրկնել Լևոնի ասածները, բայց մի ցնորվածի բերանով ինքը ճշմարտությունն ե խոսում։ Ինչ է լեղել նրա պատանեկությունը։ Մինչ քսան տարեկան հասակը դուք նրան պահեցիք խանձարուրի մեջ, հետո գրպանը լցրիք վոսկով և ուղարկեցիք մայրաքաղաք։ Ձեվ ահա մի նավակ, վոր սովոր չեր ափերի մոտ լողալու, հանկարծ ընկավ հորձանքի մեջ և... խորտակվեց։ Իսկ սա, (Ցույց է տալիս Սամվելին)։ Սա ինչ է։ Հայրիկը կամեցավ սրան անպատճառ վաճառական դարձնել։ Ինչպես չե, պիտք է Ջրանգուլյան առևտրական տան հռչակավոր անունը շարունակել։ Փիմիաղիան ավարտած-չավարտած իր յերկաթի ձեռը դրեց պատանու վրա ու ասաց. «Դու իմն ես, դու չես հեռանալ ինձանից»։ Բայց Սամվելը նրանը չեր, մայրիկ, և վոչ քոնը։ (Շարունակում է անց ու դարձ անել)։

ՍԱՄՎ.—(Հափշտակված)։ Ճիշտ ե, մայրիկ, ճիշտ ե։ Ովսաննան

խոսում է իմ սրտի խորքից։ Վաճառականությունը իմ ոգուն ոչնչացրեց, վորքան հալածիկի հոգուն բնական սոնասուրը։ Ձես փախչում եյի նրանից, ինչպես ժանտախտից։ Ձես փախչում եյի և՛ քո ծալրահեղ սիրուց ու խնամքից, ինչպես չղջիկներից։ Ինչ արած, ինձ թվում եր, վոր յես աժուած եմ յերաժշտական ձիրքով և իմ ամբողջ եությամբ փափագում եյի նրանց ծառայել։ Կարելի յե սխալվում եյի, բայց դուք չհասկացաք իմ հոգին—այս է ցավալին։ Այժմ ինչ եմ յես—Բարոյական մի անգամալուծ, վորին շատ—շատ տեղ կտան մի գավառական որկնսրուման, և կդառնամ մինը հազարավոր պրոլետարներից։ Ընդհակառակ եմ, Ովսաննա, շնորհակալ եմ, դու ասացիր այն, ինչ վոր վաղուց յեռում եր իմ սրտում...

ՆԱՐԳ.—(Մերթ ընկնվել ե, մերթ գրգռվել յեվ իրան զսպել։ Այժմ գրգռված)։ Բավական ե, բավական ե, համբերությունն եվ չափ ու սահման ունի։ (Բաց ե անում մյուս յուսամուտի վարագույրը յեվ լամպը ցածցնում ե)։

(Բեմի լուսավորությունը ավելանում ե)։

ՈՎՍ.—Ալդ ե, ալդ ե, մայրիկ, ձեր համբերությունը հատնում և ճիշտ այն պահին, յերբ լսում եք ճշմարտության առաջին ձայները։

ՆԱՐԳ.—(Բարկացած)։ Լռիր, լռիր, ասում եմ... և յերեք խելք ուներես, մեր դրության մասին մտածիր։ Ան, ասված իմ, ինչ ծանր ու վտանգաւոր ժամանակներ են։ (Դնում ե խորհի դրնեռով)։

Նախասենյակում զանգ

ՆՈՒՆ.—(Դալիս ե խորհի դռնեռով յեվ օտապով գնում ե աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՍԱՄՎ.—Այդ Արամազդն ե։

ՈՎՍ.—Թող ինձ մենակ, Սամվել։ Ձես ուզում եմ նրա հետ խոսել...

ՍԱՄՎ.—Լսիր. վոչ մի զոհաբերություն, հասկանում ես, ավելի լավ և աղքատ լինենք, քան քո զգացումների գնով ապահովի։ (Դնում ե խորհի դռնեռով)։

———

ՏԵՍԻԼ V.

Ովսաննա յեվ Աբամազդ

Ա.Ր.—(Գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեռով: Տեսնելով Ովսաննային, մի փոքր շփոթվում է յեվ իսկույն իշխում իրան: Սովորական յեղանակով): *Բարի լույս, որիորդ:*

ՈՎՍ.—*Բարի լույս:*

(Ձեռք չեն տալիս իրարու):

Ա.Ր.—*Յերևի, Սամվելն իր սենյակումն է: (Դիմում է դեպի խորի դռները):*

ՈՎՍ.—*Մի րոպե:*

Ա.Ր.—(Կանգ է առնում):

ՈՎՍ.—*Ինչու՞ համար եք յեկել:*

Ա.Ր.—*Լևոնի համար:*

ՈՎՍ.—*Գիտեմ: Ձես կամենում եմ խնամալ, ինչն է ձեզ ստիպում այդպես հոգալ մեր մասին:*

Ա.Ր.—*Յերախտագիտությունը դեպի ձեր ծնողները:*

ՆՈՒՆ.—(Գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեռով յեվ շտապով գնում է խորի դռնեռով):

ՈՎՍ.—*Ձեվ այն նամակները ուղարկել եք ինձ այդ զգացմունքից դրդված:*

Ա.Ր.—*Վոչ-լիովին:*

ՈՎՍ.—*Ուրի՞ց:*

Ա.Ր.—*Որիորդ, յեթե կամենում եք մի անգամ ևս փորձել իմ հանդգնությունը, համեցեք: Ձես ուզում եմ իմ ուժերի չափ ոգնել ձեր հորը գլխավորապես... ձեզ համար:*

ՈՎՍ.—*Այսինքն, ուզում եմք ինձ կաշառել, այո՞:*

Ա.Ր.—*Այո՛:*

ՈՎՍ.—*Ձեվ դուք այդ ասում եք առանց քաշվելու:*

Ա.Ր.—*Ինչից պիտի ամաչեմ, որիորդ: (Հեգնաբար): Ձես վաճառական եմ, իսկ դուք գիտեք, որ վաճառականը առանց հաշվի բարություն չի անում: (Տոնը փոխելով):*

Թույլ տվեք ինձ տեսնել Սամվելին (Ուզում է գնալ):

ՈՎՍ.—*Սպասեցեք, այս վերջին անգամն է, որ դուք տեսնում եք ինձ: Ասացեք, խնդրեմ, ինչը ստիպեց ձեզ բաց անել Ժորժ Ադելբեկյանի գաղտնիքը:*

Ա.Ր.—*Շանը, որիորդ, շանը:*

ՈՎՍ.—*Թողեք հեգնությունը, ես ձեզ հետ լուրջ եմ խոսում:*

Ա.Ր.—*Ձեվ ես պատասխանում եմ ամենայն լրջությամբ: Բարոյական շահն եր, որ ինձ ստիպեց պատռել այդ մարդու դիմակը: Վերջապես, չի՞ որ դուք ինքներդ պահանջեցիք, միթե մոռացի՞լ եք:*

ՈՎՍ.—*Իսկ ես կասեմ, որ այդ բարոյական շահ չեր, այլ փոքրոգի մարդու նախանձ, անզոր չարությունն հաղակորդի դեմ*

Ա.Ր.—*Թող ձեր ասածը լինի, բայց ճշմարտությունը դոնե այժմ պարզ է ձեզ համար:*

ՈՎՍ.—*Ո՞վ ասաց ձեզ, որ այն ճշմարտությունը ցանկալի չեր ինձ համար: Ո՞վ խնդրեց ձեզ անկոչ հյուրի պես մտնել մի ուրիշների ուրախությունը:*

Ա.Ր.—*Բարոյական մարդու սուրբ պարտականությունը ստիպեց ինձ այդ անել: Որիորդ, ձեր յերևակայածը խնճույք չեր, այլ նախերդանք մի դրամայի, ուր դուք պիտի կատարեիք դժբաղդ հերոսուհու դերը մինչև ձեր կյանքի վերջը:*

ՈՎՍ.—*Բայց ես այդ չգիտեի ու յերջանիկ եյի. ինչու՞ քաց արիք իմ աչքերը:*

Ա.Ր.—*Որիորդ Ովսաննա, այդ խոսքերը, կարծես, լսում եմ ձեր հոր բերանից: Ինչպես նա, դուք ևս բարվոք եք համարում ապրել ստի և կեղծիքի մեջ, քան թե լսանալ դառը ճշմարտությունը: Այո, խոստովանում եմ, ծանր հարված եմ տվել ձեզ: Դուք գտել եյիք մի փայլուն խաղալիք և ուրախ եյիք նրանով: Ձես խլեցի ձեզնից այդ սիրուն առարկան, զարկեցի գետնին, ջարդ ու փշուր արի, և դուք տեսաք ինչ պղտով եր լեցված նա: Այո, ինարկե, շատ խիստ եր իմ կողմից, շատ անողորմ, բայց մի հինգ տարեկան յերեխայի և վոչ ձեր վերաբերմամբ: Ձի՞ վոր վաղ թե ուշ պետք է իմանայիք այդ դեղեցիկ պաճուճապատանքի զզվելի պարունակությունը:*

ՈՎՍ.—*Թող լսանայի, ուամ ինչ, վերջապես, վնաս է ձեր մեջ մաքուր, վնասը չունի յուր անցյալում այս կամ այն արկածը:*

Ա.Ր.—*Ամենքը, ամենքն ունեն, որիորդ, սակայն այն տարբերությամբ, վոր Ժորժ Ադելբեկյանինը արկած չե, այլ հանցանք...*

ՈՎՍ.—*Թևկուզ հանցանք: Սիրելով նրան, ես կարող եյի ներել այդ հանցանքն այն ժամանակ, յերբ չեյի կարող չներել:*

Ա.Ր.—(Հեգնաբար ժպտալով): Այո, ամուսնանալուց հետո, այնպես, ինչպես ներում են շատ վողորմելի կանայք իրենց ամուսին-

ձերի աննկերելի անցյալը։ Բայց այդ ինչ վիճակ կլիներ ձեզ համար, ինչ ահռելնական կյանք մի մարդու հետ, որ իր հարազատ յերեխային շպրտել և փողոց, ինչպես լուցկիների մի դատարկ տուփ։

ՈՎՍ.—(Ազդվել է Աբամազդի վերջին խոսքերից։ Մեկուսի)։ Նա իրավացի չե։

Ա.Ր.—Ցավ ինձ կարող եր յերաշխավորել, եթե այն մարդը,որ մի անգամ շպրտել է մեկ զավակին, նույն դրությամբ չի շպրտիլ և մյուսներին։ Վերջապես, դուք, որիորդ, դուք, կարծում եիք կրել մի դժբաղդ մոր և դրբաղդ զավակի հավիտենական անեծքի լուծը, բարոյական կլիներ ձեր ամառնական կյանքը, կարող կլինեիք ձեր խիղճը համաբել մաքուր...

ՈՎՍ.—(Ընկճված)։ Վոչ...

Ա.Ր.—Ահա, տեսնում եք. այժմ դիտեցիք ինքերդ, ունիյի, որդյոք, իրավունք ձեզ ազատելու այդ սոսկալի ապագայից։ (Ոտքը փոխելով)։ Բայց, ներեցեք, Սամվելն ինձ սպասում է։ (Ուզում է գնալ)։

ՈՎՍ.—Մի վայրկյան։ Դուք ձեր նամակներում, իմիջիայլոց, խոստանում եք ոգնել և՛ Սամվելին, Այո։

Ա.Ր.—Այո։ Ցավ խոստանում եմ ոգնել նրան իր յերաժշտական կրթությունը շարունակելու այնքան ժամանակ, վորքան կամենում է։

ՈՎՍ.—Ցավ այժմ, ինարկե, իմ վարմունքի պատճառով, Սամվելը պիտի զրկվի ձեր ոգնությունից, այո։

Ա.Ր. (Դրական)։ Սմենևին։

ՈՎՍ.—(Զարմացած)։ Ի նչպես, դուք դեռ...

Ա.Ր. Ցես պիտի կատարեմ իմ բոլոր խոստումները, վոր արել եմ այդ նամակներում,

ՈՎՍ.—(Ավելի ազդված)։ Բոլորը։

Ա.Ր.—Բոլորը։

ՈՎՍ.—Առանց վորևե ակնկալության։

Ա.Ր.—Առանց վորևե ակնկալության և նույնիսկ հակառակ ձեր կամքի։

ՈՎՍ.—(Խորը զգացված, ձեռը սեղմում է սրտին)։ Ա՜հ։ (Մի ձեռը ներում է բազմաթոռի մեջքին)։

Ա.Ր. (Վախեցած, մի բայլ մոտենում է Ովսաննայիկին)։ Ինչ պատահեց։

ՈՎՍ.—Վոչինչ, վոչինչ. սրտի բաբախում... (Լռություն։ Ներքին մխաուում)։ Ներեցեք... Ցես ձեզ վիրավորել եմ անտեղի։ Տվեք ինձ ձեր ձեռը... Ցես սխալված եմ յեղել... (Ձեռը մեկնելով)։

Ա.Ր.—(Ուրախ, ազդված, արագ մոտենում յեվ սեղմում է Ովսաննայի բույլ մեկնած ձեռը)։ Ուրեմն, դուք ինձ չեք արհամարհում, այո, ուրեմն, յես...

ՈՎՍ.—Գնացեք, Սամվելը ձեզ սպասում է, կարող եք ուշանալ...

Ա.Ր.—(Ուրախությունից շփոթված, կարմրած, գնում է խորհի դռնեերով)։

ՈՎՍ.—(Նստում է առաջին պատահած աթոռի վրա յեվ մտածում)։

ՏԵՍԻԼ VI

Նույնի, Սամվել, Նարգիզ յեվ մերթ ընդ մերթ Նունուֆար։

ՆՈՒՆ.—(Գալիս է խորհի դռնեերով, մի ուրիշ լիք չեմոդան ձեռքին, վոր դնում է առաջինի հով)։

ՈՎՍ.—Լևոնը զարթնեց։

ՆՈՒՆ.—Գնում եմ զարթեցնելու։ (Գնում է յես խորհի դռնեերով)։

ՆԱՐԳ.—(Ցեկել է խորհի դռնեերով Նունուֆարից անմիջապես ետո). Կամացուկ խփիր դռներին, ինչը կզարթնի։ (Դառնում է Աբամազդին յեվ շարունակում է հետը խոսել ցխուր, բայց սիրալիր)։

Ա.Ր.—(Գալիս է խորհի դռնեերով Նարգիզի հետ։ Դեմքի արտահայտությունը թեյեվ լուրջ է, բայց զվարթ։ Նայում է հանգիստ Ովսաննայիկին, բայց չի ձամարձակվում մոտենալ)։

ՍԱՄ.—(Գալիս է խորհի դռնեերով յեվ անմիջապես մոտենում է Ովսաննայիկին)։

ՈՎՍ.—(Դժկամությամբ) Թող ինձ, ի սեր աստծու. (Վեր է կենում, մոտենում է լուսամուտին յեվ նայում է դեպի դուրս)։

ՆԱՐԳ.—Գնամ, այն մարդուն զարթեցնեմ, վոր վերջին անգամ տեսնի անբաղդին։ (Գնում է աջ կողմի առաջին դռնեերով)։

ՍԱՄ.—(Մոտեցել է Աբամազդին)։ Ուշադրություն չդարձնես հայրիկի խոսքերի վրա, վերջին որերը նա հոգսից շատ ներվային է գարձել։

Ա.Ր.—Հանգիստ կաց։

———

ՏԵՍԻԼ VII

Նույնի յեվ Աբաջես

Ա.Թ.—(Գալիս ե աջ կողմի առաջին դռնեռով դարձյալ խալաթով։ Նարգիզին հանդիպելով դռների մեջ)։ Ո՞ւր ե, Թողեք տես-նեմ, հետո տարեք։

ՆԱ.ՐԳ.—Համբերիր։

Ա.Թ.—(Առաջվա տեսնելով, զայրանում ե)։ Ո՞վ խնդրեց նրան, վոր այստեղ գա։

ՆԱ.ՐԳ.—(Առաջին Աբաջեսին)։ Բարեկիր, լավ չե։

Ա.Թ.—Բայդուշի պես գլխիս վայ յեր կանչում, հիմա բերել եք, վոր տեսնի իմ անբազդությունը և ուրախանա, հը։ (Դառ-նալով Առամազդին)։ Դուրս, դուրս իմ տնից։

ՍԱՄ.—(Մոտեցել ե նորը, բռնում ե նրա թեվը)։ Հայրիկ, հանգըս-տացիր, այսոր նա մեր միակ բարեկամն ե։

Ա.Թ.—Թող գնա, չեմ ուզում այդպիսի բարեկամներ։ Նա իր մըտ-քում ինձ հեմար և համարում, ծաղրում ե։ Այնպես չե, Նարգիզ։

ՆԱ.ՐԳ.—Վոչ, սխալվում ես։

Ա.Թ.—(Զարմանալով)։ Հը՞,

ՆԱ.ՐԳ.—Աբամազդը մեր մասին շատ և հոգում։ Նա մեզ անկեղծ սիրում ե։

Ա.Թ.—Ի՞նչ, մայր ու վորդի ուզում եք ինձ խելքից հանել, հը, Ովսաննա, լսեցիր ինչ ասացին ղրանք։

ՈՎՍ.—Հայրիկ, յես Աբամազդին այսոր միայն ճանաչեցի։

Ա.Ր.—(Այս խոսակցության միջոցին կանգնած ե հեռու յեվ տեսարանը դիտում ե լուրջ ու հանգես։ Ովսաննայի խոսքերը նրան ուրախ ցնցումներ են պատճառում)։

Ա.Թ.—(Ավելի զայրանալով)։ Ուրեմն, դուք խոսք մի յեք արել ինձ խայտառակելու նրա մոտ, հը։ վոր այդպես ե, ամենքդ կո-րեք, ամենքդ, յես ձեզ անիծում եմ։ (Ուզում ե գնալ աջ կողմի առաջին դռնեռով, բայց Նուռնուճարի աղաղակը լսելով, կանգ ե առնում)։

ՆՈՒՆ.—(Բեմի յետեվից բարձրաձայն)։ Այստեղ յեկեք,շուտ, տեսնեք ինչ ե անում։

ՆԱ.ՐԳ.—(Շտապով գնում ե խորի դռնեռով)։

Ա.Ր.—(Հետեվում ե Նարգիզին)։

ՍԱՄ.—(Հետեվում ե Առամազդին)

Ա.Թ.—Տեսեք ինչ պատահեց։ (Գալիս ե բեմի կենտրոնը)։

ՈՎՍ.—(Նախազգացել ե մի վատ բան)։ Հայրիկ, դու գնա քո սեն-յակը։ (Վազում ե դեպի խորի դռնեռը յեվ սարսափած ետս ե կանգնում)։

ՏԵՍԻԼ VIII

Նույնի յեվ Լեվոն

ԼԵՎՈՆ.—(Գալիս ե խորի դռնեռով ժիլետով, գիշերվա շապկով, ոտաքաշիներով։ Նոսր մազերը գզգված են, դեմքն այլա-դեկված։ Առամազդն ու Սամվելը բռնած են նրա աջ ու ձախ թեվերը)։ Սուտ ե... սուտ... կարմիր ոձն եր...

Ա.Ր.—Այոթ ե, Լևոն, ամոթ ե... Նստիր այստեղ։ (Նստեցնում ե բեմի խորում մի աթոռի վրա, յերեսը դեպի հասարակություն)։

ՍԱՄ.—(Մոտեցել ե Ովսաննային, կիսաձայն։ Ուզում եր կախվել հագիվ ազատեցինք։

ՆԱ.ՐԳ.—(Սարսափահար)։ Շուտ տարեք, հեռացրեք, չի կարելի նրան այստեղ պահել։

Ա.Ր.—(Նուռնուճարին եներժիկ տռնով, կիսաձայն)։ Գնա շուտ, յեր-կու կաթ կանչիր։

ՆՈՒՆ.—(Շտապով գնում ե աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

Ա.Ր.—(Սամվելին)՝ Իրերը տանենք դւրս, հետո յես նրան կբե-րեմ։ (Նարգիզին)։ Մայրիկ, յերթ կարող եք, հագցրեք նրան։ (Վերցնում ե չեմոդաններից մեկն ու գնում ե աջ կողմի յեր-կրորդ դռնեռով)։

ՍԱՄ.—(Վերցնում ե յերկրորդ չեմոդանը յեվ գնում Առամազդի յե-տեվից)։

ՆԱ.ՐԳ.—(Ովսաննային)։ Գնա պիջակն ու կոշիկները բեր։

ՈՎՍ.—(Շտապով գնում ե խորի դռնեռով)։

ԼԵՎՈՆ.—(Մինչ ամենին իրարանցման մեջ են, նայել ե աջ ու ձախ խորամանկությամբ)

Ա.Թ.—(Ապշած նայում ե մեր մեկին, մեր մյուսին)։ Աա։

ԼԵՎՈՆ.—(Հարմար վայրկյան վորսալով, գաղտնագողի մոտենում ե պատգամբի դռներին)։ Կարմիր ոձը, կարմիր ոձը... Ազա-տություն։ (Կատաղի ծիծաղ), հա, հա, հա, ազատվեցինք... (Վազում ե պատգամբ ե իրան ձգում ե փողոց)։

Ա.Թ.—Բռնեցեք, բռնեցեք։ (Ոնում ե անշարժ, ապշած, խարտյաշ)։

Ա.Ր.—(Շտապով վերադառնում ե աջ կողմի յերկրորդ դռնեռով նիստ այն վայրկյանին, յերբ Լեվոնն արդեն պատգամբի վրա յե)։

Լևոն, Լևոն, (Վազում է բռնելու, չի հասնում). Ա՜հ, ես իրան դցից փոզոց։ (Վազում է դուրս աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՆԱՐԳ.—(Ձչալով, նախ վազում է դեպի պատզարմբ, իսկույն հետ է գալիս)։ Վորդիս, վորդի՛ս։(Վազում է աջ կողմի դռնեռով)։

ԱԹ.—(Մի հաճի վայրկյան բեմի վրա մենակ է)։

ՈՎՍ.—(Գալիս է խորի դռնեռով Լեվոնի պիջակր, գլխարկն ու կոշիկները բերելով)։ Ինչ պատահեց, (Հասկանում է բանի եյությունը, ձչում է)։ Ա՜հ։ (Ձեռներից բաց է թողնում իրերը հատակի վրա։ Ուզում է նույնպես վազել աջ կողմի յերկրորդ դռնեռով, հանդիպում է Աբամազդին, բեմի վրա)։

ԲԵՄԻ ՀԵՏԵՎՈՒՄ.—(Աղմուկ, իրարանցում, Նարգիզի ճիչն ու աղաղակը)։

ԱՐ.—(Գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեռով, Գունատ է, դողում է)։ Սպանվեց։

ԱԹ.—Ո՛ո, բայդուշ, ինչու դու բերիր այդ չար լուրը։ Ա՜հ։ (Ձեռը տանում է կրծքին, տատանվում է յեվ թուլանում, ընկնում է բազկաթոռի վրա։ Գլուխը անզոր թեվսում է կրծքին)։

ՈՎՍ.—Պապա՛, պապա՛։ (Վազում է դեպի հայրը)։ Ուշքի յեկ։

ԱՐ.—(Մոտենում է Աբամեսին, նայում։ Տխուր)։ Նա կաթվածահար յեղավ։

ՈՎՍ.—Քանդվեց մեր տունը, ավերակ դարձավ։

ԱՐ.—Մենք այդ ավերակների վրա կշինենք նոր տուն։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԿՈՐԾԱՆՎԱԾԸ

ԴՐԱՄԱ ՀՈՐՍ ԱՐԱՐՎԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍԱՀԱՌՈՒՆԻ 54 տարեկան։
ԿԱՏԱՐԻՆԵ, նրա կինը, 46 տարեկան։
ԱՐՏԱՇԵՍ, նրանց որդին, 26 տարեկան։
ԱՆԱՀԻՏ, նրանց դուստրը, 24 տարեկան։
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼՎԱՆԴՅԱՆ, 59 տարեկան։
ՅԼՈՐԱ, նրա ազգիկը, 21 տարեկան։
ՏԻԳՐԱՆ, Արտաշեսի մտերիմ ընկերը, 27 տարեկան։
ՀՐԱՆՏ, Արտաշեսի ընկերը, 24 տարեկան։
ՆՈՑԵՄՋԱՐ, վորի իսկական անունն է Անտոնինա Սկվարցովա, 23 տարեկան։
ՈՐԱՋ ԱՐԱՋՅԱՆ, Արտաշեսի նախկին ընկերը, 28 տարեկան։
ՆԱՋԱՆԻ, Սահառուհիների վաղեմի խոհարարուհին, 48 տարեկան։
ԴԱՆԻԵԼ, Ալվանդյանների ծառան։
ՈՈՑԻ, Ալվանդյանների ազախինը։
Մի վոստիկանական պաշտոնյա։

Գործողությունը կատարվում է Կովկասի մեծ քաղաքներից մեկում 190 . . թվին։ I, III և IV արարվածները կատարվում են Սահառուհիների, II Ալվանդյանների տանը։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Սահառուհիների բնակարանը։ Մի բավական մեծ սենյակ, վոր թե հյուրասենյակ է յեվ թե սեղանատուն։ Աջ պատի մեջ յերկու դռներ, վորոնցից ավանացինի կողմինը տանում է Անահիտի սենյակը, իսկ խորինը Սենեքերիմի յեվ Կատարինեյի ննջարանը։ Խորքի պատի մեջ դեպի ծախ դիմի յեվս կատարինեյի ննջարանը։ Խորքի պատի մեջ դեպի ծախ դռները, վոր տանում են նախասենյակ յեվ խոհանոց, դեպի աջ՝ ճաշի սեղան, քովը պահարան ամանեղենի համար։ Ձախ պատի մեջ, ուղիղ Անահիտի սենյակի դռների հանդեպ, դռներ, վոր տանում են Արտաշեսի սենյակը, մի փոքր հեռու, դեպի խորքը՝ դրասենյան, քովն աթոռներ։ Աջ պատի յերկու դռների միջեվ

սովորական թախտ։ Այս ու այն տեղ հասարակ աթոռներ։ Դռները վարագույրներ չունին։ Պատերին կախած են հայ հին յեվ նոր նշանավոր մարդկանց պատկերներ յեվ Վոգի Հայաստանի կոչված նկարը, ծեռագործ։

ՏԵՍԻԼ I

Սեպեհերիմ, Կատարինե յեվ Նազանի

ՍԵՊՆԵՐԻՄ.— (Ալեխառը, կարճ խուզած միրուքով ու մազերով մարդ ե, պարզ դեմքով յեվ շատ հասարակ ձեվերով։ Ինքնայարդային ե, շարժուն, դյուրագրգիռ, դյուրահավան, շուտ ուրախացող, շուտ տխրող։ Շատ ե ծխում։ Հագած ե ծալած ոձիրով շապիկ, սեվ փողկապ, լայն, հնաձեվ պիջակ, յերկար ժիլետ, լայն պանթալոն։ Կարդալ-գրելիս դնում ե պենսնե, որ միշտ կախված ե վզովը։ Վարագույրը բարձրացնելիս նստած ե գրասեղանի մոտ, գրում ե, սեպ սեպ բաց բաղնելով գլխից վեր ծխախոտի ծուխը)։

ԿԱՏԱՐԻՆԵ.— (Նիհար, գեղեցիկ, բայց վոչ մեղմ դեմքով կին ե, հարուստ յեվ իչ ալեխառը մսզերով։ Հագնում ե սովորաբար սեվ հագուստ՝ հասարակ, բայց վոչ աննշան։ Վարագույրը բարձրացնելիս ճաշի սեղանի մոտ լվանում ե բեյի բաժակները ու մաքրում)։ Նազանի՛ր, Նազանի՛ր։

ՆԱԶԱՆԻ.— (Գալիս ե խորհի դռներից ավելը ձեռին, բեվերը ձգած (։ Հրամանքս, խանըմ ջան։

ԿԱՏ.— Սամավարը տար, նորից լեռացրու ու բեր։ Արտաշեսը պարթևներ ե ու հագնվում ե։

ՆԱԶ.— Ես սրհաթիս։ (Ավելը հենում ե պատին, սամավարը տանում ե խորհի դռներով)։

ԿԱՏ.— (Ավելորդ բաժակները տեղավորում ե պահարանում, սեղանի վրա թողնելով մի մաքուր բաժակ, հաց, պանիր, կարագ յեվ մեղր։ Հետո կանգ ե առնում յեվ հանդիմանական հայացքով նայում Սեպեհերիմին)։

ՍԵՆ.— (Շարունակ գրելով)։ Զգում եմ հայացքդ, զգում եմ։ Ինչ վզիս վրա ազդում ե իչպես անձրևի սառը կաթիլներ, ահավիտենական վերահսկիչ իմ կյանքի։

ԿԱՏ.— Գնաք ե բազար գնալ։

ՍԵՆ.— (Գրիչը դնում ե սեղանի վրա)։ Ըհը, վերջացրի, անդուռդարան կողակիցդ իմ, այժմ կարող եմ ծառայել քո տնտեսական հրամաններին։ (Վեր ե կենում)։

ԿԱՏ.— Ցերանի դիտենամ, ելի ուշ դեմ ես գրոտում տաքացած։

ՍԵՆ.— Ինչպես միշտ, իմ ազգի թշնամիների դեմ։ Առաջ մեզ մեղադրում էին, թե վաշխառուներ և հարստահարիչներ ենք հրեաների պես։ Այժմ նոր ագռավներ են յեկել և նոր տեսակի ղղռոցներ սկսել։ Այժմ ասում են, թե հայ հասարակությունն ընդունակ չե բարձր իդեալներով վոգևորվելու։ Ահա այս անգամ այս տեսակ հայատեացների հերն եմ ուզում անիծել։

ԿԱՏ.— Թող, ասածդ սիրես, թող այդ կռիվները, բավական ե։

ՍԵՆ.— Ուշ ե. Կատարինե, ուշ ե։ Այսպես սկսել եմ կյանքս, այսպես էլ պիտի վերջացնեմ։ (Մոտենում ե ու մի ձեռքով գրկում Կատարինեյին)։ Բայց հիմա, Կատարինե, քեզ՛ն լիմ ե։ Մի պաշտպան և ոգնական ե յեկել, վոր թշնամիների մի ամբողջ բանակի դեմ պիտի կռվի ինձ համար։

ԿԱՏ.— (Մեղմիկ ազատվում ե Սեպեհերիմի գրկից, հեգնաբար)։ Ո՞վ ե այդ պաշտպանը։

ՍԵՆ.— (Ձեռը հանդիսավոր մեկնելով դեպի ձախ դռները)։ Այ, նա, իմ միակ ժառանգը, վոր յերեկ վերադարձավ հայրենիք գիտության պաշարով և թարմ ուժերով։ Համոզված եմ, վոր նա իմ ոված կրթությունը չի մոռացել, վոր նրա սիրտը վառ ե բուռը սիրով դեպի իր ազգը։

ԿԱՏ.— Ասածդ սիրես, մի՛ անիծիր իմ վորդուն։

ՍԵՆ.— Ի՛ն, ինչպես թե անիծել։ Ազգը սիրել ու ազգին ծառայել կնշանակե անիծված լինել։

ԿԱՏ.— Ազգը սիրել կարելի ե. դա ամենքիս պարտքն ե. բայց ազգին ծառայելը հիմարություն ե։

ՍԵՆ.— Ի՞նչ ես դատարկ դատարկ դուրս տալիս, կին...

ԿԱՏ.— Ձես յերկնային պատիժ կհամարեմ ինձ համար, յեթե Արտաշեսը գնա քո ճանապարհով։

ՍԵՆ.— (Հեգնորեն)։ Այսինքն...

ԿԱՏ.— Այսինքն, յեթե, իր բաղդը թողած, ընկնի հասարակական գործերի յեռևից։ Ի՞նչ ես վաստակել դու, ինչ, վոր նա յել վաստակի։ Սրան հարվածիր գլխով, նրա պակասը յերեսովը տուր խոսքով, այստեղ կռիվը հարուստների հետ, թե ազգին ինչու մեծ մեծ փողեր չեն տալիս, այնտեղ հայհոյիր հոգևորականներին, թե ծուլ են, ագահ են և այլն։ Ի՞նչ գիտեմ, քսան ու յոթ տարի է ապրում ենք, ինչպես կյանքի խորթ զավակներ, կես կուշտ, կես քաղցած, միշտ գողալով վաղվա համար, միշտ հոգալով մի վոր հացի մասին։ Ա՜հ,

չեթե իմանայի, որ իմ կյանքն այդ է լինելու, կխեղդի իմ հոր տանը և քեզ հետ չէի ամուսնանալ։

ՍԵՆ.—(Լռել է, զանազան ցնդաբանական աննշանություններ շարժումներ անելով)։ Շարունակիր, շարունակիր. ինչու՞ դադարեցիր։ Ես խոմ միշտ համբերությամբ լսում եմ քո ազգակից երգը։ Գիտեմ դու ինչ ես ուզում ինձանից, ես էլ ամուսնացար հետս։ Դու փափագում էիր, որ փաստաբանի թղթապանակը կոնատակիս գրած դնեմ դռան ընկնելի, սրան շոյելի, նրան շողոքորթելի՝ կլինենաներ ձեռք բերելու։ Դու ավելի չերջանիկ կհամարեիր քեզ, չեթե ես մի անգամ արդարին պաշտպանելով, հինգ անգամ գողերին ու սրիկաներին պաշտպանելի, ստելի, խաբելի, խարդախելի։ Այո, այն ժամանակ դու ավելի կուշտ կապրեիր և ավելի կհարգեիր ինձ։ Բայց ես չարի այդ. ես ընտրեցի ուսուցչի համեստ աշխատը, որ իմ խելքի և ընդունակությունների չափով ծառայեմ իմ խեղճ ժողովրդին։ Ես իմ գլուխն պատեցի դատաստանական խարդավանքների ճահիճից և նվիրեցի ազգին։ Լավ արի թե վատ, թող ուրիշներն ասեն, բայց ես այսոր էլ չեմ զղջում, չեմ զղջում, չեմ զղջում։

ԿԱՏ.—Իսկ Արտաշեսը չի անիլ քո արածը։ Վոչ, նա չի հետևիլ քո օրինակին, ես չեմ համաձայնվիլ։

ՍԵՆ.—Ո՛ր, ես գիտեմ, շատ լավ գիտեմ, որ դու չես թողնիլ։ Դու ամեն կերպ պիտի աշխատես լսելի նրան ինձանից, դարձնել մի սովորական վողորմելի քաղաքացի կուշտ փորով, ճարպոտ ուղեղով և դատարկ զգացումներով։ Բայց ես հուսով եմ, որ Արտաշեսը քո ասածը չե, որ նա իմն է և վոչ քոնը։

ԿԱՏ.—Եե, չեթե նա խելոք է, վոչ իմը կլինի և վոչ քոնը, այլ կզատականի ինքն իրան։

ՍԵՆ.—Հա, այդպես ասա։ Ես դեմ չեմ. թող նա չհետևի ինձ, ուրիշ ճանապարհով ոգնի իր ազգին։ Բայց ոգնի։ Լսի՛ր, տաբինե, լավ լսի՛ր։ (Մոտենում է յեվ ձայնը ցածացնելով) Վերջերս ինչ-որ նոր քամիներ են գալիս հյուսիսից, յերիտասարդները սկսել են, վրացիներին հետևելով, բակվիլ այդ քամիներով, այսինքն այնպիսի դադափարների, որ միանգամայն հակառակ են մեր հասարակության շահերին։ Չեթե Արտաշեսն էլ վարակվել է, այն ժամանակ, այն ժամանակ ահա իմ իսկական դժբախտությունը։

Ես չեմ դիմանալ այդ բանին, չես Արտաշեսին կհամաձայնեցնել անձնական թշնամի։ Հասկանում ես, վորովհետև, վորովհետև, Կատարինե, ինձ համար անձ և դադափար միևնույն բաները են։ Ես իմն ասացի։ Այժմ հրամայիր քեզ ես ուզում։

ԿԱՏ.—Գնա բազար ու գնիր միս, ձուկ և ուրիշ ինչ-վոր հարկավոր է։ Այսոր Արտաշեսի ընկերները գալու չեն, ես ուզում եմ նրանց ճաշի պահել։

ՍԵՆ.—Իսկույն։ Քառորդ ժամ չանցած կվերադառնամ։ Ես պետք է մի լավ խոսեմ Արտաշեսի հետ։ (Վերցնում է գրասեղանի վրայից յայնեզր գլխարկը յեվ գնում խորհի դռնեռով)։

ԿԱՏ.—(Նայում է Սենեհերիմի յետևից)։ Ձերեխա, միշտ յերեխա...

ՏԵՍԻԼ II

Կատարինե յեվ Անահիտ

ԱՆ.—(Ներս է մտնում աջ կողմի առաջին դռնից։ Հագնված է պարզ, մոտուր յեվ վոչ անհատակ։ Դեմքի վրա նկատելի յեն անդադար աշխատանքի նեսե յեվ հոգնածություն։ Սակայն շարժումներն աշխուժ են)։ Աշակերտուհիներիս տետրակները ուղղեցի, այսոր տոն է, կարող եմ քեզ ոգնել, մայրիկ։

ԿԱՏ.—(Թախտի բարձերն ուղղելով)։ Հարկավոր չե, բավական է վոր դրսերում աշխատում ես, դոնե տանը հանգստացիր։ Անհոգ աղջիկ. դու հոգնեցիր այս հինգ տարվա մեջ շատ դասեր տալուց։ Բայց մի մոռացիր, եղբայրդ ուսումն ավարտել է ու յեկել. այժմ հերթը նրանն է աշխատելու։ (Ուրախ)։ Ա՜հ, այսուհետև հեռո՛ւ մեզնից հոգսեր, մենք բազդավոր կլինենք։ Այնպես չէ՞, Անահիտ։

ԱՆ.—Ձես յերբեք մեզ անբազդ չեմ համարել, մայրիկ, մանավանդ ինձ։

ԿԱՏ.—(Դարձյալ տխրելով)։ Ե՜հ, ասում ես ելնի, մարիկ արա հայելուն, հետս խոսիր։ Ձերևակ չե մեկել որը քսան ու չորս տարեկիդ լրացավ և դու դեռ ծնողներիդ տանն ես։

ԱՆ.—(Շարադուցելով)։ Մայրիկ...

ԿԱՏ.—Լավ, լավ, մի նեղանար, այսոր չես միտք չունեիմ սիրտ նեղացնելու։ (Ուրախ)։ Լսի՛ր, Անահիտ, առաջ ել չես միշտ մոածում նյի Ֆլորայի մասին, բայց յերեկվանից դես նա աչքիս առջևից չի հեռանում։ Կարծես նա արդեն իմ հարսն է և ես նրա սկեսուրը։ Արդեն ես յերևակայում եմ Ալմաստյանների հարստությունը Արտաշեսի ձեռքում։

Ա.Ն.—Մայրիկ, որերորդ Ալվանդյանի հարստությունը չի դրավիլը այլ ինքը։ Ֆլորան հիանալի աղջիկ է. և՛ սիրուն, և՛ խելոք, և՛ պարկեշտ։

ԿԱՏ.—Ցես շատ ուրախ եմ, վոր դու նրան այդպես հավանում ես։ Ուրեմն, ոգնիր ինձ, վոր այդ բանը գլուխ բերենք Արտաշեսի համար։

Ա.Ն.—(Վիրավորված)։ Մայր, ես խնդրում եմ քեզ միանգամ ա միշտ ազատել ինձ այդ տեսակ դերերից։ Ցես միջնորդ լինել չեմ կարող։

ԿԱՏ.—Լավ, քեչ կոտրատվիր, Ֆլորան խոմ ուրիշ չէ. ընկերուհիդ է։ Նա քեզ սիրում է և միշտ մի բան անելիս առաջ-առաջ քո խորհուրդն է հարցնում։

Ա.Ն.—Ֆլորան այնքան խելոք է և այնքան անկախ, վոր այդ տեսակ մի լուրջ բանի համար վոչ վոքի խորհուրդը չի հարցնիլ։

ԿԱՏ.—Իսկ հայրը կարող է նրա վրա ազդել։

Ա.Ն.—Հայրը նրան այնպիսի ազատություն է տվել, վորպիսին ունեն մեր որիորդներից շատ քչերը։ Միայն Ֆլորան այնքան հարգում է իր հորը, վոր հաղիվ թե ամուսնանա հակառակ նրա կամքի։

ԿԱՏ.—Վոր այդպես է, ես շատ էլ վախ չունեմ։ Ալեքսանդր Ալվանդյանը Արտաշեսին մանկությունից է սիրում։ Կարծեմ, նա մի որ ինչ-վոր ակնարկություն էլ արել է հորդ մոտ։ Բայց հայրդ ուշադրություն չի դարձրել։ Ա՛խ, այդ մարդն իր ընտանիքի թշնամին է։

Ա.Ն։—Մայրիկ, դու միշտ հարձակվում ես հայրիկի վրա։ Այդ անարդարություն է։ Հայրիկն Ալեքսանդր Ալվանդյանի մասին բարեկամն է, սիրված և հարգված նրանից։ Բայց նա այնքան աղնիվ և անշահասեր մարդ է, վոր անձնական բարեկամության խերքը չի շահագործել վոչ իր և վոչ իր ընտանիքի համար, այնպես վոր այս կողմից հայրիկին չպիտի մեղադրել։ Բայց ապահով կաց, Ֆլորան կամուսնանա միայն այն երիտասարդի հետ, վորին կհավանի և կսիրե։

ԿԱՏ.—Արտաշեսին նա կհավանի և կսիրի էլ։ Ա՜հ, Անահիտ, ով չի հավանել նրան։ Տեսնում ես ինչպես է փոխվել նրա սիրուն հասակը, գեղեցիկ ճակատը, կրակոտ աչքերը, գանգուր մազերը, բոլորը, բոլորը կատարյալ են։

Ա.Ն.—Այդ քո ճաշակով։ Ֆլորան ունի իր սեպհական հայացքը։ Այսպես, թե այնպես, չեմ կարծիքը վորևե նշանակություն ունի, խորհուրդ կտայի, մայրիկ, թողնել այդ գործը իրան. Արտաշեսին։ Դու կարող ես նրան բարկացնել, հայրիկին էլ գրգռել։

ՆԱՋ.—(Ներս է բերում սամովարը, դնում է սեղանի վրա, յեվ ավելը վերցնելով, կանգնում է խորհի դռների առջեվ)։

ԿԱՏ.—Ինչ-վոր էլ լինի, յես պետք է Արտաշեսի ուշադրությունը դարձնեմ Ֆլորայի վրա։

Ա.Ն.—Դու պիտես։ Սոնա, գալիս ես։

ՏԵՍԻԼ III

Նույնը։ Արտաշես յեվ Սեմեմերիմ

ԱՐՏ.—(Գալիս է ձախ կողմի դռներով։ Մտախոհ, խելացի դեմքով, յայց ճակատով, առողջ կազմվածքով, բանձր ու գանգուր մազերով յերիտասարդ է։ Հագած է սեվ գուլի պիջակ ու պանթալոն, կապույտ ուսանողական շապիկ, վորի վրեն մեջքին կապած է մեսախայա գոտի յերկայն ծոպերով)։ Բարի լուս։ (Ուրագ քայլերով մոտենում է ճաշի սեղանին, նստում է յեվ վոտը վոտի վրա ձգում)։

ԿԱՏ.—Բարի լուս իմ դոքտորին։ Չըմ, լավ քնեցիր։ (Սիրում է Արտաշեսի համար բեյ ածել)։

ԱՐՏ.—Հիանալի։ Յոթը որվա անքուն ճամփորդությունից յետո փափուկ անկողինն ինձ համար նեկտար եր։ Հապա, պատմեցեք ձեր կյանքից։ Ցերեք ժամանակ չունեցանք յերկար խոսելու։ (Առնում է մորից լիֆ բաժակը յեվ դնում իր առջեվ)։

ՆԱՋ.—(Սիրով նայել է Արտաշեսին)։ Բոլիդ դուրբան, կթողնես, վոր ոթադդ սրբեմ։

ԱՐՏ.—(Ցես նայելով)։ Ո՛ո, Նազանի, բարի լուս, բարի լուս։ (Վեր է կենում Նազանի ձեռը սեղմում յեվ յետ է գալիս)։ Ինչպես ես՝ լավ ես։

ՆԱՋ.—(Ծփոթված յեվ զգացված)։ Ասում եք քեզ կյանք տա, աղա։

ԱՐՏ.—Աղա՜։ Չէ, Նազանի այդ չեղավ, ինձ ուղղակի անվանիր Արտաշես։ Ավելը թող այնտեղ, յեկ նստիր։ Ուզում եմ քեզ հետ մի քիչ զրույց անել. ես ինքս իմ սենյակը կսրբեմ։

ԿԱՏ.—(Սասիկ զարմացած Արտաշեսի վարմունքից)։ Ինչպե՞ս թե դու կսրբես։ Գնա, Նազանի, գնա բանիդ։

ՆԱՋ.—(Տակավին ծփոթված)։ Ախ՛ պիտի դու սրբես, Նազանաւ ձեռները չորացի՛լ են։ (Գնում է ձախ կողմի դռներով)։

ԿԱՏ.—Մի՛թե կարելի է ծառայի հետ այդպես վարվիլ։

ԱՐՏ՝—Ինչու՞ չի կարելի՝ (Թել է խմում)։

ԿԱՏ.—Նա քո ընկերն է քե՛ հավասարը։ Մեղը ու կարագ կեր։

ԱՐՏ.—Ինձ համար բոլոր մարդիկ հավասար են։ Դևն, Անահիտ, ասա՛ ես, ի՞նչ ես լռել։ Դու հիանալի նամակներ եյիր գրում ինձ։ Զարմանալի դիտես դեպքերը հանդամանորեն նկարագրերը։ Ցես քո մի քանի նամակներից կազմել եմ թղթակցություններ մայրաքաղաքի լրագիրների համար։ Վաթսուն ռուբլի վարձ եմ ստացել, կեսը քեզ է պատկանում։ (Հաց ու պանիր է ուտում)։

ԿԱՏ.—Ի՞նչ, դու ել ես գրում լագրներում։ (Վերցնում է Արտաշեսի բաժակը նորից լեցնելու)։

ԱՐՏ.—Ցերբևս։

ԿԱՏ.—Մի՛ արա, վորդի, գրելուց խեր չկա։ Հայրդ ի՞նչ շահեց, վոր դու ի՞նչ շահիս (Բաժակը դնում է Արտաշեսի առջեվ)։ Էա ինչու՞ մեղր ու կարագ չես ուտում։ Կե՛ր (Ամանները մոտեցնում է Արտաշեսին)։ Հատկապես քեզ համար ենք առել։

ԱՐՏ.—Մայրիկ, կարծեմ, դու ինձ դեռ յերեխա ես համարում։

ԿԱՏ.—Վորդին մոր համար միշտ յերեխա յե։ Սպասիր, յես քեզ համար յուղապատառ կպատրաստեմ։ (Ուզում է պատրաստել)։

ԱՐՏ.—(Ծպտալով)։ Թո՛ղ, մայր, դու կատարյալ դայակ ես ուզում լինել ինձ համար։ Ցերևակայիր, Անահիտ, գիշերվա ընթացքում յերեք անգամ մոտ սենյակս, վոր տեսնի քնած եմ թե արթուն։ Ցես, ի՞նարկե քնած ձևացա։

ԿԱՏ.—(Անհանգիստ)։ Ի՞նչ, ուրեմն, դու լավ չե՞ս քնել։

ԱՐՏ.—(Ծիծաղելով)։ Դեմ դե, բաներս վչ՛այրի։

ԱՆՀ.—Այդ արդեն չափազանցություն է, մայրիկ։

ԿԱՏ.—Լավը, դու ինչ զաղափար ունես մայրական զգացման մասին։ (Արտաշեսին)։ Թե՛կդ խմիր, կպաղի։

ԱՐՏ.—(Կատակով)։ Ո՛հ,, դու ինձ կսպանես, մայրիկ։ Դեմ, աչքիս վրա, ինչպես կհրամայես խմել—գցած քե՛ կծռվի, բաժակիդ, թե՛ պնակով։ (Լուրջ)։ Մայրիկ, յեթե ուզում ես սիրտս շահել, այդ չե՛ միջոցը։

ԿԱՏ.—Բաս վո՞րն է, ասա, վորդի, վոր իմանամ։

ԱՐՏ.—Թո՛ղ ինձ անուշադիր, բոլորովին անուշադիր։ (Վեր է կենում)։ Դե՛, յես կերա ել, խմեցի ել, բավական է։ Ո՞ւր է հայրիկը։

ԿԱՏ.—(Դժկամակությամբ վոտի յե կանգնում յեվ սկսում է սեղանի վրայի բաները ժողովել ու պահարան դնել)։ Գնաց բազար քո հյուրերի համար ուտելեղեն գնելու։

ԱՐՏ.—Իմ հյուրերի համա՞ր։ Մի՞թե յես հյուրեր եմ հրավիրել։

ԱՆՀ.—Նեղի՛ր, այս անգամ յես մայրիկի կողմն եմ։ Նա ուզում է քո ընկերներին պատվել ճաշով։ Դու իրավունք չունես նրան այդ բավականությունից զրկելու։

ԱՐՏ.—Թող այդպես լինի, բայց ի սեր աստծու, թողեք այդ չնչին նախան ձևերը։ Առհասարակ յես ձեզ իմդրում եմ իմ մասին չհոգալ։ Այնպես կարծեցեք, վոր յես իսկի չեմ ել եկել Ռուսաստանից։

ԿԱՏ.—(Ծիծաղելով)։ Այդ խելոք խելոք խոսելը համալսարանում ես սովորել։ Ի՞նչպես թե չես եկել, քանի վոր եկել ես։

ԱՐՏ.—(Լուրջ)։ Ցեկել եմ, բայց ելի շուտով պիտի գնամ։ Ցես ժամանակավոր հյուր եմ այստեղ։

ԿԱՏ.—Շատ ուրախ եմ, վոր հանգիստ անել չես մոռացել։

ԱՐՏ.—Ցես հանգիստ չեմ անում։ Ցես կմնամ այստեղ ամենաշատը մի շաբաթ կամ տասն որ, հետո պիտի գնամ և այս անգամ... դուցե յերկար ժամանակով։ (Ցերեսը դարձնում է հուզմունքը թաղցնելու համար)։

Լռություն։

ԿԱՏ.—(Նայել է Արտաշեսին յերկարաձեվ հայացքով)։ Լսեցի՞ր, Անահիտ։

ԱՆՀ.—Այո՛, մայրիկ, նա կատակ՝ չի անում։

ԱՐՏ.—Մի՛ ընտելացիր ինձ, մայր։ Վորքան տառը վարվես ինձ հետ, հրաժեշտը թեթև կլինի թե քեզ և թե ինձ համար։

ԿԱՏ.—(Ամաչը, վոր բռնած ուներ ձեռքում, ընկնում է հատակի վրա յեվ փշրվում)։ Աբի ու յերեսդին մի հավատա։ Ցերեկ գիշեր դու մի մեծ գետի ափումն եյիր, յես մյուս ափում։ Կանչում եյի քեզ, կանչում, դու չեյիր լսում...

ԱՆՀ.—Ինչու՞ այդպես վախեցար, մայրիկ։ Նա գնում է, ելի կգա։ Ցերևի, դեռ քննությունները չի վերջացրել։

ԿԱՏ.—Վո՛չ, վո՛չ, Անահիտ, նրա խոսքերի մեջ ինչ-վոր խորհրդավոր շեշտ կա։ Մայրական սիրտը խաբել անհնարին է։ (Խոր՛ը նայում է վորդու յերեսին)։ Կարելի՞ յե իմանալ քո գնալու պատճառը։

ԱՐՏ.—Ցեթե թուլ կտաս սուտ չասել—վո՛չ, չի կարելի (Խլլում է)։

ԿԱՏ.—Ուրեմն իմ բոլոր հույսերը զուր ելին, ուրեմն, հինգ յերկար տարիներ աչքս ճանապարհին չպիտի՞ սպասեյի քեզ։

ուրեմն իմ յերջանիկ յերազները քո մասին ծռվել են ընկնում։ Ասա, ունիս դու վորդիական սեր։

ԱՐՏ.—Յես ունիմ զորավոր սեր դեպի մի մեծ պարտականություն։ Քանի վոր այդ պարտականությունը կատարված չե, չեմ կարող պատկանել վոչ միայն իմ ծնողներին, այլև ինքս ինձ։

ԿԱՏ.—Լսում ես, աղջի, յես վոչինչ չեմ հասկանում։ Բացատրիր ինձ, ինչ ե ուզում ասել։

ԱՆԱՀ.—Մայրիկ, նրա ասածն ինձ համար էլ մի հանելուկ ե։ (կտրած ամանի փշրանքը ժողովում ե, տանում դուրս խորի դռնեռով յեվ խկույցն յես ե գալիս)։

ԱՐՏ.—Մայր, մի ստիպիր ինձ ասել այն, ինչ վոր չունիմ իրավունք ասելու։ Յես ղրկվում եմ ամեն տեսակ ստերից։

ԿԱՏ.—(Թուլացած նստում ե)։ Դու այնպիսիօմի հարված ավեցիր ինձ, վոր աշխարհը գլխիս մթնեց։ Հինգ տարի սպասել և վերջը այդ լսել։ Արտաշես, Արտաշես, դու սիրտ չունիս։

ԱՐՏ.—(Հառաչում ե ծանր)։ Թող այդպես լինի։ Ներիր ինձ, յես պիտի մի քանի կարևոր նամակներ գրեմ։ (Գայլերն ուղղում ե դեպի ձախ դռները)։

ԿԱՏ.—(Ուշքը ժողովելով, արագ վոտքի յե կանգնում)։ Վոչ, կանց։ Այդ ինչու՞ այդպես ծանր հառաչեցիր։ Յես ուզում եմ իմանալ քո հոգսը։ Կյանքս տակն ու վրա մի արա. ինչու՞ համար ես փախչում ծնողներիդ մոտից։ Քննություն ունիս։

ԱՐՏ.—Վոչ։

ԿԱՏ.—Քեզ զրմե՞մ են այստեղից։

ԱՐՏ.—Վոչ։

ԿԱՏ.—Սիրահարվա՞ծ ես։

ԱՐՏ.—(Դողված)։ Վոչ, վոչ, վոչ, հազար անգամ վոչ։ Մայր, աղաչում եմ քեզ մի գլխիս ինձ նեղը քո անհանգիստ հարցերով։ Յես ճշմարտությունն ասել չեմ կարող, իսկ սուտ չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում։ (Ուզում ե գնալ)։

ԿԱՏ.—(Առաջն առնելով)։ Վորդի, ինչու՞ ես նեղանում, չե՞ վոր յես մայր եմ և դու իմ միակ վորդին ես։ Ինչու՞ ես թաքցնում ինձնից քո հոգսերը։

ԱՐՏ.—Ժամանակին ամեն բան կիմանաս, մայր, հանգիստ կաց։ Իսկ առ այժմ մի աշխատիր ոգնել իմ սրտի վրա։ Ճշտորեն կան զգացումներ, վորոնց դու չես կարող փոխել։

ԿԱՏ.—Այդ զգացումները ավելի թանգ են քան քո մայրը։

ԱՆԱՀ.—(Տեսնելով, վոր մոր հարցերը ճնշում են Արտաշեսին)։ Մայրիկ, ինչու՞ համար ես այդքան զորում։ Տեսնում ես, վոր չի ուզում ասել։

ԿԱՏ.—(Խարկացած)։ Մի խառնվիր, քո բանը չե։ (Արտաշեսին) Ասա, ավելի թանգ են քան քո մայրը։ Ասա յես մայր եմ, հասկանում ես, մայր։

ԱՐՏ.—(Դառնացած յեվ գգռված)։ Իսկ ուրիշները մայր չեն, իսկ իմ ընկերները քարից են ծնվել։ Մայրեր կան, վորոնց թշվառությունը դու երևակայել չես կարող։ Մայրեր կան, վոր բոնց առջև դու ունիս մի խոշոր պարտականություն։ Անա այդ պարտականությունն ե, վոր յես հանձն եմ առել կատարել... և պիտի գնամ կատարելու։

ՍԵՆԵՔ. (Դուրս ե գալիս խորի դռներից, աննկատելի կանգնում ե ճեմի վրա յեվ սկսում ե ականջ դնել)։

ԿԱՏ.—Ինչ՞ ես ուզում ասել, վորդի. քանի գնում, այնքան անհասկանալի ես դառնում։

ԱՐՏ.—Բայց ինչ կարող եմ յես ձեզ հասկացնել, քանի վոր ձեր աչքերը չեն տեսնում, թե ինչ ե կատարվում ձեր շուրջը։ Ինչ կարող եմ բացատրել, յերբ ձեր համար միայն նա յե թանգ, վոր մերձ ե ձեր յեսին, յերբ ձեր սրտերը չեն կարողանում ամփոփել իրանց մեջ ավելի բարձր զգացում, քան մայրական սերը։

ՍԵՆԵՔ.—(Ուրախանալով, մեկուսի)։ Ասա, վորդի, ասա։

ԱՐՏ.—(Ավելի ու ավելի վոգեվորվելով)։ Կորչեր եք դուք, վոր մայրական սեր եք տեսնում այնտեղ, ուր յեսամոլությունն և սիրում յուր ամբողջ ուժով։ Ձեր հասկացած մայրական սերը մի ախտ ե, վոր միշտ մաքառել և բարձրացուն սիրո դեմ և ջլատել ե շատ ուժեղ հոգիներ։ Վոչ, հեռու պիտի փախչել նրանից, վորպեսզի ավելի յեռանդով և ավելի արթուն մաքով ծառայես իսկական սիրուն։ Յես կատարանամ իմ աչքում, յեթե հանուն վորդիական սիրո փախչեմ իմ պարտականությունից։ Այն վեհ գործից, վոր այնքան զոհեր և տարիք և դեռ պահանջում ե...

ՍԵՆԵՔ.—(Ուրախությամբ ճռճռներ անելով)։ Ճիշտ ե. ճիշտ ե, տառապյալ ժողովրդի սուրբ գործից։

ԿԱՏ.—Ինչ պատահեց քեզ, վորդի, ով քեզ վիրավորեց, վոր այդպես բարկանում ես։ (Հանդարտ լալիս ե)։

ԱՆԱՀ. (Մի կողմ հաված, նայում ե մերթ յեղբորը յեվ մերթ հորը, վորին նկատել ե միայն ինքը)։ Մայրիկ։

ԱՐՏ.—Լաց, արտասուք, միշտ միևնույն գենքը հոգիները թուլացնելու համար։ Ահա ինչո՞ւ չես չեյի ուզում գալ այստեղ։ Մայր, հերիք և, ինչ կա, կերթամ, ելի մի որ կգամ։ Ինչ կարիք կա լաց լինելու։ Դե, հերիք և ասում եմ, ախ, միաչխատիր գլխից վռնտել գաղափարները, որոնք այնտեղ հաստատվել են առ միշտ։ Բավական և։ Շինցրած չերկաթը դժվար և արցունքներով սառցնել։ Մայր, քող, վոր իմանաս հաստատ ճնա, իմ չերդումն անխախտ։ Մի անգամ, վոր պարտականությունը կանչել և ինձ, պետք և գնամ, պետք և գնամ, պետք և գնամ։ Բավական և, ասում եմ։ Դե լավ, լաց չեղիր վորքան կամենաս, չեթե հեղել անգամ դառնա քո արցունքը, չի կարող իմ ճանապարհը կապել։ (Գնում և ձախ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ IV.

Նույնի առաց Արտաշեսի

ՍԵՆԵՔ.—(Առաջ և գալիս վոգեվորված)։ Վորդին իմն և, իմը։ Իմ ցանածը ծլել և, ծաղկել և պտուղներ և տալիս։ (Դառնալով դեպի այն դուռը, վորով Արտաշեսը գնաց)։ Որհնվի քո չիկած ճանապարհը, ավելի որհնվի այն ճանապարհը, վորով պիտի գնաս։ (Դառնալով կնոջն ու աղջկան), Ի՞նչ եք մայր ու աղջիկ քարացած մնացել։ Զլսեցի՛ք նրա խոսքերը։ Այդ վոսկի խոսքերը պիտի զրոյնված լինեն յուրաքանչյուր հայ չերիտասարդի սրտում։ Անահիտ, չե՞ս հպարտանում քո չեղբոր։ Ինչ վոր հայրդ քարոզել և խոսքով ու գրչով, նա ուզում և կատարել գործով։ Կին, տեսնում ես ինչ վորդի ունիս։ Չղկացրած չերկաթը դժվար և արցունքով սառցնել, Ցավ դու այդ խոսքերից հետո զարձյալ լաց ես լինում։ Չի՛մար ես, հիմար, ուրիշ վոչինչ։ Վորդիդ վորոշել և ծառայել մայրենի ժողովրդին, և դու լաց ես լինում։ Աա, ինչ կասես, Անահիտ, ինչո՞ւ ես լռում։

ԱՆՀ.—(Մտազբաղ)։ Հայրի՛կ, չես աշխատում եմ հասկանալ Արտաշեսի միտքը։

ՍԵՆԵՔ.—Հասկանալ, հը, ինչ անհասկանալի բան ասաց նա։ Նա հիշեցրեց իմ չերիտասարդությունը, չերբ մի այսպիսի որ հորս հետ կռվեցի և տնից փախա։ Նա ինձ նոր կյանք չընչեց, Ա՛հ, ինչ սխալված եմ չեղել չես, կարծելով, թե Աստսանը հայ չերիտասարդների մեջ ապահով և ազգային զգացումը։

ԿԱՏ.—(Աչքերը սրբելե չեվ կատպի ցայտում և Սենեբերիմին)։ Հերիք և, խելագար, հերիք և։

ՍԵՆԵՔ.—Ա՛հ, վո՛չ, հերիք չե։ Մարդու կյանքում այսպիսի չերջանիկ որերը հազիվ են պատահում։ Խելագար եմ, այո՛, գիտեմ, վոգեվորվում եմ։ Ինչ անենք, մայրս ինձ այսպես և ծնել։ Բայց դու ինձ նախանձում ես, կատարինե, այդ պարզ և։ Վորովհետև Արտաշեսն իմն և և վո՛չ քոնը։ Վորովհետև ուղածը չի ուզում քո թևերի տակ ապրիլ։ Վաղորմելի, ինչ եյիր սպասում. վոր նա վաղվանից սկսի լրագրներում հայհոյել ամառաել՝ այս ինչ բժիշկն ընդունում և այս ինչ ժամերին։ Ցերուսալեմ, յեկե՛ք, յեկե՛ք, ռուբլինները բերե՛ք, վոր ձեզ իվերին Ցերուսաղեմ ուղարկի։ Դու պահանջում եյիր, վոր նա դառնա մեկն ես յեսամոլներից, վորոնց դեմ յես այնքան կռվել եմ։ Հա, հա, գիտեմ, դու նրա համար մինչև անգամ հարսնացու ել ես պատրաստել։ Ինչո՞ւ չե, Ֆլորան սիրուն աղջիկ և. հաստատվել, պարկեշտ, հարուստ, ո՛ր, մանավանդ հարուստ։ Բայց չեղավ, դա չեղավ, նեռդ քարին դիպավ։ Արծիվը չի ուզում աղավնի դառնալ և յուր բունը հաստատել քո կառույի տակ։ Նա թռչում և հեռու, հեռու, բարձր ու բարձր։ Ցավ յես ուրախ եմ, ո՛ո, անսահման ուրախ։

ԿԱՏ.—Անսիրտ, անհոգի, անխելք, բավական և փրփրել, ինձ ել լսիր. վորդիդ ձեռքիցդ գնում և։

ՍԵՆԵՔ.—(Տակավին վոգեվորված), Աա, իհարկե, գնում և. բայց ո՞ւր, հասկանո՞ւմ ես, արդյոք։ Նա գնում և մի տառապյալ ժողովրդի դիրկը, ուր գնում են նրա ընկերները։ Նա ուխտաւնի, չլսեցի՛ր, յերդում։ Հասկանում եմ. նա բժիշկ և, խոկ այնտեղ բժիշկների մեծ կարիք կա, յես հարյուր անգամ գրել եմ այս մասին։

ՆԱԶ.—(Դուրս և գալիս ձախ կողմի դռներից յերկայն ավելը ձեռքին յեվ գնում և դեպի խորի դռները)։

ՍԵՆԵՔ.—Գնա խոհանոց, Նազանի, յես գնել եմ ամեն բան։ Բոլոր շնորքի գործ դիր և ամենաընտիր կերակուրները պատրաստիր։ Այսոր Սենեքերիմ Սահառունին առնախմբություն ունի։

ՆԱԶ.—Աչքիս վրա։ (Գնում և խորի դռներով)։

ԿԱՏ.—Լսի՛ր, դիժ, լսի՛ր, հարբած առանց խմելու. չեթե քո գլխի

վրա աստված ու կրծքի տակ խիղճ կա, մի կործանիր իմ վորդուն։ Նա իմ միակ հյուսն ե, չունիմ ուրիշը. պահիր նրան այստեղ. մի թողնիր գնալու, ապա թե վոչ՝ կփոշմանես, շատ կփոշմանես։ (Արագ բայլերով գնում ե խորհի դրան։)

ՍԵՆԵԿ.—(Հեռվից ցայելով)։ Լսո՞ւմ ես, Անահիտ։ Նա ինձ փոքր բացրել ե, ուղում ե վորդուս էլ փոքրացնել։ Բայց հուսով եմ, վոր այդ չի հաջողվի։ Ա՛ա, տրամադրությունից պիտի ոգտվել։ Իսկույն պետք ե գրել մի հոդված «շինկացրած երկաթի» վերնագրով։ (Մոտենում գրասեղանին)։

ԱՆԱՀ.—Բայց, հայրիկ, ինձ թվում ե, վոր դու Արտաշեսի ասածները սխալ հասկացար։

ՏԵՍԻԼ V

Սենեկերիմ, Անահիտ, Ֆլորա, հետո Կատարինե

ՖԼՈՐԱ.—(Գալիս ե խորհի դռներից։ Սիրուն, վայելչակազմ աղջիկ ե, կիրք ու կենդանի ձեվերով, վոր գերծ են կոկետությունից։ Հագնված ե հարուստ, պարզ, ճաշակով։ Ձեռքին ունի մի գեղեցիկ բաժակ)։ Այ քեզ նորություն։ Արտաշեսն հկել ե։ Ձեզ այդ չգիտեի։ Նազանին ասաց։ Շնորհավորում եմ, սիրելիս։ (Համբուրվում ե Անահիտի հետ)։ Պարոն Սենեքերիմ, թույլ տվեք ձեզ էլ շնորհավորել։ (Մոտենում ե յեվ աչխուժով սեղմում Սենեկերիմի ձեռը)։

ՍԵՆԵԿ.—(Դեռ չի նստել գրասեղանի մոտ)։ Շնորհակալ եմ, Ֆլորա, շնորհակալ եմ։ Դու իրավունք ունես ինձ շնորհավորելու։

ՖԼՈՐԱ.—Ես էլ նոր լուր եմ բերել քեզ համար, Անահիտ։ Գիտեմ, վոր քեզ կուրախացնի։ Հայրս այսոր ձեր ուսումնարանին նվիրեց հազար ռուբլի։

ԱՆԱՀ.—Այդ իսկ վոր շատ ուրախալի լուր ե։ Մեր ուսումնարանը մեծ կարիք ուներ։ Շնորհակալություն խեղճ աշակերտուհիների կողմից։

ՍԵՆԵԿ.—(Նստելով սեղանի մոտ)։ Ալեքսանդրը մեր որինակելի բարեգործներից մեկն ե։ Ցավ չես շատ ուրախ եմ, վոր դա իմ բարեկամն ե։

ՖԼՈՐԱ.—Բայց չես քեզ վրա բարկացած եմ, Անահիտ։ Դու ժողովարարություն ես անում Հայաստան վերադարձող զորքերի համար և համարձակվում ես ինձ մոռանալ։ Ամոթ քեզ։

ԱՆԱՀ.—Ես քեզ այնքան եմ ձանձրացրել իմ դիմումներով, վոր այլևս ամաչում եմ։

ՖԼՈՐԱ.—Ոհո, «ձանձրացրել եմ», կարծես, քեզ համար ես դիմում։ (Բաց ե անում բազկից մոտ տրած ոսկի չեվ այնտեղից փող դուրս բերելով, տալիս ե)։ Ահա, յես հայրիկից վերցրի իմ բաժինը։

ԱՆԱՀ.—(Համրելով փողը)։ Յերկու հարյուր ռուբլի։ Կատա՛ր մեր գանձապահին, նա քեզ անդորրագիր կուղարկի։ (Դնում ե պահարանի մեջ)։

ՖԼՈՐԱ.—Այժմ դիմենք գործի։ (Մի ձեռով գրկելով Անահիտին, սկսում ե նրա հետ անցուդարձ անել)։ Այդպես, ուրեմն, յեղբայրդ յեկել ե։ Յերեսակայում եմ, վորքան փոխվել ե։ Բայց նա՛ւր ե։

ԱՆԱՀ.—Զրաղված ե, շուտով, յերևի, դուրս կգա։

ՖԼՈՐԱ.—Զրաղված ե, ո՛ր, իհարկե, չե՞ վոր այժմ բժիշկ ե, դոքտոր։

ՍԵՆԵԿ.—Անահիտ, ելի՛ ով ե ձեռք տվել գրասեղանիս։

ԱՆԱՀ.—Վոչ վոք, հայրիկ։

ՍԵՆԵԿ.—(Թերթերը fրfրելով)։ Բաս ո՛ւր ե իմ «Բարոյական լափշտուներ» անունով հոդվածը։ Անա գտա։ (Պենսնեն դնելով, սկսում ե կարդալ)։

ԱՆԱՀ.—Հայրիկ, մենք քեզ խանգարո՞ւմ ենք, Գնանք իմ սենյակը, Ֆլորա։

ՍԵՆԵԿ.—Վո՛չ, վոչ, ճնացեք այստեղ։ Յես չեմ պարապում, այլ այնպես։ Ինձ հաճելի կե ձեզ լսել։

ՖԼՈՐԱ. Ասա ե՛, Անահիտ, շա՛տ ես ուրախ։ Իհարկե, մի հատիկ յեղբայրը ունենալ, հինգ տարի չտեսնել և հանկարծ մի որ տեսնել։ Յես յեղբայրը չունիմ, բայց զգում եմ ինչ ասել ե։ քրոջ սիրտ։

ՍԵՆԵԿ.—(Ձեռագիրը գրչով ուղղելով)։ Դու էլ ունեիր, Ֆլորա, դու էլ ունեիր յեղբայր։ Յերեք տարեկան էիր, յերբ նա մեռավ բակացավից։ Դավրիլը մի սիրուն տղա էր կապույտ աչքերով, դանդուր մազերով։

ՖԼՈՐԱ.—Յես հիշում եմ նրան յերազի պես։

ԱՆԱՀ.—Յես էլ։ Միտս ե, նրա սպիտակ դագաղը դուրս տանելիս հանդուցյալ մայրդ ուշաթափվից։

ՍԵՆԵԿ.—Ճիշտ այնպես, ինչպես Ալեքսանդրը յեկեղեցում ընկավ թևերիս վրա Ովսաննայի դիակը դուրս տանելիս։ Ալեք-

սանդրը սիրում եր յուր կյանքի ընկերուհուն։ Ովսաննայի մահը նրա համար սոսկալի հարված չեղավ։

ԱՆԱՀ.—*Հայրիկ, թողնենք այդ խոսակցությունը. Ֆլորան տխրում է։*

ՍԵՆԵՔ.—*(Ցեռ Նայելով)։ Ա՜ճ, ինչ, տխրում է։ Ցես չեմ թողնիլ արդելված է։ Այսոր մեր տանը տոնախմբություն է։*

ԿԱՏ.—*(Գալիս է խորհի դռներից, հագուստի թեվերը ուղղելով)։ Ֆլորա, Ֆլորիկ, աչքդ լույս, շնորհավորում եմ (Համբուրվում է)։ Վերջապես, ձեր փափագին հասաք։*

ԿԱՏ.—*(Հառաչում է, բայց ոչխասում է ուրախ ձեվանալ)։ Այո, սիրելիս, հասա... գլխարկդ վերցրու, նստիր։ Այսոր դու մեծ մոտ ես ճաշում։ Արտաշեսի ընկերները պիտի գան։*

ՖԼՈՐԱ.—*Ուրախությամբ կծանոթանամ Արտաշեսի ընկերների հետ, բայց ճաշի չեմ կարող մնալ. դուք դիտեք, տիկին Սաարինեն, վոր հայրիկս առանց ինձ չերբեք չի ճաշում։*

ԿԱՏ—*(Ցածր ձայնով յեվ խորհրդավոր)։ Գալիս է։*

ՏԵՍԻԼ VI

Նույնի յեվ Արտաշես

ԱՐՏ.—*(Գալիս է արագ քայլերով ձախ կողմի դռներից, ձեռքին յերկու ծրար)։ Անահիտ, այստեղ մտրիկ փոստարկղ կա՞։*

ԱՆԱՀ.—*Այո, ուղիղ մեր տան դեմ ու դեմ։*

ԱՐՏ—*Տար այս նամակները և քո ձեռքով դցիր։*

ԱՆԱՀ.—*(Առնում է ծրարները յեվ գնում խորհի դռներով)։*

ՖԼՈՐԱ.—*Հարգանքներս մեր մեծապատիվ դոքտորին։*

ԱՐՏ.—*(Նոր միայն նկատելով Ֆլորային)։ Ա՜. որիորդ Ֆլորա, նե՞ղություն (Ձեռ է տալիս բարեկամաբար)։ Ի՞նչպես եք իմ նախկին աշակերտուհի։ Ավարտեցի՞ք դիմնազիան։*

ՖԼՈՐԱ.—*Արդեն յերկու տարի է։*

ԿԱՏ.—*Ցեվ ինչպես. վոսկի մեդալով։ Ֆլորան ամբողջ գիմնազիայի աչքն եր...*

ՖԼՈՐԱ.—*(Հեգնորեն)։ Ցեվ իմ դուրս գալուց հետո գիմնազիան կուրացել է։ Տիկին Սաարինե, դուք միշտ ինձ շփոթեցնում եք։*

ԱՐՏ.—*Ի՞նչպես է ձեր հայրը, որիորդ։ Մի ժամանակ նա ինձ սիրում եր։*

ԿԱՏ.—*Նա այժմ էլ քեզ սիրում է և միշտ հարցնում է քո մասին։ Դու պարտավոր ես առաջին վիզիտդ նրան անել։*

ՆԵՆԵՔ.—*(Միջոց գրադված գրասեղանի հետ։ Մեկուսի)։ Հը, թըռչնորսը թակարդը դրեց։ (Ցես է մեկ անում պենսնեյի վերևից)։ Տեսնենք։*

ԱՐՏ.—*Մայրիկ, չես վիզիտներ անելու ժամդրությունն չունիմ։*

ՍԵՆԵՔ.—*(Զարախանդությամբ, մեկուսի)։ Հը, կերաք... (Ցերեսը դարձնում է դեպի գրասեղան)։*

ԿԱՏ.—*Բայց մի՞թե չես կամենալ տեսնել հորդ բարեկամին։*

ԱՐՏ.—*Այդ իմ բարոյական պարտքն է։ Ցես միշտ հարգել եմ պարոն Ալվանդյանին։ (Հրավիրելով Ֆլորային նստել, շարունակում է նրա հետ խոսել ցածր)։*

ՍԵՆԵՔ.—*Ալեքսանդրին պիտի միշտ հարգել. նա ազգասեր հոյ է։*

ԱՆԱՀ.—*(Վերադառնում է խորհի դռներից յուզված յեվ մոտենալով ծնչում է Սենեբերիմի ականջին)։*

ՍԵՆԵՔ.—*(Վախեցած)։ Մի՞թե։ (Արագ քայլերով գնում է խորհի դռներով)։*

ԿԱՏ.—*(Տեսնելով, վոր Արտաշեսը սիրալիր խոսակցում է Ֆլորայի հետ, ուրախացել է)։ Անահիտ, համոզիր Ֆլորային, վոր ճաշի մնա։*

(Ինչ-վոր վերցնում է պահարանից, գնում խորհի դռներով յեվ դարձյալ հետ է գալիս)։

ՖԼՈՐԱ.—*(Վոգեվորված)։ Մի՞թե է, Անահիտ, ինչպես մի յերեկո Արտաշեսը մեզ վախեցրեց։ Նա յուր սենյակում դասեր եր պատրաստում, մենք այստեղ թեյ եյինք խմում։ Յանկարծ լսեցինք նրա գոռոցը. «վըճ՛ժ, վրեժ պետք է առնել այդ դեռապաններից»։ Մենք վազեցինք նրա սենյակը և ինչ տեսնենք։*

ԱՆԱՀ.—*Գլուխը սեղանի վրա դրած, հեկեկում է։*

ԱՐՏ.—*(Մռայլ)։ Հիշում եմ յես այդ յերեկոն։ Դա այն գազանավառապետ Դուրազովի պատմությունն եր, վոր կարդացի ընկերոջս նամակում, և ինձ վրա ազդեց այնպես։ Նա մի դյուզի բնակիչներին ամբողջ որ պահել եր անձրևի տակ չոքած և յեսոն ծեծելով սպանել եր յերկու ծեր դյուզացիների։*

ԿԱՏ.—*Այդ տեսակ բաները յերևակայությունից ազդում եյին քեզ վրա։*

ՍԵՆԵՔ.—*(Ցեռ է գալիս խորհի դռնից ցնկատելի շփոթված)։ Արտաշես, այստեղ յեկ։*

ԱՐՏ.—*(Մոտենում է հորը)։*

ՍԵՆԵՔ.—*(Շշնջյունով ինչ-վոր ասում է Արտաշեսին)։*

ԿԱՏ.—(Զբաղեցնում է Ֆլորային)։ *Ինչպե՞ս ես հավանում Արտաշեսին։*

ԱՆԱՀ.—(Հեռվից աննկատ նայելով նորը ու յեղբորը)։ *Մայրիկ, գդակը։*

ՍԵՆԵԿ.—(Ցածր ձայնով)։ *Այդ ինչ է նշանակում։*

ԱՐՏ.—*Ինչի՞ մասին եյին հարցնում։*

ՍԵՆԵԿ.—*Վիրահիվից ես յեկել. յերբ, քանի՞ ժամանակ պիտի մնաս։*

ԱՐՏ.—*Դատարկ բան է. մի անհանգստանար. սովորական վոտիկանական հարց ու փորձ է...* (Նորից մոտենում է Ֆլորային)։

ԿԱՏ.—*Արտաշես, ճշմարիտ չե՞, վոր Ֆլորան շատ է փոխվել։ Մտիկ արա, դու այսպիսի սիրուհիներ շատ ես տեսել Ռուսաստանում։*

ՖԼՈՐԱ.—(Կարմրելով)։ *Տիկին Կատարինե, չեմ ուզում խոսել յես այս մասին ձեր առաջ չեմ գալ։* (Վեր է կենում)։

ՍԵՆԵԿ.—(Կատաղած)։ *Կին, զգույշ խոսիր։*

ԱՐՏ.—(Լուրջ յեվ խիստ)։ *Մայրիկ, յես քեզ արդեն եմ այդ տեսակ խոսակցություն իմ ներկայությամբ։ Նստեցեք, որդի՛ս. այդ մի անզգույշ դարձված է։*

ԿԱՏ.—(Վշտացած յեվ ամաչելով)։ *Դե լավ, ինչ ասացի, վոր ամեն կողմից հարձակվում եք վրես։ Դուք խում ոտարներ չեք մանկությունից եք ճանաչում միմյանց։*

ԱՆԱՀ.—*Ա՛հ, կարծեմ գալիս են։* (Շտապով գնում է խորի դռնով)։

ՏԵՍԻԼ VII

ՆՈՒՅՆՔ, ՏԻԳՐԱՆ, ՀՐԱՆՏ ՅԵՎ ՆՈՅԵՄԶԱՐ։

ՏԻԳ.—(Հեզ դեմքով, հասուս ձեվերով յերիտասարդ է, մաքուր հագնված)։ *Բարով ձեզ։* (Առաջեսին ձեռ է տալիս, մյուսներին հպարտավարի գլուխ տալով)։

ՀՐԱՆՏ.—(Բավական յերկայն խնձված մազերով, նեղ ճակատով, կզակով յեվ խորն ընկած վառ, աննկատ աչքերով յերիտասարդ է։ Հագնված է շատ անփույթ։ Անփույթ են յեվ նրա ձեվերը, յերբեմն նույնիսկ կոպիտ)։ *Վողջույն, ընկեր։* (Ամուր թափով սեղմում է Առաջեսի ձեռը յեվ հազիվ ուշադրություն դարձնում մյուսների վրա)։

ՆՈՅԵՄ.—(Մտնում է նեռս մյուսներից ուշ, Անահիտի ուղեկցությամբ։ Շիկահեր, կապույտ աչքերով, մի փիչ տղամարդավարի, բայց վոչ կոպիտ ձեվերով տրիտուր է։ Հագած է հասարակ ապակյա պարզ սեվագույն շրջագգեստ, տղամարդի ոձիր, փողկապ. պարզ գլխարկ առանց փետրի կամ ծաղիկների)։ *Բարև ձեզ։* (Առաջեսի ձեռը սեղմելով, ընդհանուրին գլուխ է տալիս)։

ԱՐՏ.—(Հասարակ ձեվով ներկայացնելով)։ *Իմ ընկերները։ Իմ ծնողներն ու քույրը։ Որիորդ Ալվանդյան։*

Միմյանց բարեվում են։

ԱՆԱՀ.—(Հյուրերին աթոռներ է տալիս)։

Վոմանք նստում են, վոմանք կանգնած մնում)։

ՀՐԱՆՏ.—(Անփույթ ընկղմվում է աթոռի վրա)։

ԿԱՏ.—(Տիգրանին)։ *Դուք տիկին Վարվառե Ներսեսյանի վորդին չե՞ք։*

ՏԻԳ.—(Գլուխ տալով)։ *Այո, տիկին։*

ԿԱՏ.—*Ավարտեցի՞ք ձեր ուսումը։*

ԱՐՏ.—*Յերկու ֆակուլտետ—բնագիտականը և իրավաբանականը։*

ՍԵՆԵԿ.—(Հռացիին)։ *Ինձ թվում է, վոր յես ձեզ մի տեղ տեսել եմ։*

ՀՐԱՆՏ.—*Անշուշտ յերկու գարադավոյների մեջ վզակոթիս տալիս։*

ՍԵՆԵԿ.—*Վա՛յ, յես ձեզ տեսել եմ մի բազմամարդ ժողովում։ Դուք ճառ եյիք ասում, շատ տաքացած եյիք խոսում, բայց բովանդակությունը մոռացել եմ։*

ՀՐԱՆՏ.—*Սարսափի անհրաժեշտության մասին։ Ինձ ուրիշ նյութ չի հետաքրքրում։ Ծխախոտ ունի՞ք։*

ՍԵՆԵԿ.—*Համեցեք։* (Առաջարկում է ծխախոտի տուփը)։

ՀՐԱՆՏ.—(Ծխախոտը վերցնում է յեվ վառում Սենեկերիմի առաջարկած լուծկուց, վոչ մի նշանով օգնություն չհայցելով)։

ԱՆԱՀ.—(Վոր ցածր խոսակցում եր Նոյեմզարի յեվ Նուռուֆարի հետ)։ *Այո, որիորդ, ուսուցչուհի յեմ թե դպրոցում և թե մասնավոր տներում։*

ՆՈՅԵՄ.—*Վարժուհությունը համակրելի արհեստ և, բայց մարդու ներվերը քայքայում է։*

ՀՐԱՆՏ.—(Անուշադիր բողնելով Սենեկերիմին)։ *Նոյեմզարն ել յերբեք տարի, յերբե կարելի յե ասել, կրթել և մատաղ սերունդը։ Բայց այն որից, յերբ վերջապես, հասկացել է, թե հրդեհի ժամանակ ալելուիա չեն յերգում, թողել է և անցել մեր բանակը։*

ՍԵՆԵԿ.—*Ձեր բանակը։ Այդ ի՞նչ բանակ է։*

ՀՐԱՆՏ.—Արտաշեսը ձեզ կբացատրի։ Թող, ձեր ծխախոտը շատ թուլ է։ (Զգում է հատակի վրա յեվ վոտով հանգցնում)։

ԿԱՏ.—(Հրացին)։ Դուք վճռեղ եք ավարտել ձեր ուսումը։

ՀՐԱՆՏ.—Տարրականը բանեում, միջնակարգը աքսորում, իսկ բարձրագույնին դեռ չեմ արժանացել։

ԿԱՏ.—(Ապշած յեվ սարսափած հետևում է Հրացից)։

ՍԵՆԵՔ.—(Միամտաբար ծիծաղելով)։ Այդ լավ ասացիք։ Հուսով եմ, վոր բարձրագույն ուսումն էլ կանցնեք հայրենիքի համար։

ՀՐԱՆՏ.—Մենք հայրենիք չունենք։

ՍԵՆԵՔ.—Ուզում եմ ասել հայ ազգի համար։

ՀՐԱՆՏ.—Մենք ազգ չենք ճանաչում։

ՍԵՆԵՔ.—(Ցնցվելով)։ Իա, ի՞նչպես թե ազգ չեք ճանաչում։ (Վոտի յե կանգնում յեվ, մի զարմացական հայացք ձգելով Հրացի վրա վոտից մինչեվ գլուխ, հետևում է)։

ՆՈՅԵՄ.—(Շարունակ Ֆլորայի յեվ Անահիտի հետ խոսում է։ Անահիտին)։ Ասում են հայ որբորդները ծայրահեղ ազգասերներ են։ Դուք էլ։

ԱՆԱՀ.—(Դրական յեվ կտրուկ)։ Այո, որբորդ։

ՆՈՅԵՄ.—Ինչու՞ այդպես խիստ յեղանակով ասացիք։

ԱՆԱՀ.—Վորովհետև պարծենում եմ դրանով։

ՆՈՅԵՄ.—(Հեգնորեն ժպտալով)։ Կեցցե՛ք։ (Դառնալով Ֆլորային)։ Գուցե դուք էլ, որբորդ։

ՖԼՈՐԱ.—Զգիտեմ. այդ մասին դեռ չեմ մտածել։

ՆՈՅԵՄ.—Մեր ժամանակում դեռ չե՛ք մտածել։ Հետաքրքրական է։ Թույլ կտա՞ք, որբորդ, ձեզ հետ մոտիկ ծանոթանալու։

ՖԼՈՐԱ.—Ուրախ կլինեմ։ Խնդրեմ մի որ չնորհ բերել մեր տուն։

ՆՈՅԵՄ.
ԱՆԱՀՏ
ՖԼՈՐԱ
} շարունակում են խոսել ցածր ձայնով։

ՆԱՋ.—(Ցերեկում է խորի դռների մեջ մի ձեռին դաշակ, մյուս ձեռում մի բադրջան, բեվերը ծալած)։ Ներեցեք, մենք ետեղ յեկ։

ՀՐԱՆՏ.—(Շտապով գնում է, Նազանուն ճշաճերով հանդիմանում յեվ նրա հետ հետևում է խորի դռներով)։

ԿԱՏ.—Հետաքրքրական է իմանալ այդ ի՞նչ պատկերներ են զարդարում այս պատերը։ (Վեր է կենում յեվ, ձեռները պանթալոնի գրպանները դնելով, մտիկ է անում պատկերներին)։

ՏԻԳ.—(Վոր շարունակ առանձին խոսակցում է Արտաշեսի հետ)։ Այդ բոլորն ապացուցանում է, վոր դու պետք է զգույշ լինես։ Վատերին արդեն բռնել են։

ԱՐՏ.—(Ցածր)։ Ճշմարի՞տ։

ՏԻԳ.—Այո։ Ցերեկ յերեկո։ (Շարունակում է ծանչյուցով)։

ԿԱՏ.—(Հետ է գալիս խորի դռներով)։ Անահիտ, կամաց-կամաց սեղանը պատրաստեցեք։

ԱՆԱՀ.—Այո, մայրիկ։ (Ֆլորային յեվ Նոյեմզարին)։ Ինձ ներեցեք։ (Սկսում է մորն ոգնել, պահարանից ճաշի սեղանի վրա տեղափոխելով ամանեներ, դանակ, պատառաքաղ յեվ այլն)։

ՀՐԱՆՏ.—Այո, այո, բոլորը միմյանց համապատասխանում են։

ՍԵՆԵՔ.—(Ֆլորային մոտենալով։ Հրացին)։ Դուք, անկասկած, ամենքին ճանաչում եք։

ՆՈՅԵՄ.—(Մոտենում է Արտաշեսին յեվ Տիգրանին)։

ՀՐԱՆՏ.—(Հեգնաբար)։ Ո՛վ չի ճանաչում հայ ազգի, այսպես կոչված, այուներին։ Ցերեկ Արտաշեսն յերեկ միայն մտած չլիներ այս տաճարը, կարելի յեր կարծել, վոր նա յել կառապաշա է։

ՍԵՆԵՔ.—Ֆլորա, նա ի՞նչ է ասում։ (Նայում է հետևից Հրացին վոտից գլուխ)։

ԿԱՏ.—(Ձախ սեղանի մոտ զբաղված)։ Անահիտ, ուրի՜ հոգի չե՛նք։

ԱՆԱՀ.—Ցոթ, մայրիկ Ֆլորան չի ուզում հետ։

ՀՐԱՆՏ.—(Նայում է պատկերներին)։ Վոչ, վոչ, այստեղ նայեցեք, շատ հետաքրքրական է, շատ։

ՆՈՅԵՄ.—(Տիգրանին)։ Այդ կոպիտը ներսունն վիրավորելու յե։

ՏԻԳ.—Զալիտ թուլ տալ։ (Բարձր)։ Հրամեցեք, աբի այստեղ։

ՀՐԱՆՏ.—Վարդան Մամիկոնյանից սկսած մինչև մեր ժամանակակիցները։ Այս ի՞նչ է, մի ներսուն, յեպիսկոպոսի միրուքով, սուրը ձեռին վրեժ է ազաղակում։ Ոհո, հո դրա՞նք յել կան, նորագույն հերոսները խորհրդավոր դեմքով։ Հատատանի փրկիչները։ Ի՞նչ ինքնահավան, անբարոյավան դեմքեր։ Աղգային բոստանի խրտվիլակներ։

ՍԵՆԵՔ.—(Բավական զգռված, մոտենում է Հրացին)։ Այդ ի՞նչ եք ասում, պարոն։ Դրանք մեր ազգային նորագույն նահատակներ են։

ՏԻԳ.—(Բռնելով Հրացի թեվը)։ Զսպիր քեզ, տեղը չե։

ՀՐԱՆՏ.—(Զսպելով, միշտ ձեռները պանթալոնի գրպաններում)։ Վո-

բը վեղարով, վորը ղրահավորված, վորը գրիչը ձեռին, վորը թուրը, պատրաստ են հարվածելու իրենց ազգի թշնամի-

ներին։ Հիմա, ահա և հայկական պատերի սովորական պատառը— «Վոգի Հայաստանի»։ Մի հաստավիզ բուրժուա գեղեցկուհի ավերակների վրա նստած։ (Դադարում է նայել), սիրահարված ինքն իր գեղեցկության վրա։

ՍԵՆԵՔ.—*(Հազիվ զսպում է կատաղությունը)։ Այդ ինձ նվիրել է իմ նախկին աշակերտուհիներից մեկը։*

ՀՐԱՆՏ.—*Վորին, անշուշտ, կրծել եք այդ նկարի վոգով։*

ՍԵՆԵՔ.—*Թեկուզ այդպես, յերիտասարդ պարոն, թեկուզ այդպես, ի՞նչ կասեք, արդյոք։*

ՀՐԱՆՏ.—*(Կոծ)։ Այն կասեմ, վոր այդ մինչև անգամ ազգասիրություն չե, այլ ազգամոլություն։*

ՍԵՆԵՔ.—*Վորին, հանուլ եմ, դեմ չեք դուք և վոչ մեկը ներկա յեղողներից։*

ՀՐԱՆՏ.—*Հրաժարելով հրաժարիմք ի մոլորություններ։*

ՏԻԳ.—*(Ուժգին ֆռշելով Հրացի թեվը)։ Լռելու յես, վերջապես, թե չե։*

ԱՐՏ.—*(Մի անկյունից անհանգիստ դիտում է)։*

ՍԵՆԵՔ.—*Ահա թե ինչ, ուրեմն դուք...*

ՀՐԱՆՏ.—*Մենք այդ բոլորը պիտի դցենք պատմության արխիվը և փոխարենը մեր պատերին պիտի կախենք աշխատավորի պատկերներ իր կոշտ ձեռներով և խորշոմած ճակատով։*

ՆՈՑԵՄ.—*(Անհանգիստ)։ Հրանտ, այդպես չի կարելի։*

ՀՐԱՆՏ.—*(Խիստ յեղանակով)։ Հապա ի՞նչպես, յերկար տարիներ մարդիկ մոլորեցրել են ժողովրդին, պահել են խավարի մեջ, մի՞թե բավական չե։*

ՍԵՆԵՔ.—*Լսում եք, յերիտասարդներ և որիորդներ։ Լսում եք, Արտաշես։ Այդ տղան քո ընկերը չե, սխալմամբ և մոլի այստեղ։ Ո՞վ և մոլորեցրել, պարոն, ով...*

ՀՐԱՆՏ.—*Բոլոր այդ յերևելիները, մեր պապերը, հայրերը, դուք, սերնդի սերունդ, համառ մոլեռանդությամբ։*

ՍԵՆԵՔ.—*Անամոթ, այդ ի՞նչ և ասում։*

ԱՆԱՀ.—*(Մոտենալով ետևը)։ Հայրիկ, մի վրդովվիր։*

ԿԱՏ.—*(Շփոթված)։ Այդ մարդը հյուրերին պատվել չգիտե։ Մի՛ վեճ։ (Գնում է խորհի դռներով)։*

ՆՈՑԵՄ.—*Մոտեցել է Արտաշեսին)։ Յես ցավում եմ, վոր այդ կոպիտին հետս բերեցի։*

ՅԼՈՐԱՆ.—*(Շփոթված դիմում է մերթ մեկին, մերթ մյուսին)։*

ՍԵՆԵՔ.—*(Ձակատը շփելով)։ Այդպես չի կարող լինել։ Այստեղ մի թյուրիմացություն կա։ Մի՞թե և Թուլացել, թե ականջներս լավ չեն լսում։ Բայց նա պարզ խոսեց, հասարակ, անկեղծորեն։*

ԿԱՏ.—*(Ցես է գալիս խորհի դռներով)։ Ճաշը պատրաստ է։*

ԱՆԱՀԻՏ.—*Խնդրեմ, նստեցեք, պարոններ։ (Նոյեմբարին)։ Խընդրեմ, որիորդ։*

ՅԼՈՐԱ.—*Ինձ ներեցեք։ Ցտեսություն։ (Գլուխ է տալիս յեվ գնում է խորհի դռներով, մեռժելով կատարիճեյի բախանձը, վոր դրուճերի մոտ մի անգամ յեկա աչխատում է նրան համոզել ճաշի մնալու)։*

ՏԻԳ.—*(Բռնելով Հրացի թեվը, տանում է բեմի խորը)։ Դու բոլորովին տակտ չունես։ Դու մինչև անգամ կոպիտ ես։*

(Այստեղ միևչ Արտաշես ու Սենեբերիմը խոսում են ավանսեճի վրա, բեմի խորում Կատարինեն աչխատում է Հրացին համոզել ճաշի մնալու։ Անահիտը խոսում է Նոյեմբարի յեվ Տիգրանի հետ)։

ՍԵՆԵՔ.—*(Աչխատել է իրան զսպել։ Բռնում է Արտաշեսի թեվիցը յեվ ֆռում նրան դեպի ավանսեճ)։ Արի այստեղ։ Ի՞նչ ասաց այդ տղան։*

ԱՐՏ.—*(Մոայլ)։ Ներողամիտ յեղիր, Հրանտը հայտնի յե իր կոպտությամբ։*

ՍԵՆԵՔ.—*Աա, հայի կոպտությունով ինձ չես կարող զարմացնել։ Նրա ասածների միտքն և գլխավորը։ Աասա, նա քո ընկերն և։*

ԱՐՏ.—*Այո։*

ՍԵՆԵՔ.—*Դու համաձա՞յն ես նրա ասածների հետ։*

ԱՐՏ.—*(Կամենալով հեռանալ)։ Այդ մասին հետո, պետք չե ճաշելուց։*

ՍԵՆԵՔ.—*Վոչ, վոչ յես չեմ կարող ճաշի նստել մինչև վոր չիմանամ ով ես դու, ովքեր են քո ընկերները։*

ԱՐՏ.—*(Հանգիստ)։ Իմ ընկերները, հայրիկ, իմ գաղափարակիցներն են։ Յես ուրիշ ընկերներ չեմ ճանաչում։*

ՍԵՆԵՔ.—*Բայց այդ տղան այն չասաց, ինչ վոր դու այստեղ մի ժամ առաջ։ Յերբ դռների մոտից լսեցի քո վեճը մորդ հետ,*

յերբ ականջիս հասան քո կրակոտ խոսքերը, հափշտակվեցի, ուզում էի հարձակվել քեզ վրա, դրկել, համբուրել։ Դու անցար քո սենյակը և ես ասացի. «ահա իմ զավակը, ահա իմ իսկական ժառանգը»։

ԱՐՏ.—Ինչի՞ մասին էին իմ խոսքերը, հայր։

ՍԵՆԵՔ.—Մեր վեհ գործի մասին, այնպես չե՞։

ԱՐՏ.—Ձեր վեհ գործը մերը չէ, իսկ մեր գործով դու չես կարող հափշտակվել։

ՍԵՆԵՔ.—Ուրեմն, մենք ոչքեր ենք, դու և ես։

ԱՐՏ.—(Սառը)։ Դու և ես, հայր, բոլորովին տարբեր աստվածներ ենք մենք պաշտում։

ՍԵՆԵՔ.—(Բռնելով վարդու ոձիրը)։ Հա՞յ ես դու, թե չե՛...

ԱՐՏ.—Ձես ազգությունն չեմ ընդունում։

ՍԵՆԵՔ.—(Բաց թողնելով Արտաշեսի ոձիրը, ձեռը հենում է արքայի մեջքին յեվ բարձր ու դողդոջուն ձայնով)։ Անիծվի՛ր դու։

ԲՈԼՈՐԸ.—(Բեմի խորից ապշած նայում են)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Այվազյանների բնակարանը։ Ընդարձակ հյուրասենյակ, խորհում յերկու դռներ, վառոցից աջ կողմինը տանում են սեղանատուն, ձախինը Ֆլորայի սենյակը։ Աջ պատի մեջ յեվս յերկու դռներ, ավանսեն կողմինը դեպի Ալեքսեյի առանձնասենյակը. յերկրորդը դեպի նախասենյակ։ Ձախ պատը ներկայացնում է յերկու լուսամուտ, վառոցց միջով դռներ դեպի պատգամբ։

Բեմի մեջտեղում կլոր սեղան, գունավոր ոլոռոցով ծածկված, վրեն գեղեցկակազմ ալբոմներ յեվ պատկերազարդ հանդեսներ. հովը յերեք կիսաբազկաթոռներ։ Աջ պատի յերկու դռների միջով գանվում է Ֆլորայի յեվ բազկաթոռներ։ Դահլավորակի վերեվում կախած է Ֆլորայի հանգուցյալ մոր մեծադիր պատկերը։ Հատակի վրա գորգեր, պատերի վրա նկարներ։ Խորի պատի առջեվ նայելի։ Ամենուրեք փոքրիկ յեվ մեծ ծաղկամաններ։ Ձախ պատի մոտ, լուսամուտի առջեվ պիանո։ Վառարան չի յերեվում. մի գեղեցիկ եկրան ծածկում է յերկաթե օդակիրը (caloriférе)։

ՏԵՍԻԼ I

Դահլեի յեվ Սոֆիա

ՍՈՖԻԱ.—(Ցերիտասարդ, աչխույժ աղջիկ է։ Վարագույրը բարձրանալիս կարմիր փեսուրներից կազմած փոռեվանով սրբում է բազկաթոռները փոշուց յեվ կարգի յե բերում հյուրասենյակը, հանդարս յերգելով)։

ԴԱՆԻԵԼ.—(Կարմիր այտերով, մեծ բրով յերիտասարդ է։ Հագած է պիջակ, ոսկած շապիկ։ Մեջքին կապած է սպիտակ գոգնոց։ Պատգամբի դռներից ներս է բերում մի մեծ ծաղկամաճ յեվ ցնցնցալով դնում է մի անկյունում)։ Հըը հը՛, ես էլ պրծանք։ Վալլահ, ես ծաղիկները հոգիս բերանս բերին։ Ասում ուած որը այսուս բեր, Ջրիր ու ներս բեր, «Նակաղանի, բոլորը նիչավո»)։

*) Աղավաղված ռսերեն կընշանակե—«պաշիժ ե. ուրիշ վոչինո»։

(Ձակատի hրահիմբ սրբում է գոգնոցով)։

ՍՈՖ.—Քիչ է մնում հա, շոքերը մոտենում են, շուտով կհավաքեն, կըտանեն պարտիզ մինչև հոկտեմբեր։

ԴԱՆ.—Յանի վոր ամառ-ձմեռ բաղում թողնեն հաթամամութ կինի։ Հըսկանում չեմ, տա տուն ա, թա բոստան։ Մտել յեչի, կասես Փիթռովանց բնդչան լինի։ Մախլաս։ (Գլուխը շարժելով, դիմում է աջ պատի յերկրորդ դռներըն)։

ՍՈՖ.—Դանիե՛լ...

ԴԱՆ.—(Կանգ է առնում, բայց յես չի նայում)։ Հա, հինչ ըս ըզում։ Ջալդ ասա, պեն ռնիմ։

ՍՈՖ.—(Մոտենալով, ցածր ձայնով)։ Այն ով է նստած պարոնի սենյակում։

ԴԱՆ.—Հինչ գիտամ, մի չեշմեադյավոր մարդ ա քյաչալ գլխով։ Որիշ։

ՍՈՖ.—Յես յերեկ այստեղ չեյի. Արտաշեսն եյի յեկել եր։

ԴԱՆ.—Պա յես քեզ համար շպիոն*) ը՞մ, թա կուբիներ։ Յես հինչ գիտամ յեկել ա թա վոչ։ Ութ ըս հարցնում։ (Նայում է Սոֆյային)։

ՍՈՖ.—Հենց այնպես։ Այդ աղան այս առնը վոտ դնելուց հետո որիորդը փոխվել է։ Տխուր-տրտում որը մինչև յերեկո նըստած և յուր սենյակում։ Յերեկ պարոնը հարցրեց. Ֆլորա այս ամառ վիրտեղ ես ուզում, վոր քեզ համար ամարանոց վարձեմ»։ Որիորդը պատասխանեց. «Վոչ մի տեղ»։ Ուրեմն, այս տարի մենք ամառանոց չենք գնալու։

ԴԱՆ.—(Զայրացած)։ Ըմբո, հոնց թա քինիլական չընք։ Գործդրալ կանեմ։

ՍՈՖ.—(Ծիծաղելով)։ Մեն-մենակ։

ԴԱՆ.—Պա հոնց։ Պա յես եղ խաբարա շհարի շոքում պըտի հարվիմ հունց վոր մեղրամոմ։ Ամա հավատալ մի, ադան ուժա[1]) կիոլոսկում դաչ[2]) ա փոնալ։ Յեղիլ մի, քո բարիշնան վարսիա[3]) ա անըմ։ (Գնում է աջ կողմի յերկրորդ դռներով)։

---

*) Լրտես։

1) Ուժա—արդեն։ 2) Դաչ—ամառանոց։ 3) Փարսիտ ա անըմ—կտարտամում եմ։

ՏԵՍԻԼ II

Ալեխանդր յեվ Սոֆիա

ԱԼԵՔՍԱՆԴՐ—(Ալեխառն ընչացքով, հասակ սափրած յերեսով, բարի յեվ խելացի դեմքով մարդ ե։ Հագած ե սեվ գույնի ժակետ, պանթալոն յեվ ժըլետ։ Ձեվերը ծանրաբարո յեվ հանգիստ են։ Դուրս ե գալիս ծանր քայլերով աջ կողմի առաջին դռներից)։ Ֆլորան տանն ե։

ՍՈՖ.—Այո։

ԱԼ.—Խնդրեցեք նրան այստեղ գալ։

ՍՈՖ.—Իսկույն։ (Գնում ե խորքի ձախ դռներով)։

ԱԼ.—(Ծանր քայլերով մոտենում է լուսամուտին, նայում է դուրս, ապա յես ե գալիս յեվ նայում ե գանավորակի վերեվում կախած պատկերին յեվ ծանր հառաչում։

ՏԵՍԻԼ III

Ալեխանդր յեվ Ֆլորա

ՖԼՈՐԱ.—(Դուրս ե գալիս խորքի ձախ դռներից։ Հագած ե ցնայիճ պարզ հագուստ։ Նկատելի տխուր ե)։ Հայրիկ։ (Համբուրվում ե)։ Այսոր քեզ առաջին անգամն եմ տեսնում։ Դու զբաղված եյիր քո սենյակում մի պարոնի հետ։

ԱԼ.—Նստիր, Ֆլորա, քեզ հետ գործ ունիմ։ (Նստում ե կիսաբազկաթոռներից մեկի վրա։

ՖԼՈՐԱ.—(Նստելով նորա դեմ)։ Հրամայիր, հայրիկ։

ԱԼ.—Յես կատակ գրել սվեցի...

ՖԼՈՐԱ.—(Անհանգիստ)։ Հայրիկ...

ԱԼ.—Մի տխրիր, աղջիկս, մահը մերն ե, մենք մահինը։ Վաղուց եր հարկավոր։ Արդեն մոտենում եմ վաթսունին և շատ եղ առողջ չեմ զգում ինձ։ Քանի խելքս գլխումս ե, պետք ե հոգամ քո մասին։ Կատակիս ընդհանուր բովանդակությունն այս ե. կարողությանս կեսը տալիս եմ զանազան ազգային գործերի համար։ Ի միջի այլոց, հանգուցյալ մորդ անունով կբացվի մի ուսումնարան և կպահվին վարդեգիրներ։ Մանր-բամասնությունների հետ կծանոթանաս մահից հետո։ Միայն կեսը կարողությանս, վոր հորից եմ ժառանգել, այս տան հետ թողնում եմ քեզ համար։ Կատակատար նշանակում եմ իմ բարեկամ Սենեքերիմ Սահառունուն, միակ ան-

շահասեր մարդուն, վոր ճանաչել եմ կյանքիս մեջ։ Համաձայն եմ։

ՖԼՈՐԱ.—Հայրիկ, քո կամքն ինձ համար որենք է։

ԱԼ.—Վոչ, Ֆլորա, այդպես չե։ Դու դիտես, վոր չես բռնակալ հայրերից չեմ։ Մանկությունիդ քեզ պահել եմ ազատ և, պոհությունն ասածու, այսոր տեսնում եմ, վոր աղատությունը դու ի չարը գործ չես դրել։ Բայց գլխավորն այս չե, Ֆլորա. չես ունեի մի մեծ հոգս. ահա այս մասին է, վոր ուզում եմ քեզ հետ խոսել բարեկամաբար։ Ասա ինձ, Ֆլորա, դու չես մտածում ամուսնանալու մասին։

ՖԼՈՐԱ.—(Ծիծաղելով)։ Հայրիկ...

ԱԼ.—Մի ամաչիր, դու լրիվ չես։ Յես փափագում եմ վիճակը կարգավորված տեսնել, հետո մեռնել։ Ֆլորա, ձեմ ես հասնել մեր լրիտասարդների մեջ։

ՖԼՈՐԱ.—(Ավելի ծիծաղելով)։ Գիտեմ, հայրիկ ..

ԱԼ.—Աա, մի քաշվիր։ Յես քեզ համար վոչ միայն հայր եմ, այլ և մայր։ Ծերությանս մի նայիր, հոգով այնքան էլ խավար չեմ։

ՖԼՈՐԱ.—Հայրիկ, կկամենայի, վոր իմ հավանածը նախ և առաջ քեզ դուր գար։ Ահա բոլորը, ինչ վոր կարող եմ ասել։

ԱԼ.—Ապրիս։ Վոր այդպես ե, ուրեմն կարող ենք մի համաձայնության գալ։ Տասը տարի չե, վոր մաքումս վորոշած ունեմ քո փեսացուն։

ՖԼՈՐԱ.—(Անհանգիստ)։ Հայրիկ...

ԱԼ.—(Ծպտալով)։ Հանգիստ կաց. իմ ընտրելին իսկ և իսկ քո հավանածն է։ Ինչու՞ չես կարմրում, տեսնում ես, վոր չեմ բարկանում։ Ֆլորա, չես ել գիտեմ, վոր ամուսնական կյանքիդ երջանկությունը վոչ փողի հետ է կապված և վոչ դիրքի ու ծագման։ Փառք աստծու, դու այնքան ունես, վոր բավական է քեզ ել ու քու ամուսնուն ել։ Արտաշեսը աղքատ ընտանիքի զավակ է, բայց Սենկտպետերբուրգի վորդին է։ Նա այնքան բարոյական է ու մաքուր, վորքան կյանքդ հայրը։

ՖԼՈՐԱ.—Բայց դու նրան լավ չես ճանաչում, հայրիկ։ Ջի՞ վոր հինգ տարի չի չես տեսել նրան։

ԱԼ.—Իմ հասակի մարդու համար, սիրելիս, բավական է մեկի հետ կրկու անգամ խոսել, վոր նրան ճանաչի վոտքից մինչև գլուխ։ Արտաշեսը կրկին-չորս անգամ կեկել է ինձ մոտ կյանքի հարգանքները հայտնելու։ Յես կրկնակի խոսել եմ հետը,

ՖԼՈՐԱ.—(Անհանգիստ շարժումներ է անում)։

ԱԼ.—Մի վախենար, քո մասին չենք խոսել։ Նա, իհարկե, փոխվել է, շատ է փոխվել։ Նա այժմ կատարյալ տղամարդ է, բայց նրա սիրտը և հոգին չեն փոխվել։ Ֆլորա, Արտաշեսը նման չե մեր այն յերիտասարդներին, վորոնք Ռուսաստանից կամ Յեվրոպայից վերադառնում են... հոգով ել մարմնով ել ապականված։ Յես շատերի հետ եմ խոսել և վոչ մեկն ինձ վրա այնպիսի լավ տպավորություն չի արել։ Յես իմ աչքերի, Ֆլորա, այժմ հերթը քոնն է։ Յես լսում եմ, ասա, վոչ մի բան մի թաքցնիլ։

ՖԼՈՐԱ.—Հայրիկ, քեզ նման հորից գաղտնիք ունենալը հանցանք է։ Յես Արտաշեսին հավանում եմ—ճշմարիտ է, բայց այս է բոլորը, ուրիշ գաղտնիք չունիմ։

ԱԼ.—Ուրեմն ձեր մեջ խոսակցություն չի՞ յեղել։

ՖԼ.—Վոչ։

ԱԼ.—Ցավ վոչ մի ափնարիկ նրա կողմից։

ՖԼՈՐԱ.—Վոչ։

ԱԼ.—Նա համակրում է քեզ։

ՖԼՈՐԱ.—Գիտեմ։ Նա ինձ հետ վարվում է առաջվա պես, ինչպես յուր քրոջ հետ, պարզ, հասարակ, բայց վերին աստիճանի համեստ։ Հայրիկ, նա շատ մտախոհ է։ Ինձ թվում է վոր նրա հոգու վրա ծանրանում է մի մեծ հոգս։

ԱԼ.—Նա ինձ ասում եր, թե այստեղ չի մնալու։

ՖԼՈՐԱ.—Այո, նա շուտով գնալու յե, գուցե վաղը կամ մյուս որը։

ԱԼ.—Ո՞ւր։

ՖԼՈՐԱ.—Գիտեմ։

ԱԼ.—Եհ. տեսը նրա հետ, վոր գնում է։ Ֆլորա, մի շտապիր, լավ մտածիր ապագայիդ մասին, չես քեզ տալիս եմ կատարյալ ազատություն։ Բայց ընտրությունդ շատ ել մի հեռատեսությամբ արա։ Այս գիշեր դարձյալ յերազումս մորդ տեսա։ Այս տաճդիր։ Այս գիշեր դարձյալ յերազումս մորդ տեսա։ Այս յերրորդ անգամն է, վոր նա կանչում է ինձ յուր մոտ։ (Վեր է կենում)։

ՖԼՈՐԱ.—(Վեր է կենում տխրելով)։ Հայրիկ, այդպես մի խոսիր։

ԱԼ.—(Մոտենում է յուր կնոջ պատկերին)։ Ահա նա յուր հեզ կերպարանքով։ Ի՞նչպես նա բարի յեր, Ֆլորա։ Նրան ամենքը հարգում եյին ու սիրում։ Նա յել յուր հոր մինակ զավակն

եր քեզ պես։ Նրա հայրը մի աղնիվ դինվորական եր։ Լավ կին եր հանգուցյալը։

ՖԼՈՐԱ.—*(Նույնպես զգացվել է)։ Ուզի տարի չե մեռել է, այսոր էլ աչքերիս առջև է նրա դագաղը ծաղիկներով ծածկված։ (Թաշկինակը մոտեցնում է աչերին)։*

ԱԼ.—*(Հոգումը զսպելով)։ Դու լաց յեղար... Այդ չեղավ։ Մի նայիր ինձ, յես ծեր եմ։ Լացը քեզ չի սազում, ուրախ կաց։ Այդպես։ Ուշադրություն մի դարձրու ինձ, վերջերս նեվրս մի քիչ թուլացել են։ Դե, յեթե սիրում ես ինձ, նստիր, և մի ուրախ բան նվագիր։ Իսկ յես պիտի գնամ նոտաների մոտ կոտակիս սրբագրությունը կարդալու։ Հետո պետք է Սեննեքերիմին տեսնեմ։ Լսեցիր, նստիր ու մի ուրախ բան նվագիր։ Ծրտեսություն։ (Համբուրում է Ֆլորային ու գնում աջ կողմի յերկրորդ դուներով)։ Նվագիր, յես սիրում եմ, յերբ դու ինձ համապարհ ես դնում և ընդունում յերաժշտությամբ։*

ՖԼՈՐԱ.—*(Ուղեկցում է նորը միջնեվ դուներր, նայում է նեեվից)։ Բարի մարդ։ Նա դեռ չգիտե... (Մոտենում է դաշնամուրին, միանցի վայրկյան նվագում է ուրախ յեղանակ։ Նուտով վեր է կենում, լուսամուտով նայում դուրս)։*

Նախասենյակից լսվում է ելեֆտրական զանգի ձնչյուն։

ՖԼՈՐԱ.—*(Ցնցվում է յեվ յես նայում)։*

ՍՈՖԻԱ.—*(Դալիս է խորհի ձախ դուներից)։ Որիորդ, ամենն եր։ (Գնում է նախասենյակ)։*

ՖԼՈՐԱ.—*Այո, այո։ (Մեկուսի)։ Սիրտս վկայում է, վոր նա յես։ (Շտապով գնում է խորհի ձախ դուներով յեվ իսկույն յես է գալիս մի փոքրիկ արկղիկ ձեռքին։ Արկղիկը դնում է դաշնամուրի վրա յեվ նայում է դեպի նախասենյակի դուները)։*

ՏԵՍԻԼ IV

Ֆլորա յեվ Արտաշես

ԱՐՏԱՇԵՍ.—*(Դալիս է աջ կողմի յերկրորդ դուներից։ Նկատելի հուզված է։ Հագած է նույն հագուստը, միայն կապույտ շապկի փոխարեն ոսկած շապիկ յեվ ժիլետ)։ Ֆլորա, բարև։ (Սեղմում է Ֆլորայի ձեռը բնկերաբար, մյուս ձեռում պահած յայնեզր փափուկ գլխարկը նված)։*

ՖԼՈՐԱ.—*Բարև։ Այդ ինչու համար դողում ե ձեր ձեռը։ Գրող կգամ, վոր դարձյալ ընդհարվել եք ձեր հոր հետ։*

ԱՐՏ.—*Ձեզ սխալվում։ (Նստում է մեջտեղի կիստրազկարոռներից մեկի վրա)։ Ընդհարվեցի, այո, և այս անգամ այնպես, վոր նա ինձ անվանեց ազգավաճառ։*

ՖԼՈՐԱ.—*Մի թեթև։ Չեյի կարծում, վոր գաղափարների տարբերությունը կարող և այդպես գրգռել հայրերին ու զավակներին միմյանց դեմ։ (Նստում է Արտաշեսի դեմ)։*

ԱՐՏ.—*Իմ հայրը մալևոանդ հայ է—յես ճանաչում եմ համամարդկայինը։ Նա համառ է յուր սկզբունքների մեջ—յես վոչ մի քայլ չեմ զիջում նրան։ Ինչպես նա յե ուղղամիտ և շիտակ—նույնպես և՛ յես չեմ կարող կեղծել։ Այս տեսակ հակառակորդների մեջ հաշտություն չի կարող լինել։*

ՖԼՈՐԱ.—*Բայց հարդանք կարող է լինել։*

ԱՐՏ.—*Ցեթե հարգանքը մի զգացում է և վոչ ձև, ապա այն չպիտի սպավաղել։ Իմ կարծիքով իսկական հարգանք կարելի յե ունենալ դեպի այն մարդիկ, վորոնց գաղափարներն էլ հարգում ես։ Ի հարկե, յես իմ հորը հարգում եմ իբրև ծնողի, բայց յեթե այդպես շարունակվի, հազիվ թե կարողանամ պահել իմ զգացումը։ Նա պահանջում է, վոր յես խոսեմ ու գործեմ հակառակ իմ դաղափարների։ Այդ չի կարող լինել, իրավ։ Բայց Թողնենք. Ֆլորա, զլուխս պայթում է վիճաբանություններից։*

ՖԼՈՐԱ.—*Դժբաղդաբար, յես չգիտեմ ինչպես զբաղեցնեմ ձեզ։ Ցեթե առաջվա Արտաշեսը լինելիք, գուցե կարողանայի...*

ԱՐՏ.—*Ցեթե առաջվա Արտաշեսից իմ մեջ վոչինչ մնացած չլիներ, այս տունը վոտք չէրպիտի դնեյի։ Այն ինչ պատանեկան հիշողությունները գրեթե ամեն որ ինձ քաշում-բերում են այստեղ հակառակ իմ սկզբունքների։*

ՖԼՈՐԱ.—*Հակառակ ձեր սկզբունքների։ Ջեմ հասկանում ձեր միտքը։*

ԱՐՏ.—*Համեմատեցեք մեր դիրքերը, կհասկանաք։*

ՖԼՈՐԱ.—*Ուզում եք ասել, վոր ձեր սկզբունքներն արհամարհում են մեզ նմաններին ծառթությունը, այո։*

ԱՐՏ. *Ֆլորա, մեր կռիվը, հարստության դեմ լինելով, կամ ակամա և՛ հարուստների հեմ է։*

ՖԼՈՐԱ.—*(Մի քիչ վշտացած)։ Իմ հայրը յերբեք վոչ վոքի չի զբկել, չի հարստահարել։ Նրա հարստության մի մասը հայրական է, մյուսը բաղդի բերմունք։*

ԱՐՏ.—*Բայց սեփականություն է, չե՞։ (Վեր է կենում)։*

ՖԼՈՐԱ.—Ցենթադրենք, թե այդ սեփականությունը չունինք ադքատ ենք, այն ժամանակ։ (Վեր է կենում)։

ԱՐՏ.—Այն ժամանակ ես ավելի համարձակ վոտք կդնեյի այս տուն։ Այն ժամանակ իմ պատանեկան կյրջանիկ անցյալն ավելի հաճույքով կհիշեյի։ Այն ժամանակ այն միքանի որերը, վոր ես այստեղ պիտի ինայի, ինձ համար մի տեսակ ամբողջ կերկիմության և խղճի խայթոցների որեր չեյին լինիլ։

ՖԼՈՐԱ.—Լսեցեք, այսոր հարս յուր կարողության կեսը կտա կեց բարեգործական նպատակներով. մյուս կեսն ինձ է պատկանելու։ Ցենթադրենք, վոր մի որ վերցնում եմ և իմ ունեցածը տալիս եմ ձեզ, ինչ կանեյիք. գնալ կշպրտեյիք։

ԱՐՏ.—Ֆլորա, յերեխա չեք դուք։ Թշնամու զենքը խլելով, նույն թշնամու զինակիցների դեմ են գործում։ Մենք ունինք մի մեծ գործ, վոր բացի անձնազոհությունից, պահանջում և և՛ դրամ։ Այս այն զենքն է, վոր պակասում է մեզ։

ՖԼՈՐԱ.—Պահանջեցեք, դուցե տան ձեզ այդ զենքը։

ԱՐՏ.—Ուժից։

ՖԼՈՐԱ.—Գիտեք ինչ, ինձ համար խնդալս մուրթն և այդ գործը, վորի մասին խոսում եք։ Բայց յես հավատում եմ, վոր լավ գործ է, վորովհետև դուք էլ խառն եք։ Յես ձեզ եմ միայն հավատում և վոչ այդ կոպիտ Հրանտներին։ Պահանջեցեք, և յես կտամ վորքան կարող եմ, այսինք բոլորը, ինչ-վոր ունիմ։

ԱՐՏ.—Մի խոստանաք այն, ինչ-վոր ձեր ուժերից վեր է։ Ցնդել են մեծ զոհաբերություն անող կանայք, բայց դուք կլինեք այնպես սիներին փնտռել հայերի մեջ։

ՖԼՈՐԱ. Շնորհակալ ենք ձեր հաճոյախոսության համար։ (Մոտենում է պահնոյին յեվ այնտեղից վերցնում արկղիկը)։ Լսեցեք, իմ այժմյան ամբողջ հարստությունն այս արկղիկի մեջ է։ Այս իմ մոր քարեղեններն ու վոսկեղենն են, վոր այժմ պատկանում են ինձ։ Հայրս իրավունք չունի նրանց վրա։ Ներեկ յես վորոշեցի այս բոլորը նվիրել ձեր ազատյալ ընկերների օգտին։ Վերցրեք և գործածեցեք, ինչպես կամենաք։ (Արկղիկը դնում է մեջտեղի սեղանի վրա)։

ԱՐՏ.—(Վերցնում է արկղիկը յեվ բաց անում)։ Ֆլորա, դուք կատակ եք անում։

ՖԼՈՐԱ.—Վոչ, պարոն, յես այդ տեսակ բաների հետ կատակ անել չեմ կարող։

ԱՐՏ.—Այստեղ մի ամբողջ հարստություն կա. լավ մտածեցեք։

ՖԼՈՐԱ.—Յես բոլորը մտածել եմ և այնպես վճռել. վերցրեք։

ԱՐՏ.—Վոչ, յես չեմ կարող ընդունել մի այդպիսի նվեր։ (Դնում է արկղիկը սեղանի վրա)։

ՖԼՈՐԱ.—Գնանք։

ԱՐՏ.—Դրանք նվիրական բաներ են, կապված ձեր մոր հիշատակի հետ։

ՖԼՈՐԱ.—Մի վախենաք, մայրս ինձ չի անիծել գերեզմանից, այլ կորհնի այս զոհաբերության համար։ Նրա սիրտը բարի յե և ընդարձակ։

ԱՐՏ.—Այնուամենայնիվ, չեմ կարող ընդունել այդպիսի թանգագին նվեր, մանավանդ մի հայ որիորդից, վորի համար ծնողների հիշատակը սուրբ է։

ՖԼՈՐԱ.—(Դառն ներգնությամբ)։ Մի՛թե։ Իսկ հայ որիորդին նախատել կարող եք։

ԱՐՏ.—Ցե՛ս։

ՖԼՈՐԱ.—(Գրգռվելով)։ Այո, դուք հիշում եք ինչ ասացիք հենց առաջին որը, յերբ այստեղ եյիք։ Դուք ասացիք, թե հայ աղջիկը շատ հեռ է ծնացել ոտարներից, թե նրա միտքը սահմանափակ է, սիրտը նեղ, զգացումներն աղքատ։ Իսկ յես ձիլ եմ։ Վոչ միայն մի հայուհի, այլև մի բուրժուազի անհոգ և անմիտ մեծացած աղջիկ։ Փուլթ չէ, թող ձեր ասածը լինի, միայն թե ցանկալի կլիներ, վոր դուք, նախքան դատավճիռ տալը, մի փոքր ուսումնասիրեյիք մեր սիրտը։ Ով գիտե, դուցե ավելի բան գտնեյիք այնտեղ, քան կարծում եք։ Հիշո՞ւմ եք այնորվա ձեր պատմածները։

ԱՐՏ.—Ինչի՞ մասին։

ՖԼՈՐԱ.—Մարդկային անհուն վշտերի, հարյուրավոր ուսանողների կրած տառապանքների, հալածանքի, բանտի, աքսորի, կախաղանի։ Յերբ դուք, այնպես հափշտակված, նկարագրում եյիք այդ բոլորը, յես մտածում եյի իմ անհոգ կյանքի մասին։ Ցավ թվաց ինձ, վոր յես մի չնչին արարած եմ, արհամարհանքի արժանի։ Յես չգիտեի ամոթից ու խղճի տանջանքից ինչպես նայիմ ձեր յերեսին։

ԱՐՏ.—(կանգ է առել յեվ լսում է)։ Մի՛թե։

ՖԼՈՐԱ.—(Վոգեվորվելով)։ Ա՜հ, այն որից դես չգիտեմ ինչ ասել և ուրախ տրամադրություն։ Ցե՛ս, վոր միշտ յերգում եյիր, թռչկոտում ու նվագում նույնիսկ իմ պաշտելի մոր մահից

հետո։ Այն պահից իմ այժմյան կյանքն ինձ թվում է ամբողջապես ուրիշ մեկի կյանքը։ Ես մի քանի որվա մեջ զգացել եմ ու մտածել ավելին, քան տարիների ընթացքում։ Ես աբլեուն չերազում եմ շղթայակապ ձեռներ, մթին ու խոնավ աբզելանոցներ, ուր տառապում են ինձնից շատ ու շատ բարձր որիորդներ։ Դուք ասացիք, որ նրանք գժողքի մեջ չերգում են ազատական գրգռիչ չերգեր, արձակում են հերոսական գոչյուններ։ Ապա լսում եմ նրանց գառն լացը, կսկծալի հեծկլտանքը և անեծքըն ինձ նման անտարբերների գլխին։

ԱՐՏ. (Հիացած)։ Բայց կանգ առեք, չես չեզի ուզում ձեզ...

ՖԼՈՐԱ.—(Ավելի ու ավելի վոգեվորվելով)։ Դուք ասացիք, որ մայրերը հիպ են անում վոսկրոտ ձեռներով խորտակել բանտերի դռները, վորպեսզի ազատեն իրենց զավակներին, հայրերն անզոր սեղմում են իրենց բռունցքները։ Այս ձեր խոսքերն են, որ շարունակ հնչում են իմ ականջներին, ինչպես զառը նախաճաշը... Բանզապահների կոպիտ հարվածները քարերի պես տեզում են ամուսիններն ու քույրերի գլխին։ Ցեվ թշվառները, դառնալով ինձ նմաններին, նույն պես անեծք են թափում մեր գլխին...

ԱՐՏ —Վոչ ձեզ նմաններին, վոչ...

ՖԼՈՐԱ.—Այդպես և, մի հերքեք։ Դուք նախատել եք հայ ապիկներին, վորոնցից չես վոչնչով բարձր չեմ։ Ամերիկա եք դուք, ինչու՞ զոնե ձեր քրոջն այդի ասելն չունեք։ Մի՞թե շատ ուսարազդի որիորդներ կան Անահիտի նման նույն իսկ ձեր շրջաններում։

ԱՐՏ.—Անահիտն այն չե։ Նա ուրիշ է։ Իմ և նրա մեջ ևս կա խորխորատ, ինչպես քո և իմ հոր մեջ։

ՖԼՈՐԱ.—Բայց նրա սիրտը։ Ես քանի քանի անգամ տեսել եմ նրան արտասվելիս հայկական կոտորածների ժամանակ։

ԱՐՏ.—Արտասվել է նա, արդյոք, կարդալով Բիլինևի և Բելոստոկի մասին։ Վոչ, կարող եմ յերդվել։ Շատ շատ՝ կրծքին արձակել է ծանր հառաչանք. բայց, մի րոպե չանցած, մոռացել է. «այդ բոլորը ցավալի չե, միայն մեզ չի վերաբերում»։

ՖԼՈՐԱ.— Ունեք փաստեր այդ մասին։

ԱՐՏ.—Ցերեք անգամ դիմել եմ նրան և խնդրել իմ բանտարկյալ ընկերների համար ժողովարարություն անել, յերեք անգամ էլ նա հարցրել է. «Հայերը են ընկերները»։ Ցեվ յերբ իմացել է, թե հայեր չեն—լռել է։ Այս չե, Ֆլորա, այս չե իմ դավանանքը։ Ինձ համար թշվառությունն ազգ չունի և վոչ կրոն, և վոչ լեզու։ Մենք ուզում ենք, վոր միշտ ուսարներն ոգնեն մեզ և մուրացկաններին պես շարունակ դիմում ենք բուրժուա պետություններին, իսկ ինքներս մերժում ենք մեր ոգնությունը մեզ նման թշվառներին։ Դա անարդարություն է։

ՖԼՈՐԱ.—(Ուշադիր լսել է)։ Համաձայն եմ, համաձայն եմ։

ԱՐՏ.—Քանի յես պատանի եյի, մի տեսակ պատնեշ իմ սրտում անջատում եր ազգությունը մարդկությունից։ Այժմ չկա այդ պատնեշը։ Խորտակվել և այն համաշխարհային մեծագույն խմաստասերների ազդեցությամբ, վորոնց գրքերը կարդացել եմ և հափշտակվել։ Ահ, յերեք տեսնեյիք այն վայրերը, ուր մարդիկ զգում են և տանջվում իդեալների համար։ Այնտեղ ազգությունը չե այն ոզակը, վոր միացնում է հոգիները, այլ մի ուրիշ, ավելի բարձր, ավելի ընդարձակ և ամուր կապ դեպի մարդը։

ՖԼՈՐԱ.—Կարող եմ, արդյոք, յես ել զգալ ու տանջվել այդ վայրերում։

ԱՐՏ.—Այդ ձեզնից է կախված։

ՖԼՈՐԱ.—Կամենալի իմանալ, ինչ հատկություններ են հարկավոր մի Նոյեմզար դառնալու համար։

ԱՐՏ.—Նախ և առաջ՝ ունենալ այն սուսկալի լեզուն, վորով լիքն է Նոյեմզարի սիրտը։ Ֆլորա, նա հինգ անգամ բանդ է նըստել։ Նա ծեծվել է, անարգվել է։ Ցեվ այսոր նրա բոլոր բանտակիցները տառապում են շղթաների մեջ։

ՖԼՈՐԱ.—Ցեվ դուք մերժում եք վերցնել այդ չնչին նվերը այդ պետերի ոգտին։

ԱՐՏ. Նախասենյակում էլեկտրական զանգակի ձնշյուն։

ԱՐՏ.—Թողնք ինա ձեզ մոտ։ Ես կմտածեմ այդ մասին և կհայտնեմ ձեզ։ Վերցրեք, խնդրում եմ, դուցե չեկողը ձեր հայրն է։

ՏԵՍԻԼ V

Նույնը յեվ Նոյեմզար

ՆՈՅԵՄ.—(Ներս է մտնում աջ կողմի յերկրորդ դռներից։ Հագնած է ինչպես, ինչպես առաջին տարվածում)։ Բարև, որիորդ։ Ես յեկել եմ ձեզ շնորհակալություն հայտնելու։ Դուք Անահիտի միջոցով ուղարկել եք ինձ մեր ընկերների համար

հետո։ Այն պահից իմ այժմյան կյանքն ինձ թվում է ամբողջական։ Ցեսս մի քանի որվա մեջ զգացել եմ ու մտածել ավելի, քան տարիների ընթացքում։ Ցեսս արթուն լերազում եմ շղթայակապ ձեռներ, մերին ու խոնավ արգելանոցներ, ուր տառապում են ինձնից շատ ու շատ բարձր որիորդներ։ Դուք ասացիք, որ նրանք գժոդքի մեջ լերգում են ազատական երգիչ լերգեր, արձակում են հերոսական գոչյուններ։ Ապտլսում եմ նրանց դառն լացը, կսկծալի հեծկլտանքը և անեծքերն ինձ նման անտարբերների գլխին։

ԱՐՏ. (Հիացած)։ Բայց կանգ առեք, լես չեմ ուզում ձեզ...

ՖԼՈՐԱ.—(Ավելի ու ավելի վոգեվորվելով)։ Դուք ասացիք, որ մայրերը ճիգ են անում վոսկրոտ ձեռներով խորտակել բանտերի դռները, որպեսզի ազատեն իրենց զավակներին, հայրերն անզոր սեղմում են իրենց բռունցքները։ Այս ձեր խոսքերն են, որ շարունակ հնչում են իմ ականջներին, ինչպես դառը նախատինք... Բանդապահների կոպիտ հարվածները քարերի պես տեղում են ամուսիններին ու քույրերի գլխին։ Ցեվ Թշվառները, դառնալով ինձ նմաններին, նույնպես անեծք են թափում մեր գլխին...

ԱՐՏ.—Վոչ ձեզ նմաններին, վոչ...

ՖԼՈՐԱ.—Այդպես և, մի հերքեք։ Դուք նախատել եք հայ ապրիչկիներին, որոնցից լես վոչնչով բարձր չեմ։ Ափերախոսեք դուք, ինչու՞ դռներ ձեր քրոջն այդի առջև չունեք։ Մի՞թե շատ ուսարազդի որիորդներ կան Անահիտի նման նույնիսկ ձեր շրջաններում։

ԱՐՏ.—Անահիտն այն չէ։ Նա ուրիշ է։ Իմ և նրա մեջ ևս կա խորխորատ, ինչպես քո և քո հոր մեջ։

ՖԼՈՐԱ.—Բայց նրա սիրտը։ Ցեսս քանի քանի անգամ տեսել եմ նրան արտասվելիս հայկական կոտորածների ժամանակ։

ԱՐՏ.—Արտասվել և նա, արդյոք, կարդալով Բիլինեի և Բելոստոկի մասին։ Վա՜յ, կարող եմ լերդվել։ Շատ շատ՝ կրծքիդ արձակել և ծանր հառաչանք. բայց, մի րոպե չանցած, մոռանալ ե. «այդ բոլորը ցավալի է, միայն մեզ չի վերաբերում»։

ՖԼՈՐԱ.—Ուշիք վատեր այդ մասին։

ԱՐՏ.—Ցերիք անգամ դիմել եմ նրան և խնդրել իմ բանտարկյալ ընկերների համար ժողովարարություն անել, լերիք անգամ էլ նա հարցրել է. «Հայ՞եր են ընկերներդ»։ Ցեվ լերբ իմացել է, թե հայեր չեն—լռել է։ Այս չէ, Ֆլորա, այս չէ իմ դավանանքը։ Ինձ համար թշվառությունն ազգ չունի և վոչ կրոն, և վոչ լեզու։ Մենք ուզում ենք, վոր միշտ ուսարներն ոգնեն մեզ և մուրացկաններին պես շարունակ դիմում ենք բուրժուա պետություններին, իսկ ինքներս մերժում ենք մեր ոգնությունը մեզ նման թշվառներին։ Դա անարդարություն է։

ՖԼՈՐԱ.—(Ուշադիր լսել է)։ Համաձայն եմ, համաձայն եմ։

ԱՐՏ.—Քանի լես պատանի եյի, մի տեսակ պատանեշ իմ սրտում անջատում եր ազգությունը մարդկությունից։ Այժմ չկա այդ պատանեշը։ Խորտակվել և այն համաշխարհային մեծագույն իմաստասերների ազդեցությամբ, վորոնց գրքերը կարդացել եմ և հափշտակվել։ Ահ, լերե՜ք տեսնեիք այն վայրերը, ուր մարդիկ դղում են և տանջվում իդեալների համար։ Այնտեղ ազգությունը չե այն ոդակը, վոր միացնում է հոգիները, այլ մի ուրիշ, ավելի բարձր, ավելի ընդարձակ և ամուր կապ դեպի մարդը։

ՖԼՈՐԱ.—Կարող եմ, արդյոք, լես էլ գալ ու տանջվել այդ վայրերում։

ԱՐՏ.—Այդ ձեղնից և կախված։

ՖԼՈՐԱ.—Կհամաձայնեի իմանալ, ինչ հատկություններ են հարկավոր մի Նոյեմզարի համար։

ԱՐՏ.—Նախ և առաջ՝ ունենալ այն սոսկալի լեզուն, վորով լիքն է Նոյեմզարի սիրտը։ Ֆլորա, նա հինգ անգամ բանդ է նըստել։ Նա ծեծվել է, անարգվել է։ Ցեվ այսոր նրա բոլոր բանակակիցները առատապում են շղթաների մեջ։

ՖԼՈՐԱ.—Ցեվ դուք մերժում եք վերցնել այդ չնչին նվերը այդպիսիների ոգտին։

ԱՐՏ.—Նախասենյակում ելեկտրական զանգակի ճնշյուն։

ԱՐՏ.—Թողնք մինա ձեզ մոտ։ Ցես կմտածեմ այդ մասին և կհայտնեմ ձեզ։ Վերցրեք, խնդրում եմ, դուցե յեկողը ձեր հայրն է։

ՏԵՍԻԼ V

Նույնի յեվ Նոյեմզար

ՆՈՅԵՄ.—(Ներս է մտնում աջ կողմի յերկրորդ դռներից։ Հագնած է ինչպես, ինչպես առաջին արարվածում)։ Բարև, որիորդ։ Ցես յեկել եմ ձեզ շնորհակալություն հայտնելու։ Դուք Անահիտի միջոցով ուզարկել եք ինձ մեր ընկերների համար

հարյուր ռուբլի։ (Ձեռ է տալիս Ֆլորային յեվ հեռա միայն ճկատում Արտաշեսին։ Թեքեվ ցնցվում է, բայց յեվ անմիջապես ուղղում է իրան)։ Ցես գնացել եյի քո ծնողներէ տեսնը, քեզ տեսնելու։ Ո՜հ, հոգնած եմ։ (Նստում է։ Ֆլորային)։ Ներեցիք։

ՖԼՈՐԱ.—Խնդրեմ,

ՆՈՑԵՄ.—Ճանապարհին չգիտեմ ինչ պատահեց ինձ, հանկարծ գլուխս սկսեց ասատիկ ցավել։ Արդյոք, չունիք մի փոքր ո դը կալոն։

ՖԼՈՐԱ.—Ցես իսկույն ձեզ կտամ մի դեղ, վոր շատ ոգնում է։ (Ետապով գնում է խորի ձախ դռնեռով)։

ՏԵՍԻԼ VI

Արտաշես յեվ Նոյեմզար

ՆՈՑԵՄ.—(Վեր է կենում)։ Դյանքոսմս առաջին անգամ կոմնիկ խաղացի։

ԱՐՏ.—(Անհանգիստ դիտել է Նոյեմզարին)։ Ի՞նչ է պատահել

ՆՈՑԵՄ.—Իպպոլիտից նամակ ստացա։ Այս քանի որերս նրան եստապով ուղարկում են։ Պետք է շտապել։

ԱՐՏ.—(Դուրս ավելով)։ Այո՛։

ՆՈՑԵՄ.—Ինչու՞ վախեցար։ Դու տատանվում ես.

ԱՐՏ.—Վոչ։ Բայց յես կկամենայի մի քանի որ եվ մնալ։

ՆՈՑԵՄ.—Ի՞նչ գործ ունես այստեղ։ Ծնողներիդ հետ տեսնվելիք վող բավական ժողոված ես։ Պետք է դնալ։

ԱՐՏ.—(Վախեցած)։ Ի՞չ ես ուզում ասել։ Ցես ասել եմ քո մասին, Ցեղել են քեզնից ավելի զորավոր մարդիկ, վորոնք չեն դիմացել վոսկեզոծ կահ-կարասիքի փայլին և վարքի ծաղիկների բուրմունքին։ Հեռանանք, հեռանանք շուտով...

ԱՐՏ.—Լավ, կհեռանանք, տեղը չե այդ մասին խոսելու։

ՆՈՑԵՄ.—Ցես եվ դիտեմ, վոր տեղը չե։ Ուրեմն գնանք, իսկույն եք դուրս գաս ինձ հետ այստեղից։ Լսո՞ւմ ես... Արտաշես... ես... ես... խնդրում եմ... (Ավելի ամուր սեղմելով ձեռքը)։ Գնանք, դու կարող ես այստեղ կործանվիլ...

ՏԵՍԻԼ VII

Նույնը յեվ դարձյալ Ֆլորա

ՖԼՈՐԱ.—(Հետ գալիս խորի ձախ դռնեռից)։ Ահա, որիորդ։ (Տեսնում է Նոյեմզարին Արտաշեսի ձեռն ամուր բռնած, ցնցվում է, գունատվում յեվ անշարժ մնում)։

Լռություն։

ԱՐՏ.—(Ձեռը խլում է Նոյեմզարից յեվ հետ կանգնում)։

ՆՈՑԵՄ.— (Նույնպես շփոթվում է)։

ՖԼՈՐԱ.— (Ուշը ժողվելով)։ Ահա, որիորդ, պլխացավի դեմ։ (Տալիս է մի սրվակ)։ Մի փոքր քսեցնք ձեր հակատին, կանցնի։

ՆՈՑԵՄ.—(Առնում է սրվակը յեվ ձեղուկը մատներով խառում հոնքերին), Ո՜հ, շնորհակալ եմ, գուք շատ բարի եք։ (Սրվակը դնում է սեղանի վրա։ Շուտով կանցնի։ Յերթե չանցնի եվ վատթար չե, սովոր եմ։ Որիորդ, թույլ տվեք կրկին շնորհակալություն հայտնել ձեր նվերի համար և, մինչեվ ժամանակ, հրացեք բարով...

ՖԼՈՐԱ.—(Սառը) Մենք այլևս չենք տեսնվիլ։ (Ձեռը մեկնում է թույլ)։

ՆՈՑԵՄ.—Հազիվ թե. յես վաղը գնում եմ։ Մնացեք բարով։ (Գնում է աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՖԼՈՐԱ.—(Նայել է Արտաշեսին տարակուսված)։ Ինչու՞ համար այդպես խոթաստվեցիք...

ԱՐՏ.—(Մի վճռական շարժում անելով յեվ առանց նայելու Ֆլորային)։ Մնացեք բարով...

ՖԼՈՐԱ.—Դուք ես (Թույլ գրեթե ակամա ձեռ է տալիս Արտաշեսին։

ԱՐՏ.—Ցես պարտավոր եմ հետևել Նոյեմզարին։ Արագ քայլերով գնում է աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՖԼՈՐԱ.—(Անշարժ կանգնած, ուղեկցում է աչքերով Արտաշեսին մինչեվ դռնեռը)։ Ի՞նչ է նշանակում այդ։ «Ցես պարտավոր եմ...» (Մի ֆանի քայլ գնալով դեպի բեմի խորը)։ Սոֆիա

ՏԵՍԻԼ VIII

Ֆլորա յեվ Սոֆիա

ՍՈՖԻԱ.—(Ներս է մտնում աջ կողմի յերկրորդ դռնեռից մի ծրար ձեռին)։ Ի՞նչ եք հրամայում։

ՖԼՈՐԱ.—Գնացեք և իսկույն Անահիտին խնդրեցեք, վոր գա այստեղ։

ՍՈՖԻԱ.—(Ծրարը տալով)։ Այս րոպեիս նրանց ազախինը բերեց այս նամակը։

ՖԼՈՐԱ.—(Արագ բաց է անում ծրարն ու կարդում)։ «Թանգագին Ֆլորա, մեր տունը կատարյալ գժոխք է դարձել։ Գնդ հետ շատ կարևոր գործ ունիմ, սպասիր ինձ տանը»։ (Սոֆիային)։

Լավ, հարկավոր չե դնալ։ Ցերեկ հայրիկին ինձ հարցնի, ասացեք զբաղված եմ։ (Գնում է խորքի ձախ դռնեռով տանելով հետը բարերի արկղիկը)։

ՍՈՖԻԱ.—Ախ։ դեռ պարոնի սենյակը չեմ մաքրել։ (Գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ IX

Ալեքսանդր յեվ Սենեքերիմ

ՍԵՆՆԵՔ.—Գալիս է աջ կողմի յերրորդ դռնեռից Ալեքսանդրից առաջ։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում)։ Ցես շատ շնորհակալ եմ, վոր այդչափ հավատ ես ընծայում ինձ, բայց չեմ կամենալ քո կտակակատարը լինել։

ԱԼԵՔ.—Պատճառը։

ՍԵՆՆԵՔ.—Պատճառը, վոր փափագում եմ քեզանից առաջ մեռնել և կմեռնեմ։

ԱԼԵՔ.—Ինձանից առաջ և ինձանից չահել լինելով։ Ինչու՞։

ՍԵՆՆԵՔ.—Վորովհետև կյանքն այսուհետև ինձ համար մի ծանր լուծ է։

ԱԼԵՔ.—Այդ խոսքը քեզ չի սազում, Սենեքերիմ։ Քո կյանքը դեռ հարկավոր է հասարակութեյանը։

ՍԵՆՆԵՔ.—(Դառը ժպտալով)։ Հըմը, հարկավոր է. Ցես էլ հիմարի պես յերևակայում եյի, թե հարկավոր եմ։ Բայց բանից յերեվում է, վոր, յես վոչ-վոքի հարկավոր չեմ։ Ալեքսանդր, Ալեքսանդր, իմ վորդին և այն սարսափելի ժայռը, վորին դիպչելով խորտակվում է նավահանգստին մոտեցող նավը։ Այն նավը, վոր կործում եյի թե վարել եմ տապանդով և հմտութեյամբ։

ԱԼԵՔ.—Բայց Աբրահամն ապեխ յերիտասարդ է։

ՍԵՆՆԵՔ.—Անիծվի՛ այն ազատութեյունը, վորից ոգուտ չունի։

ԱԼԵՔ.—Սենեքերիմ, յես քեզ ճանաչում եմ. դու շատ զրգռվող մարդ ես և զեպքերը միշտ չափազանցնում ես։ Ցերեկ այդ մի սովորական վեճ է հոր և վորդու մեջ։ Դու ինքդ քանի քանի անգամ գրել ես, թե հատաջադիմութեյան որենքը պահանջում է, վոր վորդիները միշտ պատերազմեն հայրերի դեմ։

ՍԵՆՆԵՔ.—Ցես հիմար կլինեյի, յերե ժառանգի այդ որենքը։ Ո, յես էլ կռվել եմ իմ հոր հետ, բայց իմ կռիվը հիմնված է յեղել հայ հասարակութեյան, հայ ժողովրդի, իմ հարազատ ազգի շահերի վրա։ Մինչդեռ իմ վորդին ազգ չի ճանաչում, Ալեքսանդր, հասկացիր։ Տեսնում ես այն պատկերը։ (Ցույց է տալիս Ալեքսանդրի հանգուցյալ կնոջ պատկերը)։ Ա՛հ, ինձ է հայտնի, թե նա վորքան թանգ է քեզ համար։ Ցերեկայիր, վոր քո հարազատ վորդին մի որ գալիս է հեռավոր յերկրից, նեբա մտնում է հանկարծ, այդ պատկերը պոկելով, պատառում է և վռնտատակ անում քո աչքերի առջև։ Այսպես, ճիշտ այսպես է վարվում իմ վորդին իմ քաղաքական և մանկավարժական գործունեութեյան հետ։ Հենց առաջին որը նա թուլլ տվեց տղայի մեկին քար շպրտել իմ դավանանքի դեմ։ Նա չկատաղեց, դուրս չձգեց այդ աղբին։ Նա լռեց, նա պաշտպանեց անգամ նրան։ Իսկ հետո... հետո ինքն սկսեց հարվածել ինձ, և ինչպես, ավելի անգութ, ավելի անողոք... (Կատաղելով)։ Ո՛հ, չորանար նրա մոր արգանդը, վոր յես չունենայի նրա նման զավակ...

ԱԼԵՔ.—Բավական է, հերիք անիծես...

ՍԵՆՆԵՔ.—Նա կոտրում է իմ վարկը հասարակութեյան աչքում, նա ինձ ծաղր ու ծանակի առարկա յե դարձնում։ Ինչ յերեսով պիտի նայիմ այսուհետև մարդկանց, Ջեն ասիլ նրանք. «Ա՛ա, դու ուզում եյիր կրթել մի ամբողջ հասարակութեյուն, չկարողացար կրթել քո միակ վորդուն։ Գնա՛, մենք քեզ չենք ճանաչում»։

ԱԼԵՔ.—Այդպես կասեն միայն կարճամիտները։ Սենեքերիմ, դու մոռանում ես, վոր ունես մի մի աղջիկ, վոր քո աչ քին է։

ՍԵՆՆԵՔ.—Անահիտը։ Այո՛, Ալեքսանդր, նա յե, վոր ինձ պահպանում է ծայրահեղութեյունից։ Հավատա, յերե նա չլիներ, յես հենց առաջին որը վերջ կտայի իմ կյանքին։

ԱԼԵՔ.—Հերիք է, Սենեքերիմ, դու սկսում ես զառանցել։ Այդ մի թերթև բան է։

ՍԵՆՆԵՔ.—(Դառը ժպտալով)։ Թերթև, հըմը, թերթև... Լսիր, Ալեքսանդր, լսի՛ր... կա մի բան, վոր յես դեռ չեմ ասել քեզ։ Այդ բանն է, վոր ինձ հուսահատեցնում է։ (Բռնում է Ալեքսանդրի ձեռը, ցածր ձայնով, խորհրդավոր)։ Իմ վորդու գըլխին կախված է Դամոկլյան թուրը։ Վաղ թե ուշ այն պիտի ընկնի նրա վրա։ Հասկացիր ինչպես կամենաս։ Բաց է թողնում Ալեքսանդրի ձեռը, հեռանում է ու ճաշում կուտե)։

ԱԼԵՔ.—(Վախեցած)։ Ի՞նչ ես ասում, Սենեքերիմ։

ՍԵՆՆԵՔ.—Հապա։ Նա այն ճանապարհի վրա չե, որից շատ քչերն են կենդանի վերադառնում։ Լսիր, լսիր, Ալեքսանդր։ Իմ որդին գործիք և տերբորիանների ձեռքում։ Նա ուխտ ունի, նրան հանձնված և բանտից ազատել իր ընկերներից մեկին։ Նա ռումբ պիտի գցե, լսում ես, ռումբ... (Սարսափած նայում է)։

ԱԼԵՔ.—Սենեքերիմ, քո որդին կորած է, վողորմելի...

ՍԵՆՆԵՔ.—(Դողդոջուն, արտասվալից ձայնով)։ Ա՜հ, Ալեքսանդր, չես անիծում ես նրան, և, միևնույն ժամանակ, վողբում ես որ չես հայր ես։

ԱԼԵՔ.—(Մտածելով)։ Այո, այո, այժմ հասկանում եմ։ Շնորհակալ եմ, բարեկամ, որ ինձ զգուշացրիր։ Իսկ չես, հիմարս, ուզում եյի իմ ձեռքով իմ աղջկան կրակի մեջ գցել։ (Ցնցվելով)։ Բայց դուցե նա արդեն ընկել է։ Վա՜յ, վա՜յ, Ֆլորան հիմար չե... Նա գիտե, որ չես չեմ կարող տանել այդ բանը... (Ավելի բարձր յեվ զգուշված)։ Սենեքերիմ, այսօր, հենց այստեղ չես իմ աղջկա հետ խոսում եյի քո որդու մասին։ Ինչ թագցնեմ, չես Արտաշեսին համարում եյի արդեն իմ փեսան։ Ֆլորան հավանում է նրան։ Բայց հիմա ամեն բան տակն ու վրա յեղավ։ Ֆլորան նրա ընկերը չե, այդ չի կարող լինել։ Այսուհետև իմ դռները փակ են նրա առջև։ Հասկանում ես իմ դրությունը. Սենեքերիմ, դու պիտի նեղես ինձ։

ՍԵՆՆԵՔ.—Այդ քո կամքն է, չես միայն իմ պարտքը կատարելիս։

ԱԼԵՔ.—Բայց մի՞թե չի կարելի նրան հետ դարձնել այդ ճանապարհից։

ՍԵՆՆԵՔ.—(Ընկճված)։ Ուշ է, Ալեքսանդր, ուշ է։ Բանը կան, որ, դժբաղդաբար, չեմ կարող քեզ ասել։ Նա արդեն կործանված է։ (Աչքերը արբում է թաշկինակով)։

ԱԼԵՔ.—Լավ, մի հուսահատվիր, միջոցներ շատ կան նրան ազատելու համար։ Արի գնանք իմ սենյակը և միասին սառնասրտությամբ խորհրդակցենք։ Գնանք, իդեպս, քեզ համար կկարդամ իմ կտակը (Ծոցի գրպանից դուրս է բերում մի բառածայր թուղթ)։ Տեսնում ես այս թուղթը։ Բոլորն այստեղ է։ Այդ քո գործունեության պատվոգրերից մեկն է։ Թող քո վողբին իմանան, թե ում գաղափարներն են մեզ հարկավոր, ում թե քոնը։ Գնում է աջ կողմի առաջին դռնեով)։

ՍԵՆՆԵՔ.—(Հետևում է Ալեքսանդրին)։

ՏԵՍԻԼ X

Ֆլորա յեվ Անահիտ

ՖԼՈՐԱ.—(Դալիս է խորի ձախ դռներից)։

ԱՆԱՀ.—(Դալիս է միաժամանակ աջ կողմի յերկրորդ դռներից)։

ՖԼՈՐԱ.—(Առաջ վազելով)։ Ա՜հ, համբերություն հատավ լուսամուտից նայելով։ Վերջապե՜ս։ (Համբուրում է)։ Ի՞նչ է պատահել։

ԱՆԱՀ.—(Հագնված է պարզ, գլխին հարդյա եժանագին գլխարկ, ձեռքին տետրակներ կապոց)։ Հազիվ ազատվեցի դասերից։ Ո՜հ։ (Հոգնած նստում է կիսաբազկաթոռներից մեկի վրա, տետրակները դնելով սեղանի վրա)։

ՖԼՈՐԱ.—Ի՞նչ է պատահել, շուտ ասա։

ԱՆԱՀ.—Այսօր Արտաշեսը դարձյալ ընդհարվեց հայրիկի հետ։

ՖԼՈՐԱ.—Այդ չես գիտեմ։

ԱՆԱՀ.—Բայց հետևանքը չգիտես։ Կռվից հետո հայրիկն խոսելիս գնաց չգիտեմ ուր, իսկ Արտաշեսն յեկավ այստեղ։ Այն ժամանակ սկսվեց մի ուրիշ տեսարան։ Մայրս հանկարծ ուշադրություն դարձրեց մի բանի, որ յերբեք չի պատահել նրան։ Վերջը նա ուշադրավից փրփուրը բերանին։ Մի ամբողջ ժամ չարչարվելով, չես ու նազանին հազար ու մի միջոցով հազիվ կարողացանք նրան ուշքի բերել։

ՖԼՈՐԱ.—Խե՜ղճ Անահիտ։

ԱՆԱՀ.—Այժմ նա ուժասպառ պառկած է անկողնում։ Նա շարունակ կրկնում է. «Ցես դժբաղդ եմ, չես դժբաղդ եմ»։

ՖԼՈՐԱ.—Բայց ինչն է նրան այդպես հուսահատեցնում։ Մի՞թե միայն հոր ու որդու վիճը։

ԱՆԱՀ.—Ֆլորա, դա վեճ չե. այլ յերկու միմյանց հակառակ տարբերի սոսկալի ընդհարում։ Վոչ մեկը չի ուզում զիջել և վոչ մեկը կեղծել։ Բայց գլխավորն այս չե, Ֆլորա։ Կա մի ուրիշ պատճառ, որ հուսահատեցնում է մայրիկիս և չես հենց դրա համար եյի ուզում քեզ տեսնել։

ՖԼՈՐԱ.—Ինչո՞վ կարող եմ սպասարկ լինել։

ԱՆԱՀ.—Արտաշեսի կյանքում կա մի գաղտնիք. դա չե, որ Թուրնավորում է նրան և դարձնում այդչափ ախորժ և դյուրագրգիռ։ Հայրիկը, ինչպես յերևում է, գիտե այդ գաղտնիքը, բայց վոչինչ չի ասում։ Նա միայն կրկնում է. «Արտաշեսը կործանված է»։ Իսկ մայրիկն ու ես զանազան յենթադրու-

Թյուններ ենք անում։ Ինձ թվում է, որ այդ գաղտնիքը միայն դու կարող ես պարզել։

ՖԼՈՐԱ.—Ինչո՞ւ ես անպատճառ։

ԱՆԱՀ.—Արտաշեսն այժմ քեզ հետ ավելի է մտերիմ, քան մեզ հետ։ Տխուր րոպեներին նա այստեղ է վազում և յես գիտեմ, որ նրա կյանքից արդեն շատ բաներ են հայտնի քեզ։ Ասա, Ֆլորա, նախ և առաջ, այդ ի՞նչ գործ է, որ սարսափում է նրան այստեղից հեռանալ։

ՖԼՈՐԱ.—Չգիտեմ։ Այդ մասին նա ինձ մի բառ չի ասել։

ԱՆԱՀ.—Հավատամ, արդյոք։

ՖԼՈՐԱ.—Ցերդվում եմ մորս գերեզմանով։

ԱՆԱՀ.—Ո՛ւ, այդ բավական է, հավատում եմ։ Հիմա մի ուրիշ հարց. ովքե՞ է այդ Նոյեմզարը. այդ ոտաբաղկը հայ անուն է։

ՖԼՈՐԱ.—(Նոյեմզար անունը լսելիս շարժումն է անում, բայց յեվ թագցնում է իր տիրությունը)։ Չգիտեմ։

ԱՆԱՀ.—Արտաշեսը նրա հետ խոսում է «դու»-ով։ Ասենք այդ ինչ-որ Ասում են նրանց շրջանում այդպես է ընդունված, բայց այդ Նոյեմզարի մասին հազար ու մի բան են պատմում։ Ասում են, նրա անվան հետ կապված են մի քանի վտանգավոր գործեր։ Արտաշեսը նրա մասին յերբեք չի խոսում և մեր հարցերին տալիս է անորոշ պատասխաններ։ Ցերեկ նա մինչև անգամ կատաղեց, յերբ մայրիկս փորձեց մի բան իմանալ։

ՖԼՈՐԱ.—Բայց ինչ եք կամենում իմանալ այդ Նոյեմզարի մասին։

ԱՆԱՀ.—Նա մորս սիրտը կտակածներ է գցել։ Իսկ յես հենց առաջին որից առեցի այդ ազգկան, ինձ թվում է, որ նա իր մտքում հայերին ատում է։

ՖԼՈՐԱ.—Այդ յես չեմ նկատել, ընդհակառակը...

ԱՆԱՀ.—Ո՛ւ, մի հավատար այդ յեկվոր թռչուններին... Նրանք միշտ ատում են մեզ, և մենք էլ պիտի ատենք նրանց։ Բայց քանն այդ չե։ Ասում են, որ նրա և Արտաշեսի մեջ կա ինչ-որ կապ։

ՖԼՈՐԱ.—(Ցնցվում է, բայց կարողանում է իրան զսպել)։ Անշուշտ, պաշտպաններն են։

ԱՆԱՀ.—Ա՛հ, յես չեմ հավատում այդ տեսակ աղջկերանց պաշտպաններին։ Վա՛յ, Ֆլորա, ուրիշ կապի մասին են խոսում, ավելի մտերիմ...

ՖԼՈՐԱ.—(Վոտի կանգնելով)։ Ավելի մտերի՞մ։

ԱՆԱՀ.—Կողմնակի անձանցից լսել ենք և ամենքը խոսում են, որ Նոյեմզարն Արտաշեսի կինն է։ Այո, ապօրինի, քաղաքական ամուսնությամբ։ Ասում են այդպես է ընդունված նրանց շրջանում։ (Վոտի յե կանգնում)։ Մայրս հենց որ այս լսեց, սկսեց մազերը փետել։

ՖԼՈՐԱ.—(Դուցաւելի է յեվ զուր նգնում է ուժեր վրան պահել)։ Կ՚ենը։ (Ձեռը ճեղում է կիսաբազկաթոռի մեջքին)։ Այժմ հանելուկը պարզվում է։

ԱՆԱՀ.—Ի՞նչ ուրիշ. դու մի բան գիտես, բայց դու զուսամփոփ, զողում ես։ Ֆլորա, դու սիրում ես իմ յեղբորը։

ՖԼՈՐԱ.—Յես մի թշվառ եյակ եմ։ (Բարձրաձայն ինքնիրան, փաթաթվում է Անահիտի պարանոցին)։

ԱՆԱՀ.—(Բարձր ձայնով)։ Սոֆիա...

ՍՈՖ.—(Վազում է ներս աջ կողմի յերկրորդ դռներից)։

ՆԵՆԵՔԵՐԻՄ
ԱԼԵՔՍԱՆԴՐ

(Շտապով դուրս են գալիս աջ կողմի առաջին դռներից. ապշած մնում եմ)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

Արտաշեսի սենյակը։ Խորքի պատի մեջ, ավելի դեպի ձախ՝ դուռը, որ տանում է ընդունարան-սեղանատուն, Այս դռան քով, դեպի աջ, հասարակ անկողնակալ առանց «շիրմ»-ի Անկողնակալի տակ յերեվում է ճամբարկղ։ Աջ պատի մեջ դուռ դեպի նախասենյակ, ավելի առաջ դեպի ավանահնի կողմ մի փոքրիկ գահավորակ հնամաշ, բոլն յեկու աթոռ։ Ձախ պատի մեջ մի հատ լուսամուտ առանց վարագույրի։ Լուսամուտի առջեվ գրասեղան, վրեն գրքեր, բրոշյուրներ յեվ այլն։ Գրասեղանի քով աթոռներ։ Աջ անկյունում, անկողնակալի մոտ, պատի վրա հանդերձակալ (le porte-manteau) վրեն մի ձմեռային վերարկու յեվ ուրիշ հագուստեղեն Արտաշեսին պատկանող։ Ընդհանրապես սենյակն ունի ուսանողական սենյակի տեսք, բայց շատ մաքուր է։

ՏԵՍԻԼ I

Արտաշես յեվ Նոյեմզար

ԱՐՏ.—(*Վարագույրը բարձրանալիս գըտնվում է գրասեղանի վրայի գրքերը կապկպելով։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում*)։

ՆՈՅԵՄ.—(*Նստած է գահավորակի վրա յեվ կարդում է մի մեծ մայրաքաղաքյան լրագիր։ Հագնված է այնպես, ինչպես առաջ, միայն վզովը կախած է ճանապարհի պայուսակ յեվ գլխարկին փաթաթած յերկայն ըմկուզեգույն շարֆ։ Մի բանի վարկյան լուռ կարդալուց հետո, լրագիրը ձգում է գահավորակի վրա յեվ վեր կենում*)։ *Այո, կռիվն այժմ ուրիշ ուղղություն է առնում։ Մերոնք պետք է լարեն իրենց բոլոր ուժերը։ Այժմ ամեն ինչ հարկադրում է մեզ շտապել։ Ցես հետաքրքրքրությունից այրվում եմ իմանալու, թե ինչեր են կատարվում այնտեղ. դու չվերջացրիր.*

ԱՐՏ.—(*Մի փոքր ցերվայից*)։ *Մի շտապիր, դեռ յերկու ժամ ունենք մինչև գնացքը։ (Դադարում է ուշադրություն դարձնել*)։

ՆՈՅԵՄ.—(*Նայելով ժամացույցին*)։ *Մի ժամ և քառասուն րոպե։ Իսկ յես վաղուց եմ պատրաստ։ Մնում է մի անգամ ել տեսնվել տեղացիների հետ։ Այսօր, անպատճառ այսօր, անդորրությունն ինձ ձանձրացնում է, բացի այդ, արդեն վերսորդները գտել են մեր հետքը...*

ԱՐՏ.—(*Սառը*)։ *Յերևակայություն։ Ամեն տեղ վորսորդներ է տեսնում։ (Ծուլորեն դուրս է բերում ճամբարկղը աճկողնակալի տակից*)։

ՆՈՅԵՄ.—*Ա՜ա, յերևակայություն չէ, յես հաստատ գիտեմ, վոր մեր շատ մեղքերի համար ամենուրեք լրտեսներ են գնացել։ Բայց դու չես վախենում։ Այդ լավ է։ Քո սառնությունն ինձ սիրտ է տալիս։ Այժմ ճանաչում եմ նախկին խելոք և համարձակ Արտաշեսին։ Իսկ յես, հիմարս, կարծում եի, թե դու արդեն կորած այտեղ... (Նայում է Արտաշեսին սիրալիր հայացքով*)։

ԱՐՏ.—(*Դուրսով զբաղված, չի ցկասում Նոյեմզարի հայացքը*)։ *Այս ել այդպես։ Կարծեմ բոլորը կանգավորվի այս ճամբարկղում։ (Ցերեսի հետիցը սրբում է թաշկինակով*)։

ՆՈՅԵՄ.—*Դա մի բոլշևիկյան խելագարություն եր, յերբ քեզ տեսա այդ աղջկա հետ առանձին։ Ցերկուսդ ել հուզված եյիք։ Ինձ թվաց, վոր դու արդեն կորցրել ես քո ազատությունն և դարձել մեկն այն վողորմելիներից, վորոնց անունք ճանաչում ենք և արհամարհում։ Անցավ փորձանքն, և դու դարձյալ մերն ես։ Արտաշես, պետք է միանգամայն խորտակենք վոսկե շղթաները աշխարհային դիրքի հետ, վորպեսզի պողպատե կապերով միանանք մեր Թշվառ ընկերներին։*

ԱՐՏ.—*Այո, բայց դու ինքդ ես մոռանում այդ։ Ցերեկվա քո վարմունքն ուղղակի ամոթալի յեր։ Ի՞նչ կարող և մտածել մեր մասին Ֆլորան։*

ՆՈՅԵՄ.—*Ինչ ուզում ես, թող մտածե։ Մի՞թե ինձ համար կարող և վորևե նշանակություն ունենալ մի բուրժուա աղջկա կարծիքը։*

ԱՐՏ.—*Առհասարակ այտեղ գալուց հետո դու դարձել ես անըզդույշ։ Անտոնինա, առաջ դու այդպես չեյիր։ Ի՞նչ է պատահել։*

ՆՈՅԻՄ.—Ա՜հ, չես ինքդ էլ չգիտես։ Գուցե պատճառն այդ ապրիլին է, կամ ձեր կապույտ ու կրակոտ յերկինքը։ Խելքս թագցնեմ, այն որից, որ այստեղ ենք, չես իմ սրտի տերը չես։

ԱՐՏ.—Բայց դու շատ լավ գիտես, որ ոչ մի յերկնքի տակ ոչ մի յերկրում մեր հարաբերությունները չեն փոխվել Ցեղբայրական և իմ զգացումը դեպի քեզ և այնպես էլ կմնա։ (Վերցնում է հանգերձակալից ձմեռային վերարկուն, հագնում յեվ ձգում աթոռակալի վրա)։

ՆՈՅԵՄ.—(Տխուր)։ Գիտեմ, ախ, գիտեմ, հարյուր անգամ լսել եմ քեզանից, անգութ, բավական է։ (Դրգռվելով)։ Բայց ինչ անեմ, քանի որ այստեղ (սիրտը ցույց տալով), հակառակ իմ կամքի, արմատացել և մի ահռելի զգացում, որ չի մեռնիլ յերբեք, մինչ կենդանի չենք դու և յես։

ԱՐՏ.—Հիշիր Իպպոլիտի վիճակը, հիշիր, որ նա խելագարի պես սիրում է քեզ և մի որ քեզ հետ միանալու հուսալքն է տանում իր տառապանքները։ Հիշիր մեր յերդումը նրա քանի յերկաթապատ լուսամուտի առջև, և դու կմոռանաս անմեղ նախանքը։

ՆՈՅԵՄ.—(Մռայլ)։ Խեղճ Իպպոլիտ, կարող եյիր կարծել որ յերբեւիցե իմ զգացումներով պիտի դավաճանեմ քեզ։ Հայր յես նրան յերբեք չեմ սիրել—ինքն էլ գիտե այս։ Իմ զգացումը դեպի նա յեղել է միշտ ընկերական։ Յես հարգել եմ և հարգում եմ նրան իբրև մի տաղանդավոր գործիչի և հաղվագյուտ ընկերոջ, վոր...

ԱՐՏ.—Վոր մի անգամ քեզ և յերկու անգամ ինձ ազատել է մահից։ Ցավ դու ուզում ես, վոր մենք դավաճանենք այդպիսի մի ընկերոջ։ Վոչ, Անատոլիևա, նա քեզ սիրում է անմնաց սիրով և յեթե այսօր չի վայելում քո փոխադարձ սերը, համոզված դեպս յես չեմ լինել քեզ նրանից խլողը։ Յես չունեմ իրավունք և չեմ կարող մի այդպիսի վիշտ պատճառել Իպպոլիտին։

ՆՈՅԵՄ.—(Ազդվելով Աւրատեսի խոսքերից, ուժգին ժողովում է, բացարի)։ Այո, այդպես է, դու ճիշտ ես ասում։ Թող քո ասածը լինի։ Յեթե յես Իպպոլիտին չկարողանամ սիրել յերբեք և նրա պարտավոր եմ իմ սիրտը կուլա պահել նրա համար, նա արժե ավելին, քան մի այսպիսի զոհաբերություն։ Թող կորչի փոքրոգությունը։ Յես կաշխատեմ սպանել իմ սրտում

այս դավաճանական զգացումը հանուն Իպպոլիտի և հանուն մեր ընկերական պարտականության։ Բայց հետո, հետո այս յերկրից։ Այստեղ յես ինձ ուրիշ մարդ եմ զգում։ Այստեղ իմ կամքի ուժը սկսում է թուլանալ։ (Ցնորազդով)։ Ցեղ և այստեղ Հրանտը։

ԱՐՏ.—Դեռ վոչ։

ՆՈՅԵՄ.—Յես կդնամ նրան գտնելու։ Ո՛ո, նա Փանտափիոս է, այդպիսիները անհրաժեշտ են մեր գործի համար։ Ցտեսություն։ Մի ժամ չանցած կգամ և միասին կվերջանք կայսրան։ (Գնում է յեռանդուն քայլերով աջ կողմի դռնեռով)։

ՏԵՍԻԼ II

Աւրատես յեվ Անահիտ

ԱՆԱՀ.—(Գալիս է խորքի դռնեռով)։ Գնաց, վերջապես...

ԱՐՏ.—Անահիտ, ինչու համար ես դու Նոյեմզաբին այդպես ատում։ Յերբ նա այստեղ է, դու յերբեք չես մոռանում իմ անեծյակը։

ԱՆԱՀ.—Յես չեմ ուզում նրան տեսնել։ Նա իր սրտի խորքում ատում է մեզ, հալերիս։

ԱՐՏ.—(Զայրացած)։ Անահիտ, դա զզարտություն է։ Նոյեմզաբին այն անձանցից է, վորոնք ազգային ատելության զգացումը համարում են զազրելի ախտ։

ԱՆԱՀ.—(Խուսափողական ձեվով)։ Չգիտեմ, գուցե... Յես խոսակից վոչ մի փաստ չունեմ նրա դեմ, բայց և այնպես։ Ատում են Նոյեմզար անունը ավել և նրան մի հայ, ճիշտ է։

ԱՐՏ.—Իմ ընկերների մեծ մասը թափառում է յերկրից յերկիր կեղծանունով։ Այդ անունը յես եմ ընտրել նրա համար։ Տեսել ես այսօր Ցլորային։

ԱՆԱՀ.—Նրա մոտից եմ գալիս։

ԱՐՏ.—Իրնչպես է։

ԱՆԱՀ.—Թուլ, հուսահատված, վոչ վոքի հետ չի ուզում խոսել բացի ինձանից։ Նա ինձ մի հանձնարարություն է արել։

ԱՐՏ.—Ա՛յն է։

ԱՆԱՀ.—Նա տվել է ինձ մի փոքրիկ արկղ քեզ հանձնելու։ Յես չեմ բաց արել արկղիկը, բայց բավանդակությունն ինձ հայտնի է։ Դա Ցլորայի ականջեղնների պահարանն է։

ԱՐՏ.—Ո՞ւր է այն։

ԱՆԱՀ.—Իմ սենյակում։

ԱՐՏ.— վերապահ[ություն] երբեմն լսում ես, անպատճառ վերադարձրու։

ԱՆԱՀ.— Այդ իմ գործը չե։ Ձեռ կտամ քեզ, դու ինչ ուզում ես արա։

ԱՐՏ.— Շատ բարի, թող մնա, չես խոստանում կերթամ և կխոսեմ նրա հետ։ Նախ պետք է բացատրել յիրենց վիճքը։ Այդ ինձ համար մի հանելուկ է։

ԱՆԱՀ.— Ա՛հ, այդ տեսարանը, յերբեք չեմ մոռանալ։ Ձերբ նա, ճիչ արձակելով, ընկավ թեվերիս վրա, կաթծեցի հանկարծամահ յեղավ։ Հետո, նրա հոր հուսահատական ազաղակը հայրիկի ձուներ պես սպիտակիլն լեզկյուղից, ծառանների իրարանցումը, Ֆլորայի քարացած կիպոպարանքը... Այս բոլորը պիտի տեսնեիր, Արտաշես, վոր դպայիր, քե ինչ ես աբել...

ԱՐՏ.— Դարձյալ նույնը։ Ջուր, կաթիլ յե կարծել, վոր կամ դու յես խելագարվել կամ յես։ Ջեմ հասկանում, ինչ եմ արել Ֆլորային, վոր յերեկվանից դես ակնարկում ես և չես բացատրում։

ԱՆԱՀ.— Դու հափշտակել ես նրա սիրտը։

ԱՐՏ. Անահիտ, բառերի հետ մի խաղար։

ԱՆԱՀ.— Ֆլորան ինքը խոստովանեց ինձ։ «Ձես մի Քշվառ եյակ եմ», այս եր նրա վերջին խոսքը ուշաթափվելուց առաջ։ «Անահիտ, յես սիրում եմ Արտաշեսին», այս եր նրա առաջին խոսքը, յերբ ուշքի յեկավ և յերբ մենք մենակ եինք իր սենյակում։ Այնուհետև բոլորը պատմեց։ Զգացումը հզացել և նրա սրտում քեզ տեսնելու առաջին որից և զարգացել և այնքան արագ, վոր ինքն էլ չգիտե իրան հաշիվ տալ։

ԱՐՏ — (Սեկուսի, մռայլ)։ Մի խոչնդոտ ես իմ ճանապարհի վրա։

ԱՆԱՀ.— Դու չպիտի թուլ տայիր, վոր այդ զգացումը նրա մեջ զարգանա։ Դու չունեիր իրավունք թուլ տալու։

ԱՐՏ.— Ուրի՞ց պիտի վերցնեյի այդ իրավունքը։

ԱՆԱՀ.— (Տատանվելով)։ Զգիտեմ, այդ միայն քեզ և հայտնի է ուրիշներին և վոչ ոք մարդ ու քրոջը։

ԱՐՏ.— (Մի ճանի վարկյան լուռ, տարակուսանքով նայում է Անահիտին, ապա մոտենում է յեվ բռնում նրա ձեռը)։ Ջուլ, դու դիտես, վոր յես կատակ չեմ սիրում։ Ասա պարզ, ի՞նչ է այն գաղտնիքը, վոր թաղցնում եք ինձանից։ Ինչ պատճառով և Ֆլորան ուշաթափվել։

ԱՆԱՀ.— (Ձեռը խլելով)։ Թող ինձ, չեմ կարող ասել։ Հարցրու մայրիկին։ Ա՛խ դալիս է այն անկրնար։ Ներիր, յես չեմ կարող նրան տեսնել։ (Դնում է խորի դռներով)։

ՏԵՍԻԼ III

Արտաշես Հրացն յեվ Արազ Արազյան

ՀԱՆԴ.— (Դալիս է աջ կողմի դռներով։ Ձեռ է տալիս Արտաշեսին ամուր բախով)։ Վողջույն, ընկեր։ (Դառնալով դեպի հյուրասենյակ)։ Արի, արի, ահա նա, պարոն։ կարող ես անձամբ հետը խոսել և համոզվել, քանի վոր ինձ չես հավատում։

ՀՈՎՀ. ԱՐԱՋՅԱՆ.— (Դալիս է Հրացնից հետո։ Ամուր կազմվածքով, խաչատուղջ, առնական դեմքով յերիտասարդ է, ուրվագիրք, կարճ խուզած մազերով յեվ բավական մեծ միրուքով։ Հագած է ֆիճ վեստոն, տակից սեվագույն արխալուղի պես մի բան, յերկայն կոճիկներ, վոր մինչեվ ծնկերը ծածկում են մոխրագույն պաճպանը։ Հայացքը հանարձակ է, խոյվածք խոսքս, ձեռները ծանրաբարո, բայց ճերվային։ Սովորություն ունի մի ձեռը խոթել պաճպանի գրպանը, վզովը գցում է դեղնագույն գլխանոց (բալդր)։ Գլխին դրած է մորթյա կլոր գդակ, վոր ճերս մեծերով իսկույն չի վերցնում, կանգնում դառն առջեվ առանց բարեվելու)։

ԱՐՏ.— (Մի փոքր ճայելուց հետո ճանաչում է յեվ ուրախացած)։ Արազ, այդ դու յես։ (Գիմում է առաջ, ուզում է հանբուրել, բայց տեսնելով Արազի սառնությունը, կանգ է առնում)։

ԱՐԱՋ.— (Կոլո ճայելով. սառը, հեգնական, բավականացնում է միայն բալ ոեվերով Արտաշեսի ձեռը)։ Առաջ պետք է մեզանից ճանաչենք։ Լսել եմ գնում ես։

ԱՐՏ.— (Սառը)։ Այո։

ԱՐԱՋ. Ո՞ւր։

ԱՐՏ.— Իմ ընկերներին մոտ։

ԱՐԱՋ.— Ո՞վքեր են քո ընկերները։

ԱՐՏ.— Դու նրանց յես ճանաչում։

ԱՐԱՋ.— Ուրեմն, ճիշտ է այդ ուրալի սատկը։

ՀՈՎՀ.— (Զարախինդ հեգնությամբ)։ Ի՞նչպես տեսնում ես։

ԱՐԱՋ.— (Կտրուկ)։ Ոխտադրժ, յես այդ չեյի սպասում։

ԱՐՏ — Արազ, կատակ անելու ժամանակ չե։

ԱՐԱՋ.— Դժբախտաբար Արազը վատուց է մոռացել կատակ անել։ Ոխտադրժ, կրկնում եմ, քեզ ուրիշ անուն տալ չի

կարելի։ Լինել մեր շրջանի մոլեռանդ անդամ, գնալ հյուսիս, մի քանի տարվա մեջ ժողովել բոլորը, թողնել իսկական ընկերներին, կրկնա դարձնել մի դրոշակից, անցնել մյուսը և դավանել մեզ համար ընդհատակը դաշափարները—դա վոչ միայն ուխտը դրժել և նշանակում, այլ և... դավաճանություն։ (Ներվային բախով վերցնում է գլխից գդակը յեվ մի քայլ առաջ է գալիս)։

ՍՐՏ.—(Հանգիստ)։ Նախկին ընկեր, յեթե դու չլինեիր Արապյանը, յես գիտեի ինչպես կապել քո բերանը։ Բայց դու այն մոլորվածներից ես, վորոնք սիրելի չեն մեզ համար իրենց անկեղծությամբ, աշխատությամբ և խորը հավատով դեպի իրենց գործը։

ՍՐՄԶ.—Ի՞նչ արժանք ունի այժմ քո սերը կամ համակրանքը։ Յես արհամարհում եմ քո կարծիքը։

ՀՐԱՆՏ.—(Գալով է մի անկյուն յեվ ամբողջ ժամանակ մերթ ընդհանուր մերթ կատարի հայացքներ է ձգում Սրապի վրա)։ Ին...

ՍՐՏ.—Թող այդպես լինի, բայց հանգստացիր. յես ուխտադրուժ չեմ համալանդ—դավաճան։ Յես միայն յերևակայության խանգարուրիկ դուրս յեկած մարդ եմ։ Տասնութ տարեկան եյի, յերբ հափշտակվեցի ձեր շրջանով։ Հայրս եր ձեր դիտավոր ուսուցիչը։ Հետացա այսուհետև, տեսա ուրիշ շրջաններ, ծանոթացա ավելի լուրջ և ավելի բարձր իդեալներին հետ—փոխվեցի։ Լավ արի Քե վատ—չգիտեմ, բայց փոխվելի խելքով, համոզմունքով և արտիս բոլոր ուժով։

ՀՐԱՆՏ.—Իզուր ես յես...

ՍՐՏ.—Ասա, ինչն և ինձ պակասում այն ժամանակից, արդյոք մաքրությունը, անկեղծությունը, թե ազնվությունը, թե սերը դեպի հալածվածները և տանջվածները։ Ասա այս մասին միայն կարող և խոսք լինել մեր մեջ։ (Սկսում է անց ու դարձ անել)։

ՀՐԱՆՏ.—Դու այժմ ավելի ազնիվ ես, քան առաջ։

ՍՐԱԶ.—Յես լավի մարդ չեմ, վոր քեզ հետ յերկար վիճաբանեմ։ Մենք ել ունենք պերճախոս հռետորներ, վորոնք լեզվով պատրաստ են կործանում ապահով ժողովներում։ Յես արհամարհում եմ նրանց ել։ Յես մի մեծ անբաղդ գործ հասարակ դիտվոր եմ։ Յես գիտեմ միայն մի բան. վոր այսուհետև, հեռու յերկրում ունենք մի ամուր հաստատ ժողովուրդ, վորին այսպես կամ այնպես պիտի փրկենք մեր կյանքի գնով։

ՀՐԱՆՏ.—Փրկեցիք, ահ և ձեզ խանգարում։

ՍՐԱԶ.—(Ուշադրություն չի դարձնում Հրանտի վրա)։ Ցեղ դու, վոր այնպիսի վոգևորությամբ խոստանում եյիր մեզ հետ այնտեղ գնալ, ալժմ գնում ես հակառակ կողմ։ Այժմ, յերբ քո ուժերը կազմակերպվել են, յերբ ունես ուսում, գիտություն և մի կաքավար արհեստ։ Արտաշես, մենք այժմ թվով շատ ենք, հիշա ես, բայց մեր թշնամին հազար պլխանի մի հրեշ է։ Մենք չգիտեի չկատենք մեր ուժերը, մենք լոլորս պիտի միանանք և ծառայենք մեր և միմիայն մեր ժողովրդին։ Յեթե քեզ նմանները թողնեն մեր անբաղդ արյունակիցներին և գնան ուսարներին ծառայելու—մեր դարը մնում է։

ՀՐԱՆՏ.—(Նստու յեղանակով)։ Ձեր դասը մնում և ծավելու ոլից։

ՍՐԱԶ.—(Վոտացած, հպատակի)։ Վոչ, պարոն, վոչ. Նա մնում չեն և չի մնանել, քանի վոր մենք լոլորովին չենք ազատվել հարեմի կերևույթ։ (Մի արհամարհական հայացք ձգելով Հրանտի վրա, յերեսը դարձնում է)։

ՍՐՏ.—Արտ, մարդ կարող և միայն այն գործին ծառայել, վորին հավատում և, այլապես, նրա ծառայությունն անբարոյականություն է։ Յես ձեր գործին չեմ հավատում։ Յերկրագործությունը առանձին առանձին չեն բուժվում։

ՀՐԱՆՏ.—Այդ մի տարրական ժիաք և, վոր միայն ապուշները չեն հասկանում։

ՍՐԱԶ.—Բայց այնտեղ սովորական հիվանդություն չի տիրում, մանուկ, այլ ժանդախտ, սով, ավերում, հրդեհ, կոտորած։ Այնտեղ դժոխքն և թագավորում, հասկացիր։

ՍՐՏ.—Գիտեմ, գիտեմ։

ՍՐԱԶ.—Վոչ, չգիտես։ Ոո, յեթե տեսնեիր այն, ինչ վոր յես տեսել եմ իմ աչքով, այն ավերված գյուղերը, ամայի ավանները, այրված արտերը, սրբապղծված տաճարները, բռնաբարված աղջիկներին, այն հազարավոր մայրերին թրատված զավակներին վոլորալիս, այն կիսակենդան թագված դիակները, այն ժամանակ չեյիր փոխել քո հավատամքը։

ՀՐԱՆՏ.—Ցեղ կնաթափիլ առնդ, հայրենասիրական վառվռուն ներշնչ հղորինները կամ կզնայիր այնտեղ, յերկու քառդ հիսգանելիր, վորպեսզի փոխարենը հարյուրավոր հայ հարազատների և յերեխաների դլուխները կտրվին։

ՍՐՏ.—(Մի գավիչ յեվ կատարի հայացքով)։ Հրանտ, ձայնդ կտրիր։

(Առաջին)։ Այն բոլորը, ինչ ձեր ասացիք, տեսա եմ և լսել...

ԱՐԱՋ.—Ուրեմն վայրկեան, մեզնից հեռու...

ԱՐՏ.—Թշվառութիւնը հայրենիք չունի։

ԱՐԱՋ.—Բայց մեր թշվառութիւնն անսահման է, անիրավ է տեսածնիերը մերը չեն, անիրաւ։ Այդ ամենի համար կան ուրիշ պատերազմողներ։ Ինչու նրանք չեն թողնում իրանց արտունակիցներին և գալիս մեզ ոգնելու, ասա, ասա։

ԱՐՏ.—(Դառը ծիծաղ)։ Ուտոպիան... Ահա իմ հոր սիրած հայհոյանքը, որ կարծում է մի համոզիչ գենք է իր ձեռքում։ Ուտոպիականութիւնը բոլոր ազգերի թշվառների արդար պատին ծառայելը չէ, վէդ, հազար անգամ վէդ, այս սխալ դատարանների հետևելը։ Կրկնում եմ, ես չեմ հավատում ձեր դործին. ինչպես, ուրեմն, ծառայեմ նրան առանց հավատի։ Թշվառ, հեռու չէ այն ժամանակը, երբ կպատրվի, թե ոչ խղճալներն են հիմնված ավելի ազդար հիմունքների վրա, մերը, քան ձերը։ Սակայն թողնենք անտղուտ վիճաբանութիւնը։ Միևնույնն է. վէդ դու կարող ես ինձ դարձի բերել և վէդ ես քեզ։ Ասա, վճռական և ծերպակէտանք։

ԱՐԱՋ.—Ճիշտ ուրեմն։

ԱՐՏ.—Վճռական և հալածյանք։

ԱՐԱՋ.—Բիթլիսի քանուած։

ԱՐՏ —Համաոգնապը։

ԱՐԱՋ.—Աքսորված և Աքիա։

ԱՐՏ.—Ո՞ւր և Գրիգորիսը։

ԱՐԱՋ.—Սպանված և քրդերից։

ՀՐԱՆՏ.—(Կծու)։ Իր յեղբայրներից։

ԱՐՏ.—Իսկ Արմենակը։

ԱՐԱՋ.—Դեռ կենդանի չի։

ԱՐՏ.—Հուսով եմ, որ մեր կատակասեր Մելիքսեթը ծաղրական

ԱՐԱՋ.—կատակով ավանդից հոգին Ներսիսյան վրա համիդեանի պղպակից։

ՀՐԱՆՏ.—Անոգնա գոներ։

ԱՐՏ.—(Հեգնոտ նուզվում է)։ Արտաքինը։

ԱՐԱՋ.—Կատակածի տակ եր, ապահովիր։

ՀՐԱՆՏ.—(Կծու)։ Ձերին, առանց կատակածն սատկիր։

ԱՐՏ.—Վերջապես, մեր անվհատ Դարբինը։

ԱՐԱՋ.—Քրդերն այրեցին նրան։ (Հուզված)։ Բայց ինչու համար ես քրքրում իմ վերքերը. ով ավել քեզ իրավունք։

ԱՐՏ.—(Մռայլ յեղանակով, դողդոջուն ձայնով)։ Անձնատուր ընկերներ իմ պատանեկութեան, բոլորդ միևնույն անիրագործելի նպատակի համար, միևնույն սխալ ճանապարհի վրա։

ՀՐԱՆՏ.—(Կծու յեվ չարախինդ)։ Ասում են այսպես կոչված Հայաստանում հայ չէ ծնացել։

ԱՐԱՋ.—(Բուռնցքները սեղմելով խեղդված ձայնով)։ Ասում են, պարոն, ասում են։

ՀՐԱՆՏ.—Ասում են, ձեր շնորհիվ են նրանց վոչնչացրել։

ԱՐԱՋ.—(Դպակը դնում է գլխին, դուրս է բերում դաշույնը պիջակի տակից յեվ, պատյանից հանելով, հարձակվում է Հրանտի վրա)։ Ցես կկտրեմ այդ շան կոկորդը։

ՀՐԱՆՏ.—(Ցես ցատկելով, դուրս է բերում պոնբալոնի գրպանից մի ատրճանակ յեվ ուղղում է Արագի կրծքին)։ Հապա, փորձենք։

ՍՐՏ.—(Անմիջապես կանգնում է յերկուսի մեջ)։ Կանգ առեք, հիմարներ։ Դա կռվի դաշտ չե։ (Թերեվ լուրյուն։ Հրանտին)։ Մի քիչ դրա համար են ավել քեզ այդ ատրճանակը։ (Դառնալով Արագյանին)։ Դիր դաշույնը պատյանը։ Մի կարծիր, քե դենք գործածելը միայն դուք գիտեք։ (Դառնում է յերկուսին եվ)։ Ամոթ ձեզ. դուք դեռ չեք մոռացել ձեր հին հաշիվները մի աղջկա համար։ Թշվառներ եք դուք, յերկուսդ էլ։ (Թերեվ լուրյուն)։ Զենքը միայն բռնակալների դեմ պիտի գործածել։

ՏԵՍԻԼՔ

Նույնը յեվ Սեմեոերիմ

ՍԵՆԵԿ.—(Ներս է գալիս խորի դռներից, տրմուկը լսելով։ Նկատելի ցնծար է յեվ ավելի ծեր է յերեվում)։ Ատրճանակ, դաշույն, յեղբայրը յեղբոր դեմ, ահա ինչ որին հենք հասել։

ԱՐԱՋ.—(Ուժը ծողվել է, բայց տակավին դողում է կատաղությունից)։ Դա մի սուրբ պատերազմություն եր, դա անպարզանք եր հանուստակների դիակների վրա։ Բայց ես չեմ ուզում յեղբայրասպան լինել։ (Դաշույնը դնում է պատյանը, բաց գնում է իր տեղը, նկատելով Սեմեոերիմին, մոտենում է նրան յեվ ջերմագին ձեռը սեղմում)։ Ուսուցիչ, ներումն են խնդրում։

ՀՐԱՆՏ.—(Տեսնելով Սեմեոերիմին, ատրճանակը դնում է գրպանը յեվ բաղում է մի անկյուն)։

ԱՐՏ.—Աբաղ, Հրանտը լավ տեղյակ չե ձեր գործերին, ապա թե ոչ՝ չեր համաձայնվիլ այդպիսի ծանր մեղադրանք դնել ձեր վրա։ Ազնիվ յերիտասարդներ, ինչ ել լինի ձեր նպատակը, զգուշացրե զոհիդ հետ, և չես խոնարհում մի ձեր գերեզմանների առջև։

ԱՐԱՋ.—(Առաստալի ձայնով)։ Ձեր մեղքն անպատիժ չի մնա։

ՍԵՆԵՔ.—Լավ ասացիր, Արաք. «Ձեր մեղքն անպատիժ չի մնա»։ (Ջերմ գրկում է Առագին)։ Անա սերտ, անա գլուխ։ (Առաջնեկին)։ Ներիր, յես քեզ թույլ ավելի մի փոքրիկ յերանություն, ակամայ զրկեցի այն դեղերի յեռանից։ (Բաց է բաղնում Առագին)։ Ա՜հ, Աբաղ Աբաղյան, իմ նախկին աշակերտ, դու կարճ խոսքերով ասացի՛ր բոլորը, ինչ վոր անհատն որ և յես քարոզում եմ այդ դավաճանին։ Ի՜նչ կլիներ խոսքերը բղխում եին իմ սրտի խորքից։ Ա՜ա, լավ ասացիր. «Ինչու՞ նրանք չեն թողնում երկնից արյունակիցներին և գալիս մեզ ոգնելու»։ Հապա, ինչու՞ մեզ ձգել են կրակի և արյան մեջ, անտեր, անոգնական։ Ա՜խ ազգ քաղճ ժողովուրդ։

ԱՐԱՋ.—Ուսուցիչ, մի՛ վողբար, մենք շատ ել խեղճ չենք։

ՍԵՆԵՔ.—Ի՜հարկե, ի՜հարկե, խեղճ չենք, քանի վոր քեզ նման հերոսներ ունինք։ Ա՜հ, ձվ ասաց, թե արյան զավակն ավելի թանգ է, քան հոգեկանը։ Անա սա է իմ զավակը, սա և վոչ ցա, այն խորթ ծնունդը հարատատ ծնողների։ Մի՛ մերձենար նրան, Աբաղ, նա թույն է բերել հյուսիսից, նա կարող է վարակել քեզ մի սոսկալի ախտով։

ԱՐՏ.—(Ջայրացալով)։ Հայր, խնդրում եմ վերջ տալ այդ տեսարանին, մենք արդեն բավական ճանաչում ենք միմյանց։

ՍԵՆԵՔ.—Լա՛վ, յես քո հայրը չեմ։ Մի՛ պղծիր այդ բառը։ Ապտամոնք, դուք կործանվածներ եք, վոր ուզում եք կործանել մեր ազգը, գրգռելով մեր դեմ մի հզոր պետություն։ Ա՜ա, հեռու՛ր, հեռու՛ր ձեզ նման ժանտախտից։ Աբաղ, նա լիովին սրսկեց իր հոր սիրտը։ Նա մութ գերեզմանի դռները վաղուց բաց արավ իմ աչքերի առջև։

ԱՐԱՋ.—Ուսուցիչ, դուք դադրում եք, դուք սիրտ եք կրճատում։ (Մեկուսի)։ Վողբան փոխվել է։

ՍԵՆԵՔ.—Տիար չեմ, Արաղ։ Յես կազդուրվեցի քո խոսքերից։ Նկատարի նման ուժ հերկնչեցրին իմ հնացած արյանս։ Ա՜հ, զգում եմ, այնպես չէ, Արաղ։ Բայց այդ վոչինչ, ուբախությունից է։ Գնա, վողբի, դնա քո սուրբ ճանապարհով, որնուում եմ այն հոգվույս ամբողջ կարողությամբ, սրբոտիս ամբողջ ուժով։

ՀՐԱՆՏ.—(ցածր)։ Դժբաղդաբար, որնուիչներն այժմ չեն ոգնում։

ՍԵՆԵՔ.—(առաջ չեր ցկատեղ Հրացին։ Լսելով նրա ձայնը, ցնցվում է)։ Ա՜ա, դու նրան դեռ չե՞ս վռնդել այստեղից։ (Նայում է Հրացին յեվ կատաղում)։ Վնասակար միջատ, քնչ գործ ունիս իմ տանը։ (Ենչապատ)։ Դո՛ւրս, դո՛ւրս այստեղից։ (Ուզում է հարձակվել Հրացի վրա)։

ԱՐԱՋ.—(բռնելով Սենեբերիմի բեվը)։ Ուսուցի՛չ...

ԱՐՏ.—Հայր, ուշքի եկ, լավ բան չես անում։

ՍԵՆԵՔ.—Դուրս վռնդիր այդ զազրելի սողունին։ Դո՛ւրս, ապա թե վոչ—մատներովս կխեղդեմ նրան։ Նա հանդգնեց ցեխ շպրտել իմ ուսուցիչների յերեսին, նա ծաղրեց իմ սրբություններս։ Նա վտանգավոր սրտով իմ հյուրասիրությունը։ Նա չի կարող մինչև անգամ քո ընկերը լինել, վորքան եա դու ապտակ եված լինես։ (Հրացին)։ Դո՛ւրս, վեր, դո՛ւրս, դարձիլ։ Քեզ նմանների տեղը անարգության սյունն է։

ՀՐԱՆՏ.—Վոչ, կախազանն է, վորին սպասում եմ։

ԱՐՏ.—(Հրացին կատաղած)։ Լռի՛ր եա թե չե։

ՍԵՆԵՔ.—Խոսի՛ր, Աբաղ, դու խոսիր, իմ լեզուն այրվում է ներ-քին կրակից։

ԱՐԱՋ.—Ուսուցիչ, նա չարժե ձեր բարկությանը։ (Բռնում է Սենեբերիմի բեվը)։

ՍԵՆԵՔ.—Ա՜ա, չարժե՞։ Ճիշտ եա ասում, ճիշտ եա ասում, վողբի։ Բայց տար ինձ այստեղից։ Տար, եա խեղդվում եմ։ Այստեղ ոչ չկա, մայրենի ոդ... (Թույլ է տալիս, վոր Աբաղը տանի իրան)։

ԱՐԱՋ.—(Հրացին մոտվի աղցնելիս)։ Մենք դեռ կտանվինք։

ՀՐԱՆՏ.—Յես ինքս կաշխատեմ հանդիպել քեզ հենց այսոր։

ՏԵՍԻԼ V.

Առաջս յեվ Հրաց

ԱՐՏ.—(մի ֆանի վայրկյան լռությունից հետո)։ Կարելի՞ է լինել ամբողջապես, անելանական, ինչ կամենաս, բայց քաղաքավարությունը պարտավորական է ամենքի համար։

ԱՐՏ.—(սկսում է մճացյալ իրերն ցցել տեղավորել ճամբարկղի մեջ)։ Լավ, բավական է, կաշխատեմ շուտով վերադառնալ։

ԿՁՏ.—(հառաչելով)։ Վոչ, դու չես վերադառնալ, չես այդ շատ լավ գիտեմ։ (Լուռթյուն մի բանի վայրկյան)։ Լսիր, վորպեսի, չես այժմ գիտեմ քո գնալու պատճառը։ Իհարկե արած, ճշտիվ ասասես, Թող նա էլ լինի։ Ցես ներան դուրս չեմ անել իմ տնից։

ԱՐՏ.—(շարունակ աչխատելով)։ Ո՛վ, մայրիկ, ինձ մասին է խոսքդ։

ԿՁՏ.—Քո կնոջ մասին։

ԱՐՏ.—(դադարում է աչխատել, զարմացած)։ Իմ կնոջ։ Ո՛վ է իմ կինը։

ԿՁՏ.—Ցես ինչ գիտեմ, անունն էլ միտս չե։ Այն աղջիկը, վոր քեզ հետ եկել է և ամեն որ քո սենյակումն է։

ԱՐՏ.—Նոյեմզարը։ Ո՛վ ասաց, թե նա իմ կինն է։

ԿՁՏ.—Ամբողջ քաղաքն է խոսում։

ԱՐՏ.—(ծիծաղելով)։ Այդ լավ է, ամբողջ քաղաքն ինձ պատկել է, մինչդեռ ես ամուրի եմ։ (Լուռթյուն)։ Մայրիկ, դատարկ բամբասանք է։ Ես և Նոյեմզարի մեջ եղած կապն ավելի մաքուր է, քան ամուսնականը։

ԿՁՏ.—Ցեսնեմ ես, ուրեմն, կա քո և նրա մեջ մի կապ։ Դա խայտառակություն է, վորդի, ավելի լավ է որևիցե պահվիր։

ԱՐՏ.—Մայր, ես գիտեմ՝ ինչ ես ուզում ասել։ Բայց Նոյեմզարն այնքան անարատ է, վորքան քո աղջիկը։

ԿՁՏ.—(վիրավորված)։ Մի՛ անպատվիր քրոջդ, մի՛ անպատվիր։

ԱՐՏ.—Ցես այնքան ստոր չեմ, վոր իմ քրոջ բյուրեղի մաքրությունը համեմատեմ մի սրտառոտոր բանի հետ։ Նոյեմզարը մի ազնիվ ընտանիքի աղջիկ է։ Նա իմ գաղափարակիցն է և իմ ամենասիրելի ընկերոջ հարսնացուն։

ԿՁՏ.—Քո ընկերոջ հարսնացուն ինչու է քեզ հետ շրջում քաղաքից քաղաք, չէին որևիցե աղջիկ է։

ԱՐՏ.—Մայրիկ, Նոյեմզարն իմ կինը չե։ Ցես վոչ կերդվեմ և վոչ փաստեր կտամ—ուզում ես հավատա, ուզում ես վոչ։ Ուրիշ ասելիք չունեմ։ (Դառնում է, վոր շարունակի գործը)։

ԿՁՏ.—Սիրուհիդ էլ չե։

ԱՐՏ.—Վոչ, վոչ, ասում եմ։ Մի վիրավորիր մի վորբ, անօթևան և անմեղ աղջիկ։ Ասում եմ, նա իմ ամենամտերիմ ընկերոջ հարսնացուն է։ Այն ընկերոջ, վոր չորիս անգամ ինձ ազատել է մահից...

ԿՁՏ.—(վախեցած)։ Մահից... Ի՞նչ ես ասում դու։

ԱՐՏ.—Այո, դրեթե մահից։ Նա ինձ փրկել է մի անգամ կապկների մտրակից, մի ուրիշ անգամ սվիններուց... բանտում։

ԿՁՏ.—(ավելի վախեցած)։ Ինչ ասացիր, բանտում։ Ուրեմն դու բանտ ես նստել։

ԱՐՏ.—Յերեք անգամ։

ԿՁՏ.—Յերեք անգամ։ Ինչու համար։

ԱՐՏ.— (սառն հեգնությամբ)։ Ո՛վ գիտե։ Հավենական գեպս վոչ գողության և վոչ վորևե խարդախության համար։ Նրանք իրավունք ունեին ինձ ավելի խիստ պատժելու, ես չեմ բողոքում։

ԿՁՏ.— Այդ ես պակասում իմ տանջանքներին։ Բայց ինչու մեզ չես պրել։

ԱՐՏ.— Ինչ կարիք կար ձեզ վշտացնելու։ Ցես ամեն մեկդ ձեռք եյի առել, վորը լուրը ձեզ չհասներ։ Մայր, ես եկել եմ և հիմանդանոցում։

ԿՁՏ.— (ընկճված)։ Ասա, վորդի, ասա բոլորը և մի՛ անպատվիր վերջացրու։

ԱՐՏ.— Չեյի ասել, չեմն դու չխոսելիը Նոյեմզարի մասին։ Ամբողջ մի ամիս ես գտնվել եմ մահու և կյանքի մեջ։ Ցեվ պետեմ ավ և յնդել այն միակ անձը, վոր գիշեր-ցերեկ հսկել և ինձ ինչպես հարազատ քույր—անքուն, անհանգիստ։ Այն աղջիկը, վորին արհամարհում եք և անպատվում Նոյեմզարն իմ կիրնը չե, մայր. մի կին կամ սիրուհի չեր կարող լինել այն, ինչ վոր նա յեղել և ինձ համար։ Նա ավելի և ինձ համար, քան նույն իսկ մի քույր կամ մայր։ Բայց Թողնենք, այդ տեսակ հարաբերությունների մասին դուք դեռ պաղպաղալ չունիք...

ԿՁՏ.— Ներեք վոչինչ չի կորում։ Ի՞նչ գործ ունի նա այստեղ։ Ինչու չի եկել քեզ հետ և քեզ հետ էլ գնում է։

ԱՐՏ.— Այդ ինքը պիտի։ (Նայելով ժամացույցին)։ Մայրիկ, ես ուշանում եմ, Թող գործս վերջացնեմ։

ԿՁՏ.— Վոչ, չեմ Թողնիլ։ Այն բոլորից հետո, ինչ վոր ասացիր, քո գնալն ավելի անհնարին և դառնում։ Քեզ յերիկամ անգամ բանտ են նստեցրել, դու յեղել ես մահամերձ հիվանդանոցում։

վանդ, և նա չեմ իմանում՝ ինչպիսի մարդ, մի դնար ալդ անիծված երկիրը։ Մինչև հիմա այնտեղ քաքախան ու վատ հիվանդություններն կյանք ապանում մեր զավակներին, ալժմ բանան ու աքսորը։ Մի գնար։ (Նստում է լուացած)։

ՏԵՍԻԼ IX

Նույնի յեվ դարձյալ Անտիից

ԱՆԱՀԻՏ.—(գալիս է խորի դռներից՝ գլխարկով)։ *Սատկի Ֆլորային. Նա ստացել և արկղիկը Նա ուզում է քեզ հետ տեսնվել։*

ԱՐՏ.— (եգիպտական ժպիտով)։ *Ուզում է ինձ հետ տեսնվել դռներն իմ առաջև փակելով։*

ԱՆԱՀԻՏ.—*Նա մնդավոր չեր Հայրն և հրամայել ծառաներին քեզ չներսնել։ Այս մասին Ֆլորան տեղեկացել և ունեցել իր հոր հետ։ Այժմ նրանք չեն խոսում միմյանց հետ։ Ֆլորան հագնվում եր, նա իսկույն ինքը կգա տեսնելու։ Ցես վազ ցի, վոր քեզ զգուշացնեմ։ (Մոտենալով Կատարինեյին)։ Մայրիկ, ինչու՞ չես այդպես ընկճվել։ Դու Աստուածին պիտի ուրախ սրտով ճանապարհ դնես։*

ԿԱՏ.— *Թող ինձ, թող ինձ։ Նա ուզում է, վոր ես կամ հանկարծամահ լինիմ կամ խելագարվիմ։*

ԱՆԱՀԻՏ.—(ցայելով դեպի աջ կողմի դռները)։ *Ահա Ֆլորան։* (Գնում է դիմավորելու)։

ՏԵՍԻԼ X.

Նույնի, Ֆլորա, հետո Նոյեմզար, Սեմեմբերիմ յեվ Հրաչե

ՖԼՈՐԱ.—(Ներս է մտնում աջ կողմի դռներից։ Նրա դեմքը ճոգնած յեվ գունատ է)։ *Տիկին Կատարինե, չես եկա ձեզ համար մի այն։ Անահիտն ասաց, վոր դուք հուսահատված եք...* (Մտնում է յեվ ճամբուրվում Կատարինեյի հետ)։

ԿԱՏ.— (Վեր կենալով տեղից)։ *Այո, Ֆլորա, նա գնում է և ինձ թողնում ալի արատուքի մեջ։ Ցես մայրերից ամենադժբաղդն եմ, վոր զրկվում եմ քեզ նման հրեշտակից...*

ՖԼՈՐԱ. (սասիկ ծիծաղվում է)։

ԱՆԱՀԻՏ. *Մայրիկ, ինչու՞ են հարկավոր այդ խոսքերը։*

ԱՐՏ.— (սառը)։ *Որիորդ, չես շնորհակալություն եմ հայտնում ձեր առատ ևվիրաբերության համար։ Բայց հետ ու-*

դարկեցի այն, վորովհետև չեքեն ընդունելի, կվիրավորեի իմ ընկերներին։ Գողզիլով ձեր տան դռներն իմ առջև, դուք գրանով հետ եք վերցրել ձեր նվերը։

ՆՈՅԵՄ.— (Ներս է մտնում աջ կողմի դռներից յեվ, տեսնելով Ֆլորային, բերեվ ցնցվում է յեվ կանգնում է դռների առջև)։

ՆՏ.— (տեսնելով Նոյեմզարին, նույնպես ցնցվում է)։

ՆԱՀԻՏ.—(արհամարհանքով յերես է դարձնում Նոյեմզարից)։

ՆԼՈՐԱ.—(չի նկատել Նոյեմզարին)։ *Ցերեկ յես տուն ունենալի իմ իրավունքի տակ, նրա դռները միշտ բաց կլինելին ձեր ամենավատանգավոր ընկերների համար։ Բայց, ինչպես կամենաք, ես կգտնեմ ճանապարհ իմ նվերը տեղ հասցնելու։*

ԱՐՏ.— (ճամբարկղը կողպելով, բանալին դնում է գրպանը)։ *Ցես պատրաստ եմ։ Մնում է մի կառք կանչել։* (Վերադառնում է բնվի վրա)։

ՆՈՅԵՄԶԱՐ.—*Իմ կառքը սպասում է դրսում. կարող ենք յերկուսս էլ տեղավորվել։ Վերարկուդ տուր ինձ։*

ՆԼՈՐԱ.— (Նոյեմզարի ձայնից ցնցվելով, ճայում է)։

ՆՏ.— (հանկարծ գրգռվելով), *Անիծվածներ, ինչ եք ուզում իմ վորդուց։ Գնացեք ձեր գործին, թողեք նրան։*

ԱՐՏ.—(հիստ հանդիմանությամբ)։ *Մայրիկ, մայրիկ...*

ՀՉ.—(Բռնելով Կատարինեյի բեվը)։ *Մի թեթևացնիր մեր անունը այդ ոտարուհու մոտ։*

ԿՏ.—*Ա՜հ, յերկնային Թագավոր, ուժ տուր ինձ դիմանալու։*

ԱՐՏ.—*Ցես կգամ, մայրիկ, յես կգամ, շուտով։* (Ճամբարկղը վերցնում է)։

ՆՏ.—(Ուրախանալով)։ *Ա՜հ, կգաս, շուտով, սատմ հա։ Դե՜հ, նեերիր,վորպի, բարի ճանապարհ. արի համբուրեմ քեզ։* (Հարձակվում է Արտաշեսին համբուրելու, բայց հանկարծ ոտատափառիար հանգ է առնում, լսելով Սեմեմբերիմի ձայնը)։

ՍԵՄԵՄԲ.—(Բևմի խորից. բարձր, դողդոջուն ձայնով)։ *Նա չի գալ։ Նա չի գալ... նա գնում է ոտարների համար կախարան բարձրանալու։*

ՆԼՈՐԸ.—(Ցնցվում են)։

Մի բանի վայրկյան լռություն)։

ՀՐԱՉԵ.—(Ցերեկում է նախասենյակի դռներում յեվ կանգնում սպասնալի դիրքում)։

ՆՏ. *Աա, բալդուշ, քո ձայնը...* (Մի նիշ արձակելով. հարձակվում է Արտաշեսի վրա, ճամբարկղը խլում է յեվ ձգում է հա-

տակի վրա)։ *Առաջ սպանիր ինձ, հետո վառք դուրս կիր այս անկից։ Դու չես գալ, դու չես գալ... Կախարան ասաց։*

ԱՐՏ.—*Մայր, ջան, աղաչում եմ, մի խայտառակիր ինձ...*

ԿԱՏ.—*(Խեղդված ձայնով)։ Գնա... գնա... Ո՜հ, խեղդվում եմ... ոդ ոդ... (Ուշաթափվում է)։*

ԱՐՏ.—*Մայրի՛կ։ (Հարձակվում է յեվ մարը բռնում, վոր չընկնի)։*

ՖԼՈՐԱ.—*(Դուրս յեվ աճապարժ կանգնած է)։*

Ա.Ն.—*(Նոյեմզարիից յեվ Հրաչեից)։ Դուք տեսնում եք այս տեսարանը։ (Վազում է մորն օգնելու)։*

ՆՈՅԵՄ.—
ՀՐԱՉ.— } (Նայում են միմյանց)։

ԵՐԱՐՎԱԾ ՀՈՐԻՉԳ

Առաջին արարվածի տեսարանն է անփոփոխ, միայն ճաշի սեղանի վրա վոչինչ չկա։

ՏԵՍԻԼ I

Աճաիս յեվ Նազանի

ՆԱԶԻՏ.—*(Վարագույրը բարձրացնելիս դուրս է գալիս աջ կողմի յերկրորդ դռնեռով, մի ամաց ձեռին, վրեն գդալ)։ Նազանի՛։*

ՆԱԶԱՆԻ.—*(Գալիս է խորի դռնեռով, բեյերը ծալած)։ Հրամանքո՞։*

Ն.—*Ելի կա՞ սուպ։*

Ն.—*Կա մի քիչ ել։*

Ն.—*Պահիր մայրիկի համար։ Տար այս ամանը։*

Ն.—*Ուրեմն, կերանք։*

Ն.—*Վերջացրե՞ս։*

Ն.—*Փառք աստծու։ Ձերիք որ ես խեղճ կնիկը պատառ չեր պրել բերանը։ Ո՜հ, վոդորմած աստված, չեմ իմանում ինչ պատահեց, վոր քո որնհած տունը տակն ու վրա եղավ։ (Գնում է խորի դռնեռով, ամանը տանելով)։*

Ն.—*(Կամացուկ մտնելով աջ կողմի դռնեռից, նայում է տրանֆոյի, ականջ է դնում, հետո)։ Հայրի՛կ։ (Սպասում է)։ Ձերիկ քնած է։ (Հառաչում է, յես է դառնում, նստում նոճի սեղանի հով յեվ ընկնում մտածողության մեջ)։*

ՏԵՍԻԼ II

Աճաիս յեվ Տիգրան

ՏԻԳՐԱՆ.—*(Գալիս է խորի դռնեռից։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում)։ Ողջո՛ւյն։*

ՆԱԶԻՏ.—*(Սթափվելով, վոտի յեր կանգնում)։ Ա՜հ, այդ դո՞ւք եք, պարո՛ն Տիգրա՛ն։ Շնո՛րհակալ եմ, վոր չեք մոռանում։*

Ն.—*Ինպես է այժմ տիկինը։*

Ն.—*Մի փոքը լավ է այսօր, բայց աչ մինը չի կարողանում շարժել։ Գիշերը դարձյալ անքուն է անցկացրել։ Միայն լաստա-*

դեմքին միքիչ քնեց։ Առհասարակ, վատ և, վատ և, պարոն Տիգրան։

ՏԻԳ.—Իսկ պարոն Սևենքերիմը։

ԱՆ.—Հայրիկն ավելի վատ դրության մեջ է։ Յերեկվա տեսարանից հետո մտել է իր սենյակը և վռնդվելի չի թողնում յուր մոտ։ Գիշերվա ընթացքում նա միքանի անգամ յեկավ մայրիկին տեսնելու. նայից լուռ, գլուխը տարօրինակ շարժեց ու գնաց։ Նա չել չի քնել ամբողջ գիշերը. շարունակ ծխում է, հառաչում ու անցուդարձ անում։ Պարոն Տիգրան, նա գիտե ավելի, քան թե մենք. նրան հայտնի յե Արտաշեսի սև սարսափելի գաղտնիքը, վոր մեզ չի ասում։ Նա միայն կրկնում է. «Ես կործանված եմ, փրկություն չկա»։ Յես այդ խոսքերն են, վոր յերեկ մայրիկին այնպես հարվածեցին։

ՏԻԳ.—(մտազբաղ, խորհրդավոր)։ Վճռեցից և ինչպես կարողացավ նա իմանալ այդ գաղտնիքը։

ԱՆ.—Ո՛րենից, դուք ել գիտեք։ Ասացեք, պարոն Տիգրան, ազատում եմ, ինչ և այդ։

ՏԻԳ.—Ձունիմ իրավունք ասելու։ Արտաշեսն ինձ կնամարի մատնիչ։

ԱՆ.—(Հուսահատված)։ Անգութ մարդիկ, դուք սիրտ չունիք...

ՏԻԳ.—Որիորդ, մի հուսահատվիք։ Հույս կա, վոր Արտաշեսն աջող տանի յուր գործը և ազատվի։ Մի մատնիք, բոլորը կանցնի։

ԱՆ.—Այս ամենի մեջ մի բան գոնե մխիթարական է, վոր Արտաշեսը Նոյեմբերի հետ ամուսնացած չե։ Դա միակ բանն է, վոր սփոփում է մորս։

ՏԻԳ.—Յես չեյի ասում ձեզ, վոր այդ մի անմիտ բամբասանք է։

ԱՆ.—Վահ, ամոթ բամբասողներին։ Յես ել թե՛ Նամատարբ շատ պիտի ասել Ֆլորային և այն փոքրիկին առաջացնել։ Բայց ինչ պիտելի, վոր նա այդպես սիրում է Արտաշեսին։

ՏԻԳ.—Ուրեմն, այդ ճիշտ է, վոր որիորդ Ալվանդյանը սիրում է նրան։

ԱՆ.—Յերեկ յերեկոյան դեպքից հետո յես նրա մոտն եյի։ Պետք է տեսնեյիք ինչպես փորվից խնդճ ազջիկը, յերբ ասացի, թե լուրը ստատ է, թե Արտաշեսը վոչինչ կապ չունի այդ Նոյեմբերի հետ, բացի ընկերականից։ Նա փաթաթվեց իմ պարանոցին և ուրախությունից արտասվեց։

ՏԻԳ.—Ո՛ւր է այժմ Արտաշեսը։

ԱՆ.—Կարծեմ յուր սենյակում։

ՏԻԳ.—Մենա՞կ։

ԱՆ.—Ո՛վ գիտե։ Շարունակ գալիս էն, խորհրդակցում ու գնում։ Ամբողջ գիշեր նրա սենյակից ձայներ եյին լսվում։

ՅԵՆ.—(Բեմի յետևից)։ Անահիտ, Անահի՛տ... ա՛խ...

ԱՆ.—Լսեմ եք այդ բարձր հառաչանքը։ Առաջ այդ չկար։ (Բարձր)։ Գալիս եմ, հայրիկ։ (Յածր)։ Պարոն Տիգրան, յես վախենում եմ ծերունու ուղեղի մասին...

ՅԵՆ.—(Բեմի յետևից)։ Անահի՛տ, Անահի՛տ... ա՛խ...

ԱՆ.—Իսկույն խնդրեմ։ (Շտապով գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ III

Առտաւես յեվ Տիգրան

ՓԻԴՐԱՆ.—(Մեծաք մնալով, մոտենում է ձախ կողմի դռներին, ականջ է դնում յեվ հետո բերեվակի միքանի անգամ զարկում դռներին)։ Կարելի յե։

ԱՐՏԱՇԵՍ.—(Դուրս է գալիս ձախ կողմի դռներից ձեռքին քորքի մի կապոց)։ Տիգրա՞ն։ Յես հենց ուզում եյի քեզ տեսնել. այս թղթերը թագցրու մի ապահով տեղ։

ՏԻԳ.—(Թղթերը առնում և յեվ դնում գրպանը)։ Դու ապատա՞մ ես։

ԱՐՏ.—Ամեն վայրկյան։ Բայց մխիթարությունն է, ինչ ուզում է, թող լինի։ (Ձեռը դնում է Տիգրանի ուսին)։ Ա՛խ, Տիգրան, լավ ընկեր քեզ, վոր միայն գաղափարներով ես կապված մեր շրջանի հետ և վոչ գործով։ Թևորիամ և գործի մեջ կա անձանձրույթ, վոր չատ քչերին է վիճակված անցնելու առանց վոտք կոտրելու։

ՏԻԳ.—Դու ատատանվում ես։

ԱՐՏ.—Ցնդել են մարդիկ, վորոնք իրանց հոգում կրել են պարտականության և սիրո կրիվը։ Մեր լեզվով դա անվանվում է գտնվել յերկու կրակի մեջ։ Բայց յես, Տիգրան, յես չորս կրակի մեջ եմ, չորս միմյանցից զորավոր և միմյանց ջնջող զգացումների փոթորկում։ (Հեռանում է Տիգրանից)։ Այո՛ երեկ յես քաջություն ունեյի, ասորը ատատանվում եմ։

ՏԻԳ.—Այս րոպեին Անահիտն ինձ ասաց, թե նա վախենում է հորդ ուղղի մասին։

ՍՐՏ.—Դատարկ յերկյուղ չէ, ընկեր։ (Մտածում է, ցածր յեվ խորհրդավոր)։ Ծիրանին կարծեմ իմացել է իմ գալու և գնալու իսկական պատճառը։

ՏԻԳ.—Այս բանն ասաց և՛ Անահիտը։ Բայց նա թագցնում է պատմիչը մորիցդ և քրոջիցդ։

ՍՐՏ.—(Դառն ժպիտով)։ Լա՛վ է թագցնում, հը, երեկ նա ուրիշներին մոռ գոռաց. «Նա չի գալ, նա չի գալ, նա գնում է ուրիշների համար կախաղան բարձրանալու»։ Յեվ ճի՛շ է այդ ուրիշը, արի, հասկացրու նրա մոլեռանդ ազգասիրությունը։—Իմ ամենամտերիմ ընկերը, վորին պարտական եմ իմ կյանքը յերկու անգամ։ Ի՜նչ փուչ, վոր նա հայ չէ, ինչ փուչ, վոր նա միևնույն արգանդից չէ ծնվել, վորից ծնվել եմ յես։ Վոչ մի յեղբայր չէր անել ինձ համար այն, ինչ վոր Իպպոլիան և արել։ Յեվ իմ հայրը պահանջում է, վոր յես լինեմ ուխտադրուժ, չերդիապանից, փոքրոգի և յերկչոտ մեծամեծ նրա համար, վոր Իպպոլիտը հայ չէ... Ո՜հ, գահի ղպացում ցեղամոլության, յերբ պիտի դու վերջնապես վոչնչանաս մարդկանց սրտերում։ Վչ, վչ, Թող կորչին ազատասիրները։ Յես յերդվել եմ ազատել և պիտի և ազատեմ Իպպոլիտին շղթաներից։

ՏԻԳ.—Նույնիսկ գոհելով ծնողներից։

ՍՐՏ.—Նույնիսկ գոհելով ծնողներիս։

ՏԻԳ.—Նույնիսկ Ֆլորայից։

ՍՐՏ.—Կամ։ Դու գիտես այդ։

ՏԻԳ.—Յես վաղուց եյի կասկածում։ Անահիտն այսօր հանդուգն յեղավ ինձ ասելու իմ չնչին ազգակցությունը։ Ինչու դու ինձ վոչինչ չեիր ասում այդ մասին։

ՍՐՏ.—Մինչև երեկ յես ինքս էլ չգիտեյի այդ։ Երեկվա անցքերը բացին աչքերս և յես նոր միայն իմացա, թե վորքան հեռու եյի գնացել։ Հրաժեշտի վայրկյանին, նայելով Ֆլորայի քարացած կեսպարանոցին, յես զգացի մի աչնպիսի վիշտ, վոր ծնողներիս անգամ մոռացա։ Յեվ ամի՛ վայրկյան, յերբ պատրաստ եյի չոքել այդ աղջկա առջև և ասել. «Թող կորչի պարտականությունը, դու ասնչվում ես, ապրել ես ուզում, յես էլ եմ ուզում, ծնողներս էլ են ուզում։ Յես ձեռ եմ այսօրից քեզ և ծնողներիս համար»։ Բայց

դռների միջից նայում եյին ինձ ընկերներս հանդիմանական հայացքով, ականջներիս հնչում եյին Իպպոլիտի ազերատական խոսքերը. «Ազատեցնք ինձ, յես հարկավոր եմ մի մեծ գործի համար, ապատիր դու, Արտաշես, վորովհետև յես քեզ յերկու անգամ ազատել եմ, և հենց քո պատճառով եմ այս շղթաները կրում»։ Յեվ, բարեբախտաբար, յես չտրի այդ հեմարությունը։

ՏԻԳ.—Յեվ, այնուամենայնիվ, վճռեցիր գոհել միքանի անձեր մեկի կատարելի փրկության համար։ Դա խիստ է, դաժան։

ՍՐՏ.—Բայց գա սուրբ պարտականություն է։

ՏԻԳ.—Համաձայն եմ։ Սակայն, վորքան Իպպոլիտին ես պարտական քո կյանքը, նույնչափ է ծնողներիդ։ Մոռացել ես այդ մասին։

ՍՐՏ.—Ամբողջ գիշեր, տանջանքներով... Լաթը, լաթը, Տիգրան, կա մի բան, վոր դեռ քեզ հայտնի չէ։ Ցնծում յես լինեմ այնքան յերկչոտ և ստոր, վոր վճռեմ այսօր յես կանգնել իմ քաղքից, այնուամենայնիվ, չես կորած եմ իմ ծնողների համար։

ՏԻԳ.—(Վախեցած մի քայլ յետ է կանգնում)։ Ճի՛շտ եմ հասկանում, արդյոք, քո միտքը։

ՍՐՏ.—(Բռնում է Տիգրանի ձեռը)։ Սուս, վոչ մի խոսք նրանից։ (Խորհրդավոր ձայնով)։ Երեկ ստացա առաջին, այսօր յերկրորդ սպառնալիքը։ Յես ստիպված եմ գնալ։ (Բաց է թողնում Տիգրանի ձեռը յեվ հեռանում)։

ՏԻԳ.—Թշվա՛ռ, այդ ինչ ես արել։

ՍՐՏ.—Յես խլել եմ ուրիշի վիճակը։ Այդ ավելի պատասխանատու չէ, քան չլինել վիճակին ինձ ընկնելու։

ՏԻԳ.—(Մոայլ)։ Այո՛, քո դերությունը սոսկալի է։

ՍՐՏ.—Բավական է, այլևս վոչ մի խոսք այդ մասին։ Գնա, խընդրում եմ, և այդ թղթերը թագցրու։ Բոպե առ բոպե կարող եմ չե ոպասել անկոչ հյուրերին։ Յեվերկ պիտի փախչեյի ետևից ձեռքից, չկողոպտեին. դու գիտես, վոր չես շատ մեղքեր ունեմ քավելու համար... Պետք է շուտով փախչել։

ՏԻԳ.—Յես կերթամ և շուտով կվերադառնամ։ (Սրազ քայլերով գնում է դեպի խորքի դռները, այնտեղ հանդիպում է Ալեքսանդր Ալմագյանցին, հոտոտալարն է տալիս յեվ դուրս գնում)։

ՏԵՍԻԼ IV

Արտաքես, Ալեքսանդր յեվ Սեմեերիմ

ԱՐՏ.—(Ալեքսանդրին տեսնելով, ցնցվում է յեվ աճշարժ մնում)։
ԱԼԵՔՍ.—(Դուխը բերեվ շարժում է իբրեվ բարեվելու ճաճ)։ Մենքերիմը տանն է։
ԱՐՏ.—(յուր մտերնում է աջ կողմի առաջին դռներին, բայց է անում յեվ դեպի ձերս)։ *Հայրիկ, պարոն Ալվանդյանը կամենում է քեզ տեսնել։* (Ձեռ դառնալով գնում է դեպի յուր սենյակը)։
ԱԼԵՔՍ.—*Սպասեցնք։*
ԱՐՏ.—(Կանգ է առնում)։
ՍԵՆԵՔ.—(Դուրս է գալիս աջ կողմի առաջին դռներից։ Հագուստները ճուլցն է, միայն ոտքած շապիկի փոխարեն գիշերային շապիկ։ Աչքերի կոպերն ուռել են, անկողնից, մազերը ին գզգզված)։ *Ալեքսանդր։*
ԱԼ.—*Ձերբեք չեյի կարող մտածել, թե պետք է մի որ բարեկամությունը մտնեմ այս դրության մեջ։*
ՍԵՆ.—(Անտարբեր)։ *Ի՞նչ է պատահել։* (Առանց Ալեքսանդրին նայելու, մոտենում է ծառի բայերով գրասեղանին յեվ ցրված նայացքով նայում գրերին, պատին, նատակին)։
ԱԼ.—*Վորդիդ իմ աղջկան խլել է իմ ձեռքից, յես ճնացել եմ անդավակ—ահա ինչ է պատահել։*
ՍԵՆ.—(Միեվնույն ցրված նայացքով, միեվնույն անտարբերությամբ նայում է նախ Ալեքսանդրին, ապա Արտաքեսին)։
ԱՐՏ.—(Վայրկենաբար վրդովվելով, անմիջապես զսպում է)։ *Ի՞նչ եք կամենում ինձնից։*
ԱԼ.—(Ձայնը միին բարձրացնելով)։ *Ինչ եմ կամենում։ Կամենում եմ, վոր դուք իմ աղջկան վերադարձնեք ինձ։*
ԱՐՏ.—*Ձեր աղջիկը ձեր տանն է, իսկ յես այստեղ եմ։*
ԱԼ.—*Նա չէ, չէ իմ տանը։ Դուք հափշտակել եք նրա սիրտը, հոգին, բոլոր մտքերը և թողել մի դատարկ մարմին, վոր-որի վրա կմախք և դառնում։ Դուք մտել եք իմ տունը բարեկամի դիմակով և վերվել եք ինձ հետ, ինչպես... ավազակ։*
ՍԵՆ—(դառը հանդիմանությամբ)։ *Ալեքսանդր...*
ԱՐՏ.—(Մի ուժգին շարժումն է անում, կարծես, կամենալով հարձակվել Ալեքսանդրի վրա, բայց իսկույն զսպում է իրան. քեքեվ լուրյուն)։ *Շարունակեցեք...*
ԱԼ.—*Ուրիշ ինչ անուն տամ ձեր վարմունքին։ Դուք նրա յերեխայական գլուխը լցրել եք այնպիսի մտքերով, վորոնք նրան պիտի կործանեն։ Դուք նրա բարի սիրտը կտրել եք յուր հորից և դարձրել սատանան դիտի դեպի ձեր։ Նա ինձ մեն-մենակ և հեռանում. ձեր եք տանում նրան, ասացեք։*
ՍԵՆ.—*Թուլտը մի անգամ բուլն է դրել կազմվածքի մեջ և պետք է արագ-արագ տարածվի։ Վողորմելի, անտեր հասարակություն։* (Բռունցքները կատաղի սեղմելով)։ *Ամբ, կջախջախեյի վոտներիս տակ այն հիդրային, վոր կոչվում է սոցիալիզմ...*
ԱՐՏ.—(Սառը)։ *Կկամենայի իմանալ, ձեր աղջիկն ինքն է ասել, թե յես չեղել եմ նրան ճանապարհից։*
ԱԼ.—*Միթե նա պիտի ասեր, վոր յես իմանայի, թե դժբախտությունը վորսեվից է գալիս իմ գլխին։ Այն որից, վոր դուք լսկել եք, յես իմ աղջկան չեմ ճանաչում։ Նա առաջ հեզ եր, խոնարհ և աշխատում եր վոչ մի բանով ինձ չվշտացնել։ Ցես նրա դեմքի վրա տխրություն չեյի տեսնում։ Ուրախ եր, ինչպես մի անհոգ թռչուն։ Իսկ ամեն յուր սենյակից դուրս չի գալիս, միշտ մենակ, մտախոհ, ծածկամիտ։ Նա իմ հարցերին պատասխանում է ակամա։ Նա խոսում է ինչ վոր պարտականությունների մասին և ահա յերեք որ է շարունակ կրկնում է. «Հայրիկ, յես պետք է հեռանամ այս քաղաքից»։ Ո՞ւր. հարցնում եմ, Ինքն էլ չգիտե ինչ պատասխանե։ Մեկ ասում է, թե ուզում է ճանապարհորդել, մեկ, թե գրվել է յուր այժմյան կյանքից, ուզում է փոխել այն։ Իսկ այսոր պնդում է, թե վճռել է բարձրագույն ուսում ստանալ։ Վերջապես, մի կես ժամ առաջ յես հետևանքությունից կատաղեցի և կյանքումս առաջին անգամ դուռացի նրա վրա։ Իսկ նա... նա ամենայն սառնասրտությամբ ասաց. «Բոլորը զուր է, յես այստեղ մնալ չեմ կարող։ Յեթե չթողնես գնալ, յես կփախչեմ տնից»։ Ցեվ այս բոպեիս նա ճանապարհի պատրաստություն է տեսնում։*
ՍԵՆ.—*Մի թողնիր նրան, Ալեքսանդր, մի թողնիր։ Կապտաթիր նրա վոտներն ու ձեռները, գցիր մի մութ սենյակ և ինքդ պահապան կանգնիր դռան մոտ, Ազատություն է, վոր*

վչացրել է մեր զավակներին։ Ձեռ այժմ եմ հասկանում։ Ձեռ, որ միշտ ազատությունն եմի քարոզում։

ԱՐՏ.—(Առաջ)։ Գարոն Ալմանզյան, չես ձեր աղջկան կերբեք չեմ հորդորել քո հոր մոնից հեռանալու։ Համաձում եք իմ խոսքերին։

ԱԼ.—Բայց նա հեռանում է, ասում եմ, նա կատակ չի անում։ (Զգացվելով)։ Նա թողնում է քեր ծերունի հորը վիրջ ծառած, անհնքը բերանին։ Ինչ վատություն եմի արել ձեզ որ այս փորձանքը բերեցիք իմ գլխին։ Ինչու համար եր հարկավոր այդ։ Մինչև չկային ուրիշ ընտանիքներ, ուր քարոզեիք ձեր ցնորքները, ինչու ընտրեցիք ձեր հոր ամենահավատարիմ բարեկամի տունը։

ԱՐՏ.—Դժբաղդարար, չես ժամանակ չունեմ վիճելու։ Ասացիք՝ կարճ ու կտրական. ինչ եք ուզում ինձնից։

ԱԼ.—Ձես պահանջում եմ, որ դուք ինչպես իմ աղջկան շեղել եք հանապարհից, այնպես էլ չես բերեք։

ԱՐՏ.—Այսինքն կամենում եք, որ ես նրան համոզեմ ձեռ ձեր տանը, այնպես չէ՞։

ԱԼ.—Այո։

ԱՐՏ.—Կարող եմ չես այդ անել։

ԱԼ.—Կարող եք, որովհետև ինչ որ էլ նա ասի, գիտեմ, որ ձեր չեռևից է գնում։

ԱՐՏ.—Շատ բարի, չես կաշխատեմ կատարել ձեր պահանջը։ (Բարձր)։ Անահիտա...

ԱԼ.—Ինչ եք ուզում անել։

ԱՐՏ.—Խնդրել, որ ձեր աղջիկը գա այստեղ։

ԱԼ.—Այդ անկարելի է։

ԱՐՏ.—Ինչո՞ւ։

ԱԼ.—Անկարելի է։ Ձեկեք դուք ինքնին մեր տունը։

ԱՐՏ.—(Դռնական)։ Ձերբեք։ Դուք ձեր տան դռները փակել եք իմ առջև, թողեք, որ նրանք միշտ փակված մնան։

ԱԼ.—(Տանջանքով)։ Բայց...

ՍԵՆ.—Ալեքսանդր, կարող ես հավատալ նրան։ Նա ամեն բան կորցրել է, բացի աղնվությունից։ Վերջապես, չէ՞ որ այս իմ տունն է։

ԱԼ.—Շատ լավ, չես համաձայն եմ։ Գնանք և նրան կուղարկեմ այստեղ։ Սինեքերիմը պատասխանատու է։ Եե՞րդ մարդ, ինչպես փոխվել ես դու։ (Գնում է խորհի դռներով)։

ՏԵՍԻԼ V

Ռոստաես, Սենեբեռիմ, Անտոնիո

(Լռություն)։

ԱՐՏ.—(Նայել է նախ Ալեքսանդրի յեռերից, ապա իր ճոր բախիծով)։

ՍԵՆ.—(Լուռ ճանապարհ է դնում Ալեքսանդրին մինչև դռները յեվ նեռ է գալիս)։ Նա իր աղջկան կուղարկի այստեղ։ Ես պարտավորեցրի հետո դա այնպիսի հավատ է Ալեքսանդրի կողմից դեպի իմ տունը, որ պետք է հարգել ինչպես սրբություն։

ԱՐՏ.—Այդպես է։

ՍԵՆ.—Ձես պատասխանատու յեղա քո աղնվության մասին, որովհետև ապակառված է քո գլուխը և ոչ սիրտը։ Դու կհամոզես այդ աղջկան տեղից չշարժվել։ Ձես կկանչենամ նրա մոտ այն դռների յեռևում։ (Ցույց է տալիս աջ կողմի առաջին դռները)։ Ձեվ կհեռանամ ձեր խոսակցությանը։ Ձեկեք դուք չաշխատես կատարել քո խոստումը, յերդվում եմ, որ քեզ կպատժեմ։

ԱՐՏ.—Լավ, հայրիկ...

ԱՆՀ.—(Դուրս է գալիս աջ կողմի առաջին դռներից գլխարկով, ձեռին տետրակներ յեվ ջատով ուցցում է դեպի խորհի դռները)։

ՍԵՆ.—Ո՞ւր ես գնում, աղջի։

ԱՆԱՀ.—Դասի, հայրիկ. ուշացել եմ։ (Ջատով գնում է խորհի դռներով)։

ՍԵՆ.—(Դառնությամբ)։ Լսեցիր։ Տեսար ինչպես է մաշվել ու ապականվել։ Այդ դասերը նրան կպատանեն։ Նա առանց այն էլ քոլլ կազմված է ունի։ Արտաշես, Արտաշես. գնա քո ընտրած հանապարհով. ես համոզվեցի. որ չեմ կարող քեզ դարձի բերել։ Բայց, գիտես, մի քիչ դուք ունենալն էլ լավ բան է։ Մի կարծիր, որ ինձ համար եմ ասում վախ, ոչ, քավ լիցի. ես կարեկցություն չեմ խնդրում քեզնից։ Ինձ այդ նրան, խնայիր մորդ...

ԱՐՏ.—(Ցնցվելով)։ Մորս... (Գնում է դեպի աջ կողմի յերկրորդ դռները)։

ՍԵՆԵՔ.—Մի անհանգստացնիր, նա քնած է։

ԱՐՏ.—(Դռները կամացուկ բաց է անում յեվ նայում)։ Այո, քնած է։ (Գալիս է բեմի կենտրոնը)։

ՍԵՆԵՔ.—Անթափ կին։ Նրա աչք թևը չի շարժվում և... չի շարժվի յերբեք, այդ դու լավ գիտես, իրավ բժիշկ։ Ցնս եվ եմ մեղավոր նրա առաջ, ոո, շատ եմ մեղավոր։ Քանի ու յոթ տարի հափշտակված լինելով իմ գործունեությամբ, չեմնրա վերաբերմամբ յեղել եմ մի զազրելի եգոիստ։ Բայց վերջին ին եվ վերջացած է։ Ցնս յերկար ապրել չեմ կարող, զգում եմ։ Մի թողնիր նրան իմ մահից հետո դռնե դուռ ընկնիվ, վաղորմություն մուրալ։ Ցնս խոմ վոչինչ չունեմ, իմ միակ ժառանգությունը դու եյիր, գնացիր ձեռքիցս։ Դևե, հերիք է, ինչ հարկավոր է պառավ կնոջ պես մրմրթալ, չե՞ վոր ամեն բան վերջացած է... (Գայլերն ուղղում է դեպի աջյակ գրեթե հասնում առաջին դռներին)։

ԱՐՏ.—(Ուշադիր դիտել է նորը, մոտենում է նրան մի քանի քայլ)։ Հայր, սպասիր։ (Ձեռքի մոտիցնալով)։ Դու դիտես իմ ապառնի պալու պատճառը։

ՍԵՆ.—Ինչքի է հարկավոր։

ԱՐՏ.—Հայր, դու դիտե՞ս իմ գնալու խնդրական պատճառը։

ՍԵՆ.—Գիտեմ։

ԱՐՏ.—(Ենչապատ)։ Ո՞վ է ասել քեզ։

ՍԵՆ.—Դու ինքդ...

ԱՐՏ.—Հայր, դու յերբեք չեմ հարբում, և ուղղակ դեռ առողջ եմ։

ՍԵՆ.—Պատանիներ եք դուք, անփորձ պատանիներ։ Ցնվ հիմարներ են նրանք, վորոնք ձեզ այդ տեսակ վատեզակոր գործեր են հանձնում։ Ցնս լսել եմ իմ ականջներով, ամա այնտեղից, այդ դռների ետևից։ (Ցույց է տալիս ձախ կողմի դռները)։

ԱՐՏ.—Հայր, դու կատարելապես լրտեսում ես ինձ։

ՍԵՆ.—Հիմար հիմար մի խոսիր։ Ինչ ասել է լրտեսություն։ Մի՞թե դուք չե՞ք լրտեսում և ամեն մի քայլոցների դիմում ձեր հակառակորդների միտքը հասկանալու։ Այո, քո գալու ո՞րից յես հետևում եմ քո ամեն մի քայլին։ Բայց այս ամենը լրտեսություն չեր, այլ ուրիշ բան։ Ասում եմ, յերբեք դամ լրտեսություն չեր, դեռ մայրական կաթը չի չորացել ձեր շրթունքների վրա։ Զգիտեք, վոր պատերն ել ականջներ ունեն այդ տեսակ բաների համար։

ԱՐՏ.—(Դղրդված)։ Ինչպես պատահեց այդ, ասա։

ՍԵՆ.—Գիշեր եր։ Քունը փախել եր ինձնից։ Խակ միտքս գործում եր։ Մոտալ գիշեր, սոսկալի վայրկյաններ Դուք կարծում եիք յես քնած եմ։ Ամել խոսում եիք, ճշմարիտ և շշնչյունով, բայց պարզ։ Լսեցի։ Այո, յես ակամա լրտես եղա և բոլորն իմացա։ Դու կործանված ես, դինվորների սվիններն արդեն պսպղում են քո կրծքի վրա... և հետո... կախաղանը։...

ԱՐՏ.—(Նայելով աջ ու ձախ)։ Սուս, բավական է.. մայրիկը...

ՍԵՆ.—Մի վախենար, յես նրան վոչինչ չեմ ասիլ։ Բայց ինչ ոգուտ, մայրական նախապաշարմունքը վաղուց է նրան ասել, թե դու կորած ես... Թշվառ, թշվառ... (Գնում է աջ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ VI

Արտաքս յեվ Տիգրան

ԱՐՏ.—(Հոր խոսքերից խորն ազդված, մտածում է, ճակատը օփեյով։ Մի քանի վայրկյան մենակ է բեմի վրա)։

ՏԻԳՐԱՆ.—(Գալիս է խորհի դռներով գուցես յեվ հուզված)։ Մի դժբաղդ լուր։

ԱՐՏ.—(Սթափվելով, բայց անտարբեր)։ Ինչ է պատահել։

ՏԻԳ.—Այս բոպեիս լսեցի, վոր Արազը յերկաթուղու կայարանում դաշույնով ծանր վիրավորել է Հրանտին։

ԱՐՏ.—Հրանտն յերկու ժամ առաջ ինձ մոտ եր։

ՏԻԳ.—Դեպքը պատահել է մի ժամ առաջ։ Դու դիտես, վոր Արազն այսոր իր խմբով պիտի ուղեվորվեր Տաճկահայաստան։ Հրանտը գնում է կայարան նրա հետ վեճի բռնվելու յերեկվա ընդհարման պատճառով։ Նա Արազին վիրավորում է փողոցային խոսքերով։ Արազը հանում է դաշույնը և խփում նրան, դուռալով. «դավաճան»։

ԱՐՏ.—Արազը բանտարկված է։

ՏԻԳ.—Դեռ վոչ, չեն բռնել։

ԱՐՏ.—Ցնվ հավիվ թե կարողանան բռնել։ Ճանաչեմ եմ Արազին։

ՏԻԳ.—Հրանտին տարել են հիվանդանոց։ Դրությունը անհուսալի չե և ասում են հազիվ թե մինչև յերեկո ապրի։

ԱՐՏ.—Մի զոհ ես իմ խղճի վրա։ Ցնթե յերեկ ինձ թողնային գնալ, այդ դժբաղդությունը չեր պատահել։

ՏԻԳ.—Հրանտը վաղ թե ուշ պիտի իր անպուսակ լեզվի զոհը դառնար։

ԱՐՏ.—Ցնա ցավում եմ ավելի Արտալին։ Ինչ հոգով նա պիտի պաշտպանի իր արյունակիցներին այդ տեսակ յեղբայրասպանությունից հետո։ Տիպրան, գնանք Հրանտին տեսնելու։

ՏԻԳ.—Ինչ ես ասում, անմիտ. Ցերեկ մի տեղ կա քեզ համար գնալու—այդ յերկաթուղու գնացքն է։ (Տատանվելով)։ Գու գնո չկիտես ինչ և պատահի։

ԱՐՏ.—Ուրիշ դժբախտություն...

ՏԻԳ.—(Գլուխը տխուր բեռում է կրծքին)։

ԱՐՏ.—(Ձայնը բարձրացնելով)։ Ասա, ինչ ես համբացել։

ՏԻԳ.—(Տատանվելով)։ Նոյեմզարին բանտարկել են։

ԱՐՏ.—(Ցնցվում է, գուցատվում։ Լռություն)։ Ուրեմն, ամեն բան լրացավ։

ՏԵՍԻԼ VII

Նույնը յեվ Ֆլորա

ՖԼՈՐԱ.—(Դալիս է խորքի դռնեռով)։ Հայրս ինձ ասաց... վոր (Տիգրանին տեսնելով, շփոթվում է)։

ՏԻԳ.—Թույլ տուր ինձ անցնել քո սենյակը մի նամակ գրելու։ (Առանձին ցածր ձայնով)։ Ջերկարացնես։ Գու պետք է փախչես խնդրեն և կե։ (Գնում է ձախ կողմի դռնեռով)։

ՏԵՍԻԼ VIII

Առաջես յեվ Ֆլորա

ԱՐՏ.—(Թերեվ լռությունից հետո)։ Փլորա, ձեր հայրն ասաց, թե դուք ուզում եք հեռանալ այս քաղաքից։ Կարելի յե իմանալ ուր եք մտադիր գնալու։ (Աթոռ է առաջարկում)։

ՖԼՈՐԱ.—(Չի նստում)։ Գրա համար նախ կամենամ ինձ տեսնել Սյո։

ԱՐՏ.—Ցնմ կարող պատասխանել ձեր հարցին։

ՖԼՈՐԱ.—Ֆլորա, դուք չերեխա չեք։ Ձերը վտանգում եք մի ազգի սի լուրջ քայլ անել, պատասխանատվությունը նախ և առաջ ձեզ համար եք անում։

ՖԼՈՐԱ.—Ցնա գնում եմ բարձրագույն ուժում ստանալու։

ԱՐՏ.—Ձեր հայրը հավատում է այդ բանին։

ՏԼՈՐԱ.—Վոչ։

ԱՐՏ.—Ֆլորա, այնտեղ, ուր ուզում եք դնալ, դուք դեր չունեք կատարելու։

ՏԼՈՐԱ.—(Վճռացած)։ Ինչմի մի Նոյեմզար կարող է ունենալ, իսկ յես՝ վոչ։

ԱՐՏ.—Նոյեմզարը ունի վորոշ պատասխանատվություն, կամքի ղորիզ ուժ և բոլոր դժվարություններին դիմանալու համբերություն։

ՏԼՈՐԱ.—Իսկ յես ունիմ թշվառներին ոգնելու ջերմ փափագ և դրամ։

ԱՐՏ.—Դուք դրամ չունեք։ Բոլորը առայժմ պատկանում է ձեր հորը. իսկ նա ձեզ վոչինչ չի տալ։

ՏԼՈՐԱ.—(Դրականը)։ Կատա, ստիպված կլինի տալ։ Առաջին պահ նա կկատաղի, կանիծե ինձ, բայց հետո կտա։ Ցնվ յես նրա տված կոպնեմ նրանց, վորոնք այնպես տանջվում են գաղափարի համար բանտերում և աքսորում։

ԱՐՏ.—Այդ ոգնությունը դուք կարող եք անել առանց այսանդից հեռանալու ել։

ՏԼՈՐԱ.—Վոչ, այդ այն չե։ Ցնա նույնպես ուզում եմ իմ աչքերով տեսնել բոլորը, մտածելու զգալ ուրիշների պես։ Իմ անձիա, անհոգ, բուսական կյանքը ինձ ձանձրացրել է։ Ցնա ել փափագում եմ լինել մի Նոյեմզար, վոր այնքան արժանացել է ձեր և ձեր ընկերների հարգանքին ու գովասանքին։

ԱՐՏ.—Կամենում եք ասեմ, թե իսկապես ինչու համար եք գնում։

ՏԼՈՐԱ.—(Շփոթվելով)։ Ասացեք։

ԱՐՏ.—Դուք վոչ այնքան գործով եք հափշտակված, վորքան... ինձնով։

ՏԼՈՐԱ.—(Ավելի շփոթվելով)։ Դուք... սխալվում եք։

ԱՐՏ.—Ֆլորա, այն շրջանը, ուր ուզում եք մտնել, նախ և առաջ թշնամի չի կեղծիքին։ Դիմացին այնտեղ դեր չի կատարում ընկերական հարաբերությունների մեջ։ Սովորական ծանոթություններն ել միշտ արտաքսված են այդ շրջանից։ Ցերեկ յես ձեզ, առանց քաշվելու, ասացի, թե հափշտակված եք ինձնով, դա անհամեստություն չեր, այլ ընկերական պարզ խոստովանություն։ Ցերը իմ քույրը թերևս մոտարար հաղորդել է ձեզ մի փոդոցային բամբասանք, թե յես իբր թե պատմի ամուսնացած եմ Նոյեմզարի հետ, դուք ուզում եք, ձիշդ է, արդյոք։

ՖԼՈՐԱ.—(Տատանվելով)։ Ճիշտ է...

ԱՐՏ.—Տեսնում եք, ինչ է տպագրությունը այդ։ Մի ամաչեք։ Մեր շրջանում այդ տեսակ ամոթի դպագումը համարվում է լավագույն շալար։ Ազատվեցնք նախ և առաջ այն ժանգից, որ կյանքի հնամաշ պայմանները դրել են մեր կանանց սրտերի վրա։ Համեստությունն այն ժամանակ է միայն համակրելի, երբ բնական է և անբաժան անկեղծությունից։ Փոխանակ ձեր գլուխները քողարկելու, աշխատեցեք, որ նրանք միշտ լինեն մաքուր։

ՖԼՈՐԱ.. (Ուշադիր լսելով, հափշտակվում է)։ Շարունակեցեք, շարունակեցեք...

ԱՐՏ.—Այն, ինչ որ ձեր շրջաններում համարվում է պարկեշտություն, մի տեսակ փարիսեցություն է։ Մենք աշխատում ենք տղամարդի և կնոջ հարաբերությունները դարձնել ընկերական, անքող, բայց մաքուր։ Մենք աշխատում ենք այնպես մտածել կնոջ մասին, որ մեր լեզուն չամաչի արտահայտել մեր գլուխները։ Ձեր շրջանի մեջ ընդունված արտաքին վայելուչ ձևերի տակ թաղնված են շատ արատավոր միտումներ, որոնցից մենք զզվում ենք։

ՖԼՈՐԱ.—(Ավելի ու ավելի հափշտակվելով)։ Առաջին անգամն եմ լսում այդպիսի խոսքեր և պատրաստ եմ լսել անվերջ։ Շարունակեցեք, նրանք քաց են անում իմ առջև մի նոր, անծանոթ աշխարհ։

ԱՐՏ.—Աշխատեցեք, ուրեմն, գրավվիլ այդ նոր աշխարհի լույսով։ Այն ժամանակ դուք կդարձրանաք մեր հասարակության բարոյական մակերևույթից և կհանականաք, թե ուր և թաղնված մարդու իսկական կոչումը։

ՖԼՈՐԱ.—(Բոլորովին հափշտակվելով)։ Արտաշես, անգին Արտաշես... (Ուզում է մոտենալ)։

ԱՐՏ. (Ձեռի մի հանգիստ շարժումով) Վոչ, դրա համար չասացի։ Թողնենք սովորական ձևերը։ Սիրը զգացում է և վոչ կիրք։ Թողնենք այն իր մաքրության մեջ։ Շնչենք նրա հստակ բուրմունքը հեռվից։ Ինչ է տևելու մեր տեսակցությունը։ Գուցե ու վեց տարեկան եմ և դեռ չեմ ճաշակել կնոջ համբույրը։ Ինչու քսան ու վեց վայրկյան էլ չկարողանամ ինձ նույնը։

ՖԼՈՐԱ.—(Վախեցած)։ Ինչ եք ասում, ինչու քսանվեց վայրկյան միայն, ինչու վոչ ավելի։ Ձեր խոսքերի տակ ես զգում եմ մի ինչ վոր սարսափելի բան...

ԱՐՏ.—(Հանգիստ)։ Բոլորը կբացատրվի ինքն ըստ ինքյան։ Մի քիչ համբերություն։ Այսօր ձեր հայրն ինձ անվանեց ավազակ։ Մի վայրկյան արյունը գլխովս ավեց և չգիտեի ինչ կանեի, եթե ժամանակին չզսպեի ինձ։ Դա մի անարդար վիրավորանք եր։ Բայց ես նրան չեմ մեղադրում։ Մի հայր, ով որ զրկվում է իր միակ զավակից, ունի իրավունք իր սովորական սառնասրտությունը մոռանալու։ Ցտեսություն, մնացեք ձեր հոր տանը, մի անբարեացնեք նրան—ահա իմ միակ խնդիրը։

ՖԼՈՐԱ.—Չեմ կարող։ Բանի վոր ստիպել եք ինձ անկեղծ լինել—կլինեմ մինչև վերջը. առանց ձեզ ես մի որ անգամ չեմ կարող մնալ այստեղ։

ԱՐՏ.—Բայց գիտեք չես ուր եմ գնում.. (Նայում է Ֆլորային տարտրիցակ)։

ՖԼՈՐԱ.—Այդ ինձ համար միևնույնն է։ Ցես կհետևեմ ձեզ, ուր վոր գնաք։ Ինչու եք ինձ այդպես նայում։ Սպասեցեք, այդ չեն, այստեղ կա մի վատ բան։ (Մոտենում է յեվ բռնում Արտաշեսի ձեռը)։ Ասա, ինչ ես մտածում դու այս վայրկյանին, ինչու քո աչքերն այդպես տարօրինակ են նայում...

ԱՐՏ.—(Ականջ է դրել դեպի դուրս, գունատվում է, դողում)։ Գնա տուն, գնա հորդ մոտ... (Ձեռն ազատում է)։

ՄԵՆԵՔ—(Բեմի ճեղեվից)։ Ա՜հ, ա՜ն, գալիս են, յեկան, ուղղակի մեր տան վրա... Ազատվեցնք...

ԱՐՏ.—Լսում ես, լսում ես, գնա, փախիր...

ՏԵՍԻԼ IX

Նույնը, Սեճեբերիմ, Աճաճիս, Կատարինե, Տիգրան յեվ մի վոստիկանական պաշտոնյա

ՄԵՆ.—(Ներս է վազում աջ կողմի առաջին դռնեից դողալով)։ Ազատվեցնք, գալիս են։ Ցես տեսա այնտեղից, լուսամուտից։ Կատարինե, Կատարինե, ո՜հ, (Աղիմաս վազվզում է դես ու դեն)։

ՏԻԳ.—(Ներս է գալիս ձախ կողմի դռնեից մի գրիչ ձեռին)։ Ինչ պատահեց։

ԱՆԱՀ.—(Գալիս է շտապով խորհի դռնեռով)։ Հայրի՛կ, հայրի՛կ, նրանք գալիս են, յես հազիվ կարողացա նեղս մտնել։ (Ընկնում է նոր գիրկը)։

ՍԵՆ.—(Գրկում է Անահիտի գլուխը)։ *Մի վախենար, նրանք գա-*
լիս են միայն մեկի համար։ Այդ չես վաղուց էլ սպասում։
ՍՐՏ.—(Լուռ չեվ աճշարժ կանգնած է բեմի ձախ կողմում չեվ նա-
յում է դեպի խորհի դռները)։
Բեմի չեհեվից լսվում է, թե ինչպես մի ծանր բաց ընկնում է
և հատակի վրա։
ԱՆԱՀ.—*Մայրիկը։* (Վազում է դեպի աջ կողմի չերկրորդ
դռները, բաց է անում դռները, նայում, սարսափում) *Մայ-*
րիկ... Ո՜հ, նա սողում է հատակի վրա։ Ոչնչացնե՛ք։
ՖԼՈՐԱ.—(Գարացած, աճշարժ, բեմի աջ կողմից դիտում է Ար-
տաշեսին)։
ՏԻԳ.—(Վազում է դեպի աջ կողմի չերկրորդ դռները չեվ շեմքի վրա
Անահիտի ոգնությամբ հատակից բարձրացնում է անդամալույծ
Պատարիճեյին)։
ԲՈԼՈՐԸ.—(Բեմի աջ կողմումից են, բացի Արտաշեսից չեվ նայում են
խորհի դռները)։
ՍԵՆ.—(Արտաշեսին)։ *Փախիր, Թշվառ, լինչ ես քարացել...*
ՍՐՏ.—*Մայրիկ։* (Արագ մոտենում է մորը, գրկում, համբուրում, հե-
տո հանկարծակի նայում է Անահիտի հետ չեվ, դառնալով հորը)։ *Մենք*
բարով, հայրիկ, չես պլես քեզ չեմ ասենչիկ։ Ֆլորա, հերիր
լինե՛։ (Մի վայրկյան դառը բախիծով նայելով Ֆլորային, վա-
զում է ձախ կողմի դռներով չեվ դռները հետեվից փակում)։
ՊՐԻՍՏԱՎ.—(Ծերեվում է խորհի դռների մեջ։ Նրա հետեվից չերեվում
են ուրիշ վոսկիկանների գլուխներ)։
Բեմի չեհեվից լսվում է ատրճանակի չերկու կարկ)։
ՍԵՆ.—(Աղաղակելով)։ *Ահա կոծանվածը։*
ՏԻԳ.—
ՖԼՈՐԱ.— } Վազում են դեպի ձախ կողմի դռները։
ՏԻԳ.—(Կոտրում է դռները, հետս նայում չեվ յես կանգնում)։
Նա լողում է արյան մեջ։
ԿԱՏ.—(Ձչում է)։ *Աա, անասնավածնե՛ր...*
ՍԵՆ.—*Նա ուրիշ ոչնչ չունե՛ր։* (Վազում է Արտաշեսի սենյակը,
ատրճիճակ նիչեր առնակելով)։

ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳՐԱԾ Ֆ ԱՐԱՐՎԱԾՈՎ

Ճիլվածոգապ. 6—24.

ԳԱՐԵՂՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍՄՈՆ ԱԼԱԴՅԱՆ, գործի մարդ, 37 տարեկան.
ՄԵՆՈՒՀԻ, նրա ամուսինը, 27 տարեկան.
ԱՅԱՆԱԿ ՎԱՌԼԱՄՅԱՆ, ճարտարապետ, 38 տարեկան.
ՐԱՆՈՒՇԾ, Հմայակի ամուսինը, 29 տարեկան.
ԵՓԱՆ ԳՈՒՐԳԵՆՅԱՆ, թմրկի Սամսոնի բարեկամ ընկերը և վիճան, 38 տարեկան.
ՐԳԻՆԵ, Սոնիայի ամուսինը 28 տարեկան.
ՂԻՄԱԲԵԹ, Սամսոնի և Վերգինեի մայրը, 57 տարեկան.
ՍՏԱՆԴԻՆ ԲԱՐԱՔՅԱՆ, Արմենուհու հայրը, պաշտոնաթող գնդապետ, 55 տարեկան.
ՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ, Յեղիսաբեթի հիղբայրը, նախկին ուսուցիչ, 48 տարեկան.
ԵԼԱՆԻԱ, Ալադյաններէ աղախինը.
ԱՐԵԳԻՆ, Ալադյաններէ ծառան.
ԱՅԱՆԱԿ, անխոս հին.
ՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ՑԵՐԱԺԻՇՏՆԵՐ:

գործողությունը կատարվում է Ալադյաններէ ամարանոցում 190... թ.

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Ալադյաններէ ամարանոցը: Մի գեղեցիկ պարտեզ: Աջ*) կողմը ամարանոցի լայն յեվ յերկար պատշգամբն է յերեք-չորս ասիճան անդուրթով դեպի պարտեզ: Ետրը յերկաթյա ցանկապատ է, վորի միջանցում. բերում կենտրոնի ուղղությամբ, մի դռնակ: Ձախ կողմը ներկայացնում է վարդի թփերի և ուրիշ ծաղիկների շարք, վոր նշանակում է, թե պարտեզը շարունակվում է: Թփերի միջտեղում կա փոքրիկ շատրվան: Բեմի խորքում, աջ անկյունում, մի զանակ է կապած, վորի վրա գցած է մի մեծ գոյնզուն ասվյա վրմակ, վորպիսին գործ են ածում կարքի համար, մի անկազմ ոիրք և մի քանի լրագիրներ: Ետրքի ցանկապատի յետեվը փոոց է, հետո կանաչազարդ դաշտ, այնուհետեվ անտառ, անոց ե, հետո կանաչազարդ լեռներ, ժայռեր, ծորեր, հետու ծյունապատ գագաթներ:

*) «Աջ ու ձախ, ինչպես առաջին-յերկրորդ» ընդունել հանդիսականների կողմից:

Բեմի կենտրոնում, մի քիչ դեպի ձախ, դրած է ճաշի սե-
ղան, ծածկված ծյունափայլ սփռոցով. Սեղանի մի անկյունում
դրած են իրար վրա ափսեներ։

ՏԵՍԻԼ I.

Մեղանիա չեվ Գարեգին.

ԳԱՐԵԳԻՆ.— *(վարագույրը բարձրանալիս պատզամբից իջնում է*
ձեռիին ափսեներ, դանակ, պատառաքաղներ չեվ այլն։ Սկսում է
դասել սեղանի վրա։ Շատ մաքուր հագնված չերեսատարդ կին,
սափրած չեռեսով չեվ բավական կիրթ ձեվերով)։ Մելանիա,
չես սեղանը կամաց կամաց պատրաստում ես։

ՄԵԼԱՆԻԱ.— *(կանգնած է բեմի ձախ անկյունում չեվ նայում է հե-*
ռու, դեպի ձախ։ Թեթեվ ամարային մաքուր հագուստով չերե-
տասարդ կին է, գլուխը բաց։ Առանց Գարեգնի կողմը նա-
յելու)։ Լավ ես անում։ (Մի փոքր ժամանակ լռություն)։

ԳԱՐ.— *(իր գործով զբաղված)։ Այդ ուր չես նայում։*

ՄԵԼ.— *Ծայրերին։*

ԳԱՐ.— *(առանց իր գործն ընդհատելու)։ Դրազ կըգամ, որ սարի*
այծն էլի այնտեղ է։

ՄԵԼ.— *(չերեսը դարձնելով Գարեգնին)։ Մի համարձակվիր ա-*
քաղաքավարի խոսել չերիտասարդ աղջնով մասին։ Ձեռ-
նրան շատ եմ սիրում։ (Ձերեսը դարձյալ դեպի ձախ է դար-
ձնում)։

ԳԱՐ.— *Բան ասաց. «շատ եմ սիրում»։ Կարծես, ապրելիք*
աղջնով կարելի չե չսիրել։ Բայց էլի կասեմ, որ նա սարի
այծ է, ամեն որ բարձրանում է քեղծելի գլուխը։ (Սկսում
է հանգարտ չերգել)։ «Ձար ուղեցի չզոտա,
Սերը կերավ իմ սիրտը...

ՄԵԼ.— *Ահա նա, ապիտակ շալը գլխին, չիրկային փոթոր չեռ-*
քում, բարձրանում է...

ԳԱՐ.— *«Գիշերները քուն չունիմ,*
«Բայղուշի պես քուն չունիմ։
«Ցնկ, նազելի, նազելի...

ՄԵԼ.— *Նա մի քար վերցրեց, պրծից ցած, նայում է դեպի ձորը։*

ԳԱՐ.— *«Ճամբին ծլած ծաղկի պես,*
«Թառամում եմ մին-մենակ...

ՄԵԼ.— *Գնաց, հետացավ, չի չերևում։ (Մոտենում է սեղանին չեվ*
սկսում է Գարեգնին ազնել)։

ԳԱՐ.— *«Դու ձայն ափիր ճամբորդին,*
«Նա չլսեց, հետացավ...

ՄԵԼ.— *Զարմանալի հնիկ է, ինչ ասեմ. սիրում է թափառել*
անտառներում ու ձորերում։ Չի չել վախենում։

ԳԱՐ.— *Ցնվ միշտ մենակ, ախուր, մաքերի մեջ թաղված։*

ՄԵԼ.— *Ա՛հ, չերանի պիտենայի ինչ ցավ ունի։ Մի քանի*
բառաններն էլ անքաղդ են։

ԳԱՐ.— *«Ի՞նչ եմ անում վռանի տաշտը, վորի մեջ արյուն պի-*
տի թքեմ»։ Մելանիա, մեր տիկինը բազդավոր չե, չես
պիտի, ե՛հ, հիմա պառավ ազռավը կդա։ Ցես գլուխ
փախցրի։ (Գայլերն ուղղում է դեպի աջ, վոր սանդուղքով
բարձրանա, ցեղիսաբերին տեսնելով, կանգ է առնում)։

ՏԵՍԻԼ II

Նույնք չեվ Ցեղիսաբեր.

ՑԵՂԻՍԱԲԵՐ. *(գալիս է պատզամբից ձեռիում համարակալ, մաքիս*
չեվ մի բերք բուդր։ Նիհար, չոր-չոր, խորտոված, գռեհիկ դեմ-
քով կին է։ Հագած է սեվ ըջազգեստ, գլխին կապած է սեվ
թաշկինակ, վորի տակից դուրս են ընկած ալեխառն
մեսախյա բաճկինակ, վորի տակից դուրս են ընկած ալեխառն
գիսակներն։ Գայլվածկն ու ձեվերը գռեհիկ են). Ի՞նչ եք շտա-
պում սեղանը պատրաստել. ուրիշ գործ չունեք։ (Գարեգ-
նին)։ Այն ձվ է պարունակ մատ։

ԳԱՐ.— *Չեմ ճանաչում, նոր մարդ է։*

ՑԵՂԻՍ.— *Մի ամսե էլ ավելացրու, կարելի չե Սամսոնը նրան*
ճաշի պահի։

ԳԱՐ.— *Աչքիս վրա։ (Գնում է պատզամբով, իսկույն չես է*
գալիս մի մարդու համար սերվիզ ձեռիում, դնում է սեղանի
վրա չեվ հետացնում է պատզամբով)։

ՑԵՂԻՍ.— *(նստում է ճաշի սեղանի մոտ չեվ սկսում է համա-*
րակալի վրա հաշիվ անել, նայելով բերքին) Տիկինդ տանն է։

ՄԵԼ.— *Վռչ։ (Մոտենում է գամակին, վերմակը վերցնում է չեվ*
սկսում է ծալել)։

ՑԵՂԻՍ.— *Այգումն էլ չի չերևում։*

ՄԵԼ.— *Այնտեղ ես, գործ չունեմ, անցավ գնաց ինչ ասես։*

ՑԵՂԻՍ.— *Մենակ։*

ՄԵԼ.— *Այո։*

Բեմի կենտրոնում, մի քիչ դեպի ձախ, դրած է ճաշի սե-
ղան, ծածկված ձյունափայլ սփռոցով. Սեղանի մի անկյունում
դրած են իրար վրա ափսեներ։

ՏԵՍԻԼ I.

Մելանիա յեվ Դարեգին.

ԴԱՐԵԳԻՆ.— *(վարագույրը բարձրանալիս պատզամբից իջնում է*
ձեռքին ափսեներ, դանակ, պատառաքաղներ յեվ այլն. Սկսում է
դասել սեղանի վրա. Շատ մաքուր հագնված յերիտասարդ է,
սափրած յերեսով յեվ բավական կիրք ձեվերով). Մելանիա,
յես սեղանը կամաց կամաց պատրաստում եմ։

ՄԵԼԱՆԻԱ.— *(կանգնած է բեմի ձախ անկյունում յեվ նայում է հա-*
ռու, դեպի ձախ։ Թեթեվ ամարային մաքուր հագուստով յերի-
տասարդ կին է, գլուխը բաց։ Առանց Դարեգնի կողմը նա-
յելու). Լավ ես անում։ (Մի փոքր ժամանակ լռություն).

ԴԱՐ.— *(իր գործով զբաղված). Այդ ուր յես նայում։*

ՄԵԼ.— *Ծայրերին։*

ԴԱՐ.— (առանց իր գործն ընդհատելու). *Դրագ կըգամ, վոր սարի*
այծն ելի այնտեղ է։

ՄԵԼ.— *(յերեսը դարձնելով Դարեգնին). Մի համարձակվիր ան-*
քաղաքավարի խոսել յերիտասարդ տիկնոջ մասին։
Նրան շատ եմ սիրում։ (Ցերեսը դարձյալ դեպի ձախ է դար-
ձնում).

ԴԱՐ.— *Բան ասաց. «շատ եմ սիրում». կարծես, այնպիսի*
տիկնոջ կարելի յե չսիրել։ Բայց ելի կասեմ, վոր նա սարի
այծ է, ամեն որ բարձրանում է քերծելի գլուխը։ (Սկսում
է հանգարտ յերգել). «Ցար ուղեցի չգամա,
Սիրը կերավ իմ սիրտը...

ՄԵԼ.— *Ահա նա, սպիտակ շալը գլխին, յերկային փայտը ձեռ-*
քում, բարձրանում է...

ԴԱՐ.— «Գիշերները քուն չունիմ,
«Բայդուշի պես քուն չունիմ։
«Ցնկ, նազելի, նազելի...

ՄԵԼ.— *Նա մի քար վերցրեց, գլորեց ցած, նայում է դեպի ձորը։*

ԴԱՐ.— «Ճամբին ծլած ծաղկի պես,
«Թառամում եմ մենակ...

ՄԵԼ.— *Գնաց, հեռացավ, չի յերեսում։ (Մոտենում է սեղանին յեվ*
սկսում է Դարեգնին ոգնել).

ԴԱՐ.— «Դու ձայն ափիր ճամբորդին,
«Նա չլսեց, հեռացավ...

ՄԵԼ.— *Զարմանալի կնիկ է, ինչ ասեմ. սիրում է թափառել*
անտառներում ու ձորերում։ Չի յել վախենում։

ԴԱՐ.— *Ցեվ միշտ մենակ, ախուր, մտքերի մեջ թաղված։*

ՄԵԼ.— *Ա՛հ, յերանի գիտենայի ինչ ցավ ունի։ Մի քանի հա-*
րուստներն ել անբաղդ են։

ԴԱՐ.— «Ի՞նչ եմ անում վոսկե տաշտը, վորի մեջ արյուն պի-
տի թքեմ». Մելանիա, մեր տիկինը բազդավոր չե, յես
գիտեմ, ե՛հ, հիմա պառավ ազռավը կդա։ Յես գլուխ
փախցրի։ (Գալերեց ուղղում է դեպի աջ, վոր սանդուղքով
բարձրանա, ցեղիսաբերին տեսնելով, կանգ է առնում).

ՏԵՍԻԼ II

Նույնք յեվ Ցեղիսաբեր.

ՑԵՂԻՍԱԲԵՐ. *(գալիս է պատզամբից ձեռքում հատարակալ, մատիս*
յեվ մի բերք բուդր։ Նիհար, չոր-չոր, խորտոմած, գրեթիկ դեմ-
քով կին է։ Հագած է սեվ շրջազգեստ, գլխին կապած է սեվ
մեծախայտ թաշկինակ, վորի տակից դուրս են ընկած ալեխառն
գիսակներ։ Գայլվածքն ու ձեվերը գոռոզ են). Ի՞նչ եք շատ-
պում սեղանը պատրաստել։ Ուրիշ գործ չունե՞ք։ (Դարեգ-
նին). Այն հիվ է պարոնիդ մոտ։

ՄԵԼ.— *Չեմ հանդչում, նոր մարդ է։*

ՑԵՂԻՍ.— *Մի ամսո՞ ել ավելացրու, կաշկուլ յես Սամսոնը նրան*
հաշի պահի։

ԴԱՐ.— *Աչքիս վրա։ (Գնում է պատզամբով, իսկույն յեռ է*
գալիս մի մարդու հատար սերվիզ ձեռքում, դնում է սեղանի
վրա յեվ նորանում է պատզամբով)։

ՑԵՂԻՍ.— *(նստում է հատի սեղանի հով յեվ սկսում է հատա-*
րակալի վրա հաշիվ անել, նայելով բերքին) Տիկինդ տանն է։

ՄԵԼ.— *Վո՛չ։ (Մոտենում է գամակին, վերտակը վերցնում է յեվ*
սկսում է ծալել)։

ՑԵՂԻՍ.— *Այգումն ել չի յերեսում։*

ՄԵԼ.— *Այնտեղ եր, դարթ յեկավ, անցավ գետակի մյուս ափը։*

ՑԵՂԻՍ.— *Մենա՞կ։*

ՄԵԼ.— *Այո։*

ՅԵՂԻՍ.— Ինչու հետը չդնացիր։

ՄԵԼ.— Տիկինը բարկանում է, յերբ յես հետևում եմ իրան։ Ասում է, յես յերեխա չեմ, վոր պայյակ ունենամ։

ՅԵՂԻՍ.— (գրգռվելով). Բարկանում է — բարկանում։ Շատ քոչն է. Իսկ յեթե մի բան պատահի, պատասխանատուն յես եմ մարդու մոտ։ Գնա, տուն կանչիր. ասա՝ հաշի ժամանակ է։

ՄԵԼ.— Իսկույն։ (Վերմակը, գիրը յեվ լրագիրները տանում է պատզամբով յեվ անմիջապես վերադառնում է, գլխին մի շալ։ Դուրս է դալիս ձախ կողմի բիւերի միջով)։

ՅԵՂԻՍ.— (ինքն իրան)։ Յես եվ կարող եմ ուրիշ ակնարկներ ևս պարծենալ, վոր հարս ունեմ։ Աչքս լույս (Բարկացած համարակալի հաշիվները խառնում է յեվ հաշիվը նորից սկսում)։ Թյու։

ՏԵՍԻԼ III.

Ցեղիսաբեր յեվ Վիրգինե

ՎԻՐԳ.— (յերեվում է պատզամբի վրա այն միջոցին, յերբ ցեղիսաբերը պատվիրում է Մելանիային Արմենուհուն կանչելու, այնպես վոր լսում է նրա վերջին խոսքերը։ Շրեղ, բայց վոչ ամուր խոժռելի ճաշակով հագնված կին է, դեմքով նման իր մորը։ Խոսելու միջոցին դեմքը միշտ արտահայտում է նախանձ ու չարություն)։ Չեմ հասկանում — ինչու յես ուղարկում նրան հենևից։ (Իջնում է սանդուղքով)։ Կարծեմ, ինքը պիտք է առանց ասելու իմանա իր պարտականությունը։ (Նստում է մոր մոտ)։

ՅԵՂԻՍ.— Դե վոր չի իմանում, ինչ անեմ։ (Միշտ զբաղված է հաշիվներով։ Մերթ ընդ մերթ մատիտով ինչ-վոր ճշտումներ է թերթի վրա)։

ՎԻՐԳ.— Իհարկե, այնքան ազատություն եք տվել, վոր չկրնա և առնի։

ՅԵՂԻՍ.— Եվ, վիրգինե, կինն իր ծնողների տանը պիտի կրթված լինի՝ թե չե պսակվելուց հետո դժվար է նրան վարժեցնել։ Արմենուհու հայրն ասում է. «յես իմ աղջկան ազատ եմ մեծացրել»։ Լավ, տեսանենք վերջն ուր պիտի տանի նրան ազատությունը։

ՎԻՐԳ.— Նա գիմնազիայումն էլ այդպես էր, դասընկերս է ինձ

դել, միշտ ինքնագլուխ, դոռոզ, ինքնահավան։ Ցես աչքով աչք չունեյի նրան տեսնելու։ Ինքն էլ գիտեր և ատում էր ինձ։ Բանի քանի անգամ յերեսիս ինձ անվանել է չար, նախանձոտ, ինտրիգան, Այժմ էլ նա ինձ արհամարհում է։ Ո՛ո, կը տեսնեք, նա ձեր գլխին մի փորձանք կը բերի։

ՅԵՂԻՍ.— (հաշիվը ծփորելով)։ Եհ, հաշիվները խառնեցիր։

ՎԻՐԳ.— (հափռռակված չի լսում իր մոր խոսքերը)։ Տասն որ և ամուսնանա հետ այստեղ հյուր եմ, մի անգամ էլ հետս կարդին չի հասել ու զրույց արել։ Գիտեմ, նա իր մաքուրին ինձ արժանի չի համարում։ Անկիրթ ենք, իհարկե, նրա նման դաշնամուր նվագել չգիտենք և վոչ էլ պոլկոմնիկի աղջիկ ենք։ Ա՛հ, քիչ է մնում նախանձից սիրտս տրաքի, յերբ մտածում եմ, թե ով ե ուտում հորս թողած ու չեղբորս վաստակած փողերը։ Մայրիկ, լավ պահիր նրա կապը, լավ պահիր, թե չե՝ մի որ կը փոշմանես։ (Վեր է կենում)։

ՅԵՂԻՍ.— Լավ, քիչ զրգռիր ինձ նրա դեմ. առանց այդ էլ չեմ սիրում։ (Վեր է կենում, համարակալի հաշիվները խառնելով), Ա՛հ չգիտեցիր խոհարարի հաշիվները ստուգել։ (Տանելով), Ա՛հ չգիտեցիր խոհարարի հաշիվները ստուգել։ (Տալիս է համարակալն ու բուղթը վիրգինեյին)։ Տար իմ սենյակը, հաշիվս հետո կը վերջացնեմ։ Կարծեմ այս ամիս շատ չի գողացել։

ՎԻՐԳԻՆԵ. Յես իմ ասացի, Ջեցյալը դու գիտես։ (Համարակալն ու բուղթն առնելով գնում է պատզամբով)։

ՏԵՍԻԼ IV.

Ցեղիսաբեր, Կոստանդին յեվ Ստեփան

ԿՈՍՏ.— (գալիս է խորի ցանկապատի դռնակով։ Ամբակազմ, առողջ դեմքով տղամարդ է։ Ցերեսը սափրած է։ Հագած է մուգ գույնի վեստոն — պանթալոն, սպիտակ ժիլե յեվ ռուս պատռնաթրող գնդապետի գդակ)։ Այդ բարեկամս, Արմենուհին կատարելապես իր մայրն է։ Հանդուգնյաղն էլ վոտնդ ասած բանը չգիտեր։ Բարև, խնամի։ (Բարեվում է գինվորական ձեվով, առանց գդակը բարձրացնելու)։

ՍՏԵՓ.— (գալիս է Կոստանդինի հետ ցանկապատի դռնակով։ Կարճ խուզած միրուխով, խոհուն հասակրելի դեմքով, շատ պարզ ձեվերով յեվ պարզ հագնված տղամարդ է)։ Մայրիկ, բարև

ՅԵՂԻՍ.— (յուրահանչյուրին)։ Բարով, բարով։

ԿՈՍՏ.— (շարունակելով իր խոսքը) Մեր դիվիզիայում վաչ մի աղայի կին չեր կարողանում նրա հետ մրցել ձի հեծնելում։ Նա միշտ ընթանում եր ամենակատաղի ձին և վարում եր նրան ինչպես առաջնակարգ կավալերիստ։ Ա՛խ, ընտիր կին եր նա։

ՅՏԵՓԱՆ.— Մայրիկ, մենք քաղցած ենք։ (Նայում է իր ժամացույցին)։

ՅԵՂԻՍ.— Քանի ժամն է։

ՅՏԵՓ.— Յերեքին կես է հնում։

ՅԵՂԻՍ.— Ուրեմն, կես ժամ էլ պետք է սպասել։

ԿՈՍՏ.— (Ստեփանին) Զգիտեք վոր աշխարհը տակն ու վրա լինի, յերեքից առաջ մեզ ճաշ չեն տալ այս տանը։

ՅԵՂԻՍ.— Այո, վորդուս կարգադրությունն է։

ՅՏԵՓ.— Սամսոնը ուզում է գերմանացի ձևանալ — հյուրապան։

ԳԱՐ.— (յերեվում է պատզամբի վրա)։ Պարոն Վասպամյանը ուզում է տեսնել պարոն բժշկին։

ՅՏԵՓ.— Ա՛ա, Հմայակը։ Հրավիրիր նրան իմ սենյակը։

ԳԱՐ.— Նա պարոնի ընկերակուին է։

ՅՏԵՓ.— Իսկույն։

ԿՈՍՏ.— Հմայակին ճի՛ է։

ՅՏԵՓ.— Իմ մոսիկ բարեկամներից մեկը։ Ցնա նրան ծանոթացրի Սամսոնի հետ։ Ցնկել է այցելության։ Ո՛ր, նա հիանալի մարդ է և տապանդավոր հարստահարիչ։ Ապրում է միշտ մայրաքաղաքում, բայց յերկու ամսով չեկել է այստեղ հանգստանալու և իր հայրենիքի բնությամբ աքանչանալու։ (Թարձրանում է սանդուղքով յեվ հեռանում)։

ՏԵՍԻԼ V.

Կոնստանդինից յեվ Ցեղիսաբեթ

ՅԵՂԻՍ.— Ինամի, մի քիչ առաջ դուք իմ փեսայի մասա՞ցիք, թե ձեր աղջիկն իր մորն է նման։ Մի՛թե հանգուցյալն էլ իմ հարսի պես է յեղել։

ԿՈՍՏ.— (ծխախոտ է վառում)։ Այո, ինչ եք կամենում ասել դրանով։ (Նստում է սեղանից հեռու գցվող սրտացեից մեկի վրա յեվ վոտը վոտի վրա ձգում)։

ՅԵՂԻՍ.— Ա՛յն եմ ուզում ասել, պարովելի խնամի, վոր վերջապես ժամանակ է ձեր աղջկան բան հասկացնելու։

ԿՈՍՏ.— (աննույթ, ծխախոտի ծուխը գլխից վեր բաց թողնելով)։ Իմ աղջիկը անհասկացող մեկը չե, վոր նրան բան հասկացնենք դուք կամ յես։

ՅԵՂԻՍ.— Ով է ասում, բայց նրա սրածն էլ խելոքություն չե։ Նա դեռ չգիտե, վոր բամբասանքն ամ է, չի խանդում՝ անհոգին է կծում թե մեղավորին։

ԿՈՍՏ.— Հետո։

ՅԵՂԻՍ.— Ինչո՞ւ յե նա ամեն որ մեն-մենակ թափառում անտառներում, դաշտերում կամ ժայռերի վրա։

ԿՈՍՏ.— Ինչո՞ւ յե թափառում.— վորովհետև ամարանոցումն է. նա չորս պատերի մեջ նստելու համար չի յեկել այս գեղեցիկ վայրերը։

ՅԵՂԻՍ.— Դուք չե՞ք վախենում։

ԿՈՍՏ.— Ինչից։

ՅԵՂԻՍ.— Ով գիտե, հազար ու մի տեսակ մարդ կա։

ԿՈՍՏ.— (հանգիստ)։ Իմ աղջկան վոչ վոք չի համարձակվիլ մի խոսք անպատշաճ ասել։

ՅԵՂԻՍ.— (հեգնաբար)։ Այո, կը վախենան. կասեն հայրը զենքապետ է, մայրը իշխանական ցեղից։

ԿՈՍՏ.— (հեգնությամբ)։ Տիկի՛ն, դուք շատ լավ սիրում Արմենուհու ծնողների տխուր տեսները հիշել այդ ինչ է նշանակում։ Ձլինի թե մեզ արժանի չեք համարում Ձեր բուրժուական գերազանցությանը։

ՅԵՂԻՍ.— Ահա այդպես եք խոսում միշտ, վոր ձեր աղջիկը կարծում է, թե վոչ մի պակասություն չունի։

ԿՈՍՏ.— Կկամենայի իմանալ, ինչ պակասություն եք տեսել Արմենուհու մեջ։

ՅԵՂԻՍ.— Նա չգիտե իրանից մեծերին հարգել։

ԿՈՍՏ.— Մեծերին հարգելն իմ աղջիկն որորոցից է սովորել, լեզուն, իհարկե, մեծերն էլ պիտին նրան հարգել։ Ցնո՛ւ։

ՅԵՂԻՍ.— Գոռոզ է։

ԿՈՍՏ.— Վա՛յ, խնամի, հպարտ և գոռոզների վերաբերմամբ։ Շատ ուշադիր եք։

ՅԵՂԻՍ.— Ինքնահավան է։

ԿՈՍՏ.— Դեռ լսենք ձեր փեսան, Սահիմոնը պիտի բացատրի նրա անհասկանալի հանճարեղությունը։

ՑԵՂԻՍ.— Տեսեսությամբ չի հետաքրքրվում։

ԿՈՍՏ.— Ալադյանի կինը կարիք չունի խոհանոց մտնելու ուրիշ։

ՑԵՂԻՍ.— Նա ինձ չի հնազանդվում։ Իմ ազգականներին չի սիրում։

ԿՈՍՏ.— Սկեսուրների իշխանության դարն անցել է։ Գալով ձեր ազգականներին, մեր մեջ ասած, մի սրբելու պատուհներ չեն։ (Վեր է կենում)։ Ե՛հ, տիկին, դուք չգիտեք վարվել ձեր հարսի հետ։ Ձեզ ոտն անգամ ասել եմ, թե Արմենուհին այն կանանցից չէ, որոնց ընկճում են խըստության և սպառնալիքների միջոցով։ Նա ունի քնքուշ սիրտ, բայց ամուր կամք, ինչպես իր հանգուցյալ մայրը։ Նրան միայն սիրով և փաղաքշանքով կարելի է պրպվել։ Այս լավ խմացեք։ (Մի յերկու բայլ է գնում դեպի բեմի խորքը)։

ՑԵՂԻՍ.— (արհամարհանքով)։ Իհարկե, վոսկու և արծաթի մեջ է մեծացել։

ԿՈՍՏ.— (կանգ առնելով) Տիկին, քիչ զգուշացեք ձեր վոսկի և արծաթով։ Ցնծի իմ աղջիկը համաձայնվեց այս առնը մտնել, չկարծեք, թե ձեր հարստությամբ հափշտակվեց։ Արժանուհին ձեր ասած կանանցից չէ։ Վո՛չ, վո՛չ, վո՛չ։

ՏԵՍԻԼ VI

Նույնը յեվ Մելանիա

ՄԵԼ. (Գալիս է ձախ կողմից)։ Տիկին, յես նրան վո՛չ մի տեղ չգտա։

ՑԵՂԻՍ.— (Կատաղելով)։ Ա՛յ, տեսնում եք, տանը հյուրեր, իսկ տանտիկինդ վինտուում են սարերում, ձորերում ու չեն գտնում։ Մի որ նա իր գլուխը կը ջարդի, կը տեսնեք։ (Գնում է պատզամբով)։

ՏԵՍԻԼ VII

Կոստանդին յեվ Մելանիա

ՄԵԼ.— (Նայելով Ցեղիսաբեթի յետեվից յերկյուղով։ Ցածր ձայնով)։ Ցես տեսա յերիտասարդ տիկնոջը։ Գեղատիպ տպավորություն ստացած, քարեր ես գցում ջրի մեջ։

ԿՈՍՏ.—Հապա ինչու ասացիք այդ պատմելին, թե չգտաք։

ՄԵԼԱՆ.—Ցերիտասարդ տիկինն այնպես պատվիրեց։ Նա քարկացավ, յերբ ասացի, թե սկեսուրն է ինձ ուղարկել իրան տուն կանչելու։ Անա գալիս է ինքը։

ՏԵՍԻԼ VIII.

ՆՈՒՅՆԸ ՑԵՎ ԱՐՄԵՆՈՒՀԻ.

ԱՐՄԵՆ.—(Գալիս է ձախ կողմից։ Սիրուն, հասակրելի, հագած մարձակ դեմքով, գեղեցիկ կապվածքով կին է, բացագանգատվող կապույտ թաշմոր մազերով։ Հագած է բեթել ամառային շրջազգեստ, դեղնագույն կոշիկներ։ Գլխին գցած է մի սպիտակ շալ, ձեռքում բռնած է մի փունջ վայրի ծաղիկներից յեվ մի բառակ, սեվ, յերկայն նյուղավոր ձեռնափայտ—պլանեսօսոկ) Հայրիկ, սեվ, յերկայն նյուղավոր ձեռնափայտ—պլանեսօսոկ) Հայրիկ, բարև, այսօր յես քեզ չեմ տեսել։ (Համբուրվում է կոստանդինի հետ)։

ԿՈՍՏ.—Այդ ինչ լավ փունջ ես կազմել։

ԱՐՄԵՆ.—Հիանալի յե, այնպես չե՞։ Բարձր տեղերում եմ ժողվել այս ծաղիկները։ Շատ նուրբ հոտ ունին։ Հապա, տես։ (Փունջը մոտեցնում է Կոստանդինի դեմքին)։ Զգում ես։ Մելանիա, խնդրեմ բերիր մի ծաղկաման։

ՄԵԼԱՆ.—Իսկույն։ (Շատով գնում է աջ կողմով յեվ անմիջապես վերադառնում է առանց շալի, ձեռքում մի ծաղկաման)։

ԱՐՄԵՆ.—(Փունջը պահելով, ձեռնափայտը հենում է պռոնեերից միկին ու գալիս է առաջ)։ Հայրիկ, կարծես, դու տխուր ես և մի քիչ էլ հուզված։ Ի՞նչ է պատահել։

ԿՈՍՏ.—Սկեսուրդ արդյոք պղտորեց։

ԱՐՄԵՆ.—Դարձյալ։ Ա՛հ, այդ անտանելի յե, վերջապես։ (Մելանիային)։ Դրիր ծաղկամանը սեղանի վրա։ (Փունջը տեղավորում է ծաղկամանի մեջ)։ Այսպես, տես, հայրիկ, ինչպես գեղեցկացնում է սեղանը։ (Շալը դնելով, տալիս է Մելանիային)։ Ցերեխան ուշն է։

ՄԵԼԱՆ.—Վո՛չ։ Դայակը նրան դուրս տարավ։ (Շալը առնելով, գնում է պատզամբով)։

ՏԵՍԻԼ IX

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՑԵՎ ԿՈՍՏԱՆԴԻՆ.

ԱՐՄԵՆ.—Ի՞նչ եր ասում սկեսուրս, հայրիկ։

ԿՈՍՏ.—Դե, չարժե ուշադրություն դարձնել մեկ ականջով լսել, մյուսով բաց թողել։

ԱՐՄԵՆ.—Այո, չարժե, ինարկե, բայց, դժբաղդաբար, այդ կինն իմ կյանքում մեծ դեր է խաղում։ Անշուշտ, նա դանգատվում էր իմ դեմ։ Անհնազանդ եմ, մեծերիս չեմ հարգում, ամբողջ որը կամ նվագում եմ ու կարդում կամ զբոսնում։ Ո՛ն, միշտ միևնույն յերգը՝ անխուսափ, ձանձրալի։ (Նստում է)։

ԿՈՍՏ.—Զար և այդ կինը, Արմենուհի, չար է։

ԱՐՄԵՆ.—Վոչ, հայրիկ, չար չե, այլ բռնակալ։ Նա կարծում է, վոր մինելով իմ ամուսնու մայրը, իմ գլխի տերն է։ Նա մի տեսակ սուրբ պարտականություն է համարում ինձ կրթել։ Յեվ իրնչպես։ Փափագում է, վոր յես, տասվոսը զարթնելուվ, ձևանելս կրծքիս դրած սպասեմ նրա հրամաններին, ինչպես ինքն է արել մի ժամանակ իր սկեսրի առաջ։ Այո չե միայն. նա խառնվում է իմ և Սամսոնի հարաբերությունների մեջ, ձգտում է իշխել իմ մտքի, զգացումների և ճաշակի վրա։ Ահա այս մեկին յես տանել չեմ կարողանում, և նա կատաղում է։ Հայրիկ, սկզբից և եթ մենք իրար չենք ուրեկ։ (Վեր է կենում)։

ԿՈՍՏ.—Պատճառը։

ԱՐՄԵՆ.—Պատճառը պարզ է։ Այդ կինը վճռած է յեղել իր վորդուն ամուսնացնել մի ուրիշի հետ։ Ո՛վ է—հետաքրքրական չէ բայց իր ճաշակի մեկն է։ Սամսոնը զերազանց է ինձ։ Յեվ յես այս տունն եմ մտել արդեն իմ դեմ ունենալով վորոշ թշնամություն։ Ավելացրու և այն, վոր Վիրջինեն, Սամսոնի քույրը, ինձ ատում է դեռ դեռնջարիայից սկսած։

ԿՈՍՏ.—Նրանն ինչ ես արել, վոր ատում է։

ԱՐՄԵՆ.—Վոչինչ, հայրիկ, հավատա։ Մրայն հետը վարվել չեմ կարողանում։

ԿՈՍՏ.—Պետք է կարողանաս վարվել մի կերպ, ինչ արած։

ԱՐՄԵՆ.—Ախ, հայրիկ, հեշտ է այդ ասել, բայց իրնչպես։ Դու դիտես, վոր յես ղվում եմ բանբասանքից։ Իսկ Վիրջինեն միայն նրանով է շնչում ու ապրում։ Դեռ դիմնազիայում նա սիրում էր ամենքին չարախոսել, նույնիսկ մեր ընկերուհիների ծնողներին։ Վոչ, հայրիկ. յես չգիտեմ ինչպես նրա հետ ժամանակ անցկացնեմ, ինչի մասին խոսեմ։ Ինչ վոր ինձ և զբաղեցնում, նրան ձանձրացնում է և հակառակը։ Նա սիրում է միշտ ուրան պարտավել, նրան զրպարտել։

Յերևի, որինակ, նա անբարոյական անվանեց իմ մոտ մի կնոջ, վորին յես սիրում եմ և հարգում։ Նա լրտեսում է ամենքին և ամենից ավելի ինձ։ Յեվ շարունակ իր մորը լարում է իմ դեմ։ (Դայլում է)։

ԿՈՍՏ.—Բայց ամուսնիդ ինչ է ասում։ Չե վոր նա շատ էլ ոգեհատ չէ։ Ինչու չե թույլ տալիս իր մորն ու քրոջը քեզ վրա իրավունք բանեցնելու։

ԱՐՄԵՆ.—(Զեռով մի տխուր շարժումն անելով)։ Ա՛հ, ամուսինս։ Նա ժամանակ չունի ինձանով հետաքրքրվելու, նա զբաղված է իր գործերով։ (Ցերեսը դարձնում է նորից իր այլայլումը թագցնելու համար)։

ԿՈՍՏ.—(Զգացել է Արմենուհու այլայլվելը։ Լռություն։ Մոտենում է)։ Արմենուհի, ինչու յերեսդ դարձրիր ինձանից։ Ի՞նչ ունես, ասա, մի քաշվիր։

ԱՐՄԵՆ.—(Ուղղելով իրան)։ Թողնենք, հայրիկ, թողնենք։ Այս բոլորը հետաքրքրական չե քեզ համար։

ԿՈՍՏ.—Ցես քո ձայնի մեջ զգացի ինչ վոր դառնություն։ (Բռնում է Արմենուհու ձեռը)։ Աչքերիս նայիր...

ԱՐՄԵՆ.—(Ձեռը ազատելով Կոստանդինի ձեռից)։ Վոչինչ, հայրիկ, իմ ամուսինս վատ մարդ չե... յես գոհ եմ։ Ահա գալիս են նրանք։ Լռենք։

ԿՈՍՏ.—Դու ինձ խաբել չես կարող, դու մի բան ունես սրբատումդ...

ՏԵՍԻԼ X

ՆՈՒՅՆՔ, ՍԱՄՍՈՆ, ՀՄԱՅԱԿ, ՍՏՀՓԱՆ ՑԵՎ, ՍՈՂՈՄՈՆ ՍՈՂՈՄՅԱՆ.

ՍԱՄՍՈՆ.—(Գալիս է պատզամբից։ Միջահասակ ամրակազմ տարեց է, տափակ ճակատով, բուխ դեմքով։ Սեվ միրուքը խառզած է կարճ, բարակ ընչացքը ճագիվ ծածկում է ամուր սեղմված բարակ շուրթը։ Հոնքերը միտս կցնռած են։ Անտարբեր, յեսամոլ, ահասաբ մարդու տիպար։ Սովորությունն ունի մի ձեռը պահել պաճթալոնի գրպանում, մյուսովը խաղալ ժամացույցի շղթայի հետ)։

ՀՄԱՅԱԿ.—(Գալիս է պատզամբից Սամսոնի հետ։ Պարզ համակրելի դեմքով, բաց գունի մազերով տղամարդ է։ Հագնված է

ճաշակով։ Ձեվերը մեղմ են յեվ շատ կիրք։ Չեռուսի բռնած է կակուղ գլխարկ)։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ.—(Գալիս է պատզամբից, Սամսոնի յեռվից Սեփանի հետ։ Ալեխառը, կարճ միրուքով, փոքրիկ խորամանկ աչերով, դեմքի շողոքորթ արտահայտությամբ տպավորիչ է։ Հագած է տձեվ սյուրտուկ, սպիտակ ժիլե, վոր բավական մաշված է, ծալած ոձիքով շապիկ, սեվ. տափակ փողկապ, յայն պանթալոն։ Ձեվերը ստրկական են)։

ՄԱՄՍ.—(Իջնելով պատեզ)։ *Ցնս հավանեցի ձեր առաջարկած վոճը իմ նոր տան համար։ Կազ ենք պլանն այդ վոճով, յնթե ժամանակ ունիք։ Խնդրեմ ծանոթանաք։ Կինս, անեքս։*

ՀՄԱՑ.—*Վառամյանս։* (Նախ ձեռ է տալիս Արմենուհուց, ապա կոստանդիդինից)։

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ.—*Այո, իմ կարծիքով եվ պարոն Ճարտարապետի առաջարկած վոճը լավն է, թեև ուրիշ լավ վոճեր եվ կան։* (Իբրեվ տնացի, չի բարեվում Արմենուհուց ու կոստանդիդինից)։

ՍՏԵՓԱՆ.—(Ծաղրելով)։ *Այո, պատվելի քեռի, ինչպես որինակ դուք լավ վարժապետ եք յեղել, թեև կան ուրիշ լավ վարժապետներ եվ։ կամ յես բժիշկ եմ, թեև ուրիշ բժիշկներ եվ կան։*

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄ.—*Ինձ թվում է, սիրելի փեսա, վոր դուք մի քիչ ծաղրեցիք ինձ, թեև այդ չի կարելի ծաղր համարել։*

ՏԵՍԻԼ XI

Նույնը, Ցեղիսաբեթ յեվ Վիրգինե

ՑԵՂԻՍ.—(Ներեվում է պատզամբի վրա)։

ՎԻՐԳ.—(Ներեվում է պատզամբի վրա Ցեղսաբեթի հետ)։

ՄԱՄՍ.—*Ահա և իմ մայրն ու քույրը։*

ՀՄԱՑ.—(Վոր առաջներն խոսում եր Արմենուհու հետ, հետվից գլուխ տալով Ցեղիսաբեթին ու Վիրգինեյին, մոտենում է, յեվ ձեռ է տալիս)։

ՎԻՐԳ.—(Ներեվում է թե չե, աչերով փնտռում է Արմենուհուց յեվ տեսնելով նրան Հմայակի հետ խոսելիս, դժկամակությամբ շարժումն է անում։ Բարեվում է Հմայակին սառը)։

ՑԵՂԻՍ.—*Կարող եք ճաշի նստել։* (Նստում է սեղանի մի ծայրում)։

ԱՄԵՆՔԸ.—(Նստում են)։

ԱՐՄԵՆ.—(Նստում է սեղանի հակառակ ծայրում, նրավիրելով Հմայակին իր մոտ նստել)։

ՎԻՐԳ.—(Անցնելս է նստում է, վոր կարողանա դիտել Արեգնուհուն յեվ Հմայակին)։

ԴԱՐ.—(Կերակուր է բաժանում)։

ՄԵԼԱՆ.—(Ոգնում է Գարեգինին)։

ՄԱՄՍ.—(Անձեռոցիկը կոճիկն կապելով)։ *Այդ ինչ փոնչ է։*

ՀՈՍՏ.—*Արմենուհին է կազմել։* (Սկսում է ուտել)։

ՄԱՄՍ.—(Արմենուհուն)։ *Ասա, դու եվի անատոմիա ես յեղել։* (Սկսում է ուտել)։

ԱՐՄԵՆ.—(Կերակուր առաջարկելով Հմայակին)։ *Վո՛չ, լեռն եյի բարձրացել։*

ՄԱՄՍ.—*Ցերեխայություն։ Ջեռ մոռացում, վոր կարող է փորձանք պատահել։*

ՑԵՂԻՍ.—*Կարծես մեր պարտիզում ծաղիկներ չկան, վոր լեռները և վազում։*

ԱՐՄԵՆ.—*Ցես գերադասում եմ վայրենի ծաղիկները։*

ՎԻՐԳ.—*Վորոնք բոլորովին հոտ չունեն։*

ՀՄԱՑ.—*Տիկին, սիրեք չեք զգում նրանց բուրմունքը։* (Ուտում է ինչ դանդաղ)։

ՎԻՐԳ.—(Կոտս)։ *Իհարկե, չեմ զգում։*

ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—*Ծաղկի հոտը կարելի յե զգալ և չզգալ, կախված և սրամտդրությունից։* (Ուտում է ախորժակով)։ *Թեև սրտմադրություն, ասված բանն եվ վիճելի յե։*

ՍՏԵՓ.—*Ցերևելի փիլիսոփայություն։*

ԱՐՄԵՆ.—*Պարոններ, այսոր չեղանակը բացառապես գեղեցիկ է, հնարք կամենալ արդյոք ճաշից հետո խմբովին մի թեթև զբոսանք կատարել*

ՑԵՂԻՍ.—*Ելի զբոսանք։*

ՎԻՐԳ.—(Մեկուսի) *Ծանձրել եմ։*

ԱՐՄԵՆ.—*Վոչ-հետու, մերձակա դաշտը։ Ցես ձայները եմ ժողովում։*

ՀՄԱՑ.—*Ցես սեռ ուրախությամբ։*

ՑԵՂԻՍ.—*Ինձ մի քիչ դուրս բերեք, պառավ կին եմ։*

ԱՐՄԵՆ.—*Վիրգինե, դու։*

ՎԻՐԳ.—(Կոտս)։ *Չեմ ուզում։*

ՍԱՄՍ.—Իսկ յես չեմ կաթոզ։
ՍՏԵՓ.—Յես կարող եմ։
ԿՈՍՏ.—Յես էլ։
ԱՐՄԵՆ.—Ձերնք ձայն յերնքի դեմ։
ՍՏԵՓ.—Հարցը վճռում է քեռին։
ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—(Նեղ ընկած)։ Ճաշից հետո գրոսանքը շատ լավ բան է, բայց հանգստանալն էլ շատ լավ բան է, թեև կարելի յե չհանգստանալ։
ԱՐՄԵՆ —Ուրեմն, չՁք կամենում։
ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—Յես լինչպես կարող եմ ձեր առաջարկությունը չընդունել, բայց մյուս կողմից... պետք է ասած, վոր...
ՍՏԵՓ.—Այո, վերջապես, թե՛ վոչ։
ՍՈՂ. ՍՈՂ.—Նայելով հանգամանքներին...
ՍՏԵՓ.—Ուրեմն, թե այո է թե վոչ։ Մի խոսքով կատարելապես Սողոմոն քեռի։
ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—Բժիշկ, յեթե կամենամ, այդ խոսքերից կարող եմ վիրավորվել, թեև վիրավորական բան չկա։
ԱՐՄԵՆ.—(Նկատել եյերկու բախտաւական յերաժիշտներ, վորոնց անցնում եին հետու փողոցով)։ Ոո, Բախտաւական յերաժիշտներ, Գարեգին, կանչեցեք նրանց։
ԳԱՐ.—(Շտապով մոտենում է խորհի ցանկապատին յեվ ուշաց է անում յերաժիշտներից մոտենալու)։

ՏԵՍԻԼ XII

Նույնի յեվ բախտաւական յերաժիշտներ

ՅԵԿՈՒ ԹՈՓ. ՅԵՐ.—(մոտենում են ցանկապատին պատրաստվում են նվագելու)։
ՍԱՄՍ.—(Ձանձրույթով)։ Արմենուհի, թող անցնեն գնան։
ԱՐՄԵՆ.—Ոո, վո՛չ, այս մեկն ինձ նեղիր։ Յես շատ եմ սիրում բախտաւական յերաժիշտներին։ (Դեպի յերաժիշտները)։ Մի հին յեղանակ նվագեցեք։
ՅԵՐԿՈՒ ԹՈՓ. ՅԵՐ.—(Նվագում են, մեկը էյամաճյա, մյուսը բաս)։
ՍԱՄՍ.—Գոնե չերգեիք։
ԱՐՄ.—Դրանք չեն յերգում։
ՍԱՄՍ.—(Համայնքին)։ Ձերևակայեցեք, պարո՛ն վաուլամյան, իմ կնոջ հաշակը։ Ձերնք անգամ ինձ հետ համապարհորդել Յեվրոպայում։ Տեսել է բոլոր մեծ թատրոնները, լսել է ամենաընտիր յերաժիշտներին. Բայրեութում հիացել է Վագների ոպերաներով, Պարիզում կոլոնի և Լամուրեյի որկեստրներով, Հռոմում կաթուզոյի ձայնով և դարձյալ ախորժակ է այդ վայրենի յերաժշտությունից։
ՀՄԱՅ.—Ներեցեք, պարոն Սամսոն, յես ճաշատարապետ եմ, հիանում եմ յեվրոպական հին և նոր վոճերով. բայց այս ինձ չի խանգարում սիրել և իմ մայրենի յերկրի հին վանքերի ճաշատարապետությունը։ Այն ունի իր առանձին համալքը։
ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—Բայց յեթե դուք լսեիք Արմենուհու պաշտամունքը նվագելը, ամեն բան կմոռանայիք։
ՍՏԵՓ.—Աա, վերջապես քեռին մի բան գտավ, վորի մասին կարողանում է ասել «այո» և վոչ թե «և այո և վոչ»։
ՀՄԱՅ.—(Արմենուհուն)։ Տիկին, յես հուսով եմ, վոր անձամբ կվայելեմ ձեր նվագման հաճույքը։
ԱՐՄԵՆ.—Պայմանով, վոր շատ էլ չհավատաք քեռու գովասանքին, ինձ համար ավելի բարձր են այդ տաբրական հնչյունները։ Լսեցեք՝ վորքան թախիծ, դառը վիշտ, վորը մի տառապող սրտի։
ԱԲՐԳ.—Յես վոչինչ չեմ զգում։
ՍԱՄՍ.—Մուրճի հարվածներ են տալիս մարդու ներվերին։
ՀՄԱՅ.—Դժվարանում եմ հավատալ, վոր այդպես լինի։ Ձե՞ վոր մանկությունից այդ հնչյուններով է կրթվել ձեր լսելիքը։
ՍՏԵՓ.—Իհարկե. բայց սովորություն և դարձել մեզանում պատավել բոլորը, ինչ վոր մայրենի յեև Դա համարվում է հայրենասիրություն։ Մնորի՛մ...
ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—Յերաժշտությունն այնպիսի բան է, վոր կաքսկի չի զգալ և չզղալ, նայելով տրամադրությանը։
ՍՏԵՓ.—Նեցցեք, քեռի, զարձյալ մի խորը փիլիսոփայական զգացմունք արտահայտեցիք։ Ձեր կենացը... (Բաժակը զարկում է Սողոմ Սողոմյանի բաժակին յեվ խմում է)։
ԱՐՄԵՆ.—Մելանիա, վերցրեք պարոնից յերեք ռուբլի և տվեք յերաժիշտներին։
ՄԵԼԻՍ.—(Զայրացալով)։ Յերեք ռուբլի՞։ Գժվել ես, թե՞ չէ։ Դա յել թատրոն չէ, վոր ամեն անգամ ութ ռուբլի ծախենք։ (Սամսոնին)։ Տասը կոպեկն էլ շատ է։
ԱՐՄԵՆ.—(Վ.ցատած)։ Հայրիկ, առ նրանց յերեք ռուբլի։
ԿՈՍՏ.—Աչքիս վրա։ (Ձեռը տանելով գրպանը)։ Մեծ բան չէ։

ՎԻՐԳ.—(Մեկնւսի)։ Շատ ես մեծ-մեծ կոտրտում, տեսնենք վերջը ինչ պիտի լինի։

ՍԱՄՍ.—(Կոստանդինին)։ Ներեցեք, իմ հյուրիրն իմ տանն իրավունք չունին փող ծախսելու։ (Տալով Մեղանիային մի ռուբլի)։ Ուր այս մի ռուբլին նրանց, Թող կորչեն։

ԱՐՄԵՆ.—Մելանիա, շնորհակալություն հայտնեցեք նրանց։ Այդ ցնցոտիների տակ մարդկային սիրտ և բարախում։

ՄԵԼԱՆ.—(Դրամը տալիս է յերաժիշտներին)։

ՑԵՐԱԺ.—Դադարում են նվագել, գլուխ են տալիս խոնարհ յեվ հեռանում են)։

ՍՏԵՓ.—Մայրիկ, կարելի յե վեր կենալ։ (Առմենուհուն)։ Տիկին։

ՑԵՂԻՍ.—Ձաշը վերջացել է։ (Վեր է կենում)։

ԱՐՄ.—(Գլխով համաձայնության նշան է անում Ստեփանին յեվ վեր կենում)։

ԱՄԵՆՔԸ.—(Վեր են կենում)։

ԳԱՐ.—
ՄԵԼ.— } (Սկսում են սեղանը ժողովել)։

ՍՏԵՓ.—(Կոստանդինին)։ Համենաք, մի քիչ նստեք խաղանք պատրզամբի վրա։

ԿՈՍՏ.—(Մխախոտ վառելով)։ Իսկ գրոսանքը։

ԱՐՄԵՆ.—Զկայացավ, հայրիկ։ (Սկսում է Համայակի հետ զրույց անել)։

ԿՈՍՏ.—(Ստեփանին)։ Գնանք։ (Բարձրանում է պատզամբը)։

ՍՏԵՓ.—Կոստանդինին հետեվելով)։ Գարեգին, նստեցին բերեք։

ԳԱՐ.—(Գնում է աջ, սենյակից օտապով մի ճաոդի յե դուրս բերում յեվ դնում պատշգամբի յերկրորդ ծայրում)։

ԿՈՍՏ.—
ՍՏԵՓ.— } (Սկսում են խաղալ)։

ՍՈՂ. ՍՈՂՈՄՑԱՆ.—(Ցեղիսաբեթին)։ Քույր, կարող ես ինձ մի բաժակ սուրճ տալ, թեև սուրճը ջնասակար է ինձ համար։

ՑԵՂԻՍ.—Գնանք։ (Բայերն ուղղում է դեպի պատզամբը)։

ՎԻՐԳ.—(Աչքերով միջոց հետեվել է Առմենուհուն յեվ Համայակին, Ցեղիսաբեթին առանձին)։ Տես ե՛, քչփչում են։

ՑԵՂԻՍ.—(Մի արագ բշնամական նայացք ձգելով Առմենուհու կողմը)։ Ա՛հ, քանի գնում, այնքան ավելի յեմ ատում Ցերեք ռուբլի մուրացկաններին, տե՛ր աստված։ (Գնում է)։

ՍՈՂ. ՍՈՂՈՄ.—(Հետեվում է Ցեղիսաբեթին)։

ՎԻՐԳ.—(Մի չար հայացք յեվս ձգելով Առմենուհու յեվ Համայակի վրա, հետեվում է Ցեղիսաբեթին)։

ԱՄՄ.—(Համայակին)։ Ցես կինամնաչի ձեզ հետ ավելի յերկար խոսել իմ հար տան պլանի մասին։ Պետք է ասած, վոր ձեր առաջարկած վոճը քանի գնում, ավելի յես պատվում ինձ։

ՀԱՄԱՅ.—Խնդրեմ, յես ձեր տրամադրության տակ եմ։

ՍԱՄՍ.—Գնանք իմ աենյակը։ (Դիմում է դեպի պատզամբը)։

ՀԱՄԱՅ.—(Բարձրանում է պատզամբ յեվ մյնչեվ Սամսոնն ու Առմենուհին խոսում են, կանգնում է կոստանդինի ու Ստեփանի հետ յեվ ձայնում է նրանց խաղին)։

ԱՐՄԵՆ.—Սամսոն, մի րոպե։

ՍԱՄՍ.—(Ետ է գառնում)։

ՏԵՍԻԼ X

Առմենուհի յեվ Սամսոն

ԱՐՄԵՆ.—Ասա խնդրեմ, ինչու դու միշտ խափանում ես ամեն մի զվարճություն։ Կարծեմ քեզ համար դժվար չեր լինել մի յերկու ժամ նվիրել ինձ։

ՍԱՄՍ.—Դրա համար պահնցիր ինձ։ Ե՛հ։ (Ուզում է գնալ)։

ԱՐՄԵՆ.—Կաց։

ՍԱՄՍ.—(Կանգ առնելով)։ Ասա, լսում եմ։

ԱՐՄԵՆ.—Բանը զբոսանքը չե, Սամսոն, հասկացիր, վերջապես։

ՍԱՄՍ.—Իմ ե պատահել, ասա, վոր հասկանամ։

ԱՐՄԵՆ.—Վերջերս մի չար նախազգացում սկսել է ինձ հալածել։ Թվում է, վոր շուտով ինձ մի դժբախտություն է պատահելու։ Պաշտպանիր ինձ։

ՍԱՄՍ.—Դատարկ բաներ են, ինչ նախազգացում, ինչ դժբախտություն։ Մեր հասարակության մեջ յերեք կին չկա քեզ նման բազդավոր։

ԱՐՄԵՆ.—Հավատում արդյոք։

ՍԱՄՍ.—Իրավունք չունես չհավատալու։ Նայիր շուրջդ, ամենքը հպատնձում են քեզ։ Ո՞ւմ ամուսինն ես Սամսոն Ալտղյան. ասել է՝ վոչինչ չի պակասում քեզ բացի պակասությունից

ԱՐՄԵՆ.—Ա՛հ, յերեք իմանայիր ինչ է կատարվում անա այստեղ։ (Սրտին գառկելով, այդ չեյիր ասիլ կա մի պակասություն, վոր վոչ մի հարստությունը կարող է լրացնել, վոչ մարդկանց հարգանքն ու հպատնձը։

ՍԱՄՍ.—Ա՞յն և։

ԱՐՄԵՆ.—Քո անտարբերությունը դեպի իմ հոգեկան վիճակը։ Սամսոն, պարզ ասա, անկեղծաբար, ճիշտ և, որ քո գործերն են միայն քեզ խլում ինձանից։

ՍԱՄՍ.—(Թերեվ ցնցվում է, բայց յեվ իսկույն ուղղում իրան)։ Զարմանալի հարց։ Ուրիշ չես ինչով կարող եմ հաճոյանալիս բացի իմ գործերից։

ԱՐՄԵՆ.—Իսկապես, չես ել այդպես եմ կարծում, սակայն մի ակնթար կասկած, մի ինչ-որ թերահավատություն մտել և սիրտս է ինձ տանջում ես...

ՍԱՄՍ.—(ձեվացնում է վիրավորված) Արմենուհի, կարծես չես քեզ վոչ մի կասկածի առիթ չեմ տվել։

ԱՐՄԵՆ.—Լավ, մի բարկանար։ Ցերևի, չես հիմար եմ...

ՍԱՄՍ.—Հիմար չես, Արմենուհի, այլ մի փոփը ներվային, և այդ առաջանում է անգործությունից։ Զբաղվիր մի բանով և կանցնի։

ԱՐՄԵՆ.—Ա՛ա, վոչ մի զբաղմունք, վոչ մի գործ ինձ չի հետաքրքրում։ Ա՛ա ինձ, Սամսոն, սիրում ես քո Արմենուհուն։

ՍԱՄՍ.—Հինգ տարի չի ամուսնացած ենք և դեռ հարցնում ես այդ։ Մի՞թե չգիտես, որ ինձ նման մի մարդու համար բան իր որինական ամուսնուց վոչ մի կին գոյություն ունենալ չի կարող։ Այդ կողմից չես նահապետական մարդ եմ։

ԱՐՄԵՆ.—(Ուրախացած, իգիճաոռացությամբ մեջ ճարձակվում է Սամսոնին գրկելու)։ Ա՛հ, չես այդ հի փափագում քեզանից լսելու։

ՍԱՄՍ.—(Մի բայլ հեռ է կանգնում, ճայելով դեպի պատզամը)։ Ինչ ես անում, անմիտ, հյուրերի ներկայությամբ,

ԱՐՄԵՆ.—(կանգ է առնում։ Դառը ծիծաղով)։ Ա՛ա, վախեցար, բանականությունդ իսկույն բողոքից։ Լավ, մի ամաչիր, կատակ եի անում։ (Հեռանում է Սամսոնից)։ Գիտեմ, չես ուզում, վոր քեզ թեթևամիտ մարդ համարեն։ Վո՛չ, բարեկամ, այդպես չեն սիրում։ Սիրող մարդն այդքան զգուշ չի լինում։ Հյուրե՞ր։ Ո՞ւր են նրանք։ Պատշգամբի ծայրում։ Այնքան հետու, վորքան քո սիրտն ինձանից։ Գնա, չես քեզ համար կյանքի ընկերուհի չեմ, այլ ուրշի բան.

ՍԱՄՍ.—Չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում։

ԱՐՄԵՆ.—Ա՛հ, իմ վիշտն էլ այն է, վոր չես հասկանում և, ցերեկը չերբեք չես հասկանալ ինձ։ Հինգ տարի ես քո կինն եմ, դեռ մի անգամ դու չես կարողացել բարեխիղճ տալ իմ սիրտը։ Ցես քո հոգու և արյան բաժինը չեմ, այն, ինչ վոր չերևակայում ելի, թե պիտի լինի մի կին իր ամուսնու համար։ Քո գլուխը լի չի հաշիվներով, քո սիրտը կաշկանդված և քո գործերի ցանցով։

ՍԱՄՍ.—Ճիշտ և, ճիշտ և, հետո։

ԱՐՄԵՆ.—Դրամի սերը դարձել է քեզ համար բռնակալ կիրք և հափշտակել է քեզ իսկական կյանքից։ Բայց ինչ եմ անում քո հարստությունը, վոր այնքան չերեսով են տալիս քո քույրն ու մայրը։ Ինձ սիրո՛ւ և հարկավոր, վառվռուն, թրթռուն սիրո՛ւ, հարուստ հոգի, կյանք, հասկանո՞ւմ ես, կյանք։ Գնա՛ քո գործերի հետևիցը։ Ցես այն չեմ, ինչ վոր հարկավոր ես քեզ նման խելոք մարդու։ Մենք տարբեր աշխարհների մարդիկ ենք։ Մայրդ ու քույրդ ունին իրավունք տանելու։ Ո՞ւմ եմ պետում չես իմ անձնական փափագներով, իմ հիմար չերազներով։ Մարիը առանձնասնակ, խորասուզվիր քո հաշիվների մեջ և հետո... ով գիտե՝ Իսկ չես... Թող, վոր իմ տեմամբ չերևակայությամբ չերջանկության ոդային դղյակներ կառուցանեմ։ (Շտապ բարձրանում է պատզամբ յեվ աննկատելով)։

ՍԱՄՍ.—կաց, սպասի՛ր։ (Մի չերկու բայլ է անում Արմենուհու հետևից, յեվ կանգ առնելով, մտածում է)։ Զարմանալի չի, տարօրինակ։

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է ամարանոցի ներսը։

Մի մեծ սենյակ, թեթեվ կահավորված։ Խորքում յերկու լուսամուտներ, մեջտեղ դռներ դեպի այն պատշգամբը, վոր ա-րարվածում կազմում եր բեմի աջ կողմը։ Հեռու յերեվում են պարտիզի ծառերի գագաթները։ Ավելի հեռու՝ ժայռեր։ Աջ պատի մեջ յերկու դռներ, վորոնցից առաջինը տանում է Սամսոնի սենյակը, յերկրորդը—Արմենուհու բուդուարը։ Ձախ պատի մեջ յեվս յերկու դռներ, վորոնցից առաջինը տանում է մի ընդհանուր մուտք—իսկ յերկրորդը Ցեղիսաբեթի սենյակը

Բեմի խորքում, աջ լուսամուտի առջեվ դաշնամուր, ձախ լուսամուտի առջեվ մի կլոր սեղան, վրեն վազրի ծաղիկների մի փունջ։ Ձախ պատի առջեվ, յերկու դռների միջեվ գահավորակ յեվ մի քանի թեթեվ կիսաբազկաթոռներ։ Լուսամուտների վրա ապիտակ վարագույրներ։

Խորքի դռներն ու լուսամուտները բաց են։

ՏԵՍԻԼ I

Կոստանդին յեվ Ստեփան

ԿՈՍՏ.—(Վերադառնում է առավոտյան զբոսանքից խարիֆ դռնեռով։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում)։ Շատ ուրախ եմ, վոր դուք վճռել եք մի քանի շաբաթ մնալ։ Սամսոնի ազգականների մեջ դուք այս տան միակ անկեղծ բարեկամն եք, իսկ այժմ ձեր ներկայությունն այստեղ մինչեվ անգամ անհրաժեշտ է։

ՍՏԵՓ.—Ինչու՞ չե անհրաժեշտ։ (Գալիս է Կոստանդինի հետ. նույն հագուստով է)։

ԿՈՍՏ.—(Հուզվելով)։ Կասեմ, բժիշկ, կասեմ։

ՍՏԵՓ.—Ցավս նկատում եմ, վոր վերջին անգամ քաղաք գնալուց հետո դուք առհասարակ տխուր եք։ Կարելի յե իմանալ թե պատճառը։

ԿՈՍՏ.—Պատճառը և այն, ինչ վոր ձեզ վաղուց կասկածում եք։ Բայց մի անգամ ել պետք է ասուզել։ Բժիշկ, ամեք ինձ ազնիվ խոսք, վոր իմ մի հարցին կպատասխանեք ամենայն անկեղծությամբ։

ՍՏԵՓ.—Ինչ բանի յե վերաբերվում ձեր հարցը։

ԿՈՍՏ.—Իմ աղջկա ճակատագրին։

ՍՏԵՓ.—(Զարմացած)։ Ճակատագրի՞ն անգամ։ Այդ ինչ կարող է լինել։

ԿՈՍՏ.—Տալիս եք խոսք, վոր կպատասխանեք իմ հարցին։

ՍՏԵՓ.—Դուք այնպիսի բան եք պահանջում, վոր ես չեմ կարող մերժել։ Արմենուհու ճակատագիրն ինձ համար այնքան թանկ է, վորքան ձեզ համար։ Հարցրեք ինչ կամենում եք։

ԿՈՍՏ.—(Դողդողուն ձայնով)։ Ինչ եք կարծում, բժիշկ, իմ փեսան, Սամսոն Ալադյանը ազնիվ մարդ է։

ՍՏԵՓ.—Ինչ։ Ձեր հարցը տարօրինակ է։ Չեմ հասկանում։

ԿՈՍՏ.—Կհասկացնեմ, բարեկամս, կհասկացնեմ։ Ով է այն անառակ... Բայց սպասեցեք, կարծեմ գալիս են։ Գնանք իմ սենյակը։ Այնտեղ կբացատրեմ։ Գնանք։ (Գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՍՏԵՓ.—(Հետեվում է Կոստանդինին)։

ՏԵՍԻԼ II

Ցեղիսաբեթ, Սիրանույշ յեվ Վիրգինե

ՑԵՂԻՍ.—(Գալիս է ձախ կողմի յերկրորդ դռնեռով. հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում)։ Ապրիք, վորդի, ապրիք։ Հարսը ձեզ պես պիտի լինի։ Մի կին, վոր փոքր հաշիվ չդիտե, պրծավ. քանդվեց նրա մարդու տունը։ Նրա տեղը այստեղ։ (Նստում են)։

ՎԻՐԳ.—(Ներս է մտնում ձախ կողմի յերկրորդ դռնեռով Ցեղիսաբեթից յեվ Սիրանույշից հետո։ Հագած է ուրիշ շրջազգեստ, այս անգամ համեմատաբար համեստ)։ Ի հարկե։ (Նստում է)։

ՍԻՐ.—(Գալիս է ձախ կողմի յերկրորդ դռնեռով Ցեղիսաբեթից հետո, Վիրգինեյից առաջ։ Բավական գեղեցիկ, բայց վոչ-մեղմ դեմքով կին է։ Հագնված է օճեղ, գլխին օտա մեծ գլխարկ սահագին փետուրով։ Ձեռքում մի բանգագին հատ յեվ օճեղ ճոպանոց)։ Հայրս ուժեղ սիրել է ինձ, յես չեմ կարող մերժել։ Արմենուհու ճակատագիրն ինձ համար այնքան թանկ է, վորքան ձեզ համար։ Հարցրեք ինչ կամենում եք։ (Նրբորեն)։ Ամուսինս իմ հաշիվներին չի խառնվում և թույլ ել չեմ տալ, վոր խառնվի։ Նա անհաշիվ մարդ է։

ՑԵՂԻՍ.—Ամուսնանամ մի բան հարցնել, Մոսկովյան ել խոտորները գողանում են, ինչպես մեղուան։

ՍԻՐ.—Այն, տիկին, այս վիրջին տարին իննը խոհարար եմ փոխել։

ՎԻՐԳ.—Ձես եվ ամիսը մեկը փոխում եմ։

ՅԵՂԻՍ.—Ձեր լվացարարներն ինչպես են։

ՍԻՐ.—Հաշվով տալիս եմ լվացքը, հաշվով ընդունում եմ։ Մի բան պատահելիս վարձը կարում եմ։

ՎԻՐԳ.—Ձես եվ։

ՅԵՂԻՍ.—Ձերևակայում եմ, վորքան և սիրում ձեզ ձեր սկեսուրը։

ՍԻՐ.—Ձես սկսուր չունեմ։ (Մեկուսի)։ Բարեբաղդաբար։

ՅԵՂԻՍ.—Ափսոս։ Սկեսուրը ընտանիքի խմորն և։ Վիրգինեն ել չունի։

ՎԻՐԳ.—(Մեկուսի)։ Բարեբաղդաբար (Սիրանույշին)։ Սիրում եք ձեր ամուսնուն։

ՍԻՐ.—(Ծպտալով) Չգիտեմ։

ՅԵՂԻՍ.—Իսկ Նա, իհարկե, սիրում է ձեզ։

ՍԻՐ.—Այդ մասին ել չեմ մտածում։ Ամուսինս է, իհարկե, որինքով պարտավոր է սիրել։ Միայն մեր դաղափարները իրար հակառակ են. ւերբեմն վիճում ենք, (Ինքնագոհ)։ Բայց սիրա չես եմ հաղթում։

ՎԻՐԳ.—Իսկ և իսկ ինձ նման։ Բարի մարդ և, ւերեխի։

ՍԻՐ.—Շատ բարի, բայց դյուբաղդրիա և։

ՅԵՂԻՍ.—Լավ պահեցիք, բարի մարդիկ Թույլ են լինում։ (Խորհրդավոր ժպտում է)։

ՍԻՐ.—Ձես ղրանից իսկի չեմ վախենում։ Վոչ-վոք չի կարող իմ ամուսնուն ձեռքից խլել։

ՎԻՐԳ.—(Խորհրդավոր ժպտալով)։ Ո՞վ դիտե...

ՅԵՂԻՍ.—(Տեսնելով Արմենուհուն)։ Ահա, հարսս յեկավ։

ՏԵՍԻԼ III

Նույնը, Արմենուհի յեվ Մելանիա

ԱՐՄԵՆ.—(Դալիս է աջ կողմի յերկրորդ դռնեռով. հագած է ընդունելության բավական օճող հագուստ, շատ նուրբ ճաշակով հարդարած։ Թանձր մազերը պահպանվում են գեղեցիկ կրյա սանրով, կոկորդի վրա մի ճնշուճեն ֆորց)։ Բարև ձեզ, տիկին։ (Ջեռ է տալիս Սիրանույշին սիրալիր յեվ նուրբ)։

ՍԻՐ.—(Մի ճախանճոռ հայացքով չափել է Արմենուհուն վոտից մինչեվ գլուխ)։ Հմայակը բերից իր կապած պլանը ձեր ա-

մուսնուն ցույց տալու, յես ել կամեցա ձեզ հետ մի քիչ զրույց անել։

ԱՐՄԵՆ.—Շատ ուրախ եմ։ (Մինչ ձեղիսաբերը ու Մելանիան խոսում են, ձեվերով զրույց է անում Սիրանուշի հետ)։

ՄԵԼ.—(Դալիս է ձախ կողմի առաջին դռնեռով։ Ձեղիսաբերին)։ Տիկին, դյուղացիները յուղը բերել են։

ՅԵՂԻՍ.—(Ահագ վոտի կանգնելով)։ Ո՛յ, տեսնեք, վոր առանց ինձ չկշռեն։ Այդ դյուղացիները խարեբաններ են։ Գնամ, սուրճ բեր տիկիններին համար։ (Գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ IV

Արմենուհի, Սիրանույշ յեվ Վիրգինե, մեր ըղդ մեջ Մելանիա

ՍԻՐ.—Կարդացի ձեր ուված վիպը։

ԱՐՄԵՆ.—Հավանեցիք։

ՍԻՐ.—Ձես հավանեցի միայն այն առաքինի կնոջը, վորին մի խելագար ուզում եր զրկել որինական ամուսնուց։

ԱՐՄԵՆ.—Իսկ այդ որիորդին, վորին խելագար անվանեցիք, չեք կարեկցում։

ՍԻՐ.—Անհնարին։

ՎԻՐԳ.—(Ձանձրույթի նշաններ է անում)։

ԱՐՄԵՆ.—Ջի վոր Նա անհույս սիրուց իրան ժայռից գցում է իր սիրեցյալի վոտների տակ և կատ-կատր լինում։

ՍԻՐ.—Ինչ իրավունք ուներ մի որիորդ սիրահարվելու ամուսնացած մարդու վրա։

ԱՐՄԵՆ.—Ասում են սերն իրավունքներ չի ճանաչում, տիկին։

ՎԻՐԳ.—Անառակ սերը, իհարկե, չի ճանաչիլ։

ԱՐՄԵՆ.—(Սիրանույշին)։ Համաձայն եք այստեղի բնությունը։

ՍԻՐ.—Շատ ել չե, գառիվայրեր շատ կան, կոտքով գրոսնելը վտանգավոր է։

ՄԵԼ.—(Ձերեք գավաթ սուրճ յեվ շաքարաման է բերում, դնում է սեղանի վրա յեվ գնում է միյեվնույն, այսինքն ձախ կողմի առաջին դռնեռով)։

ԱՐՄԵՆ.—Իսկ ձեր ամուսինը հիացած է։

ՎԻՐԳ.—(Մի բաժակ սուրճ վերցնելով)։ Ա՛խ, դուռ արդեն խոսե՛լ ես նրա հետ բնության մասին մինչև անդամ։

ԱՐՄԵՆ.—Առանց ցայդու վ.երգինեյին)։ Այո, յես պարոն Հմայակի հետ խոսել եմ ամեն բանի մասին։

ՍԻՐ.—Ցավ նա հիացած է ձեզանով։ Ասում է, առաջին անգամ եմ հանդիպում մի հայ կնոջ, որ գեղեցկի մասին գաղափար ունի։

ՎԻՐԳ.—(Մեկուսի)։ Ոհո։

ՍԻՐ.—Իսկ յերեկ նա վերադարձավ խելագարված ձեր դաշնամուր նվագելուց։ (Դիտում է Արմենուհու հագուստը)։

ԱՐՄԵՆ.—Ցնա թանգ եմ գնահատում արտիստի կարծիքը։

ՎԻՐԳ.—(Սիրանույշին)։ Ե՛հ, սիրելիս, այժմ ով չի դաշնամուր նվագում։ Անցնք մեր վոզոցնիրով, յուրաքանչյուր լուսամուտից կլսեք «գլինգ-գլընգ, գլինգ-գլընգ»... (Սուրճ է խմում)։

ՍԻՐ.—Ցնա ել որիորդ ժամանակս շատ եյի նվագում. բայց հիմա դաշնամուրս վոշի յի պատել։ (Արմենուհուն)։ Ասացեք, խընդրեմ, վոթռող եք կարել տվել այդ հագուստը։

ԱՐՄԵՆ —(Անփույթ)։ Թիֆլիսում։ (Սուրճ է խմում)։

ՍԻՐ.—Հիանալի յե։ Յերևակայեցեք, գարնանը յես Պարիզում յերկու հագուստ պատվիրեցի—վչացրին։ (Նոճափելով Արմենուհու շրջազգեստը)։ Ցավ ինչ ամուր կտոր է, յերկար կդիմանա։

ՎԻՐԳ.—(Սիրանույշին)։ Ցնա ձեր հագուստն ավելի եմ հավանում։ Դուք ճաշակ ունիք։

ԱՐՄԵՆ.—(Ուշադրություն չդարձնելով Վ.իրգինեյի խոսքերի վրա, Սիրանույշին)։ Դուք ասացիք, թե գարնանը Պարիզում եք յեղել։ անկասկած, տեսել եք այն պլենը, որ ներկայացնում է Բեթհովենի վոլբերգական կյանքը։ Ասում են շատ սրտաշարժ է այն տեսարանը, յերբ ինքը սիմֆոնիանները գալիս են իրենց յերկնային ձայնով մխիթարելու հանճարեղ ստեղծագործողին։

ՍԻՐ.—(Զանձրույթով)։ Զգիտեմ, չեմ հիշում, թատրոններ շատ եմ տեսել։ Յերկու ամբողջ ընթացքում Պարիզում ծախսեցինք չորս հազար հարյուր քսան ու յոթ ռուբլի։

ՎԻՐԳ.—(Սիրանույշին)։ Դուք ճանաչում եք Մոսկվայում տիկին Մարմառյանին։

ՍԻՐ.—Այո։

ՎԻՐԳ.—Նա իմ դասընկերն է յեղել. ասում են իր մարդուն գովաճանում է, ճիշտ է։

ՍԻՐ.—Զեմ լսել։

ՎԻՐԳ.—Իսկ յես լսել եմ։

ԱՐՄԵՆ.—(Կամենալով խոսակցությանց ցյուրը փոխել, Սիրանույշին)։ Տիկին, Պարիզում տեսաք Ռոզենի գործերը։

ՍԻՐ.—(Մտածելով)։ Ռոզեն... Ռոզեն... միտս չե... այդ ինչ մարդ է։

ՎԻՐԳ.—կար ու ձևի վարպետ կլինի, մոդիստ։

ԱՐՄԵՆ.—Վո՛չ Վիրգինեն, Ռոզենը ձեր ժամանակի ամենահանճարեղ արձանագործն է, վորին համեմատում են Ֆիդիասի հետ։

ՍԻՐ.—Արձանների մասին ամուսնուս հետ խոսեցեք։ Ախ, այդ ինչ հրաշալի քորոց է։ կարելի յե մոտիկից տեսնել։

ԱՐՄԵՆ —(Քորոցն իր ոձիրից պոկելով, տալիս է Սիրանույշին)։ Համեցեք։

ՍԻՐ.—(Հիացած դիտելով քորոցը)։ Ինչ հազվագյուտ քար, ինչ պայծառ գույն ունի և ինչ անսովոր գործ է։ Թանգ արժե։ (Քորոցը տալիս է Արմենուհուն)։

ԱՐՄԵՆ.—(Քորոցը իր տեղը կպցնելով)։ Զգիտեմ. հանգուցյալ մորս հիշատակն է։ Կամենաք, տիկին, վաղն ինձ հետ բարձրանալ կարմիր լեռան գագաթը արեգակի ծագումը տեսնելու։

ՍԻՐ.—(Զարմացած)։ Արեգակի ծագումը։ Ինչ եք ասում, մթթե մարդ կարող է այդպես վաղ զարթնել։

ՎԻՐԳ.—(Զարուրյամբ)։ Ինչու՞ չե, կաթնավաճառներն ու հացթուխները զարթնում են։

ԱՐՄԵՆ.—Կկամենաք։

ՍԻՐ.—Վո՛չ, սիրելիս, անկարող եմ։

ԱՐՄԵՆ.—Այն ժամանակ այս յերեկո բարձրանք արեգակի մայր մտնելը տեսնելու։

ՍԻՐ.—Մթթե հետաքրքրական է։

ԱՐՄԵՆ.—(Վոգեվորված)։ Ոհ, տիկին, այդ մի աքանչելի տեսարան է։ Մի յերազ և այնպիսի յերազ, վոր միայն մանուկ հասակում կարելի յե տեսնել.

ՎԻՐԳ.—(Մեկուսի)։ Ոհո, սկսեց (Բարձր)։ Սիրեմատոգրաֆուհի է կարելի յե տեսնել։

ԱՐՄԵՆ.—(Ուշադրություն չդարձնելով Վիրգինեյի վրա)։ Ձեր առջև տարածվում է Կովկասյան լեռնաշղթան ալ ու ձախ։ Ձյուռասպատ գագաթները վսեմորեն, լայնատարած սառցանապատ գագաթները վսեմորեն, ինչպես յերկինքը ամառային յերանները մանիշակագույն, ինչպես յերկինքը ամառային յերեկո։ Վեր սպիտակ ամպերի վիթխարի քուլաները, վորը մեկին անդունդները։ Լույս և խավար, կյանք յեվ մահ, ամենավսեմ գեղեցկություն և դիվային զորություն։ Ցնա-

բանդների անկարապրելի խառնուրդ։ Ցավ դուք, նայելով հսկաների վարդագույն դպաշինքներին ու նրանց հուժկու կրծքերին, ոլանում եք դեպի հեռավոր, անծանոթ աշխարհները, ուր չկան մանր կրքեր, չնչին հույզեր, նյութամոլություն, նախանձ, զրպարտություն, բանսարկություն, ատելություն։ Ա՜հ, այդ սքանչելի է, ինչպես սիեդերքի դոհար... (Վեր է կենում)։

ՍԻՐ.—(Կիսաձեզնական)։ Կեցցե՛ք, կեցցե՛ք, դուք կատարյալ բանաստեղծ եք, (Վեր է կենում)։

ՎԻՐԳ.—(Բռնի ծիծաղելով)։ Պակասում է միայն սազը։ (Վեր է կենում)։ Ե՜հ, այնքան վիսկը ե կարդացել, որ կարող է մի բան անգիր անել։

ՍՐՄ.—(Նայում է Վիրգինեյին հանգիստ արհամարհական հայացքով)։

ՍԻՐ.—(Նայելով իր ժամացույցին)։ Ա՜հ, արդեն տասներկու ժամն է։ Հմայակին ուշացավ, կես չեմ կարող նրան սպասել։ Դե՛հ, ցտեսություն, սիրելիս. կես լռները բարձրանալ չեմ կարող։ Տափարակ տեղ էլ կարելի չե գվարճանալ։

ԱՐՄԵՆ.—(Ուղեկցում է Սիրանույշին մինչև խորքի դռները կես ճե՛ն գալիս։ Հառաչում է իբրև մի մեծ ձանձրույթից ազատված)։

ՎԻՐԳ.—Արմենուհի, դու իսկի հույս ղրաղճնելու շնորհք չունիս։

ՍՐՄՍ.—(Անփույթ)։ Ճշմարիտ ես ասում։ (Ուզում է գնալ աջ կողմի յերկրորդ դռնեռով, Սամսոնին տեսնելով կանգ է առնում)։

ՏԵՍԻԼ V

Արմենուհի, Սամսոն յեվ Վիրգինե

ՍԱՄՍ.—(Գալիս է աջ կողմի առաջին դռնեռով։ Հագած է ուրիշ հագուստ—մոխրագույն կոմպլե)։ Վիրգինե, ազաչնին հրամայիր յերկու գավաթ սուրճ տանել իմ աենյակը։

ՎԻՐԳ.—Իսկույն։ (Շտապով գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ VI

Սամսոն յեվ Արմենուհի

ՍԱՄՍ.—(Սպասել է, որ Վիրգինեն հեռանա։ Գրգռված)։ Լսիր։ Հայրդ իրան խելոք չի պահում. կես պատասխանատու չեմ իմ մասին։

ԱՐՄԵՆ.—Ինչ է պատահել։

ՍԱՄՍ.—Այս րոպեին նա ինձ վիրավորեց ոտքի ներկայությամբ։

ԱՐՄԵՆ.—Վիրավորե՞ց, քեզ, հանյս. այդ անկարելի բան է։

ՍԱՄՍ.—Ակնոջ դիր. նա անցնում է իմ լուսամուտի առջևով։ Ցես խնդրեցի նրան մոռնել իմ անեյակը մի րոպե. կամենում եյի ցույց տալ նրան Վաղամյանի շինած պլանը մեր նոր տան համար։ Պատիվ եյի ուզում անել։ Ցերևակայիր, նա ինչ պատասխան ավեց. «Թող ինձ հանգիստ, յես չեմ ուզում տեսնել քո նոր տունը, վոր շինում ես հինը քանդելով»։ Ի՞նչ եր ուզում ասել այդ խոսքերով—չհասկացա. միայն նրա ասելու ձևը, դեմքը, ձայնը այնքան կոպիտ եյին, վոր միանգյամայն վաղամյանի առջև։ Պետք է ասել, վոր առհասարակ վերջերս նա իմ դեմ ինչ-վոր թշնամական դիրք է բռնել։ Ապրելով իմ տանը, նա կրում է իմ դեմ մի անհասկանալի վոխ։ Այդ յես համրերել չեմ կարող, լսո՞ւմ ես, չեմ կարող։ (Ուզում է գնալ)։

ԱՐՄԵՆ.—Սպասի՛ր։ Քո խոսքերն ինձ ապշեցնում են։ Իմ հայրը վոչ չար մարդ է, վոչ անտակտ։ Ցեթե արդարև նա քեզ վիրավորել է, հնդամանքի մի պատճառ ունի է, անկասկած, լուրջ պատճառ։

ՍԱՄՍ.—Ցես չգիտեմ և չեմ էլ հետաքրքրվում նրա պատճառներով. գիտեմ միայն, վոր յեթե այդպես շարունակվի, առիթվածկլինիմ... (Ջսպում է իրան)։

ԱՐՄԵՆ.—(Դուրսակելով)։ Դուրս անել նրան քո տնից, այնպես չե՞։ Շատ լավ. տունը քոնն է, ունես իրավունք։ Բայց լսիր, առանց քո սպառնալիքի էլ իմ հայրը կհեռանա քո տնից։ Արդեն նա ինքը վաղուց եր ուզում հեռանալ. յես չեյի թողնում։ Վաղը նա այլևս քեզ չի անհանգստացնիլ. բավականե՞ն ես։

ՍԱՄՍ.—Ցես չեմ ուզում, վոր մարդիկ ասեն, թե Ալադյանն իր անհրոչ վերաբերմամբ յեղել է անքաղաքավարի։ Միայն ինձ թվում է, վոր մեր փոխադարձ հարաբերություններին մեջ երբորդ անձի մասնակցությունն ավելորդ է։

ԱՐՄԵՆ.—Աա՛, այդպե՞ս է, կեցցե՛ս, կեցցե՛ս։ Ցես վաղուց եյի փափագում լսել այդ քեզնից։ Շատ բարի, իմ հայրը կհեռանա քո տնից և դու յերբեք չես տեսնիլ նրա յերեսը։ Բայց կան և ուրիշ անձնավորություններ, վոր ավելի յեն խանգարում մեր փոխադարձ հարաբերությունների մեջ, քան իմ հայրը։ Այդ քո մայրն է և քո քույրը։ Դու յել նրանց հեռացրու։ Համաձայն ես։

ՍԱՄՍ.—(զարմացած)։ Իրնչ, չես բաժանվելիս իմ ծնողից։

ԱՐՄԵՆ.—Ինչո՞ւ չեմ. չէ՞ որ չես բաժանվում եմ իմ ծնողից։

ՍԱՄՍ.—Դու կինն ես, չես ալը. դու չես չկկել իմ մոր տունը և վոչ նա՝ քո տունը։

ԱՐՄԵՆ.—Ահա թե ինչ։ Ցավ դու քեզ համարում ես լուսավորված մարդ։ Սամսոն, մեր ընտանեկանությունը անկախ հիմքի վրա պիտի դրվի, չեթե ուզում ենք վայելել փոխադարձ ընտանեկանություն։ Ցես կհարգեմ քո մորը բայց անգամ ավելի, չես սուրբն պես կպաշտեմ նրան, չեթե նա հետո ինքն մեզնից դոնե այնքան հեռու, որ չխառնվի քո և իմ զգացումների մեջ։ Ցես ավազ քրոջս պես կպատվեմ քո քրոջը, չեթե նա ինձ հանգիստ թողնի։ Մի փոքր առաջ, նա սիկին Սիրանույշի ներկայությամբ, հինգ անգամ ինձ վիրավորեց կոպիտ ակնարկներով։ Ցես հազիվ կարողացա ինձ զսպել։

ՄԵԼԱՆԻԱ.—(գալիս է աջ կողմի առաջին դռնեռով, չեռկու գավաթ սուրճ ձեռքին չեվ բեմով անցնում է ու գնում աջ կողմի առաջին դռնեռով)։

ՍԱՄՍ.—(մտածել է Արմենուհու խոսքերի միջոցին)։ Գուցե դու չես ունենա իրավունք։

ԱՐՄԵՆ.—(վոգեվորված)։ Ա՛խ, այդ իրավունքը տալիս է ինձ իմ սրտի պահանջը, իմ զգացումների անկախությունը. վերջապես, իմ սերը դեպի քեզ։ Բաժանվե՛նք ևեր մերձավորներից նրանց ավելի հարգելու համար։

ՍԱՄՍ.—(վճռական)։ Շատ բարի, չես համաձայն եմ, թող քո ասածը լինի։

ԱՐՄԵՆ.—(ուրախացած)։ Ա՛հ, վերջապես։ Ցեթե չեմ սխալվում, այդ առաջին դիմումն է, որ անում ես ինձ։ Շնորհակալ եմ։

ՍԱՄՍ.—Բայց վո՛չ իհարկե այժմ։ Սպասենք ամառը վերջանա։ Բացաք վերադառնալով, մայրս կկրկնա վիրգինեի տանն ապրելու, իսկ մենք կապրենք առանձին։ Դո՛հ ես այժմ ինձանից։ (Գրկում է Արմենուհուն)։

ԱՐՄԵՆ.—(խանդավառությամբ գրկելով Սամսոնին)։ Դո՛հ եմ, անչափ դո՛հ, վորովհետև այդ զոհաբերությունը ցույց է տալիս, վոր դու ինձ քիչ թե շատ սիրում ես։

ՍԱՄՍ.—«Քիչ թե շատ». քենեամբա՛ր, մրթե կասկածում ես իմ սիրո մասին։ (Փաղաքշում է)։

ԱՐՄ.—Ո՛հ, չեմ ուզում կասկածել, չերբեք։ (Նորից գրկելով Սամսոնին)։ Ա՛հ, այժմ կարող եմ ասել, վոր չես սկսում եմ ապրիլ, վերջապես...

ՍԱՄՍ.—(Մեղմիկ հեռացնելով Արմենուհուն)։ Բայց լսիր, չես ել ունենք մի պայման։

ԱՐՄԵՆ.—Ասա, կանխավ ընդունում եմ քո բոլոր պայմանները։

ՍԱՄՍ.—Քո հայրը ազնիվ մարդ է, խոսք չունեմ։ Բայց շատ դյուրաբանավան է և հափշտակվող։ Ինձ թվում է, վոր թշնամիներս ինձ զրպարտել են նրա մոտ։ Ո՛վ գիտե ինչեր են ասել։ Համոզիր նրան, վոր փողոցային լուրերի վրա ուշադրություն չդարձնի և դու չել մի հավատար նրա լսածներին իմ մասին։ Համաձայն ես։

ԱՐՄԵՆ.—(մի քիչ հիասթափված)։ Այդ ինչ է նշանակում. քո խոսքերը մութն են ինձ համար։

ՍԱՄՍ.—Լավ. լավ, հետո կբացատրեմ։ Այնտեղ Վաուլամյանը ինձ սպասում է, հետո կառավարիչը պիտի գա։ Բայց կես ժամ անցած չես ազատ եմ և կարող եմ գրկել քեզ։ (Գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ԱՐՄԵՆ.—(խանդագին համբուրելով Սամսոնին)։ Գնա, չես քեզ կըսպասեմ ինչպես սիրահար։

ՏԵՍԻԼ VII

Արմենուհի չեվ Մելանիա

ՄԵԼԱՆԻԱ.—(գալիս է աջ կողմի առաջին դռնեռով դատարկ սկուտեղը ձեռքին չեվ ուզում է սեղանի վրա գցվող դատարկ գավաթները ժողովել)։

ԱՐՄԵՆ.—Մելանիա, տես Արմենակը զարթնե՞լ է։ (Մոտենում է դահլիճի չեվ մի բանի սուրճ պատվիրում)։

ՄԵԼԱՆԻԱ.—(սկուտեղը դնելով սեղանի վրա, ծափով անցնում է աջ կողմի չերկրորդ դռնեռը չեվ իսկույն չես գալիս)։ Զարթնել է։ (Դատարկ գավաթները ժողովում է)։

ԱՐՄԵՆ.—Դայակն այնտե՞ղ է։

ՄԵԼ.—Այո՛։ (Սկուտեղը գավաթների հետ տանում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ԱՐՄԵՆ.—(գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ VIII

Կոստանդին յեվ Սեփան

ՍՏԵՓԱՆ.—(գալիս է ձախ կողմի առաջին դռնեռով)։ Զարմանալի հայր ես. կարծես, դուք ձեր մեկ զավակի թշնամին ես։

ԿՈՍՏ.—(գալիս է Սեփանի հետ նույն դռնեռով։ Միջս նուզված)։ Դուք դատում եք ինչպես բժիշկ, որ վախենում է հիվանդին հայտնել նրա վտանգավոր կացությունը։ Բայց ես բժիշկ չեմ, այլ դինվորական. ես սովոր եմ վտանգների դեմ կանգնել ճակատ ճակատի։

ՍՏԵՓ.—Ընկերական կյանքը պատերազմի դաշտ չե, բարեկամ։

ԿՈՍՏ.—Գիտեմ, բայց ես ել Միքայել Թագավորի սափրիչը չեմ, որը ճշմարտության լծից աղատվելու համար մի փոս եր փորել, և ամեն որ, գլուխը նրա մեջ մտցնելով, ասում եր. «Ետրս իմ ականջները ունի»։ Վոչ, վոչ իմ աղջիկը պետք է լսի ճշմարտությունը։

ՍՏԵՓ.—Յեվ դուք կարծում եք դրանով կբավվոքվի նրա վիճակը։

ԿՈՍՏ.—Գիտեմ, բայց նախ և առաջ ճշմարտությունը։ Արմենուհին արդեն կասկածում է և մեքանի անգամ փորձել է ինձնից իսուք քաշել։ Այժմ, յերբ արդեն համոզված եմ, չեմ թույլ տալ այլևս, որ իմ աղջիկը ամենուրեք ծաղրի առարկա դառնա։ Ա՛հ, մեքանի րոպե առաջ քիչ եր ճեռս լրիվ ապտակ տայի լուսամուտից՝ վառլամենի ներկայությամբ։ (Ծխախոտ է վառում)։

ՍՏԵՓ.—Փորձանքի յեկ յենթարկում ձեր աղջկան, պղատիա, մի արեք։

ԿՈՍՏ.—Ա՛ռ, մանկությունից և նա սովորել փորձանքներին դեմ հանդարձակ։ Հինգ տարեկան եր նա, յերբ մի որ կառքով հանդուցյալի հետ Ղուսար եյինք գնում։ Ավազակները հարձակվեցին մեզ վրա, կառքը պահեցին։ Յես հրացանս առա, հանդուցյալը ռևոլվերս, իսկ Արմենուհին վոտքի կանգնեց կառքի մեջ համարձակ։ Ոհ, պետք է տեսնեիք նրան այդ վայրկյանին։ Նրա սիրտն մազերը ցցվել եյին ասիղների պես, նրա վառվռուն աչքերից արցունքի փոխարեն կայծեր եյին թափվում։ Ավազակապետը հիանալով նրա հրեշտակային կատաղությունից, գոռաց իր խմբին. «Թողեք անցնեն, այդ յերեխան ինձ հաղթեց»։ Յեվ Արմենուհին մեզ ազատեց։

ՍՏԵՓ.—Լավ, դուք գիտեք։ Տեսնք միայն, վոր հետո չզղջաք։

ԿՈՍՏ.—Ճշմարտության կաթոնն և նա անվել, բժիշկ։ Նա չի կարող ապրել ստի և կեղծիքի մեջ։ (Հուզվում է)։ Ա՛հ, բարեկամս, դառն է, շատ դառն՝ ունենալ մի հատիկ զավակ և տեսնել նրան դժբազդ։ (Աչերը սրբում է բաեկինակով)։

ՍՏԵՓ.—Լավ, հանգստացեք։ Գնանք պարտեզ։

ԿՈՍՏ—Գնանք, այժմ չես այս տանը խեղդվում համ։ (Գնում է խորի դռնեռով)։

ՍՏԵՓ.—(հետևվում է Կոստանդինին)։

ՏԵՍԻԼ IX

Արմենուհի յեվ դայակ, յերեխային գրկած։

ԴԱՅԱԿ.—(գալիս է աջ կողմի յերկրորդ դռնեռով, ձեռ ճագցրած մի տարեկան մի յերեխա գրկած)։

ԱՐՄԵՆ.—(գալիս է դայակի հետ նույն դռնեռով)։ Տարեք անուտաս, Թող մի փոքր անուշ ոդ շնչի յեղևնիների տակ։ (Համբուրում է յերեխային յեվ ուղեկցում մինչեվ խորի դռները)։

ՏԵՍԻԼ X

Արմենուհի, հետո Հմայակ

ԱՐՄԵՆ.—(Միքոճի վայրկյան լուսամուտով նայում է յերեխայի յետևից, ապա դանդաղորեն մոտենում է դաշնամուրին, նստում։ Սկսում է նվագել նախ մի փոքրիկ յեղանակ, ապա մի թախծալի ռոմանս)։

ՀՄԱՅԱԿ.—(Նվագումը սկսելուց բավական անցած գալիս է աջ կողմի առաջին դռնեռով գլխարկը ձեռին յեվ անկյունում։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում։ Ռոմանսի տպավորությունը տխրում է)։

ԱՐՄԵՆ.—(բավական ժամանակ չի նկատել Հմայակին, ետևը պատահաբար դարձնելով, տեսնում է նրան)։ Ա՛հ, դուք այստեղ եք։ (Գլուխը յերկու անգամ շարժում է ի նշան բարեվի, առանց նվագումը ընդհատելու)։

ՀՄԱՅԱԿ.—Յես վերջացրի իմ գործը։ Այժմ ձեր ամուսինը զբաղված է իր կառավարչի հետ։ Շարունակեցեք, տիկին, շարունակեցեք, խնդրեմ։ Անցյալ որը յես պատիվ ունեցա ծանոթանալ և այցելել ձեր նախկին ուսուցչին։ Այդ վաղուն ձերունին առանց հիացման չի կարողանում խոսել ձեր մասին։

ԱՐՄԵՆ.— Իմ ձեղանի առաջին զարդը նրա համակրելի լուսանկարն է։

ՀՄԱՅԱԿ.—Իսկ ձեր լուսանկարը չես տեսա՞ նրա դաշնամուրի վրա։ Նա ասում էր հուզված ձայնով. «Պարոն, նա աստվածային ձիրք ունի, զգացում, ճաշակ։ Նա տաղանդ ունի և մեծ տաղանդ։ Ափսո՛ս, որ այդ տաղանդը թառամում է իր շրջանից դուրս։ Այո՛, տիկին, այլ է ձեր շրջանը. այն արվեստի փշոտ ասպարեզն է, ընտիր հոգիների դրախտավայրը։ Նվաճեցեք, նվաճեցեք. այդ թախծալի հնչյունները մարդու սրտից հառաչանքներ են կորզում։ (Լռում է)։

ԱՐՄԵՆ.—(Մի փոր չեխս յուռ նվագելով, դադարում է չեխ վոսի կանգնում)։ Դուք տխրեցիք։ Բարև։ (Ձեռք է տալիս)։

ՀՄԱՅԱԿ.—(վոսի կանգնելով) Տիկին, չես ունեմ մի ընկեր, որի կյանքը անձայն, անարյուն վորբերություն է։ Ձեր դուք նվագում եիք, իմ առյուծ կենդանի պատկերացավ այդ կյանքը։ Ցնորեցեք, որ նրա ժպրատությունն ունեցել է ունեցել և յերջանիկ նախերգանք և այդ նախերգանքը յերգվել է այն ոտանավոր, որ խնդրեց նվագեցիք։ Կկամենայիք լսել այդ պատմությունը։ Նա յերկար չե, և այս րոպեին զրում եմ անհաղթելի պահանջ ձեզ պատմելու։

ԱՐՄԵՆ.—Նստեցեք, խնդրեմ։ (Նստում է, ցույց տալով իրենից վոր հեռու մի արոռ Հմայակին)։ Ձես ձեզ լսում եմ։

ՀՄԱՅԱԿ.—(նստելով)։ Ցնորեսն և հինգ տարեկան է իմ ընկերը այժմ, ամուսնացած, զավակների հայր, ընտանեկան կյանք կոչված հրեշի սորուկ։

ԱՐՄԵՆ.—Տարօրինակ լեզու։

ՀՄԱՅԱԿ.—Դա մի հոգի չե, ստեղծված սիրելու փափագով և սիրվելու կրակոտ յերազով, բայց սորուկ։ Զար վոգինները նրան ձերբակալել են և շղթայել։ Ուղիղ տասներկու տարի սրանից առաջ նա ազատ եր, ինչպես լեռնային զինյուրը, և կարծում եր այդպես պիտի մնա մինչև մահ։ Բայց նա հանդիպեց դեին, որը ընդունել եր հրեշտակի կերպարանք, և փըշրտակվեց։ Դա մի զվարթ, կայտառ եակ եր, ընդունակ վոչ միայն մտածելու, այլև զգալու։ Յերգում եր, պարում եր, թռչկոտում։ Ցավ նվագում եր։ Լավ եր նվագում թե վատ—ընկերս չգիտեր, բայց զգացվում եր, վորովհետև նրա հոգին ուներ միշտ զգացվելու պահանջ, ինչպես մանուկը ունի լալու պահանջ։ Ուրիորդը հետաքրքրվում եր բոլորով

ինչ վոր գեղեցիկ և, ինչ վոր բանաստեղծական և, ինչ վոր զառում և մարդուն անտանելի, ինչ վոր մարդում, բյուրեղացնում և նրա հոգին։ (Հառաչում է)։ Ընկերս սիրահարվեց։ Սիրո բոցավառ խոստովանությունն յերազ որվա ճիշտ այն միջոցին, յերբ որիորդը նվագում եր ձեր նվագած առանձը։ Դուք ձանձրանում եք։

ԱՐՄԵՆ.—Շարունակեցեք, ձեր պատմելու ձևը նույնքան հետաքրքրական և, վորքան և նյութը։

ՀՄԱՅԱԿ.—Որիորդը չմերժեց, վորովհետև իր առյուծ կանոնած եր մի վոչ ոքով յերիտասարդ, առողջ, կայտառ, վոր խոստանում եր փայլուն ապագա ... Նրանք ամուսնացան։ Ցավ այս յերազ եր փայլուն ապագա ... Նրանք ամուսնացան։ Ցավ այս յերազ իմ թշվառ ընկերոջ դժբախտության սկիզբը։ Հազիվ մի տարի անցած՝ զիր դեն ձգեց իր քողն և յերևան յեկավ իր իսկական պատկերով։ Ընկերս նայեց և սարսափեց։ Նրա աչքերն այլևս վարագուրված չեյին առաջին սիրո վարդագույն մշուշով։ Այդ ուրախ, վառվռուն, գեղեցիկով և գաղափարակռնով զոզվորվող եակը, հենց վոր կին դարձավ, հենց վոր հորից ստացավ ժառանգությունը, հենց վոր ճաշակից վոսկու թուղթ սկսեր ժանգը, ազատից իր հոգին կապանքներից։ Նա դարձավ այն, ինչ վոր եր նապես։

ԱՐՄԵՆ.—Ցավ ամուսինների մեջ սկսվեցին ընդհարումներ...

ՀՄԱՅԱԿ.—Ա՛, ով չի կրել—չի կարող զգալ այն սարսափները, վոր կոչվում են ընտանեկան կյանք, յերբ ամուսինները ոսոխ են ժամանց։ Ոսոխ իրանց մտքերով, ճաշակով, ոսոխ հոգու պահանջներով, սրտի զգացումներով։ Ցավ խորտակվեցին թշվառ ընկերոջս յերազները։ Նա, վոր յերևակայում եր պոեզիայով զարդարել առօրյա կյանքի տափակությունը, դատապարտվեց անտանելի պառղալի։ Այդ կնոջ համար զրքերը փոխարինվեցին հորից ստացած տոկոսաթուղթերով, գաղափարները հաշվի տետրակներով, և նրա ճաշակը, թևթևթռիչքից հետո, գնաց, թառ յեղավ թանգագին գլխարկների վրա։ Նա սկսեց արհամարհել բոլորն, բոլորը, ինչ վոր կապ չուներ անոտի պչրանքի, կուշտ վորակների և հանգիստ քնի հետ։ Բայց ամենից զառը, ամենից վորքային իմ ընկերոջ համար յեղավ այն, վոր նրա կնոջ դաշնամուրը փոշի պատեց ..

ԱՐՄԵՆ.—Դաշնամուրը փոշի պատեց... (Նայում է իսրը Հմայակից)։

ՀՄԱՅԱԿ.— Այո, և այն մարդը, որ պաշտում եր յերաժշտությունը իրրև յերկրորդ աստված ճարտարապետությունից հետո, այլևս բաղդ չունեցավ սքանչելի վայրը լսելու։

ԱՐՄ.—(մեկուսի)։ Ճարտարապետությունից հետո։ (Բարձր)։ Սպասեցնեք, յես, կարծեմ, ճանաչեցի ձեր ընկերոջը։ (Կանգ է առնում վոտի)։

ՀՄԱՅԱԿ.— (Վեր կենալով)։ Լսեցեք, տիկին, յես դեռ չեմ վերջացրել Նավերի յես, Նա ստրուկ է, նրա ձեռներն ու վոտները շղթայված են այն անողոք շղթայով, որ մարդիկ անվանում են արհնական ամուսնություն։ Նրա արտից արյուն է կաթում, յերբ ամեն անգամ նայում է փակ դաշնամուրին։ Նա ասում է. «Լավ, յես համաձայն եմ կրելու այս տաժանակիրը պատիժը, սիայն թե լսեմ այդ հնչյուններըը։ Սակայն դուն արտաքսել է նրանց։ (Հառաչում է, կարճաձիվ լռում)։ Անցնում են տարիներ, անգութ, անկրակ դատավճյան տարիներ, որ տափակ գլուխներն ան վանում են խաղաղ ընտանեկան կյանք և որ զգայուն մարդու համար դիրեկտն է։ (Դարձյալ հառաչում է, լռում, ճակատը տտրում)։ Մի որ հանկարծ, ով գիտե, գուցե հախահանության կամքով, իմ ընկերը մի հեռավոր յերկրում, մի անծանոթ շրջանում հանդիպում է մի ընտիր հակի։ Դա է լինում իսկական հրեշտակը, դա յե լինում նրա յերազների կատարյալ մարմնացումը, վասնզի այդ հակի նյութական կյանքում պահպանած է լինում նրա հոգեկանը։ Յեվ ընկերոջս շղթան, որ մի ժամանակ պողպատից եր, վերածում է փշերի։

ԱՐՄԵՆ.—(ոտքերվել է, հուզված)։ Կանգ առեք. մեռցյալը գիտեմ արդեն։

ՀՄԱՅԱԿ.—Վոչ, տիկին, դեռ չգիտեք հականը։ Լսեցեք ինչ է ասում այսոր թշվառը։ Նա ասում է, որ հոգիները մենակ չեն գալիս այս աշխարհ, այլապես նրանց գոյությունը կլիներ հավիտենական մենակյաց բանտարկություն։ Նա պնդում է, որ յուրաքանչյուր հակ ունի իր ընկերը, զուգակիցը։ Փուլը չեն, թող նրանք բաժանված լինեն իրարից տարածությամբ, ժամանակով, որենքների դաժանությամբ և ավանդությունների բռնությամբ, նրանք անհանգիստ փնտրում են միմյանց։ Յեվ յերբ մի որ հանդիպում են իրար ու այլևս վոչ վոք և վոչինչ չի կարող նրանց բաժանել... Նույնիսկ սուրբ համարված պատատկանությունները...

ԱՐՄԵՆ.—(հուզմունքից գունատել է)։ Այդպես է արդյոք։

ՀՄԱՅԱԿ.—(ավյուռով, հափշտակված)։ Այդպես է, տիկին, այդպես պետք է լինի։ Այս համոզմունքը հյուսված է իմ ընկերոջ... այժմյան տառապանքներից...

ԱՐՄԵՆ.—Իսկ յերբ հոգիներից մեկը չունենա ուժ վտանատակ անելու որենքներն ու պարտականությունները, այն ժամանակ։

ՀՄԱՅԱԿ.—Այն ժամանակ մյուսը... մյուսը պետք է կործանվի... Բայց ինչ պատահեց ձեզ։

ԱՐՄԵՆ.—(գունատվել է. նկատելով վիրգինեյին դռների մեջ, հենվել է պատուհաններից մեկի կռնակին)։ Վոչինչ, գլուխս պտտեց։

ՏԵՍԻԼ XI

Նույնը յեվ Վիրգինե

ՎԻՐԳ.—(հանդարտ բայց է արել ձախ կողմի յերկրորդ դռները յեվ ներս մտել մի չարախինդ ժպիտ յերեսին)։ Ա՛հ, ներեցեք, յես կարծում եյի վոչ վոք չկա այստեղ։ Յես կներեմ։ (Ջեվահում է բե յես է գնում)։

ԱՐՄԵՆ.—(արագությամբ ժողովել է ուշը յեվ ցայտում է Վիրգինեյին)։

ՀՄԱՅԱԿ.—(ցնցվել է, բայց յեվ իսկույն իրեխել իրան)։ Ծառուհյուն տիկին։ (Ձեռ է տալիս Արմենուհուն Վիրգինեյին)։ Հարգանք նրան։ (Վիրգինեյին գլուխ տալով, գնում է խոսքի դռներով)։

ՏԵՍԻԼ XII

Արմենուհի յեվ Վիրգինե

ՎԻՐԳ.—(Նայել է Հիմալայի յերեվից չարախինդ յեվ նույն ժպիտը յերեսին մոտենում է դաշնամուրին ու ձեռը խոսում նրա կափարիչին. Բարձրաձայն ծիծաղում է)։ Հա, հա, հա...

ԱՐՄԵՆ.—(վրդովվելով)։ Ինչու՞ համար ես ծիծաղում։

ՎԻՐԳ.—Վոչինչ, կարծում եյի դաշնամուրդ փոշի չե պատել։

ԱՐՄԵՆ.—(հանդերձությունը կորցնելով)։ Լռե՜ս, լռե՜ս։

ՎԻՐԳ.—Լավ, մի կատաղիր, ներքը, յես գնում եմ։ (Բարձր ծիծաղելով, գնում է ձախ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ XIII

Արմենուհի յեվ կոստանդին

ԿՈՍՏ.— (գալիս է խորքի դռներով)։ Դու մենակ ես։

ԱՐՄԵՆ.—Վա՛յ, հայրի՛կ, ես միշտ շրջապատված եմ խնամակալեբով։ Հայրի՛կ, ինչո՞ւ համար ես Սամսոնին վիրավորել։

ԿՈՍՏ.—Նրա համար, Արմենուհի՛, որ քո ամուսինը լիրբ լիրբ...

ԱՐՄԵՆ.—(վշտացած, դառը հանդիմանությամբ)։ Հայրի՛կ։ (Նայում է հորը սուր հայացքով, վախեցած)։

(Թեթև լռություն)

ԿՈՍՏ.—Այ՛, վորդի՛, քո կասկածները ճիշտ են։

ԱՐՄԵՆ.—Ա՛հ։ (ընկճված ընկճում է բազկաթոռի վրա)։ Վա՛յ ալդ, վոյ ալդ։ (Լռություն)։

ԿՈՍՏ.—Մարդիկ մեր ժամանակում ալդ համարում են սովորական բան, սիրելի՛ ե՛ս, մենք էլ համաձենք, ինչո՞վ ենք պակասուրիշներից։

ԱՐՄԵՆ.—(առանց հորը նայելու)։ Ո՞ւմ հետ, ումի՞ց նա։

ԿՈՍՏ.—Սատանան գիտե, քի՛չ կան։

ԱՐՄԵՆ.—Ցնա՛ ճանաչո՞ւմ եմ նրան։

ԿՈՍՏ.—Ասում մի՛ արասցե, վոր դու ծանոթ լինես այդպիսիների հետ. վարշավայից և քո՛ Պետերբուրգից—չգիտեմ, չինովնի՞կ է նրիկ է։

ԱՐՄԵՆ.—(մաճառել է իր դեմ, վոտի՛ն է կանգնում)։ Այդ անկարո՛ղ է, այդ աննե՛ղաբին է։ Մեկի՛չ առաջ նա գրկեց իր սերը քացատրեց ինձ։ Սամսո՛նը, այն ժուժկալ մա՛րդը։ Վա՛յ, հայրի՛կ, նա նախանձողներ շատ ունի, սուտ լուրեր են տարածում նրա մասին։ Հայրի՛կ, չլինի՞ թե գրպարտում եք նրան։

ԿՈՍՏ.—Հարյուր անգամ ուրախ կլինեի՛ գրպարտչի անունն կրել, քան այս լուրը քեզ հաղորդել։ Ցնա՛ ել սիրում չեմ։ Հաճախ ուշացավ. ձա՛մ չեն բամբասում։ Բայց չեղավ։ Փաստեր շատ ունեմ. հարցրո՛ւ Սաենփանից. նա կհամոզի քեզ։

ԱՐՄԵՆ.—Ա՛հա թե ինչ են նշանակում նրա խոսքերը. «Քո հայրը դյուրահավան է, համոզիր նրան, վոր փողոցային լուրերի վրա ուշադրություն չդարձնի»։ Այժմ հասկանալի է։ Հայրի՛կ դու տեսնե՛լ ես նրան։

ԿՈՍՏ.—Մի՛ անգամ ցույց են տվել պրոխատական կլուբում։

ԱՐՄԵՆ.—Ցերիտասարդ է։

ԿՈՍՏ.—Մբիթե կարելի՛ է այժմյան կնոջ հետաքը վորոշել։

ԱՐՄԵՆ.—Դեպքերի՛կ է։

ԿՈՍՏ.—Մբիթե կարելի՛ է այժմյան կնոջ զեղեցկությունը վորոշել։

ԱՐՄԵՆ.—(բոլորովին տիրոջ է իրաց)։ Շնորհակա՛լ եմ, հայրի՛կ։ Ամեն լավ ու դառը ճշմարտությունն իմանալ, քան կեղծ դրության մեջ մնալ։ Շատ լավ, այժմ ես գիտեմ ինչպես պետք է վարվեմ նրա հետ։

ԿՈՍՏ.—Զմոռանաս, Արմենուհի՛, վոր բացի քեզնից վո՛չ վոք չունեմ այս աշխարհում։

ԱՐՄԵՆ.—Վա՛յ, հայրի՛կ, ես վո՛չ թուլ եմ, վա՛չ հիմար։ Հեռացիր այստեղից։ Նա իսկույն գալու է։ Ցես չեմ ուզում քո ներկայությամբ հանդիպել նրան։ Ո՛ր, այժմ նա ինձ կճանաչի։ Ցես իր չերևակայած կանանցից չեմ։

ԿՈՍՏ.—(մի վայրկյան խորհում է, ապա վճռակամ մի շարժումն անելով հանգիստ հայերով գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ XIV

Արմենուհի մենակ

ԱՐՄԵՆ.—(մնալով մենակ, մինչեն վայրկյան մտածմանն մեջ է։ Հետո նստում է սեղանի մոտ և յոգ լինի։ Լացը փոխվում է հեկեկանքի։ Այդ տեվում է բավական ժամանակ։ Վոտի՛ն է կանգնում, այստեղ արագ-արագ սրբում է, ուզբ ժողովում այն պանին, չերբ Սամսոնը ներս է մտնում)։

ՏԵՍԻԼ XV

Արմենուհի և Սամսոն

ՍԱՄՍ.—(Դալիս է աջ կողմի չերկրորդ դռնեռով)։ Վերջապե՛ս, ազատվեի՛ գործերից։ Այժմ կարող եմ քեզ համբուրել։ (Մոտենում է Արմենուհուն)։

ԱՐՄԵՆ.—(Բարձր ձայնով)։ Մի՛ համարձակվիր մոտենալ ինձ։ (Գալերեն ուղղում է դեպի աջ կողմի չերկրորդ դռները)։

ՍԱՄՍ.—(Ապշում է)։ Այդ ի՞նչ է նշանակում։

ԱՐՄ.—(Դռների մոտից)։ Մի քանի րոպե սրանից առաջ այստեղ մեկն իր կյանքը կտար ինձ, լսե՛ս ես պահանջելի՛ր։ Դուք չարժեք նրա զարշապարին անգամ։ Բայց ես փափագում եմ ձեզ միայն սիրել, ձեզ միայն բարձր տեսնել։ Այժմ կանգ առեք, իմ սենյակի դռները փակ են ձեզ համար։ (Գնում է աջ կողմի չերկրորդ դռնեռով)։

ՎԻՐԳ.—*(Նեռս ե մտել ձախ կողմի առաջին դռնեռով ու կանգնել ե դռների առջեվ Աբեղաների խոսքերի միջոցին)*:

ՍԱՄՍ.—*(Մի հայլ անելով Աբեղաների յեռեվից, կանգ ե առնում)*: *Բայց բացատրիր...*

ՎԵՐԳ.—*Ձեռ կբացատրեմ*:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐՁԲՎԱԾ ՅԵՐՈՒԴ

Ցերեկոյ արարվածի տեսարանն անփոփոխ, միայն չկա ծաղիկների փունջը: Իրիկնադեմ ե: Աբեղակի ճառագայթները վռնկոծել են բեմի հեռին մասը:

ՏԵՍԻԼ I.

Մելանիա Գարեգին

ՄԵԼ.—*(Գարեգնի ոգնությամբ դաշնամուրին օպսիկ ե հագցնում)*: *Մի քիչ ել քո կողմը քաշիր: Այդպես, բավական ե:*

ԴԱՐ.—*Ջհանկացա ինչու համար եք այդպես վազ ծածկում գալ-նամուրը: Դեռ քաղաք գնալուն մի ամիս ե մնում:*

ՄԵԼ.—*Մեր գործը չե, պատավը հրամայել ե ծածկել, ծածկում ենք:*

ԴԱՐ.—*(Սկսում ե ճանդարս լերգել, Մելանիային ոգնելով նանդրեձ)*: *«Ցեռ վորս եյի, դու վորսորդ, նեռդ դիպավ ջիգարխա»... ախ, գալիս ես:*

ՄԵԼ.—*(Նայելով լուսամուտից դեպի դուրս)*: *Ձարտարապետն ե իր կնոջ հետ:*

ԴԱՐ.—*Ա՛հ, յես տառում եմ այդ կնոջը... ծլատ ե... անցյալներըդ կես գիշերին վազիցի, կարք դնա, ճանապարհ դրեցի, մի քան չբաշխեց: Բայց մարդը շատ լավ մարդ ե: Ե՛հ, վերջացավ: (Գնում ե ձախ կողմի առաջին դռնեռով)*: *«Ցեռ վորս եյի, դու վորսորդ»...*

ՏԵՍԻԼ II.

Համլակ, Սիրանուշ յեվ Մելանիա

ՍԻՐԱՆ.—*(Գալիս ե խորքի դռնեռով Համլակից առաջ: Հագած առաջվա հանեմատ հանեսս հագուստ: Հուզված ե)*: *Բարև, Մելանիա, տանն ով կա:*

ՄԵԼ.—*Մեծ տիկինը:*

ՀԱՄԱՅԱԿ.—*(Գալիս ե խորքի դռնեռով Սիրանուշից հետո: Հագած ե առիթ հագուստ - ժակետ, շատ բաց մանուշակագույն ժիլե: Ձեռքում բռնած ե մի թղթե կապոց)*, *Իսկ պարմեդ:*

ՄԵԼ.—*Անատա դնաց, յերեկ շուտով կգա:*

ՀՄԱՅԱԿ.—(Նստում է բազկաթոռի վրա, գլխարկն ու քուղրը դնելով մի կողմը)։ Ձեռ կոպասիմ նրան։

ՍԻՐԱՆ.—Ասացիք մեծ սրիկաները, վոր չես այստեղ եմ։

ՄԵԼ.—Լավ։ (Գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՏԵՍԻԼ III.

Սիրանույշ յեվ Հմայակ

ՍԻՐԱՆ.—(Հեգնաբար, ուրմտությամբ)։ Կարծեմ դու կարող եյիր պարոն Սամսոնին սպասել իր սենյակում։

ՀՄԱՅԱԿ.—(ծիախոս է վառում)։ Ինչու՞ վոչ այստեղ։

ՍԻՐ.—(Նույն յեղանակով)։ Վորովհետև գործով ես յեկել։ (Գործով բառը շեշտում է առանձին հեգնությամբ)։

ՀՄԱՅԱԿ.—(Խոր հանգիստությամբ)։ Սիրանո՛ւյշ։

ՍԻՐԱՆ.—(Ավելի գրգռված)։ Ասում եմ, ասում եմ, ով կարող եր չերևակայել։

ՀՄԱՅԱԿ.—(Վրդովվելով)։ Ձեքն սկսում ես, չես կհեռանամ։ (Վեր է կենում)։

ՍԻՐԱՆ.—Ավելի լավ կանես, վոր իսկի վոտ չդնես ալս տունը։

ՀՄԱՅԱԿ.—Ջափը մի անցնիր, խնդրում եմ։ Մենք ոտաբ ուան մեջ ենք։

ՍԻՐԱՆ.—Հիմա քեզ համար ոտար չե՞ս այս տունը։ Տեր աստված, չես էլ ասում եմ, ինչու՞ համար է ամեն որ վազում այստեղ։ Դուրս է գալիս, վոր այդ սրիկածախնդիր կինը դրան խելքից հանել է։

ՀՄԱՅԱԿ.—Գիտես, դու կարող ես ինձ վիրավորել վորքան կամենաս, բայց նրան հանգիստ թող։

ՍԻՐԱՆ.—Աա՛, դու դեռ համարձակվում ես պաշտպանել նրան։ Ջես ամաչում։

ՀՄԱՅԱԿ.—Մինչև այսոր չես դեռ իմ զգացումների և մտքերի հաժար չեմ ամաչել, հուլս ունեմ այսուհետև էլ չամաչել։

ՍԻՐԱՆ.—(Ծաղրով)։ Ինարկե, ձեզ նմանների զգացումներն ու մտքերն անարատ են։ Բավական է. ճանաչում եմ լրնալ փընտրողներիդ։ Դուք միշտ սկսում եք լիրկնքում և վերջացնում չիրկնում։ Մի քանի վարկյան ճանճի պես թռչում եք ողում, հետո նստում... ապրի վրա։ (Վեր է կենում յեվ սկսում է անցուդարձ անել)։

ՀՄԱՅԱԿ.—(Կանգ է առել յեվ նայել Սիրանույշին, ձեցվում է նրա վերջին խոսքերից)։ Ա՜հ, ինչ լիզու, ինչ համեմատություն, Ձես անկարող եմ վիճել այդ յեղանակով։

ՍԻՐԱՆ.—(Շարունակում է, ուշադրությունը չդարձնելով Հմայակի խոսքերի վրա)։ Ձեվ ինչպես է հափշտակված, ինչպես, աստված իմ, Գիշերներն էլ յերազում նրա հետ է խոսում։ Ձերբեք յերբեք ինձանով այդպես հափշտակված չի յեղել։

ՀՄԱՅԱԿ.—Զրպարտում ես քեզ, Սիրանույշ, զրպարտում ես։ Կար ժամանակ, վոր քեզ, միմայն քեզ եյի յերազում։ Ձես վորոնում եյի քո սերը, ինչպես մի ծարավ ճամբորդ ջուր է վորոնում ամայի անապատում։ Քանի-քանի անգամ աշխատանքից հոգնած, տուն վերադառնալիս ինքնակալել եմ հանդիպել մի ուրախ թռչուն, վոր անհոդ բազմեր ուսերիս վրա, շոյեր իր թևերով իմ հոգնած ճակատը և ստացնել տար կյանքի սպանիչ ձանձրույթը։

ՍԻՐԱՆ.—(Հեգնաբար)։ Մրթի՛ս։

ՀՄԱՅԱԿ.—Ձեվ ինչ եմ տեսել փոխարենը։ Ոչնչերը կիտած, չըբերանքները սեղմած մի դինք, խորասուզված իր մանր-մունր հաշիվների մեջ։ Ինձ տեսնելով, առանց տեղիդ շարժվելու, հայտնել ես քո ուրախությունը, վոր այսինչ աջթիաներում վաստակել ես այսքան, այնինչ տակոսաբեր թղթի արժեքը բարձրացել է։ Դու յեղել ես քո հոր կատարելատիպը, հըրճվել ես քո վաստակով, ուրիշների կորստով։ Դու յեղել ես ամեն ինչ, բացի այն, ինչ վոր իմ հոգին և վախտակը։ Փորդ ու զարդը ավելի յես հետաքրքրել քեզ, քան իմ ներքին աշխարհը։ Մի շքեղ պլաստիկով ավելի յես գրավվել, քան իմ զգացումների ամբողջ թափով։ Ձեվ դու համարվել ես խելոք կին, որինակելի ամուսին և ամենքը նախանձել են ինձ։ Մինչդեռ յես չեմ իմացել գլուխս ուր թաղցնեմ գայթքոցից, ձանձրույթից և... ամոթից։ (Ավցնում է բեմի խորքը)։

ՍԻՐԱՆ.—Լավ՛ը, լա՛վը, դու ցնորվել ես, դու ինքդ չգիտես ինչ ես ասում, բայց սպասիր, յես քեզ հետ տանը կնստեմ հաշիվ։ Ապտեղ ամոթ և, դու խայտառակում ես ինձ և քեզ...

ՏԵՍԻԼ IV.

Նույնը յեվ Ցեղիսաբեթ

ՑԵՂ.—(Գալիս է ձախ կողմի առաջին դռնեռով, հագնված է դար-

ձյալ նույն տեսակ)։ Ծառաներուն համար ամսական թեյ ու շաքար նյի կտուամ, ինչ անեմ, ամբողջ առևտուրն ինձ վրա յե։ (Սիրանույշին բարեվում է սիրալիր, Հմայակին տեսնելով, աչուցիր բրվեցնում եւ Հագիվ գլխի բերել շարժումով պատասխանում է նրա բարեվին)։ Վորդիս գնաց իր սենյակը։

ՀՄԱՅԱԿ.—Շնորհակալ եմ, (Վերցնելով գլխարկն ու բերբերը, գնում է աջ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ V.

Ցեղիսաբեր յեվ Սիրանույշ

ՑԵՂ.—(Նայել է Հմայակի յեռեվից չար հայացքով)։ Հենց առաջին որից աչքիս դուր չեկավ այդ մարդը, ինչ մեղքս թաղցնեմ։

ՍԻՐԱՆ.—Ա՛հ, չգիտեմ ինչ պիտի լինի վերջը, բայց նա սրնցոր խելքը կորցնում է։

ՑԵՂ.—Ցնա իմ տան հոգսն արդին տեսնել եմ։ (Ցույց տալով դռնճամուրը)։ Այնտեղ մարդ սրնք։

ՍԻՐ.—(Նայում է դռնճամուրին)։ Աա, հասկանում եմ։

ՑԵՂ.—(Խնճոգոհ)։ Այո, չար ոչը հենց նրա մեջ է նստած. յես հրաժարվի կապել նրա բերանը։ Ոո, վիրավինեն աչքաբաց կին է. հենց առաջին որը նա նախադասց է ասաց. «Մարդիկ, լավ հետևիր նրանց»։ Լավ է, վոր ժամանակին իմացանք։ Բան ունիք ասելու ինձ։

ՍԻՐԱՆ.—Հենց դրա համար եմ յեկել. պետք է փորձանքի առաջն առնել։

ՑԵՂ.—Հեռացրեք ձեր մարդուն այստեղից, պրծավ-գնաց։

ՍԻՐԱՆ.—Բայց նա չի ուզում հեռանալ։ Նա ասում է. «Ցնա փախչելու պատճառ չունիմ»։

ՑԵՂ.—Ունի թե չունի, բայց նրա վոտքը այստեղանից պիտի կոտրվի իմ տնից։

ՍԻՐԱՆ.—Իրսերում կհանդիպեն միմյանց։

ՑԵՂ.—Աչխատեցեք, վոր չհանդիպեն։

ՍԻՐԱՆ. Դուք պիտի աշխատեք, մայրիկ, վորովհետև ձերը կին է, իսկ տղամարդ։

ՑԵՂ.—Ձեր ամուսինն է ձեր ձեռքից գնում և վոչ իմը։

ՍԻՐԱՆ.—Իմ ամուսինն ճանապարհից շիղոզը ձեր հարսն է։

ՑԵՂ. Մինչև ձեր մարդու գալը իմ հարսը հանդիսա եր իր համար։

ՍԻՐԱՆ.—Իմ մարդն ել հանդիսա եր մինչև ձեր հարսին տեսնելը։

ՑԵՂ.—Մի տղամարդ, վոր իրան կարող և պահել, վոչ մի կին չի կարող նրան խելքից հանել։

ՍԻՐԱՆ.—Մի կնիկ, վոր իր պատիվը ճանաչէ, վոչ մի տղամարդ չի կարող նրան մոլորեցնել։

ՑԵՂ.—(Անհամբեր)։ Ուրեմն ինչ եք ուզում ինձանից։ Ցես ինչ վոր կարող եմ, անում եմ։

ՍԻՐԱՆ —Լռենք, յես լսեցի նրա հոր ձայնը։

ՑԵՂ.—(Նայելով լուսամուտով դուրս)։ Այո, նա յե, գալիս և փեսային հետ։ Միշտ միասին են, խոսում են, քչփչում, չգիտեմ ինչ։ Ցնա տիրն ինչ կա։ Գնանք իմ սենյակը։ Գաղտիվը տիմ նրանց մեջ

ՍԱՄՍ.—(Բավական սառը)։ Զղիտամ, կարող եմ արդյոք վաղը կամ մյուս օրն էլ պարապել։

ՀՄԱՅԱԿ.—(Նայում է Սամսոնին զարմացած։ Զգալով նրա տրամադրությունը, շրթունքները սեղմում է իր վրդովմունքը զսպելու համար)։ Լավ, ինչպես կամենաք։ Մնացիք բարև (Առանց ձեռ տալու, գլուխ է տալիս յեվ գնում խորհի դռներով)։

ՏԵՍԻԼ VIII.

Նույնք, առանց Հմայակի

ՍԱՄՍ.—(Մի ճռաճնակալից հայացք է ձգում Կոստանդինի վրա)։ Սանփան, յես քեզ հետ առանձին խոսելիք ունիմ։

ԿՈՍՏ.—(Հեռվից դիտել է տեսարանը, հանդարտ ճեռանում է ձախ կողմի առաջին դռներով)։

ՏԵՍԻԼ IX.

Սամսոն յեվ Սեփան

ՍԱՄՍ.—Ա՜հ, փառք աստծո, ազատվեցի։ (Նստում է հառաչելով)։ Գլուխս տրաքում է։

ՍՏԵՓ.—(Հեռվից դիտել է ճախրնքաց տեսարանը)։ Այդ ինչ արիր. մի՞թե կարելի է այդպես վարվել Հմայակի հետ. Դու գրեթե վռնդեցիր նրան քո տնից։

ՍԱՄՍ.—Ո՞վ է այդ քո Հմայակը։

ՍՏԵՓ.—Ով էլ լինի, համենայն դեպս այն մարդկանցից չէ, որոնց սովոր ես քո ազգական բարձրությունից նայել։

ՍԱՄՍ.—Չլինի թե ուզո՞մ ես, որ յես քեզ դեռ շնորհակալություն էլ հայտնեմ նրան իմ տունը մտցնելու համար։ (Վեր է կենում)։

ՍՏԵՓ.—Ցնա քու տունը մտցրել եմ մի մարդ, որը հարյուր անգամ ավելի ազնիվ ու մաքուր է, քան թե դու և յես միասին վերցրած։

ՍԱՄՍ.—Համոզմունքով ես ասում այդ։

ՍՏԵՓ.—(Հանդիմանորեն)։ Սամսո՛ն, միլիոնների գործեր ես վարում, հարյուրավոր մարդկանց հետ հարաբերություն ունիս առանց մեկի հետ խորհրդակցելու, իսկ քո ընտանեկան կյանքում խաղալիք ես յերկու կանանց ձեռքում։ Ամո՛թ ես, ամո՛թ ես։ (Աջց ու դառն է ածում)։

ՍԱՄՍ.—Մեկն այդ կանանցից իմ մայրն է, մյուսն իմ քույրը։ Ցնրկուսն էլ իմ պատվին նախանձախնդիր են։

ՍՏԵՓ.—Մեկը նրանցից հին նախապաշարումներով մի պառավ է, մյուսը կասկածամիտ, ժանրակրկիտ և նախանձոտ։ Այո՛, որ յես խոշոր ընդհարում ունեցա Վիրջինեի հետ։ Ցնա հերքում, Արմենուհին և Հմայակը համակրում են միմյանց, քայց ահա բոլորը, ինչ վոր կա՝ խելքի չեկ, Սամսո՛ն, քո կինն այն կանանցից չէ, վորոնք մեկի հացն ուտում են, մյուսին շոյում։ Խոսք չունիմ, Արմենուհին մի որ կարող և սիրել մի ուրիշին, բայց այդ դեպքում նա ճշմարտությունը չի թագցնիլ քեզանից։

ՍԱՄՍ.—(Խորհել է)։ Այո՛, ունիս իրավունք։ Արմենուհին կեղծել և խաբել չգիտե։ Բայց ինչ անեմ. այստեղ (զարկելով սրտին) և խաբել չգիտե։ Բայց ինչ անեմ. այստեղ (զարկելով սրտին) այժմ մի հնոց է վառվել։ Ամո՛թ է ասել, Սանփան, յես տանջվում եմ։ (Նորից նստում է յեվ ճակատը սեղմում է ձեռով)։

ՍՏԵՓ.—(Կանգ է առնում՝ ճեգնական ծիծաղով)։ Մի՞թե, այդպես շուտ. զարմանալի յե, հա՛, հա՛, հա՛։

ՍԱՄՍ.—Դու ծիծաղում ես. դու սիրա չունիս։

ՍՏԵՓ.—Այո՛։ Այդ վո՛ր ժամանակից է, վոր սկսել ես սիրտը գնահատել մարդկանց մեջ, ով դու ուղեղի գերի և հաշիվների ստրուկ։ Բավական է, յես չեմ ծիծաղում, այլ ներքուստ արտասվում եմ քո մասին։ Թո՛ղ, տեղը լեկել է, կասեմ ճշմարտությունը։ Դու յերբեք արժանի չես յեղել Արմենուհուն, իսկ այժմ—նամանավանդ։

ՍԱՄՍ.—(Թուլլ)։ Ինչո՞ւ։

ՍՏԵՓ.—Վորովհետև դու և նա յերկու հակառակ խառնվածքներ եք։ Վորովհետև նա, իբրև յերազող հոգի, կյանքից կյանք է պահանջում։ Իսկ դու ամեն ինչ դարձրել ես չոր ու ցամաք պառավ։ Փո՛ղ, փո՛ղ, փո՛ղ, ահա քո ալիքն և ոսկեգան խեղճ մարդ, դու կապնած եիր մի սքանչելի արծանի սատանի մոտ և, վորովհետև շատ եիր մոտ, չեիր տեսնում նրա անհման գեղեցկությունը։ Յեվ այժմ, յերբ նա քեզանից հեռացել է, ով գիտե, գուցե առ միշտ, այժմ հիասթափում ես նրանով, կարոտում և տանջվում։ Իսկ նա քեզ ատում է։ Յեվ ունի իրավունք. դու վոչ միայն չգնահատեցիր նրան, այլ և (ձայնը ցածրացնելով) ցնա շպրտեցիր նրա վրա։ Դալլում է)։

ՍԱՄՍ.— Ցնա միշտ նրան սիրել եմ իմ սրտի խորքում։

ՍՏԵՓ.- Լավ ապացուցի՛ր քո սերը, մի իսկական ապամանգ փոխարինելով վաճառքի դուրս բերված կեղծ քարով։

ՍԱՄՍ —Մոլորվում են ամենքը, մոլորվեցի և ես։

ՍՏԵՓ.—Կրի՛ր, ուրեմն, քո արժանի պատիժը։ Ո՛ւմ դեմ ես բողոքում։ Դու կարծում եիր Արմենուհին մենն է այն վարդմելիներից, որոնք մի փոքր հացի համար առնում են իրանց մարդկանց բոլոր վիրավորանքները, բոլոր սարսափները։ Դու մեծ հույս ունեիր քո հարստության և նրա լիրախտագիտության վրա։ Բայց չհաշվեցիր։ Ա՛հ, որքան ուրախ եմ, որ, վերջապես, գտնվեց մեկը, որ ընդունակ է կռվելու հետ, դու դեռ կտեսնես նա ինչպես կպատժի քեզ։

ՍԱՄՍ.—(Վոտի յե կանգնում արագությամբ)։ Բավական է, լռի՛ր առանց քո հանդիմանության էլ դրում եմ ամեն ինչ։ Ատված իմ, որքան անտարբեր է նա դեպի ինձ և որքան փոխվել է։ Ցնա նրան չեմ ճանաչում։

ՍՏԵՓ.—Նա մեղայն քո աչքումն է փոխվել. նա մեղեսուն Արմենուհին է։

ՍԱՄՍ.—Լո՛ւր, ցերկու ժամ սրանից առաջ լուսամուտից նրան տեսնելով պարտիզում մենակ, ուրախ, չկարողացա համբերել ինքնասիրությունս զսպելով, դուրս եկա։ Ուզում եի մի անգամ էլ փորձել հետը խոսելու։ Բայց, ի՛նձ տեսնելով, նա հանդարտ քայլերով դուրս եկավ պարտիզից, իջավ ձորը։ Ցնա ես իմ, առաջին անգամ նա անցավ դեսուդեղ։ Ցնա ես անցա։ Ցնվ սկսից բարձրանալ քարքարոտ ուղիով թփերը ճեղքելով, դեպի ժայռը. ցես մի փոքր հետևեցի նրան և կանգ առա։

ՍՏԵՓ.—Իհարկե, չկարողացար ավելի հետևել նրան։

ՍԱՄՍ.—Ա՛հ, նա զարմանալի վոտիկներ ունի, մինչև այսոր ուշադրություն չեի դարձրել։ Սուր քարերի վրայով քայլում եր, ինչպես վայրենի այծ։ Բարձրանում եր, շարունակ բարձրանում։ Ցերբ հասավ ժայռը, նստավ և իր հպարտ հայացքը ձգեց դեպի հեռավոր լեռները։

ՍՏԵՓ.—Ցնվ այդ պահին նա նման եր մի հպարտ արծվի, իսկ դու մի ապիկար վորսորդի։

ՍԱՄՍ.—Ցես միացի ներքևում ինձ սիրեց մի ամոթալի ցեր-

կյուղ, վոտները չենազանդվեցին ինձ, ցերբ կամեցա բարձրանալ։

ՍՏԵՓ.—Ցնվ բավականացար ժայռի սարսափից դիտելով նրան անմերձենալի բարձունքի վրա։ Ահա քո և նրա մեջ ցեղած տարբերությունը. դու ցերբեք, ցերբեք չես կարողացել բարձրանալ մինչև նա։

ՍԱՄՍ.—(Հանկարծ լուսամուտից նկատել է Արմենուհուն)։ Ահա, նա գալիս է։ Մնացի՛ր այստեղ, Ստեփան, ցեթե ինձ մեղսակ սեանի, ներս չի մահիլ։ Ոգնի՛ր ինձ նրա հետ հաշվեկուռ

ՏԵՍԻԼ X.

Նույնի, Արմենուհի, հետո Կոստանդին

ԱՐՄԵՆ.—(Գալիս է խորհի դռներով։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում։ Ջեռնափայտը բողնում է պատերազմի վրա։ Ներս է մտնում հոգնած. ուսերի շալը ձգում է գամբի վրա։ Նստում է աթոռի վրա)։ Ա՛հ հոգնեցի։ (Նստում է։ Սամսոնին չի նկատել)։

ՍՏԵՓ.—Առաջին անգամն եմ լսում ձեզանից հոգնեցի բառը։

ԱՐՄԵՆ.—(Փղսալով)։ Ցերեի պառավել եմ։ (Սամսոնին տեսնելով, արագ վոտի յե կանգնում յեվ դիմում է դեպի աջ կողմի յերկրորդ դռները։ Նկատում է դաշնամուրը ծածկված յեվ քեթեի նչում)։ Ա՛հ։ (Կանգ է առնում)։

ՍՏԵՓ.—(Վախեցած մոտենալով)։ Ի՞նչ պատահեց։

ԱՐՄԵՆ.—Տեսնք, ի՛նչ են արել, բժիշկ։

ՀՈՍՏ.—(Ցերեվում է ձախ կողմի առաջին դռների միջեվ)։

ԱՐՄԵՆ.—Հայրիկ, նայիր նրան, ուզում են ինձանից խլել իմ մելոմանությունը։ Ո՞ւմ և այդ դաշնամուրը։

ՀՈՍՏ.—Ֆոնը։ Հանգուցյալ մորդ նվերն է։

ՍԱՄՍ.—(Կանգնած է դեպի ձախ յեվ ակնածությամբ դիտում է տեսարանը)։ Ճիշտ է։

ԱՐՄԵՆ.—(Ուշադրություն չդարձնելով Սամսոնի կոդմը)։ Ուրեմն ինչ իրավունքով են ինձ զրկում նրանից։ Հայրիկ, դու գիտես՝ վոր չես առանց նվագելու մի որ անգամ չեմ կարող ապրել, իսկ նրանք ծածկել են դաշնամուրը, վորպեսզի ես չնվագեմ։ Բայց այդ չես թույլ չեմ տալ։ Վա՛յ։ (Արագ խալիով մոտենում է ձախ կողմի առաջին դռներին)։ Մելանիա։ (Ավելի բարձր)։ Մելանիա։

Շիրվանզադե. 6—27.

ՍԱՄՍ.— Ցես միշտ նրան սիրել եմ իմ սրտի խորքում։

ՍՏԵՓ.- Լավ ապացույցիր քո սերը, մի իսկական ապաժանդ փոխարինելով վաճառքի դուրս բերված կեղծ քարով։

ՍԱՄՍ —Մոլորվում են ամենքը, մոլորվիցի և ես։

ՍՏԵՓ.—Կրի՛ր, ուրեմն, քո արժանի պատիժը։ Ո՛չմի դեմ ես բողոքում։ Դու կարծում եիր Արմենուհին մնկն և այն վոդորմիլիներից, վորոնք մի փոքր հացի համար սանում են իրանց մարդկանց բոլոր վիրավորանքները, բոլոր սարսուռթյուններըը։ Դու մեծ հույս ունեիր քո հարստության և նրա յերախտագիտության վրա։ Բայց չեղավ, սխալվեիր։ Ա՛հ, վորքան ուրախ եմ, վոր, վերջապես, գտնվեց մեկը վոր ընդունակ և կռվելու։ Կնց, դու դեռ կտեսնես նա ինչպես կպատժի քեզ։

ՍԱՄՍ.—(Վոտքի յե կանգնում արագությամբ)։ Բավական է, լռի՛ր։ առանց քո հանդիմանության էլ զղում եմ ամեն ինչ։ Ատված իմ, վորքան անտարբեր և նա դեպի ինձ և վորքան փոխվել է։ Ցես նրան չեմ ճանաչում։

ՍՏԵՓ.—Նա մեայն քո աչքում է փոխվել. նա մրենուշն Արմենուհին է։

ՍԱՄՍ.—Լո՛ւր, յերկու ժամ սրանից առաջ լուսամուտից նրան տեսնելով պարտիզում մենակ, տխուր, չկարողացա համբերել ինքնասիրությունս զսպելով, դուրս յեկա։ Ուզում եիր մի անգամ էլ փորձել հետը խոսելու։ Բայց, ի՛նձ տեսնելով, նա հանդարտ քայլերով դուրս յեկավ պարտիզից, իմսով ձորը։ Ցես ես իջա, առաջին անգամ։ Նա անցավ գետակով։ Ցես ես անցա։ Ցեվ սկսից բարձրանալ քարքարոտ ուղիով թփերը ճեղքելով. դեպի ժայռը. յես մի փոքր հետևեցի նրան և կանգ առա։

ՍՏԵՓ.—Իհարկե, չկարողացար ավելի հետևել նրան։

ՍԱՄՍ.—Ա՛հ, նա զարմանալի վոտիկներ ունի, մինչև այսոր ուշադրություն չեյի դարձրել։ Սուր քարերի վրայով քայլում եր, ինչպես վայրենի այծ։ Բարձրանում եր, շարունակ բարձրանում։ Ցերը հասավ ծայրը, նստավ և իր հպարտ հայացքը ձգեց դեպի հեռավոր լեռները։

ՍՏԵՓ.—Ցեվ այդ պահին նա նման եր մի հպարտ արծվի, իսկ դու մի ապիկար վորսորդի։

ՍԱՄՍ.—Ցես ճնշեցի ներքևում։ Ինձ սիրեց մի ամոթալի յերկկյուղ, վոտներս չկնազանդվեցին ինձ, յերբ կամեցա բարձրանալ։

ՍՏԵՓ.—Ցեվ բավականացար ժայռի ստորոտից դիտելով նրան անմերձենալի բարձունքի վրա։ Ահա քո և նրա մեջ յեղած տարբերությունը. դու յերբեք, յերբեք չես կարողացել բարձրանալ մինչև նա։

ՍԱՄՍ.—(Հանկարծ լուսամուտից նկատել է Արմենուհուն)։ Ահա, նա գալիս է։ Մնացի՛ր այստեղ, Ստեփան, յեթե ինձ ենթակ տեսնի, ներս չի մտնիլ։ Ոգնի՛ր ինձ նրա հետ հաշտվելու։

ՏԵՍԻԼ X.

Նույնի, Արմենուհի, ետո Կոստանդին

ԱՐՄԵՆ.— (Գալիս է խորի դռներով։ Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում։ Ջեռնափայտը բողնում է պատըգամբի վրա։ Ներս է մտնում հոգնած. ուսերի շալը ձգում է աթոռի վրա)։ Ա՛հ հոգնեցի։ (Նստում է։ Սամսոնին չի նկատել)։

ՍՏԵՓ.—Առաջին անգամն եմ լսում ձեզանից հոգնեցի բառը։

ԱՐՄԵՆ.—(Ծպտալով)։ Ցերևի պատահել եմ։ (Սամսոնին տեսնելով, արագ վոտքի յե կանգնում յեվ դիմում է դեպի աջ կողմի յերկրորդ դռները։ Նկատում է դաշնամուրը ծածկված յեվ բեթեվ նչում)։ Ա՛հ։ (Կանգ է առնում)։

ՍՏԵՓ.—(Վախեցած մոտենալով)։ Ի՞նչ պատահեց։

ԱՐՄԵՆ.— Տեսնը, ինչ են արել, բժիշկ։

ԿՈՍՏ.—(Շերեփում է ձախ կողմի առաջին դռների մեջքով)։

ԱՐՄԵՆ.— Հայրիկ, նայիր նրան, ուզում են ինձանից խլել իմ մխիթարությունը։ Ո՞ւմն է այդ դաշնամուրը։

ԿՈՍՏ.—Քոնը։ Հանգուցյալ մորդ նվերն է։

ՍԱՄՍ.—(Կանգնած է դեպի ձախ յեվ ակնածությամբ դիտում է տեսարանը)։ Ճիշտ է։

ԱՐՄԵՆ.—(Ուշադրություն չդարձնելով Սամսոնի կողմը)։ Ուրեմն ինչ իրավունքով են ինձ զրկում նրանից։ Հայրիկ, դու գիտես՝ վոր չես առանց նվագելու մի որ անգամ չեմ կարող ապրել, իսկ նրանք ծածկել են դաշնամուրը, վորպեսզի չես չեվագիմ։ Բայց այդ չես թույլ չեմ տալ։ Վե՛ր։ (Արագ հայլերով մոտենում է ձախ կողմի առաջին դռներին)։ Մելանիա։ (Ավելի բարձր)։ Մելանիա։

ՏԵՍԻԼ XI.

Նույնի, Մելանիա, ետո Ցեղիսաբեթ յեվ Վիրգինե

ՄԵԼԱՆԻԱ.—(Շուտով գալիս է ձախ կողմի առաջին դռնեռով)։ Ալատեղ եմ, ախկին։

ԱՐՄԵՆ.—Ո՛վ և ծածկել դաշնամուրը։

ՄԵԼԱՆԻԱ.—Ցետո ու. Գարեգինը։

ԱՐՄԵՆ.—Ո՞ւմ հրամանով։

ՄԵԼԱՆԻԱ.—Մեծ ախկնոջ։

ՑԵՂԻՍ.—(Ցերեվում է ձախ կողմի յերկրորդ դռնեռի միջեվ)։

ՎԻՐԳ.—(Ցերեվում է մոր կողմից, գալով ձախ կողմի առաջին դռնեռով)։

ԱՐՄԵՆ.—Ո՞ւր են իմ նոտաները։

ՄԵԼԱՆԻԱ.—Մեծ ախկնոջ սենյակում։

ԱՐՄԵՆ.—Գնացեք, բերեք, դաշնամուրը բաց արեք։

ՄԵԼԱՆԻԱ.—(Գալերեն ուղղում է դեպի ձախ կողմի յերկրորդ դռնեռը բայց Ցեղիսաբեթին տեսնելով, կանգ է առնում)։

ՑԵՂԻՍ.—Նայոտառակվեցինք ոտարների մոտ։ (Վերգինեյին) այն կինն իմ անձնակուցն է։ Գնա, ներան ճանապարհ դիր մյուս դռներով, վոր դրա ձայնը չլսի։

ՎԻՐԳ.—(Շտապով գնում է ձախ կողմի յերկրորդ դռնեռով յեվ ինչացած յես է գալիս)։

ԱՐՄԵՆ.—(Մելանիային)։ Բաց արեք, ասում եմ, դաշնամուրը։

ՑԵՂԻՍ.—Թող մարդը հրամայի, բայց կանանք։ (Մելանիային)։ Կարի՛ր այստեղից։

ՄԵԼԱՆԻԱ.—(Շտապով գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ԱՐՄԵՆ.—Շատ լավ, Թող այդպես լինի։ Ցես ձեղնից դեռ ավելին եմ սպասում։

ԿՈՍՏ.—Հանգստացի՛ր, պավակս, դաշնամուրն ինչ և, վոր նրա համար սրյունդ պղտորում ես։

ԱՐՄԵՆ.—Ա՛հ, դաշնամուրը չի պլխավորը, հայրիկ, այլ դրանց նպատակը։ (Ցեղիսաբեթին)։ Բարբարոններ, յես ասելիք եմ ձեր բոլոր հալածանքները, բայց այդ մեկը ոտնել չեմ կարող։ Վախից չեն, վոր լռել եմ մինչև այսօր, այլ ամոթից։ Դուք թուլավորել եք իմ կյանքի յուրաքանչյուր վարկյանը ձեր անտեղի կասկածներով. դուք հետևել եք իմ ամեն մի քայլին։ Ցեվ ինչ և յեղել ձեր նպատակը։ Կոտրել իմ կամքը, դարձնել ինձ սորուկ տնտեսական չնչին պարտականություններին և ձեր հնամաշ ավանդություններին։

ՑԵՂԻՍ.—Ինչեր և ասում, ասաված իմ, ինչեր և ասում։

ՍԱՄՍ.—Թող ասի, ժպրիկ, Թող ասի։

ՎԻՐԳ.—Հարբած և կամ խելագարվել և։

ՍՏԵՓ.—(Վրդովված, Վիրգինեյին)։ Դու մի խառնվիր, ի սեր ասածս։

ԱՐՄԵՆ.—Խելագարվե՞լ։ Ո՞վ չեր խելագարվի ձեր յերկուսի ձեռքում։ Մայր և աղջիկ՝ դուք ոչխատել եք ամեն իրավունք քանդեցնել իմ վրա։ Մանկությունից սովոր ազատ մտածելու, ազատ զգալու, այս տունը մտնելու որից զգացել եմ աորկության դարչելի լուծը։ Ցեվ վորքան ծանր և յեղել այդ լուծը, այնքան ավելի յեմ ատել ձեզ։ (Վիրգինեյին)։ Ինչ վերաբերում և ձեզ, զզվելով զզվում եմ ձեզանից... ո՛ձ...

ՎԻՐԳ.—Մայրիկ, լսեցի՞ր։ Լսեցի՞ր, յեղբայր։ Ինչու՞ չես լուռ, ինչու՞ չես խոսում։ Ես մոր ու քրոջ պատիվը պիտ չունե՞ք քեզ համար։ Ա՛հ, յես կատաքնի։

ՍԱՄՍ.—Սաեփան, հեռացրու նրան այստեղից։

ՍՏԵՓ.—(Բռնելով Վիրգինեյի՞ բեվից)։ Գնանք, գնանք, ասում եմ. դու կրակի վրա յուղ ես ածում։ (Դրեթե ուժով տանում է Վիրգինեյին ձախ կողմի առաջին դռնեռով յեվ յես է գալիս)։

ՏԵՍԻԼ XII.

Նույնի, առանց Վիրգինեյի

ԱՐՄԵՆ.—Ձդիտեմ, վո՞ր բարոյական որենքով է մեկն իշխում մյուսի վրա։ Ա՛հ, գիշեր—ցերեկ իմ տկանջներին հնչել և մի չոր, անախորժ ձայն. «Դու կին ես, ուրեմն սորուկ ես, վորովհետև յես ել ժամանակին սորուկ եմ յեղել։ Ինչպես ինձ հետ են վարվել՝ նույնպես և յես պիտի վարվեմ քեզ հետ։ Խեղդիր քո մեջ քո կամքը և լսիր ինձ, քո ամուսնուն, նրա ազդականներին։ Վարիր բուսական կյանք, կեր, խմիր, պճնվիր, ծախսիր—այս բոլորը թույլ ենք տալիս, բայց ազատ մի՛ դպիր քեզ, այդ արդելված է։ Դու քո ամուսնու բնավորությունը չես, հավասարը, այլ նրա հյուրին, նրա ազատ բնությունների զվարճալիքը։ Վերջապես դու պետք և փոխարինես քո ճակատագիրը, վոր քեզ պզել և մի հարուստ տուն»...

ՑԵՂԻՍ.—(Սամսոնին)։ Ինչու՞ չես ասում, վոր քաղցածությունից ենք ազատել նրան, պատռտված կոշիկներից ենք դուրս քերել։

ԿՈՍՏ.—(Բարկությունից դողալով)։ Սո՛ւտ ես, սո՛ւտ ես. մենք յիրենք քաղցած չենք յիզել։ Ո՛հ, ինչո՞ւ դու տղամարդ չես, պառավ, ո՛հ...

ՍՏԵՓ.—(Բռնելով Կոստանդինի բերը)։ Զսպեցեք ձեզ։

ԱՐՄԵՆ.—Ի՞նչ պիտի անելի։ Ցես կռվելու համար չեյի յեկել այս տունը, այլ ապրելու։ Պատերը կապտամբելին, յերբ յես թշնամաբյուն գցեյի վորդուս մոր մեջ։ Ճարահատյալ սկսեցի հարմարվել իմ վիճակին, ինչպես մի վորսված թռչուն. վոր ընտելանում ե իր վանդակին։ Բայց թռչունն իր վանդակում իսկ պահպանում ե յերգելու, թռչկոտելու իրավունքը։ Մինչդես ինձնից այդ ել են խլում։ (Լալիս ե հանդարտ)։

ՅԵՂԻՍ.—Ասացեք բոլորը, վերջացրեք։ (Կոստանդինին)։ Դե՛հ, տարեք նրան այստեղից։ Յերբ ուշքի կգա, յես կխոսամ նրա հետ։ Ամեն, ամեն ձեզ նման հորը։

ՍԱՄՍ.—(Սրտնեղությամբ)։ Մայրի՛կ...։ Յես խնդրում եմ, գնա՛ քո սենյակը։

ՅԵՂԻՍ.—Դե՛նա՛մ, յես չեմ կարող այս անպատվությունը տեսնել... Անզգա՛մ։ (Դնում ե դեպի ձախ կողմի յերկրորդ դուռերը, լսելով Վիրգինեյի ձայնը, կանգ ե առնում)։

ՏԵՍԻԼ XIII

Նույնի յեվ Վիրգինե

ՎԻՐԳ.—(Գալիս ե ձախ կողմի առաջին դուռերով։ Վերարկու յեվ գլխարկ հագած, ձեռքին հովանոց յեվ մի հսակ)։ Մայրիկ, ծա՞ բարով։

ՍՏԵՓ.—Ո՞ւր ես գնում։

ՎԻՐԳ.—(Արագ-արագ ձեռնոցները հագնելով)։ Բաղաք, իմ տունը Աստյառակվեցի, հերիք ե։ (Սամսոնին)։ Ցեղբայր, նեղսրտությունն, ինչպես յերևում ե, այդ բոլորի պատճառն յես եմ։ Ցես չպիտի պաշտպանեյի իմ հոր տան պատիվը։ Մնաս բարով։

ՍԱՄՍ.—(Դղրդված)։ Վիրգինե՛, խելո՛ք կաց։

ՎԻՐԳ.—Լավ. մի կատաղիր. դիտեմ, վոր քույրը յեղբոր համար մի մեծ բան չե։ Դնում եմ։

ՍՏԵՓ.—Վիրգինե՛, մինչև անգամ իմ համբերությունն ել չպիտի նե։ Վերցրու դլխարկդ, հանի՛ր վերարկուդ։ Մենք քաղաք կերթանք միասին։

ՅԵՂԻՍ.—(Բռնելով Վիրգինեյի բերը)։ Արի՛, աղջիկս, գնանք իմ սենյակը։ Ինչ ել հարբերենք, տեսնենք ինչ ե լինում։ (Տանում ե Վիրգինեյին իր սենյակը ձախ կողմի յերկրորդ դուռերով)։

ՍՏԵՓ.—(Կոստանդինին)։ Մենք ել հեռանանք այստեղից։ Մենք ավելորդ ենք ամուսինների մեջ։

ԱՐՄԵՆ.—(Աչերը արբել ե, ուժը ժողովել, անտարբեր դեպի կատարվող տեսարանը. աչերը հառել ե հատակի մի կետին)։ Գնա՛, հայրիկ։

ԿՈՍՏ.—(Մի ծուռ հայացք ձգելով Սամսոնի վրա, բայց ե տալիս, վոր Ստեփանն իրան տանի ձախ կողմի առաջին դուռերով)։

ՏԵՍԻԼ XIV

Արմենուհի յեվ Սամսոն

(Մի քանի վայրկյան լուռթյուն)

ԱՐՄԵՆ.—(Չի գզում Սամսոնի ներկայությունը)։

ՍԱՄՍ.—Ցես լռեցի մինչև վերջը։ (Մոտենում ե դասնամուրին յեվ բաց ե անում)։ Ահա քո բոլոր ասածների պատասխանը։ Պրանով յես վիրավորում եմ իմ մորն ու քրոջը։ Ցես թույլ եմ տալիս մինչև անգամ, վոր այդ մարդը շարունակի այցելել իմ տունը։ Բավական ե։

ԱՐՄԵՆ.—(Վեր ե կենում յեվ հայերեն ուղղում ե դեպի աջ կողմի յերկրորդ դուռերը)։

ՍԱՄՍ.—Սպասի՛ր, դու վոչինչ չես ասում։ Դաշնամուրը բաց ե։

ԱՐՄԵՆ.—Այլևս ինձ համար միևնույնն ե։

ՍԱՄՍ.—Լսի՛ր. յես խոսքի մարդ չեմ, կարճ կասեմ։ Յերբ դու բոլորովին ձգում եյիր իմ մոր յերեսին քո նախասիրությունը, յես մտածում եյի։ Խոստովանում եմ, դու մասամբ իրավացի ես։

ԱՐՄԵՆ.—(Առանց յերեսը Սամսոնին դարձնելու, դառը ճեղճատյամբ)։ Մբրե՛ւ։

ՍԱՄՍ.—Մոտենում ե Արմենուհուն, ձեռը մեկնում ե նրան)։ Տո՛ւր ինձ ձեռքդ։ Ցես քեզնից ներումն եմ խնդրում։

ԱՐՄԵՆ.—(Նույն յեղանակով)։ Այդպես շո՛ւտ։

ՍԱՄՍ.—Ի՞նչ արած. այն որից դես դու ինձ թույլ չես տալիս քեզ բացատրություն տալու։ Դու փախչում ես ինձնից, ինչ-

պես անբուժելի ախտավորից, այն ինչ՝ ես անբուժելի չեմ։ Ո՞վ չի սխալվում։ Տուր ինձ ձեռքդ—հաշտվենք։

ԱՐՄԵՆ.—(Նորից հայելուն ուղղում է դեպի աջ կողմի յերիտուղ դուցերը)։

ՍԱՄՍ.—Ուրեմն չե՞ս ներում։ Պատժում ես։

ԱՐՄԵՆ.—(Կանգ առնելով)։ Ձես չունեմ իրավունք վոչ ներելու, վոչ պատժելու։

ՍԱՄՍ.—Բայց դու արդեն պատժել ես ինձ խիստ։ Սառնասիրտ և հայտնի, թե ինչ տանջանքներ եմ կրում։ Ձես քուն չունեմ, հանգիստ չունեմ, գործերս մնացել են անտես. վոչ պարապել եմ կարողանում և վոչ մոռանալ նրանց մասին։ Ձես կկիսրծանվեմ, յերեւ այդպես շարունակվի։ Արմենուհի, մի լինիր վոխակալ։

ԱՐՄԵՆ.—Ձես ձեր դեմ վոխ չունեմ։

ՍԱՄՍ.—Ուրեխ և շատ մեծ վոխ։ Այսոր մեր պավակի ծննդյան առաջին տարեգարձն ե, և դու այսոր էլ ինձ հետ ճաշին մի ներկան չեստեցիր։

ԱՐՄԵՆ.—(Շատ հառաչելով)։ Լավ տոնեցինք։ Ա՜հ, Թողնք իմ մոռացկոտությունը։

ՍԱՄՍ.—Ես գոյությունն յերբեք այնքան բանդ չի յեղել ինձ համար, վորքան այժմ։

ԱՐՄԵՆ.—(Ցերկարատեվ դառը ոեգնական ծիծաղ)։ Հա, հա, հա...

ՍԱՄՍ.—Մի ծիծաղիր, յես խոսքերը սապնի պղպջակների պես ոդը շպրտողներից չեմ։ Ասա, վերջապես, ներում ես ինձ վո՞չ։

ԱՐՄԵՆ.—Վո՛չ։

ՍԱՄՍ.—Ուրեմն վո՛չ մի հաշտություն, վո՛չ մի պայման։

ԱՐՄԵՆ.—Մենք կինանք մինչեւ յերկրի ատակ մեր պավակի համար, բայց կապրենք ինչպես ոտարներ։

ՍԱՄՍ.—Ա՛յդ և քո վերջին խոսքը։

ԱՐՄԵՆ.—Այս և։

ՍԱՄՍ.—(Բիրտ մտածելով)։ Շատ լավ, թող այդպես լինի, այժմ խոսենք ինչպես ոտարներ։ (Դեմքին ընդունում է խիստ ատելահայտություն)։ Արդյոք ձեր այդ հաստատության հիմքը իմ անհավատարմությունն և, թե՞ հա մի ուրիշ, ավելի խոշոր պատճառ։

ԱՐՄԵՆ.—(գլուխը հատարձակ բարձրացնելով)։ Ի՞նչ եք կամենում ասել դրանով։

ՍԱՄՍ.—Այո՛, վոր իմ մայրն ու քույրը չեն սխալվում։ Դուք վո՞ր ին համակրում եք այդ Հմայակին, ալկ սիրում եք նրան և սիրում եք... հանցավոր սիրով։

ԱՐՄԵՆ.—(Սառը)։ Ձեզ ինչ, մենք ոտարներ ենք։

ՍԱՄՍ.—Ցավ դուք համարձակվում եք, դուք, իմ որինական կինը, իմ դավակների մայրը։

ԱՐՄԵՆ.—Իսկ դուք իմ որինական ամուսինը, իմ դավակների հայրը չեյիք, յերբ դավաճանում եյիք ինձ։

ՍԱՄՍ.—Ձես ողամարդ եմ։

ԱՐՄԵՆ.—Արհամարհում եմ այդ դաղրելի արտոնությունը ողամարդու համար, ինչպես մի սուր ավանդություն։

ՍԱՄՍ.—(դառը ծիծաղով)։ Ահա թե ինչ, ուրեմն դուք ուղում եք տակն ու վրա անել մեր վարք ու բարքերը։

ԱՐՄԵՆ.—Ցերեք ձեռքիս լինեք, յես նրանց կկորտակեյի հիմունքից։

ՍԱՄՍ.—(Հեգնելեն կատաղելով)։ Ձեզ կատիպեն հարգել և խոնարհվել նրանց առջև։

ԱՐՄԵՆ.—(Առհամարհոտ)։ Ո՛վ, արդյոք։

ՍԱՄՍ.—Ցես։

ԱՐՄԵՆ.—Փորձեցեք։

ՍԱՄՍ.—Ուրեմն չե՞ք հերքում ձեր սերը պեպի այդ մարդը։

ԱՐՄԵՆ.—Առաջ յես կպատասխանեյի ձեր հարցին ամենայն համարձակությամբ, այժմ պարտավոր չեմ։ (Շուռ ե գալիս գնալու)։

ՍԱՄՍ.—(Բարձր ձայնով)։ Անառակ, յես քո գլուխը կջախջախեմ։ (Արագ բարձրացնում է Արմենուհու վրա)։

ԱՐՄԵՆ.—(Ցերեսը հանարձակ Սամսոնին դարձնելով յեվ գլուխը ուղերկյուղ բարձրացնելով)։ Ջախջախեցեք։

ՏԵՍԻԼ XV

Նույնք, Սեդիան, Ցեղիսաբեթ յեվ Վիրգինե

ՍՏԵՓ.—(Սամսոնի գոռոցին ոտապով վազել ե ձախ կողմի առաջին դուցերով)։ Ի՞նչ կա տեսա, խելագա՛ր։ (Ընկնում է Սամսոնի յեվ Արմենուհու մեջ)։

ՑԵՂԻՍ.—(Գալիս ե ձախ կողմի յերիտուղ դուցերով Ստեփանից ետո)։

ՎԻՐԳ.—(Գալիս ե ձախ կողմի յերիտուղ դուցերով Ցեղիսաբեթից ետո)։

ՍԱՄՍ.—(Նայել ե Արմենուհու հատարձակ դեմքին։ Արագ ցած ե իջեցնում)։

ԱՐՄԵՆ.—Քաջութիւն չունեցաք մի հարուածով վերջ տալու խնդրին։

ՍԱՄՍ.—Ձեզ նմանները չեն սպանուում, այլ խղդուում են շան պես (Աթոռը շպրտում է մի կողմը)։

ԱՐՄԵՆ.—Այդ չեմ, ձեր խիղճը բողոքից։ Դուք զգացիք, որ զբաղեցնում եք ինձ, կարծելով, թէ յես նուէրն եմ, ինչ որ դուք։ Վոչ, չէթէ յես կամենամ անել ձեր սրածը, մի վայրկեան անգամ չեմ ճոճել ձեր սանրը։

ՍՏԵՓ.—Այդ այնքան ճիշտ է, որքան ինքը հմայութիւնը. կարող եմ յերդուել։

ԱՐՄԵՆ.—Ինչու գազանացաք։ Ո՞ւր եմիք այն ժամանակ, յերբ յես պատրաստ եմի կյանքս զոհել մի որ սիրելու և սիրվելու համար։ Մէթէ իմ սէրը ժամացույցի մեքենա եր պղպատից շինված։ Մէթէ այն չէր յուզում բուռն զգացումներից ձեզ համար, յերբ դուք գործերով եիք զբաղված։ Մէթէ յես չէյի փափագում իմ յերազների մարմնացումը տեսնել ձեր մեջ և միմիայն ձեր մեջ։ Մէթէ ձեր յեսակից վազելով ամեն վայրկեան շեյի փաթաթվում ձեր պարանոցին։ Ո՞ւր եյիք այն ժամանակ։ Ինչու եյիք ինձ հրում։ Զրաղված եյիք, հա, հա, հա։ (Դառը ծիծաղ)։ Ա՜հ, արժէր մէթէ ուշադրութիւն դարձնել ինձ վրա. ինձ, որ ձեր ապարանքի պարզերից մեկն եյի։

ՍՏԵՓ.—(Սառնութեամբ)։ Լաւ, լաւ։

ԱՐՄԵՆ.—(Ամենի վոգեվորված)։ Ա՜հ, դուք մատծում եյիք «Ի՜նչ կա, նա իմ անփափկանութեանն է, իմ հարստութեան հրապուրիչով գինված։ Վոչ վոք չի կարող նրան խլել ինձանից։ Զահագանները կան նրա վրա,—մայրս, քոյրս, ազգականները, հասարակական կարծիքը։ Ինչու իմ թանգագին զգացմունքը միայն նրա վրա շռայլեմ։ Յես հարուստ եմ, կարող եմ ամենազեղչիկ կանանց սերը գնել շուկայում, ինչպես գնում եմ իմ ձեռնացները, իմ կոշիկները։ Իսկ նա թող տանը մնա, այնպես, իմիջի այլոց։ Ցեղ գնեցիք, և վայելեցիք։ Ինչ եք ուզում այժմ ինձանից։ Յես վոչ նախանձում եմ, վոչ բողոքում, յես... զզվում եմ ձեզնից։ (Արագ քայլերով գնում է աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՏԵՍԻԼ XVI

Նույնք, առանց Արմենուհու

ՍԱՄՍ.—(Կատաղած, ընչասպառ)։ Մայրիկ, այժմ ամեն ինչ վերջացավ։ Հրամայիր ծառաներին, որ այդ մարդը գայիս վռնդեն իմ տնից։ Թող Գարեգինը դուրս գա առաջ և ասի. «Հոգեթիք, պարոն, դուք պատվի դող եք»։

ՎԻՐԳ.—Յես քո հրամանը իսկույն կհայտնեմ Գարեգինին։ (Ուզում է գնալ)։

ՍՏԵՓ.—(Բռնելով Վիրգինեից)։ Կաց, քո գործը չէ։

ՎԻՐԳ.—(Սեպված կանգ է առնում, կատաղությունից ատամները կրճտելով)։

ՍԱՄՍ.—(Ստեփանից)։ Այո, ազատամիտ բարեկամ, նայիր ինձ զարմացած։ Համարիր ինձ ասիացի, վայրենի, այնուամենայնիվ մացած։ Համարիր ինձ ասիացի, վայրենի, այնուամենայնիվ յես պիտի գործադրեմ իմ իրավունքները։ Հիմար չեյին մեր հայրերն ու պապերը, որ մարակով եյին խրատում իրանց կանանց։

ՎԻՐԳ.—Իհարկե, կապը կորած կանանց։

ՍՏԵՓ.—Լռեցրու յես, վերջապես, թե չէ։

ՍԱՄՍ.—Որենքով իմ կինն է, նայած եւ ինձ պիտի պատկանի։ Յես անձեռոցիկ չեմ, որ կեղտոտվելուց հետո դեն շպրտեմ և մի ուրիշը վերցնեմ։ Գիտեմ ինչ ասել և փոխադարձ հաճոյանք, գաղափարական ձգտում և այլն։ Այսոր հոգով են միացած, վաղը, մարմնով կմիանան։

ՅԵՂԻՄ.—Ա՛յ, յես եւ հենց այդ եմ ասում։

ՎԻՐԳ.—Վերջապես։

ՍՏԵՓ.—(Ականջ դնելով)։ Ինչ գրգռեցիք այդ մարդուն, քիչ գրգռեցիք։

ՍԱՄՍ.—(Սպառնալով դեպի աջ կողմի յերկրորդ դռները)։ Սպասիր, պռոշ սրաբաշ, այժմ յես քեզ ցույց կտամ իմ առաքինքը։ (Գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ՍՏԵՓ.—(Սամսոնի հետեվից)։ Գլորվիր, գլորվիր մինչև անդունդ հասակը։ (Դառնալով Ցեղիսաբեթից յեվ Վիրգինեից)։ Դուք կդղջաք ձեր վարմունքի համար, բայց ուշ կլինի։ (Գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՎԻՐԳ.—Դու վոչինչ չես հասկանում։ (Գնում է Ստեփանի հետեվից)։

ՅԵՂԻՄ.—Մենք մեր պարտքն ենք կատարում։ (Գնում է ձախ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐՄԵՆ.—Քաջութիւն չունեցաք մի հարուածով վերջ տալու խնդրին։

ՍԱՄՍ.—Ձեզ նմաններին չեն սպանում, այլ խնդրում են շան պես (Աթոռը շպրտում է մի կողմը)։

ԱՐՄԵՆ.—Այդ չէ, ձեր խիղճը բողոքեց։ Դուք պզտիք, որ պըրպատում եք ինձ, կարծելով, թէ յես նուիրեալ եմ, ինչ որ դուք։ Վոչ, յերբէք յես կամենամ անել ձեր սրածը, մի վայրկեան անգամ չեմ ճաել ձեր առջը։

ՍՏԵՓ.—Այդ այնքան ճիշտ է, որքան ինքը հնմարտութիւնը. կարող եմ յերդուել։

ԱՐՄԵՆ.—Ինչու պզտնացաք։ Ո՛ր եյիք այն ժամանակ, յերբ յես պատրաստ եյի կյանքս զոհել մի որ սիրելու և սիրվելու համար։ Մի՞թէ իմ սիրտը ժամացույցի մեքենա եր պղպատից շինված։ Մի՞թէ այն չէր յեռում բուռն զգացումներից ձեզ համար, յերբ դուք գործերով եյիք զբաղված։ Մի՞թէ յես չէյի փափագում իմ յերազների մարմնացումը տեսնել ձեր մեջ և միմիայն ձեր մեջ։ Մի՞թէ ձեր յեսակից վազելով ամեն վայրկեան չեյի փաթաթվում ձեր պատանոցին։ Ո՛ր եյիք այն ժամանակ։ Ինչու եյիք ինձ հրաւիրած։ Զբաղված եյիք, հա, հա, հա՛ (Դառը ծիծաղ)։ Ահ, արժէր միթէ ուշադրութիւն դարձնել ինձ վրա. ինձ, վոր ձեր ապարանքի դռներից մեկն եյի։

ՍՏԵՓ.—(Սամսոնին)։ Լսէր, լսի՛ր։

ԱՐՄԵՆ.—(Ավելի վոգեվորված)։ Ահ, դուք մատծում եյիք «ինչ կա, նա իմ սնիսականութիւնն է, իմ հարստութեան հրապուրով դնված։ Վոչ վոք չի կարող նրան խլել ինձնից։ Գահապաններ կան նրա վրա,—մայրս, քոյրս, ազգականներս, հասարակական կարծիքը։ Ինչու իմ թանգագին զգացումները միայն նրա վրա շռայլեմ։ Ցնս հարուստ եմ, կարող եմ ամենազեղչիկ կանանց սերը գնել շուկայում, ինչպես գնում եմ իմ ձեռնոցները, իմ կոշիկները։ Իսկ նա թող տանը մնա, այնպես, իմիջի այլոց»։ Ցնվ գնեցիք, և վայելեցիք։ Ինչ եք ուզում այժմ ինձնից։ Ցնս վոչ նախանձում եմ, վոչ բողոքում, յես... զզվում եմ ձեզնից։ (Աջակ խոյերով գնում է աջ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՏԵՍԻԼ XVI

Նույնք, առանց Արմենուհու

ՍԱՄՍ.—(Կատաղած, ընչասպառ)։ Մայրիկ, այժմ ամեն ինչ վերջացավ։ Հրամայիր ծառաներին, որ այդ մարդը գալիս վռնդեն իմ տնից։ Թող Գարեգինը դուրս գա առաջ և ասի. «Հոգեբեր, պարոն, դուք պատվի դող եք»։

ՎԻՐԳ.—Ցնս քո հրամանը իսկույն կհայտնեմ Գարեգինին։ (Ուզում է գնալ)։

ՍՏԵՓ.—(Բռնելով Վիրգինեյին։) Կաց, քո գործը չէ։

ՎԻՐԳ.—(Սեփպված կանգ է առնում, կատաղությունից ատամները կրճտելով)։

ՍԱՄՍ.—(Սեփանին)։ Այո, ազատամիտ բարեկամ, նայիր ինձ զարմացած։ Համարիր ինձ ասիացի, վայրենի, այնուամենայնիվ ես պիտի գործադրեմ իմ իրավունքները։ Հիմար չեյին մեր հայրերն ու պապերը, վոր մարակով եյին խրատում իրանց կանանց։

ՎԻՐԳ.—Իհարկե, կապը կտրած կանանց։

ՍՏԵՓ.—Լռելու չես, վերջապես, թե չե։

ՍԱՄՍ.—Որենքով իմ կինն է, նյապես և ինձ պիտի պատկանի։ Ցնս անձնուրացիկ չեմ, վոր կեղտոտվելուց հետո դեն շպրտեմ մի ուրիշը վերցնի։ Գիտեմ ինչ ասել և փոխադարձ հաճոյանք, գաղափարական ձգտում և այլն։ Այսոր հոգով են մեկացած, վաղը, մարմնով կմիանան։

ՅԵՂԻՍ.—Ա՛յ, յես ել հենց այդ եմ ասում։

ՎԻՐԳ.—Վերջապես։

ՍՏԵՓ.—(Անհամբեր)։ Քիչ զրպռեցեք այդ մարդուն, քիչ զրպռեցեք։

ՍԱՄՍ.—(Սպառնալով դեպի աջ կողմի յերկրորդ դռները)։ Սպասիր, պռատ արարած, այժմ յես քեզ ցույց կտամ իմ առաքինները։ (Գնում է աջ կողմի առաջին դռնեռով)։

ՍՏԵՓ.—(Սամսոնի հետեվից)։ Գլորվիր, գլորվիր մինչև անդունդի հատակը։ (Դառնալով Ցեղիսաբեթին յեվ Վիրգինեյին)։ Դուք կդղջաք ձեր վարմունքի համար, բայց ուշ կլինի։ (Գնում է ձախ կողմի առաջին դռնեռով)։

ՎԻՐԳ.—Դու վոչինչ չես հասկանում։ (Գնում է Սեփանի հետեվից)։

ՅԵՂԻՍ.—Մենք մեր պարտքն ենք կատարում։ (Գնում է ձախ կողմի յերկրորդ դռնեռով)։

ՎԱՐԱԳՈՒՀԻ

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Առաջին արարվածի տեսարանը, միայն ճաշի սեղանի փոխարեն դրված են մի թեթեվ յեղեգնյա գահավորակ, մի փոքրիկ սեղան յեվ պարտիզի աթոռներ։ Համակի վրա գցած է Ամենուհու շալը յեվ յերկար ձեռնափայտը։

ՏԵՍԻԼ I

Սեփան յեվ Վերգինե

ՍՏԵՓ.—(Նստած է փոքրիկ սեղանի մոտ. ծխում է)։ Գնանք վերդինե, հավատա, այդ լավ կլինի։ Բավական է, ինչքան հյուր յեղանք այստեղ։

ՎԻՐԳ.—Ձեռ չեմ ուզում յեղբորս այդ դրության մեջ թողնել ու հեռանալ։ (Կանգնած է, նստում է)։

ՍՏԵՓ.—Այն ժամանակ ինձ ներիր, չես կերթան մենակ։

ՎԻՐԳ.—Ջեմ հասկանում, ինչու՞ չես այդպես շուռ պտում։

ՍՏԵՓ.—Ետապում եմ, վորովհետև անտանելի չե այս ընտանիքի կյանքը։ Մայր, վորդի ու աղջիկ խոսք մի չեք ասել մի ազնիվ եյակ հալածելու։ Ձեռ չեմ կարող անվանել անմեղության այդ հալածանքի տակ և լռել։ (Վեր է կենում)։

ՎԻՐԳ.—Գնանքը մանի քո անմեղը հա, գնանքը մանի։

ՍՏԵՓ.—(Գոգռված)։ կուկել ես դու, Վիրգինե, կատարյալ կուկել։ Մազա և շարժվում, յերբ դու խոսում ես այդ յեղանակով։ (Գայլում է)։

ՎԻՐԳ.—կուկել եմ քե փեսիկ, բայց քեզ հավատարիմ եմ, նրա նման չեմ։

ՍՏԵՓ.—Իսկ նա հավատարիմ չե՞։

ՎԻՐԳ.—Լսեցիր ինչ ասաց յերեկ յեղբայրս.— «Այսոր հոգով են մինացած, վաղը մարմնով կլինանան»։ Ահագին յեղբայր, ինչպես և ասկվում։ Ձեզ ում հասար, ասաված իմ, ում հասար։

ՍՏԵՓ.—(Կանգ առնելով)։ Ա՛խ, կարճամիտ, կարճամիտ։ Ձեր դու մի քիչ խելք ունենայիր, հալածելու փոխարեն, կպատրաստեիր նրան։

ՎԻՐԳ.—(Հեգնությամբ)։ Ահա քե ինչ։ Հետաքրքրական և համառ, ինչու՞ պիտի պաշտպանելի։

ՍՏԵՓ.—Վորովհետև նա մի կենդանի բողոք և կնոջ վիրավորական և ստորացուցիչ կացության դեմ։ Նա չի ուզում վայելել հեզությամբ տանել իր վիճակը։ Բայց չես ինչպես քեզ բան հասկացնեմ։ Ե՛հ, արիք ինչ վոր ուզում եք, չես ձեռներս լվանում եմ։ (Դիմում է դեպի պատզամբ)։

ՎԻՐԳ.—Դու այսոր ես ուզում դնալ։ (Հետևում է Սեփանին)։

ՍՏԵՓ.—Հենց այս րոպեին։ (Հեռանում է)։

ՏԵՍԻԼ II

Կոստանդին յեվ Սոդոմ Սոդոմյան

ԿՈՍՏ.—(Գալիս է խորքի դռնակով Սոդոմ Սոդոմյանի հետ)։ Ձեռ չեմ հասկանում ձեր լեզուն՝ «Քեվե այդպես և, բայց և այնպես», «հանգամանքների նրբության պատճառով» և այլն և այլն։ Ինդրեմ պարզ խոսեք։

ՍՈՂՈՄ.—(Գալիս է խորքի դռնակով, միաս հետևելով Կոստանդին մի ուրիշ հետ)։ Պարոն դնդապետ, իսկապես խնդիրը շատ պարզ է, քեվե բացատրելու և լուսաբանելու կարիք չատ ունի։ Բանն այն է, վոր...

ԿՈՍՏ.—(Ընդհատելով)։ Բանն ինչ է, չես հենց այդ եմ ուզում իմանալ։

ՍՈՂՈՄ.—Բարեկամական և ազգակցական կապերն ինձ հարկադրում են ասել, վոր դուք կոչված եք մի ընտանեկան քյուրիմացությունն հեռացնելու։ Իսկապես ասած քյուրիմացություն եյլ չկա, բայց և այնպես քյուրիմացությունն պիտի քյուն եյլ չկա, քանի վոր յերկու կողմերն եյլ համաձայնություն չեն։

ԿՈՍՏ.—(Մեկուսի)։ Տեր վոդորմած ասաված։ (Սոդոմ Սոդոմյանին)։ Ասացեք, ի սեր յերկնավորի, դուք ինչ հանձնարարություն ունիք իմ վերաբերմամբ։

ՍՈՂՈՄ.—Կարելի չե հանձնարարություն հասարել, կարելի ե պարզաբանություն, նայելով քե ինդրին վոր կողմից կքաշես հաճեք մոտենալ։

ԿՈՍՏ.—(Հանգելով բեմի կենտրոն, կանգ է առել)։ Լսեցեք, պարոն։ Ձես մի պարզ դինվորական եմ, դուք նախկին ուսուցիչ։ Մենք դիպլոմատներ չենք, վոր ասվարը ասեղով մորթենք։ Պատասխանեցեք, առանց պատեպատ ընկնելու։ Ինչ և նպատակ ձեզ իմ փեսան լինի ասելու։ Գիտեք, չես զրպարտում, չես զգացմունքի մարդ եմ։

ՍԱՂՈՄ.—Զգացմունքի մարդ լինելն ադնիվ բան և, թեև ճնասակար։ Մի փիլիսոփա ասել և.—կյանքը վարերգութիւն է նրանց համար, վորոնք զգում են, և կոմեդիա նրանց համար, վորոնք մտածում են։ Արդ, դուք զգացող, ես մտածող՝ միանանք և այդպես մտնենանք խնդրին։

ԿՈՍՏ.—(Ամուր բռնում է Սողոմ Սողոմյանի բերը, բաիսաարում է)։ Ասելու եք, վերջապես, թե չե... Ի՞նչ և պահանջում ինձնից ձեր քրոջ վորդին, իմ ազգկա տուսինը։

ՍԱՂՈՄ.—(Ցավ զգալով)։ Պահանջում է, վոր...

ԿՈՍՏ.—(Լրացնելով)։ ...Վոր չես հեռանամ այս տնից, այնպես չէ՞։ Գնամ, կորչեմ... ատ։

ՍԱՂՈՄ.—Թեև կատարելապես այդպես չէ, բայց և այնպես։ Սակայն թեև բաց Թողեք... ցավեցնում եք։ Մի խմատատեր ասել է.—ով ուրիշին... ցավում է...

ԿՈՍՏ.—(Բայց բողնելով ձեռ բերը)։ Դե, հեռացեք. այժմ հանգստա ձեզ, պարոն դիպլոմատ։

ՍԱՂՈՄ.—Ինձ թվում է, վոր ավելորդ չեր լինել մի քանի դատապարտներ բացատրել։

ԿՈՍՏ.—(Բարձր ձայնով)։ Հեռացեք։ (Նստում է վրդովված յեվ մտածում է)։

ՍԱՂՈՄ.—Զնայելով, վոր շատ բարի մարդ եք, բայց և այնպես բարի չեք... Սակայն թեև... Իսկապես ատած... (Հեռանում է պատգամբով, մի բանի ակգամ յերկյուղով նետ ու նետ նայելով)

ՏԵՍԻԼ III

Կոստանդին յեվ Արմենուհի

ԱՐՄԵՆ.—(Գալիս է պատգամբից։ Հագած է ուրիշ ամարաքին հագուստ։ Համեմատաբար գլարթ է արտաքուստ)։ Ի՞նչ եր ատում ձեր պատվելին, հայրիկ։

ԿՈՍՏ.—(Դրգիռը զսպել է)։ Ատում եր՝ թեև այսօր չորեքշաբթի լի, բայց կարող եր և հինգշաբթի լինել։ Դու, յերևի, ուզում ես անից դուրս գալ։

ԱՐՄԵՆ.—(Մոտեցել է հատակին յեվ ծալը վերցրել)։ Ախ, հայրիկ, պնում եմ իմ սովորական զբոսանքը կատարելու։

ԿՈՍՏ.—Սպասիր մի քանի րոպե։ Ուզում ես քեզ ասելու։ (Նստում է)։

ԱՐՄԵՆ.—(Ծալը յեռ դնելով, գալիս է բեմի կենտրոնը)։ Հրամայիր, հայրիկ։

ԿՈՍՏ.—Այս յերեկո յես հեռանում եմ այստեղից և յերբեք վոտ չեմ դնելու այս տունը։

ԱՐՄԵՆ.—(Հառաչելով)։ Հասկանում եմ, հայրիկ։ (Նստում է)։

ԿՈՍՏ.—Ցես կարծում եյի իմ նեղկացությունը կարող է քեզ ոգնել, բայց դուրս է գալիս հակառակը։ Ի՞նչ և ես, խնդիրը յես չեմ։ Աստ, Արմենուհի, մտաղիրը ես Սամսոնի հետ հաշտվելու։

ԱՐՄԵՆ.—(Դադար)։ Վո՛չ։

ԿՈՍՏ.—Այժմ չեմ ասում, այլ հետո, մի քիչ անցած։

ԱՐՄԵՆ.—(Ավելի դրական)։ Վո՛չ այժմ, վո՛չ հետո, վո՛չ յերբեք։

ԿՈՍՏ.—Ուրեմն վճռված է։

ԱՐՄԵՆ.—Վճռված է։

ԿՈՍՏ.—Հը՛ը։ (Մտածում է մի փոքր, զսպում է իր դժկամակությունը)։ Լավ, շատ լավ, վարվիր ինչպես սիրտդ է ուզում։ Ցես չեմ կարող լինել մենկ այն հայրերից, վորոնք հասարակական կարծիքի անունով ճնշում են գործ դնում իրանց զավակների վրա։ Իհարկե, յես էլ ունիմ վորոշ հայացքներ, բայց ամեն բանից առաջ ես բաղդավորությունն է ինձ համար։ Մի հարց ևս։

ԱՐՄԵՆ.—(Անհանգիստ)։ Լսում եմ, հայրիկ։

ԿՈՍՏ—Ասա ինձ, սիրում ես այդ ճարտարապետին։

ԱՐՄԵՆ.—(Շիտրվելով)։ Հայրիկ։

ԿՈՍՏ.—(Հանգիստ)։ Մի շիտրվիր. ասա, աղջիկս։

ԱՐՄԵՆ.—(Տատանում է, մտածում է ինչ, ներս վճռական)։ Այո, սիրում եմ, հայրիկ։

ԿՈՍՏ.—(Ցնցվում է, ներս իսկույն զսպում իրան)։ Լավ շատ լավ։ Ամուսնիր գիտե՞ս։

ԱՐՄԵՆ.—Ամուսնես կապ չունի իմ զգացումների հետ։

ԿՈՍՏ.—Աղջիկս, դու դեռ նրա տանն ես, նրա անունն ես կրում։

ԱՐՄԵՆ.—Ուրիշ, հայրիկ։

ԿՈՍՏ.—Կամենալի իմանալ՝ ինչ ես մտածում անելու։

ԱՐՄԵՆ.—Վոչինչ։

ԿՈՍՏ.—Կարելի չե մտաղիրը ես բաժանվել Ալադյանից։

ԱՐՄԵՆ.—Վո՛չ, չեմ ուզում բաժանվել։

ԿՈՍՏ.—Հապա ինչպես։ ապրելով մենկ տանը, սիրել... (Հանկարծ կատաղում է, ձեռն ուժգին զարկում է սեղանին, բարձրանալով։ Արմենուհի՛։ (Վեր է կենում)։

ԱՐՄԵՆ.—(Անփույթ, ցայտում է ձորը խոր հանգիմանությամբ)։ Հայրիկ։ (Լռություն)։

ԿՈՍՏ.—(Նայել է Արմենուհու համարձակ աչերին։ Զգում է իրան. հանգստանում է)։ Լավ, լավ, ներիր, մի վայրկյան հիմարացա։ Գիտեմ, որ դու այն կանանցից չես։ Հասկանում եմ, դու չես ուզում թողնել քո զավակին.

ԱՐՄԵՆ.—Այդ չի գլխավոր պատճառը։

ԿՈՍՏ.—(Զարմացալով)։ Այդ չե՞. ուրեմն ինչ է։

ԱՐՄԵՆ.—Ցավս չեմ ուզում հետևել շատերի օրինակին։ Ինձ համար կարևորը սերն է. որին այնքան կարոտում եյի։ Այժմ ես սիրում եմ և սիրված եմ—այսքանը բավական է ինձ։

ԿՈՍՏ.—Սիրում ես, սիրված ես և սիրտ տանջվես հավիտյան։ Ինչու՞։

ԱՐՄԵՆ.—Ցանուն սիրո, հայրիկ. հանուն այն բարձր զգացման, որ կյանք և նպատակ է տալիս կնոջ անգութ գոյությանը։

ԿՈՍՏ.—Չեմ հասկանում, ինձ համար պարզ չէ այդ։ Աստ, խրճիթում, նա քանի՞ զավակ ունի։

ԱՐՄԵՆ.—Յերկուսը։

ԿՈՍՏ.—Դու տեսնվում ես նրա հետ։

ԱՐՄԵՆ.—Յերբեմն։

ԿՈՍՏ.—կարելի չե այժմ էլ տեսակցության ես գնում։

ԱՐՄԵՆ.—(Տանջվելով)։ Հայրիկ։ (Վեր է կենում)։

ԿՈՍՏ.—(Զղջալով)։ Լավ, լավ. այլևս վրդ մի հարցս։ Դեհ, կես գնում եմ ճանապարհի պատրաստության տեսնելու։ (Վեր է կենում)։

ԱՐՄԵՆ.—Հայրիկ. դու մոքումդ ինձ անիծում ես։

ԿՈՍՏ.—Քանի լեցի։ Ընդհակառակը, օրհնում եմ քո անկեղծությունը։ Շնորհակալ եմ, զավակս, շատ շնորհակալ եմ, վոր բոլորն ասացիր։ (Ուզում է գնալ դեպի պատգամբ, Ստեփանին տեսնելով, կանգ է առնում)։

ՏԵՍԻԼ IV

Նույնի յեվ Ստեփան

ՍՏԵՓ.—(Գալիս է պատգամբից վերարկուով, ուսին պայուսակ, ձեռքին մի համբարիշ)։ Մնացիք բարև, բարեկամներս։

ԿՈՍՏ.—Դուք արդեն գնում եք։

ՍՏԵՓ.—Ինչպես տեսնում եք։ (Ձեռք է տալիս Կոստանդինին։ Համբարիշը դնելով գետնի վրա, գլխարկը բարձրացնում է)։ Աբրահամը դնելով զես

ՅԵՂԻՍ.—(Ցերեկում է խորի դռնակի յեսեվում։ հագած է գրաի հագուստ. մեսամսյա սեվ շրջազգեստ, գլխին քասակրավ, ձեռքին հովանոց)։ *Ո՞ւր ես գնում։*

ԱՐՄԵՆ.—(Ձեռը հանգիստ բարձրացնելով, ցույց է տալիս կանաչազարդ լեռները)։ *Այնտեղ։*

ՅԵՂԻՍ.—(Մոտենում է արագ քայլերով սանդուղքին)։ *Մելանիա։ (Արմենուհուն)։ Սպասիր։*

ՄԵԼԱՆԻԱ.—(Ցերեկում է պատշգամբի վրա)։ *Այստեղ եմ, սիրելիս։*

ՅԵՂԻՍ.—*Տիրուհուդ հետ գնա, ուր որ նա գնում է։ (Ծառիդպավոր)։ Իմացար։*

ՄԵԼԱՆԻԱ.—(Թույլ)։ *Լավ։ (Իջնում է պարտիզակ)։*

ԱՐՄԵՆ.—(Հուզված)։ *Ամոթ է, ամոթ է, սիրելիս։*

ՅԵՂԻՍ.—*Ձես էլ դիտեմ ամոթ է, բայց ոնչ հասար։*

ԱՐՄԵՆ.—(Մելանիային)։ *Հեռացիր։ (Սրտմտությունից դողում է, բայց իրան զսպելով, շալը ուրիցց վերցնում է յեվ ձեռնասիայտի հետ ձգում հատակի վրա)։*

ՄԵԼԱՆԻԱ.—(*Հեռանում է պատշգամբով*)։

ՅԵՂԻՍ.—(*Ինքնագոհ*)։ *Այդպես։*

ՏԵՍԻԼ VII

Արմենուհի, Ցեղիսաբեթ յեվ Սամսոն

ՍԱՄՍՈՆ.—(Ցերեկում է պատշգամբի վրա. տխուր է, նեարդայինէ)։

ՅԵՂԻՍ.—*Ուզում եր մենակ դուրս գալ, հրամանդ կատարիցի։ (Զար ուրախությամբ)։ Հնազանդվեց։*

ՍԱՄՍ.—(Թույլ)։ *Լավ։ (Նեաց է անում Ցեղիսաբեթին հետևելու։ Իջնում է պարտիզակ)։*

ՅԵՂԻՍ.—(*Հեռանում է պատշգամբով, յես ու հես նայելով*)։

ԱՐՄԵՆ.—(*Նստել է ձախ կողմի արմուկներից մեկի վրա։ Աջխաստում է հանգիստ ձեվանալ*)։

ՏԵՍԻԼ VIII

Սամսոն յեվ Արմենուհի

ՍԱՄՍ.—(Գալիս է բեմի կենտրոնը։ Նույնպես աջխաստում է հանգիստ ձեվանալ)։ *Զգում եմ, դժվար է ազատությունից զրկվելը։*

ԱՐՄԵՆ.—(*Չի նայում Սամսոնին յեվ վոչ էլ վարվեի ծարժումն է անում*)։

ՍԱՄՍ.—*Ինչ սրտած, դուք ինքներդ այդպես կամեցաք։ Դուք ի չարը զործ դրեցիք իմ բարությունը. այժմ յես ստիպված եմ խիստ վարվել։*

ԱՐՄԵՆ.—(Նույն դիրքում)։ *Վարվեցեք, ինչպես կամենաք։*

ՍԱՄՍ. *Թուլությունն չէք խնդրում։ Ձես կարող եմ պարծենալ ազատություն տալ ձեզ։*

ԱՐՄԵՆ.—(*Վեր է կենում յեվ դիմում դեպի պատշգամբը*)։

ՍԱՄՍ.—*Ո՞ւր եք գնում։*

ԱՐՄԵՆ.—*Իմ յերեխային համբուրելու։*

ՍԱՄՍ.—*Իսկ յերթե այդ էլ թույլ չտամ։*

ԱՐՄԵՆ.—*Իմ շրթունքները դեռ սրատավորված չեն։ (Ուզում է գնալ)։*

ՍԱՏՍ.—(*Արմենուհու ճանապարհը կտրելով*)։ *Կանգ առեք։*

ԱՐՄԵՆ.—(*Կանգ է առնում*)։

ՍԱՄՍ.—*Ասում եմ, ձեր սիրահարության լուրն արդեն տարածվել է բոլոր ամարանոցներում։*

ԱՐՄԵՆ.—(*Սառը*)։ *Կարելի չե։*

ՍԱՄՍ.—*Ասում եմ, ձեր կինն այնքան է կատաղած, վոր մտադիր է ձեզ հրապարակական վիրավորանք հասցնել յեթե համարձակվիք յերևալ հասարակության մեջ։ Ինչ կասեք սրա դեմ։*

ԱՐՄԵՆ.—*Վոչինչ։*

ՍԱՄՍ.—*Լուրն այսոր-վաղը կհնչի քաղաք, և յես կդառնամ ամբող հասարակության ծաղրի և արհամարհանքի առարկան։*

ԱՐՄԵՆ.—*Կարող է պատահել։*

ՍԱՄՍ.—(*Ավելի ու ավելի վրդովվելով*)։ *Ձես, Սամսոն Ալպլանս, վոր ամենքի հարգանքն եմ վայելում և վոր իր շրջանի ամենանախանձը մարդն է համարվում։*

ԱՐՄԵՆ.—(*Թույլ ներգնաձեվ*)։ *Այո, համարվում է։*

ՍԱՄՍ.—*Ցավ դուք կարողանում եք այս բոլորը լսել սառնասրտությամբ։*

ԱՐՄԵՆ.—*Ամենայն սառնասրտությամբ։*

ՍԱՏՍ.—*Գոնե ձեր պատվի մասին մտածեցեք։*

ԱՐՄԵՆ.—*Իմ պատիվը ձեզ հետ կապ չունի։*

ՍԱՄՍ.—*Բայց չե՞ վոր դուք իմ անունն եք կրում։*

ԱՐՄԵՆ.—*Վերադարձնում եմ ձեզ այդ անունը ամենայն հոժարությամբ։*

ՍԱՄՍ.—(Ձայնը բարձրացնելով)։ Իսկ իմ ուժերը, իմ հմայքը։

ԱՐՄԵՆ.—Վռնդեցիք ինձ և ձեր տնից, ինչպես վռնդեցիք իմ հորը։

ՍԱՄՍ.—Դուք կորցրել եք ամեն մի ժպրդկալին զգացում։

ԱՐՄԵՆ.—(Առաջին անգամ յերեսը դարձնելով Սամսոնին)։ Խոսեցեք ինչի մասին կամենաք, բացի զգացումից։

ՍԱՄՍ.—(Հուսահատ)։ Դուք բարոյապես մեռել եք։

ԱՐՄԵՆ.—Ինչու չեք մեռցնում և մարմնապես։

ՍԱՄՍ.—(Խեղդուկ ձայնով)։ Բավական է. յես կարող եմ ցնծալով։

ԱՐՄԵՆ.—(Նորից ուզում է պատզամբով բարձրանալ)։

ՍԱՄՍ.—Սպասեցեք. յես վերջին անգամն եմ ձեզ հետ խոսում։

ԱՐՄԵՆ.—(Կանգ է առնում)։

ՍԱՄՍ.—Յես փորձեցի ձեզ բնազատություն տալու։ Չընդունեցիք, մեղքս հանձն առա—չմեղմացաք, նեղումն խնդրեցի—չնեղեցիք, աղերսեցի, ստորացա—չազդեց։ Վճռեցի խաղաղության դիմել, կարծում էի դրանով կկուրեիմ ձեր կամակորությունը։ Այժմ տեսնում եմ, որ այդ ել չի ոգնում։ Յես ստոն եմ վերաբերվել ձեզ—ճիշտ է։ Չեմ ճանաչել և գնահատել ձեր հոգին—դուցե։ Յես գավաճանել եմ ձեզ—չեմ հերքում։ Բայց այս բոլորն անցել է։ Յես քավել եմ մեղքերս անքուն գիշերներով, անհուն տանջանքներով։ Յես այլ ևս այն չեմ, ինչ որ էի։ Մոռամ է ձեր ատածը։ Այդ է նշանակությունը, այդ է սարսափելին։ Յես թույլ եմ տալիս ինձ հավատալու, որ ձեր չրթունքները դեռ արատավորված չեն, թույլ եմ տալիս հավատալու, որ նա, այդ պարոնը շատ մաքուր, շատ ազնիվ մարդ է։ Բայց ով հաշվի կառնի այդ։

ԱՐՄԵՆ.—Մի վոգորմելի հատարակության մեջ վոչ-վոք։

ՍԱՄՍ.—Ա՜ռ, գգում եք այդ։ Այո, բոլորը կբամբասանն, բոլորը կծաղրեն։ Ցեղ մեջատերը դեռ ու դեռ կպղտվի իմ պատիվը, ինչպես մի թքված, արհամարհված պատառ։ Ճիշտ եմ ասում, թե չե։

ԱՐՄԵՆ.—Ճիշտ եք ասում։

ՍԱՄՍ.—Ուրեմն, լսեցեք։ Յես յեթե եմ վերցնում իմ խոսքերը։ Նորից տալիս եմ ձեզ ազատություն։ Բայց մի պայման։—Հեռացրեք ձեզնից այդ մարդուն։ Չեմ ասում վիրավորեցեք, այլ ցույց տվեք սառնություն, արհամարհանք։ Յես կվճռանամ ձեր վարմունքը, բայց դուք ևս պիտի մոռանաք իմը։ Մենք կհաշտվենք և վաղն և յեթ կուղևորվենք արտասահման մի քանի ամսով կամ ամբողջ տարով։ Այս անհրաժեշտ է։ Մեր բացակայությամբ հասարակությունը կմոռանա մեզ, և մեր անունը կդադարի բամբասանքից։ Ընդունում եք իմ առաջարկությունը։

ԱՐՄԵՆ.—(Լսել է ուշադիր, մտածել է)։ Չգիտեմ։

ՍԱՄՍ.—Հանուն մեր զավակի։

ԱՐՄԵՆ.—Չգիտեմ, չեմ կարող ասել։

ՍԱՄՍ.—Լավ։ Յես ձեզ ժամանակ կտամ մտածելու, միայն մինչև յերեկո, վոչ ավելի։ Կրկնում եմ, այս իմ վերջին խոսքն է։ Ընդունեք—լավ, չեք ընդունել—խնդիրը կվճռի ահա այս (Յուլյե է տալիս ատրճանակը յեվ իսկույն յեե դուրս գրպանը)։ Յերեկվանից դես իմ ամբողջ կյանքը տակն ու վրա է յեղել։ Այս յերեկո յես կսպասեմ ձեր վերջնական պատասխանին։ (Գնում է պատզամբով)։

ՏԵՍԻԼ IX

Արմենուհի մենակ

ԱՐՄԵՆ.—(Մնալով մենակ, մի րոպեի չափ մտածում է, բերել տարժուքն է անում, բարձրանում է սանդուղքը մի յերկու աստիճան։ Հանկարծ կանգ է առնում. վճռական տարժուքն է անում, իջնում է յեվ նստում առաջին աստիճանի վրա։ Գլուխը բռնում է ձեռների մեջ յեվ մտածում)։

ՏԵՍԻԼ X

Արմենուհի յեվ Հմայակ

ՀՄԱՅԱԿ.—(Ցերեկամ է խորի դռնակի մեջ։ Հուզված է, գուցե, ցինար, բայց ըզկնված չե, այլ վճռական, համարձակ)։ Տիկին,

ԱՐՄԵՆ.—(Գլուխը բարձրացնում է, նայում, ցնցում, վոտի կանգնում)։ Ա՜հ, դուք, այսուհետ նա խնդրեն հեռացավ. կարող և վերադառնալ։

ՀՄԱՅԱԿ. Ջանկնկոտ ձեզ սովորական ժամին ժայռի վրա, բնձ թվաց, վոր մի դժբաղդություն է պատահել, և վճռեցի ամեն վտանգ հանձն առնել։ Գնաք և վերջ տալ այս անտանելի կացությանը։

ԱՐՄԵՆ.—Հեռացեք, ստոված սիրեք, հեռացեք։

ՀՄԱՑԱԿ.—Առանց ձեզ մի քայլ անգամ չեմ անիլ այստեղից։ Կամ այսօր, կամ յերբեք։ Ձեռ այլևս տառապելու ուժ չունեմ, պիտք է հանգուցյալը լուծել։

ԱՐՄԵՆ.—(Ցուսահատ)։ Դուբլեն և ասել, վայ, ինչպես լուծիլ։

ՀՄԱՑԱԿ.—Այնպես, ինչպես պահանջում է ամենազորը, ամենահաղթ սերը, վորի համար չկա վոչ մի խոչնդոտ։ Ստել և իմանալ վոչ ոքը կարող եք և վոչ յես։ Մինչդեռ մեզ արդեն համարում են սովորական խարիսխներ։ Արմենուհի, ապացույցներ, վոր մենք ընդունակ չենք ամոթալի գործերի կապելու հասարակական հնամաշ ավանդությունների հետ։ Մեր սերը չի կարող և չպիտի կերակրվի ամբոխի սեղանի փշրանքներով։ Ձեռ վճռեցի զոհել ամեն բան։

ԱՐՄԵՆ.—Ամեն բան, հարկավ, բացի զավակներից։

ՀՄԱՑԱԿ.—Նույն իսկ զավակներից։

ԱՐՄԵՆ.—(Բավական անհարթեր)։ Նույն իսկ զավակներից։ Շատ չե՞, արդյոք, այդ ինձ համար։

ՀՄԱՑԱԿ.—Արմենուհի, չի կարող լինել իսկական սեր առանց խոշոր զոհաբերության։

ԱՐՄԵՆ.—Բայց մի այդպիսի զոհ կարող և թունավորել ամեն մի սեր, վորքան էլ այն զորավոր լինի։

ՀՄԱՑԱԿ.—Ամենազորեցիկ ծաղիկն ամենաստոկալի թույնն է պարունակում իր մեջ։ Անունն է այդ ծաղկի քնքշանք։ Ձեռ բարվոք եմ համարում նրա բուրմունքով մահ ընդունել, քան անվերջ սոդալ բուսական կյանքի ձանձրույթում։

ԱՐՄԵՆ.—Դուք չունեք իրավունք զրկելու այդ անմեղներին իրանց հորից. այդ կլինի վոճիր յերեխ անելք։

ՀՄԱՑԱԿ.—Բայց մի՞թե ավելի մեծ վոճիր չի՞ մորդկալին ամենավեհ զգացման հետ առևտրական դաշինք կապել։ Ձես դեռ պատասում եմ իմ զավակներին զրկել իրանց հորից, քան թողնել նրանց առանց ծնողների։

ԱՐՄԵՆ.—Ջեմ հասկանում այդ։

ՀՄԱՑԱԿ.—Ա՜հ, սիրելին, իմ զավակները արդեն ծնողներ չունեին։ Այն որից, յերբ յես հանդիպել եմ ձեզ, նրանց մայրն և յես նրանց թշնամիները ենք։

ԱՐՄԵՆ.—(Մեկուսի, տանջանոք)։ Ասում՞ ես իմ։

ՀՄԱՑԱԿ.—Ի՞նչ և այդ վաղորմելիների տեսածն ու լսածը մեզնից։ Փոխադարձատելություն, հալածանք, զրվանք։ Արդեն նրանց մանուկ աչքերը հոգնել են մեր ամենօրյա ընդհարումները տեսնելուց, արդեն նրանց քնքուշ լսելիքը զզվել և իրանց մոր անզուսպ անհեթեթություններից և հիշողություններից։ Յերեկ առավոտ կրտսերը հարցնում է ինձ. «Հայրիկ, քո անունը լիքը ե՞ր։ Ախ ամենաթույլ ածականը, վոր տալու և ինձ նրանց մայրը։

ԱՐՄԵՆ.—(Տատանոքով)։ Ձեզ մեղավորն չես եմ, ան։

ՀՄԱՑԱԿ.—Կարող և լինել ավելի մեծ վոճիր, քան ամեն օր, ամեն ժամ կաթիլ-կաթիլ թույն ածել մանկական սրտերի մեջ, վորոնք սպունգի նման ծծում են։ Ասացեք վճիռն և ավելի մեծ հանցանք՝ զրկել նրանց հորից քիչ պատրաստել նրանց համան մի դժբաղդ ապագա և հասարակության համար բարոյական անդամալույծներ։

ԱՐՄԵՆ.—(Ընկճված)։ Զգիտեմ. այդքանը հասկանալու ուժ չունեմ։

ՀՄԱՑԱԿ.—Թող այժմեկից իսկ ընկնի ատի և փարիսեցիության քողը, վորով որորոցից արդեն կապում են մեր աչքերը։ Ձերը նրանք կհասունան, կյանքը կճանաչեն, կհասկանան, վոր իմ սրտածը դաժանություն չեր իրանց վերաբերմամբ, այլ մի անխուսափելի տուրք հավիտենական հմայության։

ԱՐՄԵՆ.—Կհասկանա՞ն, արդյոք։ Մայրը նրանց փափուկ սրտերի մեջ կանուցանի խորինատելություն դեպի ձեզ, դուք կդառնաք նրանց աչքում մի անհերթ հրեշ, և նրանք յերբեք չեն ներիլ ձեզ ձեր արարքը։

ՀՄԱՑԱԿ.—Ո՜ւ, վայ. մայրական կրթությունն այնքան զորավոր չե, վորքան ընդունված է կարծել։ Վալ թե ուշ նրանց ուղեղը կազատվի կապանքներից և կսկսի գործել ինքնուրույն, ազատ։ Ախ այն ժամանակ նրանք կհասկանան ինձ և կընդունեն։ Ջի՞ վոր կյանքը նրանց համար ևս զղջող և զառնալու։ Արմենուհի, յերե՞ք ամուր և մեր սիրո կապը, յերե՞ք առողջ և նրա ազդը, պետք է բաժանվենք մեր ամուսիններից, պետք է խորտակենք կեղծ կապը և միանանք բնության որհնված կապով։ Այս և պահանջում մեզնից վոչ միայն մեր փոխադարձ յերջանկությունը, այլ և բոլոր նախապաշարումներից, բոլոր ավանդություններից ազատ ազնվությունը։

ԱՐՄԵՆ.—Իսկ յես կարծում եմ, վորքան հեռու լինենք միմյանցից, այնքան հարդած կլինենք սիրո զգացումը և այնքան խորը կզգանք նրա մեծությունը։ Տարիներով յերազած մի աշխարհ եմ ձեռք բերել։ Նա լի յե անուշ բուրմունքով և

հեռավորության վրերը չեն, վոր պիտի արգելին ինձ վայելել այն։

ՀՄԱՑԱԿ.—Դուք դեռ շարունակում եք լիրագել տեկինը, դուք դեռ չեք հասել այդ աշխարհը, այլապես կզտապիլիք վայելել այն։

ԱՐՄԵՆ.—Ծառը ուրախ, զվարթ ու գեղեցիկ է իր ծաղիկներով ու կոկոններով, իսկ չորը նա բեռնավորվում է պտուղներով, թեքվում է դեպի չերկիր և տուռապում։ Հեռու լինենք չերկրից, Հմայակ, և բարձր պահենք մեր զգացումները։

ՀՄԱՑԱԿ.—Ա՛յդ և ուրեմն ձեր վերջին խոսքը։

ԱՐՄԵՆ.—Առ այժմ, այո. ապագայի մասին պատասխանատու չեմ։

ՀՄԱՑԱԿ.—Ցեվ պիտի բաժանվենք, չմիացած։

ԱՐՄԵՆ.—Պիտի բաժանվենք, հոգով ավելի ամուր կապվելու համար։

ՀՄԱՑԱԿ.—(Տառապանքով)։ Ա՜հ, վորքան միամիտ եյի չես, վոր չերևակայում եյի մի նոր կյանք, վորքան խաբված, վոր մի կտրված ծաղիկ չի կարելի մի ուրիշ բունի վրա հաստատել։

ԱՐՄԵՆ.—(Փաղաքշանքով)։ Մի վշտանար. այդ կրկնապատկում է իմ տառապանքը։ Մի պահանջնք անկարելին, մենք միայն մեր սեփական կյանքերի վրա ունինք իրավունք և վոչ ուրիշների բազդավորության ու պատվի։ Հեռացնք, նա ամեն վայրկյան կարող է գալ։ չես չեմ ուզում ձեզ վտանգի չենթարկել։ Նա սարճանակ ունի իր դրպանում։

ՀՄԱՑԱԿ.—Ապավաում եք ձեր սրանչելի բնույթը, վոր այնքան համարձակ եք և անկեղծ։ Փոքրիկից սարսափելով, դուք ուզում եք գործել մի մեծ հանցանք։ Ձեր զավակը կունենա հայր, իմ զավակները կունենան մայր, իսկ մեր սերը կմնա կատարյալ վորը, լրված, անբիծված։

ԱՐՄԵՆ.—Վոչ, նա միայն կմնա անապական և սուրբ։

ՀՄԱՑԱԿ.—Սերը սերտանարների միության չերբեք չի կարող ապականվել։ Այն միայն կկործանի ձեզ և ինձ, չեթե չմիանանք։ Մի լինիք չերկչոտ, չեղիք բարձր ամբոխի բարոյական մակերևույթից։ Արծիվը չի կարող և չպիտի սպրե հավաքնում։

ԱՐՄԵՆ.—Ա՛խ, զուք ճնշումն եք գործ դնում ինձ վրա, այդ լավ չե, այդ լավ չե։

ՀՄԱՑԱԿ.—Ցես ունիմ իրավունք մինչև անգամ քանանալու, չեթե միայն ձեր սերը սեր ե։

ԱՐՄԵՆ.—Ապագան ցույց կտա, թե վորքան ամուր և այն։

2

ՀՄԱՑԱԿ.—Ինձ համար չկա ապագա. առանց ձեզ և վոչ մի որ, վոչ մի ժամ։

ԱՐՄԵՆ.—Ցերեխա մի լինիք. մտածեցնք։

ՀՄԱՑԱԿ.—Ցես այրել եմ իմ այն կամուրջը, վորով անցել եմ ձեզ հանդիպելու համար. ինձ համար դարձ չկա։ Ահա, տեսնք։ (Հանում է մատից պսակի մատանին)։ Այս իմ սարկական շղթայի վերջին ողակն է։

ԱՐՄԵՆ.—Ի՞չ եք ուզում անել։

ՀՄԱՑԱԿ.—Շպրտել դեն։ (Զգում է մատանին նախ կողմը, հետու)։ Ահա այդպես, գնաց, ընկավ ձորը։

ԱՐՄԵՆ.—Խելագար։

ՀՄԱՑԱԿ.—Ցես դեն ձգեցի այն բանակալական կապը, վոր կոչվում է ամուսնություն։ Բավական է, վորքան կրեցի այն՝ իբրև խորին վերամորանք անհատի ազատության։ (Մոտենում է Արմենուհուն)։ Գնանք, հեռանանք, հեռանանք այս միջավայրից, ուր հինը խառնվել է նորին և կապել ստով ոգորված մի մթնոլորտ։ Այնտեղ, հեռու չերկրներում, ուր մեզ չեն ճանաչում, մեզ սպասում է նոր կյանք, անկախ, ազատ, հիմնված բոլորովին այլ սկզբունքների վրա։ Մի մոռանաք ձեր կոչումը, Արմենուհի, այդ հանցանք է։ Դուք պիտեք նվիրել սրտանձին, դուք ստեղծված եք ազատ դեղարվեստի, ազատ սիրո համար։ (Բռնում է Արմենուհու ձեռը)։ Լռում եք, ձեզ կանչում է ճշմարտության ձայնը։

ԱՐՄԵՆ.—(Կռվելով իմքն իր հետ)։ Ա՛խ, այդ ձայնը... Այն վաղուց և ինձ կանչում։

ՀՄԱՑԱԿ.—Հետևեցնք նրան, ուրեմն, այդ է ձեր կոչումը, այդ է ձեր սուրբ պարտականությունն անդամ։

ԱՐՄԵՆ.—Բայց ծեր կտանի ինձ այն։

ՀՄԱՑԱԿ.—Լավագույնը աշխարհներից—դեղարվեստների դրախտը։

ԱՐՄԵՆ.—Արժանի եմ չես, արդյոք, այնտեղ ընդունվելու։

ՀՄԱՑԱԿ.—Ավելի քան արժանի եք, վորովհետև դուք ունիք սատվածային ձերք և մեծ ձերք։

ԱՐՄԵՆ.—Ա՛խ, այդ ամենքն ասում են, ամենքը և չես զգում եմ, վոր ունիմ, զգում եմ մահկանացությունից—ահա իմ թշվառության սպրյուռքը։

ՀՄԱՑԱԿ.—Դեն ձգեցնք անտաի չերկյուղն և կեղծ ամոթի կապանքները։ Միայն մի քայլ, և դուք փրկված եք։

ԱՐՄԵՆ.—(Վազելով գալիս)։ Ասացիք, քոնը կաան ինձ այնտեղ նվագելու։

ՀՄԱՅԱԿ.—Ձերը կամենաք, վորքան կամենաք և ինչ կամենաք։

ԱՐՄԵՆ.—(Հեռացնելո իմիմանուացության մեջ ընկնելով)։ Ձեվ վոչ վոք չի խանգարել ինձ, վոչ մի ձայն, վոչ մի տրտունջ։

ՀՄԱՅԱԿ.—Վոչ վոք, վոչինչ։

ԱՐՄԵՆ.—Ձեվ ես կլինեմ այնտեղ արտիստների շրջանում։ Ո՜հ, այդ իմ լավագույն վերապն է։ Ինձ չեն արհամարհիլ։ Նրանք ինձ պատիվ կանեն արվեստների մասին հետո խոսելու։ Ձեվ ես այլևս չեմ լսիլ առևտրի, շահի ու ձրտասի, մուրհակների ու մատյանների մասին։ Իմ հոգնած լսելիքն այլևս չի ընդունիլ համարակալի չխկչխկոցը։ Ա՜հ, տարեք ինձ, փախցրեք այստեղից, ես փափագում եմ այդ աշխարհում շնչել և ապրել։

ՀՄԱՅԱԿ.—Աա, վերջապես, դուք խոսեցիք ձեր բնական ձայնով։ (Գրկում է Արմենուհուն)։ Այժմ ես այլևս չերկյուղ չունիմ։ Մենք տալանք հաղթանակը. մեր թշնամիները չեն կարող հրկվել։ Դնանք, շտապեցնք։ Ձես արդեն ամեն ինչ պատրաստել եմ փախչելու համար։ (Մղում է Արմենուհուն բեմի խորքը)։ Հիսուն քայլ հետո, անտառի մոտ մեզ սպասում է մի կառք։

ԱՐՄԵՆ.—(Ազատվելով Հմայակի գրկից)։ Բայց վոչ, սպասեցեք, հոռո, ես խելագարվում եմ, հայրս, զավակս։ Վո՜չ, վոչ վոչ

ՏԵՍԻԼ XI

Նույնք, Սամսոն, Վիրգինե, Ցեղիասքեր, Կոստանդին յեվ ծառաներ

ՀՄԱՅԱԿ.—Մի քաշվեցեք, յեկեք։ (Նորից գրկում է Արմենուհուն)։ Դուրս դնանք այդ յերկաթե կանկապատից, և հաղթանակը մերն է։

ՎԻՐԳ.—(Ձերվում է պատզամբի մի ծայրում յեվ արագ անցնում է միւս ծայրը)։

ԱՐՄԵՆ.—(Նկատում է Վիրգինեյին, ազատվում է նորից Հմայակի գրկից ու նչում)։ Ա՜հ։

ՀՄԱՅԱԿ.—(Վախեցած)։ Ի՞նչ պատահեց։

ԱՐՄԵՆ.—Զարնուրելի ուրվականը։ Փախիր, յերթե չես ուզում կործանվիլ։

ՑԱՄՍ.—(Բեմի հետեվից բարձրաձայն)։ Աա...

ՀՄԱՅԱԿ.—Մի քայլ անգամ չեմ անիլ առանց քեզ, Թեզ գո։

ՑԱՄՍ.—(Ձերվում է պատզամբի վրա, ձեռքին ատրճանակ, խելագարության)։ Տասցիր քո պատիժը։ (Ատրճանակը բարձրացնում է)։

Վիրգինե, Կոստանդին, Մելանիա, Գաբեզին, Ցեղիասքեր մխիթարց հետեվից յերեվում են պատզամբի վրա)։

ՀՄԱՅԱԿ.—Կանգ է առել աներկյուղ յեվ նայում է Սամսոնին)։

ԱՐՄԵՆ.—Ընկնելով Հմայակի առաջ, ծածկում է նրան իր մարմնով)։ Առաջ ինձ, հետո նրան։

ՑԱՄՍ.—Ձեվ քեզ, և նրան։ (Ուզում է ատրճանակը արձակել, չի կարողանում, բռնանում է)։ Ա՜հ, չեմ կարող, չեմ կարող։ (Ատրճանակը ձգում է գետին։ Ցանցվում է, փիչ լռություն, հեգնված ձայնով)։ Գնա նրա հետ, ապատ ես։ (Հեկեկում է)։

ԱՐՄԵՆ.—(Գրկում է Հմայակին)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԵԼԱՆԻԱ 3
2. ՏԵՎԳԻՆԵ 55
3. ՆԱՄՈՒՍ 109
4. ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ . 203
5. ԿՈՐԾԱՆՎԱԾԸ . . 289
6. ԱՐՄԵՆՈՒՀԻ . . . 369

441

ՀՀ Ազգային գրադարան
NL0358917

48018